One significant question is whether the Saudi government is prepared for an influx of foreign white-collar workers and their families in terms of infrastructure (such as housing, water, and roads) as well as administrative largess. It is also unknown whether people will be prepared to leave Dubai, which is freer, more cosmopolitan and expensive, in order to move to Riyadh. Saudi Arabia is behind Bahrain, Qatar, and the United Arab Emirates as a desirable destination for expatriates, according to a ranking by the Hong Kong and Shanghai Banking Corporation (HSBC). Oil-rich Saudi Arabia has the finances to implement the necessary changes, yet it has much work to do in order to make those changes. While the Saudi government has permitted the football (soccer) player Cristiano Ronaldo to live with his girlfriend, Georgina Rodriguez, since he joined a Saudi football team in 2022, few others are given the same privilege. Some foreigners also complain about the length of time it takes to secure a work visa, although tourism passes are easier to obtain. Planned real estate projects that will house commercial, residential, retail, and cultural spaces were announced in 2023, yet the master plan for Riyadh's expansion has been delayed multiple times. A metro system, which was planned to be completed by 2019, had not opened as of 2023.[83]

In terms of the broader demographic context regarding expatriates in Saudi Arabia, it is a prime destination and source of remittances from workers for many countries in Asia and the Arab world. Expatriates comprise more than 33

---

[80] "The Destination for the Youth: Rooted in the Vision of HRH Crown Prince Mohammad bin Salman bin Abdulaziz," Mohammad bin Salman City, Nonprofit, https://miskcity.sa/en/home (accessed May 27, 2023).

[81] "City News: Read and Watch the Latest News from Mohammad bin Salman Nonprofit City" Mohammad bin Salman City, Nonprofit, https://miskcity.sa/en/about-us/media-center/news/-/stories/listing/9/18 (accessed May 27, 2023).

[82] Frank Kane, "Saudi Crown Prince Unveils Plan to Make Riyadh One of World's 10 Largest City Economies," *Arab News*, January 29, 2021 https://www.arabnews.com/node/1800231/business-economy .

[83] Dagher.

percent of the Kingdom's population, most of them coming from South Asia.[84] In 2014 they accounted for 56.5 percent of the employed population and 89 percent of the private sector workforce.[85] An amnesty campaign which started in April 2013 allowed 4.7 million foreign workers to regularize their status, while an ongoing crackdown on illegals forced one million persons to leave the Kingdom in 2013 alone, of which 547,000 were deported as of November 30, 2013. [86] Yet, the fact that most Armenians in Saudi Arabia have high-skilled, white-collar positions provides them with significant protection.

Many Saudi laws apply to expatriates much as they do to Saudi citizens.[87] Cultural life in Saudi Arabia rests within the limits of strict interpretations of the Quran. In practice, this means that the visual arts, for example, are limited to geometric, floral or abstract designs, as representations of humanity are forbidden. Although there are some cinemas in larger cities, relinquishing the joys of theater comes with the territory for expatriates relocating to Saudi Arabia. Music, dance, and Bedouin poetry comprise important parts of Arab culture. However, literature in general is kept in check by strict censorship rules. Alcohol, sex outside of marriage, and same-sex romantic relationships are banned.[88] Yet, women and men who would like to stay in the same hotel room do not have to prove that they are married, and unaccompanied women are allowed to stay in a hotel room by themselves. These changes are consistent with Mohammad Bin Salman's goal of opening Saudi Arabia for tourists, with the hope that the country will have one-hundred million visits per year by 2030.[89]

---

[84] "Saudi Arabia Population Statistics 2023," *Global Media Insight*, April 4, 2023, https://www.globalmediainsight.com/blog/saudi-arabia-population-statistics/#:~:text=More%20than%20a%20third%20of,Asia%2C%20Europe%2C%20and%20America (accessed May 25, 2023).

[85] Françoise De Bel-Air, "Demography, Migration, and Labour Market in Saudi Arabia" Technical Report, GLMM, Explanatory Note, 1/2014, Migration Policy Centre, CADMUS European University Institute Repository, https://cadmus.eui.eu/bitstream/handle/1814/32151/GLMM%20ExpNote_01-2014.pdf?sequence=1&isAllowed=y (accessed June 4, 2023).

[86] Ibid.

[87] "A Practical Guide to the Way of Life in Saudi Arabia" Internations, https://www.internations.org/saudi-arabia-expats/guide/living-short#:~:text=While%20female%20expats%20living%20in,home%20they%20may%20find%20them (accessed May 25, 2023).

[88] Ibid.

[89] "Saudi Arabia: Reforms Allow Women and Unmarried Foreign Couples to Take Hotel Rooms," *Sky News*, October 8, 2019 https://news.sky.com/story/saudi-arabia-reforms-allow-women-and-unmarried-foreign-couples-to-take-hotel-rooms-11829012 (accessed June 4, 2023).

HUMAN RIGHTS

Although Armenians in Saudi Arabia have not been seriously affected by the Saudi government's violations of human rights, some of those violations are worth considering in light of the Saudi constitution's emphasis on justice and the potentially difficult situation any government's human rights record could pose for expatriates in a given country. According to Amnesty International's report entitled "Saudi Arabia 2021/22," the Saudi authorities severely restricted the rights to freedom of expression, association, and assembly in those years. Many human rights defenders and government critics were arbitrarily detained. Many activists were sentenced to lengthy prison terms, including under counter-terrorism legislation following grossly unfair trials before the Specialized Criminal Court (SCC). Saudi authorities used the death penalty extensively, carrying out scores of executions for a range of crimes, including drug offences.[90] While Armenians in Saudi Arabia may not have been directly affected by these human rights violations, and would probably leave Saudi Arabia if they feared that the government would act against them, this troubling situation is worth taking into account. Another potential risk to Armenians and other expatriates in Saudi Arabia is possible political instability which Sunni Islamist groups such as Daesh or AlQaida may cause. This is worth considering in light of several previous militant attacks in Saudi Arabia and these groups' goal of overthrowing the Saudi government and replacing it with a government that would implement *Sharia* more strictly.[91] In the context of the opportunities and risks for Armenians in Saudi Arabia, there is reason for cautious optimism, especially because of the preference that the Saudi government is showing for highly-skilled upper-class workers and Mohammad Bin Salman's liberalization policies. The Saudi government's welcoming attitudes and policies toward expatriates provide additional grounds for hope about the future prospects of Armenians and other expatriates in the country.[92]

---

[90] Amnesty International, "Saudi Arabia 2021/22" https://www.amnesty.org/en/countries/middle-east-and-north-africa/saudi-arabia/report-saudi-arabia/ (accessed December 3, 2022).

[91] The Embassy of the Kingdom of Saudi Arabia in Washington, DC, "ISIS Leader Threatens Saudi Arabia In Latest Speech," https://www.saudiembassy.net/news/isis-leader-threatens-saudi-arabia-latest-speech (accessed July 12, 2019); "Alleged Islamic State Group Militants Killed in Foiled Attack in Saudi Arabia" *Australian Broadcasting Corporation* and *Reuters*, April 21, 2019 https://www.abc.net.au/news/2019-04-22/four-killed-in-failed-is-attack-on-saudi-state-building/11035252 (accessed July 12, 2019).

[92] Marco Ferrari, "Saudi Arabia Sees Surge in Expats as the Kingdom Attracts Foreign Business," *Al Arabiya*, January 30, 2023, https://english.alarabiya.net/News/saudi-

ՍԷՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՕՏԱՐԱՀՊԱՏԱԿՆԵՐԸ

(Ամփոփում)

Ճոն Արմաճանի
JARMAJANI@CSBSJU.EDU

Զեկոյցը կը ներկայացնէ Սէուտ. Արաբիոյ 1992ին հաստատուած սահմանադրութիւնը, ընդգծելով որ ան հիմնուած է իսլամական, աւանդական եւ միջազգային աղբիւրներու վրայ: Սահմանադրութեան կարեւորագոյն աղբիւրները իսլամական էին՝ Քուրանը, Սուննան, Հատիսը, Շարիան եւ Ֆիքհը՝ սէուտական սիւննի մեկնաբանութեամբ: Զեկոյցը կը քննարկէ սահմանադրութեան այն երեսակները, որոնք կ'առնչուին տեղի հայերուն եւ միւս օտարահպատակներուն, ինչպէս՝ ունեցուածքի, անոտնակոխելիութեան, դատավարութեան հաւասար իրաւունքներու պարագաները:

Վերջերս սէուտական իշխանութիւնները քրիստոնեաներուն հանդէպ աւելի ճկուն ընթացք որդեգրած են, որուն առնչութեամբ ալ զեկոյցը կ'արծարծէ երկրին բնակավայրի իրաւունքի եւ օտարահպատակներու հանդէպ վերաբերմունքի հարցերը եւ ասոնց հետեւանքները հայերուն վրայ: Զեկոյցը կը քննէ իշխանութեանց «Սէուտական 2030ի տեսլական»ը, որ կը ձգտի նուազեցնել երկրին յենումը քարիւղին վրայ, այլազանել տնտեսութիւնը եւ հանրային ծառայութեանց ոլորտներ յառաջացնել: Կը քննարկուին նաեւ երկրին տնտեսական յառաջիկայ վիճակը եւ ասոնց հետեւանքները հայերու եւ այլ օտարահպատակներու վրայ:

arabia/2023/01/24/Saudi-Arabia-sees-surge-in-expats-as-it-attracts-foreign-business (accessed May 27, 2023).

Armenian Temporary Migrants in Saudi Arabia between the 1970s and 1990s

HASMIG KELLIGIAN BARAN
hasmig.baran@csun.edu

INTRODUCTION

Armenian-Saudi Arab relations in recent history date back to the Genocide during World War I, when Armenians were deported by the Ottoman government as far south as Transjordan and Palestine. While many Armenians perished because of exposure, hunger, diseases, and outright massacres, others survived by engaging in odd jobs or being absorbed among Arab tribes in the region. When the British and Arab forces of Sharif Hussein (1908-1924) of Mecca, Prince/King of the Hejaz, began to capture the two aforementioned territories from the Ottomans, Sharif Husain issued proclamations ordering Arab tribesmen to relinquish Armenian captives held among them to the Armenian Nation.[1] His son, Amir Faisal, ruler of Syria from 1918 to 1920, showed the same humanitarian zeal vis-à-vis enslaved Armenians. Despite the good intentions, many Armenians were not liberated, and over time assimilated within Muslim Arab society.[2] Today, some twenty-one royal Saudis are known to carry Armenian blood.[3]



Fast forward to 1932, when the Kingdom of Saudi Arabia was officially established. Six years later, in 1938, large reserves of oil were discovered in the land. ARAMCO, or the Arab American Oil Company, took charge of the oil industry. During the 1970s and 1980s, the control of oil gradually passed to the Saudi Arabian government, which eventually took over ARAMCO and


---

[1] Vahram L. Shemmassian, "Armenian Genocide Survivors in Palestine and Transjordan at the End of World War I," in Antranik Dakessian, ed., *Armenians of Jordan: Proceedings of the Conference (22-24 May 2016)*, Haigazian University Press, Beirut, 2019, p. 123.

[2] Vahram L. Shemmassian, "The Reclamation of Captive Armenian Genocide Survivors in Syria and Lebanon at the End of World War I," *Journal of the Society for Armenian Studies*, 15:2006, pp. 113-40.

[3] "Saudi Arabian People of Armenian Descent," *Wikipedia*, retrieved July 28, 2023. https://en.wikipedia.org/wiki/Category:Saudi_Arabian_people_of_Armenian_descent

renamed it Saudi Aramco in 1988.[4] The oil revenues amounted to $40 billion by 1977 and $ 90 billion by 1980.[5] This drastic increase allowed the Saudi Financial System to develop and expand. The government set up an economic development plan which enabled the transformation of Saudi Arabia from a traditional tribal economy to a modern industrialized society.[6] The government began to build the kingdom's infrastructure and aimed to improve the well-being of its citizens. The construction of roads, bridges, hospitals, military bases, airports, universities, schools, and housing facilities began to take place. This economic boom required foreign labor.[7] Armenian professionals from Syria, Lebanon, the United States, and the United Kingdom constituted a small fraction of that labor force. To the best of my knowledge, this paper for the first time deals with Armenian temporary migrant workers in Saudi Arabia from the 1970s to the 1990s. Given the absence of written documentation, this study is based almost exclusively on interviews conducted with Armenians who lived and worked in Saudi Arabia and currently reside in the United States and Canada. It is also based on my personal experiences, having lived in Saudi Arabia with my family from 1977 to 1985.



THE LURE OF SAUDI ARABIA

Two factors contributed to the participation of the Armenians in the Saudi development. On the one hand, the 2nd Five Year Development Plan of the Saudi government, launched in 1975, aimed to modernize and industrialize the entire country in a few years. The inadequate number of local professionals to meet the demands made the employment of foreign workers necessary in oil, construction, energy, commerce, finance, education, and health services. This in turn prompted the government and the private sector to offer lucrative employment terms that attracted foreigners from the West and the Arab world.

---

[4] "Saudi Aramco," *Encyclopedia Britannica* (online), retrieved July 28, 2023.

[5] https://en.wikipedia.org/wiki/Khalid_of_Saudi_Arabia#:~:text=King%20Khalid's%20reign%20was%20of,and%20%2490%20billion%20in%201980.

[6] Naief M. AlMtairi, "Development of Oil and Societal Change in Saudi Arabia," M.A. Thesis, North Texas State University, Denton, Texas, August, 1985, p. 121.

[7] Ibid., pp. 37-38; U.S. Department of State, ARCHIVE, Information released online from January 20, 2001 to January 20, 2009. Background note: Saudi Arabia, retrieved July 27, 2023.

By early 1980 foreigners outnumbered Saudis in the labor force by nearly two-to-one.[8]

At the same time, the onset of the Lebanese Civil war in 1975 and the attendant political uncertainties created unsafe conditions for the people in the region. The presence of Syrian troops in Lebanon presented a potential threat to Syrian nationals who were working in Lebanon without work permits or who had escaped mandatory military service. Therefore, searching for safer havens for living and working outside of Lebanon became necessary.



Arsene and Hasmig Baran, Armen and Sossi Melkonian, Jack and Arda Ekmekji, Vahan and Nora Bezdikian at the Oberoy Hotel in Dammam in 1982 at the International Women's Group 5th Anniversary dinner

Aramco's and other companies' active recruitment for employment in Saudi Arabia attracted young Armenian professionals in various fields. The Saudi government encouraged local businesses and independent Saudi-Arab contractors and manufacturers to expand their ventures. Consequently, Lebanese and Syrian firms began to open branches in Saudi Arabia in partnership with local businessmen and transfer their employees there. Some examples of such branches were the Ketaneh-Bin Zagher Construction Company,[9] Abdallah Fouad and Bros Accounting and Auditing Firm,[10] and ABAHSAIN-SECEM for Electrical Works (where Arsene Baran worked as Project Manager).[11] Other Armenians were employed in these and other companies.

Some Armenians established contracting corporations in partnership with local Saudis, for instance the Bin Laden Brothers Electro-Mechanical Company BEMCO (Suren, Hrair, and Kurken/Greg Sarkissian Brothers),[12] SAULEX,

---

[8] *Saudi Arabia: A Country Study/Federal Research Division*, Library of Congress; Edited by Helen Chapin Metz-5th ed. Research completed December 1992. Retrieved July 27, 2023.

[9] Interview with Vahan Bezdikian, December 28, 2020, Glendale, California.

[10] Interview with Thomas Deukmedjian, January 17, 2021, La Crescenta, California.

[11] Interview with Arsene Baran, January 20, 2020, Granada Hills, California.

[12] Interview with Kurken/Greg Sarkissian, April 20, 2023, Glendale, California; interview with Nerses Melkonian, June 24, 2020, Glendale, California.

Saudi-Lebanese Construction Company ABAHSAIN and Partners (Vahan Bezdikian),[13] SAMAR Construction Company (Hratch Sarkis), ACMECON Company (Berj Kalayjian), and Halwani Contracting Co. (Ohannes Beujekian). These Armenian-owned companies employed Armenian engineers and technicians also.[14] A few Armenian professors like Harout Berberian taught at King Fahd Petroleum and Minerals University, which was established in Dhahran to prepare a new generation of native Saudi engineers.[15] Dr. Ara Tekian, on the other hand, was Chair of the Medical Education Department at King Khaled Military University Hospital in Riyadh.[16]



A picnic at the beach celebrating the 60th Anniversary of Armenian Independence Day, May 26, 1978

OTHER TYPES OF WORK AND CONDITIONS

The inception of the economic development plan in 1970 had a great impact on the improvement of health care. Health care professionals were recruited from outside of the country. Armenians were among those recruits that worked at the Riyadh Military Hospital, for instance, nurses Sossi Nercessian and Santukht Keosbekian.[17] Others, who worked at various Aramco sites, were Jennette Shirinan, Dzaghig Aintablian, Rahél Andonian, Silva Havatian, Sona Chaparian, Hasmig Chaparian, Marriette Kilisian, Arpi Nahabedian, Vartouhi Aintablian, Vartouhi Kazanjian, Ovsanna Jinsian, Rebecca Kendirjian, Mesrob Kendirjian (hospital clerk), and Varouj Kapterian (lab technician).[18] At the AlShark Hospital in AlKhobar, my aunt, Dr. Zvart Piloyan-Abrian, was recruited to train female physicians and nurses in Obstetrics and Gynecology.[19] Dr. Artashes Khanlian, Dr. Boghos Artinian, and Dr. Rodrigue Bezirjian were other physicians. Similarly, Ani Jindian-Derderian, Herminé Yahinian, Rozine Der Tavitian, Harout Kurdian, Lucine Chanchanian, Victoria

[13] Interview with Vahan Bezdikian, December 28, 2020, Glendale, California.
[14] Personal knowledge.
[15] Personal knowledge.
[16] Telephone interview with Dr. Ara Tekian, May 9, 2023.
[17] Interview with Varoujan Charkhedian, November 3, 2022, Granada Hills, California.
[18] Interview with Haig Kendirjian, November 10, 2022, La Crescenta, California.
[19] Personal knowledge.

Baran, etc. served as nurses at various ARAMCO clinics in the country.[20] Teachers hired were Haig Kendirjian, Garo Sagherian, Mardig Hergelian, Hovhannes Mgrdichian (Turaif and Aar-Aar), Kevork Keoshkerian (Dhahran), Antranig Yegenian (Ras Tannura), Mesrob Tashjian (AlKhobar).[21] Arminé Bezdikian from Beirut was employed by ARAMCO in 1981 as the registrar for its girls' schools[22]; Vivian Nazely from the US was secretary at the Commissioning Department;[23] Salpi Bedian-Hillis from Lebanon taught at the Saudi Arabian International School.[24] I was also hired while in Saudi Arabia by the same school to teach the host country's culture.[25] Lucy Yeramian from Lebanon taught French at the French School in Dhahran.[26]

Armenians in the professional category held at least Bachelor of Science or Art degrees in Architecture, Electromechanical and Civil Engineering, Business Administration, Accounting, Nursing, and Education. The non-degree experts were the mechanics and electricians (Berj Attarian, Vahé Attarian, Seropian brothers), and jewelers (Setrag Dakessian), who worked in their own shops in partnership with Saudis or were employed by various companies.[27] Private seamstresses for the women of the royal family like Anahit Hopalian-Handian worked in Riyadh for King Faisal's wife.[28]

The Armenians primarily lived and worked in the Eastern, Western, and Middle provinces of Saudi Arabia. In the Eastern Province the centers were Dhahran, Dammam, and Al-Khobar, and various Aramco sites, such as Jubail, Ras Tannura, Abqaiq, and Udailiyah. In the Western Province Armenians worked in Jeddah, the main gateway for Muslim pilgrims to start their sacred journey to Mecca and Medinah. In the Middle province, Riyadh, the capital city, was where most Armenians worked.[29]

The new Armenian arrivals were either bachelors, newly marrieds, or families with children, some of whom were born in Saudi Arabia, such as Aleen Baran, Hrag Khanjian, Hrag Hamalian, Vazken Dakessian, Viken Dakessian, Arda Sarkis, Bedig Karakashian, Maria Karakashian and so on. Although it is

---

[20] Telephone interview with Ani Jindian-Derderian, August 4, 2022.

[21] Interview with Haig & Ani Kendirjian, August 4, 2023, La Crescenta, California.

[22] Interview with Arminé Bezdikian, April 13, 2020, Glendale, California.

[23] Telephone interview with Vivian Nazely, August 3, 2022.

[24] Interview with Salpi Bedian-Hillis, February 4, 2021, Glendale California.

[25] Personal knowledge.

[26] Personal knowledge.

[27] Interview with Setrag Dakessian, June 11, 2023, Beirut, Lebanon; personal knowledge.

[28] Interview with Shaké Karakashian, April 16, 2020, Van Nuys, California.

[29] Personal knowledge.

impossible to provide a specific total number of Armenians in Saudi Arabia, we can perhaps guesstimate that there were around 1000 of them.[30]

Most contracts included high salaries, housing accommodations, transportation, school tuition, paid tickets for vacation, domestic services, drivers, and more. In general, expatriates were able to save most of their earnings because there was no state income tax, and the cost of living was relatively low.[31]



المدرسة العربية السعودية العالمية

Saudi Arabian International School

قسم الظهران
DHAHRAN DISTRICT
القنصلية الامريكية العامة
American Consulate General
الظهران - المملكة العربية السعودية
DHAHRAN, SAUDI ARABIA

Page 1 of 5 pages

صفحة رقم ١ من ٥ صفحات

عقد عمل

EMPLOYMENT AGREEMENT

This agreement is made and entered into this 15th day of March 1983, by and between HASMIC BARAM (hereinafter referred to as "Employee") and the SAUDI ARABIAN INTERNATIONAL SCHOOL, DHAHRAN ACADEMY (hereinafter referred to as "School".) It records the mutual understanding and agreement of the parties regarding the employment of the Employee by the School under the following terms and conditions.

تم الاتفاق على هذا العقد في يوم ـــــ من شهر مارس ١٩٨٣م بين حاسمج باران ـــــ (المشار اليه فيما يلي موظف) و المدرسة العربية السعودية العالمية، ظهران (المشار اليها فيما يلي كمدرسة). و هذا يسجل الفهم المتبادل و موافقة الاطراف بخصوص توظيف المدرسة للموظف طبقا للشروط و الاحكام التالية ـ

DAILY LIFE AND CHALLENGES

By 1973-74 the number of expatriates employed in the Kingdom had risen significantly. Concerned that this fact could weaken the social structure of Saudi Arabia, the 3rd development plan included provisions for the preservation of Islamic values and their application and the spread of Sharia, which impacted foreign workers as well.[32] The Armenians lived and worked in this highly religious and restrictive environment.

[30] Personal knowledge.

[31] Personal Knowledge.

[32] *Saudi Arabia: A Country Study/Federal Research Division*, pp. 130-131.

Children's education similarly presented a challenge. The Saudi school system was not a viable alternative for Armenian children's learning. The few options available for them were the Saudi Arabian International School (SAIS), also known as Dhahran Academy, Dharan British School, the French School and, in Jeddah, the Continental School. The tuition fees were very high. Besides, education stopped at the 9th grade. The graduates had to attend boarding schools outside of Saudi Arabia for their High School diploma.[33]

DIFFERENCES OF CONDITIONS IN AND OUT OF COMPOUNDS

The Aramco compounds were designed to resemble American suburbs. Life in the compounds was relatively unrestrained and support services were available, including kindergartens, local clinics, tennis courts, swimming pools, commissaries, and recreation centers. The compounds were guarded and patrolled by security guards; access was restricted to residents and their visitors. However, life outside of the compounds was different.[34] The Armenians lived in single-family houses or apartment buildings and therefore did not have recreational centers nor other services.



The different cultural norms limited social interaction between the Saudis and the Armenians. Similarly, the absence of Armenian churches, schools, and community organizations and centers restrained social life to the residential boundaries.

Life was difficult for those who had come to Saudi Arabia as bachelors, especially for those who had projects in the remote areas. Work was the main pastime for them.[35] In the male-oriented society Armenian female workers and dependent wives were unable to do things on their own. Mobility was restricted since driving for women was prohibited. To do the daily routine shopping, they either had to arrange for the company driver to take them to the market, or they had to wait until evening to go with the husbands. However, it was not too

---

[33] Personal knowledge.

[34] Georg Glaze, "Segregation and Seclusion: The Case of Compounds for Western Expatriates in Saudi Arabia," *Geo Journal*, 1-2(66):2006, pp. 83-88.

[35] Interviews with Berj Kaprielian, March 30, 2020, Glendale, California; Dikran Karakashian, April 16, 2020, Van Nuys, California; Varoujan Charkhedian, November 3, 2022, Granada Hills, California.

difficult for housewives to cope with those restrictions because of domestic assistance and having drivers and other conveniences. They also had plenty of time to develop new skills such as in embroidery, tailoring, cooking, arts and crafts, etc. Spending time with children and socializing with other young mothers with children were some of the advantages they enjoyed.[36]

The Armenian community in Saudi Arabia was not an officially established community; however, in practice it did function as one. Birthdays, anniversaries, Christmas, New Year, and Easter were occasions commonly celebrated in the Armenian homes.[37] There was an open invitation to all Armenians to attend those parties and celebrations. One memorable New Year's Eve party, held on December 31st, 1977, was at Zaven and Sona Khanjian's residence in AlKhobar. The attendees enjoyed the great ambience and the delicious food.[38]

Armenian culture and identity were preserved. On weekends mothers opened home schools such as Diroug Manjigian's school in Abqaiq, Shaké Karakashian's school in Jeddah, and Adriné Tufenkjian's school in AlKhobar, to name a few. Children learned the Armenian language and culture through reading, writing, dancing, and storytelling. A culminating program or *hantes* showcased children's achievements.[39]

In Dhahran, the celebration at the beach of the 60th anniversary of Armenian Independence Day on Friday, May 26th, 1978, epitomized the Armenian spirit. Everyone participated according to their capacity from making fliers to setting up the place, to the preparation of food and the program, and even hoisting of the Armenian tricolor flag and naming the place as "Sartarabad Beach." More than a hundred Armenians, including guests from Riyadh, enjoyed this memorable day. "My parents from Beirut were visiting us in AlKhobar; Armenians had organized a trip to the beach. We went to the souk and bought red, blue, and orange cloth, and my father sewed the Armenian flag," said Arminé Bezdikian.[40]

The Armenian spirit was not only expressed through gatherings and celebrations, but it extended to philanthropy as well, for instance, organizing

---

[36] Personal knowledge; many of the interviews cited.

[37] Interviews with Adriné Tufenkjian, March 30, 2020, Simi Valley, California; Salpi Bedian-Hillis, February 4, 2021, Granada Hills, California; Nora Bezdikian, December 28, 2021, Glendale, California; Sossie Melkonian, April 12, 2020, Granada Hills, California; Helga Sarkis, March 30, 2020, Brentwood, California.

[38] Interview with Sona Khanjian, March 25, 2020, Glendale, California.

[39] Interviews with Shaké Karakashian, April 16, 2020, Van Nuys, California; Adriné Tufenkjian; Nora Bezdikian.

[40] Interview with Arminé Bezdikian.

fund raising drives to send humanitarian aid to Lebanon and later to Armenia after the 1988 Earthquake.[41]

Armenians created strong bonds within their own families and established lasting relationships with fellow Armenians that they cherish to the present day. The small Armenian community also provided the opportunity for the Armenian bachelors and bachelorettes to meet their future life partners.[42]



CONCLUSION

Life in Saudi Arabia provided the Armenians with the necessary experience and the financial resources that enabled them to become permanent residents in their new destinations, primarily the United States of America and Canada. Salpy Hillis stated: "*Being exposed to other cultures and nationalities and establishing lasting relationships widened our scope and experience.*"[43] Harry Derderian, on the other hand, explained: "*I gained work experience that helped for a smooth transition leaving Saudi Arabia to be relocated to the United States or elsewhere. I was immediately rehired by the US Federal Government in various capacities and projects in several countries including Armenia.*"[44] His wife, formerly Ani Jindian, spoke of her case: "*As a new graduate I gained experience not only in my career, but I learned life lessons as well. My present values of family life dynamic are shaped after my experience in the Saudi Arabian Aramco community life. My whole life changed in Saudi Arabia.*"[45]

LEAVING SAUDI ARABIA

As the title of this paper indicates, Armenians were temporary migrants in Saudi Arabia, but they left their imprint on the development of the country. Certain conditions compelled them to leave. For instance, achieving permanent

[41] Interview with Taniel Tufenkjian, March 30, 2020, Simi Valley, California.

[42] Interviews with Vivian Nazely; Nora Bezdikian; Shaké Karakashian; Helga Sarkis; Sossie Melkonian.

[43] Interview with Salpy Hillis.

[44] Telephone interview with Harry Derderian, August 11, 2022.

[45] Telephone interview with Ani Jindian-Derderian.

residency status or Saudi nationality was impossible. By the 1990s, incomes were not as lucrative as before given the slowing down of some infrastructure projects. There were no schools for children beyond middle school, so certain families left to provide their children with the opportunity to further their education. The desire to preserve Armenian identity similarly compelled families to depart the country. Others had made adequate savings to start a new life elsewhere, especially in the United States and Canada.

Saudi-Armenian business partnerships did not continue abroad. However, most Armenians pursued the same careers after leaving Saudi Arabia; only a small percentage pursued other occupations. Equally important, they maintained their social networks and bonds among themselves in the new host countries of the West. To be sure, some Armenians continue to work in Saudi Arabia. However, the development of other Gulf countries in recent decades has provided alternate destination points for Armenian workers, especially those from other parts of the Middle East.

ՀԱՅ ՊԱԴՈՒԽՏՆԵՐ ՍԷՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ՄԷՋ, 1970–90ԱԿԱՆՆԵՐՈՒՆ

(Ամփոփում)

Յասմիկ Քելիկեան-Պարան
hasmig.baran@csun.edu

Զեկոյցը կը ներկայացնէ Սեուտական Արաբիոյ հայ պանդուխտները 1970–90 շրջանին: Ան կը նկարագրէ Տահրանի, Ռիատի, Ճետտայի, Ռաս Թաննուրայի, Ժուպայլի, Ապքայքի եւ Ուտայլայի հայ խմբաւորումները: Զեկոյցը լուսարձակի տակ կ'առնէ հայերու աշխատանքային ասպարէզը եւ գործի պայմանները, ընտանեկան ու ազգային ցանցերը, հայ կանանց կարգավիճակը, սէուտցիներու հետ շփման ծիրը, շահերն ու մարտահրաւէրները եւ նման այլ հարցեր: Զեկոյցը բացառապէս հիմնուած է ներկայիս Մ. Նահանգներ կամ Քանատա բնակող եւ նախապէս Սէուտ. Արաբիա բնակած հայերու հետ կատարուած հարցազրոյցներու եւ հեղինակին անձնական փորձառութեան վրայ:




Պանդուխտի Տարիներ Սէուտական Արաբիոյ Մէջ (1973-79)

ԶԱՒԷՆ ԽԱՆՃԵԱՆ
ZKhanjian@amaa.org

ՄՈՒՏՔ

Պանդխտութիւնը հայու ճակատագիր է:

...Թողած հայ դատը հետապնդելու երազներս, թողած Վահագն Տատրեանի Հայոց Ցեղասպանութեան ուսումնասիրութեան աշխատակից ըլլալու վիժած առիթը, ինազանդ՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի (ՊԱՀ) քաղաքական գիտութեան դասախօսներէս Շաւարշ Թորիկեանի խրատը՝ «*փղա՛ս, սուրիացի ես, յետ ուսման ընտանիքիդ օգտակար ըլլալու կարիքը ունիս, լաւ կ՛ըլլայ մասնագիտութիւնդ փնտռեսութեան կամ առեւտրական վարչագիտութեան փոխես*»ին, 1967ին՝ ՊԱՀէն առեւտրական վարչագիտութեան մասնագիտութեամբ շրջանաւարտ ըլլալէս անմիջապէս ետք, թողած ընտանիքս եւ ծննդավայր Հալէպը, Քուէյթ հասայ աշխատան-քի, ապա՝ Տուպայ, Մարտ 1973ին եւ վերջապէս Սէուտական Արաբիա, Յունուար 1975ին:



Ես անշուշտ, Սուրիոյ հայօճախին «ապերախտ» զաւակներու երկար շղթային մէկ օղակն էի: Զաւակներ, որոնք զինուորական պարտադիր ծառայութեան սպառնալիքին տակ, պատրաստ էինք պանդխտելու: Ես ալ փախստական դարձայ[1]:

Քուէյթը պանդխտութեան առաջին կայանն էր իսկ Տուպայը այդ օրերուն իսկ ճանչցուած էր որպէս Ծոցի արաբական երկիրներուն Փարիզը: Բայց անոնք տարբեր պատմութիւններ են:

---

[1] 1978ի Մայիսին մասամբ փրկեցի արժանապատուութիւնս հինգ հազար ամերիկեան տոլար փրկագին վճարելով եւ ծննդավայրս վերադառնալու իրաւունքս վերապահելով:
Սուրիոյ մէջ պարտադիր էր զինուորական ծառայութիւնը որ 1967էն առաջ երկու տարի էր, իսկ պատերազմէն ետք ատեն մը շատ աւելի երկար:

Պանդխտութեան ծանր ճնշումը, հարազատներու բացակայութիւնը եւ արդէն կեանքի ընկեր մը կանուխ ընտրած ըլլալու որոշումս զիս մղեցին ամուսնութեան 1970ին Պէյրութի մէջ, սուրիական համայնքի հայրենակցական, կրթական եւ հոգեւոր ոլորտներու մէջ յարգուած առաջնորդ եւ ծառայող՝ Պետրոս Քելլիկեանի երէց դստեր՝ Սոնային հետ: Սոնային ծանօթացած էի աւետարանական համայնքի երիտասարդական ամառնային ճամբարներու ընթացքին եւ մտերմացած:

1974ի աշնան, ասպարէզիս մէջ վերելքի ճանապարհին, ինքնաշարժի արկած մը, Տուպայի մէջ, զիս ամիսներով անկարող դարձուց, կասկածի տակ դնելով նոյնիսկ քալելու կարողութիւնս: Ապաքինման շրջանը, Պէյրութ անցուցի, շուրջս ունենալով տիկինս՝ Սօնան եւ 2 ½ տարեկան անդրանիկ մանչս՝ Վազգէնը:

Ընկճուած այս վիճակս աւելի վատթարացաւ երբ մեծաւորներս զիս յարմար նկատելով, տեղեկացուցին՝ թէ այդ օրերու յարաբերաբար չափազանց բարեկեցիկ պայմաններէն հանելով, զիս Սէուտական Արաբիա կը փոխադրեն որպէս տնօրէն ընկերութեան Սէուտական Արաբիոյ մէջ ծաւալած գործողութիւններուն: Լախտի հարուած մըն էր զոր դիմաւորեցինք յուզումով, առանց երբեք իմանալու թէ նորահաստատ այդ ընտանիքի, արաբական ծոցի մէջ ծառայած եւ ապրած շրջանի ամենաերջանիկ տարիները պիտի դառնային:

1975ի Յունուարին արդէն Խոպար էինք:

ԱՌԱՋԻՆ ԱԿՆԱՐԿ

Խոպարին ծանօթ էի: Գործով նախապէս հոն եղած էի: Ա՛յդ ալ պատճառ էր յաւելեալ նեղութեանս...:

1974ի աշնան, համալսարանական ընկերներէս ճարտարագէտ Վահան Պզտիկեանը Խոպար էր արդէն եւ գուցէ միակ ծանօթը որուն հանդիպեցայ: Փոքր քաղաք մըն էր Խոպարը: Արեւելքէն ARAMCOի Տահրան աւանին եւ հիւսիսէն Տամմամ քաղաքին միջեւ, ծովեզերքը կայք հաստատած: Քաղաքը միքանի ասֆալթապատ փողոց ունէր՝ Խալէտ փողոցը, որ քաղաքին գլխաւոր շուկան էր, եւ՝ արեւելքէն Տահրան ուղղուող պողոտան: Կեդրոնէն Տամմամ տանող մայր ճանապարհը տպաւորիչ էր, իսկ հիւսիսէն եւ արեւելքէն քաղաքին սահմանները զատորոշող փողոցները ասֆալթապատումի գործընթացնի մէջ էին: Անապատի ամառնային կիզիչ եւ խոնաւ կլիման անծանօթ չէր մեզի. ատոր ընտելացած էինք: Օտարահպատակներ ընդհանրապէս Տահրան մէկտեղուած էին, իսկ Խոպարը կը թուէր ըլլալ իր ծննդոցի առաջին օրերուն մէջ: Այո՛, լոյսը ստեղծուած էր, բայց լոյսին տակ ամէն ինչ անձեւ կաւ էր: Հրապուրիչ ոչ մէկ բան կար: Հանրային պարտէզ, մարզական աւան, շարժապատկերի սրահ, երաժշտական կամ մշակութային հաւաքավայր, սրճարան կամ ճաշարան, ոչ-իսլամական պաշտամունքի վայր, այս բոլորը ծննդոցի յետագայ փուլերուն պիտի գային: ...Ասոնցմէ ո-

մանք մինչեւ այսօր ալ գոյութիւն չունին տակաւին: Անապատին մէջ: Տառացիօրէն հոգիի եւ մարմնի ամէնատարրական կարիքներն իսկ զլացող անապատ մը: Միքանի շաբաթ նորաբաց Ղուսայպի հիւրանոցի ամայի աւազանը մխիթարանքի հրաւէր մըն էր: Բայց, աւելի՛ն պէտք էր:

Երկիրը արագ փոխանցման շրջան մը կ'ապրէր: Արեւմուտքը պատժող սէուտական քարիւղի պոյքոթը (Հոկտեմբեր 1973) գիները արագօրէն բազմապատկած էր, առիթ ստեղծելով տնտեսական աներեւակայելի ոստումի մը, որ 1975ին երկրին դռները կը թակէր: Շրջանի տնտեսութեան բաբախող սիրտը ARAMCOն էր: Գրեթէ ամէն գործ եւ անձ ուղղակի կամ անուղղակի ARAMCOի հետ կապուած էր: Վերջինս սկսած էր զարգացնել Ծոցի մէջ իր փորած քարիւղի հորերը, ուր մեր ընկերութիւնը մասնագիտացած էր իր նաւային տորմիղով եւ կը ծառայէր ծովային քարիւղահանման աշխատանքին:

Հայը պանդխտութեան մէջ ի՞նչ կը փնտռէ: Իր ազգակիցը: Պէյրութ կամ Լոս Անճելըս չես դառնար ամէն հայերէն խօսողին ու հարցներ՝ «հա՞յ էք»: Խոպարը տարբեր էր: Հայու փնտռտուքը օդի եւ ջուրի չափ կենսական էր: Եւ այդպէս, շուտով արիւնը քաշեց քարիւղի կայանի մը մէջ ուր գտանք, աւելի ճիշտը ինք մեզ գտաւ, սէուտական պարեգօտ՝ *փըշփաշէ,* հագած սայտացի Սեպուհ Գիզիրեանը: Տակաւ ծաւալեցաւ մեր հայկական շրջանակը. Տամմամի մէջ՝ յորդանանցի Տիգրան Գարա-գաշեան եւ իր նորմարաշցի կնոջ՝ Շաքէ Տագէսեանով, Տահրանի մէջ՝ քեսապցի Յակոբ Մանճիկեան եւ իր ճեմարանական կնոջ Տիրուկ Մնակեանով ու հալէպահայ՝ Հայկազեան Համալսա-րանի շրջանաւարտ, ուսուցիչ՝ Գէորգ Քէօշկերեանով:

ԳԱՂՈՒԹԸ ԿԸ ԾԱՒԱԼԻ

Մեծ չէր հայերուն շրջանակը, իսկ ընտանիքները՝ սակաւաթիւ: Գլխաւորապէս Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառաւ շուտով հոն էր Տիգրան Գարագաշեանին եղբայրը՝ Գէորգը: Չուշացան Շաքէ Տագէսեանին ոսկերիչ եղբայրները՝ Սեդրակը եւ Յակոբը, որոնց արհեստի, արուեստի եւ վաճառականութեան առեւտուրը տասնամեակներով ամէնաերկար մնացող ներկայութիւն եղաւ Խոպարի մէջ: Փոքր, կոկիկ եւ ծաւալող ներկայութիւն էին ARAMCOի հայերը, սփռուած Տահրանի, Ապքէյքի եւ Րաս Թաննուրայի միջեւ: Կային եւ խումբ մը հիւանդապահուհիներ, որոնցմէ կը յիշեմ հալէպահայ Անի Ճինտոյեանը: Տակաւ ծաւալեցաւ սուրիահայ եւ լիբանահայ ժամանողներուն թիւը: Հոն էր առեւտրական վարչագէտ Գրիգոր Հարպոյեանը, քաղաքաշինութեան ճարտարապետ Ժաք Էքմէքճին, մեքենագէտ Պերճ Աթթարեանը, ուսուցիչներ՝ հալէպահայ Յակոբ Գասապեանը, Լիբանանէն՝ Մարտիրոս Հերկէլեանը, Վազգէն Բիւզանդեանը եւ Յովհաննէս Մկրտիչեանը: Շուտով գաղութը հարստացաւ ԱՄՆէն ժամանող հայերով, որոնցմէ ոմանք Հալէպէն գաղթածներ էին: Ասոնց շարքին էին Morrison-Knudson շինարարական ընկերութեան տնօրէն, մանկապար-

տէզի դասընկերս՝ Արա Մոմճեանը, University Associates for International Health ընկերութեան վարչակազմի մէջ ծառայող Հրաչ Աստուրեանը իր տիկնոջ Սենտիի հետ եւ ARAMCOի վարչական կազմին մէջ աշխատող ամերիկահայ Ճորճ եւ Րոզի Մարան-ճեանները:

1975ի Սեպտեմբերին մեր ընտանիքը բախտաւորուեցաւ երկրորդ մանչ զաւակով մը՝ Հրակ-Պետրոս: Օգտակար ըլլալու համար Սոնային, մեր հետ էր համալսարանական ուսման սեմին գտնուող, Լիբանանի պատերազմին աւարտը սպասող Սոնային քոյրը՝ Նորան: Նախախնամութիւնը նախատեսած էր կ'երեւի որ 1977ի Դեկտեմբերին Նորան իր կեանքի օղակը կապէ Վահան Պզտիկեանին հետ Խոպար հաստատուելով: Կրկին պատերազմի պատճառաւ մեր ընկերութեան մէջ աշխատանքի կոչուեցաւ Հայկազեան համալսարանէն շրջանաւարտ նորապսակ Արսէն Պարանը, որ եկաւ Խոպար հաստատուելու իր տիկնոջ՝ Սոնային միջնեկ քրոջ, ՊԱՀի Nursing Schoolի շրջանաւարտ՝ Յասմիկի Քելլիկեանին հետ: Հայօճախը տակաւին մեծ չէր եւ սակայն մեր ընտանեկան շրջանակը արագօրէն կ'ընդլայնէր: Շրջանի ընկերային եւ կազմակերպական կեանքի սովին պատճառած հսկայ բացը տուներու մէջ եւ երդիքներու տակ անդադրում ընտանեկան ջերմ հաւաքոյթներով, ընթրիքներով եւ այցելութիւններով փոխարինուած էր: Ամէն օր, ամէն շաբաթ, ամէն ամիս:

Լիբանանի պատերազմը կը սաստկանար, 'արտածելով' նորանոր պանդուխտներ ամէնուրեք: Խոպար էին Վահան Պզտիկեանին ՊԱՀի շրջանաւարտ ընկերները, ճարտարապետ կամ ճարտարագէտ Պերճ Գաբրիէլեանը, Հրաչ Որբերեանը եւ Դանիէլ Թիւֆենքճեանը, Պզտիկեանի ընկերութեան հովանիին տակ: Րիատ հասան Վահէ եւ Յասմիկ Եազըճեանները եւ Հրաչ ու Սեդա Սիմոնեանները:

Ամուսնացած ընտանիքներու զաւակները մանուկ էին, երկոտասնեակ մը, ուստի անմիջականօրէն անոնց հայերէն լեզու եւ տոհմիկ մթնոլորտ մը ստեղծելու անհրաժեշտութիւնը հրատապ թուեցաւ: Չուշացաւ լուծումը երբ Մանճիկեաններու հետ միասնաբար 1975ին ծրագրեցինք ուրբաթօրեայ մանկամսուրի մը ծնունդը, Տահրանի ծիրէն ներս: Իսկ շաբթուան ընթացքին դպրոցական տարիքի մեր զաւակները սկսան յաճախել Dhahran Academyն:

Երկրին մէջ ոչ-իսլամական կրօնական հաւաքներ, պաշտամունք եւ աղօթք արգիլուած էին: Հետեւաբար, մեր հոգեւոր սնունդի աղբիւրները մնացին մեր բնակարանային առանձնութիւնները: Այդ օրերու ARAMCOն, բնակուած օտարահպատակ պաշտօնեաներու կողմէ, յարաբերական ազատութիւն կը վայելէր, այլ բարիքներու կողին ունենալով միջ յարանուանական դիմագիծով պաշտամունքի յատուկ կառոյց մը: Պարբերաբար տօնական օրերու պաշտամունքներուն կը մասնակցէինք Տահրանի միջ-յարանուանական այդ ժողովարանին մէջ, բազմազան երկիրներու հրպատակ հաւատացեալներու հետ:

ԽՈՊԱՐԻ ՄԵՐ ՏՈՒՆԸ

Ես մեր տան հասցէն չեմ գիտեր: Նամակատուփ կ'օգտագործէինք: Բայց Խոպարը մեր տունը գիտէր: Կանգնած քաղաքի հիւսիսային սահմանի պողոտային վրայ, մեր տունը հանգստութեան ամէն պայմանները ունէր: Յիրաւի, ամերիկեան ընկերութիւնը ուր կը ծառայէի, հետամուտ էր կեանքի դժուար բոլոր պայմանները հատուցանող հանգստութիւն մը ապահովել բնակարանային ապահովման միջոցով: Ընդարձակ, երկյարկանի, ցանկապատով, բակով եւ ծառայի մը յատկացուած արտաքին տնակով, այդ օրերու բոլոր յարմարութիւնները ունեցող բնակարան մըն էր, որուն մայր դռան՝ IMSի (International Marine Services, Dubai եւ Intermarine, Saudi Arabia) ինքնաշարժները խոպարցի վարորդներով ծառայութեան պատրաստ էին: Յիշեմ որ մինչեւ վերջերս փափուկ սեռին արգիլուած էր ինքնաշարժ վարել, ընկերային մեծ բեռ մը դնելով ընտանիքներու ուսին:

Խոպարը գիտէր մեր տան հասցէն քանի մեր տունը ակումբ էր եւ ժողովարան, գրասենեակ ու գրադարան, սրճարան եւ ճաշարան, հիւրանոց եւ կացարան: Իսկ Սոնան՝ մայր էր եւ քոյր, ընկերուհի եւ քարտուղար, հիւրընկալ եւ արդէն որակաւոր խոհարարուհի: Խոպարը գիտէր մեր տան հասցէն, քանի որ կարգ մը հայ ուսուցիչներու կողակիցներու հասցէական կացարանը մեր տունն էր, անոնց կեցութեան արտօնագրի ապահովման համար: Խոպարը գիտէր մեր տան հասցէն քանի որ Սարգիսեան եղբայրներու - յետագային երկրի ամէնամեծ շինարարներէն եւ համաշխարհային վարկ վայելող BEMCO ընկերութեան - արեւելեան շրջ-ջանի գրասենեակը մեր տան հասցէն կը կրէր: Խոպարը գիտէր մեր տան հասցէն քանի որ նշելու համար կաղանդը եւ Սոնային Նոր Տարուան զուգադիպող տարեդարձը, քաղաքի հայ բնակչութիւնը եւ յատկապէս առանձին ապրողները բաց հրաւէր ունէին տօնական եւ ընտանեկան ջերմիկ մթնոլորտ մը վայելելու մեզի հետ: Խոպարը գիտէր մեր տան հասցէն քանի որ Սեպուհ Գիզիրեանի նման տղաք ընհանրապէս առաւօտեան սուրճը մեզի հետ կ'առնէին տան գրասենեակին մէջ, որ առանձին արտաքին մուտք ունէր: Խոպարը գիտէր մեր տան հասցէն քանի անձանօթներ տարիներու ընթացքին հանդիպելով մեզի յուշած են թէ մենք ձեր տունը եղած ենք կաղանդին: Խոպարը գիտէր մեր տան հասցէն, իսկ մենք սիրեցինք հայաշունչ Խոպարը:

ԴԱՒԱԴԻՐ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Այդ օրերու հաղորդակցական թեքնոլոճին TELEXն ու հեռաձայնն էին, թոյլ, տկար եւ անվստահելի, մանաւանդ՝ արաբական երկիրներու միջեւ[2]: Դաւադիր էին հաղորդակցական միջոցները յատկապէս Սուրիայէն: 1976ի

[2] Կը յիշեմ Տորէտ Լահհամի նշանաւոր հեգնական արտայայտութիւնը՝ «Եթէ կ'ուզես Հալէպէն Դամասկոսի հետ հաղորդակցիլ հարկ է նախ Պրազիլ հեռաձայնել եւ այդ ճանապարհով կապուիլ»:

Փետրուար 20ին հայրս սրտի տագնապէ մահացած էր Հալէպի մէջ: Նախախնամութիւնն էր գուժը մեզ հասցնողը. Տիգրան Գարագաշեանը երկու շաբաթ ետք Պէյրութէն վերադարձին, հօրս մահազդը կրող *Ազդակ* օրաթերթը ձեռքին կը մօտենայ ընտանեկան շրջապատին, բաժնելու համար կսկիծը: «Տղաք»ը հաւաքաբար այցելեցին մեր Խոպարի «որբացած» տունը, միասնաբար փոխանցելու գուժը եւ մխիթարելու մեզ:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՔ ԼԻԲԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Դաւադիր հաղորդակցական միջոցները արգելք չեղան Լիբանանի մէջ պատահած ողբերգութեան մասին մեզի հասնող տեղեկատուութեանց: Հաւաքուեցանք, ծրագրեցինք եւ նախաձեռնեցինք մեր ճիտի պարտք դրամահաւաքը, օգնութեան ձեռք երկարելու տագնապահար լիբանահայութեան: Կազմուեցաւ «Լիբանանահայութեան Օժանդակութեան Յանձնախումբ – Սէուտական Արաբիա, Արեւելեան Շրջան»ը: Հաւաքեցինք 40,411 Լ.Ո. զոր Սօնային բուռն բողոքներուն հակառակ, 1976ի Փետրուարին անձամբ Պէյրութ տարի եւ յանձնեցի առաջնորդարան՝ փոխանցուելու «Լիբանանի Հայ Կարօտեալներու Օգնութեան Կեդրոնական Մարմին»ի:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԻ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՈԳԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿԸ

Մինչեւ 1979ի իրանեան յեղափոխութիւնը բաւական մեղմ էր Սէուտական Արաբիոյ Արեւելեան Շրջանի իսլամական բարոյական պահակներու սեղմումները: Աննկատ չէր անցներ ARAMCOի Տահրան բնակող օտարահպատակ ընտանիքներու համարձակ զգեստաւորումը Խոպարի շուկաներուն մէջ: Ընկերային այդ ազատութիւնը, զուգորդուած մեր որդեգրած անյաւակնոտ քաղաքական ազատութեան, հանգիստ կերպով դրսեւորուեցաւ Ուրբաթ, 26 Մայիս 1978ին, շրջանի հայութիւնը հաւաքելով մայր ճամփէն հեռու գտնուող Half Moon Bayի ծովափին: Խոպարը կը շնչէր հայու միասնական ոգին, ծածանելով եռագոյնը, ներշնչուած Հայաստանի անկախութեան վաթսունամեակով: Եռագոյն հրաւէրի արուեստագէտը՝ ճարտարապետ Դանիէլ Թիւֆենքճեանն էր, իսկ փոխադրական միջոցները եւ ծովափի սարքաւորումները հայթայթողը՝ ընդհանրապէս Վահան Պզտիկեանի SAULEX ընկերութիւնը: Բոլոր ներկաները իրենց բաժինը ձեւով մը բերած էին իսկ տօնակատարութեան միասնական ոգին հարազատօրէն ընդհանրական էր: Երգ, նուագ, պար, ծով, երկինք, ծափ, ծիծաղ բացարձակ ազատութեան մթնոլորտ մը ստեղծած էին բազմաթիւ կաշկանդումներ պարտադրող երկրի մը հողին վրայ: Այդ օր, Խոպարը արգելք չճանչցաւ:

ACTIVISMԸ ԽՈՊԱՐԻ ՄԷՋ

Անապատը կարող չեղաւ խաւարելու յանձնառութիւնս եւ կարողականութիւնս՝ հետեւելու եւ հետապնդելու հայ ժողովուրդը հետաքրքրող նիւթերուն

եւ զանոնք արձագանգողներուն: Տասնամեակը ASALAին կը պատկանէր: National Geographicի եւ Economistի բաժանորդագրութիւններս կը շարունակուէին: Երբեք չէին դադրած նաեւ արաբական մամուլի հետեւողական ընթերցումներս: Ընկալումը եւ հետապնդումը միակողմանի չէին աւարտեր միայն ընթերցումով, այլ յաճախ պատասխան նամակներով, արդարութեան եւ իրաւունքի ձայնը կը ջանայի բարձր հնչեցնել: Ահաւասիկ պատկերաւոր նմուշ մը երկլեզու նամակներու՝ ուղղուած հետեւեալ հրատարակութիւններուն: Այդ օրերուն, նամակներ յղած եմ *National Geographic*ին, *Time Magazine*ին, *The Economist*ին, *Cambridge University Press*ին, *The Armenian Assembly*ին, *AlHawades*ին, *The New Yorker*ին:

Խոպարը արգելք չէր հայ դատի իրաւունքներու հետապնդումին:

ՄԻԱԿ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆԸ

Միակ ողբերգութեան փորձառութիւնը որ ունեցանք Խոպարի մէջ, լիբանահայ գեղադէմ, ժպտադէմ, ազնիւ, համալսանաւարտ քաղցր երիտասարդ Սեպուհ Աքարճալեանի ինքնաշարժի արկածով մահն էր: Ատիկա մեզ ծանրօրէն ցնցեց եւ նկատի ունենալով երկրին օրէնքները՝ չկրցանք պատշաճօրէն իսկ սգալ անոր մահը: Մարմինը Լիբանան փոխադրուեցաւ 1975ի ամառը, Լիբանանի պատերազմի մթնոլորտին մէջ:

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԽԱՆԴԸ ՍԷՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ

Հայերու ներկայութիւնը եւ ներդրումը ընդհանրապէս կարճաժամկէտ եղաւ: Ոմանց ներդրումը այդ կարճ շրջանին իսկ բաւական մեծ էր իսկ ուրիշներու ներկայութիւնը մրցանիշ կոտրեց: Սէուտական Արաբիոյ արագ զարգացման ընդհանուր պատկերին մէջ թերեւս ժամանակի ընթացքին նսեմանայ հայկական այս ներդրումներու արժէքը: Սակայն հայկական ներդրումները կը մնան ռահվիրաներ՝ զարգացման առաջին եւ ամէնա-դժուար հանգրուանին: Անոնցմէ են շինարարներ՝ Պերճ Գալայճեանը, Յովհաննէս Պէօճէքեանը, Հրաչ Սարգիսը, Վահան Պզտիկեանը, Վիգէն Երամեանը եւ գուցէ անծանօթ ուրիշներ: Իսկ այս բոլորին եւ ընդհանրապէս համաշխարհային չափանիշով հսկան, Սարգիսեան եղբայրներու հիմնած BEMCOն է, որուն ներդրումը Սէուտական Արաբիոյ զարգացման մէջ կարելի չէ նսեմացնել: BEMCOն երկար մնաց, շէնցնելով եւ զարգացնելով երկիրը:

Յիշեմ տակաւին.- Վահէ Եազըճեանը, որ 47 տարիներէ իվեր իր բաժինը կը բերէ երկրին առեւտրային եւ խոհանոցային զարգացման մէջ, Գրիգոր Սատաքեանը, որ երկար ծառայեց եւ կատարելագործեց հաշուե-քննական ծառայութիւնը Saba & Co եւ ապա Talal Abu Ghazaleh & Co.ի մէջ, Սեդօ Տագէսեանը որ երկար տարիներ զարդարեց Խոպարի շուկան եւ փափուկ սեռի վիզերը գոհարեղէններով, Տիգրան Գարագաշեանը որ իր վարչական հմտութիւնները ի սպաս դրաւ երկրին յառաջդիմութեան, Յարութ Տէր Դաւիթեանը որ զարգացուց ապահովագրական մասնագի-տութիւնը միշտ

մնալով անխոնջ activistը, Արսէն Պարանը որ խոչընդոտ չէր ճանչնար: Ան քարն ու աւազը զարգացնելու գիտութիւնը ունէր եւ գործեան հանգոյցները քակելու ուժն ու կարողութիւնը, Պետրոս Պետրոսը, որ Պետրոս Առաքեալը յիշեցնող լման մարդն էր, Վազգէն Թերզեանը, որ այն ազգային գործիչն էր որուն անշահախնդիր եւ անաչառ ծառայութեան եւ նուիրումի դաշտը մոլորակային սահման չէր ճանչնար, եւ վերջապէս՝ Սարգիսեան եղբայրներու համազգային կեանքին մէջ ներդրած բարի գործերը: Ասոնք բոլորը երկար պիտի ղօղանջեն մեր ժողովուրդի արդի պատմութեան անդաստանին մէջ:

ՎԵՐՋԱԲԱՆ

1978ին, Տահրանի ամերիկեան հիւպատոսարանը մեզի անակնկալօրէն իմացուց թէ ինը տարիներ առաջ, երէց քրոջս՝ Լորային, ընտանեկան միացումի նպատակադրուած ԱՄՆ գաղթելու դիմումնագիրը ընդունուած ըլլալով մեր ընտանիքին գաղթելու արտօնագիրը պատրաստ է: Մենք սակայն պատրաստ չէինք: Երկու յաջորդական այցելութիւններէ ետք եզրակացուցինք թէ մեր զաւակներուն հայկական ուսում ստանալու ճանապարհը եւ լիբանանեան շարունակուող տագնապի արդիւնք լուծումը Քալիֆորնիա հաստատուելու մէջ կը կայանայ:

4 Օգոստոս 1979ին, մեր երեք զաւակներով, որոնցմէ Վանան՝ Սեպտեմբերին Մ. Նահանգներու մէջ լոյս աշխարհ պիտի գար, թռիչք առինք դէպի Քալիֆորնիա: Հոն՝ աստուածային օրհնութեանբ, կեանքի անդաստաններու մէջ նոր ակօսներ բանալու նորանոր առիթներ մեզ կը սպասէին:

Հայ Խոպարը ընդհանրապէս չուշացաւ հետեւելու մեզի:

MY EXPAT YEARS IN SAUDI ARABIA BETWEEN 1973 AND 1979


(Summary)

Zaven Khanjian
ZKhanjian@amaa.org

Based on a number of eye-witness accounts and on his own personal experience for the period between 1973 and 1979, the author narrates the story of the first Armenians who arrived in the Arab Gulf states, names them and the spheres they worked in, and draws a panoramic picture of Armenian developers, architects, businessmen, mechanics, nurses, teachers, and white-collar workers in AlKhobar, Dhammam, and Dhahran. The paper recounts the process of adaptation these individuals and families underwent and describes the efforts they made to establish a sort of communal life and an Armenian atmosphere, which included a kindergarten, group trips, fund raising, commemorative events, spiritual life, etc. The paper provides a general profile of the Armenians in the said period and area and analyzes the reasons why some left for the USA and Canada.



Մեր տան պարտէզը, փոքրերու եւ մեծերու հետ



ԱՌԱՔԵԼԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԼԻԲԱՆԱՆԻ

PRELATURE ARMENIENNE DU LIBAN

Tél. 234167 – B. P. 409 – BEYROUTH

Գիւքսէր, 19 Փետրուար 1976
Beyrouth,

Սէուէական Արարիոյ Արեւելեան Երիզանի Հայութեան

Սէուէական Արաբիա

Մեծայարգ Տիարը,

Անհուն սիրով եւ շնորհակալութեամբ ստացանք Ձեր ղրկած նուէրը՝ Քառասուն Հազար Ձորս Հարիւր Տասնեւմէկ /40.411/ Լիբ. Ոսկի-ները՝ Լիբանանի հայ կարօտեալներուն բարեգործութեան համար, եւ ան այդ տաճկացէք նպատակ գանել համապատասխան ընկալազիրը:

Ցանուցս ներողութեան սարմանին եւ Լիբանանահայութեան մեր երախտագիտական շնորհակալութիւնները կը յայտնենք Ձեզի եւ Ձեզի կը մաղթենք լիակատար յաջողութիւն եւ բարօր օրեր:

Մնամք սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթարար

ՏԱՃԱՏ ԱՐԵՊԵԱՆԻՈՆ
ԱՌԱՔԵԼԱՐ ՀԱՅՈՑ ԼԻԲԱՆԱՆԻ

գրուած է»[6]: Երրորդ՝ 20 Դեկտեմբեր 1956 թուակիր նամակը Զարեհ Ա. վեհափառին կը յայտնէ, թէ Պէյրութ կը գտնուի Շէյխ Ապտուլլահ Մուպարաք, որ «*մեծ ազդեցութեան տէր իշխան մըն է*»: Կը խնդրուի, որ վեհափառը Մովսէս Տէրգալուստեանի եւ տոքթ. Ատուր Գապագեանի հետ համախորհուրդ թէյասեղանի մը շուրջ հաւաքուին յիշեալին հետ ու «*իրաւական դժուարութիւնները հարթեն՝ համայնքը Անթիլիասի հովանաւորութեան տակ դնելու ճամփուն վրայ*»[7]: Դարձեալ պատասխան չի տրուիր: Այս անգամ 22 Փետրուար թուակիր չորրորդ նամակով մը Մարմինը Զարեհ Ա. կաթողիկոսէն կը խնդրէ՝ կրկնելով, «*որ եթէ օրինական որեւէ մէկ դժուարութիւն չունի, բարեհաճեցէք ընդառաջել մեր գաղութին ճանաչման, որպէս Ձեր թեմը: Այս ճանաչմամբ, թէ՛ մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կ'ընդլայնէ իր հովանին եւ թէ՛ տեղւոյս գաղութը աւելի հանգամանօրէն իր պահանջքները կը ներկայացնէ պատկան բարեխօս իշխանութեան մօտ*», ապա կը յայտնէ, որ Քուէյթի էմիր «*Շէյխ Ապտուլլահ Սալէմ ԱլՍապահ եւ Քուէյթի զինուորական եւ ապահովութեան նախարար Շէյխ Ապտուլլահ Մուպարաք ԱլՍապահ Լիբանան կը գտնուին. 'Կարելի է իրենցմէ խնդրել Քուէյթի մէջ հայոց եկեղեցիի մը շինութեան համար փրամադրուելիք հող մը, եւ մենք վստահ ենք, որ իրենք, ըստ արաբական ասպնջական օրէնքներուն, չպիտի զլանան եւ պիտի խոստանան, ու անոնց խոստումը սփոռագրութենէ աւելի ապահով է'*»[8]:

Առժամեայ մարմինը կաթողիկոսին ուղղուած հինգերորդ՝ 7 Ապրիլ 1957 թուակիր նամակ մըն ալ կ'ուղարկէ, խնդրելով որ կաթողիկոսը վերոյիշեալ իշխաններուն հետ հանդիպում մը կայացնէ. «*Ատկէ Քուէյթի համայնքը կըրնայ օգտուիլ մատռան մը եւ գերեզմանատան մը հող ապահովելու համար*»[9]:

Առժամեայ մարմինը կ'ակնկալէ, որ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իր առջեւ դրուած խնդիրը լուծելու լուրջ տուեալներ ունի. Քուէյթի իշխանական դասին համար Լիբանանը ամառանոցային հմայք ունէր, Քուէյթի իշխանապետութեան կարկառուն դէմքերը յաճախ Լիբանան կը գտնուէին, ու կաթողիկոսարանը կրնար իր միջնորդութիւնը կատարել անոնց քով:

Մեզի ծանօթ չեն, թէ ինչու՛ Մարմինին Անթիլիաս ղրկած այս բոլոր նամակներն ու դիմումները անպատասխան մնացած են: Ծանօթ չէ որեւէ գրաւոր նիւթ: Այնուհետեւ, 7 Ապրիլ 1957ին կը դադրին. ո՛չ մէկ նոր դիմում եւ ո՛չ մէկ արձագանգ Անթիլիասէն:

Կ'ենթադրուի, որ կաթողիկոսարանը չափազանց զգուշաւոր վարուած է այս հարցով, նորանոր բարդութիւններ չստեղծելու համար երկու նուիրա-

---

[6] ԿԿԱՌ, թղթածրար 1, էջ 8:
[7] ԿԿԱՌ, թղթածրար 1, էջ 9:
[8] ԿԿԱՌ, թղթածրար 1, էջ 10-11:
[9] ԿԿԱՌ, թղթածրար 1, էջ 12-13:

պետական աթոռներուն միջեւ: Ատկէ բացի՝ 1956էն իվեր հայ կեանքը հանգիստ չէր Լիբանանի մէջ: Անթիլիաս-Էջմիածին յարաբերութեան վատթարացումը եւ ներազգային խնդիրներ կ'արգելակեն վճռական քայլերը: Լիբանանի հայօճախը ներքին սուր պառակտումներ կ'ապրի: Թեմական վիճաբանութիւնները համասփիւռքեան տարողութիւն կ'առնեն: Սուրիա եւ Եգիպտոս քաղաքական մեծ իրադարձութիւններ կ'ապրին: Կը հիմնուի ԱՄԷն: Այս բոլորը իրական պատճառներ կրնան ըլլալ հեռանկարային քայլեր առնելու որոշման ուշացումին:

Մինչ այդ՝ հայ ընտանիքներու եւ անհատ հայրենակիցներու թիւը նորանոր աճեր կ'արձանագրէ Քուէյթի մէջ: Տարիներ տեւած թեմական պատկանելիութեան հարցը չէ լուծուած: Համայնքը կազմակերպելու տեսակէտէն շօշափելի առաջընթաց չէ արձանագրուած: Առժամեայ մարմինը ոչ մէկ գործունէութիւն կը ծաւալէ, ինքնուրոյն բան մը ընելու նախաձեռնութիւն չի ցուցաբերեր՝ սպասելով կաթողիկոսարանին միջոցով պետութեան քով իր վաւերացման ու ճանաչման: Չենք գիտեր նաեւ, որ Պասրայէն եկող քահանայ հայրը իր այցելութիւնները կը շարունակէ՞, թէ՞ ոչ, ի՞նչպէս կը բաւարարուին հայոց հոգեւոր-եկեղեցական պէտքերը: Միակ նշանակալից պարագան ամերիկահայ յայտնի գործիչ ու բարերար Ճորճ Մարտիկեանի այցելութիւնն է Քուէյթ՝ Մերձաւոր Արեւելքի հայօճախներուն տուած իր այցելութիւններու ծիրէն ներս: Արձանագրուած է, որ ան համայնքի առաջնային կարիքներուն հասնելու նախնական աշխատանք կը տանի, թէեւ յայտնի չէ, թէ ի՛նչ եւ ինչպէ՛ս[10]:

ՔՈՒԷՅԹԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՐՄԻՆ

22 Փետրուար 1959 թուակիր նոր նամակ մը կը հասնի կաթողիկոսարան՝ Զարեհ Ա. կաթողիկոսին: Նամակը ստորագրած են 29 անձեր, ընդորում 9 պարսկահայ, 2 իրաքահայ, 9 սուրիահայ, 9 լիբանահայ: Առժամեայ մարմինին մասին խօսք չկայ, պէտք է կազմալուծուած ըլլայ՝ վեհափառին ղրկուած եւ անպատասխան մնացած հինգ դիմումներէն ետք: Նամակին մէջ կը խնդրուի զատկուան առիթով Քուէյթ ղրկել բարձրաստիճան եկեղեցական մը: Նամակը կը շեշտէ համայնքին կարիքները՝ եկեղեցիի մը հողին եւ շինութեան արտօնութեան մասին. «*այս ուղղութեամբ պրն. Ճորճ Մարտիկեան իր այցելութեան առթիւ Քուէյթ՝ նախնական աշխատանք տարաւ: Վստահ ենք իր ժամանակին Ձերդ վեհափառութիւնը տեղեակ պահած է*»[11]:

1959ին համայնքը ունի 150 ընտանիք եւ աւելի քան 1500 առանձին երիտասարդներ: Զատկուան առիթով Կիլիկիոյ կաթողիկոսարանի միջոցով Քուէյթ կ'ուղարկուի Կորիւն քհնյ. Շրիգեանը[12]: Ասիկա փաստօրէն Կիլիկիոյ

[10] ***Ծխ.***- Այս մասին տե՛ս՝ Յաւելուածը:

[11] ԿԿԱԹ, թղթածրար 1, էջ 15 եւ 15բ:

[12] ԿԿԱԹ, թղթածրար 1, էջ 16-18

կաթողիկոսութեան առաջին շփումն է Քուէյթի գաղութին հետ: Նախկին առժամեայ մարմինը կը փոխարինուի Քուէյթի հայ առաքելական եկեղեցւոյ մարմինով, որուն անդամներն են.-

Երուանդ Պարսումեան՝ ատենապետ
Յակոբ Սողոմոնեան՝ Բ. ատենապետ
Յակոբ Յովհաննէսեան՝ ատենադպիր
Նշան Ասատուրեան՝ Բ. ատենադպիր
Յակոբ Տէրտէրեան՝ գանձապահ
Յովհաննէս Թորիկեան եւ Կարապետ Գազանճեան՝ խորհրդականներ:

Վարչութիւնը վեհափառին ուղղուած 28 Ապրիլ 1959 թուակիր նամակին մէջ կը վերահաստատէ իր փափաքը՝ միանալու Կիլիկիոյ կաթողիկոսարանի թեմին[13]:

18 Օգոստոս 1959 թուակիր նամակով վարչութիւնը վեհափառին կը յայտնէ, որ գաղութին անյետաձելի պէտքերն են եկեղեցին ու դպրոցը, բայց, կը գրէ.

> Այս երկրի պայմանները Ձերդ վեհութեան լաւ ծանօթ են, որը օտարներու իրաւունք չի տար սեփականատէր դառնալու. առ այդ՝ մենք ալ կը զրկուինք մեր պաշտամունքի կեդրոնը ունենալէ, որպէս սեփականութիւն: Մեզի եղբայր միւս յարանուանութիւնները՝ կաթոլիկ եւ բողոքական, արդէն տիրացած են իրենց սեփական աղօթավայրերուն՝ շնորհիւ արտաքին ազդեցութիւններու: Մենք ալ, մեր կարգին, ամէն գինով, կ'աշխատինք մեր եկեղեցին ունենալու, սակայն կը կարօտինք Ձեր աջակցութեան:

Նամակը կը կը հաստատէ նաեւ, թէ Կորիւն քահանայ տեղեկացուցած է, որ «*գաղութի խնդրանքը Կիլիկիոյ թեմին միանալու՝ արդէն նկատի առնուած է ազգային իշխանութիւններուն կողմէ եւ սկզբունքով ընդունուած որպէս թեմ, բայց մենք, այստեղ, որպէս գաղութի եկեղեցական մարմին, կաշկանդուած ենք եւ գրեթէ գործունէութիւն չունինք, քանի որ տակաւին պաշտօնապէս ճանչցուած չենք*»[14]:

Ամիսներ կ'անցնին: Կաթողիկոսարանին կողմէ ո՛չ մէկ միջամտութիւն կը նկատուի: Եկեղեցական մարմինին համբերանքը կը հատնի արդէն: Իր գոյութիւնը անիմաստ կը նկատէ եւ կը սպառնայ ինքնալուծարում կատարել: Այս մասին կը խօսի 2 Հոկտեմբեր 1959 թուակիր նամակը, որ վեհափառին անձամբ կը տանի Մարմնի անդամներէն Յովհաննէս Թորիկեանը, որ «*Լիազօրուած է մարմնին կողմէ խօսելու վեհափառին հետ եւ որոշելու Քուէյթի հայ առաքելական եկեղեցւոյ մարմնին գոյատեւումը կամ լուծարումը*»[15]:

---

[13] ԿԿԱԹ, թղթածրար 1, էջ 16-18
[14] ԿԿԱԹ, թղթածրար 1, էջ 20-21:
[15] ԿԿԱԹ, թղթածրար 1, էջ 25:

ՔՈՒԷՅԹԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ՝ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ «ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՒՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ»

Թորիկեան Քուէյթ կը վերադառնայ հաստատ յոյսերով, որ կաթողիկոսարանը կ'ընդառաջէ իրենց պահանջքներուն, բայց կրկին դիմում մը ղրկել հարկ կը նկատուի: 7 Դեկտեմբեր 1959 թուակիր նամակով Մարմինը «*քանիցս անպատասխան մնալով հանդերձ*» կրկին դիմում կը կատարէ յայտնելով «*Քուէյթի հայ համայնքը Անթիլիասի կաթողիկոսութեան հովանիին ներքեւ դնելու իր որոշումը*»[16]:

30 Դեկտեմբեր 1959ին գումարուած մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի ազգային կեդրոնական ժողովը վեհափառին բերած օրակարգով հանգամանօրէն կը քննէ Քուէյթի հայ առաքելական եկեղեցւոյ մարմինին դիմումը եւ կ'որոշէ Քուէյթը առնել իր իշխանութեան տակ եւ զայն նկատել որպէս «*Հոգեւոր հովւութեան շրջան*», կապուած ուղղակի կաթողիկոսարանին: Կը հրատարակուի հաղորդագրութիւն, ուր գրուած է.

> Քուէյթի հայ նորակազմ գաղութը, որ տակաւ կը ստուարանայ հայ աշխատաւորներով եւ ազատ արուեստի հետեւորդներով, բազմիցս դիմում կատարած է 1956էն սկսեալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Զարեհ Ա. կաթողիկոսին՝ խնդրելով որ նորահաստատ այս թեմը ենթակայ ըլլայ մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան իրաւասութեան: Վեհափառ հայրապետը ազգային կեդրոնական վարչութեան օրակարգի նիւթ դարձուց Քուէյթի հայ առաքելական եկեղեցւոյ մարմինէն ստացած 23 Ապրիլ 1959ի առաջին նամակն ու նոյնիմաստ շարունակական նամակները եւ ընթացք տուաւ կատարուած դիմումին[17]:

Վեհափառը Քուէյթի հայ առաքելական եկեղեցւոյ մարմինին ատենապետ Երուանդ Պարսումեանին ուղղուած իր թիւ 257-59 եւ 31 Դեկտեմբեր 1959 թուակիր նամակով կը յայտնէ «*Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւ-նըս ազգային վարչութեան 30 Դեկտեմբեր 1959ի նիստին՝ ձեր դիմումը հանգամանօրէն նկատի առնելէ յետոյ որոշեցինք Քուէյթը առնել մեր իշխա-նութեան ներքեւ եւ զայն նկատել որպէս հոգեւոր հովւութեան շրջան, կապ-ուած ուղղակի կաթողիկոսին*»: Ապա Մարմինին ցանկը կը վաւերացնէ[18]:

Անթիլիասէն Քուէյթ կը ղրկուի Նարեկ քհնյ. Շրիգեանը, որ 8 Յունուար 1960ին, Ուրբաթ օր, ամերիկացիներու աւետարանական եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցէ եւ քարոզէն առաջ կը յայտարարէ, որ Քուէյթի հայ գաղութը կը մտնէ Կիլիկիոյ կաթողիկոսութեան հովանիին տակ: Այս մասին քահանայ հայրը վեհափառին տեղեակ կը պահէ 8 Յունուար 1960 թուակիր նամակով: Յունուար ամսու ընթացքին կը կատարէ տնօրինէք եւ

---

[16] ԿԿԱԹ, թղթածրար 1, էջ 27:

[17] »Պաշտօնական հաղորդագրութիւն», *Հասկ ամսագիր*, Յունուար 1960, էջ 35-7: Անդ տրուած են նաեւ Մարմինին վերոյիշեալ դիմումը եւ վեհափառին պատասխանը:

[18] ԿԿԱԹ, թղթածրար 5, էջ 1:

կ'ամբողջացնէ քուէյթահայերու ցանկագրումը: Կը կատարուին մկրտութիւն, պսակ, կը տրուի այցելութիւն ննջեցեալներու շիրիմներուն, հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի[19]: Եկեղեցւոյ մարմինը վեհափառին ուղղուած 30 Յունուար 1960 թուակիր նամակով բարձրօրէն կը գնահատէ Նարեկ քահանայի գործունէութիւնը[20]: Նոյն նամակին մէջ մարմինը կը յայտնէ, որ գաղութը ունի 180 ընտանիք եւ 3000 ամուրի. ընտանիքները մեծ մասով Սուրիայէն եւ Լիբանանէն են, ամուրիները՝ Իրանէն: Կը խօսուի դպրոց եւ եկեղեցի ունենալու անհրաժեշտութեան մասին: Մարմինը կը գտնէ, որ անհրաժեշտ է այլեւս կառուցումը հայկական օճախի մը՝ հայու աղօթավայրին կառուցումը: Առ այդ՝ կազմուած է եկեղեցական մարմինը, որ «*իր աշխատանքները չի խնայեր որեւէ ձեւով փրկանալու եկեղեցիի մը շինութեան արտօնութեան ու հողամասին*»[21]: Բայց այս աշխատանքը առաջ տանելու համար արդէն կարիքը կը զգացուի մնայուն քահանայի մը: Մարմինը «*Հետեւաբար այն եզրակացութեան հասած է, որ մնայուն քահանայ մը անհրաժեշտ է Քուէյթի համար, զոր պահելու կարելիութիւնները հանգամանօրէն քննած է եւ ինքզինք ի վիճակի կը նկատէ Ձերդ վեհութենէն խնդրել ու նկատի ունենալ յարմարագոյն թեկնածու մը քահանայութեան եւ շուտափոյթ ուղարկումը Քուէյթ*»[22]:

Բայց Մարմինը առաւել կարեւոր կը նկատէ իր ճանաչումը պետութեան մօտ, եւ ատիկա հնարաւոր կը նկատէ Անթիլիասէն բարձրաստիճան եկեղեցականի մը, իրենց նախընտրութեամբ, Խորէն եպս. Բարոյեանը, իբրեւ նուիրակ ներկայանալու ու մարմինը իշխանութեան քով վաւերացնելու համար[23]:

ՆԵՐՔԻՆ ՊԱՌԱԿՏՈՒՄՆԵՐ

Պետութեան մօտ համայնքի ճանաչման եւ հայ առաքելական եկեղեցւոյ մարմինին վաւերացման աշխատանքները կը ձգձգուին: Եկեղեցւոյ մարմինին ակնկալութիւնները չեն իրականանար: Կան հինգ հազարը անցնող հայկական համայնք մը, շուրջ երկուհարիւր դպրոցական փոքրիկներ, նիւթական հնարաւորութիւններ, յստակ պահանջքներ ու թեմական իշխանութիւն մը, բայց ինքնուրոյն գործելու եւ նախաձեռնելու տկարութիւն մը, զոր դժուար է հասկնալ: Գաղութի ակնկալութիւններէն ոչ մէկը իրականութիւն կրցած է ըլլալ. ո՛չ եկեղեցի, ո՛չ դպրոց, ո՛չ սեփական գերեզմանատուն, ո՛չ ալ ազգային մշակութային կեանք:

---

[19] ԿԿԱԹ, թղթածրար 1. էջ 34:
[20] ԿԿԱԹ, Թղթածրար 1. էջ 28-33:
[21] Նոյն:
[22] Նոյն:
[23] Նոյն:

Տարիներ տեւած այս ձգձգումը լուռ դժգոհութիւն կը յառաջացնէ ոմանց քով, որ գաղութի կարիքները բաւարարելու արտաքին միջնորդութիւններէն հրաժարելով՝ առանձին նախաձեռնութեան կը դիմեն: Սակայն հայ առաքելական եկեղեցւոյ մարմինը գաղութին մէջ իր կամքէն անկախ նախաձեռնութիւնները անմիջապէս կը կապէ թեմական եւ հաւանաբար նաեւ կուսակցական ուժերու հետ: Վեհափառին ղրկուած 5 Մայիս 1960 թուակիր նամակով կը յայտնէ. «*Պաղտատի առաջնորդարանը սկսած է լուրջ աշխատանքի եւ ուսնձգութիւններու՝ մեր գաղութը պառակտելու դիտաւորութեամբ, որով քաջ գիտնալով, թէ գաղութը ընդունած է Անթիլիասի հոգեւոր գերիշխանութիւնը, 25 Յունուարին ուղարկած է Պասրայի հոգեւոր հովիւ Տ. Խորէն քհնյ. Գասապեանը, որպէսզի Ծնունդուայ առթիւ իր տունօրհնէքը կատարէ միայն: Այս ինքնին կու գայ անգամ մը եւս շեշտելու եւ յստակացնելու Պաղտատի առաջնորդարանի դիրքը մեզի հանդէպ*»[24]:

Մեզի ծանօթ չէ Պաղտաղի առաջնորդարանին ուղղակի վերաբերմունքը արտայայտող որեւէ արխիւային նիւթ: Գիտենք, որ սկզբնապէս՝ պարբերաբար ղրկուած քահանաներով ան կը հասնէր քուէյթահայութեան հոգեւոր պէտքերուն: Նման երեւոյթի կրկնութիւնը պէտք է վերագրել ինչպէս նախկին առժամեայ մարմինին, այդպէս ալ վերջին՝ եկեղեցւոյ մարմինին անգործութեան: Վերջինիս կազմէն դուրս գտնուող ուժեր չէին հանդուրժեր թեմական հաստատութիւններու ստեղծման ձգձգումներուն եւ իրենք սեփական միջոցներով ու նախաձեռնութեամբ իրագործումներ կ'ընէին: Եւ ատոնց մէջ՝ ամէնէն կարեւորը ամէնօրեայ դպրոցին հիմնադրութիւնն էր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1960ին Քուէյթի մէջ անհատական ճիգերով կը հիմնուի հայկական վարժարան: Հիմնադիր կազմի անդամներն են.- Երուանդ Թերզեան, Յարութիւն Սահակեան, Գրիգոր Պարիկեան, Միհրան Զաքարեան, Պօղոս Յովակիմեան, Յովսէփ Աքլեան, Աբրահամ Գազանճեան, Հայրապետ Հայրապետեան, Վարդան Գարակէօզեան, Կարապետ Թոփալեան, Տիգրան Մաճառեան, Հայկ Քրիսթինեան: Դիւանի անդամներն են.- Երուանդ Թերզեան՝ ատենապետ, Աբրահամ Գազանճեան՝ ատենադպիր, Միհրան Զաքարեան՝ գանձապահ, Յարութիւն Սահակեան՝ քարտուղար եւ դպրոցի տնօրէն:

Հիմնադիր մարմինը 1200 ռուպիով շէնք կը վարձէ Սալմիէ թաղամասին մէջ, Մաարիֆին (կրթութեան պետական գերատեսչութիւն) հետ կը բանակցի եւ կ'ընդունուի Շէխ Ապտալլահ Ճապէրին կողմէ, որ իր կարգին 5000 ռուպիի նուիրատուութիւն կը կատարէ դպրոցին: 20 Հոկտեմբեր 1960ին կը տրուի արտօնագիրը.

[24] Նոյն:

Քուէյթի կառավարութիւն, Կրթութեան պետական գերատեսչութիւն, Գլխաւոր տնօրէնի գրասենեակ, Դպրոցական արտօնագիր թիւ 14, 20/10/1960 թուակիր, որ տրուեցաւ Հայ-Արաբ վարժարանին, Սալմիէ, գործելու համար ոչ-կառավարական ուսումնարաններու, վարժարաններու եւ կրթական հաստատութիւններու յատուկ 1/12/1959 թուակիր եւ թիւ 254 կանոնակարգին համաձայն, զոր հրապարակեց Բարձրագոյն Դահլիճը պաշտօնաթերթին մէջ:

Վարժարանը կը բացուի Նոյեմբեր 1ին, «*առանց կուսակցական եւ դաւանական խտրութեան*»: Դպրոցը կը կոչուի Հայկական Վարժարան, թէեւ պաշտօնապէս ունի Հայ--Արաբ Վարժարան անունը, օտարներ ալ կ'ընդունի: Կ'ունենայ մանկապարտէզի 4 կարգ, նախակրթարանի Ա. եւ Բ. դասարաններ, օթոքար, դպրոցական պիտոյքներ. պաշտօնական լեզուն արաբերէն է, միւս լեզուները՝ հայերէն եւ անգլերէն: Հայ աշակերտութիւն՝ 40 աղջիկ, 50 մանչ, պաշտօնէութիւն՝ 1 տնօրէն, 1 տեսուչ, 5 ուսուցչուհի[25]:

Եկեղեցական մարմինը վեհափառին ուղղուած 21 Հոկտեմբեր 1960 թուակիր նամակով չափազանց դժգոհ է այս նախաձեռնութենէն: Ան «*շիլ նպատակներով*» կը մեղադրէ դպրոցի հիմնադիր մարմինը, չի հաւատար, որ ան կրնայ շարունակել գործը, եւ կը հաւատայ, որ անոնք արտաքին օգնութեան մը ապաւինած են եւն. եւն.: Զրպարտիչ նամակ մը: Ան այս վիճակին մէջ մեղաւոր կը նկատէ կրօնական վերին մարմինը՝ իր ձգձգումներուն համար, ու կը պահանջէ կառավարութեան քով իր վաւերացումը, «*որպէսզի շատ մը չարիքներու առաջքը առնուի*»[26]: 20 Նոյեմբեր 1960 թուակիր նամակով վեհափառին կը տեղեկացուի. «*Անհատական դպրոցը բացուեցաւ 'Հայկական Վարժարան' լրացուցիչ անուան տակ եւ այժմ արդէն 95 աշակերտ-աշակերտուհիներով կը շարունակուի միշտ տխրահռչակ Յարութիւն Սահակեանի տնօրէնութեամբ եւ ինքնակոչ թաղականութեան (հոգաբարձութեան) օգնութեամբ*»[27]: Մարմինը դարձեալ կը շեշտէ. «*Մեր ենթադրութիւնը կը ծանրանայ այն հաւանականութեան, թէ անպայման այդ մարդիկը արտաքին (ոչ Քուէյթէն) օգնութեան վրայ լրջօրէն ապաւինած են*»[28]:

Մարմինը իր կազմութեան առաջին օրէն ինքզինք գաղութի գերագոյն իշխանութիւնը կը համարէ, ու նոյնիսկ կը սպառնայ վեհափառին ինքզինքը լուծարել, եթէ իր կազմը պետութեան մօտ չվաւերացուի ու չլիազօրուի: Ըստ այնմ, հայրենակիցներէն եկած ամէն շարժում ծանրօրէն կը քննադատուի ու կը մեղադրուի ամէնածանր յանցանքներով: Անհանդուրժողութիւն կայ: Մարմինը իր կազմէն դուրս ուժերը կ'արհամարհէ, անոնց հետ չի բանակցիր:

---

[25] Դպրոցի հիմնադրութեան մասին հիմնադիր մարմինը հրապարակած է յօդուած՝ «Քուէյթի հայ վարժարանի հիմնադրութիւնը», *Այգ օրաթերթ*, Պէյրութ, 10 Նոյեմբեր 1960, էջ 2:

[26] ԿԿԱԹ, թղթածրար 1, էջ 43-44:

[27] ԿԿԱԹ, թղթածրար 1, 47-48:

[28] Նոյն:

Եկեղեցական մարմինը, իբրեւ հակազդեցութիւն, կը հիմնէ կիրակնօրեայ վարժարան:

ՀԱՄԱԽՄԲՈՒՄ ԴՊՐՈՑԻՆ ՇՈՒՐՋ

Նոյն տարին՝ Ծնունդին, ապա եւ Յարութեան տօնին կաթողիկոսարանին կողմէ Քուէյթ կը ղրկուին Գրիգոր վրդ. Փիտէճեանն ու Վարդան վրդ. Տեմիրճեանը, որոնք ի տարբերութիւն եկեղեցական մարմինի մեկնաբանութեանց, կաթողիկոսին դրական կը ներկայացնեն դպրոցի հիմնադիր մարմինի աշխատանքն ու վերաբերմունքը թէ՛ իրենց, թէ՛ կաթողիկոսարանին նկատմամբ, ու կ'աշխատին եկեղեցական մարմինին կիրքերը հանդարտեցնել: Անոնք լիովին կը հաստատեն, որ դպրոցին հիմնադիր մարմինը կաթողիկոսարանի թեմական իշխանութեան համամիտ են առանց երկընտրանքի: Այս երկու վարդապետները կը յաջողին եկեղեցական մարմինին վերաբերմունքն ալ փոխել: Հիմնադիր մարմինը համաձայն է դպրոցը դնել համայնքին իրական իշխանութեան տակ, պայմանաւ որ գաղութը ունենայ իր մնայուն քահանան ու դպրոցը դրուի անոր հսկողութեան տակ: Մարդիկ կրցած էին սեփական միջոցներով դպրոց հիմնել, անոր բոլոր կարիքները հոգալ ու կ'աշխատէին զայն ամբողջ համայնքին դպրոցը դարձնել: Դպրոցի հիմնադիր կազմի ղեկավար Երուանդ Թերզեան իր առած այս քայլով որքան ալ կ'այպանուի եւ ըստ երեւոյթին, որոշակի դատապարտումի ալ կ'ենթարկուի, ոգի ի բռին եւ իր նիւթական բոլոր միջոցներով դպրոցի կողքին է ու «*շիլ նպատակներ*» հետապնդող անձը չէ[29]:

ԳԱՂՈՒԹԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԷՋ

1961-62 կրթաշրջանին դպրոցը կ'անցնի ազգային վարչութեան ենթակայութեան, կ'ունենայ հոգաբարձութիւն: 28 Դեկտեմբեր 1961ին կ'ունենայ մնայուն քահանայ՝ Պարոյր քհնյ. Սարգիսեան, որ կը վարէ նաեւ դպրոցին տնօրէնութիւնը: Համայնքին բոլոր հայ դպրոցականները արդէն կը յաճախեն ազգային վարժարան, որ տարուէ տարի կը մեծնայ, կը վերածուի լրիւ երկրորդական վարժարանի: Ուսուցիչներն ու տնօրէնները կը հրաւիրուին Սուրիայէն եւ Լիբանանէն: Քուէյթի ազգային վարժարանը Սփիւռքի լաւագոյն կրթական հաստատութիւններէն մէկը ըլլալու ճամփուն վրայ է:

Մինչեւ 1965՝ եկեղեցական բոլոր արարողութիւնները կը կատարուէին անկլիքան եկեղեցւոյ մէջ: 1965ին դպրոցի ետեւի բակին մէջ կը կառուցուի Սրբոց Վարդանանց եկեղեցին, որ կ'ունենայ 11x25 քառ. մեթր տարածք: Դպրոցը յետագային կը փոխադրուի վարձու շէնք, մինչեւ որ 1974ին կ'ունե-

[29] Այս մասին կը տեղեկագրեն Գրիգոր վրդ. Փիտէճեանի վեհափառին ուղղուած 30 Դեկտեմբեր 1960 եւ 13 Յունուար 1961, իսկ Վարդան վրդ. Տեմիրճեանի 1 Ապրիլ 1961 եւ 18 Մայիս 1961 թուակիր նամակները (ԿԿԱԹ, թղթածրար 1. նաեւ՝ «Հարցազրոյց Քուէյթի Ազգային Երկրորդական Վարժարանի Հիմնադիր Երուանդ Թերզեանի Հետ», *Ազդակ*, 18 Փետրուար 1961, էջ 3:

նայ իր սեփական արդիական ու յարմարաւէտ շէնքը, Ռմէյսի թաղամասին մէջ:

Համայնքը ոչ մէկ բան կը խնայէ իր դպրոցական եւ եկեղեցական հաստատութիւնները բարեզարդելու եւ ընդարձակելու համար: Ան յարաճուն վերելք կ'ապրի՝ հոգալով նաեւ երիտասարդական եւ մշակութային շարժումները:

Հայերը կեցութեան արտօնագիրով կը մնան Քուէյթի մէջ: Դպրոցական եւ եկեղեցական շէնքերու իրաւական տէրերը կը մնան յատուկ երաշխաւորագիրերով պայմանաւորուած Քուէյթի քաղաքացիներ:

1981ին կիլիկեան աթոռի ազգային ընդհանուր ժողովը Ծոցի շրջանը (Քուէյթ, ԱՄԷ) կը հռչակէ կաթողիկոսութեան փոխանորդութիւն, իսկ 1992-ին՝ անկախ թեմ:

«ՏՈՄԱՐ ՔՈՒԷՅԹԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ»

«Տոմար Քուէյթի Հայ Համայնքի». այսպէս կը կոչուի Պարոյր քինյ. Սարգիսեանի 1966ին պատրաստած տոմարը, որուն տուեալները կը հասնին մինչեւ 1980ականները[30]: Ըստ անոր՝ Քուէյթի հայոց թիւը ունի հետեւեալ պատկերը.- Նկրա 245, Միտան հաուալի՝ 153, Շարք Ճահրա՝ 86, Ռմէյսի՝ 31, Սալմիէ՝ 41, Ահմատիէ-Ֆահահիլ-Շուայպէ-Խաուիէ եւ այլ շրջաններ՝ 53 ընտանիք: Ընդամէնը շուրջ 505 ընտանիք, շուրջ 2500 անձով: Տոմարին մէջ թիւով կը տրուին ընտանիքները, ապա ընտանիքին անդամները, իւրաքանչիւրին ծննդավայրը, ծննդեան թուականը, հպատակութիւնը՝ սուրիացի, լիբանանցի, իրաքցի, իրանցի, տեղացիութիւնը (գիւղ կամ քաղաք), յարանուանութիւնը, զբաղումը, բնակութեան վայրը, վիճակը, այլ ծանօթութիւններ: Քիչ չեն երկրացիները, 1915էն առաջ ծնունդները՝ իրենց ծննդավայրի յիշատակութեամբ. կան նաեւ Քուէյթի ծնունդներ:

Աշխատանք ունին նաեւ կիները՝ իբրեւ գործաւորուհի, հիւանդապահուհի, ուսուցչուհի, դերձակուհի: Այր մարդոց գլխաւոր արհեստներն են մեքենագործութիւն, երկաթագործութիւն, վարորդութիւն, կառապանութիւն, ելեկտրագործութիւն, խողովակագործութիւն, կօշկակարութիւն, դերձակութիւն, ատաղձագործութիւն, ներկարարութիւն, բանուորութիւն, շինարարութիւն, ալիւմինիումի արհեստ, վարսայարդարութիւն, սափրիչութիւն, ոսկերչութիւն, փռապանութիւն. կան նաեւ պաշտօնեաներ, դեղագործ, ճաշարանատէր, զինկոկրաֆ, գծագրիչ եւն.: Ընտանիքներու տնտեսական վիճակը կը գնահատուի «բարեկեցիկ», «ինքնաբաւ» եւ «լաւ» բառերով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Համաշխարհային Բ. պատերազմէն ետք Քուէյթ նաւթարդիւնաբերական ճարտարարուեստի երկիր է, աշխատուժի ներածման մեծ կարիքներ

[30] Տոմարը կը պահուի Քուէյթի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ:

ունի: Արտագնայ աշխատանքի հրաւէրով Քուէյթ կը հասնին նաեւ հայեր՝ Սուրիայէն, Լիբանանէն, Իրաքէն եւ Իրանէն:

Հայերը զբաղած են արհեստներով, բանուորութեամբ, եղած են պաշտօնեաներ եւ տարբեր մասնագիտութիւններու տէր մարդիկ: Անոնք աշխատանքի արտօնագիրով պայմանաւորուած կեցութիւն ունին ու կը պահեն իրենց եկած երկիրներու քաղաքացիութիւնը: Օտարահպատակները չեն կրնար քուէյթեան քաղաքացիութիւն ստանալ եւ Քուէյթի մէջ անշարժ գոյքի սեփականատէր ըլլալ:

Քուէյթի հայոց համայնքային կազմակերպութեան առաջին քայլերը կ'առնուին 1950ականներու կէսերուն: Համայնքը Սփիւռքի ներքին տեղաշարժերու արդիւնք է, ինչպէս Ծոցի միւս երկիրներուն՝ Քաթարի, Պահրէյնի եւ ԱՄԷի հայօճախները: Թեմական կարգավիճակի հաստատումը դանդաղ կ'ընթանայ: 1960էն սկսեալ, գաղութը, յաչս պետութեան, սկզբնապէս Կիլիկիոյ կաթողիկոսութեան կապուած հոգեւոր հովութեան շրջան է, ապա, 1981էն ետք, մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսական փոխանորդութիւն, իսկ աւելի ուշ՝ կը մտնէ Ծոցի երկիրներու կիլիկեան թեմէն ներս:

Գաղութի կազմաւորման մէջ հիմնաքարային նշանակութիւն կ'ունենան դպրոցն ու եկեղեցին: Հայերէնի ուսուցման եւ հայեցի դաստիարակութեան տուեալներով դպրոցը մեծ դեր կ'ունենայ Քուէյթի մէջ ընտանիքի մէկտեղման տեսակէտէն: Անոնցմով պայմանաւորուած է գաղութի ազգային, մշակութային ու միութենական առօրեան:

Համայնքային հաստատութիւնները կը կառուցուին ու կը հոգացուին հայոց կողմէ, բայց անոնց սեփականութիւնը յատուկ երաշխաւորագիրերով կը վերագրուի քուէյթցի անձանց:

Համայնքը 1960ականներուն արդէն 5 հազար հոգի կը հաշուէ: Ան աւելի մեծնալու հնարաւորութիւններ ունի:

THE FORMATION OF THE ARMENIAN COMMUNITY IN KUWAIT

(Summary)


Յակոբ Չոլաքեան
hagopcholakian@hotmail.com

In 1953 20 Armenian families and some 300 Armenian individuals already lived in Kuwait. Religious services were conducted during Armenian holidays by a priest who came from Iraq. He also conducted weddings, baptisms and home blessings. On January 8, 1960 Father Nareg Shirikian was sent to Kuwait, where he conducted a mass in the Anglican Church of Kuwait and proclaimed that the community was within the jurisdiction of the Cilician Catholicosate. It took time, however, until the community and the church council were recognized by the state.

In 1959 125 Armenian families and over 100 single individuals lived in Kuwait, where in 1960, through a personal initiative, a school was founded and was taken under the auspices of the Armenian national committee of the community in 1961–62. The community, which numbered over 5000 in the early 1960s, grew further. In 1981 the National General Gathering of the Cilician Catholicosate proclaimed the Gulf area (Kuwait and UAE) a vice prelacy and in 1992 an independent prelacy.

My Father the Engineer/Architect Author

ANNI BARSOUMIAN
anni.barsoum@gmail.com


الجمهورية اللبنانية

وزارة الأشغال العامة

إذن بمزاولة مهنة المهندسة

دوارميتا البرسوم

مهندسة


That's how Yervant Barsoumian, my father, introduced himself.

Born on 10th June, 1910 in Aleppo to Victoria Terzibashian and Missak Barsoumian, the five-year-old Yervant witnessed the atrocities around him in the spring of horrors. Aleppo was where the survivors of the long death marches out of the ancestral Armenian Highlands received some relief. The Barsoumians are mostly Aintabtsi's, but being traders, and survivors, they quickly moved to the relatively safer and more distant city of Aleppo. All of my father's official papers put Aintab as his place of birth, but the family had Aleppo residency, which granted some form of immunity from the deportations. The unfinished family tree states my great-grandfather Baghdasar was a goldsmith. He had eight children, four boys and four girls, the youngest being Missak. One of his brothers went to Egypt, and two of them stayed in Aleppo, doing some trading. My father's recollections of his father are sparse. I'm sure the events of the time did not help.[1]

My understanding is that my grandparents were incompatible, and evidently did not agree on the minimal compromises all marriages need to thrive. My grandmother was an educated woman, the middle one of three French-speaking daughters. Both grandparents were independent and headstrong. Victoria stayed with her two sons Levon (born 1909) and Yervant. Missak left and was absent from their life. He travelled to Boston, where he tried his hand at various jobs, one of which was in a restaurant. Eventually the couple divorced, which was uncommon,

[1] Khatchig Mouradian writes that "On 24 May 1915, within a week of the first convoy's arrival in Syria, the Church, and the small Armenian community of Aleppo immediately organized relief committees to help the surviving deportees. They also dispatched help to the deportees who had been temporarily settled in camps in distant Der Zor....". By the autumn of that year the Ottoman authorities had cracked down on the community leadership, and removed all the Armenian deportees from the city, and banned the entry of new convoys (*The Resistance Network, the Armenian Genocide and Humanitarianism in Ottoman Syria, 1915-1918*, Michigan State University Press, 2021, pp. xxi-xxvi).

and not talked about either. When my grandfather approached his teenage sons to join him abroad, my father refused.



My father's school diplomas

What my father did talk about, though, was how hard my grandmother worked to raise them, and also her courage as she played a part in the "underground network" by hiding some of the deportees in her cellar, as well as ensuring her own sons survived by dressing them in Arab clothes when they played outside.

My father was a bright student, a hard worker. He graduated from the Armenian National School in August 1925. He then attended Collège St. Antoine de Padoue in Aleppo, graduating in 1930. He worked as a land surveyor to finance his travels and education in the École d'Ingénieurs de Marseille. His diploma is dated May 1935. His advice to any young person would always be to have disciplined time management. He squeezed four years of study into three by going to his classes during the day, coming back to his room to revise his lessons while they were still fresh in his mind, and then spending the rest of the evening with his literary friends, writing, editing and no doubt planning the new wave of Armenian regeneration. He also played football as a young man, and continued being an ardent fan till the end of his days.

His first love was poetry. He was an artist at heart. I asked him to illustrate one of my papers when I was in boarding school and was in awe of his drawing skills. He was an engineer-architect after all. Many years later, when I started taking art courses in my spare time, while he watched the grandchildren, he said he dreamed of being an artist, but art supplies were expensive, and growing up, he needed to

be the man of the family. That was one of the few times I sensed a whiff of regret. But then the humanist in him returned. He regretted nothing, and sincerely believed he was born under a lucky star. He always saw the positive side of events. Throughout his life, the pen was mightier than the paintbrush, and definitely mightier than the sword too.

He returned to Syria in 1935, and quickly found a position as Chief Engineer at the Régie des Tabacs (the tobacco regulator) in Latakia. There, too, he was deeply involved with the Armenian community, in social and civic affairs. He also continued writing poems, articles and short stories.

He moved to Beirut some time in the late 40's to help his older brother establish the family's engineering contracting business. At that time, they were building residential buildings. There was a lot of optimism about the country and the region, with its thriving Armenian diaspora. Once again, he got involved in community affairs. He also decided to run for the parliamentary elections in Lebanon in 1947. In one of our conversations when we were both adults, he told me that he personally witnessed the switching of the ballot boxes for counting. He lost, of course, and decided once and for all that, much as he wanted to represent his people, politics was not the right venue for him. It saddened me because he was the kind of person politics needs: a mediator, a peacemaker, a good conversationalist, an empathetic listener and leader. He could only see possibilities, and where there were none, he sought new avenues.

He exhibited the commonly found character traits of all good leaders throughout history. There were none of the complexes of a challenging childhood, but all the strengths associated with exemplary leadership. He rarely talked about his difficulties, other than the customary tales of walking miles to school in the snow! And he always thanked his mother for modelling the attributes of devotion to family, society and humanity.

In 1951 he was introduced to my mother, Alidz Minassian, through her maternal uncle, Puzant Yeghiayan, historian and teacher at the Antelias seminary, and also a headmaster of Melkonian Educational Institute in Cyprus. My mother was finishing off her BSc in nursing at the Université St. Joseph at the time. She had already graduated with an Associate degree in Social Work at Junior College (now Lebanese American University). He was probably one of the most eligible bachelors around, a self-made certified engineer with enough outside interests such as literature, art and social development to appeal to an intelligent, independent young woman who was bored by some of the other suitors that came her way. She wanted to create a sanctuary for healthy mothers and children. He did not object at all. But life had other plans.

After a brief courtship, they were married at the Armenian Church at the Catholicosate of Cilicia in Antelias on 31 August, 1952. I was born in the summer of 1953. A few months later, my father would tell my mother that he was going to head out to the British Protectorate of Kuwait to start all over again. A new family had entered the partnership between the brothers, and my peaceful, conflict avoidant



ÉCOLE D'INGÉNIEURS DE MARSEILLE

RECONNUE PAR L'ÉTAT

· DIPLÔME ·

Le Ministre de l'Éducation Nationale,

Vu le Décret de reconnaissance du 5 Février 1921,

Vu l'Arrêté du 12 Juillet 1921, relatif à la délivrance par l'École des Certificats et Diplômes,

Vu l'Arrêté général du 16 Février 1921,

Sur la proposition du Jury d'Examen nommé par Arrêté du 11 Mai 1935

a délivré le Diplôme d'Ingénieur de l'École d'Ingénieurs de Marseille

à Monsieur Barsoum Edouard

Né à Ainlab (Turquie) en Juin 1910

Marseille, le 27 juin 1935

Le Directeur, Le Président du Jury,

Le Ministre de l'Éducation Nationale,

My father's diploma in Engineering

father had, as usual, chosen an alternate route. He had secured a job as an engineer at the Ministry of Planning.

The Kuwait I was introduced to in 1954 was a dusty, sandy outpost. Our first home was the second floor of a commercial two-storey building in Kuwait City. Two years and two siblings later (one of whom was born in the Magwa Hospital) my father had met his new sponsors for a building contracting business.

The country also became independent in 1961, after the termination of the Anglo-Kuwaiti Treaty of 1899. I have faint memories of the incidents of joy and excitement of that time.

In a letter to his solicitors dated 6th February 1967, my father writes:

I am Managing Director of Abdallah Hamad Alsagar & Bros. which is a Kuwaiti company incorporated in 1948[2]. I became Managing Director in 1961. I had previously been connected with the company since 1958.

My company has been responsible for a number of large building schemes, in particular in 1949 my company was concerned in the construction of a housing scheme for the Government. In the years 1954-1955 and in 1958 they erected two elementary schools.

At the end of 1960, the Kuwait Government asked for tenders relating to the erection of a girl's secondary school, and some thirteen companies made offers on the tenders. According to the Kuwaiti legislation, where any building project involves an expenditure by the Government exceeding GBP 1,000,000, the local company must carry out the work in association with a foreign company, and in our case when we made an offer on the tender, we arranged to do so in conjunction with Kampsax (Kampmann, Kierulff & Saxild of Copenhagen, who for many years had been carrying out work in the Middle East,... and have an excellent reputation).

Subsequently the Government accepted my company's tender and a contract was signed on 4th July 1961. The date fixed in the contract for the completion of the building was 9th July 1963, on the basis that we would have fifty days to prepare ourselves and prepared the site, plus six hundred days for the execution of the work. This date was variable, according to the time when the Government

[2] Abdul Aziz and Jassem Al Sagr, were two prominent Kuwaiti merchant brothers with several businesses, including insurance.

would put us in possession of the land. A specification did form part of the Agreement.

Work on the project started on 2nd October 1961. There was a total of sixteen buildings to be erected. Stage I, which was completed in September 1964 referred to thirteen buildings, and Stage II referred to three buildings. The works included: Entrance and Reception Hall; Classrooms; Laboratories; Kitchen classrooms; Dining Hall; School kitchen and gymnasium; Showers and Changing room; Swimming pool and Squash Court; two Staff dormitories; Pupil's dormitory; two Staff Common Rooms; Connecting passageways between buildings; Clinic; Music Hall; Auditorium. Classified as sections, rather than buildings were: External Plumbing; All external works including Playing Fields as well as the provision of four guard houses; Pumping Station; Fire-fighting section; Laboratory equipment; Furniture; Gas installation. Section E dealt with the provision of electricity for all buildings. Stage 1 was completed in September 1964 comprised 13 buildings. After that date there were still three buildings unfinished.[3]

Kuwait was another Gulf state with a booming oil economy, and the wealth was being spent in developing the country and its people. The building started off as a secondary school for girls, but it was repurposed to become the first campus of the newly established Kuwait University, which was officially inaugurated in November 1966.[4]

According to the contract with the Government, the company had to give ninety days' notice of its intention to apply for arbitration. The first arbitration document was dated 8th June 1966.

There were several claims due to the extensions and design modifications to the building, from a secondary school for girls to the first building of Kuwait University, that were adjudicated at the courts of arbitration in London.

The letter referred to in this article stipulates that there was a general law in Kuwait at that time regarding contractors with Government projects. They had to have completed at least 75% of any contract before bidding for new projects. The company could not have started bidding for new projects between September 1963 and March 1965. Part of the claim includes the consequent loss of revenue from other project bids they missed out on because of delays in approvals.

---

[3] All the details are from a letter to the solicitors dated 6th February 1967.

[4] According to Wikipedia, Kuwait University (KU), (in Arabic: جامعة الكويت), was established in October 1966 under Act N. 29/1966. The university was officially inaugurated on 27 November, 1966 and included the College of Science, the College of Arts, the College of Education and the College for Women. The university is the state's first public institution of higher education and research (accessed 26 April 2024).

After the court case, which took several years, the contracting company was dissolved. My father was no longer interested in working there. I asked about it many years later. He said that the AlSagr brothers decided to withdraw from the contracting and building sector after my father left. That was in the 1960's. The website of the group states they are involved in civil contracting through Al Bunyan Engineering and Contracting.



Bishop Karekin Sarkissian's visit to Kuwait, April 25, 1965

We never spoke about business at home. We were not that interested, and neither were my parents. My parents had an active social life in Kuwait whether entertaining at home for business or serving as a home away from home for visiting members of the Armenian community, including visiting priests who would prepare for their church service at our home. The rest of the time, my father spent several evenings a week involved in meetings and community affairs. My father was one of the leaders of the community for over a decade, and the legacy that was most important to him during his time in Kuwait was being instrumental in the establishment of the Armenian School. The elementary school started in the early 60's, and it soon grew into a full-fledged secondary school too. It was too late for us. I had to go to boarding school (Manor House School, in Mar Takla, Lebanon) when I finished at elementary school in 1963, and my mother and siblings returned to Beirut in 1965. They, too, went to the same school. My mother never worked in Kuwait. She had her hands full with the children, and married women of that generation were not meant to work. But Digin Alidz was much sought after as a trusted advisor by many of the other wives.



Lebanese President, Charles Helou, meeting delegates of the Lebanese community in Kuwait

My father returned to Lebanon circa 1970, ready to open a new chapter, and also take time out for his first love, writing. He assisted in various investment projects with Misal, which was a partnership between my uncle, Vartan Minassian, and Mounir Salame. They built a residential building in Ashrafieh as their first project and made some investments in land in Faraya, as well as in Latakia with other partners. When the civil war broke out, everything slowed down. Bit by bit people started leaving the country and setting up homes elsewhere. The various partners dispersed.

I had already graduated from Beirut University College, and I was working for *Monday Morning* magazine. I moved to Montreal to join my brother who was studying business at Concordia University. My brother later returned to Lebanon and worked in the UAE. So did I after completing a second bachelor degree in Business Administration from Concordia University and a Masters in Media and Communications from University of Wollongong in Dubai. My sister moved to California, where she currently resides. She has a Masters in Journalism. My parents kept on travelling between North America, Europe, Lebanon and the UAE. My mother, upon her return to Beirut, got involved in the Boards of the Djinishian and Karageozian foundations, as well as with the Lebanese Tuberculosis Society.

My father died on 31st January, 2004 while recovering from hip surgery after a fall on 31st December the prior year. He remained contented and optimistic till the end, guided by his strong principles and his lucky star.

ՀԱՅՐՍ՝ ԵՐԿՐԱՉԱՓ/ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԳՐՈՂԸ

(Ամփոփում)

Անի Պարսումեան

anni.barsoum@gmail.com

Յօդուածը լուսարձակի տակ կ'առնէ Քուէյթ հաստատուած առաջին հայ երեւելի դէմքերէն մէկուն՝ գրող, երկրաչափ ու ճարտարապետ Երուանդ Պարսումեանի (1910-2004) կերպարն ու կենսագործունէութիւնը, մանաւանդ Քուէյթի մէջ:

Յօդուածը կը ներկայացնէ Պարսումեանի պատանութիւնը, ապա ուսումը եւ մասնագիտական կրթութիւնը, Լաթաքիոյ մէջ իր ասպարէզային մուտքը, 1940ականներու կէսերուն Պէյրութ իր տեղափոխութիւնը: Ան հպանցիկ կ'անդրադառնայ Լիբանանի 1947ի խորհրդարանական ընտրութեանց իր մասնակցութեան, ապա ընտանեւորումին, 1953ին Քուէյթ մեկնումին, ուր կը գործէ մինչեւ 1960ականներու աւարտը, ապա կը վերադառնայ Պէյրութ:

Յօդուածը կը մանրամասնէ Պարսումեանի ասպարէզային գործունէութիւնը Քուէյթի մէջ, ուր ԱլՍակր ընկերութեան հետ ան կը կառուցէ շէնքեր, նաեւ ընդարձակ դպրոց մը, որ կարճ ժամանակ ետք կը դառնայ Քուէյթի առաջին համալսարանական համալիրը: Քուէյթի մէջ, Պարսումեան կը ծաւալէ նաեւ հասարակական գործունէութիւն, կը դառնայ Քուէյթի հայկական վարժարանի հիմնադիրներէն, նամանաւանդ որ իր սիրտը, ինչպէս իր դուստրը կը գրէ այս յօդուածին մէջ, իր սիրտը կը մնայ միշտ գրականութեան մէջ:



The Emir, Sheikh Sabah Al Salim Al Sabah and dignitaries make the university site visit





Սուրիահայութեան Օժանդակութիւնը Քուէյթահայութեան՝ Իրաքի Քուէյթ Ներխուժումէն Ետք (1990-91)

ԱՆԻ ՖԻՇԵՆՔՃԵԱՆ
fishenkjianani@outlook.com

ՄՈՒՏՔ

Արաբական անկախ պետութիւններու մէջ ամէնէն երիտասարդներէն է Քուէյթը, որուն «Սեւ ոսկի»ի[1] հսկայական պահեստները երկար ժամանակ հմայած են ե՛ւ դրացի երկիրները, ե՛ւ մեծ տէրութիւնները:

Հայերու հոսքը Քուէյթ սկսած է 1940ականի վերջ-1950ականներու սկիզբին[2]: Ատիկա արդիւնքն էր մէկ կողմէն Միջին Արեւելքի մէջ տիրող քաղաքական անկայունութեան հետեւանքով տնտեսական անկումին, իսկ միւս կողմէ՝ նաւթարդիւնաբերութեան ու յարակից ճիւղերու զարգացումին, որոնք յանգեցուցին Քուէյթի բանուոր դասակարգի ձեւաւորումին:

Քուէյթի արագ զարգացող նաֆթարդիւնաբերութիւնը աշխատուժի, բար-րորակ մասնագէտներու մեծ պահանջարկ ունէր: Լաւ վարձատրուող աշխատանքը հրապուրելով ոլորտի մասնագէտները՝ հնարաւորութիւն ընձեռեց Քուէյթի դրացի արաբական երկիրներէն հայ եւ այլ, մեծ մասամբ երիտասարդներու հոսքը Քուէյթ՝ իրենց աշխատանքով ընտանիքի ապրուստը ապահովելու, եւ երկրին տնտեսական զարգացման նպաստելու:

Քուէյթը, այդ թուականներուն տնտեսական վերելք ապրեցաւ շնորհիւ հարուստ նաւթային պաշարներու արդիւնահանման եւ արտածման ծաւալներու մեծացումին: Այսպիսով երկրի արագ զարգացումը լայն հնարաւորութիւն յառաջացուց ձեռներէց հայերու, որոնք հոն տեղափոխուեցան առաւելապէս Սուրիայէն, Լիբանանէն, Իրանէն եւ Իրաքէն, եւ սակաւ թիւով՝ Պաղեստինէն ու Յորդանանէն[3]: Անոնք հոն հիմնեցին մեծ ու փոքր բազ-

---

[1] Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆոնտ (ֆ.) 875, ցուցակ (ց.) 16, գործ (գ.) 177, թերթ (թ.) 26:

[2] Նիկոլայ Յովհաննիսեան, *Արաբական երկրների պատմութիւն, հտր. IV. անկախութեան եւ ինքնիշխանութեան դարաշրջան 1918-2005թթ.*, Զանգակ հրատ., Երեւան, 2007, էջ 668:

[3] *Հայ Սփիւռք հանրագիտարան,* Հայկական հանրագիտարան հրատ., Երեւան, 2003, էջ 611: Յակոբ Չոլաքեանի համաձայն, սկզբնական շրջանին Քուէյթ գաղթած են Իրանի, Սուրիոյ, Լիբանանի եւ մասամբ Եգիպտոսի հայերը, «իսկ վերջերս» Հայաստանի քաղաքացիները (Յ. Չոլաքեան, *Ոսկեմատեան Քուէյթի ազգային վարժարանի (1960-2010)*, Աիրամ հրատ., Քուէյթ, 2011, էջ 18): Այլ աղբիւր մը կը նշէ, որ առաջին հայերը Քուէյթ եկած են Իրաքէն, յատկապէս Պասրայէն, քանի որ աշխարհագրօրէն Քուէյթին ամէնամօտ գտնուող տարածքն էր (Լիլիթ

մաթիւ արհեստանոցներ, վաճառատուներ, շինարարական-ճարտարապետական ընկերութիւններ[4], հետզհետէ աճ արձանագրեց նաւթախողովակներ զօդողներու, նաւթարդիւնաբերութեան բանուորներու[5] թիւը:

Սկզբնական շրջանին Քուէյթ տեղափոխուածները եղած են արական սեռի, յատկապէս երիտասարդներ. կարճ ժամանակ անց, անոնք այնտեղ տեղափոխած են իրենց ընտանիքները[6]:

1950ականներու կէսերուն Քուէյթի մէջ հազարի հասնող հայերը կը սկսին կազմակերպուիլ եւ հիմնել իրենց ազգային կառոյցներն ու մարմինները: 1954ին արդէն ձեւաւորուած է առաջին համայնքային կառոյցը՝ Ազգային վարչութիւնը: 1962ին, քուէյթահայերը երկրի իշխանութեան կողմէ կը ստանան համայնքի օրինականութիւնը հաստատող վկայագիր, որով սեփական աղօթավայրով մը օժտուելու իրաւունք կ'ընձեռուէր[7]:

Քուէյթի հայերը անցնող եօթ տասնամեակներուն կ'ամրապնդեն իրենց բարեկամութիւնը բնիկ արաբ ժողովուրդին հետ, շօշափելի յաջողութիւններու կը հասնին եւ կը նպաստեն երկրին բարգաւաճման ու հայ-արաբ առաւել մերձեցման:

Քուէյթի հայօճախի զարգացման վերընթաց ուղին կը շարունակուի մինչեւ 1990 Օգոստոսը, երբ երկրին անդորրութիւնը կը խանգարեն Իրաքի Քույէթ ներխուժումը եւ Իրաքի կողմէ սանձազերծուած պատերազմը, որոնք բացասական ազդեցութիւն կ'ունենան քուէյթահայութեան ձեռք բերած նուաճումներուն վրայ:

ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒՄԸ ՔՈՒԷՅԹԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Այս աշխատասիրութեան նպատակն է ուսումնասիրել Քուէյթի հայօճախի 1990-91ի իրադարձութեանց՝ 1990 Օգոստոս 2ին սանձազերծուած պատերազմին հետեւանքով համայնքի զաւակներու կեանքէն ներս կտրուկ փոփոխութեան ներազդեցութիւնը հայօճախի կրթական, ընկերատնտեսական ոլորտներուն, որուն հետեւանքով 1990-91ին սկիզբ կ'առնէ արտագաղթը դէպի Միացեալ Նահանգներ, Եւրոպա, Լիբանան եւ յատկապէս Սուրիա: Աշխատասիրութիւնը առաջին փորձն է յետադարձ հայեացքով անդրադարձ կատարելու Իրաքի՝ Քուէյթ ներխուժման եւ եօթնամսեայ պատերազմի օրերուն ե՛ւ քուէյթաբնակ, ե՛ւ առաւելապէս Քուէյթէն դուրս (օրինակ Սուրիա) ապաստանած հայրենակիցներուն դիմագրաւած

Յարութիւնեան, Արաքս Փաշայեան, *Ծոցի արաբական երկրների հայ համայնքները, արդի հիմնախնդիրներ*, «Լուսակն» հրատ., Երեւան, 2012, էջ 85):

[4] ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ./ 182, թ. 1, «Քուէյթահայ գաղութի պատմութիւնից»:

[5] ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 177, թ. 28:

[6] Չոլաքեան, *Ոսկեմատեան*, էջ 18:

[7] *Հայ Սփիւռք հանրագիտարան*, էջ 611:

դժուարութիւններուն եւ Սուրիոյ հայօճախին ցուցաբերած օգնութիւնը՝ տարբեր ոլորտներէն ներս:

1990 Օգոստոս 2էն մինչեւ 1991 Փետրուար 26 քուէյթահայութեան պատմութիւնը յատուկ ուսումնասիրութեան չէ արժանացած: Ներխուժման օրերուն հայօճախին կացութիւնը ներկայացնող ամբողջական որեւէ աշխատասիրութիւն չկայ: Նոյնիսկ սփիւռքահայ մամուլի էջերուն, սակաւ են տեղեկութիւններ այդ մասին: Մամուլը առաւելապէս անդրադարձած է քաղաքական դէպքերուն: Իսկ Հայաստանի Ազգային արխիւի ֆոնտերուն մէջ Քուէյթի հայօճախին վերաբերող նիւթերը կը խօսին առաւելապէս 1980ականներու հայօճախին կազմութեան եւ անհատ ձեռներէցներու մասին, որոնք կրնան որոշակի լոյս սփռել այդ ժամանակի հայօճախի կեանքին: Թեմային կամ ժամանակահատուածին առնչուող փաստաթուղթերու չենք հանդիպած: Բերիոյ հայոց թեմի արխիւները անհասանելի էին Սուրիայէն ներս ընթացող պատերազմի պատճառով:

Մեր շարադրանքը կառուցելու համար - բացի հայկական եւ արաբական մամուլի հատուկենտ տեղեկութիւններէն եւ հասանելի գրականութենէն - հարցազրոյցներ վարած ենք 2019ին Բերիոյ թեմի ներկայացուցիչ, քաղաքական ժողովի անդամներէն ոմանց եւ թեմի տէր Տաթեւ Ա. քահանայ Միքայէլեանի, 2022ին Քուէյթի տէրհօր՝ Արտակ Ա. Քհնյ. Քեհիայեանի, Քուէյթի Ազգային վարժարանի կարգ մը ուսուցիչներու եւ վարժարանի, այդ թուականներու շրջանաւարտներուն հետ:

ԻՐԱՔԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՔՈՒԷՅԹ

1990 Օգոստոս 2ին Իրաք ներխուժեց դրացի երկիր՝ Քուէյթ, որուն հետեւանքով ալ աւելի ետք պատերազմ սանձազերծուեցաւ Իրաքի դէմ՝ Միացեալ Նահանգներու գլխաւորած միջազգային դաշինքով[8]:

Իրաքի ներխուժումէն առաջ Քուէյթի մէջ գոյութիւն ունէր բարգաւաճ հայօճախ, որ շուրջ յիսուն տարիներու պատմութիւն ունէր: Հայօճախը կազմաւորուած ու կազմակերպուած էր եկեղեցւոյ ու ազգային առաջնորդարանին շուրջ, ունէր ազգային վարժարան, կը գործէին մշակութային, բարեսիրական եւ կուսակցական կառոյցներ: Այլ խօսքով, Քուէյթի հայութիւնը իր ներքին կառուցուածքով մեծ հայօճախի մը մանրանկարը կը պարզէր: Անոր կազմակերպման աշխատանքներուն մէջ գնահատելի դեր ունեցած են առաջնորդ սրբազանները, հոգեւոր հովիւները, ազգային իշ-

[8] Յովհաննիսեան, էջ 654:

խանութիւններն ու կազմակերպութիւները[9]: Հայութեան թիւը տարբեր աղբիւրներու վկայութեամբ կը տարուբերէր 10-12 հազարի միջեւ[10]:

Քուէյթի հայ առաքելական եկեղեցւոյ կողքին ձեւաւորուած էին հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական փոքրաթիւ համայնքներ, որոնց թուական պատկերը հետեւեալն էր, ըստ 1968ի տուեալներու.- 300 հոգի հայ կաթողիկէներ (որոնք չեն ունեցած եկեղեցի, քահանայ եւ դպրոց. անոնց մէկ մասը յաճախած է օտար՝ յիսուսեաններու եկեղեցին եւ վարժարաններ), հայ աւետարանականներ՝ շուրջ 100 հոգի (որոնք նոյնպէս չեն ունեցած հայկական հաւաքականութիւն, այլ յաճախած են օտար ժողովարան): Հայ կաթողիկէներէն եւ հայ աւետարանականներէն շատեր յաճախած են հայ առաքելական եկեղեցի եւ դպրոց՝ հայկականութիւնը պահելու համար[11]:

1980ին Քուէյթի մէջ ապրած են 7000 հայեր[12], 1985 Փետրուարի տուեալներով՝ 10,000[13]: Բարեկեցիկները (1980ի տուեալներով) հայօճախին 20-30 տոկոսը կազմած են: Հայօճախը կը հովանաւորուէր մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ նշանակուած կղերականով[14]:

Իրաքի ներխուժումը Քուէյթ անակնկալի բերաւ ողջ երկիրը եւ աւերիչ հետեւանքներ ունեցաւ նաեւ Քուէյթի բարգաւաճ հայօճախին վրայ[15]: 1990ին Մերձաւոր Արեւելքի «Անապատի փոթորիկ»[16] անուանուած Պարսից Ծոցի Իրան-Իրաք պատերազմէն առաջ, հայօճախը կողոպտուեցաւ Քուէյթի ժողովրդական բանակին կողմէ, իսկ բնակարանները՝ Քուէյթ մնացող շէնքերու բնակիչներու կողմէ:

Իրաք, միաժամանակ, Քուէյթը դարձուց իր նահանգներէն մէկը, զայն

---

[9] Չոլաքեան, *Ոսկեմատեան,* էջ 25-37:

[10] Թոնի Հելփին, «Փոթորիկի բերան ընկած. Քուէյթից մինչեւ Կալիֆորնիա հայերն զգում են պատերազմի ցնցումները», *Ազգ օրաթերթ*, 13 Մարտ 1991, էջ 4: Յօդուածը թարգմանաբար հատուածներ կը ներկայացնէ *Armenian International Magazine* (*AIM*) հանդէսի մէջ "Caught in the Storm, from Kuwait to Calofornia, Armenians feel the Shockwaves of War" (Փետրուար 1991, էջ 8-10), վերնագրով յօդուածէն: Այլ աղբիւր մը կը նշէ 10-13 հազար հայ (Յովհաննիսեան, էջ 668):

[11] ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 177, թ. 28:

[12] ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 182, թ. 1:

[13] ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 177, թ. 29:

[14] ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 182, թ. 1:

[15] Հայերու հոսքը դէպի Քուէյթ կ'ենթադրուի սկսած ըլլալ 1947ին: 1956ին Քուէյթ հաստատուած ընտանիքներու թիւը քառասուն է: 2010ի տուեալներով հայօճախը մօտաւորապէս 5000 հոգի էր, բաղկացած 180 ընտանիքէ եւ 3000 ամուրիներէ, որոնք եկած են Սուրիայէն, Լիբանանէն եւ Իրանէն (Չոլաքեան, *Ոսկեմատեան,* էջ 26-35):

[16] Ս. Նարալեան, «Ծոցի պատերազմը», *Արարատ օրաթերթ*, 20 եւ 22 Փետրուար 1991:

հռչակելով Իրաքի 19րդ նահանգը[17]:

Ներխուժումէն առաջ, ամառնային արձակուրդի ժամանակաշրջանի սկիզբն էր, եւ բաւական թիւով հայ ընտանիքներ երկրէն մեկնած էին՝ ամառնային եռամսեայ արձակուրդի: Յուլիս 13ին, տարեկան արձակուրդի համար քաղաքէն մեկնած էր նաեւ Քուէյթի եւ Ծոցի արաբական պետութիւններու կաթողիկոսական փոխանորդ՝ Օշական Ծ. վրդ. Չոլոյեան (յետագային Օշական արք. Չոլոյեան)[18]: Տիրող կացութեան պատճառով երկրէն ներս շեշտուած էին անկայունութիւնն ու անապահովութիւնը, որոնք նոր հրամայականի առջեւ պիտի կանգնեցնէին ոչ միայն բնիկը, այլեւ քրիստոնեայ համայնքները:

Քուէյթէն ներս ձեւաւորուած ժողովրդական բանակը դիմեց կողոպուտի. «*Քուէյթ կ'ենթարկուի պաշտօնական եւ լայնատարած կողոպուտի. համալսարաններու եւ հանրային գրադարաններու պարունակութիւնը կը փոխադրուի Իրաք, ... բշժկագիտական սարքեր եւ այլ գործիքներ կը բռնեն նոյն ճամբան*»[19]:

Իրաք Հոկտեմբերի սկիզբը փակեց Քուէյթի օդակայանը[20]: Մէկ ամսուան ընթացքին մօտաւորապէս 250 հազար քուէյթաբնակ արաբներ, ասիացիներ եւ եւրոպացիներ Յորդանան հասան Իրաքէն եւ Քուէյթէն՝ վերադառնալու համար իրենց երկիրները:

Հոկտեմբերին, 60,000 գաղթականներ անպատսպար, սննդանիւթի եւ ջուրի դժուարութեան, առողջապահական վատ պայմաններու մէջ էին:

Փախստականներու մեծ հոսքին պատճառաւ, 22 Օգոստոս 1990ին, Յորդանան եւս կը փակէ իր սահմանները Իրաքի հետ[21]: Յորդանանի թագաւորը կ'արդարացնէ իր ընթացքը «*մարդասիրական դրդապատճառներով*», լուսաբանելով թէ «*կարելի չէր անկազմակերպ ձեւով ընդունիլ եւ փոխադրութիւնը ապահովել մեծաքանակ գաղթի մը*»[22]: Սակայն քանի մը օր ետք, Յորդանան կը վերաբանայ իր սահմանները[23]:

---

[17] Չոլաքեան, *Ոսկեմատեան*, էջ 382:

[18] Խմբ. «Հայ գաղութը Քուէյթի մէջ», *Հասկ ամսագիր*, 2-3:1991, էջ 96:

[19] «Եթէ իբրեւ իրաքցի չարձանագրուին՝ քուէյթցիք իրենց երկրին մէջ պիտի դառնան օտարականներ», *Ազդակ*, 7 Նոյեմբեր 1990, էջ 1:

[20] «Իրաք փակեց Քուէյթի օդակայանը», *Ազդակ*, 9 Հոկտեմբեր 1990, էջ 1:

[21] https://ar.wikipedia.org/wiki/%D8%A7%D9%84%D8%AC%D8%AF%D9%88%D9% 84 _%D8%A7%D9%84%D8%B2%D9%85%D9%86%D9%8A_%D9%84%D8%AD%D8%B1 %D8%A8_%D8%A7%D9%84%D :

[22] «Օրուան դէպքերը. ճառամարտէն ետք ջլամարտ», *Յառաջ օրաթերթ*, 25-26 Օգոստոս 1990, էջ 1:

[23]https://ar.wikipedia.org/wiki/%D8%A7%D9%84%D8%AC%D8%AF%D9%88%D9%84_% D8%A7%D9%84%D8%B2%D9%85%D9%86%D9%8A_%D9%84%D8%AD%D8%B1%D 8%A8_%D8%A7%D9%84%D8

Ներխուժման սկզբնական օրերուն կանգ կ'առնէ հայօճախին եկեղեցական եւ կրթական կեանքը: Դպրոցը կը փակէ իր դռները՝ ապահովութեան, ապա եւ ուսուցիչներու, աշակերտներու մեծամասնութեան բացակայութեան պատճառով[24]: Իսկ ներխուժումին յաջորդող միջազգային հակազդեցութիւնները, անորոշութիւնն ու երկրէն ներս տիրող քաոսը խուճապի մթնոլորտ կը ստեղծեն բնակչութեան, ներառեալ՝ հայերու մէջ:

Անիշխանութիւնը, չարաշահումները, գողութիւնը եւ առօրեայ կեանքին մէջ ընթացիկ կարիքներու չբաւարարումը բազմապիսի դժուարութիւններ կը յարուցէին Քուէյթ մնացողներուն համար: Անոնցմէ ոմանք, անկասկած, պիտի մտածէին երկիրը լքելու մասին: Երկրէն դուրս գալու արտօնութիւն կը տրուի միայն այն ժամանակ երբ տասնհինգ օրերու հրթիռակոծումէն ետք կրակմար կը յայտարարուի[25]:

Պատերազմի, ենթակառոյցներու ահաւոր քանդումի արհաւիրքներէն խուսափելու եւ Քուէյթի մէջ ձեւաւորուած նոր կառավարութեան պահանջքներուն ընդառաջ չերթալու համար, հայօճախի զաւակներէն ոմանք կը ստիպուին դիմել արտագաղթի եւ բնակութիւն հաստատել Սուրիա, Յորդանան ու Արեւմուտք: Բայց շուրջ 500-600 հայեր[26] կը շարունակեն մնալ Քուէյթ զանազան պատճառներով: Ոմանք գաղթելու որեւէ տեղ չունէին, ուրիշներ՝ որովհետեւ դրամատուներու մէջ կը գտնուէր իրենց դրամագլուխը, կամ գործատեղիներ ունէին, ոմանք ալ ի գին ամէն ինչի որոշած էին յարմարիլ տեղի պայմաններուն եւ շարունակել կեանքը: Կային եւ ոմանք, որոնք լծուեր էին իրենց տան կահոյքները փոխադրելու եւ Քուէյթը վերջնականօրէն լքելու գործին[27]:

Սեպտեմբերին, Չոլոյեան վրդ.՝ Ամմանի եւ Իրաքի վրայով, ցամաքի ճամփով Ամերիկայի իր արձակուրդէն կը վերադառնայ եւ տէր կը կանգնի իր հօտին, մինչ հոգեւոր հովիւ՝ Պարոյր Ա. քհնյ. Սարգիսեան, տագնապի ամբողջ տեւողութեան մնացած էր իր հօտին հետ[28]:

Քուէյթի իրավիճակի մասին մանրամասն տեղեկութիւն կը փոխանցէ կաթողիկոսական փոխանորդ Չոլոյեան իր 29 Հոկտեմբեր 1990 թուակիր տեղեկագիրով (տե՛ս՝ յաւելուած), ուր կը պարզէ երկրին եւ հայօճախին վիճակը, պատերազմի պատճառով ձեւաւորուած նոր կառավարութեան պահանջքները, Օգոստոսէն մինչեւ Հոկտեմբերի վերջ տիրող կրօնական, քաղաքական, տնտեսական եւ ընկեայինհիմնախնդիրները[29]:

---

[24] Հնարաւոր չ'ըլլար նաեւ Սեպտեմբերի կրթական վերամուտը:

[25] Չոլաքեան, *Ոսկեմատեան,* էջ 382:

[26] Հելփին, էջ 4:

[27] Չոլաքեան, *Ոսկեմատեան,* էջ 384-85:

[28] *Հասկ*, էջ 96:

[29] Չոլաքեան, *Ոսկեմատեան,* էջ 382:

Ըստ Չոլոյեանի՝ «*Ժողովուրդի մեծ մասը արձակուրդի մէջ գտնուած ըլլալով չէ կրցած վերադառնալ քուէյթ. աւելի քան 500 հայեր միշտ մնացած են այնտեղ: Վերջին այս մէկ երկու ամիսներուն է որ հայեր սկսած են վերադառնալ, գլխաւորաբար այր մարդիկ, գործի տէր անձինք*»[30]:

Երկրէն հեռացողներէն շատեր իրենց անձնական ինքնաշարժներով, իսկ ոմանք իրենց տան կահկարասիները բեռնաւորած կը փորձէին դուրս գալ երկրէն: Բացի Յորդանանէն, փակ էր Սէուտական Արաբիոյ սահմանը, որովհետեւ այնտեղ տեղակայուած էին սէուտական եւ ամերիկեան զօրքեր: Անձնական միջոցներով երկրէն դուրս եկողները կը միանային կարաւաններու շարասիւնին՝ Քուէյթէն Պասրա, Պաղտատ եւ Յորդանան (Իրաք-յորդանանեան յատուկ անցակէտով), դժուար երթուղիով կը հասնէին Դամասկոս, ուրկէ Լիբանան՝ կամ մեծ մասամբ Հալէպ կ'ուղեւորուէին: Փախստականներու առաջին կարաւանին միացող Սարգիս Արսլանեան կը նկարագրէ գաղթի ճանապարհը. անոնք կը միանան կարաւանին, որ կ'ուղեւորուէր «*Քուէյթէն, Պասրա, Պաղտատ եւ Յորդանան*» եւ դժուարութեամբ կը հասնի Դամասկոս. «*կեանքումս չէի տեսել այդպիսի բան. հազարաւոր մեքենաներ ու մարդկային բազմութիւններ կը հասնէին սահմանային ճանապարհների վրայ*»[31]: Թէեւ քուէյթաբնակներուն արտօնութիւն տրուած էր իրենց կահոյքներով դուրս գալու երկրէն, սակայն սահմանային անցակէտերը կը դժուարացնեն բեռնաւորուած բեռնատար մեքենաներուն հեզասահ անցքը այլ տարածք եւ բեռնատարները սահմանին կը պահեն 10 օր, որուն պատճառով ալ շատ շատեր կը ստիպուին 10 օր մնալ այդ սահմանային անցակէտերուն:

Տեղի կ'ունենայ նաեւ ներհոսք, երբ ամառնային արձակուրդի բերմամբ Քուէյթէն դուրս եղող քուէյթահայեր կը շտապեն երկիր, իրենց ունեցուածքին կամ գործատեղերուն տէր կանգնելու համար: Ժիրայր Ուրֆալեան, Քուէյթի Առեւտրական դրամատան գլխաւոր կառավարիչի տեղակալը, ափսոսանքով կ'արտայայտուի երկրին եւ հայօճախի իրավիճակին մասին. «*Անձկութիւնը մեծ էր, քանի որ Քուէյթի գաղութը շատ բարգաւաճ եւ մարդիկ շատ ջերմ էին: Եւ յանկարծ ամէն ինչ կորաւ մի օրում*»[32]:

Սուրիա, յատկապէս Հալէպ ապաստանած քուէյթահայերուն համար Բերիոյ հայոց թեմի ազգային իշխանութիւնը պարտականութիւն կը ստանձնէ կարգաւորելու անոնց կրթական, բնակարանային եւ տնտեսական կարիքները: Անոնք մեծ մասամբ նախկին հալէպաբնակներ ըլլալով Սուրիոյ մէջ ունէին հարազատներ եւ կամ իրենց սեփական տուները, այսինքն կը գտնուէին նիւթապէս առաւել բարուօք վիճակի մէջ: Հակառակ

[30] *Հասկ*, էջ 96:
[31] Հելփին:
[32] Հելփին, էջ 4:

այս բոլորին, հալէպահայութիւնը կարիքաւորներուն իր օժանդակութիւնը կը ցուցաբերէ: Սուրիոյ պետութիւնը եւս հնարաւոր պայմաններ կը ստեղծէ ե՛ւ սուրիահպատակ, ե՛ւ օտարահպատակ փախստականներուն: Սուրիոյ կրթական նախարարութիւնը կը հրապարակէ յատուկ հրամանագիր, որով (ե՛ւ օտարահպատակ ե՛ւ սուրիահպատակ) քուէյթցի աշակերտութեան արտօնութիւն կը տրուի զանոնք անվճար ընդունիլ սուրիական դպրոց: Նախարարութիւնը գործակցելով Բերիոյ թեմի ազգայիններուն հետ, Սուրիոյ դպրոցներուն մէջ իրենց ուսումը շարունակելու դիւրութիւններ կ'ընծայէ ու կը դիւրացնէ անոնց «*փոխանցման եւ արձանագրութան օրինականութիւնները*»[33]: Այսպիսով, Քուէյթի Ազգային վարժարանի աշակերտները հնարաւորութիւն կ'ունենան իրենց ուսումը շարունակելու թեմի ազգային եւ միութենական վարժարաններէն ներս: Հալէպի Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի աւագ դասարաններու հայերէնաւանդ ուսուցիչ Չոլաքեան կը նշէ, որ Քարէն Եփփէ ազգային «*Ճեմարանի միջնակարգ եւ երկրորդական բաժիններուն մէջ Քուէյթէն եկած քանի մը տասնեակ աշակերտներ*»[34] կային: Իսկ թեմի աւագ քահանայ՝ Տաթեւ Միքայէլեան կը հաստատէ թէ Ծոցի պատերազմի օրերուն Հալէպ ապաստանած քուէյթահայ ընտանիքներուն համար «*երկու տարեշրջան մեր դպրոցներուն դռները բաց մնացին ... եւ անվճար իրենց աշակերտները ուսանեցան*»[35]: Քահանան շարունակելով իր խօսքը, կը նշէ թէ քուէյթահայ հայրենակիցները օժանդակութեան կարիքը չունէին, բայց պատերազմի վնասուց հատուցում տրուեցաւ անոնց «*Սուրիոյ մէջ գտնուող քուէյթեան դեսպանատունէն*»: Անոնք օժանդակութիւն ստացան նաեւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) կողմէ: Պատերազմի աւարտին ոմանք վերադարձան Քուէյթ, ուրիշներ շարունակեցին իրենց կեանքը Սուրիոյ, ի մասնաւորի Հալէպի մէջ, որովհետեւ իրենց սեփական տուները ունէին այնտեղ[36]:

Բացի ընտանիքներէն Քուէյթէն Հալէպ եկած էին մեծ թիւով ուսուցիչներ, որոնք սեփական գործ չունենալու պատճառով չէին կրցած որեւէ տեղ աշխատիլ: Անոնցմէ ոմանք կրցան առեւտուրով զբաղիլ, ոմանք ալ ազգային կառոյցներէն ներս, որպէս վարժարանի հաշուապահ, կամ տպարանի մէջ աշխատելով իրենց կարիքները հոգացին:

Քուէյթահայ աշակերտները ներգրաւուելով Սուրիոյ կրթական համակարգին, դէմ յանդիման գտնուեցան որոշ դժուարութիւններու, ինչպէս՝ պետական կրթական համակարգի եւ ծրագիրերու փոփոխութիւն, համա-

---

[33] Չոլաքեան, *Ոսկեմատեան,* էջ 386:

[34] Յ. Չոլաքեան, *Յուշամատեան Քարէն Եփփէ ազգային ճեմարանի*, Արեւելք տպարան, Հալէպ, 1997, 378:

[35] Անձնական հանդիպում տէրհօր հետ, Հալէպ, 22 Յունուար 2019ին:

[36] Անձնական զրոյց տէր Տաթեւի հետ, 22 Յունուար 2019ին, Հալէպ:

դասարանցիներու բաժանում, նոր միջավայրին համարկում, արաբերէն լեզուի իմացութեան մակարդակ, նոր ծանօթութիւններ...: Ասոնք կրնային խոր ազդեցութիւն ձգել աշակերտին եւ կամ նորահաս պատանի-պարմանուհիներուն վրայ: Ուսման դժուարութիւնը յաղթահարելու համար իրենց օգնութեան հասան Սուրիա ապաստանած տուեալ դասանիւթի իրենց ուսուցիչները, որոնք նոյնպէս ժամանակաւոր կը գտնուէին Հալէպ[37]:

Աւելի ետք, կրթական այս աջակցութիւնը մեծապէս գնահատուեցաւ քուէյթահայութեան կողմէ. առաջնորդ Չոլոյեան վրդ. շնորհակալագիրով մը իր երախտագիտութիւնը յայտնելով Բերիոյ թեմի ազգային վարժարաններու ղեկավարութեան, որոնք իրենց կրթարաններէն ներս հիւրընկալեցին քուէյթահայ պատանիներն ու երիտասարդները, կ'ըսէ՝ «*Հոգեկան հանդարտութիւն եւ բաւարարութիւն եղաւ մեր ժողովուրդին համար ձեր կողմէ ցուցաբերած այն սիրալիր մօտեցումն ու որոշումը, որով մեր գաղութի ուսանող զաւակները ընդունեցիք ձեր վարժարաններէն ներս առանց նիւթական ակնկալութեան եւ պահեցիք զանոնք որպէս սան 1990-1991 ուսումնական տարեշրջանի ընթացքին*»[38]:

Ըստ տուեալներու, 1990-91 կրթաշրջանին Հալէպի ազգային Սահակեան վարժարանը ընդունած է քուէյթահայ 85 աշակերտ, «*ամբողջապէս ձրիավարժ, ներառեալ նաեւ օթոքարի սպասարկութիւնը*»[39]:

Բացի քուէյթահայերէն, 1991ին, Ծոցի պատերազմին պատճառով Քամիշլի կը հասնին իրաքահայ գաղթականներ, որոնք կ'արժանանան Սուրիահայ օգնութեան խաչի տեղի մասնաճիւղին օժանդակութեան[40]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Քսաներորդ դարու յատկապէս երկրորդ կէսէն սկսեալ Միջին Արեւելքի մէջ տիրող քաղաքական խառնաշփոթ կացութեան եւ տարածաշրջանային անկայուն վիճակին հետեւանքով սկիզբ առած ներքին տեղաշարժերը ու մանաւանդ արտագաղթը, հետզհետէ նոր թափ կը ստանայ: Իրաքի Քուէյթ ներխուժման օրերուն եւ իրաքեան տագնապի տարիներուն, շատեր կ'արտագաղթեն այս շրջաններէն: Արտագաղթողներէն ոմանք ա-

---

[37] Տեղեկութիւնը քաղուած է, այդ օրերուն 12րդ կարգի աշակերտուհի Պեթի Իճեանի հարցազրոյցէն: Պեթին եւ իր դասարանցիները այդ օրերուն Հալէպ գտնուելով իրենց ուսումը շարունակած են Հալէպի Ազգային Քարէն Եփփէ ճեմարանէն ներս:

[38] Յ. Չոլաքեան, *Յուշամատեան Քարէն Եփփէ ազգային ճեմարանի*, Հալէպ, 378:

[39] Յ. Չոլաքեան, *Ութսունամեակ Հալէպի ազգային Սահակեան վարժարանի*, Հալէպ, 2007, էջ 499:

[40] Ա. Փիշենկճեան, *Յուշամատեան Սուրիահայ օգնութեան խաչի, 1919-2009*, Հալէպ, 2010, էջ 299:

պաստան կը գտնեն սահմանակից Սուրիոյ Արաբական Հանրապետութեան հողին վրայ, իսկ ուրիշներ կը հաստատուին Արեւմուտք: Սուրիա ապաստանող կարիքաւոր գաղթականներուն աջակցութիւն կը ցուցաբերէ պետութիւնը: Սուրիոյ հայօճախը իր զոյգ թեմերով եւ առաջնորդական փոխանորդութեամբ զօրավիգ կը կանգնի յատկապէս նպաստելով կրթական գործին:

Տուեալ երկիրներէն արտագաղթող բարեկեցիկներու, մասնագէտներու եւ «աշխատող ձեռքեր»ու բացակայութիւնը կը տկարացնէ, հուսկ՝ կը վտանգէ հայօճախներու ազգային կառոյցներու առաքելութիւնը: Իսկ միւս կողմէ անոնց առկայութիւնը սահմանամերձ այլ համայնքներու՝ կը նպաստէ տուեալ երկրի տնտեսութեան ու մշակութային կեանքին վերելքին:

THE ASSISTANCE OF THE SYRIAN ARMENIAN COMMUNITY TO THE KUWAITI ARMENIANS AFTER THE INVASION OF KUWAIT BY IRAQ

(SUMMARY)

Ani Fishenkjian
fishenkjianani@outlook.com

Due to the speedy growth and development of Kuwait, a number of Armenians from Syria, Lebanon, Iran and Iraq settled in Kuwait and established businesses in the diverse fields of trade, development, machinery, etc. Soon after, they start organizing their socio-religious and public life.

This prosperous community was badly hit on August 2, 1990, when Iraq invaded Kuwait and caused both the community and the native Kuwaitis unprecedented hardship. A number of Kuwait Armenians fled the country. Some took refuge in Aleppo, where the local community extended a helping hand to them.

The paper is the first of its kind to narrate the story of this philanthropic support and solidarity. Furthermore, it argues that since the mid-20th century the prevailing instability in the region has caused the departure of large numbers of Armenians from their host lands of Syria, Lebanon, Iraq, Kuwait, Jordan and Palestine to the Western hemisphere and has weakened the Armenian communities of the Middle East.

Քուէյթի Ազգային Վարժարանը

ՆԵՐՍԷՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ
nerses.sarkissian@aps.edu.kw

ARMENIAN SCHOOL
P.O.BOX : 34434
73255 - AL-ADELIYA - KUWAIT
TEL:25318159

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ՀԵՌ-25318159- ՔՈՒԷՅԹ

المدرسة الأرمنية
ص.ب ٣٤٤٣٤
الكويت - العديلية 73255
الهاتف ٢٥٣١٨١٥٩

AL-TADAMON SEC. SCHOOL
P.O.BOX 34510
73256 ADELIYA - KUWAIT
TEL: 25319047, 25319048

ԱԶԳԱՅԻՆ ԺԵՄԱՐԱՆ
ՔՈՒԷՅԹ
ՀԱՒԱՍԱԽՕՍ. 25319047, 25319048

ثانوية التضامن الأهلية
ص.ب : ٣٤٥١٠
الكويت - العديلية 73256
الهاتف: ٢٥٣١٩٠٤٧ - ٢٥٣١٩٠٤٨

ՄՈՒՏՔ

2021ին, Քուէյթի ազգային վարժարանը (ՔԱՎ) բոլորեց իր 60 տարիքը: Այսօր, ան իր ետին ունի 63 տարիներու պատմութիւն մը:

Որեւէ սփիւռքահայ կրթական հաստատութիւն, նաեւ արտացոլումն է այն երկրին ու միջավայրին, ուր ան գործունէութիւն կը ծաւալէ: Ի վերջոյ, ան նաեւ դրսեւորումն է միջավայրին հետ փոխկապուածութեան եւ փոխադարձ ազդեցութեան:

Քուէյթահայութիւնը ինչպէս Քուէյթի մէջ ապրող բոլոր միւս ոչ-քուէյթցիները, Քուէյթ հաստատուած են բարեկեցիկ կեանք մը ապահովելու հեռանկարով: Անոնք եկած են առաւելաբար Սուրիայէն, Իրանէն եւ Լիբանանէն: Անոնք միւս բոլոր օտարահպատակներուն նման չունին քաղաքացիի կարգավիճակ, այլ օտարերկրացիի յատուկ կարգավիճակ, որ օրէնքի սահմաններուն մէջ անոնց կու տայ որոշ իրաւունքներ: Սոյն օրէնքները միշտ փոփոխական են եւ անմիջական առնչութիւն ունին երկրի քաղաքական, տնտեսական եւ ընկերային փոփոխութիւններուն հետ: Հակառակ անոր որ Քուէյ-



Քուէյթի առաջին վարժարանի շէնքը, որ եղաւ նաեւ դրսեկ ուսուցիչներու բնակարանը, Սալմիէ:

թը տասնամեակներ շարունակ օտարերկրացիներուն ընձեռած էր կեցութեան համար օրէնքներու կայուն համակարգ մը, վերջին տարիներուն եւ յատկապէս Քորոնա համաճարակէն ետք (2020), այդ օրէնքները բարդացան ու խստացուեցան: Յատկապէս աշխատանքի ընդունման պարագային, տեղացի քուէյթցիներուն նախապատուութիւն տալու միտումներ շեշտուեցան հետզհետէ:





ՔԻՉ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՔԱՎը, հիմնուած է 1961ին, 1950ականներէն նաֆթի արդիւնաբերութեան զարգացումին հետեւանքով, Քուէյթ հաստատուած եւ հետզհետէ աճող քուէյթահայութեան երեխաներուն որակեալ ուսում եւ կրթութիւն ջամբելու նպատակով: Արդարեւ, հայ ազգային ինքնութեան պահպանումը եղած է վարժարանիս առաքելութեան հիմնական առանցքը: Այս առաքելութիւնն ու նպատակը վաւերական են մինչ օրս:

Մինչեւ 1983, ՔԱՎը եղած է միջնակարգ: Երկրորդականի անհրաժեշտ կարիքը զգացուելով, 1983ին կարելի եղած է ձեռք ձգել երկրորդական վարժարանի արտօնագիր՝ արաբական մասնաւոր վարժարաններու կարգավիճակի ծիրին մէջ: Այդ նպատակով ալ որդեգրուած է Քուէյթի պետական կրթական ծրագիրը, ինչ որ հնարաւորութիւն կու տայ վարժարանը աւարտողին, Քուէյթի պետական պաքալորէան ստանալ եւ մուտք գործել տեղական կամ արտերկրի որեւէ համալսարան, բացի Քուէյթի պետական համալսարանէն, որ յատուկ է քուէյթցիներուն[1]:

ՔԱՎի երկրորդական բաժնի հիմնադրութիւնը սակայն, վարժարանին մէջ ձեւականօրէն ստեղծած է երկուութիւն մը: Վարժարանը վերածուած է մէկ կառոյցի մէջ գործող երկու ուսումնարանի. ա) մանկապարտէզէն մինչեւ միջնակարգ՝ հայկական մասնաւոր վարժարան, եւ բ) երկրորդական՝ «*Ալ Թափամոն*» երկրորդական վարժարան, անուանակարգերով: Այս վերջինը ունի օրէնքով սահմանուած քուէյթցի տնօրէն[2]:

---

[1] Միայն 2022-23 կրթաշրջանէն սկսեալ, այս համալսարանը սկսաւ յատուկ պայմաններով աշակերտներ ընդունիլ՝ վճարովի:

[2] Տեղին է նշել, որ յաճախ Քուէյթի կրթութեան նախարարութեան համապատասխան բաժանմունքը քուէյթցի տնօրէն նշանակելու հարցով եղած է բծախնդիր,

1973ին, հայօճախին ճիգերով կարելի եղած է գնել մօտաւորապէս 3000 մեթր քառակուսի հողատարածք մը ԱլՍուրրա շրջանին մէջ եւ այնտեղ կառուցել ու փոխադրել վարժարանը, ուր իր գործունէութիւնը կը ծաւալէ ան մինչեւ այսօր:

Իդէպ, Քուէյթ հաստատուած բոլոր օտարերկրացիներն ու համայնքները իրաւունք չունին որեւէ կալուածի սեփականատէր ըլլալու: Ուստի, հայօճախը պարտաւորուած է իր կալուածները (դպրոց եւ եկեղեցի) արձանագրել տեղացի երաշխաւորի մը անունով[3]:

Նկատի առած, որ Քուէյթի մէջ գործող բոլոր վարժարանները, օրէնքով պէտք է գրանցուած ըլլան կրթական հաստատութեան մը անունով եւ այդ Կրթական հաստատութեան սեփականատէրը անհրաժեշտ է որ ըլլայ քուէյթցի, ուստի ամէն ջանք ի գործ դրուած է հիմնելու «Ալ Սալամ» կրթական հաստատութիւնը, տեղացի երաշխաւորի մը անունով, որուն հովանիին տակ կը գործեն ՔԱՎն ու «*Ալ Թափամոն*» երկրորդական վարժարանը:



ՔԱՎի 2023-24 կրթաշրջանի
ուսուցչակազմը եւ վարչակազմը

Անկախ վերոյիշեալ առանձնայատկութիւններէն եւ դժուարութիւններէն, ՔԱՎը իր հիմնադրութեան օրէն իվեր եղած է այն հայաբոյր կրթօճախը, ուր հայ երեխային ու պատանիին մէջ ծիլ նետած են հայու ինքնութեան գիտակցութիւնը: Այստեղ գործած են եւ կը գործեն բազմաթիւ հայ վաստակաշատ տնօրէններ, ուսուցիչներ եւ վարչակազմեր, որոնք մաս կազմած են Սփիւռքի քարտէզին վրայ, ուսումնակրթական եւ ազգային ոլորտներէն ներս գործող ու ծառայող նուիրեալներու ցանկին:

ՎԱՐՉԱ-ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

Այսօր, ՔԱՎէն ներս կը գործեն 53 ուսուցիչներ, վարչական պաշտօնեաներ եւ ծառայողներ, որոնցմէ 37ը հայեր են:

նկատի ունենալով վարժարանին համայնքային բնոյթը եւ առանձնայատկութիւնները: Այնուամենանիւ, երբեմն պատահած են տարակարծութիւններ, որոնք սակայն միշտ լուծուած են փոխադարձ յարգանքով եւ համագործակցութեան բարձր ոգիով:

Ծ.խ.- Տես՝ այս հատորին մէջ Տիգրան Ճինպաշեանի յուշերը:

[3] Հայօճախին իրաւունքները պաշտպանուած են օրինական ձեւակերպումներով, եւ հայօճախին պատասխանատուներու որոշումով կնքուած են պայմանագրեր՝ երաշխաւորին եւ համայնքի ազգայիններուն միջեւ:

ՔԱՎի աշակերտութեան այժմու թիւն է 297, որոնց ջախջախիչ մեծամասնութիւնը երթեւեկութեան համար կ'օգտագործէ դպրոցի փոխադրակառքերը (5 հատ): Իդէպ ՔԱՎի աշակերտութիւնը կը բնակի Քուէյթի արուարձաններուն մէջ: Չկան այլ նահանգներէ յաճախող աշակերտներ:

2009-10 կրթաշրջանին աշակերտութեան թիւը 420 էր: Թիւի այս անկումը, որ շեշտուեցաւ 2020-21 կրթաշրջանին եւ անկէ ետք, կը բացատրուի Քորոնա համաճարակէն ետք Քուէյթէն ներս կեցութեան իրաւունք տալու դրոյթներու խստացումով, հայերու արտագաղթով, ամուսնութիւններու սակաւութեամբ եւ ծնունդներու նուազումով:


Իտես այս պատկերին, ՔԱՎի տնօրէնութիւնը, հոգաբարձութիւնն ու հայօճախի պատասխանատու մարմինները որոշեցին 2021-22 կրթաշրջանին, գործակցաբար Քուէյթի մէջ գործող յոյն ուղղափառ եւ յոյն կաթոլիկ եկեղեցիներու, վարժարան ընդունիլ, ոչ-հայ աշակերտներ, յատկապէս մանկապարտէզի եւ նախակրթարանի կարգերէն ներս, յատուկ պայմաններով: Յիրաւի, այսօր, ՔԱՎ կը յաճախեն 23 օտար աշակերտներ, որոնց համար վարժարանը հայերէնի յատուկ դասարան մը հաստատած է[4]: Ուշագրաւ է, որ օտար աշակերտներու մեծամասնութիւնը այսօր լրիւ կը տիրապետէ հայերէնին, հայերէն կ'երգէ ու կ'աղօթէ եւ համարկուած է վարժարանի աշակեր-ութեան ընկերային մթնոլորտին:


ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՇԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Անվերապահօրէն կրնանք հաստատել, որ հայերէն լեզուն ու գրականութիւնը, հայոց պատմութիւնը, կրօնն ու Հայ Դատ դասանիւթերը յատուկ բծախնդրութեամբ եւ որպէս լիարժէք դասապահեր (շաբաթական 5-8 պահ՝ ըստ կարգի), օրինաւոր կերպով կը դասաւանդուին ՔԱՎէն ներս[5]: Այս դասանիւթերը նախակրթարանի մէջ վճռորոշ դեր ունին աշակերտին ընդհանուր միջինին վրայ: Երկրորդականի պարագային սակայն, հայերէնի գնահատականը չունի վճռորոշ դերակատարութիւն:

[4] Այդ դասարանին համար մեր տրամադրութեան տակ չունէինք, յատուկ ուսումնական ծրագիր: Այսօր, սակայն, այդ ծրագիրը արդէն ձեւաւորուած է եւ փորձառական հանգրուանի մէջ է:

[5] Նախակրթարանի եւ Միջնակարգի մէջ կը դասաւանդուին հայոց լեզու, (գրականութիւն, քերականութիւն), կրօն եւ հայոց պատմութիւն առարկաները: Իսկ Երկրորդականի մէջ կը դասաւանդուին հայ գրականութիւն եւ Հայ Դատ դասանիւթերը:



ՔԱՎԷն ներս կը դասաւանդուին.-

Ա.-Զ. կարգեր՝ Կարօ Առաքելեանի դասագրքերը՝ *Թիթեռնիկ*, *Չորս եղանակ*, *Հայրենի աշխարհ*, *Հայրենի կարկաչ*, *Մայրենի բարբառ*, եւ *Մայրենի կանչ*:

Է.-Թ. կարգեր՝ դոկտ. Յակոբ Չոլաքեանի *Անդաստան* դասագիրքն ու Առաքելեանի *Դիւրին հայերէն* քերականութեան դասագիրքը:

Ժ.-ԺԲ. կարգեր՝ դոկտ. Յակոբ Չոլաքեանի *Անդաստան* դասագիրքը:

Իսկ հայոց պատմութեան դասանիւթը կը դասաւանդուի, օգտագործելով.-

Դ.-Թ. կարգեր՝ Կարօ Մոմճեանի *Մեր պատմութիւնը* դասագիրքերու շարքը:

Ժ.-ԺԲ. Կարգերու՝ Ռուբինա Փիրումեանի *Հայոց պատմութիւն* դասագիրքերու շարքը:

Ուստի, երկրորդականին մէջ, մայրենի լեզուին հանդէպ հետաքրքրութիւնը, աշխատասիրութիւնն ու մրցակցութիւնը քաջալերելու նպատակով, 2022-23 կրթաշրջանին, վարժարանը բարերարի մը աջակցութեամբ հիմնադրեց «Հռիփսիմէ Պէրպէրեան» հայագիտական մրցանակը: Սոյն մրցանակը նիւթական է, ուր նուիրատուին տրամադրած $3500 գումարը արդար ձեւով կը բաժնուի երկրորդականի հայագիտական դասանիւթերուն մէջ 90 եւ աւելի բարձր նիշ ապահոված աշակերտներուն:

ԴՊՐՈՑ-ԾՆՈՂՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վարժարանիս տնօրէնութիւնը միշտ սերտ եւ դրական կապի մէջ եղած է աշակերտութեան ծնողներուն հետ, յանուն աշակերտութեան ուսումնակրթական մակարդակի բարելաւման եւ կարգապահական հարցերու բարւօք լուծման:

Այս շրջագծին մէջ կարեւոր եղած է վարժարանիս ընկերային ծառայողի (Social worker) դերակատարութիւնը՝ ընկերային, հոգեբանական եւ ուսումնակրթական խնդիրներու ախտաճանաչման եւ լուծման մէջ:

Տարեկան 2 անգամ տեղի կ'ունենայ ծնողական ժողով, ուր ծնողները առիթ կ'ունենան ուղղակի շփուելու ուսուցիչներուն հետ, իրենց զաւկին ուսումնական եւ կարգապահական խնդիրները լուծելու համար:

Նշենք, որ ծնողները նաեւ հնարաւորութիւն ունին որեւէ ուսուցիչի հետ կապ հաստատելու, eSchool հարթակի միջոցաւ: Այս յարաբերութիւնը վերահսկուած կ'ըլլայ տնօրէնութեան կողմէ:

ԵՐԵՒԱՆԻ «ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ» ՃԵՄԱՐԱՆԸ ԵՒ ՔԱՎԸ

ՔԱՎը տարածաշրջանի մը մէջ գործող մեկուսացած դպրոց մը չէ: Ան լայնածիր եւ արդիւնաւէտ գործակցութեան ցանց մը ունի թէ՛ հայրենիքի եւ թէ՛ Սփիւռքի կարեւոր կրթական հաստատութիւններու հետ:



Երեւանի Անանիա Շիրակացի ճեմարանին հետ համաձայնագրի ստորագրութենէն պահ մը, 2017

Այսպէս, ՔԱՎը Երեւանի «Անանիա Շիրակացի» ճեմարանին հետ քոյր դպրոց է: Այս գործակցութիւնը սկսած է 2017ին եւ կը շարունակուի մինչեւ այսօր: Գործակցութեան այս ծիրէն ներս տեղի կ'ունենան փորձառութեան փոխանակում, ուսուցչական եւ աշակերտական շրջանակներու շփումներ ու միատեղ ծրագրուած առցանց դասապահեր:

Սոյն գործակցութիւնը հիմնականին մէջ կը միտի, անգլերէն լեզուով արդիական եւ վաւերական ուսումնակրթական ծրագիր մը ունենալ վարժարանէն ներս, նկատի ունենալով արաբերէնի փոխարէն անգլերէնով դասաւանդման դրական կողմերը, որը պիտի երաշխաւորէ մեր աշակերտութեան համալսարանական ուսման հեզասահ ընթացքին: Առաւել եւս վարժարանս պիտի ձերբազատի «Հայկական վարժարան» եւ «Ալ Թատամոն» երկրորդական վարժարան ըլլալու երկուութենէն:

Այս աշխատանքին մասին տեղեկացուած է ՀՀ ԿԳՄՍի նախարարութիւնը, որ իր նախնական հաւանութիւնը տուած է այս ծրագրին: Այս գործընթացը տակաւին երկար է: Ան կարիքը ունի մասնագիտական եւ իրաւաբանական բազմաթիւ հարցերու պարզաբանման, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Քուէյթի մէջ:

ՔԱՎը գործակցութեան մէջ է նաեւ Երեւանի «Աւետիսեան» դպրոցին հետ, ինչպէս նաեւ Պոլսոյ Օրթագիւղի «Ս. Թարգմանչաց» վարժարանին հետ, իրականացնելով առցանց միացեալ դասապահեր:

ՔԱՎը սերտ գործակցութիւն ունի Երեւանի պետական համալսարանին (ԵՊՀ) եւ Հայաստանի ամերիկեան համալսարանին հետ (AUA) հետ, ուր իրենց բարձրագոյն ուսումը կը շարունակեն վարժարանիս բազմաթիւ

շրջանաւարտներ: Վերոյիշեալ համալսարաններու պատասխանատուներ քանիցս այցելած են ՔԱՎ եւ ծանօթացած տարուած աշխատանքներուն:

Վարժարանը նաեւ սերտ գործակցութեան մէջ է Քուէյթի պետական համալսարանին հետ, ուր շնորհիւ ՀՀ դեսպանատան աջակցութեան եւ յարաբերական դրական աշխատանքին, յաջողած ենք 3 հայ աշակերտուհիի ընդունումը ապահովել ամէն տարի: Գործակցութեան եզրեր գոյացած են նաեւ ամերիկեան, աւստրալիական, Gust եւ այլ համալսարաններու հետ:

Վարժարանիս շրջանաւարտները իրենց բարձրագոյն ուսումը կը շարունակեն այլ երկիրներու նշանաւոր համալսարաններէն ներս: Այդ համալսարաններու ցանցին մէջ կարեւոր տեղ ունի Պէյրութի Հայկազեան համալսարանը: Այսօր, ՔԱՎի 4 շրջանաւարտներ իրենց ուսումը կը շարունակեն Հայկազեան համալսարանէն ներս: Ունինք նաեւ ՔԱՎի բազմաթիւ շրջանաւարտներ, որոնք աւարտած են Հայկազեան համալսարանը եւ հանրութեան ու հայ ազգին համար գործունեայ տարրեր են աշխարհով մէկ:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐ

2017էն սկսեալ, վարժարանս ձեռնարկեց դասարաններու եւ սրահներու բարեկարգման լայնածիր աշխատանքի մը, որուն որպէս արդիւնք այսօր ՔԱՎի բոլոր դասարանները օժտուած են արդիական սրահներով, իսկ փոքրիկներուն համար՝ տիկնիկային թատրոնի ու սինեմայի սրահով մը: Այս աշխատանքին իրենց նպաստը բերին քուէյթահայ բարերարներ, ինչպէս նաեւ Քուէյթի «Կարմիր Մահիկ» կազմակերպութիւնը:

E-SCHOOL ՀԱՐԹԱԿ

Արդիականացման գործընթացը չսահմանափակուեցաւ միայն շինարարական բարեկարգումներով, այլ յատուկ ծրագրաւորումով, վարժարանէս ներս սկսաւ կիրարկուիլ eSchool Systemը: Արդի այս հարթակը ունի բազմաթիւ ենթաբաժանումներ, ինչպէս՝ արձանագրութիւն, դասացոյց, դպրոց-ծնող հաղորդակցութիւն, գնահատականներ, վիճակացոյցներ, ուսումնակրթական աշխատանքի հետապնդում եւ վերլուծում, ինչպէս նաեւ վարչական եւ հաշուապահական զանազան ոլորտներ:


Վերջին շրջանին, հնարաւորութիւն ընձեռուեցաւ, որ աշակերտական կարգապահական տնօրինումները եւս այս ծրագրով ուղարկուին ծնողներուն. հարթակին միջոցով, մեր վարժարանի դարմանատունէն ներս կատարուող նախնական դարմանումներու մասին տեղեկանք եւս կը յղուի ծնողներուն:

Այս հարթակի թարմացումներուն եւ յաւելեալ ձեռքբերումներուն համար, ուսուցչական կազմն ու պաշտօնէութիւնը մասնակցեցան հաստատութեան կազմակերպած հեռավար աշխատանոցներուն:



Վարժարանս հետամուտ է eSchool հարթակի բազմազան հնարաւորութիւններ (modules) հերթաբար կիրառելու, կազմակերպելով համապատասխան աշխատանոցներ:

Այս հարթակով է նաեւ, որ ըստ կարիքի տեղի կ'ունենան առցանց դասապահեր եւ միջոցառումներ:



Armenian School of Kuwait
Final report

Name of student :

Ուսկորտուսային Վկայագրոյց

Course Name	Term 1	Term 2	Final Grade	Teacher's Remarks
Armenian Language	A	B	B	
Religion	A	A	A	
Arabic Language	C	B	B	
Math	A	A	A	
Science	A	B	B	
English Language	A	A	A	
Music	A	A	A	
Physical Education	A	A	A	
Arts	A	A	A	

Class Teacher :
Class Teacher Remark :

Grading Scheme		
A		
B		
C		
D		
E		
F		

Class Teacher
Signature :

School Principal
Signature :

EDUCATION DOMAIN

Որպէս Քուէյթի մէջ գործող վաւերական կրթական հաստատութիւն, ՔԱՎը այս շրջանին ունեցաւ նաեւ Education Domainի իր արձանագրութիւնը: Այսպիսով վարժարանս եւ անոր անձնակազմը արդէն կ'օգտուին Google Educationի ընձեռած ուսումնակրթական բոլոր ծառայութիւններէն:

«ԱՐՄԱԹ» ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՈՑ

Տքնաջան աշխատանքով եւ Քուէյթի մօտ ՀՀ դեսպանատան նիւթական կարեւոր ներդրումներով, 31 Յունուար 2023ին, ՔԱՎէն ներս տեղի ունեցաւ «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցին պաշտօնական բացումը: «Արմաթ»ը հայաստանեան UATE հաստատութեան արտադրութիւնն է, որ յառաջատար կը նկատուի STEM Educationի բնագաւառէն ներս:

Armath ծրագիրը ունի երեք հանգրուաններ.- 1) Coding, 2) Robotics, 3) 3D printing and modeling:

Այս ծրագիրը ունի նաեւ օտար աշակերտներու եւ շրջանակներու բացուելու յաւակնութիւնը: Այս դիտանկիւնէն նշենք, որ Քուէյթի մէջ գործող զանազան դպրոցներու եւ համայքներու ներկայացուցիչներ այցելեցին Արմաթի կեդրոն եւ մեծ հետաքրքրութիւն ցուցաբերեցին ու գնահատեցին տարուած իւրայատուկ աշխատանքը:

ՈՒՍՈՒՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Շնորհիւ ներդրուած մեծ ճիգերուն, վերջին երկու կրթաշրջաններուն, ՔԱՎի 12րդ կարգի՝ աւարտական դասարաններու աշակերտները արձանագրեցին հետեւեալ արդիւնքները[6].-

2021-2022 կրթաշրջան

Աշակերտներու թիւ՝ 25
Գերազանց՝ 13 (90%էն բարձր)
Առաջին հանդիսացողի միջին՝ 100%

2022-2023 կրթաշրջան

Աշակերտներու թիւ՝ 23
Գերազանց՝ 13 (90%էն բարձր)
Առաջին հանդիսացողի միջին՝ 99.93%

Վերոյիշեալ փայլուն արդիւնքներով, պետական ծրագրին հետեւող վարժարաններու մակարդակով, ՔԱՎը երկրէն ներս, յառաջատար տեղ գրաւեց, պատիւ բերելով եւ վարժարանիս եւ Քուէյթի հայօճախին:

Ք.Ա.ՎԱՐԺԱՐԱՆԸ՝ ՔՈՒԷՅԹԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԲԱԲԱԽՈՂ ՍԻՐՏԸ

ՔԱՎարժարանը հիմնադրութենէն ի վեր, իր հնարաւորութիւնները անվերապահ կերպով տրամադրած է նաեւ քուէյթահայ միութիւններուն:

Յետ դպրոցական ժամերուն, վարժարանը կը վերածուի մեղուափեթակի մը, ուր գործունէութիւն կը ծաւալեն՝ ՀՄԸՄ-ը, ՀՕՄ-ը եւ Համազգայինը, որոնց վարժարանը նաեւ տրամադրած է սենեակներ, ինչպէս նաեւ օգտակար կը դառնայ, միութիւններուն հանրային ձեռնարկներուն արտօնագրեր ձեռք բերելու, սրահներ ապահովելու, հարկ եղած բոլոր թղթաբանութիւնները իրագործելով:

Ուստի, կարելի չէ պատկերացնել Քուէյթահայ գաղութը առանց ՔԱՎարժարանի գոյութեան, որու դերը առանցքային է ու անփոխարինելի:

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ


Վարժարանը իր ծնունդէն մինչեւ օրս հրապարակած է պարբերականներ եւ տեղեկագրական հրատարակութիւններ, որոնցմէ յիշատակութեան արժանի են՝ *Ծիծեռնակ* աշակերտական եռամսեայ պարբերաթերթը, որուն մէջ լոյս տեսած են աշակերտներու գրական փորձերը, ինչպէս նաեւ *Ովասիս* տեղեկագրական պարբերականը:

ՏՕՆԵՐ ԵՒ ՏԱՂԱՒԱՐՆԵՐ

Վաթսունամեայ պատմութիւն ունեցող վարժարանէն ներս պատշաճ կերպով կը նշուին հայ ազգային եւ կրօնական բոլոր տօները, ուր կը փո-

[6] Երկու տարեշրջաններուն ալ չենք ունեցած ձախող աշակերտներ:

խանգուին օրուան խորհուրդն ու պատգամը: Նման ձեռնարկներ մաս կը կազմեն մեր կրթադաստիարակչական ընդհանուր ուղղութեան:



tate of Kuwait
Ministry of Education
eneral Directorate of Private education education

صورة طبق الأصل

Scholastic Year : 2022/2023
Science Section
First Session

Completion Certificate of Secondary Stage

The Ministry of Education Does Certify The Student Whose Record Is Hereby Described
Has Successfully Completed The Secondary Stage

Name: Sarkis Benyamin Manoueil — *Nationality:* Syrian
Civil ID. : 305071400658 — *Seat No.:* 68304 — *Date of Birth:* 14/07/2005
School : Al Tadamun Private Secondary School — *Place of Birth:* Kuwait

Tenth Grade	Subject	Holy Quran	Islamic Studies	Arabic	English	Math	Chemistry	Physics	Biology	Social Studies	P. E.	I. T.	Grand Total	Percentage	Cumm. Avg.
2020/2021	Max Min	20 10	40 20	60 30	60 30	80 40	60 30	60 30	40 20	40 20	20 10	20 10	500 250	98.00	10% 9.8
	Mark	Exempt	Exempt	59.50	59.50	78.50	60.00	54.00	39.50	40.00	20.00	20.00	490.00		

Eleventh Grade	Subject	Holy Quran	Islamic Studies	Arabic	English	P. E.	I. T.	Math	Physics	Chemistry	Biology	Giology	Elective 1	Elective 2	Grand Total	Percentage	Cumm. Avg.
2021/2022	Max Min	20 10	40 20	80 40	80 40	20 10	20 10	100 50	80 40	80 40	60 30	60 30	20 0	20 0	680 320	90.74	20% 18.15
	Mark	Exempt	Exempt	69.00	77.50	20.00	20.00	90.00	70.50	74.50	50.00	51.00	20.00	20.00	617.00		

Twelfth Grade	Subject	Holy Quran	Islamic Studies	Arabic	English	P. E.	I. T.	Constitution & Human Rights	Math	Chemistry	Physics	Biology	Elective 1	Elective 2	Grand Total	Percentage	Cumm. Avg.
2022/2023	Max Min	20 10	40 20	80 40	80 40	20 10	20 10	20 10	100 50	80 40	80 40	80 40	20 0	20 0	660 310	93.41	70% 65.39
	Mark	Exempt	Exempt	64.00	79.00	20.00	20.00	20.00	91.00	76.50	77.00	73.00	20.00	20.00	616.50		

Electives for Twelfth Grade
Elective 1: Pschological Health
Elective 2: Physical Fitness

Electives for Eleventh Grade
Elective 1: Environmental Education
Elective 2: Dyeing & Printing

Final Cummulative Average : 93.34%

Undersecretary

Print Date : 24/06/2023

This Certificate Is Valid Only If Fees Are Paid and Accredited and Sealed By The Ministry of Education



دولة الكويت
وزارة التربية
الإدارة العامة للتعليم الخاص

العام الدراسي : 2021/2020
القسم العلمي
الدور الأول

شهادة إتمام دراسة المرحلة الثانوية

تشهد وزارة التربية بدولة الكويت أن الطالبه المذكورة بياناتها أدناه قد اجتازت بنجاح المرحلة الثانوية

الاســـم : فانيا مكرديج بربريان — الجنسيـــة : ارمينيا
الرقم المدني : 303062600042 — رقم الجلوس : 67287 — تاريخ الميلاد : 2003/06/26
المـدرســة : النضامن الاهلية الثانوية - المختلط — مكان الميلاد : الكويت

الصف العاشر		القرآن الكريم	التربية الاسلامية	اللغة العربية	اللغة الانجليزية	الرياضيات	الكيمياء	الفيزياء	الأحياء	الاجتماعيات	التربية البدنية	المعلومات	المجموع الكلي	النسبة المئوية	المعدل التراكمي
2019/2018	كود صفوف	10 20	20 40	30 60	30 60	40 80	30 60	30 60	20 40	20 40	10 20	10 20	250 500	95.90	10% 9.59
	الدرجة	ممتاز	ممتاز	57.00	60.00	79.50	55.00	56.00	37.00	37.50	20.00	20.00	479.50		

الصف الحادي عشر		القرآن الكريم	التربية الاسلامية	اللغة العربية	اللغة الإنجليزية	الرياضيات	المعلوماتية	التربية البدنية	التربية الوطنية	الأحياء	الكيمياء	الفيزياء	الجيولوجيا	اختيار حر 1	اختيار حر 2	المجموع الكلي	النسبة المئوية	المعدل التراكمي
2020/2019	كود صفوف	10 20	20 40	40 80	40 80	50 100	10 20	10 20	30 60	30 60	40 80	40 80	0 20	0 20	0 20	320 680	93.60	10% 9.36
	الدرجة	ممتاز	ممتاز	64.50	77.50	89.00	20.00	20.00	59.00	57.50	77.50	75.50	20.00	20.00	20.00	636.50		

الصف الثاني عشر		القرآن الكريم	التربية الاسلامية	اللغة العربية	اللغة الانجليزية	الكيمياء	الرياضيات	المعلوماتية	التربية البدنية	التربية الوطنية	الفيزياء	الأحياء	اختيار حر 1	اختيار حر 2	المجموع الكلي	النسبة المئوية	المعدل التراكمي
2021/2020	كود صفوف	10 20	20 40	40 80	40 80	40 80	50 100	10 20	10 20	40 80	40 80	40 80	0 20	0 20	310 660	96.67	80% 77.34
	الدرجة	ممتاز	ممتاز	74.50	80.00	77.50	99.00	20.00	20.00	69.00	69.00	60.00	30.00	20.00	638.00		

- مواد اختيار حر الصف الحادي عشر: اختيار حر ١ : التربية البيانية ؛ اختيار حر ٢ : لياقة بدنية
- مواد اختيار حر الصف الثاني عشر: اختيار حر ١ : الصحة النفسية ؛ اختيار حر ٢ : تربية موسيقية - بيانو

المعدل التراكمي النهائي
% 96.29

وكيل الوزارة

وزارة التربية
الإدارة العامة للتعليم الخاص

تعتبر هذه الشهادة لاغية ما لم تكن معتمدة ومختومة بختم الوزارة

تاريخ الطباعة : ٢٠٢١/٠٦/٢٦
025057

تاريخ صدار النتيجة : ٢٠٢١/٠٧/٢٩

Սոյն տօներէն կարելի է յիշել՝ Հայոց Ցեղասպանութեան սրբադասուած նահատակներու ոգեկոչում, ՀՀ Ա. Հանրապետութեան եւ վերանկախացման տօները, Ս. Ծննդեան եւ Ս. Յարութեան տօները, Վարդանանքը, Բարեկենդանը, Թարգմանչացը, Մայրենի լեզուի միջազգային տօնը, ինչպէս նաեւ Մայրերու եւ Ուսուցչաց տօները, կանաչապատման օրը եւ այլ յիշարժան տօներ:

Ս. Ծննդեան, Ս. Յարութեան եւ Ապրիլեան Նահատակաց յիշատակի օրերուն, դպրոցը պաշտօնապէս փակ կը պահէ իր դռները:

Ի տարբերութիւն նախորդ տարիներու, այս տարեշրջանին կազմակերպուեցան աննախընթաց մրցաշարքեր, գիտական դասանիւթերու (Science & Math), ինչպէս նաեւ Spelling Beeի հետաքրքրական մրցոյթ մը:

Դպրոցական առօրեայ ճնշուածութիւնը թօթափելու միտումով, տարուան ընթացքին կը կազմակերպուին նաեւ այցելութիւններ դէպի Քուէյթի գիտական եւ մշակութային վայրերը, կը կատարուին նաեւ պարտիզագնացութիւններ:

Տարիներ շարունակ, աւանդութիւն դարձած է նաեւ վարժարանէն ներս կազմակերպել երգի եւ արտասանութեան մրցոյթներ: Վերջին երկու տարիներուն այս մրցոյթները դուրս եկած են իրենց ձեւաչափէն ու վերածուած գեղարուեստական երեկոներու:

Այստեղ աշակերտները, իրենց ուսուցիչներու հսկողութեամբ, կը ներկայացնեն հայկական երաժշտական կտորներ, երգեր եւ արտասանութիւններ, որ մեծ ոգեւորութիւն կը ստեղծէ գաղութէն ներս:

«ՌԱՏԻՕ ԺԱՄԻ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Անցնող երկու տարիներուն, վարժարանիս ամէնէն գործունեայ, կարգապահ եւ կենսունակ բջիջներէն մէկը եղաւ, աշակերտութեան ծոցէն ծնած «ռատիօ ժամ»ի յանձնախումբը: Շնորհիւ մեր մեղուաջան ուսուցչական կազմի անվերապահ աջակցութեան եւ ցուցմունքներուն, սոյն ծրագիրը եղաւ այն ձուլարանը, որ գիտելիքներու փոխանցումէն անդին, դարձաւ ձիրքերու յայտնաբերման հարազատ բնօրրան: Փաստօրէն, այսօր ունինք աշակերտներու խումբ մը, որ իրենց մատուցած գեղեցիկ եւ տպաւորիչ ներկայացումներով, դարձան աւելի համարձակ, ինքնավստահ եւ գիտակից:

Նշեալ աշխատանքը կ'իրագործուի ամէն առտու, 20 վայրկեան տեւողութեամբ, ուր աշակերտներուն կողմէ կը ներկայացուին՝ գրական, գիտական, եւ աշխարհագրական գիտելիքներ, հաճելի եւ օգտաշատ բեմականացումներ ու հարց-պատասխանի մրցոյթներ:

Սոյն յանձնախումբի ներկայացուցած յայտագրերը, դպրոցական առօրեան աշխուժ եւ դրական լիցքաւորումներով մեկնարկելու գեղեցիկ առիթներ կը ստեղծեն:

ԱԽԱՆԴԱԿԱՆ ՔԵՐՄԷՍ

Աւանդութիւն դարձած է, Քուէյթի անկախութեան տօնի նախօրէին, վարժարանէս ներս կազմակերպել ընտանեկան քերմէս: Սոյն նախաձեռնութիւնը հայօճախին ամէնէն հսկայ միջոցառումն է, ուր տնօրէնութիւն, հոգաբարձութիւն, տիկնանց յանձնախումբ, շրջանաւարտից միութիւն եւ աշակերտներ, համախմբուելով վարժարանին հայաբոյր յարկին տակ, միասնական կը ջանան զուարճալի մթնոլորտ ստեղծել:

Հոս կարեւորութեամբ պէտք է նշել, որ քերմէսի աշխատանքներուն առիւծի բաժինը սիրայօժար կը ստանձնէ վարժարանիս ժրաջան տիկնանց յանձնախումբը, ներկաներուն հրամցնելով աւանդական խորոված, պահքի ճաշեր, անուշեղէններ եւ այլ համեղ ուտեստներ:

Վարժարանիս տիկնանց յանձնախումբը նաեւ իր օժանդակութիւնը կը բերէ, դպրոցական տարազներու վաճառքի աշխատանքին եւ պարբերաբար կազմակեպուող ճաշի վաճառքի ծրագրերուն:

ՔԱՎԻ ՇՐՋԱՆԱՒԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆ

2010ին ծնունդ առած է վարժարանիս շրջանաւարտից միութիւնը, որ իր հովանիին տակ կը համախմբէ շրջանաւարտները, եւ վարժարանին նպաստող զանազան միջոցառումներ կը կազմակերպէ: Միութիւնը նաեւ ուսումնակրթական գործին սատարող ուսուցչական աշխատանոցներու կը ձեռնարկէ, տնօրէնութեան հսկողութեամբ:

2023-24 կրթաշրջանին, միութիւնը կազմակերպեց գիրքի ցուցահանդէս-վաճառք, որուն հասոյթով կարելի եղաւ հարստացնել վարժարանիս գրադարանը նոր գիրքերով:

Շրջաւարտից միութեան վարչութիւնը նաեւ պարբերաբար աշխատանոցներ կը կազմակերպէ երկրորդականի աշակերտներուն, ապագայի իրենց ուղին ճշտելու եւ համալսարաններու մասնագիտական ոլորտներուն ծանօթացնելու առումով:

Այս տարուան Փետրուարին կարելի եղաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Քալիֆորնիոյ նահանգի, Լոս Անճելոս շրջանին մէջ, հիմը դնել շրջանաւարտից միութեան Ամերիկայի մասնաճիւղին, որուն անդամները վարժարանիս 60ամեակին առիթով կազմակերպեցին հացկերոյթ մը եւ հասոյթը ամբողջութեամբ տրամադրեցին վարժարանիս սնտուկին:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Եզրափակելով զեկոյցը, կարելի է բարձրաձայնել, որ Սփիւռքի մէջ, հայկական ազգային կրթօճախներու յաջողութիւնը չի չափուիր միայն անոնց երկարակեցութեամբ, կամ աշակերտութեան թիւով, այլեւ մանաւանդ անոնց կենսունակութեամբ, ապագայի նկատմամբ տեսլականով եւ զարգացման ուղղութիւններով:

Այս իմաստով ՔԱՎը, իր իւրայատուկ տեղը եւ նշանակութիւնը ունի Սփիւռքի տարածքին, ազգային վարժարաններու ցանցին մէջ: Տարածաշրջանային իմաստով, ան միակ ազգային ամէնօրեայ վարժարանն է, որ անխափան կը գործէ 60 եւ աւելի տարիներէ իվեր: Աւելին, այս հաստատութիւնը կամք դրսեւորած է, քայլ պահելու համար յառաջատար ուսումնակրթական ուղղութիւններուն հետ, յաղթահարելով իր երթին դիմաց յայտնուած խոչընդոտները, միշտ ունենալով Քուէյթի հայօճախին անվերապահ աջակցութիւնը, սէրն ու հոգատարութիւնը:

THE ARMENIAN SCHOOL OF KUWAIT

(Summary)

Nerses Sarkissian
nerses.sarkissian@aps.edu.kw

The paper, written by the current director of the Armenian school of Kuwait, gives a panoramic picture of the only Armenian everyday school in the Gulf Arab states.

The author focuses particularly on the conditions of the school in the post-liberation stage of Kuwait, in the context of the history of the school. It details the renovations the school has undergone lately, the curriculum and its modernization efforts through innovations like E-School, and the addition of certain technological projects in the school program, the official results of the school in the state exams, student publications, collaboration with other Diaspora schools and Armenian technological programs, the alumni, the parents' committee, etc.

The author notes that as Kuwaiti law forbids any public activities by organizations and societies, all community activities are conducted within the premises of the school. Furthermore, this causes the school to acquire new roles in the community which go beyond its educational mission. This is why the school has become the socio-cultural hub of the Armenian community of Kuwait.



ՔԱՎի աշակերտները, ֆրանսախօս դպրոցներու նկարչական մրցոյթին մասնակցելէ ետք



Դպրոցին մամուլը









Պատկերներ դպրոցական տարեկան քերմէսէն



Աշակերտները հաղորդութիւն կը ստանան եւ ...Գիրքի ցուցահանդէս



Գեղարուեստական երեկոյ



Հայոց Ցեղասպանութեան աշակերտական յուշահանդէս

The Armenian Community in Abu Dhabi and My Professional Experience There (Dec. 1975-Nov. 1990)

SUZY TAVLIAN
suzytavlian@yahoo.com

INTRODUCTION

My name is Suzy (aka Ovsanna) Tavlian nee Konialian. I was born and raised in Beirut. I attended elementary and high school at "Genats, High School of Life" where, along with a strong education in all academic subjects, I was also instilled with Christian education and values that I still cherish. I graduated from AUB nursing school in 1970 and worked at the AUMC (American University Medical Center) for five and a half years.

My paper has two parts:

A) the development of the Armenian community in Abu Dhabi based on our life experience there from December 1975 to November 1990 and

B) my professional experience in Abu Dhabi.

We got married in 1973 and were living in Beirut.[1] I was working at AUMC as an Oncology research nurse and my husband was working in an engineering company as an accountant. We felt well-settled. Little did we know that civil war would soon start.

We were forced to leave for Abu Dhabi because of the civil war.

The company my husband was working for closed its doors in Beirut and transferred its headquarters to Abu Dhabi. We left Beirut in December 1975.

For many months, we did not meet any Armenians in Abu Dhabi, and we socialized mainly with the office staff. Later on, we happened to meet just a few Armenians, some at the local supermarket and some at the British Club. The British Club was the only entertainment venue at that time and most of its members were British expatriates. The British club had a private beach, restaurants, bars and sports complexes. In a few years, many Armenian couples became members, and we accordingly fondly called it the Armenian Club. Every Thursday and Friday, about 12 Armenian families would gather, swim, dine, drink and play sports, such as tennis and badminton. We all had a great time and connected with each other like family, especially since we were all far from our real families.

---

[1] I married Vartkes Tavlian, who was my high school sweetheart, an AUB Business School graduate with an MBA degree and, until recently, served on the Haigazian University Board of Trustees. We have two married daughters who are both attorneys and have given us three beautiful grandchildren.

Eventually, the influx of Armenian families to Abu Dhabi increased. They mainly arrived from Lebanon, Syria and Iraq with a few from Jordan and Palestine. During those years, there was a great boom in construction in Abu Dhabi, which brought many engineers, architects, accountants and other professionals from all over; many came from the AUB (American University of Beirut) and quite a few of those were Armenian. We were told that in 1971 there were ten big construction companies in Abu Dhabi, and five of them were managed by Armenians. We also had an influx of construction workers, mechanics, jewelers, etc. As a result, our community grew.

We organized and hosted memorable house parties with plenty of Armenian food, sang Armenian songs, and danced *shoorch bar*. These parties were not rotational, but it felt like they were. We also had impromptu bands comprised of members from the community, such as three piano players, a guitarist, and a mandolin player from France who hardly spoke Armenian, but played Armenian music.

We were a group from various geographical backgrounds, which did not matter at all. There were some organizational differences and sensitivities, but nothing major. This group did not involve Arab friends.

Back in 1979, the Armenian community in Abu Dhabi consisted of only about 300 people. Two very dedicated women, the late Ashkhen Arzoumanian, a registered AUB nurse from Syria who worked in the central hospital, and Sona Badalian, a homemaker from Beirut, volunteered to teach Armenian classes to our children. They arranged with the local Catholic school to hold classes on its campus for two hours once a week. Not only did Mrs. Arzoumanian and Mrs. Badalian volunteer their time to teach, they also went door to door to pick up the children from their homes and take them to class in 45 degree (Celsius) scorching, hot and humid desert weather. Mrs. Arzoumanian and Mrs. Badalian started these tuition-free classes with about 10 to 12 students. In 1984, both Mrs. Arzoumanian and Mrs. Badalian emigrated to the United States. Then, Mrs. Tamar Der Ohannessian, a pharmacy graduate from AUB, was appointed as the principal of the school.

In a few short years, the number of Armenian students increased. Then, a few other ladies and I also started to teach. The students all came from Abu Dhabi, not far from the school. We had students between the ages of four and thirteen, and grouped them accordingly. In this school they learned reading, writing, songs, poems and Armenian history. Classes were held on Thursday afternoons from two to five PM. We held a *hantes* at the end of the school year, and even had an Armenian musical performed by the students.

By 1990 there were over 70 students enrolled in this Armenian school.

A few months later, some active individuals gathered to plan the commemoration of the Armenian Genocide on April 24 at the Khalidia Palace

Hotel. This event had about 150 attendees. The program included recitation of poetry, musical and vocal performances. My husband, Vartkes, was the speaker who delivered the commemorative address of the Genocide.

In 1980, an Executive Council was formed by Rev. Father Oshagan Choloyan under the auspices of the Catholicosate of Cilicia in Antelias. This Executive Council worked diligently for the development of Armenian community life. Vartkes was a member of this Council, and I accordingly had the opportunity to help organize and plan numerous cultural and social events.

Hayr Oshagan visited from Kuwait two to three times a year for Sunday mass and other Church services, such as weddings and baptisms.

After the Executive Council was established, we started planning cultural events, including annual dinner dances, where about half of the attendees were not Armenian. We invited consuls, executives, local dignitaries and friends of our community, who enjoyed our food, songs and dances. Our rich Armenian heritage was much appreciated by the locals, Arabs and international expatriates, who would always look forward to our annual dinner dance and other events. Some of us attended non-Armenian gatherings. However, none were as enjoyable or entertaining as ours.

The Executive Council invited a group of renowned Armenian artists such as the late Luciné Zakarian,[2] Edward Mirzoyan[3] and others to perform in Abu Dhabi. They also performed in Dubai.

After the tragic Armenian earthquake in 1988, our local community came together to discuss the possibilities of how to help Armenia. The Executive Council collected contributions from not only the Armenian community, but also from our non-Armenian friends in the community as well. I remember that some of our community members who held high positions arranged to have their colleagues donate money and necessities to Armenia. As a small community, we collected a sizable quantity of donations. The Executive Council

---

[2] Lusine Zakaryan, born Svetlana Zakaryan (June 1, 1937 – December 30, 1992), was an Armenian soprano. Zakaryan was born in Akhaltsikhe, Georgian SSR. In 1952, she moved with her family to Yerevan, where she attended a secondary music school. She entered the Yerevan State Musical Conservatory in 1957 and her singing talent soon became apparent. From 1970 to 1983, Zakaryan was a soloist with the symphony orchestra of Armenian TV and Radio. She also sang in the choir of the Armenian Apostolic Church's Holy See at the Etchmiadzin Cathedral, and it is for her renditions of centuries-old Armenian spiritual hymns that she is now most remembered.

[3] Edvard Mirzoyan (May 12, 1921 – October 5, 2012), Armenian composer born in Gori, Georgia. He is considered one member of the group called "Armenia's Mighty Handful", a reference to the 19th century collective known as the "Mighty Handful." He is also considered an integral part to the "Armenian School" of music composition alongside the composers Arno Babajanian and Alexander Arutiunian.

determined that instead of sending these contributions to Armenia, it would be more beneficial to use those funds to manufacture doors and windows in Armenia. This would not only help rebuild Armenia, but also create jobs for its citizens. Therefore, the Executive Council's chairman, Berj Aprahamian[4], and Dubai's committee chairman (I believe his name was Mr. Tashjian) traveled to Italy to purchase manufacturing machinery for this purpose.

We left Abu Dhabi for the U.S. during the Gulf War in November of 1990. I went to Abu Dhabi crying and left Abu Dhabi crying. I can easily say that those 15 years in Abu Dhabi were the best years of our lives, and we will cherish those memories forever.

MY PROFESSIONAL CAREER[5]

A couple of months after we arrived in Abu Dhabi, at a social gathering I was introduced to a Lieutenant Colonel who happened to be the Medical Director of the Military Hospital. When he learned about my profession as a nurse, he immediately asked if I wanted to work in the Military Hospital because they were in desperate need of nurses. Without hesitation, I rejected his request, indicating that I still had a job as an Oncology Research & Chemotherapy Nurse at AUMC and planned to return to Beirut in a few months.

A few months after my encounter with the Colonel, the situation in Beirut worsened to the point where the airport closed and we could not even contact family members. At that time, the Colonel asked me to meet with him since there was no way I could return to Beirut. I reluctantly agreed and asked if I

---

[4] Berj, a Palestinian Armenian engineer, was a key member of our community in Abu Dhabi. He still resides in Abu Dhabi, his home since the 1960s, and has served as a father figure to the Armenian community there. Through the years Mr. Aprahamian established close relationships with the local rulers and sheikhs. He was instrumental in obtaining permits and visas for our guests. He also played a big role in establishing the Armenian embassy in Abu Dhabi. He is a proud Armenian and made our community very proud. The sheikhs asked Mr. Aprahamian to write a book about Abu Dhabi and its development through the years. The book is entitled, *A Tribute with Love*, which was dedicated to the memory of His Highness Sheikh Zayed Bin Sultan Al-Nahyan. In that book, a sheikh wrote this: "Berj participated in the planting of the seed that would grow into a new nation, the UAE." This book has been published, having received the blessing of H.H. Sheikh Khalifa Bin Zayed Al-Nahyan, President of the UAE. Berj, with all his accomplishments, remains a humble and generous person. It was a great pleasure to enjoy a close friendship with Berj and his late wife Suzy.

[5] To be honest, I feel a little awkward talking about myself and my professional accomplishments. However, due to my unique experience, Dr. Dakessian encouraged me to share it with you.

could tour the hospital. It was an old but very clean hospital in the military compound.

I eventually accepted the Colonel's job offer on the condition that if Beirut's situation improved, I would leave. I began working as the Head Nurse of the Surgical Unit. A few months later, the British Matron, the Director of Nurses, promoted me to a supervisory position. In that role, I oversaw seven British Head Nurses.

Around the same time, the Medical Director called me to his office to express his appreciation for my work and said, "*I will write to the General Headquarters and will recommend a promotion for you to officer's rank. As you know, we do not have female officers in the army, and it could be an uphill battle, but I will keep on trying.*"

After a couple of weeks, the Director informed me that after sending several letters recommending me for officer's rank, he finally learned that the Chief of Staff, His Highness Brigidaire Sheikh Sultan Bin Zayed AlNahyan, the President's son, wanted to meet with me. Two soldiers in a military jeep accompanied me to the headquarters. After passing several checkpoints, I entered his office and greeted him in Arabic "As-salamu alaykum, Soumouwou Sheikh Sultan". He replied to me in English, stating his surprise at my ability to speak Arabic. I informed him that I am a Lebanese Armenian, and he said, "But your name is not an Arabic name", so I felt he was not familiar with Armenians. He informed me that the Colonel had repeatedly made requests to promote me to officer's rank, but they do not have female officers in the army. Therefore, he would discuss this matter with his assistants, and would inform the Director of their decision.

Within a month of this meeting, I was awarded the rank of Second Lieutenant. As a result, I became the first ever female officer in the Abu Dhabi army. I was given the same privileges as the male officers. This was no small feat in light of the male-dominant local culture, especially since I was not a local. This is an accomplishment that I was and still am proud of.

Within two years, I was awarded the rank of First Lieutenant. I feel it is important to note that the locals respected and appreciated those who worked hard and sincerely for the betterment of their country.

The following year, construction began on a new modern hospital, called Zayed Military Hospital. I was appointed a member of the commissioning team. The hospital had 600 beds with all specialties and was the best hospital in the area. Upon its completion, I was appointed the Director of Nurses of that hospital. My department consisted of 459 nurses of various categories who were of 17 different nationalities. Most were British and Filipina, and some Middle Eastern nurses. It was a very demanding and challenging job, yet significantly gratifying.

While working there for twelve years, we were blessed with two daughters; one was born in Beirut and the other in the US. As an officer, I had sixty days of vacation and forty-five days of maternity leave. So, I regularly traveled to Beirut and the US to be with my family. However, we had no relatives in Abu Dhabi, so we had to bring nannies from abroad to look after our children. I would diligently make impromptu home visits to check on my children and the way they were taken care of.

After twelve years, I needed a break and wanted to spend more time with my children. With only five months left until my promotion to Captain's rank, I resigned. I resigned and continued to live in Abu Dhabi, since my husband was working there.

After a break of 9 months, the Ministry of Health asked me to work as a Nursing Director in the civilian hospital. I accepted the job since it was a smaller hospital, hence less stressful. Soon after accepting this position, I traveled to the United States with my family on a previously planned vacation. As soon as we arrived in the US, we learned that Iraq had invaded Kuwait and there was the possibility of war spilling over into all Gulf countries. As a result, in late 1990, we decided to leave Abu Dhabi to establish permanent residency in the US.

After settling in Los Angeles, I worked part-time in a hospital for a few years. Then I joined the Los Angeles Department of Water & Power as an Occupational Health Nurse in the Medical Services, where we serviced 15,000 employees. I worked there for twelve years and retired as a supervisor of the nursing staff. Now, I am a grandmother helping my family and grandchildren.

POST-CAREER LIFE

In Los Angeles I joined a newly established American Armenian Nurses Association (AANA) that had twenty-four members. A year later, I was elected Vice President and served in this role for nine years with three different presidents. The members were very energetic and passionate about helping our community in various ways. For example, we a) started school screening programs for Armenian schools since they did not have nurses; b) held health fairs for the Armenian community; c) assigned volunteer nurses to man first aid booths during Armenian public events, such as the *Navarstian* Games, which greets over 1500 visitors and many athletes from all over the country; d) planned and installed first aid booths in several locations during the centennial Armenian Genocide March for Justice in L.A. that had over one hundred thousand participants; e) educated the community by organizing lectures about public health, prevention, nutrition and so on.

Our major contribution was to Armenian nurses in Armenia. AANA played a major role in developing and improving the nursing profession in Armenia.

In 1995, three delegates who were also physicians at Erebuni Hospital in Yerevan visited L.A. and requested our help in improving their nursing school. In September 1995, the AANA President, three AANA members, and myself visited Yerevan. These were difficult times in Armenia. It was totally dark, with no electricity all over the city. We visited Erebuni Hospital and their nursing school, which needed much improvement. This was a big project, and we assessed their physical and academic needs. Upon our return to L.A., we took immediate action by collecting and sending necessities for the school, such as nursing books, educational videos and medical equipment. Also, through our members who taught at UCLA nursing school, AANA established a close relationship between Erebuni Nursing School and the UCLA, resulting in UCLA sending instructors to Armenia to teach and train the nurses there. AANA members also taught nursing classes in Armenia.

In four years, the Erebuni Hospital graduated its first class of 16 nurses. This was a very gratifying experience for AANA. A few years later, we also established an Armenian Nurses Association in Armenia and an Armenian network.

We were and still are members of the Armenian Medical International Congress (AMIC). AMIC holds a nursing symposium in Armenia every two years. Our members present papers and research studies, give lectures about new nursing developments and continue educating nurses in Armenia.

Now, the AANA has sixty-seven active members and at least thirty inactive members. I was deeply honored and humbled to serve my community through the AANA.

ԱՊՈՒ ՏԱՊԻԻ ՀԱՅՕՃԱԽԸ ԵՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆՍ ԱՅՆՏԵՂ (ԴԵԿՏ. 1975-ՆՈՅ. 1990)

(Ամփոփում)

Սիւզի Թաւլեան
suzytavlian@yahoo.co

Յօդուածը անձնական վկայութիւնն է Սիւզի Թաւլեանի մասնագիտական գործունէութեան եւ ընկերային կեանքին՝ Ապու Տապիի մէջ, 1975-90 շրջանին: Ան լուսարձակի տակ կ'առնէ Թաւլեանի մասնագիտական աշխատանքը իբրեւ հիւանդապահուհի՝ Ապու Տապիի զինուորական հիւանդանոցին մէջ, ապա եւ անոր պաշտօնի բարձրացումը մինչեւ զինուորական տեղակալի՝ նոյն հիւանդանոցին մէջ: Սիւզի Թաւլեան առաջին կինն է որուն կը շնորհուի տեղակալի զինուորական աստիճան՝ Ապու Տապիի բանակին մէջ:

Պատումը կը ներկայացնէ նաեւ դրուագներ՝ վերոյիշեալ 15 տարիներու Ապու Տապիի եւ շրջակայքի հայօճախին ընկերային կեանքէն:



A group photo with Lucine Zakarian, Edward Mirzoyan and four other artists the committee invited from Armenia to perform in Abu Dhabi and Dubai



A sample of our joyful parties at home, everyone cooperated and wore some kind of costume



The walkathon in LA with my colleagues and of my workplace, in 2005



A group photo with the Director of Erebuni Hospital Dr. Koushkian and Dr. Alina Koushkian and some other volunteers from AANA



With Dr. Alina Koushkian



Preparing to teach resuscitation class.
Our nurses and some of the students



Hospital inspection round with
colonel Sughair



The military hospital administration and the head of medical departments

Արաբական Միացեալ Էմիրութիւններու Ռատիո Այգ Առցանց-Կայանը

ՇԱՔԷ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ-ԿՐՈՒԿԸՆ
radioayk@gmail.com

ՄՈՒՏՔ

Սփիւռքի ձայնային արհեստագիտութեան նոր հորիզոններուն բացուող մշակութային խաչմերուկներուն վրայ Արաբական Միացեալ Էմիրութիւններուն (ԱՄԷ) մէջ ծնած Ռատիո ԱՅԳը յանձնառութիւնը ունեցաւ կենսագործելու հայ հասարակութեան մէջ: Ան ջանաց հայութեան հետ անմիջական կապ հաստատելով առնչուիլ անոր, մասնակցիլ, սատարել ու նոր թափ հաղորդել հայաշխարհին մէջ կատարուած ու կատարուող աշխատանքներուն, ճիգին:

Այս ուսումնասիրութիւնը գլխաւորապէս կ'ընդգրկէ Ռատիո ԱՅԳի 12ամեայ աշխատանքային համառօտ համապատկերը, իրագործումները, կատարած ծրագիրերու պատմագրումը, աշխատանքային եւ մատուցած ծառայութիւններու ոլորտները:

Նոր մտայղացումով, ձայնային լայնածիր հաղորդումներով եւ ազգային արժէքներու գիտակցութեամբ ընթացք առնելով, Ռատիո ԱՅԳը հայ հասարակութեան կը ներկայանայ հայ մշակոյթի, հայեցի կրթութեան, լրատուութեան եւ զանազան այլ թեմաներու միայն հայալեզու պարունակով[1]: Իսկ, երգն ու երաժշտութիւնը՝ իր ժանրերով եւ այլ լեզուներով:

Ռատիո ԱՅԳը մաս կը կազմէ ԱՄԷի հայօճախին եւ ընդհանրապէս հայութեան մշակութային ու ձայնային ճիգին, իր նիւթերը կը պատկանին ըսփիւռքեան ձայնային մամուլի համընդհանուր ժառանգութեան ու կառոյցին:

Ծոցի արաբական երկիրներուն մէջ անհատական, անկախ, ապաքաղաքական եւ ապակուսակցական, հեռու գովազդային կամ ծանուցումներու ծրագիրերէ, իբրեւ ձայնային մշակոյթին պատկանող ինքնատիպ երեւոյթ, Ռատիո ԱՅԳին միակ յառաջադրանքը եղած է գործել ի սպաս հայ հոգեմտաւոր մշակոյթին, հայ ինքնութեան ծաւալումին ու տարածումին: Հայկական համացանցի ձայնային մետիայի միակ ռատիոյի կայքէջը եղած են Ռատիո ԱՅԳը եւ radioayk.blogը[2]:

---

[1] Ռատիո ԱՅԳ, իր ձայնագրութիւններով մասնակցութիւն բերած է Ապրիլ 2022ին մեկնարկած արեւմտահայերէն խօսքի ճանաչման (Automated Speech Recognition կամ Speech-to-text) եւ խօսքի (synthesis) համադրութիւն կամ համադրականութիւն (Text-to-Speech) շարժիչներուն կառուցման, արեւմտահայերէնի ձայնային շտեմարան-հիմնադարանին ձեւաւորման ծրագրին, զոր կը համակարգէ Վարդան Թաշճեան:

[2] ԱՅԳ առցանց ռատիոկայանի կայքէջը ունի տարբեր սիւնակներ, որոնցմէ մէկն է radioayk.blogը:

Յիրաւի, Ծոցի արաբական երկիրներուն մէջ հարիւրաւոր բազմալեզու առցանց կայաններու կողքին, Ռատիո ԱՅԳը միակն է որպէս առցանց հայկական ռատիօկայան:

Ռատիո ԱՅԳ առցանց կայանի մտայղացումն ու հիմնադրութիւնը եղած է 21 Սեպտեմբեր 2011ին, Շաքէ Մանկասարեանի նախաձեռնութեամբ ու տնօրինութեամբ: Կայանը անընդմէջ կը գործէ մինչեւ օրս: Դառնալով ըսփիւռքահայ ձայնային մշակոյթի ծաւալման ու սատարումին նպաստող դերակատար, ու հեռասփռուելով-ունկնդրուելով աշխարհի չորս ծագերէն, Ռատիո ԱՅԳը միջինարեւելեան կենսական ներկայութիւն մըն է արդէն շրջանի ձայնահաղորդային հեռասփռումի քարտէսին վրայ, շնորհիւ տարբեր երկիրներու իր ունկնդիրներուն:

Մանկասարեան սկիզբէն եւեթ ստանձնած է կայանի տնօրինութիւնը, հաղորդաշարերու պատրաստութիւնը, աշխատանքային ծրագիրերու պատասխանատուութիւնը, հաղորդավարի եւ ձայնային գեղարուեստական հարցերու ղեկավարութիւնը:

Հիմնադրութեան օրէն իվեր, ԱՅԳ առցանց կայանը իր նիւթական հոգածութիւնը կը պարտի հիմնադիրին անգլիացի ամուսինին՝ Mark Groganին, որմէ բացի, երբեւէ չէ ունեցած որեւէ ուրիշ հովանաւոր:

Կայանին հիմնադրութենէն իվեր, աշխատակազմը հիմնականօրէն կը բաղկանայ Մանկասարեան քոյրերէն: Սեդա Մանկասարեան-Պալիոզեան՝ ստանձնած է կայքէջին արհեստագիտական աշխատանքները, նաեւ՝ կայանին դիմատետրին թեքնիք բաժնի պատասխանատուութիւնը: Իսկ Լուսին Մանկասարեան ստանձնած է դիմատետրի անդամներուն գրառումներուն եւ սփռումներուն լեզուական մաքրութեան պատասխանատուութիւնը:

Ռատիո ԱՅԳի ձայնասփռումները կ'ընդգրկեն սփիւռքեան եւ հայրենի լրատուութիւն, քաղաքական, հոգեւոր (Աւետարանի մեկնութիւն, պատարագի հեռասփռումներ), մշակութային հաղորդումներ, հարցազրոյցներ, երաժշտական կատարումներ:

Կայանը իր ծառայութիւնը կը մատուցէ ոչ միայն Ծոցի երկիրներու հայութեան, այլեւ՝ ամբողջ հայաշխարհին: Սփիւռքահայութեան եւ Հայաստանին առնչուած լուրերու եւ տեղեկութիւններու սիւնակի մը կողքին, ան ունի նաեւ ֆէյսպուքեան էջեր՝ Radio Ayk, Ayk Page, Radio Ayk Europe, Radio Ayk Canada and USA, Radio Ayk Syria, Radio Ayk Lebanon, Radio Ayk Armenia and Australia, Radio Ayk Egypt, Gulf, Radio Ayk menu, Radio Ayk bible, Radio Ayk club, Radio Ayk inch gses, Radio Ayk handmade market, Radio Ayk anooshig manoogner, Radio Ayk Miss anooshig ladies եւն.: Ասոնց էջերուն կը տեղադրուին տուեալ տարածաշրջանին առնչուող լրատուութիւն՝ հայերէն, անգլերէն, արաբերէն եւ ֆրանսերէն:

ՌԱՏԻՕ ԱՅԳ ԱՌՅԱՆՑ ԿԱՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Ռատիո ԱՅԳի հիմնադրութեան առաջին իսկ օրէն, անոր տնօրէնութեան աշխատանքային առաքելութիւնը ընդգրկեց ինքնայատուկ անհատական ծրագիրներ եւ գործակցութիւններ, ինչպէս Հայաստանի հանրային ռատիոյին (ՀՀՌ), Փարիզի *Նոր յառաջ* թերթի լրահոսին հետ եւն.[3]:

Կայանին նպատակը չէ եղած լոկ մասնակցութիւն բերել սփիւռքահայ ձայնային մշակոյթին, այլ հայ մշակոյթի, գրականութեան եւ մանաւանդ հայ ստեղծագործ միտքին արժէքները ի լոյս բերել, ձայնասփռել ու հաղորդել ողջ աշխարհին ու ամուր կանգնիլ արեւմտահայ լեզուի պահպանման սատարող պատնէշին վրայ: Այս նպատակով, կայանը իր նպաստը կը բերէ այլազան ծրագրերու, կ'ունենայ զանազան գործունէութիւններ, Սփիւռքի թէ հայրենի հաստատութիւններու հետ գործակցութիւններ...:

Այս բոլորին դրսեւորումներէն են՝ «Արեւմտահայերէն» եւ «Սփիւռքի ձայն» հաղորդաշարերը, զրոյց-քննարկումները, առցանց հանդիպումները, պտոյտ-այցելութիւններու կազմակերպումը, հրատարակութիւնները, համաժողովներու մասնակցութիւնը, YouTube հարթակի վրայ հաղորդաշարերու գեղարուեստական տեսագրութիւններու տեղադրումը, ամէնօրեայ 24/24 հայ երաժշտութեան եւ մշակութային- պատմական լուրերու սփռումները, մանուկներու յայտագիրները (ուղիղ եթերով), *Նոր յառաջ*ի լրահոսը, մրցոյթները, պատարագի հեռարձակումները, հոգեւոր զրոյցները, հեռատեսիլային հաղորդումներու սփռումները, անոնց տեղադրումները դիմատետրին վրայ, հարցազրոյցները, մամուլի հարթակի վրայ հրապարակումները, արուեստն ու մշակոյթը արժեւորող այցելութիւնները, Շարժայի Միօրեայ Ազգային Վարժարանի փոքրիկներուն հետ ուղիղ եթերով կապ հաստատելները:

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԿԵՐ ԻՐԱԳՈՐԾՈՒԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒ

«Արեւմտահայերէն» հաղորդաշար

Ռատիո ԱՅԳ ի՛նք նախաձեռնած է «Արեւմտահայերէն» հաղորդաշարի ծրագիրը, որ սկսաւ սփռուիլ ՀՀՌի եթերով, 21 Յունուար 2017էն ու ցարդ անխափան կը շարունակուի: ՀՀՌի եթերով, արեւելահայերէնի կողքին արեւմտահայերէն հաղորդումներ արեւմտահայերէնով հնչեցնելը իբրեւ մը-

[3] Ռատիո ԱՅԳի հաղորդումները եւ *Նոր յառաջ*ի լրասփիւռը հասանելի են 7 platforms հարթակի վրայ հետեւեալ յղումով՝ https://anchor.fm/radioayk (https://podcasts.apple.com/us/podcast/radio-ayk/id1528057117?uo=4):

Ռատիո ԱՅԳի *Նոր յառաջ*ի եւ արեւմտահայերէն հաղորդաշարը կարելի է լսել podcasts.apple հարթակի վրայ հետեւեալ յղումով՝ https://podcasts.apple.com/us/podcast/radio-ayk/id1528057117, Androidի վրայ՝ https://anchor.fm/dashboard/episodes :

տայղացում եւ նախաձեռնութիւն՝ առաջինն է Սփիւռքի որեւէ հայկական ձայնասփիւռի կայանի համար[4]:

Հաղորդաշարին հիմնական նպատակն է պեղել հայ մշակոյթի գանձարանը, գրական, գեղարուեստական ու մշակութային ժառանգութեան թանկագին աւանդը, ծանօթացնել եւ ներկայացնել արեւմտահայ մտաւորականներու, արուեստագէտներու, գրականութեան եւ կրթական մշակներու ըստեղծագործութիւնները:

ՀՀՌի «Արեւմտահայերէն» հաղորդաշար անուան ներքոյ ցարդ կատարուած է 265 հաղորդում, նուիրուած՝ հայ մշակոյթի, արեւմտահայ գրականութեան, պատմական դէմքերու, հայ մտաւորականներու հոգեւոր այրերու եւն. մասին, Յունուար 2017-27 Փետրուար 2023 շրջանին:

Այս հաղորդաշարով, Ռատիօ ԱՅԳը զրոյց-հանդիպումներ վարած է[5] Թագուհի Աթոքեանի[6] (կրթական մշակ), տոքթ. Սարգիս Ատամի (Գերմանիոյ հայոց առաջնորդարանի թեմական խորհուրդի անդամ)[7], Եզնիկ Բա-

---

[4] Հաղորդաշարի մտայղացում, խմբագրական ու ձայնային գեղարուեստական իրականացնում ու հաղորդում՝ Շաքէ Մանկասարեանի: Հաղորդաշարը (21 Յունուար 2017էն մինչեւ 25 Օգոստոս 2019) արխիւացուած է ՀՀՌի soundcloud.com հարթակի վրայ (https://soundcloud.com/armradio/sets/jwqegnakcvqe, Արեւմտահայերէն հաղորդումներ, https://arevmdahayeren.wordpress.com/2018/11/13/000004/ , նաեւ՝ ՀՀՌի արխիւին մէջ https://hy.armradio.am/category/archive/%d5%a1%d6%80%d6%87%d5%b4%d5%bf%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a5%d6%80%d5%a7%d5%b6-%d5%b0%d5%a1%d5%b2%d5%b8%d6%80%d5%a4%d5%b8%d6%82%d5%b4%d5%b6%d5%a5%d6%80/):

[5] Նշուած է նաեւ հեղինակին Ուիքիփետիա էջը, յատուկ պատրաստուած եւ խմբագրուած Շաքէ Մանկասարեանի ջանքերով:

[6] Թագուհի Աթոքեան, https://youtu.be/ntGrVj_FI6s, https://soundcloud.com/armradio/10022019as?in=armradio/sets/jwqegnakcvqe. նաեւ՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D4%B9%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B0%D5%AB_%D4%B1%D5%A9%D5%B8%D6%84%D5%A5%D5%A1%D5%B6

[7] https://www.facebook.com/sarkis.adam . նաեւ՝ տոքթ. Սարգիս Ատամ, «Կաղանդը եւ ժողովրդական հաւատալիքները, 26 Դեկտեմբեր 2016, https://hairenikweekly.com/%D5%AF%D5%A1%D5%B2%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A8-%D5%A5%D6%82-%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D6%82%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AC%D5%AB%D6%84%D5%B6%D5%A5%D6%80/

լիկ Բալայեանի (առակագիր, արձակագիր)[8], փրոֆ. Գէորգ Բաղդիշեանի[9], Ազատուհի Սիմոնեան-Գալայճեանի (դասախօս, հրապարակագիր, հասարակական գործիչ[10]), Արմենակ Եղիայեանի (լեզուաբան), Արմէն Էլչիեանի (IT մասնագէտ, գրող, երաժիշտ)[11], Սագօ Խալոյեանի[12], Յովհաննէս (բեմադրիչ, դերասան) եւ Թորոս Հելվաճեաններու (դերասան)[13], դոկտոր Հրայր Ճեպէճեանի (հրապարակագիր)[14], Յակոբ Միքայէլեանի (գրող, արուեստի գործիչ)[15], Մաքրուհի Պ. Յակոբեանի (պոլսահայ մտաւորական, գրագիտուհի, *Մարմարա* օրաթերթի նախկին փոխխմբագրապետուհի եւ *Ս. Փրկիչ* պարբերաթերթի խմբագրապետուհի), Լեւոն Շառոյեանի (գրող, հրապարակագիր, կրթական մշակ), Ահարոն Շխրտըմեանի (Երեբունի լրատուական կայքի խմբագիր)[16], Նշան Պասմաճեանի (Աւստրալիոյ եւ Նոր

---

[8] Եզնիկ Բալիկ (Բալայեան)՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D4%B5%D5%A6%D5%B6%D5%AB%D5%AF_%D4%B2%D5%A1%D5%AC%D5%AB%D5%AF_(%D4%B2%D5%A1%D5%AC%D5%A1%D5%B5%D5%A5%D5%A1%D5%B6)

[9] Գէորգ Բաղդիշեան՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%A7%D5%B8%D6%80%D5%A3_%D4%B2%D5%A1%D5%B2%D5%A4%D5%AB%D5%B7%D5%A5%D5%A1%D5%B6

[10] Ազատուհի Սիմոնեան-Գալայճեան՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%A6%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B0%D5%AB_%D5%8D%D5%AB%D5%B4%D5%B8%D5%B6%D5%A5%D5%A1%D5%B6_%D4%B3%D5%A1%D5%AC%D5%A1%D5%B5%D5%B3%D5%A5%D5%A1%D5%B6 :

[11] Արմէն Էլչիեան՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%B4%D5%A7%D5%B6_%D4%B7%D5%AC%D5%B9%D5%AB%D5%A5%D5%A1%D5%B6 :

[12] «Առցանց ... անսանձ» Սագօ Խալոյեան, https://youtu.be/vC082ntrXvw :

[13] Յովհաննէս Հելվաճեան՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D5%85%D5%B8%D5%BE%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A7%D5%BD_%D5%80%D5%A5%D5%AC%D5%BE%D5%A1%D5%B3%D5%A5%D5%A1%D5%B6 . Նաեւ՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D4%B9%D5%B8%D6%80%D5%B8%D5%BD_%D5%80%D5%A5%D5%AC%D5%BE%D5%A1%D5%B3%D5%A5%D5%A1%D5%B6 :

[14] Հրայր Ճեպէճեան՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D5%80%D6%80%D5%A1%D5%B5%D6%80_%D5%83%D5%A7%D5%BA%D5%A7%D5%B3%D5%A5%D5%A1%D5%B6 :

[15] Յակոբ Միքայէլեան, արուեստագէտ, արձակագիր, ուսուցիչ, մանկավարժ՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D5%85%D5%A1%D5%AF%D5%B8%D5%A2_%D5%84%D5%AB%D6%84%D5%A1%D5%B5%D5%A7%D5%AC%D5%A5%D5%A1%D5%B6 :

[16] Յակոբ Եափուճեանի Յիշատակին՝ https://youtu.be/2e4UJDKuqw8 :

Զելանտայի առաջնորդարանի լրատու *Փարոս*ի խմբագիր)[17], Գէորգ Պետիկեանի (կրթական մշակ, հրապարակագիր)[18], Նազարէթ Պէրպէրեանի (հրապարակագիր), Զարմինէ Պօղոսեանի (կրթական մշակ)[19], փրոֆ. Արա Սայէղի (ճարտարագէտ, հրապարակագիր)[20], Պէպօ Սիմոնեանի (մտաւորական, բանաստեղծ, արձակագիր, հրապարակագիր), տէր Վիգէն Ա. քհնյ. Վասիլեանի (Հոլիվուտի Ս. Կարապետ մայր եկեղեցւոյ հովիւ) եւ այլոց հետ[21]:

Նոյն ծիրին մէջ, կայանը ներկայացուցած է հաղորդումներ, նուիրուած՝ Արշակ Չօպանեանի ծննդեան 150ամեակին[22], Հալէպի Տաուտիէի արուարձանի համառօտ պատմութեան[23], Վանի փողոցներուն մէջ հայկական հետքերու եւ անցեալի ապրումներու ոգեկոչումին[24], «Նարնիայի քրոնիկները» վիպաշարին, Ռուբէն Հերեանի (Հայոց Ցեղասպանութենէն ետք Սուրիոյ մէջ հայ կիներ ու մանուկներ փրկած) գործունէութեան[25], Հայաստանի Ա.

---

[17] Սաթենիկ Ծաղիկեան-Գամպուրեանի «Անմոռաց տարիներ – յետադարձ հայեացք դէպի արմատներ»՝ https://youtu.be/rbI2Ch1yP0s https://spotifyanchor-web.app.link/e/5oxeFCraGvb :

[18] Գէորգ Պետիկեան՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%A7%D5%B8%D6%80%D5%A3_%D5%8A%D5%A5%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A5%D5%A1%D5%B6 :

[19] Զարմինէ Պօղոսեան՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D4%B6%D5%A1%D6%80%D5%B4%D5%AB%D5%B6%D5%A7_%D5%8A%D6%85%D5%B2%D5%B8%D5%BD%D5%A5%D5%A1%D5%B6 :

[20] Փրոֆ. Արա Սայեղ՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%A1_%D5%8D%D5%A1%D5%B5%D5%A5%D5%B2 :

[21] Ասոնցմէ ոմանց հետ հաղորդում կատարուած է աւելի քան մէկ անգամ:

[22] Արշակ Չօպանեան՝ https://youtu.be/RwcfYyA9TvI :

[23] Տաուտիէ Արուարձանի համառօտ պատմութիւնը, Հալէպ՝ https://youtu.be/056DcI03V8w :

[24] Մաքրուհի Պ. Յակոբեան, «Վանի փողոցներուն մէջ»՝ https://youtu.be/S0S9b8JGW8s :

[25] «Ռուբէն Հերեանի պատմութիւնը»՝ https://soundcloud.com/armradio/12052019aq?in=armradio/sets/jwqegnakcvqe եւ https://soundcloud.com/armradio/19052019a?in=armradio/sets/jwqegnakcvqe , «Հայոց Ցեղասպանութենէն ետք Սուրիոյ մէջ հայ կիներն ու մանուկները փրկած Ռուբէն Հերեանի պատմութիւնը»՝ Աննա Ալեքսանեան, «Արմինիըն ուիքլի», Թարգմանեց՝ Վահրամ Էմմիեան՝ https://horizonweekly.ca/fr/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D6%81%D5%A5%D5%B2%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%A5%D5%B6%D5%A7%D5%B6-%D5%A5%D5%BF%D6%84-%D5%BD%D5%B8%D6%82%D6%80%D5%AB%D5%B8%D5%B5-%D5%B4%D5%A7/ :

Հանրապետութեան 100 եւ 101 ամեակներուն[26], ՀՀ անկախութեան 25-ամեակի[27] եւն.:

«Սփիւռքի ձայնը» հաղորդաշար

ՀՀՌի եթերով, «Սփիւռքի ձայնը» հաղորդաշարի հեռասփռումը (նախապէս «Կամուրջ» հաղորդում), 5 Սեպտեմբեր 2015էն մինչեւ օրս, մատուցած է Սփիւռքի տարբեր հայօճախներու մասին լուրերու 315 ձայնագրական հաղորդագրութիւն: Այս հաղորդաշարին իր մասնակցութիւնը կը բերէ ԱՅԳ կայանը 5 Սեպտեմբեր 2015էն մինչեւ օրս:

Եթէ «Արեւմտահայերէն» հաղորդաշարը հայ մշակոյթի, արեւմտահայ գրականութեան, պատմական դէմքերու կամ վայրերու, հոգեւոր այրերու կամ իրադարձութիւններու մասին է, ապա «Սփիւռքի ձայնը» Ծոցի, Միջին Արեւելքի ու Եւրոպայի մէջ հայկական իրադարձութիւններու լրատուութեան սփռումն է:

Զրոյց-քննարկումներ

Զրոյց-քննարկումները առցանց վարած է Շաքէ Մանկասարեան հետեւեալ մտաւորականներուն հետ.- Ժան Անսըրլեան (արուեստագէտ, Միլանօ), Կարօ Ասատուրեան[28], փրոֆ. Գէորգ Բաղդիշեան, Գագիկ Գասպարեան (երաժիշտ-տուտուկահար, Արժանթին)[29], Սալբի Գասպարեան[30], Արմենակ Եղիայեան[31], Թադէոս Եսայեան[32], Յովհաննէս Հելվաճեան, դոկտ. Հրայր Ճեպէճեան[33], բժիշկ Արմէն Մազլումեան (Եգիպտոսի Հայ Դատի

---

[26] Հայաստանի Ա. Հանրապետութեան 101-ամեակ՝ https://youtu.be/x5jRm8McWJ0 :

[27] Անկախութիւն 25 - Սփիւռքի հայ համայնքներուն ոգեկոչումը անցնող ամեակներուն՝ https://youtu.be/tZPzkBtjBXI :

[28] «Զրոյց՝ Կարօ Ասատուրեանի հետ»՝ https://youtu.be/-hIzWaPSsCg https://youtu.be/62FEp9wsEXo :

[29] «Զրոյց՝ արժանթինաբնակ երաժիշտ (տուտուկահար) ծիրանափողահար Գագիկ Գասպարեանի հետ»՝ https://youtu.be/zlyc0V4ziww Օգոստոս 2018 :

[30] Սալբի Գասպարեան, «Քեմալ Եալչընի «Վերապրողները» հատորը»՝ https://www.facebook.com/radioayk/videos/322071225093101 նաեւ՝ https://youtu.be/qCdZPXkeggU :

[31] Արեւմտահայերէն. «Եկէք ճիշդ գրենք» - Լեզուաբան Արմենակ Եղիայեան՝ https://www.youtube.com/playlist?list=PLQBLFbBCQy4KuTrrx4tAIjXNubBLIfNMf :

[32] Սրբոց Թարգմանչաց Տօն՝ https://youtu.be/RLoOyS9oqGM

[33] Dr. Hrayr Jebejian - UAE an example of tolerance՝ https://youtu.be/8bp4sb-xMlo . նաեւ՝ Can 'Abraham' Bring Peace to the Middle East?՝ https://www.christianitytoday.com/news/2020/august/israel-peace-plan-united-arab-emirates-uae-abraham-accord.html . նաեւ՝ https://youtu.be/SFS9gtWulj0 . նաեւ՝ https://youtu.be/SFS9gtWulj0 . նաեւ՝ https://youtu.be/SFS9gtWulj0 . նաեւ՝ «Զրոյց դոկտ. Հ. Ճեպէճեան - Գահիրէ, Եգիպտոս 2020»՝ https://youtu.be/RJbUGjnVULY : Ռատիօ ԱՅԳի այս զրոյցները կարելի է լսել հետեւեալ յղումին վրայ՝ «Ռատիօ

գրասենեակի պատասխանատու)[34], տոքթոր Նորայր Մանճեան (Լաթաքիա), Յակոբ Միքայէլեան[35], ատամնաբուժ Նելսոն Շխրտըմեան[36], Ժիրայր Չոլաքեան (խմբագիր)[37], Գէորգ Պետիկեան[38], տոքթ. Ներսէս Սարգիսեան եւ Կարօ Արսլանեան[39] (համապատասխանաբար Քուէյթի ազգային վարժարանի տնօրէն եւ փոխտնօրէն)[40], ատամնաբուժ Յակոբ Օգճեան[41], երգչուհի Սիլվա Քեչէճեան[42], պարուսոյց Ժիրայր Քեչէճեան[43], երգիչներ Մինաս Փալանճեան[44], Գառնիկ Սարգիսեան, Ճորճ Սարգիսեան[45], Վաչէ Սարգիս-

---

ԱՅԳի նախաձեռնած զրոյցները դոկտ. Հ. Ճեպէճեանի հետ»՝ https://www.youtube.com/playlist?list=PLQBLFbBCQy4LEtJYys84ZSGAFEIMZDfCd :

[34] Արեւմտահայերէն - Եգիպտոս «Յուսաբեր» ակումբ «Աշուղական երեկոյ»՝ https://youtu.be/TYe7C0BoS4s :

[35] Յակոբ Միքայէլեան՝ https://youtu.be/a9eumYxYjSI :

[36] Dr. Nelson Sarkis Shekherdemianի հետ, «Սփիւռքի ձայն», Մայիս 11, 2018՝ https://youtu.be/banlkS7fm_I :

[37] Ապրիլ 24 - Ցեղասպանութեան 106րդ տարելից՝ https://youtu.be/NUcKei_1W_8 :

[38] Զրոյց՝ գրող Գէորգ Պետիկեանի հետ, «Հայ լեզու – հայ դպրոց - հայ ուսուցիչ՝ աննման երրորդութիւն»՝ https://youtu.be/sHZPnHIklu8 :

[39] Կարօ Արսլանեանի «Եթէ» հատորը՝ https://youtu.be/XP5RYf8PgSE . նաեւ՝ «Սփիւռքի ձայնը» հաղորդաշարի հիւրն է Քուէյթի Ազգային Վարժարանին փոխտնօրէն՝ Կարօ Արսլանեան: Զրոյցի ընթացքին պարոն Արսլանեան կը ներկայացնէ իր ստեղծագործական երկերու առաջին հատորը՝ «Եթէ»ն, որ լոյս տեսած էր Երեւանի մէջ Սեպտեմբեր 2019ին՝ https://youtu.be/XP5RYf8PgSE :

[40] Քուէյթի Ազգային Վարժարանի տնօրէն տոքթ. Ներսէս Սարգիսեանի եւ փոխտնօրէն Կարօ Արսլանեանի հետ՝ https://www.youtube.com/playlist?list=PLQBLFbBCQy4JPvKTAmrSkR_WiMggXK0d3 :

[41] Զրոյց՝ բժիշկ ատամնաբուժ Յակոբ Օգճեանի հետ՝ https://youtu.be/hPiN-KEauoY :

[42] Զրոյց՝ երգչուհի Սիլվա Քեչէճեանի հետ՝ https://youtu.be/dVhI9ico9Rw https://www.facebook.com/100002962864136/videos/2532147136894024 . նաեւ՝ Սիլվա Քեչէճեան՝ https://hyw.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%AB%D5%AC%D5%BE%D5%A1_%D5%94%D5%A7%D5%B9%D5%A7%D5%B3%D5%A5%D5%A1%D5%B6 :

[43] Զրոյց՝ Պարուսոյց Ժիրայր Քեչէճեան հետ՝ https://youtu.be/yK590fZemVs . նաեւ՝ https://www.yerepouni-news.com/%d5%bc%d5%a1%d5%bf%d5%ab%d6%85-%d5%a1%d5%b5%d5%a3%d5%ab-%d5%b0%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%a6%d6%80%d5%b8%d5%b5%d6%81%d5%a8-%d5%b0%d5%a1%d5%b6%d6%80%d5%a1%d5%ae%d5%a1%d5%b6%d6%85%d5%a9-%d5%a1%d6%80/ , 25 Մարտ 2020. նաեւ՝ Ժիրայր Քէչէճեան, https://hyw.wikipedia.org/wiki/%D4%BA%D5%AB%D6%80%D5%A1%D5%B5%D6%80_%D5%94%D5%A7%D5%B9%D5%A7%D5%B3%D5%A5%D5%A1%D5%B6 :

[44] Զրոյց երգիչ Մինաս Փալանճեան - մաս 1՝ https://youtu.be/eHohwThyP7c եւ մաս 2՝ https://youtu.be/IIWZ_jv0Ksk :

[45] Զրոյց Երգիչ Ճորճ Սարգիսեանի հետ՝ https://youtu.be/xy0yWe488Ps :

եան[46], երգիչ, երգահան Կարօ Կապուտակեան, տուտակահար Ռաֆֆի Չիլինկիրեան[47] եւն.:

Զրոյց-քննարկումներով արծարծուած են 1930ին Պէյրութի Նոր Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ հիմնադրումը[48], Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի Գահիրէի մէջ կազմակերպած «Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ հայերը» գիտաժողովը[49], Հալէպի կացութիւնը Սուրիոյ պատերազմի տարիներուն, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան մէջ դասաւանդման «Դասաւանդի՛ր, Հայաստան» (Teach for Armenia), Teach for All ծրագիրը՝ միջազգային կրթական կազմակերպութեան հայաստանեան հիմնարկին հետ[50]:

---

[46] https://youtu.be/EpEykLA4E4k : Լիբանահայ հռչակաւոր թմբկահար Սեդրակ Սարգիսեան Վաչէ Սարգիսեանի հօրեղբայրն է:

[47] Ռատիօ ԱՅԳի Հարցազրոյցը Տուտուկահար Ռաֆֆի Չիլինկիրեանին հետ, Մայիս 15 2020՝ https://www.yerepouni-news.com/%d5%bc%d5%a1%d5%bf%d5%ab%d6%85-%d5%a1%d5%b5%d5%a3-%d5%ab-%d5%b0%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%a6%d6%80%d5%b8%d5%b5%d6%81%d5%a8-%d5%bf%d5%b8%d6%82%d5%bf%d5%b8%d6%82%d5%af%d5%a1%d5%b0%d5%a1%d6%80-%d5%bc/ . նաեւ՝ Ռաֆֆի Չիլինկիրեան https://hyw.wikipedia.org/wiki/%D5%8C%D5%A1%D6%86%D6%86%D5%AB_%D5%89%D5%AB%D5%AC%D5%AB%D5%B6%D5%AF%D5%AB%D6%80%D5%A5%D5%A1%D5%B6 :

[48] Պէյրութի Նոր Հաճնոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ հիմնադրումը 1930 թ. Լիբանան՝ https://youtu.be/sNbx92Mtwdk :

[49] Հայկազեան Համալսարան. Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն. «Եգիպտոսի, Սուտանի Եւ Եթովպիոյ հայերը» Գիտաժողովը Գահիրէի մէջ, 12-13 Ապրիլ, 2018՝ https://youtu.be/9r6KCi2MZ4I :

[50] Ընդառաջելով առաջարկին, Ռատիօ ԱՅԳը նախաձեռնած էր հարցազրոյցի մը՝ նշեալ կրթական հիմնարկի աշխատանքներուն ընդհանուր եւ աւելի ճիշտ մանրամասնութիւններուն իրազեկ դառնալու համար: 31 Մարտ 2021ին, առցանց տեղեկատուական հանդիպում-զրոյցը կայացաւ Teach For Armenia աշխատակազմէն Նարինէ Ահարոնեանի եւ Գոռ Նազարեանի ու Ռատիօ ԱՅԳէն Շաքէ Մանկասարեանի եւ Քուէյթի Ազգային Վարժարանի փոխտնօրէն՝ Արսլանեանի ու Քուէյթի Վարժարանի ուսուցչական կազմին հետ եւ քննարկուեցան Teach For Armenia կրթական հաստատութեան միանալու ուղիներն ու պայմանները (Teach for Armenia 25 March 2021 (1).pdf . նաեւ՝ Հայրենիքի մէջ դասաւանդելու բացառիկ առիթը՝ Teach For Armenia. https://www.facebook.com/100002962864136/videos/pcb.3695317510576975/3695316757243717 : Մանրամասնութիւններուն վերահաս ըլլալու համար դիտել «Teach For Armenia» Տեղեկատուական հանդիպումին տեսանիւթը՝ «Դասաւանդէ՛, Հայաստան»ի հետ. նաեւ՝ https://youtu.be/uY8PXDU-30Y, https://www.facebook.com/events/833911600809845 Wednesday, March 31, 2021 at

Յաճախ, այս քննարկումները եղած են ե՛ւ անհատական ե՛ւ խմբային, ուր ընդգրկուած են զանազան հայօճախներէ անձեր, իսկ հաղորդումը կատարուած է Skype կապի միջոցով:

Նախաձեռնութիւններ եւ իրագործումներ

Հայկական խոհանոցին աւանդները վառ պահելու եւ փոխանցելու միտող հաղորդումներէն էր «Ի՞նչ պիտի եփենք, ի՞նչ պիտի ուտենք» (հաղորդաշար)ը, ուր հայկական տոհմիկ եւ ազգագրական ճաշերու բաղադրատոմսերն ու պատրաստման եղանակը մանրամասնութեամբ ներկայացուցած է նախկին հալէպահայ Վիոլէթ Շատոյեան: Ներկայացուած են նաեւ արաբական, ֆրանսական եւ եւրոպական խոհանոցէն ընտրանի ճաշացանկեր:

Շրջապտոյտներ, այցելութիւններ, համաժողովներու մասնակցութիւններ

ԱՅԳ առցանց կայանը նախաձեռնած, կազմակերպած եւ իրագործած է երկու շրջապտոյտ՝ դէպի Հայաստան (2013)[51] եւ Յունաստան (2014)[52]: Ան իրագործած է նաեւ այցելութիւններ.- ՀՀ պաշտպանութեան նախարարութիւն եւ հանդիպում ՀՀ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի հետ, Ծիծեռնակաբերդ յուշահամալիր եւ Եռաբլուր զինուորական պանթէոն, մայր աթոռ Ս. Էջմիածին եւ մասնակցութիւն պատարագին, ՀՀ անկախութեան օրուան նուիրուած ՀՀ նախագահի ընդունելութեան եւ տօնական համերգին, Յունաստանի հայոց առաջնորդ՝ գերշ. Տ. Խորէն արք. - Տողրամաճեանին[53], Յունաստանի *Ազատ Օր*ի խմբագրութեան[54], Թեսաղոնիկէ քաղաքի Հայ Կեդրոնին եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ հայր Ստեփանոս Փաշայեանի եւ թաղական խորհուրդի տնօրէն Վարդգէս Գունտաքճեանի հետ, ամերիկահայ նկարիչ Դանիէլ Վարուժան Հեճինեանի՝ ՀՀ անկախութեան 23րդ տարեդարձին եւ Ցեղասպանութեան 100րդ տարելիցին նուիրուած «Խաղաղութեան արուեստը» ցուցահանդէսին, բը-

---

7 PM Տեղեկատուական հանդիպում «Դասաւանդէ՛, Հայաստան»ի հետ Online event):

[51] Պտոյտներու կողքին, նախաձեռնած է եւ նախօրօք ծրագրած ճաշացուցակի ուղեցոյց մը ամէնօրեայ յատուկ հայկական ճաշերու կազմակերպութեան եւ պատրաստութեան համար (https://www.facebook.com/photo/?fbid=390299494412143&set=g.408445702582558):

[52] https://www.facebook.com/photo?fbid=532229153552509&set=gm.237784399759210 https://www.facebook.com/groups/201560423381608/ :

[53] https://youtu.be/x_aWX1z5e_o :

[54] Radio AYK Visit Azad Or Editorial Office August 2014 Athens (4).pdf

ժիշկ Մկրտիչ Տարաքճեանի (հալէպահայ/քանատահայ քանդակագործ) Խաչատուր Աբովեանի դիմաքանդակի[55] եւ Պարոյր Սեւակի կիսանդրիի բացումներուն[56], «Կարին» աւանդական երգի-պարի համոյթին[57], սփիւռքահայ Գէորգ Գասապեանի Գիւմրիի մէջ կայացած ցուցահանդէսին[58], Գօշ գիւղի Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան համայնքի կեդրոնի պաշտօնական բացումին[59], «Իմ Հայաստան» համահայկական 3րդ փառատօնին, «Անկախութեան սերունդ» տօնական համերգին, Շուշիի Վարանդա մանկապատանեկան եւ երիտասարդական պետական երգչախումբի հիմնադրման 25ամեակի համերգին, Արաքս Մանսուրեանի ստեղծագործական գործունէութեան 50ամեայ յոբելեանին, «Ծագումով հայեր» հաղորդաշարի 10ամեակին, Նայիրի համահայկական երաժշտական փառատօնին, Հայաստան-Սփիւռք համահայկական 6րդ համաժողովին, ՀՀ անկախութեան 26րդ տարեդարձին եւն.[60]:

Կայանը մասնակցած է Հայկազեան Համալսարանի կազմակերպած «Հայերը ծոցի արաբական երկիրներուն մէջ» գիտաժողովին[61], ՀՀ Սփիւռքի նախարարութեան կազմակերպած լրագրողներու համահայկական 7րդ համաժողովին, լրագրողներու համահայկական 8րդ համաժողովին

---

[55] https://www.facebook.com/profile.php?id=100063501822384 . նաեւ՝ https://www.facebook.com/photo/?fbid=452116246915099&set=pcb.452118650248192 . նաեւ՝ https://youtu.be/75wvK7-A2es :

[56] https://youtu.be/C64gb0IKHXQ :

[57] Հաւատալով հաւաքական աշխատանքին, կայանը ճիգ չի խնայեր հայ մարդիկ զիրար ծանօթացնելու, զանոնք մշակութային ձեռնարկներու շուրջ համախմբելու: Ասոր մէկ դրսեւորումն էր ազգային պար ճանչնալով՝ հայ ազգի ակունքներն ու նկարագիրը ըմբռնելու ձգտումը (https://youtu.be/28HOhBfldoM Radio AYK participation in "KARIN" FOLK-DANCE GROUP - 07 August 2015 Yerevan . նաեւ՝ https://www.facebook.com/radioayk/videos/865606490187673):

[58] https://www.facebook.com/photo?fbid=10159780862888523&set=t.680538522 :

[59] https://www.facebook.com/photo/?fbid=400975145557681&set=pcb.400979632223899. նաեւ՝ https://www.facebook.com/asbed.pogharian/videos/1216812705828812 :

[60] Chake rcvd Invitation from President Armenia 2017 - 26th Armenia independence_edited.pdf :

[61] Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի «Հայերը արաբական Ծոցի երկիրներուն մէջ» գիտաժողովը աւարտեց իր աշխատանքները՝ https://hairenikweekly.com/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%A6%D5%A5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BD%D6%83%D5%AB%D6%82-3/ :

(Երեւան-Ստեփանակերտ), «Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման խնդիրներ»ու համաժողովին[62] , Հայաստան-Սփիւռք համահայկական 8րդ կրթական խորհրդաժողովին, Կիլիկիոյ կաթողիկոսութեան կազմակերպած հայ մամուլի նուիրուած համահայկական համաժողովին, «Արդի հայ մամուլը ժամանակի զուգահեռականներում» միջազգային գիտաժողովին, սփիւռքեան լրատուամիջոցներու ղեկավարներու հանդիպումին՝ ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեանի, ապա եւ ՀՀ արտաքին գործերու նախարար Էդուարդ Նալբանդեանի, այնուհետեւ՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի հետ, հուսկ՝ ԼՂՀ նախագահ Բակօ Սահակեանի եւ վարչապետ Արա Յարութիւնեանի հետ:

Առանձին յիշատակութեան արժանի է 25 Դեկտեմբեր 2012ին, Հալէպի Արամ Մանուկեան ժողովրդային տան «Նոր Սպիտակ» սրահին մէջ, Ռատիօ ԱՅԳի հիւրընկալումը 50 երեխաներու (որոնց 14ը՝ Սուրիահայ օգնութեան խաչի ազգային պատսպարանէն), ամանորեայ յաւելեալ ժպիտ մը տալու անոնց եւ օգնելու կարիքաւորներուն[63]:

Հարկ է նշել որ առցանց սփռուած այս հաղորդումները գեղարուեստական տեսագրութիւններու վերածելով կը զետեղուին Եութիուպի վրայ՝ ապահովելով ոչ միայն անոնց հայ լսարանին եւ սերունդին հասանելիութիւնը, այլեւ այդ աշխատանքին գեղարուեստական եւ արհեստագիտական գրաւչութիւնը շեշտաւորելու: Ցարդ կատարուած Եութիուպ տեսագրութեանց քանակը կը հասնի 186ի: Կան նաեւ տասնեակ տեսերիզներ, որոնք միայն դիմատետրի էջերուն վրայ հրապարակուած են[64]:

Մրցանակներ

Առ ի գնահատում իր տարած աշխատանքներուն, կայանը արժանացած է մրցանակներու, ինչպէս.- Հայապահպանութեան նշանակալի աւանդի

---

[62] http://213.232.51.219/content/%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A5%D6%80%D5%A1-%D5%B4%D5%B7%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6/3-08-2015-%D5%A2%D5%A1%D5%BC%D5%A5%D6%80%D5%B8%D6%82-%D5%B6%D5%A5%D6%80%D5%A9%D5%A1%D6%83%D5%A1%D5%B6%D6%81%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8%E2%80%A6 :

[63] https://www.radioayk.com/tsernarg . նաեւ՝ «'Ռատիօ Այգ'ի հետեւող երեխաներուն, նուիրուած նախաձեռնութիւն», *Ազդակ*, 21 Փետրուար 2013 (https://archive.aztagdaily.com/archives/108003). նաեւ՝ Ամանորեայ Խրախճանք Ռատիօ ԱՅԳի հետեւող երեխաներուն Դեկտեմբեր 25, 2012, *Գանձասար* Գ:2013, Radio AYK Kantsasar January Գ:2013, Ամանորեան խրախճանք Ռատիօ ԱՅԳԻ հետեւող երեխաներուն Tuesday 25 12 2012.pdf :

[64] https://www.youtube.com/@chakegrogan1796/featured https://www.youtube.com/@chakegrogan1796/playlists :

համար համահայկական ամէնամեայ մրցանակաբաշխութեան (2015), Հայոց Ցեղասպանութեան 100րդ տարելիցին ընդառաջ լաւագոյն հրապարակումի անուանակարգին՝ Ա. Կարգի տիպլոմին (2015), ՀՀ Սփիւռքի նախարարութեան «Մայրենիի դեսպան» մետալին (2016)[65], Համահայկական գրողներու միութեան ամէնամեայ մրցանակի Ա. կարգի տիպլոմին (2022)[66]: Կայանը արժանացած է նաեւ իր ունկնդիրներու եւ դիմատետրի գնահատանքներուն[67]:

Միօրեայ 24/24 հայ երաժշտութեան, լուրերու սփռումներ եւ «անուշիկ մանուկներու յայտագիր» (ուղիղ եթերով)

Հայկական թէ միջազգային ռատիոկայաններու սփռումներուն մէջ կը գերիշխեն երգն ու երաժշտութիւնը. ասոնք ցանկալի տարբերակն են ամէնուրեք, բոլոր ունկնդիրներուն համար: Ունկնդիրներու ճաշակը եւ մշակոյթը բարձր պահելու համար, տարբեր ժանրերու (ազգագրական, տոհմիկ, Կոմիտասեան, ժողովրդային, դասական, ժամանակակից, էսթրատային, տարբեր լեզուներու երաժշտութիւն [ֆրանսերէն, արաբերէն]) երգերու եւ երաժշտութեան սփռումները կը համակարգուին շուրջօրեայ ԱՅԳ ձայնասփռման ծրագրին մէջ: Այս իմաստով, երաժշտական բոլոր ժանրերու սփռումը կը մնայ ԱՅԳ առցանց ռատիոյի հեռարձակման հիմնական յառաջադրանքը եւ անոր կը տրամադրուի հեռասփռումներու մեծագոյն ժամանակը:

Հայրենիք-Սփիւռք կապերու զարգացման առումով ռատիօ ԱՅԳի հաղորդումներու ծրագիրով կը սփռուին «Երկիր մեդիա»-Հ/Ըն[68], ՀՀՌի, ինչպէս նաեւ «Ասպարէզ» հեռատեսիլային Եւթիուպեան հարթակէն քաղուած հաղորդումներ՝ «Հորիզոն», Արմենիա TV (ԱՄՆ), Կիլիկիա TV (Անթիլիաս-Լիբանան) աջակցութեամբ: Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման նպատակով, կայանը հեռասփռած է Երկիր Մեդիայի «Երկրի հարցը» (211

---

[65] Chake Mayreniyee Tesban Medal from Diaspora Ministry (4).pdf , Chake Mayreniyee Tesban Medal Certificate Diaspora Ministry (5).pdf, AYK Certificate Hamahaygagan Kroghnerou Vgayagan 31 12 2022 (3).pdf

[66] https://www.facebook.com/photo/?fbid=5826219170778111&set=pcb.582621958077 8070

[67] https://www.facebook.com/photo/?fbid=552354531539971&set=a.102615753180520 Garbis Eglenceian . նաեւ՝ https://www.facebook.com/photo?fbid=1523529671089114&set=a.102615753180520

[68] Հիմնադրութիւնէն մինչ օրս ամէնօրեայ դրութեամբ (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն) կը սփռուին «Երկիր մեդիա»ի լուրերը:

հաղորդում, 29 Մայիս 2015-1 Մայիս 2020[69]) եւ «Երկիրը երկիր է»[70] (45 հաղորդում, Օգոստոս 2017–Յունուար 2018) հեռատեսիլի տեսաշարերը:

Փարիզի *Նոր յառաջ*ի լրահոսը

Փարիզի *Նոր յառաջ* լրասփիւռը Յունուար 2019էն իվեր, ի սպաս դրած եւ իր սեփական կայքի վրայ տեղադրած է ռատիօ ԱՅԳի հաղորդավարուհիին կողմէ ձայնագրուած *Նոր յառաջ*ի ամէնօրեայ լրահոսը: Այս առումով, այս աշխատանքը արեւմտահայերէնի խթանման ռազմավարական քայլ մըն է: Պէտք է նկատել նաեւ, որ *Նոր յառաջ*ի լրահոսի պատրաստութեան, ձայնագրութիւն-խմբագրութեան, զայն տարածելու, դիմատետրի էջին զետեղելու, նաեւ ռատիօ ԱՅԳի եթերով սփռելու աշխատանքները կը կատարուին կայանին կողմէ, իսկ սփռումը կը կատարուի ներբեռնելով ժամանակակից համացանցային Ռատիօ ԱՅԳ podcast Spotify, anchor.fm առցանց հարթակներու վրայ[71]:

Արեւմտահայերէն Ուիքիփեդիայի խմբագրումներ

Ռատիօ ԱՅԳի «արեւմտահայերէն» հաղորդաշարով ներկայացուած հանրայայտ դէմքեր կ'ունենան իրենց յատուկ էջը Ուիքիփեդիայի արեւմտահայերէն հարթակին վրայ, շնորհիւ կայանին խմբագրական աշխատանքին: Այսպէսով, կը հարստանայ արեւմտահայերէն Ուիքիփեդիա հանրագիտարանին շտեմարանը:

Միւս կողմէ, կայանը, արեւմտահայերէնին սատարելու յառաջադրանքով, կը շարունակէ խմբագրել, վերախմբագրել, մշակել, սրբագրել, բարեփոխել եւ վերաթարմացնել Ուիքիփեդիայի բազմաթիւ էջեր[72]: Ան աւելի քան 636 նորաստեղծ կամ խմբագրուած էջերով ճոխացուցած է արեւմտա-

---

69 https://www.facebook.com/photo/?fbid=984614291647324&set=pcb.984617558313664 :

70 https://www.facebook.com/photo/?fbid=1437517939690288&set=pcb.1437518209690261 :


71 ԱՅԳ PODCAST RADIO AYK հասանելի է 7 եօթը հարթակներու վրայ ինչպէս՝ Apple podcasts, Google Podcasts, Overcast, Pocket Casts, RadioPublic, Spotify, Copy RSS https://anchor.fm/dashboard/episode/e1tvv69. նաեւ՝ https://anchor.fm/radioayk, https://pca.st/z9b0ij6b , https://podcasts.apple.com/us/podcast/radio-ayk/id1528057117?uo=4 :

72 Դեկտեմբեր 2015ին, 1,004, 919 միաւորով գրաւած է առաջին կարգը Ուիքիփեդիայի արեւելահայերէն-արեւմտահայերէն թարգմանութեան-վերածման եւ խմբագրման մրցոյթին (https://hyw.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1%D5%AF%D5%AB%D6%81:%D5%87%D5%A1%D6%84%D5%A7_%D5%84%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A5%D5%A1%D5%B6

հայերէն Ուիքիփետիային հարթակը[73]: Արեւելահայերէնէ արեւմտահայերէն վերածուած ու խմբագրուած էջերէն բացի, կայանը ստեղծած է նոր՝ արեւելահայերէն Ուիքիփետիայի վրայ գոյութիւն չունեցած էջեր: Կայանը կատարած է նաեւ անգլերէնէ եւ արաբերէնէ թարգմանութիւններ՝ «արեւմտահայերէն յօդուածներ» մամուլի հարթակին համար, որոնց յղումի հիմամբ ալ խմբագրուած եւ ստեղծուած են Ուիքիփետիայի նոր էջեր:

Երգարաններ, հրատարակութիւններ

Հայ երգն ու տաղը, երաժշտութիւնը ծանօթացնելու եւ տարածելու, քննարերգական բանաստեղծութիւնները պահպանելու եւ վերապրեցնելու նպատակով ԱՅԳի տնօրէնութեան ջանքերով պատրաստուած եւ մեծաքանակ տպագրուած են գունազարդ երկու երգարան-գրքոյկներ (32 եւ 42 էջանի) ու բաշխուած ԱՅԳի ունկնդիրներուն եւ կայանին կազմակերպած շրջապտոյտներու մասնակիցներուն[74]:





Իսկ Արամ Ա. վեհափառի 2022ը «Սփիւռքի տարի» հռչակումը մղեց որ Ռատիօ ԱՅԳ կապ հաստատեց Սփիւռքի 30 մտաւորականներու հետ, եւ անոնցմէ 19ին գործնական ծրագիրերը հրատարակեց *Գործնական ծրագիր ընկալուածէն դէպի ապագայատեսիլ Սփիւռք - ի՞նչ բարեփոխել եւ ինչ-*

---

73 https://hyw.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1%D5%AF%D5%AB%D6%81:%D5%87%D5%A1%D6%84%D5%A7_%D5%84%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A5%D5%A1%D5%B6

74 RADIO AYK yerkaran 2013.pdf Radio AYK Yerkaran 2014.pdf : Ռատիօ ԱՅԳ կայքէջ ընդգրկուած են նաեւ Շաքէ Մանկասարեանի պատրաստած *Արեւմտահայերէն հեքիաթներ* հատորը (Երեւան, 2021), ուր տեղ գտած են հայ եւ օտար հեքիաթագիրներու 18 հեքիաթներ:

պէ՞ս վերակազմակերպել հատորին մէջ (Երեւան, 2022), խմբագրութեամբ փրոֆ. Սայէղի եւ Շաքէ Մանկասարեանի[75]:

Կատարած է բանաստեղծ, գրող ճարտարագէտ Թադէոս Եսայեանի *Պարզ ու փաքուկ բառերով* (Բանաստեղծութիւններ), (160 էջ, 2021) եւ *Ընտրանի բերքահաւաք* (Բանաստեղծութիւններ), (252 էջ, 2022) հատորներու խմբագրութիւնները եւ ներածականները:

Մրցոյթներ – մանկական եւ կնոջական

Նպատակ ունենալով հայ փոքրիկներուն տաղանդը յայտնաբերել ու քաջալերել, Ռատիո ԱՅԳ կազմակերպած է մրցոյթներ, ինչպէս՝ «Անուշիկ մանուկներ» (2013), «Ռատիո ԱՅԳ լաւագոյն ձայն» (2014)՝ խթանելու հայկական ժողովրդական երգերու պահպանումը: Յիշատակելի է մանաւանդ «Անուշիկ մանուկներ» յայտագիրը, որ Փետրուար 2012-Օգոստոս 2013 շրջանին ամէնօրեայ դրութեամբ, կէս ժամ տեւողութեամբ, ուղիղ կապ հաստատած է Սուրիոյ պատերազմի օրերուն հալէպաբնակ ծնողներու հետ, եւ եթերած հալէպահայ փոքրերու արտասանութիւններն ու երգերը: Նոյն ծիրին մէջ, հեռարձակուած են մանկական երգեր 15 վայրկեան տեւողութեամբ[76]:

---

[75] https://darperag21.net/%d5%b4%d5%a5%d5%b6%d6%84-%d5%bd%d6%83%d5%ab%d6%82%d5%bc%d6%84%d5%ab-%d5%b4%d5%ab%d5%bb%d5%a1%d5%a6%d5%a3%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%b3%d5%a1%d5%b6%d5%a1%d5%b9%d5%a5%d5%ac%d5%ab%d5%b8 . նաեւ՝ https://www.radioayk.com/blog . նաեւ՝ Փրոֆ. Արա Սայէղ, «Սփիւռքը պէտք ունի գիտական հիմնադրամներու». նաեւ՝ «Մենք Սփիւռքի միջազգային ճանաչելիութեան եւ օրինաճանաչութեան հարց մը ունինք» *ՏԱՐԲԵՐԱԿ21,* 19 Հոկտեմբեր 2022:

[76] Ուշագրաւ էր նաեւ Շարժայի Ազգային Օհաննէսեան Միօրեայ Վարժարանին հետ ուղիղ հեռասփռուած յայտագիրը: Արդարեւ, Համազգայինի ԱՄԷի «Մուշեղ Իշխան» մասնաճիւղին կազմակերպած աշակերտական նկարչական մրցոյթին, վարժարանին Գ.-Զ. դասարաններու աշակերտները Ռատիո ԱՅԳի ուղիղ եթերով իրենց գործերը ներկայացուցին (Ռատիո ԱՅԳի ուղիղ եթերով Շարժայի Համազգայինի «Մուշեղ Իշխան» մեկուսի մասնաճիւղ Օհաննէսեան միօրեայ վարժարան Radio AYK Sharjah Ազգ. Օհաննէսեան միօրեայ վարժարանի նկարչական մրցոյթ 12 Ապրիլ 2013.pdf, 12 Ապրիլ 2013, Շարժա, ԱՄԷ):

Իսկ նպատակ ունենալով գնահատել հայ կնոջ վարքն ու բարքը եւ տոհմիկ սովորոյթները, կազմակերպուած են «Ռատիօ ԱՅԳ գեղեցիկ կանանց» մրցոյթներ, 2013ին եւ 2014ին[77]:

Կնոջական հետաքրքրութիւններու առումով, շահեկան է կայանին դիմատետրի MENU էջը, ուր քուէյթաբնակ Լուսիկ Ստեփանեան-Աճեմեան կը ներկայացնէ ճաշերու, ուտեստներու, հրուշակեղէնի եւ քաղցրաւենիքի բաղադրատոմսեր ու պատրաստման եղանակներ պատկերներով[78]: Այս էջին կը մասնակցին նաեւ այլ անդամուհիներ իրենց բաղադրատոմսերով[79]:

Պատարագի եւ հոգեւոր զրոյցներու սփռումներ

Իր հիմնադրութենէն մինչեւ օրս, կայանը պատարագի հեռարձակումներ կը կատարէ ամէն Կիրակի: Ան կը հեռասփռէ նաեւ Արեւագալի ժամերգութեան, ճրագալոյցի, մեծ պահոց եւ աւագ շաբթուան արարողութիւնները համապատասխան օրերուն, նաեւ՝ կիրակնօրեայ հոգեւոր ծրագիր մը[80] (5 Յունուար 2014էն իվեր): Կայանը կատարած է նաեւ հոգեւոր այլ ուղիղ հեռասփռումներ՝ խաւարման գիշերի, ինչպէս նաեւ պատարագներու՝ եկեղեցւոյ անուանակոչութեան, Յարութեան, Ծննդեան եւ այլ առիթներով: Հոգեւոր այս հեռասփռումները կ'ընդգրկեն Էջմիածնի, Անթիլիասի մայրավանքի, Մ. Նահանգներու, Պոլսոյ եւ այլ եկեղեցիներու արարողութիւնները[81]:

---

77 https://www.facebook.com/groups/354599554652632/ https://www.facebook.com/photo/?fbid=556798961095528&set=gm.557723527673566 . նաեւ՝ https://www.facebook.com/photo/?fbid=538026959639395&set=gm.538450562934196 . նաեւ՝ https://www.facebook.com/photo/?fbid=453483864760372&set=gm.451451321634121 https://www.facebook.com/photo?fbid=453483554760403&set=gm.451450994967487 . նաեւ՝ https://www.facebook.com/photo?fbid=413012438807515&set=gm.411012139011373&idorvanity=354599554652632 .նաեւ՝ https://www.facebook.com/photo?fbid=570782836363807&set=a.102615753180520 :

78 https://www.facebook.com/photo/?fbid=9890889111281 98&set=pcb.972401026187020 :

79 https://www.facebook.com/groups/408445702582558 :

80 Մաշտոց Չօպանեան, Աւետարանի սերտողութիւն, https://www.facebook.com/radioayk/photos/a.263532813728380/574475485967443/ :

81 https://www.facebook.com/search/top/?q=AYK%20FRANSA :

Զարգացնելով իր հեռասփռումներու յայտագիրը, իր հիմնադրութենէն կարճ ժամանակ ետք, կայանը սկսաւ հոգեւոր հաղորդումներ սփռել ամէն Երկուշաբթի, Երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը, իսկ արժ. տէր Արմէն քհնյ. Մելգոնեան (Գերմանիա)՝ Աւետարանի մեկնաբանութիւններ կատարեց Skype կապի միջոցով[82]: Կատարուած են նաեւ հոգեւոր մեկնաբանութիւններու այլ հեռասփռումներ, ինչպէս՝ հայր Եղիա Խաչատուրեանի (Փարիզ)՝ «Հոգեւոր պտղաբերութիւն», «Ի՞նչ գիտենք խաղողօրհնէքի եւ միւս բարեպաշտական սովորութիւններուն մասին», «Արդեօ՞ք կը հետեւինք տասը պատուիրաններուն այս արդիական կեանքին մէջ», «Հոգեւոր պատերազմը», «Սուրբ Խաչի խորհուրդը (Skype կապի միջոցաւ) եւ այլ նիւթերով: Հայր Խաչատուրեան ամէն Ուրբաթ՝ 21 Փետրուար-24 Ապրիլ 2014 շրջանին, ուղիղ եթերով, «Շողարձակ» վերնագրեալ ծրագրով, պատասխանած է ունկնդիրներուն հարցումներուն: Հայր Խաչատուրեան, ներկայացուցած է նաեւ «Եկեղեցական տօնացոյց» ծրագիրը ամէն Երեքշաբթի (18 Փետրուար-11 Մարտ 2014 շրջանին, Skype կապի միջոցով): Իսկ կիսասարկաւագ Արմէն Հարէեանի[83] ԱՅԳ առցանց կայանի յատուկ հոգեւոր ձայնագրութիւնները[84] (15 վայրկեան տեւողութեամբ) սփռուած են ամէն Երեքշաբթի՝ 24 Յունուարէն 4 Հոկտեմբեր 2017[85]: Հեռասփռուած են նաեւ Ամերիկայի արեւմտեան թեմի քրիստոնէական դաստիարակութեան բաժնի պատասխանատու Մաշտոց Չօպանեանի «Աստուծոյ կանչը» խորագրով 38 հաղորդումները՝ (3 Յունուար-4 Յուլիս 2012)[86]: Աւելի ետք (15 Մարտ 2018–20 Յունիս 2019), հաղորդաշարը շարունակուած է «Աւետարանի սերտողութիւն» խորագրով[87]: Չօպանեանի «Հարցումներու խաչմերուկ» հաղորդաշարը հեռասփռուած է 24 Փետրուար 2018-28 Դեկտեմբեր 2019 շրջանին[88]: Նոյնի «Աստուածաշունչը եւ մենք» հաղորդաշարը՝ 2013-2015

---

[82] https://www.facebook.com/notes/390723015436629 :

[83] Արմէն Հարէեան, թուային ստեղծող (digital creator), հրատարակիչ/խմբագիր TorqueNewsի մէջ, աստուածաբանութիւն ուսանած է Lenoir-Rhyne University Համալսարանին մէջ եւ՝ Կեդրոնական Աւետարանչական Աստուածաբանական Ճեմարանին մէջ:

[84] https://youtu.be/3dKYUAWiWow :

[85] https://youtu.be/BYkkxZ_I2I8 . նաեւ՝ https://youtu.be/wTNLUjSwzqY . նաեւ՝ https://youtu.be/IOUJoqxWKLI . նաեւ՝ https://youtu.be/ysfnRQ6pyRo . նաեւ՝ RADIO AYK Armen Hareyan program Tuesday 31 Jan 2017.pdf . նաեւ՝ RADIO AYK Armen Hareyan program Tuesday 21 Feb 2017 (2) (1).pdf . նաեւ՝ RADIO AYK Armen Hareyan program Tuesday 4 Oct 2017 (1).pdf . նաեւ՝ RADIO AYK Armen Hareyan program Tuesday 4 Oct 2017 (1).pdf :

[86] https://youtu.be/JDk9cjj1wdo :

[87] https://youtu.be/TyWj4cIP7iQ :

[88] «Հարցումներու խաչմերուկ»ը, տեղադրուած է Radio AYK Bible դիմատետրի էջին՝ Questions at Crossroads https://youtu.be/6CCbP7x83Cc ,

տարիներուն[89], «Աւետարանի սերտողութիւններ» հաղորդաշարը՝ 7 Փետրուար 2014-29 Հոկտեմբեր 2015, «Աստուածաշնչեան դրուագներու պատում» հաղորդաշարը՝ 25 Յունուար-6 Դեկտեմբեր 2018, իսկ «Աւետարանի մեկնաբանութիւններ»ը՝ 18 Օգոստոս 2016-7 Փետրուար 2019[90]: Ուշագրաւ էին նաեւ Վաղինակ Ծ. վրդ. Մելոյեանի «Աստուածաշունչը եւ մենք» մեկնողական սերտողութիւնները, որոնք հեռասփռուեցան մեծ պահոցի շրջանին ռատիօ ԱՅԳի հիմնադրումին եւ կը վերասփռուին ամէն տարի մեծ պահոցի շրջանին[91]:

Դիմատետրի վրայ տեղադրումներ

Կայանին հիմնական երկու էջերը՝ Radio AYK եւ AYK Page[92], ինչպէս նաեւ խմբային էջերը դասաւորուած են ըստ երկիրներու radio ayk Australia and Armenia, radio ayk Europe, radio ayk Syria, radio ayk Lebanon, radio ayk USA, Argentina and Canada, radio ayk Egypt, radio ayk Gulf, radio ayk club, radio ayk inch gses: Տուեալ երկրի կարեւոր իրադարձութիւնները կը տեղադրուին ըստ երկրի վերոյիշեալ բաժանումներուն: Կայանը աշխուժ է նաեւ Facebook եւ Twitter ընկերային ցանցերուն վրայ, ուր կը տեղադրէ հրատապ հարցերու վերաբերող լրատուութիւն:

Նոյնքան հետաքրքրութիւն շահած է կայանին MENUի դիմատետրի էջը, ուր կը հրամցուին այլազան կերակրատեսակներու բաղադրատոմսեր:

Ռատիօ ԱՅԳ առցանց կայանի յայտագրերու պարբերականութիւնը	
Արեւմտահայերէն	Ամէն Կիրակի
Երգ-երաժշտութիւն	Շուրջօրեայ
Լուրեր Երկիր Մետիա	Ամէն օր բացի Շաբաթ-Կիրակիէ
Լուրեր այլ	Ամէն օր երկու տարբեր ժամերու
Հանդիպում-զրոյց	Ամէն Հինգշաբթի
Հոգեւոր յայտագրեր	Ամէն Կիրակի
Նոր յառաջի լրահոս	Ամէն երկու օրը անգամ մը
Սփիւռքի ձայնը	Ամէն Ուրբաթ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ռատիօ ԱՅԳ առցանց կայանը հիմնական յանձնառութիւն ունեցած է մանաւանդ արեւմտահայերէնով գեղարուեստականօրէն ու հետաքրքրա-

---

https://www.facebook.com/photo/?fbid=1456033061172109&set=gm.333754480449844&idorvanity=225905477901412 :

[89] https://youtu.be/L2t-WJ3cg7k 3.1 :

[90] https://www.facebook.com/photo/?fbid=1332604220181661&set=a.102615753180520 :

[91] https://youtu.be/tEdI8_pGIec :

[92] (ԱՅԳի դիմատետրը նախապէս կոչուած էր Ayk Fransa, այժմ Ayk Page):

կան ձեւերով ներկայացնելու, թարմացնելու Սփիւռքի հայ՝ գրական, մշակութային, պատմայուշագրական, արուեստի, հրատարակչական, ստեղծագործական եւ այլ դրսեւորումներ, հայ մշակոյթի գործիչներու, գրագէտներու, եղելութիւններու, դէպքերու թէ այլ դրսեւորումնիերու ընդմէջէն:

Ռատիօ ԱՅԳ առցանց կայանի աշխատանքային ոլորտներու հիմնական նպատակները եղած են ներկայացնել, նոր պարունակով վերամատուցել Սփիւռքի ցիրուցան ազգային, հոգեմտաւոր աւանդութիւններու հսկայ ժառանգը:

Ռատիօ ԱՅԳ ձգտած է ամրագրել, առկայծ պահել, տարածել եւ սատարել հայկական ձայնային հաղորդամիջոցի գրագիտութեան (media literacy) զարգացումը:

Ռատիօ ԱՅԳի ջանքը եղած է հայ մտքի, գեղարուեստի, մշակոյթի շտեմարանը հարստացնել ձայնային հաղորդումներով, ստեղծել ձայնային հաղորդամիջոցի դիւրամատչելի աղբիւր, որ բազմաշերտ հայ հասարակութեան կրնայ հասնիլ ձայնային եւ գեղարուեստական պարունակով ու գրական ընտիր, որակեալ նիւթերու մատակարարումներով:

THE UAE INTERNET RADIO AYK

(Summary)

Chake Mangasarian-Grogan
radioayk@gmail.com

Այլ լրատուութեան մը մէջ՝ «Samvel Gasparyan: Representing Armenian jazz from the UAE. The Armenian musician tells us why choosing to move to the UAE seven years ago was the first step towards the release of his debut solo EP», լուսարձակի տակ առնուած է ճազային երաժիշտ, վերոյիշեալ Սամուէլ Գասպարեանը[63]:

Երաժշտութեան բնագաւառի այլ լրատուութիւն մըն է «The Emirates Opera Project meets and rehearses at the home of Christine Belbelian, one of the nine members in the collective» վերնագրեալը, ուր կը պատմուի քնարական սոփրանօ Պէլպէլեանի մասին, թէ ան ձայնի եւ դաշնամուրի ուսուցչուհի է, տարիներ շարունակ ելոյթ կ'ունենար ԱՄԷի աւելի փոքր համոյթներու մէջ, բայց հիասթափած էր պաշտօնական ու մնայուն խմբային ձեռնարկներու բացակայութենէն[64]:

Երաժշտութեամբ Արցախի ինքնորոշման իրաւունքի պայքարին խաչաձեւուող լրատուութիւն մըն է «Father of Dubai DJ who died fighting in Nagorno-Karabakh tells of pride at son's bravery» վերնագրեալ լրատուութիւնը, ուրկէ կը պարզուի, թէ Կամօ Պալեանի երկու որդիները՝ Կարէն եւ Արամ զոհուած են Արցախի 44օրեայ հակամարտութեան ընթացքին՝ մէկ ամսուայ տարբերութեամբ[65]:

8. Տնտեսութիւն

«920 مليون درهم التبادل التجاري بين الإمارات وأرمينيا خلال 2017»

---

[61] https://bibliosmia.net/book/19-a-tribute-with-love :

[62] https://www.thenationalnews.com/arts/three-of-uae-s-best-in-jazz-come-together-to-form-ars-trio-1.56768 , մատչում՝ 26 Օգոստոս 2015:

[63] https://www.thenationalnews.com/arts-culture/music/samvel-gasparyan-representing-armenian-jazz-from-the-uae-1.843658 , մատչում՝ 4 Ապրիլ 2019:

[64] https://www.thenationalnews.com/arts/emirates-opera-project-prepares-to-launch-its-new-season-1.462044 , մատչում՝ 25 Հոկտեմբեր 2014:

[65] https://www.thenationalnews.com/uae/father-of-dubai-dj-who-died-fighting-in-nagorno-karabakh-tells-of-pride-at-son-s-bravery-1.1144364 , մատչում՝ 12 Յունուար 2021:

(ԱՄԷի եւ Հայաստանի միջեւ առեւտրային փոխանակումը հասած է 920 միլիոն տիրհամի 2017 տարուան ընթացքին) վերնագրեալ յօդուածէն կը պարզուի, թէ ԱՄԷ տնտեսութեան նախարարութիւնը ԱՄԷի եւ Հայաստանի միջեւ առեւտրային քաղաքականութեան վերանայման վերաբերեալ իր զեկոյցին մէջ հաստատած է, որ վերջին երեք տարիներուն, երկու երկիրներուն միջեւ ապրանքաշրջանառութեան ծաւալները կրկնապատկուած են, եւ թէ յառաջիկային առաւել պիտի աճի ատիկա[66]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ուսումնասիրութեան մէջ տեղ գտած ընդհանուր դիտարկումները կարելի է ամփոփել հետեւեալ կէտերուն մէջ.-

Ա- ԱՄԷի նորահաստատ հայօճախը կը ներկայացնէ Միջին Արեւելքի զանազան երկիրներէ արտագաղթած եւ ԱՄԷ հաստատուած հայ անհատներու ամբողջութիւն մը: ԱՄԷի հայօճախի 50ամեակի սեմին, ԱՄԷի համացանցային մետիայի բազմալեզու արձագանգները, ծանօթագրումները, անդրադարձը, տպաւորութիւններ, լուրերու պարունակով հակիրճ հրապարակումներ, խաղաղ համակեցութեան վկայութիւններ, Հայաստանի Հանրապետութեան հետ փոխըմբռնումներ, համագործակցութիւններ եւն., կ'արտայայտեն հայօճախին ներկայութեան մասին: Այդ անհատական թէ հաւաքական լրատուութիւնը, որ տեղ գտած է արաբ թէ օտար համացանցային մամուլի կամ լրատուամիջոցներու վերնագիրերուն եւ սիւնակներուն մէջ, կ'արտացոլէ ԱՄԷի հայօճախին կենսունակութիւնը բացայայտող համացանցային մետիայի համառօտ հայեացքները:

Հրապարակումները՝ ուղղակի թէ անուղղակի կերպով կ'անդրադառնան հայութեան իրավիճակին, Հայոց Ցեղասպանութեան, գաղթականութեան, մշակոյթին, ընկերային կեանքին, կենցաղին եւն.: Ասոնք հնարաւորութիւն կու տան ԱՄԷի մէջ ապրող հայութեան մասին պատկերացումները, գնահատականները, տպաւորութիւնները ազգային թէ քաղաքացիական պարունակին ընդմէջէն դիտելու:

Բ- Զգալի է հայկական անհատական թէ հաւաքական համացանցային մետիայի տեղեկատուութեան թուլութիւնը: Հայօճախի մասին ծանօթագրական թէ քարոզչական տեղեկատուական գործընթացը այդքան ալ ուժեղ չէ, հայօճախին կենսունակութիւնը ներկայացնող խորքային պատկերը ամբողջական չէ:

Գ- ԱՄԷի համացանցային մամուլի ոլորտներուն մէջ զգալի է հայօճախին ուսումնակրթական ներկայութեան, կենսունակութեան մասին յայտնող կամ լուսաբանող տեղեկութիւններու տարտղնած բնոյթը:

Դ- Համացանցային մետիայի մէջ հայ ինքնութեան, ազգային պատկանելութեան մասին անդարադարձը ամբողջական չէ, ծրագրաւորուած չէ,

[66] http://wam.ae/ar/details/1395302729541 , մատչում՝ 29 Դեկտեմբեր 2018:

պատահական է: Ընդհանրապէս Ծոցի արաբական երկիրներուն եւ ԱՄԷի հայօճախները (բացի նշուած անհատական կայքէջերէն) չունին լրատուամիջոցներու հաւաքական ծրագիրեր, անբաւարար է - չըսելու համար թէ չըկայ կամ չի պաշտօնակոչուիր եւ կամ անհրաժեշտութիւնը չի նկատուիր - նաեւ համացանցային թէ աւանդական լրագրութեամբ զբաղող միջազգային արժէչափերով հայ մասնագէտ մարդուժը: Իսկ ԻԱ. դարու ներկայ հանգրուանը առաւել քան շատ ուրիշ բաներ կը բնութագրուի զանգուածային այլատեսակ լրատուամիջոցներու դերի գերիշխումով: Ասով առաւել կը շեշտուի կենսականութիւնը հայրենիքէն հեռու եւ օտարութեան մէջ մետիայի բազմաբեւեռ դաշտերու օգտագործումը: Զանոնք պէտք է վերածել գործնական փոխյարաբերութիւններու, հայ ազգային, մշակութային արժէքներու եւ մանաւանդ հայօճախի գործնական ներկայութիւնը դրսեւորող իսկական հարթակներու:

THE PRESENCE OF THE UAE ARMENIAN COMMUNITY ON THE INTERNET - BRIEF OVERVIEW

(Summary)

Ara Sayegh (ara.sayegh4@gmail.com)
Chake Mangassarian-Grogan (radioayk@gmail.com)

The paper focuses on the local Arabic and foreign-language media coverage of the Armenian community of the UAE. This coverage broadly speaks indirectly, as well as directly, about the social-cultural life and conditions of the Armenians, the Armenian Genocide, the Armenian migrations, lifestyle, etc.

The paper separately covers both Arabic language and foreign language articles on the Armenians, feedback, impressions, short reports and information on Armenians, accounts of peaceful coexistence, the interstate relations and cooperation with the Republic of Armenia.

Through this media coverage the paper enables us to understand the set of perceptions, and the appreciation the native population of the UAE and its guest workers have towards the Armenian community of the UAE.

Mobility, Complexity and Translation: Armenians in the UAE

CHRISTINA YEPREMIAN-TOSSOUNIAN
btcy@live.com

INTRODUCTION

My Armenian parents had their formal education in Armenian, French, and Arabic in Lebanon in the 1960s and 1970s. Alongside Armenian, Arabic, and French, my siblings and I learned English at school in the 1990s and perfected it in our host countries, the UAE, UK, and US in the 2000s. My children, generation Z, are now growing up in Dubai, speaking English as though it was their first language.

From a wider perspective and taken in isolation, the above picture seems stark. Nevertheless, examining it through modern sociolinguistics parameters, we notice realities that could help mitigate the rampant tremors of globalization.

Together with the hallucinating speed of today's technological advances, it is equally intriguing to examine how language evolution remains a continuum. With widespread human movement on the one hand and the neo-imperialism of the English language on the other hand, in this paper, I answer the following questions: what is the position of translation and translanguaging in our world? How do linguistic and cultural exchanges occur in the Armenian community of the United Arab Emirates?

The starting point of this paper is the relationality of mobility, complexity, the neo-imperialism of English, and translation, where I outline the complex web systems that define migrancy, transnationalism, and diasporas. Drawing on tangible examples from daily life, I foreground how mobility and globalization have disrupted the transgenerational transfer of the Armenian language throughout the past decades. Moreover, drawing on translation studies, I succinctly examine the linguistic practices of the Armenian community in the UAE as a highly heterogeneous zone and end my paper with some recommendations on how the local Armenian community can leverage the challenges and turn them into opportunities to preserve the Armenian identity.

MOBILITY

Over the past decades, the world seems to have been on a constant move. From international students to refugees and asylum seekers, from soccer enthusiasts to business travelers, from healthcare professionals, to tourists and entertainment celebrities, our world has come together through movement and mobility, whether by airplanes, ships, buses, or trains. Although physically abated for two years during the pandemic, the virtual dimension, a complex

adaptive system, enabled mobility to remain seamless, transcending time and space. Therefore, according to Mimi Sheller and John Urry, the mobility paradigm also includes the mobile and immobile systems and structures that manage "the intermittent flow of people, information, and image."[1]

Looking at physical mobility, Sheller and Urry have given particular consideration to the airport, defining it as, "The airport space is a place of transmission of people (and objects) into global relationships that facilitates the shrinkage of the globe [...] the system of airports forms networks that bring connected places closer together while distancing those places that are not so connected."[2] In May 2023, *The National*, a UAE-based newspaper, published an article with an outlook that "Dubai International Airport could exceed 2019 passenger traffic level this year, with more than 90 million annual passengers, topping the 86.4 million handled in 2019."

Besides the physical mobility of these expected 90 million passengers, it is also worth considering their upward or downward social mobility. According to Sheller and Urry, "moving between places physically or virtually can be a source of status and power... or can generate deprivation and untold suffering.[3]

Perhaps the most pivotal element of mobility is the study of the language flow, the permeability of certain languages, and the emergence of new sociolinguistic realities that I will elaborate on later in this paper.

COMPLEXITY

Complexity is yet another important aspect, which, according to John Urry "investigates emergent, dynamic and self-organizing systems that interact in ways that heavily influence the probabilities of later events."[4] Urry explains the concept as:

> an emergent structure that involves a sense of contingent openness and multiple futures, of the unpredictability of outcomes in time-space, of a charity towards objects and nature, of diverse and non-linear changes in relationships, households and persons across huge distances in time and space, of the systemic nature of processes, and of the growing hypercomplexity of organizations, products, technologies and socialities."[5]

Epistemologically, any living system in nature follows a chain of processes that is capable of self-producing and self-organizing. In Urry's essay, Mitchel

---

[1] M. Sheller, & J. Urry, (2006). "The New Mobilities Paradigm," *Environment and Planning A: Economy and Space*, 38(2):2006, p. 212.

[2] Ibid., p. 219.

[3] Ibid., p. 213.

[4] J. Urry, "The Complexity Turn," *Theory, Culture & Society*, *22*(5):2005, pp. 1-14.

[5] Ibid., p. 3.

Resnick has observed that "In ant colonies, highway traffic, market economies, immune systems [...] patterns are determined... by local interactions among decentralized components."[6] Therefore, systems and their complexities have a seminal function that encompasses the different components with their diversities as well as unities. According to Resnick and Wilensky,[7] complex phenomena "can arise from simple components and simple interactions."[8]

Among the key elements of self-organization and self-production is communication, particularly cross-cultural communication. Anthony Pym[9] considers cultures "as large-scale systems of assumed shared references, linguist or otherwise, used for the purposes of reducing complexity."[10] As an example of large-scale systems, we might consider the Armenian culture at large, and cross-cultural communication can be explained as the borderlines through which the act of communication flows through mediation. This is where translation takes place. Therefore, translation is the constant mediation between one culture and another to facilitate the act of communication.

MIGRATION, TRANSNATIONALISM, AND DIASPORAS

A closer look at the junctions and crossings of mobility and complexity will reveal the term *migration*. In its mission strategy document, The International Organization for Migration Armenia (IOM) noted, "As recognized in the 2030 Agenda for Sustainable Development, human mobility is indivisible from sustainable development. The Sustainable Development Goals (SDGs) – and the commitment to leave no one behind and to reach the furthest behind – will not be achieved without due consideration of migration."[11]

Loredana Polezzi explains "migration" as "an increasingly polysemic word and one which can be stretched in a number of directions".[12] From the turn-of-the-century immigrants like William Saroyan's family that were forced to leave their native Bitlis and emigrate to the United States, to postmodern nomadism and transnationalism, migration is an umbrella term that

---

[6] Ibid., p. 1.

[7] M. Resnick & U. Wilensky, "Diving into Complexity: Developing Probabilistic Decentralized Thinking through Role-Playing Activities," *Journal of Learning Sciences,* 7(2):2009, pp. 1-17.

[8] Ibid., p. 3.

[9] A. Pym, "Propositions on Cross-Cultural Communication and Translation," *Target. International Journal of Translation Studies*, 16 (1):2004, pp. 1-28.

[10] Ibid., p. 2.

[11] International Organization for Migration https://reliefweb.int/organization/iom (last visited on 06/10/23).

[12] Loredana Polezzi, "Translation and migration." *Translation Studies,* 5(3):2012, pp. 345-56.

encompasses a variety of human movements. In his article "Diasporas," James Clifford[13] quoted Khachig Tölölian, who has defined it as, "Diasporas are the exemplary communities of the transnational moment. The term that once described Jewish, Greek, and Armenian dispersion, now shares meanings with a larger semantic domain that includes words like immigrant, expatriate, refugee, guest-worker, exile community, overseas community, ethnic community."[14]

Now one may ask, "What is the relation between diasporas and translation?" Given the increasing human mobility, the translation/migration binary has gained impetus over the last decade as two central components in anthropology, sociology, philosophy, and literary theory. Polezzi has referred to migrants as "agents of translation" who master different codes of communication.[15] Quoting Michael Cronin, Polezzi has noted that migrants can gain the ability to translate, adopting "an autonomous practice of translation, or be translated by others, in which case translation is enacted via heteronomous practices".[16] According to Polezzi, "Migrants, then, may also become translators... They may have the opportunity to shift from objects of translation to active subjects, to agents in the process."[17] Another important aspect that the scholar has remarked on is the alteration of the balance of power and the dynamics between the mechanisms of production and reception, such as the spaces that migration writing occupies, the emergence of different languages and language variants, and idioms, and the directionality of translation, to name a few.

Alongside the prevailing theoretical discourse, practice or the real-life world reveals concrete examples: have not all of us, bilinguals and/or polyglots, been in situations where we had to translate from or to our mother tongues or acquired language? This is an embedded process in the culturally pluralistic UAE. The Armenian diaspora in the UAE is an incarnation of a nomadic, highly mobile community. Nuclear families leave their home countries in Lebanon, Syria, or Armenia to relocate to Dubai, Sharjah, or Abu Dhabi, which act as launch pads for many families, before they resettle in Armenia, Australia, or the West as their 'permanent' home.

Armenian families have been increasingly communicating in English and another language in the case of mixed marriages. In professional, academic, or social environments, Arabic is sometimes involved.

---

[13] J. Clifford, "Diasporas," *Cultural Anthropology,* 9 (3):1994, pp. 302-38.

[14] Ibid., p. 303.

[15] Polezzi, p. 346.

[16] As quoted by Polezzi, p. 348.

[17] Polezzi, p. 348.

Consequently, to validate Polezzi's postulated argument, migration and diasporas have, indeed, become sites of translation and self-translation where, as a medium of communication, we translate our own self, our own internal voice for the other, or the other for our own self. To illustrate this further, a comparison could be drawn between the Armenian diaspora in Lebanon in the 1980s and 1990s and the Armenian diaspora in the UAE today.

Growing up as a child in an Armenian-speaking family, for me translation was a rather limited practice (Armenian-Arabic/Arabic-Armenian). A striking image was, in an attempt to preserve the purity of language and identity, one of my acquaintances drew clear demarcation lines by taking the pledge to exclude any foreign word during her children's upbringing; the result sounded somewhat awkward. Terms such as '*Pabughi*' (tunnel) '*Djechag*' (vehicle horn) and '*arkelag*' (brakes) were used in their daily conversation. In contrast, a complex, non-linear translational transnationalism is perhaps exemplified by a Lebanese Armenian who migrated to Sweden many years ago and married a Syrian Armenian; the couple is now living in Dubai with their children. The language combinations and the code-switching instances are interesting to explore, especially when they visit their extended families in Lebanon, Syria and Sweden. The example above portrays the orientation of nationalism towards alterity, and the replacement of rigid frontiers with porous borders. In the below examples uttered by children living in the UAE, I highlight the linguistic hybridity where translation is resorted to reaffirm identity:

Example 1:

a) Literal translation:

"Did you make it on time?" is translated as

'Shinetsir jamanagin?' (literally meaning 'did you build on time' instead of *'Jamun hasar?'* (literally meaning 'did you arrive on time')

b) Creole term:

"*Gabelling* my shoes is hard."

As 'gabel' in Armenian means to tie (tying the laces) in Armenian and the English gerund.

c) Hybrid communication:

"*Asiga (meaning this) open é"* (meaning is)" As in "Is this open?"

In addition to literal translation by looking into the word order, hybridity in the above examples also involves the oral components: accents, intonation, etc.

To quote Homi Bhabha, in this postcolonial era, where "transnational" identity is emblematic of "translational" identity,[18] translation is posited as an inherent process for the future of any diaspora, being a crucial player in the preservation of identity in addition to the outward and inward transfer of

[18] Homi K. Bhabha, "Postcolonial criticism." *Postcolonlsm*, Routledge, 2023, pp. 105-33.

knowledge, culture, and traditions. For example, to resist the rampant neo-imperialism of English, Armenian parents or grandparents - with the vantage point of insiders - resort to translation as a didactic medium to teach the younger generation who look at Armenian from the vantage point of outsiders.

A second example of translational identity is the Ohannesian Armenian School located in Sharjah which, every Saturday, welcomes students from ages 3 to 15. Established in 1980, the weekly school operates within the St. Gregory the Illuminator Armenian Church complex in Sharjah and has the task of instilling Armenian language, culture, history, and religious education in Armenian children. Leveraging today's technology and mobility, each class is equipped with a smart TV, with Internet access, in addition to the in-person and online training that the teachers receive every year. In September 2022, a professional training seminar that aimed at reinforcing Western Armenian in a plurilinguistic environment was conducted. Considering Western Armenian as a periphery language, in our connected world, the educational expert put in place a student-focused approach to raise interest, discovery and exploration of our language and culture. In the agenda of the seminar, two bullet points are worth stopping at: 1) '*Havasarageshrevadz yev nertashnag yerglezvutyan zarkatsume*' (The balanced and synchronized development of bilingualism) and 2) '*Gartalu yev kerelu nakhabadrasdagan hankervannere*' (Reading and writing preparatory phases). During a short conversation with Mrs. Vartoug Karagulleyan, the school principal, translation was confirmed as an inherent part of the teaching strategies deployed by the school.

Last academic year the school had a record number of 240 students. In cooperation with the AGBU "ARMAT" project, the school gave the students the opportunity to have virtual meet-ups to build friendships and discover their roots and heritage.

To cover a broader spectrum of community members, especially children from ages 6 to 11 who do not speak Armenian at all and do not attend the Ohannesian school because of their age gap, in cooperation with the Kaloust Gulbenkian Foundation, this year the school introduced two classes specially designed for these students. Among the different approaches and teaching strategies, translation plays a pivotal role as a didactic tool to give Armenian a more central position alongside English. Being an advocate of plurilingualism, I quote Walter Benjamin's[19] concept that "pure language is achievable not by any single language but only by the totality of their intentions (languages) supplementing one another."[20]

---

[19] Walter Benjamin, "The Task of the Translator (introduction to a Baudelaire translation)." *The Translation Studies Reader*, Routledge, 2000.

[20] Ibid., p. 18.

Another illustration of this in-betweenness is foregrounded in the official Armenian communication channels, the central of which is Emahay.com. Launched in 2012, EmaHay serves the community as the official channel of communication with articles and upcoming events published both in Armenian and English. Not only does EmaHay.com strengthen the bonds among the Armenians, especially those who do not speak Armenian, but it also helps foreigners to get acquainted with Armenian ethnic particularities. To keep pace with the new social realities, EmaHay is also present on Facebook and Instagram, where the Armenian Council and the Prelacy's different committees post their announcements, news, etc.

Community communications, namely announcements and school circulars, are another interesting aspect to examine. With a number of committees and two weekly schools, and live broadcasts, the Prelacy's social media channels remain quite dynamic. Below I explore three of these announcements.



Սարդարապատ 2022 CENSUS

First and Family Name	Current Residence ☐ Abu Dhabi, Al Ain & Al Dhafra ☐ Dubai & Northern Emirates ☐ Qatar
Name in Armenian	
Date of Birth	
Country of Origin	Marital Status ☐ Single ☐ Married ☐ Widowed ☐ Divorced
Mobile Number	
Email Address	

Employment Status
☐ Student ☐ Self-Employed ☐ Homemaker
☐ Employed ☐ Looking for work ☐ Retired

Spouse First and Family Name	Armenian Name of Spouse
Spouse Date of Birth	Spouse Mobile Number
Spouse Email	Number of Children Living With You

Spouse Employment Status
☐ Student ☐ Self-Employed ☐ Homemaker
☐ Employed ☐ Looking for work ☐ Retired

Child Name	Child Name	Child Name
Child Date of Birth	Child Date of Birth	Child Date of Birth
Child Employment Status ☐ Infant ☐ Student ☐ Employed ☐ Self-Employed ☐ Looking for work	Child Employment Status ☐ Infant ☐ Student ☐ Employed ☐ Self-Employed ☐ Looking for work	Child Employment Status ☐ Infant ☐ Student ☐ Employed ☐ Self-Employed ☐ Looking for work

Examples 1 & 2

Example 1:

The above announcement, for instance, was posted on the social media page to invite the younger members of the community to an event organized by the Youth Committee. The Armenian translation, in this case, was only in the caption.


Example 2:


Last year a census was conducted by the Armenian Prelacy to re-evaluate the number and statuses of the community members. The above form was

adopted to collect data from participants. In an attempt to be present through a myriad of formats - QR code, WhatsApp, direct mail, and in print - the Census Committee opted for English only to expedite the administrative process, while at the same time reaching out to all the Armenians of the UAE. Keeping the form in English was particularly helpful to non-Armenian spouses who wanted to establish a sense of belonging to the Armenian community.

Example 3:

The third example is a bilingual circular about a traditional religious ceremony to mark the name day anniversary of the Armenian Church. Looking at the Armenian version of this circular, we notice in the middle of the announcement a timetable of the different religious rituals. The last point of the timetable is '*Madaghorhnek'*, which literally means "the blessing of the sacrifice", a religious concept that is untranslatable to English, and yet all Armenians - even non-speakers - understand. The term is transliterated in English. At the very bottom of the same circular, the terms "rooster" and "lamb" are followed by "*aklor*" and "*vochkhar*" respectively. Transliterating these Armenian terms into English is a means to make them as culturally pertinent as they are acoustically natural. The last part of the Armenian post, which is of a spiritual nature, does not have an English translation. The reason could lie in the fact that it would not have the same impact as in Armenian.





While verbal communication in Armenian is common in the UAE, writing, on the other hand, is quite limited. In the census example above, many of the participants wondered about the last time they wrote their names in Armenian. The daily professional and social interactions of UAE Armenians seldom require the use of spoken Armenian, let alone the written format, hence the necessity of preserving the bonds primarily with their extended families back home, with other Armenian expatriates, and finally with the community as a whole. It is known to everyone that in 2010 Western Armenian was included in UNESCO's list of endangered languages, stemming from the fact that "children no longer learn Western Armenian as their mother tongue at home". This stark reality is one of the setbacks of mobility, the highly porous host societies and above all the convenience of English as the hegemonic *lingua franca* in the globalization era.

These English translations could also highlight the intersection between the directionality of translation flows and the mobility of younger generations of Armenians, who are rebelling against their single identity. The increasing number of bilingual Armenian diasporic publications, not only in the UAE but also around the world, clearly marks an era of what Tölöyan has explained as moving "towards a society of affiliation, not filiation" (*Fil* as in thread, and *fils* as in son in French).[21] According to Tölöyan, "in filiation, identity is socially inherited from the family" whereby one has the choice to either follow the communal norms or move closer to the foreign. Hence, the directionality of the translation flows from the minority language to the dominating ones, reflecting the younger generations' rejection of traditional practices, while choosing their own "nature and extent of affiliation".[22] From intermarriage to the refusal to learn the native language, but participating instead in community work in homeland Armenia, are choices that a growing number of educated youth have been recently showcasing.

This being said, it is to be noted that even the most successful Armenian diasporic hubs have been recently facing difficulties due to numerous socioeconomic and political shifts and fluctuations. A great number of Lebanese and Syrian Armenian families have flocked to the UAE, and consequently their children were enrolled in non-Armenian schools, a situation that also embodies a translational process until the newly-settled family becomes familiar with English.

What could also counter this outlook presents itself within the core of the country itself. With a local population accounting for a mere 11.6% of the total

---

[21] K. Tölölyan & T. Papazian, "Armenian Diasporas and Armenia: Issues of Identity and Mobilization," *Etudes Arméniennes Contemporaines,* 3:2014, pp. 83-101.

[22] *Ibid.*

demographics, the social fabric of the UAE mainly consists of expatriates, or temporary migrants, a term which refers to the foreign workforce, whose motives are either assigned or self-initiated to work outside the home country for a certain period of time. Another major distinction between immigrants and expatriates is that the former undertakes moving to have a permanent home and go through the processes of "incorporation" and "acculturation", whereas the latter does not. Consequently, despite the fluidity and openness to others, expatriates living and working in the UAE largely remain inside their well-defined ethnicity and identity or "third space", without being exposed to assimilation and acculturation like those who migrate to Australia or the West. According to Tölöyan, this

> third space is geosocial or geocultural and very different from the space in which traditional immigrants lived. The new transnationals receive cultural products from their homeland – they watch satellite TV, have their own TV broadcasts, internet contact, cheap phone calls... Many travel back annually.[23]

Therefore, in a country where assimilation is not the norm, and alterity is imperative for upward mobility, plurilingualism could present itself as an asset and an opportunity to have an edge over others.

Notwithstanding the globalized world, in addition to the Embassy of the Republic of Armenia, the Armenian Church and its committees are the only officially institutionalized entity in the UAE. Armenian organizations that play central roles in preserving our identity and reinforcing our culture in other diasporas are not authorized in the Gulf country. Therefore, the Armenian Embassy and community coordinate with different local entities to organize cultural and business events, host sports teams and artists from other diasporas, etc. Another noticeable aspect is the virtual presence of UAE Armenians in different sociocultural events occurring elsewhere. From reading Armenian newspapers, and periodicals published around the world, to listening to Armenian radio channels through mobile applications, to attending seminars and conferences, internet mobility has transcended time and space constraints, enabling us to access anything, anywhere.

Historically, starting from Saint Jerome, the patron saint of translators, to the Armenian Vosgétar or Golden Age in the 5th century, to Martin Luther's translation of the Bible in the 14th century, we notice that almost every literary, cultural, and socioeconomic renaissance is triggered by the urge to reinforce identity and religion. It is also worth noting the linguistic negotiations and the central kinship of language that, according to Walter Benjamin, "is marked by a distinctive convergence. Languages are not strangers to one another, but are,

---

[23] Khachig Tölölyan et Taline Papazian, "Armenian Diasporas and Armenia: Issues of Identity and Mobilization", *Études arméniennes contemporaines*, 3:2014, pp. 83-101.

a priori, and apart from all historical relationships, interrelated in what they want to express.[24]

To assess the success of the different initiatives taken by the Armenian community of the UAE, I refer to the criteria set by Anthony Pym, who argues that these success conditions should be "defined or redefined in relation to the effort expended... Far from absolute, success is a point of pragmatic termination, defined through constantly revised expectation."[25]

CONCLUSION

In our postcolonial world, the reshaping of language and culture is marked by heterogeneity, disruption, and transgression of the once robust national frontiers. In her essay, "Cultural Translation and the Discourse of Transnationalism in American Studies," Rodica Mihăilă[26] mentions Paul Gilroy's influential book, *The Black Atlantic: Modernity and Double Consciousness*, which notes that, "'purity' of any race or/and culture is always an illusion"[27] and that cultures are defined with the "persistent crisscrossing of national boundaries."[28] Therefore, moving between different cultures and languages, the Armenians living in the UAE can benefit from the ambivalent function of the translational process: first, the invaluable role of protecting their identity and culture and second, enabling communication and survival in the highly mobile and complex world.

---

[24] Benjamin, p. 17.

[25] Pym, p. 5.

[26] R. Mihăilă, "Cultural Translation and the Discourse of Transnationalism in American Studies" in *Transatlantic Connections: Essays in Cultural Relocation*, Editura Integral din Bucuresti, 2000, pp. 13-25.

[27] Ibid., p. 19.

[28] Ibid.

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, ԽՐԹՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼԵԶՈՒԱՆՑՈՒՄ. ՀԱՅԵՐԸ ԱՄԷԻ ՄԷՋ

(Ամփոփում)

Քրիստինա Եփրէմեան-Թոսունեան
btcy@live.com

Հիմնուելով թարգմանութեան միջուսմունքային տեսութեան վրայ եւ ընդգրկելով շարժունակութեան, թափառիկութեան ու անդրսահմանայնութեան գաղափարները մէկ կողմէն ու ասոնց առնչումներուն խրթնութիւնը միւս կողմէն, զեկոյցը կ'ուսումնասիրէ արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի համաշխարհայնացման ազդեցութեամբ բարեշրջումը ԱՄԷի մէջ:

Զեկոյցը լուսարձակի տակ կ'առնէ բազմազգ օտարահպատակներու ընկերային ցանցի, արեւմտահայերէնի ու արեւելահայերէնի երկակիութեան, ներ- եւ միջ-համայնքային թարգմանական բառապաշարի, մշակութային աղօտ հորիզոններու ծիրին մէջ ԱՄԷի հայ երիտասարդ սերունդներուն ինքնութեան ծաւալող անցումը 1990ականներէն մինչեւ մեր օրերը:

Ան կը վիճարկէ թէ այս առումով թարգմանական ճիգը երկթաղանթ վիճակ է. ա) բառային թարգմանութիւն մէկ լեզուէն միւսին, բ) թարգմանութիւն անձին՝ իր մշակոյթին, գաղափարաբանութեան, մտածումներուն եւն.:

Հիմնուելով դաշտային հետազօտութեան վրայ զեկոյցը կ'եզրակացնէ ԱՄԷի մէջ հայերէնի - մանաւանդ արեւմտահայերէնի - տարրականութիւնը:

Հայ Եկեղեցին Ծոցի Արաբական Երկիրներուն Մէջ

ՄԵՍՐՈՊ ՍՐԲ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
ourardou83@gmail.com

Մեր նիւթը Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով յառաջացած դասական հայօճախներուն կազմուածքը ունեցող գաղութներու մասին չէ, այլ՝ Ցեղասպանութենէն վերապրած սերունդի զաւակներէն եւ տարբեր տարբեր պայմաններու բերմամբ անցնող 50-60 տարիներուն Ծոցի արաբական երկիրներ հաստատուած ու հայօճախ յառաջացուցած եւ վերջին 20-25 տարիներուն կազմակերպուած կեանք ունենալ սկսած հայերու մասին:

Մենք կը խօսինք Ծոցի արաբական երկիրներէն՝ Քաթարի, Օմանի եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու (ԱՄԷ) մասին:

Այս պետութիւններուն համար կրօններու ներկայութիւնը նորութիւն չէր. Անոնք հինէն իվեր ունեցած են միաստուածեան կրօններու բնակչութիւններ, նաեւ այլ՝ հինտու, պուտտայական կրօններու պատկանող, ինչպէս նաեւ այլ փիլիսոփայութիւններու հետեւող բնակիչներ:

Սակայն այս պետութիւնները ամէնամօտը եղած են քրիստոնէութեան, որովհետեւ քրիստոնէութիւնը մնայուն ներկայութիւն եղած է այս տարածաշրջանին մէջ՝ Փորթուկալի գաղութատիրական շրջանէն, մինչեւ բրիտանական գաղութատիրութեան շրջան եւ այնուհետեւ[1]:

Այս պետութիւնները հինէն իվեր համերաշխ յարաբերութիւններ ունեցած են քրիստոնեայ փոքրամասնութիւններուն հետ եւ աւելի զարգացուցած են այդ յարաբերութիւնները վերջին տարիներուն: Իսկ մենք, հայերս, իբրեւ քրիստոնեայ փոքրամասնութիւն, օգտուած ենք այդ համերաշխական ենթահողէն եւ ունեցած ուշագրաւ ներկայութիւն թէ՛ հաւատքի պահպանումով, թէ՛ ազգային ինքնութեան առումով եւ թէ՛ նաեւ երկրի զարգացման-բարգաւաճման աշխատանքներուն մեր մասնակցութեամբ:

Նկատի առնելով Իրանի մօտիկութիւնը, եւ հրուանդանային ու աշխարհագրական իր դիրքը, շրջանը, մանաւանդ ԱՄԷն, եղած է վաճառականական կարեւոր գօտի: 16րդ դարուն հայերը շատ հաւանաբար Պարսկաստանէն ու Հնդկաստանէն յետոյ այս վայրերը օգտագործած են իրենց վաճառականական գործարքներուն համար: Հայերու ներկայութիւն կը յիշատակուի 16րդ դարէն՝ Խորֆաքանի եւ Ֆուճէյրայի մէջ, ուր հայեր կա՛մ հաստատուած են եւ կա՛մ՝ իբրեւ կայան օգտագործած:

Հայերու մեծ հոսքը դէպի այս շրջաններ կը սկսի 1960ականներուն՝ Երուսաղէմէն եւ Եթովպիայէն եկող հայերով, իսկ 1960ականներու վերջաւո-

[1] Յատկապէս ուշագրաւ է Անկլիքան Եկեղեցիին ներկայութիւնը, որուն հետ երկրին շփումը ամէնահինն է:

րութեան, մանաւանդ Պարսկաստանէն (յատկապէս Ջուղայէն), Սուրիայէն եւ Լիբանանէն մեծաթիւ հայեր սկսած են հաստատուիլ այս տարածքին վրայ:

Ժամանող հայերը սկզբնական շրջանին շատ խեղճ եւ դժուար պայմաններու մէջ ապրած են: Ընդհանրապէս եղած են արհեստաւոր, իսկ երկիրը որեւէ բանէ աւելի արհեստաւորներու պէտք ունէր: Պետական կառոյցը նոր կը կազմաւորուէր, սահմանադրութիւն առաջին անգամ կը կիրարկուէր: Այդուհանդերձ, աշիրաթական սովորութիւններով ապրող տեղաբնիկ արաբները կրցան հայերուն հետ լաւապէս յարաբերիլ ու ապրիլ: Յիրաւի, հայերը առաջին իսկ օրէն շահած են տեղաբնիկներուն վստահութիւնն ու բարեկամութիւնը, ինչ որ մինչեւ այսօր ալ մեզի մեծապէս վարկ կ'ապահովէ՝ մեր եկեղեցիներուն, հաստատութիւններուն, հաւաքականութիւններուն եւ մեր աշխատանքներուն հեզասահ ընթացք տալով:

1975ի Լիբանանի քաղաքացիական պատերազմին բերմամբ, շատ մը հայեր եկած են շրջան, որոնցմէ ոմանք տակաւին կը բնակին ԱՄԷ: Նոյն շրջանին նորաւարտ համալսարանականներ Սուրիա-Լիբանանէն, հետզհետէ կը սկսին հաստատուիլ ԱՄԷ: Այսպէսով տարբեր, համալսարանաւարտ խաւ մը կը ձեւաւորուի հոս: 1977ին կը կատարուի առաջին հայկական պատարագը, Տուպայի անկլիքան Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ: Զայն կը մատուցէ Ջուղայի առաջնորդ գերշ. տէր Մեսրոպ եպս. Աշճեան:

1979ին Ծոցի տարածաշրջանը պաշտօնապէս կը միանայ Կիլիկիոյ կաթողիկոսութեան որպէս փոխանորդութիւն: 1980ին կը կազմուի առաջին ազգային վարչութիւնը ԱՄԷ, եւ նոյն տարին կը հիմնուի ազգային միօրեայ վարժարանը Շարժայի մէջ:

1970-80 տասնամեակը կ'ըլլայ ԱՄԷի հայութեան կազմաւորման եւ կազմակերպման տասնամեակ: Եւ քանի որ Քուէյթի մէջ կար առաջնորդարան, շրջանը կը կոչուի Քուէյթի եւ Ծոցի երկիրներու փոխանորդութիւն ու մինչեւ 2013 այդ անունով կը գործէ այդ տարածաշրջանի ամբողջ հայութեան համար:

1994ին Հալէպի մէջ տեղի ունեցած ազգային ընդհանուր ժողովին, Ծոցի արաբական երկիրներու հայկական հօտերը պաշտօնապէս կը յայտարարուին թեմ, կը կոչուին Քուէյթի եւ Ծոցի հայոց թեմ եւ կ'ունենան ներկայացուցիչ՝ ազգային ընդհանուր ժողովին մէջ: Գերշ. տէր Օշական եպս. Չոլոյեան կը դառնայ առաջնորդը եւ կը սկսի առաւել կազմակերպուիլ հայութիւնը ԱՄԷի մէջ:

2013ը անկիւնադարձային թուական մըն է տարածաշրջանին համար, քանի որ հոն՝ հայութեան թիւը մեծ աճ արձանագրած եւ հոգեւոր ու ազգային կարիքները՝ շատցած ըլլալով, Կիլիկիոյ հայոց կաթողիկոսութեան վեհափառ Արամ Ա. կաթողիկոսը լծուեցաւ նախապատրաստական աշխատանքներու՝ Ծոցի երկիրները երկու անջատ առաջնորդարաններով օժտելու վարչաիրաւական աշխատանքներուն: Արդարեւ, քանի որ առաջնորդին

նստավայրը Քուէյթ էր, դժուար կ'ըլլար անոր յաճախակի տեղափոխումները[2], ինչ որ պատճառ կը դառնար որ հայ հաւաքականութիւններուն հոգեւոր կարիքները լիարժէք չհոգացուին եւ հայ հաւաքականութեան զարգացումը դանդաղի: Դժուար էր Ծոցի տարբեր երկիրներուն մէջ ցրուած հայութեան հոգեւոր եւ վարչական կարիքներուն հասնիլը: 2013ի նախապատրաստական աշխատանքները կ'աւարտին 2015ին եւ կ'ունենանք երկու առաջնորդարաններ՝ Քուէյթի եւ շրջակայից, ու ԱՄԷ, Քաթարի եւ շրջակայից թեմերը: Այս առումով 2013ին վեհափառ հայրապետին բարձր տնօրինութեամբ ԱՄԷ կ'ուղարկուի հոգշ. տէր Մեսրոպ վրդ. Սարգիսեանը որպէս կաթողիկոսական փոխանորդ՝ շրջանէն ներս առաջնորդարանի կառոյցը հաստատելու համար:

ԱՄԷի պարագային, պէտք է ըսել, որ առաջին հաւաքականութիւնը կազմուած է Շարժայի մէջ, քանի որ պատմականօրէն, սկզբնական շրջանին ան եղած է միակ քաղաքը որ աշխուժ վաճառականական ընթացք ունէր: Հետեւաբար զարգացման կեդրոն ըլլալով, հոն սկսած են աշխատանքները, իսկ կարճ ժամանակ ետք՝ Ապու Տապիի մէջ, գրեթէ համահաւասար զարգացումով սկսած է կազմուիլ ԱՄԷի երկրորդ հայ հաւաքականութիւնը:

Քաթարի մէջ աւելի ուշ սկսած է կազմուիլ հայ հաւաքականութիւնը, մօտաւորապէս 2000ականներու սկիզբին, թէեւ հոն ալ 40-50 տարուան տեւողութեամբ հայաբնակներ կային, բայց փոքրաթիւ եւ առաջնորդարանէն բաւական հեռու ըլլալնուն՝ հեշտ չէ եղած անոնց կազմակերպումը: 2001ին կը կատարուի առաջին հայկական պատարագը Քաթարի մէջ, Տոհա, ուր ԱՄԷի տէր քահանայ Արամ Տէյիրմէնճեան կը պատարագէ, ներկայութեամբ Քուէյթի եւ Ծոցի երկիրներու թեմի կաթողիկոսութեան փոխանորդ գերշ. տէր Եփրեմ արք. Թապաքեանի:

2022 Նոյեմբերին, թեմի առաջնորդ գերշ. տէր Մեսրոպ եպս. Սարգիսեան կ'այցելէ Մասքաթ-Օման, ուր կը կատարուի առաջին հայկական պատարագը: Մասքաթի մէջ, շուրջ 40 տարիներէ իվեր հայեր հաստատուած են: Ասոնց թիւը համեմատաբար աւելի փոքր է, շուրջ 100 հոգի:

Ներկայիս ԱՄԷի, Քաթարի եւ Օմանի մէջ ունինք ազգային ու եկեղեցական կեանք:

Եկեղեցիներ.- Անցնող տասնամեակներուն, հայութիւնը իր վարկը պահած է այս երկիրներուն մէջ յաչս ժողովուրդին եւ իշխանութեանց: 1960ականներէն մինչեւ 1990ականներու վերջը, հայերը ընդհանրապէս մօտիկ եղած են երկրին իշխանութեան: Իսկ կարգ մը տեղեր՝ անոնք եղած են կառավարիչներու մօտիկ անձեր:

---

[2] Յաճախ հոգեւորականներ այցելած են Ջուղայէն կամ մօտիկ այլ շրջաններէ, կամ կաթողիկոսարանէն ղրկուած են հոգեւորականներ, կամ ալ Քուէյթի առաջնորդները եկած են պարբերաբար:

1993ին երբ Գարեգին Բ. կաթողիկոս Սարգիսեան կ'այցելէ այս շրջանը, առիթը կ'ունենայ հանդիպելու Շարժայի կառավարիչ Սուլթան Պըն Մուհամմատ Ալ-Քասիմիի հետ, եւ անկէ հող կը խնդրէ հայ հաւաքականութեան համար: Այդ հողը կը տրուի 1995ին, եւ 1995-98 շրջանին եկեղեցին կը կառուցուի:

1998 Նոյեմբերին, ՆՍՕՏՏ Արամ Ա. կաթողիկոս կը ժամանէ Շարժա եւ կ'օծէ եկեղեցին: Կը յառաջանայ համալիր. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, եւ ազգային միօրեայ վարժարանի շէնք: Ասիկա Շարժայի մէջ հիմնուած քրիստոնէական առաջին եկեղեցին չէր, սակայն առաջինն էր որ գմբէթ ունէր: Ան հայկական ճարտարապետութեամբ կառուցուած առաջին եկեղեցին է տարածաշրջանին մէջ:

1998ին ՆՍՕՏՏ Արամ Ա. կաթողիկոս իր այցելութեան ընթացքին առիթ կ'ունենայ տեսակցելու Ապու Տապիի օրուան կառավարիչ եւ ԱՄԷ նախագահ Շէյխ Զայտ Պըն Նահիանին հետ եւ հող կը խնդրէ Ապու Տապիի հայ հաւաքականութեան համար: Ապու Տապիի հողը կը տրուի 1990ականներու վերջաւորութեան, սակայն շինարարութիւնը կ'երկարի մինչեւ 2012: Հիմնարկէքը կը կատարուի 2012ին, եւ յաջորդող երկու տարիներուն կ'աւարտի շինութիւնը շատ գեղեցիկ հայկական տաճարին: Նոյն համալիրին մէջ այսօր կը գտնուին միօրեայ ազգային վարժարանը եւ ազգային առաջնորդարանը:

Եկեղեցիին օծումը կը կատարուի 2014 Դեկտեմբերի կէսերուն եւ ան կ'անուանուի Սրբոց Նահատակաց, նկատի ունենալով որ Հայոց Ցեղասպանութեան 100ամեակի շէմին էինք:

2009ին Արամ Ա. վեհափառ կ'այցելէ նաեւ Տոհա՝ Քաթար օրուան Ամիր շէյխ Համատ Պըն Ճասմ Ալ-Թանիի հրաւէրով, եւ իշխանութեանց հետ իր հանդիպումին խոստում կը ստանայ եկեղեցական հողի նուիրաբերման: Ցարդ, այս խոստումը չէ իրականացած:

Պէտք է առանձնացնել տարածաշրջանէն ներս Հայ Եկեղեցիին գործունէութիւնը, անոր յատկանշական դերակատարութիւնը, որովհետեւ ատիկա չի նմանիր մեր դասական թեմերու գործունէութեան: Այս երկիրներու շարք մը օրէնքներուն, կանոններուն եւ ընկերային սովորութիւններուն համաձայն ազգային կեանքի ամբողջ ընթացքը՝ մշակութային, դաստիարակչական, հայեցի ու հոգեւոր կրթութիւն, վստահուած է եկեղեցիին: Միութենական կազմակերպութիւններու գործունէութիւնը արտօնուած չէ, հետեւաբար եկեղեցին ինք ստանձնած է այս բոլորը: Թեմը 2013էն իվեր նոր ընթացքի մէջ է, ազգային առաջնորդարանի ներկայութիւնն ու գործունէութիւնը շրջանէն ներս նոր ուժ եւ հոգի կու տայ շրջանի հայօճախներուն:

Թեմի տարածաշրջանին հայութիւնը կը բաղկանայ հիմնականը հետեւեալ խմբաւորումներէն.-

ա) Հինէն իվեր հաստատուած հայեր, որոնք աշխարհի տարբեր ցամաքամասերէն այլեւայլ հայօճախներէ եկած են ու ապրած են եւ կամ տակաւին կ'ապրին:

Կայ եւ երիտասարդ սերունդ մը, որ կը գոյացնէ միւս երկու օղակները՝

բ) Ծոցի երկիրներուն մէջ ծնած ու մեծցած սերունդ:

գ) Միջին Արեւելքէն եկած կամ տեղափոխուած երիտասարդութիւն:

Նկատի առնելով վերջին տարիներուն Լիբանան-Սուրիոյ տագնապները, երիտասարդներ փափաք ունին տեղափոխուելու այս տարածաշրջանը: Այս առումով ալ եկեղեցին դեր ստանձնած է անոնց գործ գտնելու եւ կենցաղային պայմաններուն ալ օգտակար դառնալու առումով:

Յարաբերութիւններ.- Անցնող տարիներուն անհամեմատ զարգացան միջեկեղեցական, միջկրօնական եւ պետական յարաբերութիւնները, Հայ Եկեղեցին նաեւ զարգացուաց միւս յարանուանութիւններուն հետ գործակցութիւնը: Շարժայի եկեղեցին, օրինակ, կը տրամադրուի քրիստոնեայ այլ փոքրամասնութիւններու եւս որոնք տեղուոյն վրայ եկեղեցի չունին: Մինչեւ օրս յոյները, եթովպացի եւ ասորի համայնքները կ'օգտագործեն Շարժայի հայ եկեղեցին: Նախապէս ղպտիներն ու ռուսերն ալ կ'օգտագործէին, սակայն յետագային անոնք կառուցեցին իրենց եկեղեցիները եւ դադրեցան օգտագործելէ հայկական եկեղեցին:

Ապու Տապիի մէջ եկեղեցին գործել սկսաւ 2014ին, իսկ միօրեայ դպրոցը՝ 2016ին: Վերջին տարիներուն ԱՄԷի մէջ յատուկ խորհուրդ մը ստեղծուեցաւ՝ «Ծոցի Եկեղեցիներու Խորհուրդ» (ԾԵԽ) անունով, որուն կազմութեան մէջ մեծ դերակատարութիւն ունեցած է մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, իսկ շրջանի հայոց առաջնորդը երկու շրջան ընտրուած է որպէս ատենապետ նշեալ խորուհրդին եւ ներկայիս անդամ է ԾԵԽի գործադիր վարչութեան:

Ներկայ դրութեամբ շրջանէն ներս կը գործէ աշխուժ միջեկեղեցական կեանք որուն մասնակից են շրջանի գրեթէ բոլոր քրիստոնեայ համայնքները: Ժողովներուն ընդհանրապէս կը քննարկուին քրիստոնեայ համայնքներուն դիմագրաւած մարտահրաւէրները եւ դժուարութիւնները, կը փոխանակուին փորձառութիւնները եւ լուծումներ կը յառաջադրուին՝ ծագած հարցերու շուրջ: Այս իմաստով մեր եկեղեցին իւրայատուկ դերակատարութիւն ունի այս մարզէն ներս յատկապէս օգտուելով Արամ Ա. կաթողիկոսի ունեցած լայն փորձառութենէն:

Նկատելի է նաեւ վերջին տարիներուն զարգացած միջ-կրօնական յարաբերութիւնները, տարբեր կրօններու պատկանող հոգեւոր պետերու հետ՝ երկրի իշխանութեան առաջնորդութեամբ: Այս առումով, համերաշխութեան մթնոլորտը օրինակելի երեւոյթ է, ուր բազմազանութեան մէջ դրական յարաբերութիւններ կը ստեղծուին փոխադարձ յարգանքի հիմքերու վրայ:

Յարաբերութիւնները՝ ԱՄԷի իշխանութեանց հետ, սիրալիր ու յարգալից ընթացք ունին: Անոնք յատկապէս զարգացած են վերջին տարիներուն՝ մեր եկեղեցւոյ հոգեւորականներու ունեցած ներդրումին իբրեւ արդիւնք: Իշխանութիւնները յատուկ հոգատարութեան ոգիով կը յարաբերին հայ եկեղեցւոյ հետ: Ասիկա առաւել նկատելի կը դառնայ մասնաւորաբար միջազգային թէ տեղական համագումարներու, ուր հայ եկեղեցւոյ հոգեւորականներ յաճախ կը մասնակցին իբրեւ ԱՄԷի ներկայացուցիչ:

Թեմէն ներս ազգ. առաջնորդարանի հովանաւորութեան տակ կը գործեն երեք ազգային միօրեայ վարժարաններ.- Ապու Տապիի Արա Խանոյեան Ազգային Միօրեայ Վարժարանը, Շարժահ Յարութ Օհաննէսեան Ազգային Միօրեայ Վարժարանը եւ Տոհայի Մեսրոպեան Ազգային Միօրեայ Վարժարանը: Երեք վարժարաններն ալ ունին իրենց անջատ ահոգաբարձական կազմերը, տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը, որոնք նուիրեալ եւ կամաւոր ծառայութիւն կը մատուցանեն, հիմնական նպատակ ունենալով այս շրջաններուն մէջ հաստատուած մատղաշ սերունդին հայեցի դաստիարակութիւն ջամբել: Կը դասաւանդուին հայերէն լեզու, կրօն եւ հայոց պատմութիւն, կը տրուին նաեւ արտադասարանային պարի, թատրոնի եւ գծագրութեան յատուկ դասեր եւս:

Եզրափակելով՝ ԱՄԷի հայ հաւաքականութիւնները մնայուն հայօճախներու ընթացք չունին: Անոնք յարափոփոխ են, որովհետեւ հիմնուած են տնտեսութեան վրայ: Տարածաշրջանի մէջ հաստատուած հայերը կապուած են զիրենք պաշտօնակոչած ընկերութիւններու: Իսկ երբ ընկերութիւնը դժուարութեան հանդիպի, կամ յանձն առնուած ծրագիրը աւարտի՝ առաջին տուժողներէն կ'ըլլան պաշտօնավարող անձերը, որոնք կ'իյնան գործէ արձակման, կամ գործի տեղափոխման վտանգին մէջ, որով ալ կ'աշխուժանան երկրէն - յաճախ ակամայ - հեռանալու տրամադրութիւնները: Հետեւաբար, այս հայօճախներուն ընդհանուր պատկերը յաճախ կը փոխուի, ուրկէ ալ կը նկատուի անոնց նուազ կայունութիւնը:

THE ARMENIAN CHURCH IN THE ARAB GULF STATES

(Summary)

Bishop Mesrob Sarkissian
ourardou83@gmail.com

The paper narrates the story of establishing the Armenian Apostolic Church in the Arab Gulf States (excluding Kuwait). It details how the prelacy was established, how the two churches were founded and constructed. Furthermore, it explains the role the prelacy plays and the place it has in the sociocultural and national life of the Armenian communities of the said countries. The paper highlights the role the church plays in the interstate, interchurch and interreligious relations of the said countries.



1980ականներ, Շարժայի միօրեայ դպրոցը



1980ականներ, Օշական սրբազան Չոլոյեան կը պատարագէ



Արամ Վեհափառի այցելութիւնը Ապու Տապի, 2014ին







Ապու Տապիի Ս. Հատակաց Եկեղեցին եւ համալիրը



2014 Դեկտեմբեր, ԱՄԷի ներկայ նախագահ, շէյխ Մուհամմէտ Պըն Զաէտ Ալ Նահիանի հետ Արամ Վեհափառին հանդիպումը, եկեղեցւոյ օծման առթիւ, Լիբանանի դեսպանին ընկերակցութեամբ





Շարժայի ոստիկանապետին եւ Եթովպիոյ Եկեղեցիի պաշտօնական պատուիրակութեան այցելութիւնները



Ծոցի Եկեղեցիներու Խորհուրդի նիստը



ԱՄԷի համայնքներու ներկայացուցիչներու ժողովականներ

ԱՄԷի Հայօճախը
(Ակնարկ)

ՅՈԼԱԿ ՊԱՍՄԱՃԵԱՆ
drtsolag@hotmail.com





Ճիշտ է որ առաջին հայերը Ծոցի շրջան եկած են ԺԶ. դարուն, սակայն Ի. դարու երկրորդ կէսին է որ նկատառելի ներկայութիւն կը սկսին դառնալ շրջանին մէջ: Յիրաւի, 1960-70ականներուն եկածներն են որ այսօր կը տեսնենք ամէնուրեք: Ասոնց առաջինները եկած են Երուսաղէմէն, Սուրիա-Լիբանան-Պարսկաստանէն: Ասոնք ընդհանրապէս եղած են արհեստաւորներ: Եւ քանի որ գործի վարձատրութիւնը եղած է լաւ, անոնք ձգած ընտանիք ու հարազատներ, եկած են շրջան, կրցած են դիմանալ կեցութեան անապատային եւ ամայի պայմաններուն, յառաջացուցած իրենց գործերը, ու ժամանակի ընթացքին աճելով իրենց գործերուն մէջ տարբերուած են ուրիշներէ, որով պատճառ եղած են որ իրենք աւելի ծաւալին իրենց գործերուն մէջ, հիմնեն ընտանիք, բերեն իրենց հարազատները, բարեկամները...:

1980ականներէն սկսեալ այս գործով եկած հայերը կը սկսին իրարու քիչ մը աւելի մօտենալ, եւ կազմակերպուիլ իբրեւ հաւաքականութիւն, կազմակերպել փոքր ձեռնարկներ, հաւաքներ, ապա եւ եկեղեցիին ու անոր շուրջ համախմբուած տարրերով համայնք գոյացուցած՝ թափ առած է ներքին կեանքը հայօճախին, մեծի տանն Կիլիկիոյ հայոց կաթողիկոսութեան հովանաւորութեան տակ, առանց կուսակցական, յարանուանական խըտրութեան ու նեղմիտ սահմանափակումներու: Այս պայմաններով հայօճախը ձեւաւորուած է եւ հետեւողական ջանքերով եկեղեցական եւ ազգային կեանքը դժուար, բայց երազներով ու յոյսերով լեցուն ընթացք առած է:

2000ին այս աշխատանքը աւելի թափ կ'առնէ քանի որ հոն հաստատուողներու յաջորդ սերունդը՝ զաւակները, երիտասարդները, ուսանած են

ոմանք դուրսը, ուրիշներ՝ երկրին մէջ եւ վերադարձած նոր գիտելիքներով: Ընդհանրապէս այս շրջանին ուսեալ եւ համալսարանաւարտ նոր եկողներ եղած են: Ասիկա պատճառ եղած է որ հայօճախին մշակութային թէ այլ ներդրումները աւելի արդիւնաւէտ ըլլան: Պէտք է աւելցնել նիւթական կարելիութիւններուն աճման եւ շատացման պարագան եւս: Իսկ վերջին շրջանին, առաջնորդարանին հաստատումէն ետք, աւելի ջանքեր թափուած են, աւելի կազմակերպուածութիւն կայ: Սուրիա-Լիբանան-Հայաստանի այլազան դժուարութիւնները պատճառ եղած են որ աւելի մեծ թիւով հայեր գան եւ ներդնեն իրենց փորձը, կարողութիւնը այս երկրին մէջ: Ասոնք ալ օգնած են որ հայկական կեանքը ծաղկի ԱՄԷի մէջ:

Առհասարակ համարկումը՝ ըստ տարբեր տեսական մօտեցումների, ենթադրում է բարդ եւ երկարատեւ գործընթաց[2]: Երբ քննում ենք Սփիւռքում համարկման առանձնայատկութիւնները, առաջին հերթին անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թէ համարկման ինչպիսի՛ մակարդակների ու շրջանակների մասին է խօսքը: Այս առումով, առաջ է գալիս անհրաժեշտութիւն՝ զատելու երեք հիմնական շրջանակներ.- ա) անհատների ներառումն ու համարկումը միկրոմակարդակում, բ) անհատների ներառումը իրենց ազգային կամ այլ տեսակի խմբերում եւ գ) համայնքի ներառուածութիւնը ընդունող միջավայրում: Այսպէս, Սփիւռքում համարկման հանգրուանները կարող ենք բնութագրել որպէս անհատական յարմարուողականութեան, համայնքային համախմբուածութեան եւ աւելի լայն ընդունող հասարակութեան մէջ ներգրաւուածութեան բարդ կապերի փոխազդեցութեամբ: Յաջող համարկումը պահանջում է ջանքեր՝ բոլոր մակարդակներում, ներառեալ՝ անհատական յարմարուողականութիւնը, հա-

---

[1] *Ծխ.*- Ուսումնասիրութեան համար հումք հանդիսացած 14 հարցազրոյցները կատարուած են Քաթարի մէջ, Հոկտեմբեր-Նոյեմբեր 2019ին, Դալար Եագուպեան-Սաչեանի գլխաւորութեամբ, որուն շնորհակալ ենք:

[2] Blanca Garcés-Mascareñas, Rinus Penninx, "The Concept of Integration as an Analytical Tool and as a Policy Concept," in *Integration Processes and Policies in Europe*, 2016, էջ 11–29:

մայնքային ներառուածութիւնը եւ գործուն մասնակցութիւնը՝ ընդունող երկրի ընկերային, տնտեսական, մշակութային եւ քաղաքական կեանքում:

Քաթարի հայերի պարագայում մենք գործ ունենք երեք հիմնական ուղղութիւնների հետ.-

1) Ներհայկական համայնքային համարկում, որի մէջ կարող ենք քննարկել արդէն քիչ թէ շատ ձեւաւորուած հայօճախի ներքին իրավիճակը, դրանում ներառուած անհատների կապերը եւ ներհայկական կապուածութիւններն ու համերաշխութիւնը: Այստեղ շատ կարեւոր է քննարկել այն հարցը, թէ նորեկ հայ գաղթականները ինչ հնարաւորութիւններ ու ցանկութիւն ունեն ներգրաւուելու հայկական միջավայր, ինչ միջոցներ են ներդնում հայկական միջավայրում համարկուելու համար: Սա Քաթարի հայերի շրջանում ստեղծում է իւրայատուկ իրավիճակ, քանի որ ներհամայնքային հարցերի օրակարգերը կարող են փոփոխուել՝ ըստ նոր ներգաղթող հոսքերի: Սակայն սա մշտական եւ պարտադիր պայման չէ, եւ նոր ներգաղթող անհատները յաճախ կարող են չներառուել հայկական միջավայր եւ իրենց համարկման ուղին անցնել անհատաբար:

2) Յաջորդ ուղղութիւնը «հայօճախ-ընդունող միջավայր» համարկման խնդիրն է: Այստեղ խօսքն այն մասին է, թէ արդէն ձեւաւորուած հայօճախն ի՛նչ կարգավիճակում է, ունի՞ արդեօք նշանակալի ներուժ եւ միջոց՝ ներգրաւուելու տուեալ հասարակութեան մէջ՝ ապահովելով Քաթարի հայերի «դէմքը» եւ զբաղեցնելով այդ հասարակութեան մէջ իր տեղը՝ նաեւ իրաւական կարգավիճակը, տնտեսական դիրքն ու մասնագիտական զբաղուածութիւնը, մշակութային դերը եւն.:

3) Յատկապէս նոր ներգաղթեալների դէպքում, մենք գործ ունենք անհատական համարկման կրկնակի գործընթացի հետ: Մի կողմից ներգաղթեալը պէտք է ներառուի տեղի հիմնահոսանքային (mainstream) միջավայր՝ ողջ ընկերային, մասնագիտական, մշակութային ու այլ կապերով, միանայ ընդունող երկրի աւելի լայն հասարակութեանը համարկուելու գործընթացին՝ մասնակցութիւն ունենալով ընդունող երկրի քաղաքացիական կեանքին, տեղական օրէնքներին եւն.: Միւս կողմից, ներգաղթեալը պէտք է ներառուի հայկական միջավայր, որտեղ սերտի եւ ընդունի հայօճախին յատուկ վարքագծեր, արժէքներ եւն.: Այսինքն, տեղի է ունենում ընդունող երկրի եւ հայօճախի մշակութային նորմերին, արժէքներին եւ գործելակերպին յարմարեցման գործընթաց: Սա կարող է ներառել տեղական լեզուի սերտումը, ընկերային սովորոյթները հասկանալը եւ նոր մշակութային ենթախորքում անհատական վարքագծի յարմարեցումը եւն.:

Ակնյայտ է, որ ներգաղթեալների իւրաքանչիւր նոր խումբ կամ առանձին անհատ ունի իր ելակէտային փորձառութիւնը՝ հիմնուած իր նախորդ միջավայրային առանձնայատկութիւնների վրայ, ինչը շատ կարեւոր ուղե-

նիշ է համարկման գործընթացն անցնելու ճանապարհին: Քաթարի հայերի պարագայում հոսքերի տարբերութիւնները եւս կարող են առաջ բերել համարկման նմանօրինակ առանձնայատկութիւններ: Երբեւէ սփիւռքեան փորձառութիւն չունեցած անհատները կամ խմբերը, դժուարութեամբ են կարողանում, կամ գրեթէ չեն ձգտում ներառուել հայօճախի միջավայր, որտեղ օրինակ կարող են առաջնային խնդիրներ սահմանուել ազգային ինքնութեան, լեզուի եւ մշակոյթի պահպանման հարցերը եւ դառնալ առօրեայ կենցաղի անբաժանելի մասը: Այսպիսի դժուարութեան են հանդիպում հիմնականում ՀՀից տեղափոխուած հայերը: Այլ խմբերի կամ անհատների դէպքում (օրինակ Միջին Արեւելքից, Իրանից եւն.), ներհայկական միջավայրը կարծես դառնում է պարտադիր օղակ տեղական միջավայրի հետ կապ հաստատելու եւ ընտելանալու համար: Փորձը ցոյց է տալիս, որ ներհայօճախային համարկումը նաեւ ներառում է աջակցութեան ցանցերի աշխուժացում, որի միջոցով նորեկները ստանում են աջակցութիւն, տեղի է ունենում միջոցների փոխանակում եւ վերաբաշխում: Քաթարի հայերի պարագան իւրայատուկ է հենց այն իմաստով, որ կրում է ներգաղթի խառը խօսքեր եւ այստեղ կարող են բացայայտուել նոր տեսակի համայնքի առաջացման, դրա անդամների համարկման դեռեւս չբացայայտուած կողմերը:

Քաթարի հայերի մասին առկայ տեղեկատուութիւնը մշտապէս ներկայացուած է ընդհանրական ձեւով՝ տեղաւորուելով Ծոցի արաբական երկրների հայօճախներ եզրոյթում[3]: Առանձին հետազօտութիւնները Քաթարի հայերի վերաբերեալ սակաւաթիւ են, ինչն էլ ստիպում է յատուկ ուշադրութիւն դարձնել դրան: Այդպիսի ընդհանրական եզրոյթի մէջ տեղաւորելիս, նաեւ առաջանում է այն խնդիրը, որ Քաթարի հայերի մասին առկայ տուեալները գրեթէ միշտ հեղհեղուկ են եւ ոչ-ճշգրիտ, առանց իրական չափումների: Այս յօդուածում փորձ է արւում ներկայացնել Քաթարում հայերի հայօճախային կեանքի եւ համարկման առանձնայատկութիւնները՝ կապուած մի շարք գործօնների ու պայմանների հետ: Տուեալները հաւաքագրուել են որակական մեթոդաբանութեամբ: Իրականացուել է *խորին* եւ *փորձագիտական հարցազրոյցների*[4] արդիւնքների եւ երկրորդային

[3] Լիլիթ Յարութիւնեան, Արաքս Փաշայեան, *Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ*, ՀՀ Սփիւռքի նախարարութիւն, Երեւան, 2012:

[4] Յօդուածում վերլուծուել են Պէյրութի Հայկազեան համալսարանի Սփիւռքի ուսումնասիրութեան կենտրոնի կողմից իրականացուած ուսումնասիրութեան տուեալները: Որակական հարցազրոյցների նիւթերի լայն բազմազանութեան մէջ փորձ է արուել դուրս բերել մասնաւորապէս համարկման խնդրի շուրջ առկայ տուեալներն ու կարեւոր առանձնայատկութիւնները: Հեղինակի կողմից եւս իրականացուել են խորին հարցազրոյցներ հեռավար ձեւով՝ ինչը թոյլ չի տուել տե-

տուեալների վերլուծութիւն, առկայ գրականութեան ուսումնասիրութիւն: Յօդուածում առաջ են քաշւում ներքոնշեալ հիմնական հետազօտական հարցերը, որոնք միմեանց հետ փոխկապուած են եւ փոխլրացնող.

- ներկայացնել Քաթարի հայօճախի ձեւաւորումը, պատմական ընթացքն եւ ներկայ իրավիճակը,
- ցոյց տալ Քաթարի՝ որպէս հիւրընկալող երկրի դերը հայերի համարկման գործընթացում,
- վեր հանել հայերի ներգաղթի հոսքերի առանձնայատակութիւնները, դրանց ազդեցութիւնը,
- քննարկել Քաթարում հայերի ներառուածութեան տարբեր կողմերը՝ ընկերային, մշակութային, տնտեսական դիտանկիւններով,
- քննարկել Քաթարի հայերի համարկման մակարդակներն ու հնարաւորութիւնները:

Սփիւռքում համայնքային կեանքի եւ համարկման խնդիրները մշտապէս գտնւում են հետազօտողների ուշադրութեան կենտրոնում եւ սփիւռքեան իրականութեան մէջ այդ գործընթացները տարբերւում են միմեանցից՝ մի շարք գործօնների բերմամբ: Այդպիսի գործօններից են՝ մի կողմից ընդունող երկրի առանձնայատկութիւնները (կրօնական, մշակութային, քաղաքական, ընկերատնտեսական յատկանիշեր, փոքրամասնութիւնների նկատմամբ վարուող քաղաքականութիւն եւն.): Միւս կողմից՝ առկայ են գործօններ, որոնք կապուած են ներգաղթող խմբի առանձնայատկութիւնների հետ (ներգաղթի պատճառ, ընկերային-ժողովրդագրական, մասնագիտական եւ այլ բնութագրիչներ): Այս գործօնների համախումբն էլ սովորաբար պայմանաւորում է հիւրընկալող երկրներում տարբեր խմբերի եւ/կամ անհատների համարկման գործընթացը:

Ներգաղթող անհատի կամ խմբի ներառումը տուեալ երկրում երկկողմանի գործընթաց է[5], քանի որ մի կողմից խումբը փորձում է պահպանել սեփական ինքնութիւնն ու մշակոյթը, միւս կողմից ընկերային առաջադիմութիւն ապահովելու կամ տնտեսական վերելքների համար փորձում է իւրացնել տեղի մշակոյթը:

ՔԱԹԱՐԻ ՀԱՅՕՃԱԽԻ ՁԵՒԱՒՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՆԵՐԿԱՅ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հիւրընկալող երկիրը կարեւոր դերակատարութիւն ունի հայօճախի ձեւաւորման, դրա կառուցուածքի ու բովանդակութեան վրայ: Քաթարը՝ որպէս հիւրընկալող երկիր, ունի մի շարք առանձնայատկութիւններ:

ղում դիտարկումների միջոցով դուրս բերել որոշ կարեւոր առանձնայատկութիւններ Քաթարում հայերի կենսակերպի վերաբերեալ:

[5] Immigrant Integration as a Two-Way Process: Translating Theory into Practice, https://www.researchgate.net/publication/279198579_Immigrant_Integration_as_a_Two-Way_Process_Translating_Theory_into_Practice :

Ըստ 2023ի մարդահամարի, Քաթարի բնակչութիւնը շուրջ 2,9 միլիոն է[6]: Քաթարի բնակչութեան միայն 313,000ն ունեն քաղաքացիութիւն, իսկ մնացած 2,3 միլիոնը այլ վայրերից տեղափոխուածներ են: Պաշտօնական լեզուն արաբերէնն է, իսկ կրօնը՝ մահմետականութիւնը:

Քաթարը, նաեւ Ծոցի արաբական այլ միապետութիւններն, աչքի են ընկնում իրենց պահպանողական եւ խիստ կրօնական օրէնքներով: Նրանց օրէնքները ոչ-տեղաբնիկների համար մի շարք սահմանափակումներ ունեն, այդ թւում՝ քաղաքացիութիւն ձեռք բերելու արգելքը: Հայերը, ինչպէս այլ ոչ-տեղաբնիկները, օգտւում են ժամանակաւոր կեցութեան իրաւունքից: Լինելով իսլամական պետութիւն, Քաթարը չի թոյլատրում քրիստոնեայ փոքրամասնութիւններին զբաղեցնել հասարակական բարձր դիրքեր երկրում: Այս առումով, առաջին փաստը, որ պէտք է նշենք այն է, որ հայերը Քաթարում չունեն ազգային կամ կրօնական փոքրամասնութեան կամ համայնքի կարգավիճակ: Այդպիսով Քաթարում ապրող տարբեր քրիստոնեաները միասնաբար համարւում են կրօնադաւանանքային խմբեր: Բացառութեամբ այն խմբերի, որոնք թուով փոքր չեն եւ ունեն համայնքի կարգավիճակ: Եթէ ուսումնասիրութեան ենք ենթարկում Քաթարի բնակչութեան այլազգիների ցուցանիշերը, ապա հայերը առանջնային դիրքերում չեն: Այլազգիների թւում, ըստ 2017ի տուեալների, Քաթարում առանձնանում են հնդիկները, վերջիններից յետոյ միւս խոշոր էթնիկ խմբերն են նեպալցիները, բանգլադէշցիները, ֆիլիպինցիները, եգիպտացիները, պակիստանցիները եւն.[7]:

Հայօճախը Քաթարում ունի մօտ 50 տարուայ պատմութիւն, իր թուաքանակով փոքր է եւ ներառում է տարբեր տարածաշրջաններից գաղթածների եւ հայաստանցիների խմբեր: Ըստ մի շարք փորձագիտական տուեալների, Քաթարի հայերի հիմնական խմբերը ներգաղթել են Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Իրանից, Յորդանանից եւ այլ երկրներից: Ներգաղթեալների տեղափոխման հիմնական պատճառները կապուած են եղել աշխատանքի ու ապրուստի բարենպաստ պայմանների որոնման եւ տնտեսական բարեկեցութեան հասնելու հետ: 1990ականներից սկսած Քաթար ներգաղթած հայերի մի մասը Հայաստանի Հանրապետութիւնից է:

Մինչեւ 2012 արուած ժողովրդագրական հարցումները ցոյց են տուել, որ այնտեղ ապրում է ընտրելու իրաւունք ունեցող ընդամէնը 228 հայ, իսկ հայերի ընդհանուր թիւն այդ պահին հաշուարկուել է մօտ 350-500 մարդ:

6 Monthly Figures on Total Population, https://www.psa.gov.qa/en/statistics1/StatisticsSite/pages/population.aspx?p=1 :

7 https://minorityrights.org/country/qatar/ :

Սակայն դեռեւս 2012ի միտումները ցոյց էին տուել, որ մօտ 4-5 տարիների ընթացքում հայերի թիւը կարող է հասնել 1000ի[8]:

Ըստ մի շարք փորձագիտական աղբիւրների, Քաթարի հայերի թիւը հաշուարկուած չէ յստակօրէն, այդ թիւը տատանւում է 450ից ընդհուպ մինչեւ 1000ի շրջանում, գրանցուած եւ չգրանցուած հայերի թուաքանակով, որոնք հիմնականում բնակւում են մայրաքաղաք Դոհայում: Սա իհարկէ ունի այն բացատրութիւնը, որ բացի այն, որ Սփիւռքը ինքնին յարափոփոխ է, միաժամանակ նշուած հայօճախն ունի իւրայատկութիւն՝ անընդհատ համալրուելու եւ պարպուելու: Ինչպէս հարցազրոյցի մասնակիցներից նշում են. «*Եթէ հաշուարկն անենք այն պահին, երբ Արեւելքի տարբեր երկրների ճգնաժամերի, պատերազմների կամ այլ պատճառով գալիս են, այդ պահին թիւը կը հասնի առաւելագոյնի, իսկ որոշ ժամանակ անց ներգաղթածներից որոշներն արդէն լքած կը լինեն երկիրը*»[9]: Հետեւաբար, ըստ հիմնական հաշուարկների առկայ է 400-450 գործող հայ, ում կարելի է համարել հայօճախի կեանքում գործուն քաթարահայեր: Սակայն ցանկացած թիւ եւ հաշուարկ պարունակում է հարցական երեսակ եւ միայն խոր հետազօտութեան պարագայում կարելի է յարաբերականօրէն ճշգրիտ արձանագրել այդ թիւը:

ՀԱՅԵՐԻ ԿԵՐՊԱՐԸ ՔԱԹԱՐՈՒՄ. ԻՆՔՆԱԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

Համարկման մասին առաւել խոր պատկերացում կազմելու համար կարիք կայ քննարկել հայերի հաւաքական կերպարի մասին պատկերացումները հիւրընկալող երկրում: Ներգաղթի նշուած ցրիւ եւ միաժամանակ առանձին խմբաւորումները ձեւաւորել են խառը համայնք: Այդ խմբերի առանձնայատկութիւններն ազդել են հայօճախի վերաբերեալ ընկալումների վրայ, սակայն չեն ստեղծել մէկ ընդհանուր պատկեր: Ըստ հարցազրոյցի մասնակիցների՝ ներգաղթի հոսքերի մէջ առանձին անհատներ կարողացել են թողնել հայկական անուան շուրջ բնորոշումներ: Հարցազրոյցներում մատնանշւում է հետեւեալը.

> Երբ գիտեն, որ հայ են, ահազանգ կարծես լինի - դրական ահազանգ է տեղացիների համար, ինչը շատ կարեւոր է հայերի յաջողութեան համար:
> Հին էմիրի մօտ մեծ մաս կը կազմէին հայերը՝ նկարիչներ կամ այլ պաշտօնեաներ, դրանից եկել է դրական վերաբերմունքը մեր նկատմամբ[10]:

Այս բնորոշումների ձեւակերպման մէջ յատկապէս նշանակալի է եղել Քաթար տեղափոխուած առաջին հայերի դերակատարութիւնը: Կարեւոր է նաեւ հաշուի առնել այն, որ Քաթարի բնակչութիւնը սրանից 50 տարի

---

[8] Qatari Armenians Strengthen Community Structures, 28 March, 2008, http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=734jhz67 :

[9] Խորին հարցազրոյցի տուեալներից, Քաթար, 2019:

[10] Խորին հարցազրոյցի տուեալներից, Քաթար, 2019:

առաջ դեռեւս մեծ չէր եւ հայկական ներկայութիւնն էլ տեսանելի էր: Այս իմաստով, տարիների ընթացքում ձեւաւորուել են մի շարք կարծրատիպեր հայերի մասին: Հայերին վերագրում են այնպիսի որակներ, ինչպիսիք են ուսեալ եւ կիրթ լինելը, լեզուների իմացութիւնը, արհեստների իմացութիւնը: Սա ունի իր բացատրութիւնը. ինչպէս նշում է հետազօտութեան մասնակիցների մեծ մասը, դա յատկապէս կապուած է եղել սիրիահայ եւ լիբանահայ գաղթականների հետ, ովքեր տիրապետել են արաբերէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուների, ինչպէս նաեւ տարբեր արհեստների: Եւ այս լոյսի ներքոյ նոյնիսկ նոր ներգաղթող հայերի՝ լեզուների չիմացութեան դէպքերը զարմացնում են տեղաբնիկներին:

> Մեծ տարիքի մարդիկ հայերին ճանաչում են որպէս լաւ արհեստաւորներ, մերոնց մէջ էդ առումով լիբանանցիներին գիտեն, իսկ հայաստանցիներին քիչ գիտեն, բացառութեամբ նրա, որ բժիշկների խմբին սկսեցին ճանաչել[11]:

Մտաւոր աշխատանքի ոլորտում եւս տեղի բնակիչները տեսնում են հայերին եւ գնահատում նրանց ջանքերը: Ըստ հարցազրոյցների նիւթերի՝ քաթարցիները աւելի շատ են ձգտում հայի հետ աշխատել եւ ունեն ընկերային վստահութիւն հայի հանդէպ. «*...քանի որ հովանաւորչութեամբ պէտք է աշխատես տեղացու հետ, ապա հային աւելի հեշտ կը համաձայնեն հովանաւորեն կամ գործընկեր դառնան*»[12]:

ՀԱՄԱՐԿՄԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐ

Համայնքային կեանքը արտայայտում է գաղթի նախնական հոսքերի համարկումը տուեալ հասարակութեան մէջ, սակայն համարկման գործընթացը երբեք չի դադարում, եւ միքանի շրջափուլերով ու մակարդակներով է ընթանում: Յաջող համարկման արդիւնքում հայօճախները գտնում են ընդունող երկրներում իրենց խմբային կարգավիճակը եւ ձեւաւորում կարգավիճակից բխող կայուն զարգացող յարաբերութիւններ՝ շրջապատող ազգերի հետ, ինչը թոյլ է տալիս ընդունող երկրում ստանալ լայն հնարաւորութիւններ եւ ունենալ ներկայացուածութիւն:

Հաշուի առնելով, որ Սփիւռքը մշտափոփոխ է, եւ պարբերաբար նոր հոսքերը ունենում են համարկման իրենց ներուժն ու հնարաւորութիւնը, այդ գործընթացը անցնում են բոլոր ներգաղթեալները, անգամ այն հատուածը, որը հայօճախին մաս չի կազմում եւ չունի հայօճախային ներգրաւուածութիւն: Առանձին ներգաղթեալը կարող է անցնել համարկման փուլերն առանց ներառուելու հայօճախի միաջավայր: Եւ Սփիւռքի տարբեր հատուածների համարկման փորձառութիւններից խօսելիս պէտք է յիշել, որ կան տարբերութիւններ անգամ նո՛յն երկրում տարբեր սերունդների, տարբեր վայրերից ներգաղթած հոսքերի միջեւ:

---

[11] Խորին հարցազրոյցի տուեալներից, Քաթար, 2019:

[12] Խորին հարցազրոյցի տուեալներից, Քաթար, 2019:

Սփիւռքեան համարկման գործընթացը կարելի է դիտարկել միքանի կողմերով՝ ա) ներգաղթողի համարկումը տեղի հայօճախում եւ բ) ընդունող երկրի մէջ: Խօսքը գնում է անհատական, համայնքային եւ ներպետական մակարդակների մասին: Սփիւռքում ներգաղթի առաջին հոսքերը, որոնք ձեւաւորում են խմբային շահեր եւ հետաքրքրութիւններ, կարողանում են հասարակութեան մէջ մտնել եւ զբաղեցնել որոշակի մշակութային, ընկերային-մասնագիտական կամ տնտեսական շերտ: Իսկ անհատական մակարդակով համարկման ժամանակ յաճախ քննարկւում է նաեւ ձուլման տեսանկիւնը:

Քաթարում հայերը հիմնական միատարր չեն եւ ունեն աշխարհագրական-աշխատանքային-ընկերային-տնտեսական ոչ-միատեղ տեղակայում, քանի որ գաղթի պատճառը եւ ելման վայրն էլ ընդհանուր չեն: Բացի դա, հայօճախի տարբեր խմբեր գալիս են իրենց խնդիրներով, տեսլականով եւ առանջնահերթ է դառնում համարկումն անհատական մակարդակում: Համարկման տեսութիւններում յատկապէս մեծ ուշադրութիւն է դարձւում այն իրողութեան, որ համարկումը փուլային գործընթաց է եւ լիարժէք համարկման համար երկարատեւ ժամանակահատուած է անհրաժեշտ[13]: Սակայն Քաթարի հայութեան խմբերը շուրջ 5 տասնամեակի ընթացքում ոչ թէ սերնդէսերունդ շարունակել են համարկուել, այլ անընդհատ ձեւով նախկին քաթարահայերի մեծ մասն արտագաղթել է, իսկ նոր հոսքերը համալրել են:

ՀԱՅՕՃԱԽ-ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿԻՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծոցի արաբական երկրներում, այդ թւում նաեւ Քաթարում, հիմնականում հպատակութիւն, քաղաքացիութիւն ձեռք բերելը գրեթէ անհնար է: Այս իմաստով, հայօճախը չի կարող արմատաւորուել երկրի մէջ՝ որպէս հաւաքականութիւն: Այս պատճառով էլ հայօճախում քիչ թէ շատ կայացած ձեռնարկատէրերը կամ նիւթական հարուստ միջոցներով հայերը այլ երկրներում տուն կամ սեփական գործ հիմնելուն են միտուած:

Համարկման արձանագրման համար կարեւոր է քննարկել տուեալ երկրում հայերի մասնագիտական կամ տնտեսական ներառուածութիւնը, ընդունող երկրի լեզուի իմացութիւնը, ազգամիջեան ամուսնութիւնները, ընկերային-մշակութային ներգրաւուածութիւնը եւ առօրէականութեան դրսեւորումները:

Համարկման ուսումնասիրման ցուցանիշերից է ընդունող երկրի լեզուի իմացութեան մակարդակը[14]: Լեզուի իմացութիւնը տալիս է լայն հնարաւո-

---

[13] https://www.diaspora-centre.org/wp-content/uploads/2016/09/Consultation-Meeting-Report.pdf :

14 Is 'Language as the Key to Integration' a Myth? https://www.imiscoe.org/news-and-blog/phd-blog/1010-is-language-as-the-key-to-integration-a-

րութիւններ ընդգրկուելու այդ հասարակութեան տարբեր կառուցուածքների ու յարաբերութիւնների մէջ: Սփիւռքի հայօճախներում տան խօսակցական/գործածական լեզուի, տարբեր լեզուների տիրապետման հարցերին ուղղուած ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս լեզուական համարկումի աստիճանը, որը թոյլ է տալիս նաեւ հասկանալ տուեալ հայօճախի անդամների ապագային միտուած հեռանկարները: Այստեղ հարկ է ուշադրութիւն դարձնել հետեւեալ պնդմանը, որը հարցազրոյցների ընթացքում պարբերաբար կրկնւում էր՝ «*Մենք Լիբանանում կամ Սիրիայում կարող էինք գործ ունենալ միայն հայի հետ: Այստեղ շատ բազմազգ են եւ այսպէս թէ այնպէս օտարների բազմազանութեան հետ պէտք է շփուես, բայց միշտ չէ, որ տարբեր լեզուների լաւ մակարդակի են տիրապետում հայերը*»: Տուեալներից պարզ է դառնում, որ այլ լեզուի իմացութիւնը միշտ չէ, որ շրջապատող միջավայրին յատուկ լեզուն է՝ այս դէպքում՝ արաբերէնը. այն կարող է լինել անգլերէնը կամ որեւէ այլ լեզու, որի միջոցով կարող են գործնական եւ աշխատանքային կապեր հաստատել: Այսինքն, լեզուի իմացութեան մակարդակը սահմանւում է հիմնականում մասնագիտական շփումների նպատակով: Այլ բան է, երբ խօսւում է երեխաների կրթութեան եւ լեզուի իմացութեան մասին: Այս առումով հետազօտութեան մասնակիցները նշում են, որ երեխաների լեզուական կողմնորոշումների վրայ յատկապէս ազդում է այլ երկիր տեղափոխուելու մտադրութիւնը. առաջնային է դառնում արտագաղթի երկրի լեզուի իմացութիւնը:

Համարկման գործընթացում կարեւոր է դիտարկել նաեւ քաղաքական-քաղաքացիական եւ տնտեսական ներգրաւուածութիւնը[15]: Առաջինի պարագայում հայերը ունեն նուազ մասնակցութիւն եւ որեւէ ձեւով չեն արտայայտում իրենց ներգրաւուածութիւնը քաղաքական կամ քաղաքացիական կեանքում՝ հաշուի առնելով երկրի կողմից թելադրուող պայմանները: Սակայն այլ է պարագան տնտեսական համարկման դէպքում: Այստեղ մենք գործ ունենք ինքնահոս գործընթացի հետ եւ տնտեսական համարկման խնդիրը ներգաղթեալների համար դառնում է իրենց կենսակերպի կայունութեան կարեւորագոյն գործօն: Սովորաբար ներգաղթի երկրի ընտրութեան մէջ նոյնպէս կարեւոր դերակատարում ունի այդ երկրի տնտեսական շուկայում տեղաւորուելու եւ ֆինասնական եկամտաբերութիւն ձեռք բերելու հեռանկարը: Եւ ի տարբերութիւն օրինակ համարկման միւս՝ մշակութային, լեզուական կամ այլ բաղադրիչների, տնտեսական համարկումը դառնում է ինքնաբուխ գործընթաց: Միեւնոյն ժամանակ պէտք է հաշուի առնել այն փաստը, որ տնտեսական համարկման պարագայում շատ յաճախ երկիրն ինքն է թելադրում ներգաղթեալների տեղաւորման ուղղու-

myth#:~:text=In%20many%20publications%20in%20the,identities%20(Esser%2C%202006) :

[15] https://journals.openedition.org/samaj/7728 :

թիւնը եւ հնարաւորութիւնները, որոնք կարող են ամրագրուած լինել ոչ միայն հասարակական նորմերով, այլ նաեւ որոշակի օրէնքներով:

Հայերի տնտեսական ներգրաւուածութիւնը իրականանում է որոշակի-օրէն, եւ այստեղ կան գործունեայ քաթարահայեր գործարարութեան մէջ, որոնց արտադրանքը կամ բրենդը որոշակիօրէն հայկական կերպար է ստեղծել Քաթարում (Սթիւտիօ Քաթար, Մամիկ ռեստորան...), ծառայութեան, բժշկութեան, առեւտրի ոլորտներում եւս նկատւում է քաթարահայերի եռանդուն մասնակցութիւն: Սակայն այս ներգրաւուածութեան մեծ մասն ունի ժամանակաւոր բնոյթ, եւ ինչպէս հարցազրոյցի մասնակիցներն են նշում, «*այստեղ գործը մերը չէ, միայն գործընկերոջ հետ է, եւ վաղուայ օրուայ մասին մտածողը մէկ այլ երկրում պէտք է բացի իր գործը եւ եր գցի գումար*»[16]:

Հայօճախի առանձնայատկութիւններից է նաեւ այն, որ հայերի հիմնած ձեռնարկութիւններում միշտ չէ, որ աշխատաւորները հայ են եւ նման պահանջարկ չկայ: Ըստ գործարար հայերի տրուած պատասխանների՝ այս միտումը կապուած է ոչ թէ վստահութեան բացակայութեան, այլ նիւթական կողմի եւ մշտական աշխատող ունենալու խնդրի հետ: Բացի դա, երկրում պարտադիր պայման է տեղացու հետ գործարարութիւն հիմնելը: Սրանից բխում է, որ անձնային մակարդակով համարկումը երկրի ներսում առաւել արագ է ընթանում, քան օրինակ հայօճախի համարկումը:

Համարկման համար միւս կարեւոր չափումը կարող է լինել խառնամուսնութիւնների միտումը[17], որի տոկոսն - ըստ հարցուողների – բաւականին մեծ է, սակայն կրկին յստակ թուեր ու տուեալներ չկան, նոյնիսկ փորձագիտական մակարդակում:

Եթէ դիտարկենք նոր ներգաղթեալների համարկումը հայօճախին, հայկականութեան տարածքում, ապա պէտք է նշել, որ այդ հայկականութեան տարածքները հիմնականում չորսն են՝ ագգային վարչութիւնը, Եկեղեցին, Մեսրոպեան վարժարանը, հայկական դեսպանատունը: Հայօճախի կեանքի ընթացքը պայմանաւորուած է ներգաղթողների առանձնայատկութիւններից: Մի կողմից այստեղ հաստատուած հայերը ներգաղթել են հիմնականում Մերձաւոր Արեւելքի հայաշատ հայօճախներից՝ իրենց հետ բերելով հայութեան հաւաքական կեանքի կազմակերպման, ինքնութեան վերարտադրութեան 'ելման կէտ-հայօճախի' փորձառութիւնը, միւս կողմից՝ ՀՀից կամ այլ յետխորհրդային տարածքներից յատուկ համաձայնագրերով տեղափոխուածներն են, ովքեր չունեն համայնքային կեանքի փորձառութիւն: Վերջին տարիներին հայաստանցիների եռանդուն կեն-

[16] Խորին հարցազրոյցի տուեալներից, Քաթար, 2019:

[17] https://www.academia.edu/57483265/Toward_building_a_conceptual_framework_on_intermarriage :

սակերպը ցոյց է տալիս նրանց վարքային փոփոխութիւնը՝ ընդհուպ մինչեւ ազգային վարչութեան մէջ ներկայացուցիչ ունենալը: Այս առումով կարեւոր դերակատարութիւն ունի հայկական դեսպանատան բացումը Քաթարում, որը կապող օղակ կարծես լինի աւանդական հայկական համայնքների ներկայացուցիչների եւ հայաստանցիների միջեւ: Չնայած դրան, հարցուողներից շատերը նշում են հայաստանցիների ոչ-բաւարար մասնակցութիւնը հայօճախի կեանքում:

Հայօճախին համարկուելու առումով կարելի է քննարկել հետազօտութեան մասնակիցների կողմից մատնաշուած 3 հիմնական ուղղութիւնների կարեւորումը՝ կրթական կեանք, մշակութային կեանք, կրօնական կեանք: Սրանք բոլորն էլ իհարկէ հիմնուում են մէկ ընդհանուր գաղափարի վրայ՝ ընկերային ներառման վրայ: Այսինքն հիմնական դիտարկումը կապուած է հայերի տարբեր շերտերի համար դրանց միջոցով ընկերային կապուածութիւն եւ դաշտ ստեղծելուն: Սակայն ինչպէս արդէն նշուեց, ունենալով տարբեր փորձառութիւններ՝ իւրաքանչիւր շերտ, խումբ, անհատ այս հնարաւորութիւնները կարող է իրացնել տարբեր ձեւով: Օրինակ, հայաստանցիների կողմից հայօճախի միջոցառումներին մասնակցութիւնը եւ դրամահաւաքները, մասնաւորպէս ինքնութեանը միտուած ձեռնարկները, չեն կարող կազմել իրենց առօրէականութեան մաս: Միաժամանակ կայ նաեւ այն ընկալումը, որ հայօճախը փոքր է, իսկ ֆինանսական եւ նիւթական առումներով տարբերութիւնները բաւական մեծ են, այդպիսով տարբեր շերտերի համար կայուն ձեւով այլընտրանքային ձեռնարկներ կազմակերպելը բաւական բարդ է դառնում: Այստեղ մատնանշւում է ձեռնարկների յաճախականութեան կարեւորութիւնը, քանի որ երբ կայուն յաճախականութեամբ կազմակերպուող միջոցառումներ, ձեռնարկներ չկան, ապա հայօճախային կեանքը համապատասխանաբար գործուն պահել չի ստացւում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Քաթարահայերի մէջ ակնյայտ են դառնում այնպիսի ընդհանուր եւ առանձնայատուկ կողմեր, որոնք բնորոշ են նոյնատիպ յատկանիշերով, ինչպէս նաեւ տեղական առանձնայատկութիւններով այլ պարագաների համար եւս: Տեսականօրէն կարելի է պնդել, որ Սփիւռքում համայնքային կեանքի ձեւաւորման եւ հայօճախի կայուն զարգացման համար անհրաժեշտ պայման է դառնում միջուկային խմբի կազմաւորումը՝ բաղկացած տուեալ երկրում համարկուած կամ դեռեւս համարկուող անհատներից, ընտանիքներից: Միջուկային կամ կորիզային խումբը համայնք դառնալու ճանապարհին հիմնականում արտայայտում է ընդհանուր խմբային շահերն ու հետաքրքրութիւնները, որի միջոցով ստեղծում է ընկերային կապեր եւ համախմբուածութիւն՝ ցրիւ անհատների միջեւ: Համայնքային ինքնակազմակերպման, ազգային մշակոյթի եւ ինքնութեան վերարտադրու-

թեան, համայնքային կեանքի շարունակականութեան ապահովման գործառոյթներն, ըստ էութեան, իրականանում են հենց այդ կորիզային խմբի նախաձեռնութեամբ: Այս առումով, կարելի է հաստատել, որ Քաթարի հայօճախում կորիզային խումբ չկայ, հայօճախը ընդհանրութիւն կամ գերակշռող մաս չունի ներկայ իրավիճակում, որով կը սահմանուի այդ հասարակութեան մէջ հայօճախի դերը, կարգավիճակը եւ նաեւ կ'ուրուագծուի հայօճախի ընդհանուր դիմագիծը:

Միւս կարեւոր դիտարկումը կապուած է առանցքային անձանց դերակատարների նախաձեռնութեամբ հայօճախ ձեւաւորելու հարցին: Այն կրկնուող անունները/դերակատարները հայօճախում, որոնց շուրջ պտտւում է ընկերային-համայնքային կեանքը, փոխարինողներ չունեն:

Քաթարում հայերի համարկումը անմիջապէս պայմանաւորուած է այն հիմնական գաղափարով, որ կապուածութիւնը երկրին ամուր չէ՝ սկսած նիւթական պատճառներից մինչեւ ինքնութիւն եւ մշակոյթ: Այսինքն, եթէ չլինի նիւթական բարեկեցութեան հնարաւորութիւնը, հայերի արտագաղթը Քաթարից կարող է տեղի ունենալ շատ արագ: Հպատակութիւն չստանալու, սեփական հողատարածքներ ու առհասարակ սեփականութիւն չունենալու պայմաններում, հայօճախային կեանքի կազմակերպման բովանդակային կողմերը չեն կայանում Քաթարում, քանի որ մշտականութեան մտայնութիւն չկայ՝ առարկայական պայմանների եւ պատճառների բերումով եւս: Հայաստանցիների խմբի ներհոսքը, որը հիմնուած է մի շարք համաձայնագրերի վրայ, կարող է փոխել հայօճախային կեանքը՝ դէպի ոչ-աւանդական մօտեցումներ, քանի որ հիմնականում ինքնութեան պահպանման հայօճախային ինքնակազմակերպման փորձառութիւն եւ գործելու հնարաւորութիւն չունեն: Դա բացատրւում է նրանով, որ եթէ ձեւաւորուած այլ սփիւռքեան հայօճախներից ներգաղթողները ձգտում են համախմբուել աւանդական կառոյցների՝ եկեղեցու, դպրոցի եւն.ի շուրջ եւ դրանց միջոցով համարկուել, ապա հայաստանցիները հիմնականում տեղական տնտեսական, *բիզնէս* օղակների միջոցով են կարողանում կապուել հայօճախին: Հայաստանցիների պարագայում գործ ունենք ուղիղ տնտեսական կապերի եւ/կամ անհատական բիզնէս նախագծերի իրագործման հետ ՀՀ-Քաթար համաձայնագրերի շրջանակներում:

Կայուն ձեռնարկների ու միջոցառումների բացակայութիւնը եւ միայն ժամանակ առ ժամանակ իրադարձային հաւաքոյթները, որոնք չունեն, ընդհանրական կառուցուածք ու բովանդակութիւն, չեն կարող ապահովել հայօճախային ընդհանուր տեսլականը:

Պէտք է նշել նաեւ, որ համարկումը անընդհատ շարունական գործընթաց է եւ յատկապէս Քաթարի պարագայում, որտեղ անընդհատ նոր եւ տարբեր ներգաղթի խմբեր են առկայ, տուեալների մշտական թարմացման եւ արձանագրման անհրաժեշտութիւն կայ՝ հասկանալու համար հայերի համայնքային ներուժի, համարկման, ձուլման կամ սահմանագծման

հարցերը, ինչը կախուած է ներգաղթող խմբերի ունեցած աղբիւրներից, նպատակներից, զօրաշարժուելու ջանքերից ու ցանկութիւնից:

THE FORMATION OF THE QATAR ARMENIAN COMMUNITY AND ITS LESSONS

(Summary)

Lusine Tanajyan
Lusine.tanajyan@gmail.com

The paper focuses on the formation of the Qatar Armenian community: when, why, and how Armenians arrived in Qatar, the main Armenian inflows to the state, the typology of the community based on its social construct and the background of its members. The paper narrates how the community was self-organized and that process, its socio-cultural activities, etc. The paper analyzes the relations and networking of the community with the State of Qatar and the Republic of Armenia as well as with the neighboring and distant Diaspora communities.

The paper is based on extensive qualitative interviews, documents and published material.

Քաթարի Հայօճախի Ձեւաւորումը եւ Ինքնակազմակերպման Փորձառութիւնը[1]

ՍՕՆԱ ՆԵՐՍԻՍԵԱՆ
sona.nersisyan2006@gmail.com

ՄՈՒՏՔ

Քաթարի հայերի ու հայօճախի վերլուծութիւնը կարեւոր ու արդիական է Սփիւռքի ուսումնասիրութիւններում: Այն հնարաւորութիւն է տալիս հետեւել սփիւռքահայ համայնքային գործընթացներին այլ տեսանկիւնից՝ առանց Սփիւռքի «դասական» հայօճախների վերաբերեալ օրինաչափ "կանխա"դիրքորոշուածութեան, ինչը յաճախ հանդիպում ենք թէ՛ տեսական, թէ՛ գործնական դաշտում:

Այս յօդուածը Քաթարի հայօճախի վերաբերեալ քննարկում առաջ բերելու եւ հարցադրումներ անելու փորձ է, որի հիմնական նպատակն է ցոյց տալ Քաթարի հայօճախի ձեւաւորման ու ինքնակազմակերպման փորձառութիւնը, բացայայտել դրա առանձնայատուկ կողմերը:

Յօդուածի մէջ օգտագործւում են խորհրդային հարցազրոյցների արդիւնքներ[2], ինչպէս նաեւ առկայ գրականութեան եւ փաստաթղթերի վերլուծութիւն:

ՔԱԹԱՐԻ ՀԱՅՕՃԱ՞Խ

Այս թեմայի շուրջ ծագած գլխաւոր հարցադրումն այն է, թէ՝ արդեօք որքանո՞վ է գիտականօրէն արդարացուած Քաթարի հայերը դիտարկել եւ վերլուծել որպէս հայօճախ, եւ եթէ այն կարող ենք համարել հայօճախ, ապա ինչպիսի՛ հայօճախ է այն, կայացա՞ծ, թէ՞ դեռեւս կազմակերպական ընթացիկ փուլում գտնուող: Այս հարցին պատասխանելու համար նախ եւ առաջ դիմում ենք համայնք եզրոյթի ընկալմանը ու բացատրութեանը Սփիւռքի հետազօտութիւնների ենթախորքում:

Սփիւռքն ուսումնասիրելիս կիրառում են գաղութ, գաղթօճախ, համայնք, հայօճախ եզրոյթները, յաճախ նաեւ մասնաւորեցնելով «աւանդական կամ դասական», «հին ու նոր», «խառը» ձեւակերպումները:

Հետազօտական միջավայրում «գաղութ» կամ «գաղթօճախ» հասկացութիւնները կիրառւում են որպէս հոմանիշեր, սակայն մի փոքր այլ մեկնաբանութիւն է ստանում «համայնք» հասկացութիւնը նոյն սփիւռքեան ենթախորքում:

Բերենք այստեղ Վլադիմիր Բարխուդարեանի, թերեւս ամէնայաճախ յղուող ձեւակերումը, թէ՝

---

[1] *ՇՒ.*- Ուսումնասիրութեան համար հումք հանդիսացած 14 հարցազրոյցները կատարուած են Քաթարի մէջ, Հոկտեմբեր-Նոյեմբեր 2019ին, Դալար Եագուպեան-Սաչեանի գլխաւորութեամբ, որուն շնորհակալ ենք:

[2] Դաշտային աշխատանքներին հեղինակը մասնակցութիւն չի ունեցել:

> Գաղութ, գաղթավայր կամ գաղթօճախ հասկացութեան տակ [հայ] պատմագիտութիւնն ընդունում է օտար երկրներում հաստատուած որեւէ ժողովրդի այն զանգուածների գոյութիւնը, որոնք նոր բնակավայրում ստեղծում են իրենց համայնքը, ստանում ինքնավարութիւն, պահպանում մայրենի լեզուն, ազգային սովորութիւնները, դաւանանքը, գիրն ու գրականութիւնը կամ ունենում նշուած յատկանիշերի մի մասը: Ուրիշ խօսքով, երբ այդ զանգուածները օտար միջավայրում պահպանում են ազգային նկարագիրը եւ իրենց յատկանիշերով ու համապարփակ կեանքով առանձնանում հիւրընկալող ժողովուրդներից[3]:

Պատմագիտական տեսանկիւնից սա բաւականին ընդգրկուն ձեւակերպում է, որը սակայն չի շօշափում համայնքային պատկանելութեան, կազմակերպական կառուցուածքի եւ այլ ընկերաբանական կողմեր:

Այստեղ կարեւոր է ընդգծել, որ «համայնք»ի գաղափարը ընկերաբանական իմաստով բաւականին բազմազան եւ համակցուած երեւոյթ է: Այն արծարծում է ինքնութեան եւ պատկանելութեան, այլ հանրոյթների հետ ընդհանրութիւնների եւ տարբերութիւնների, տուեալ ընկերային միջավայր ներառման եւ արտամղման հարցեր: Նկատառելի է նաեւ այն, որ համայնքն ինքնին դառնում է հիմնական ուղղութիւն (հիմնահոսանք, mainstream) հանդիսացող գործընթացների մասնակիցը[4]:

«Համայնք»ը մեկնաբանելիս անհրաժեշտ է նախ ընդգծել հասկացութեան համայնական բնոյթը. «*ընդհանուր պահանջները եւ նպատակները, ընդհանուր կենցաղը, կենսագործունէութեան, աշխարհայեացքների, մշակոյթի եւ հաւաքական գործողութիւնների ընդհանրութեան զգացումը*»[5]:

Այդուհանդերձ, «համայնք»ը սփիւռքեան ենթախորքում ունի բազմազան իմաստաւորում եւ մեկնաբանութիւններ՝ կախուած ընդունող երկրի պայմաններից, վարչակարգից, իրաւական կարգավիճակի հաստատման պահանջից, մշակութային առանձնայատկութիւններից: «Համայնք»ի սփիւռքեան իմաստաւորումն ու մեկնաբանութիւնը կախեալ են նաեւ «համայնք» կազմող անհատների՝ սեփական կարգավիճակի մասին ընկալումից, նոյնիսկ լեզուի կամ բարբառի առանձնայատկութիւններից: Օրինակ, համայնքապետական երկրներում, կամ կրօնական կառավարում ունեցող երկրում համայնք լինելն արդէն իրաւականօրէն «պարտադրում է» որոշակի կազմակերպական ձեւ, քանի որ հասարակութեան մէջ առկայ է *հա-*

---

[3] Վ. Բարխուդարեան, *Մոսկուայի եւ Պետերբուրգի հայկական գաղութների պատմութիւն (XVIII դարի կէս – XX դարի սկիզբ)*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2010, էջ 40:

[4] C. Bell, H. Newby, *Community Studies, An Introduction to the Sociology of Local Community*, Allen and Unwin, London, 1971. նաեւ՝ J. Cater, T. Jones, *Social Geography, An Introduction to Contemporary Issues*, Edward Arnold, London, 1989. նաեւ՝ G. Delanty, *Community*, Routledge, London, 2003:

[5] J. Silk, "The Dynamics of Community, Place, and Identity," *Environment and Planning A: Economy and Space*, 31(1):1999, էջ 5-17:

*մայնք*ավարութեան մշակոյթ, իրաւակարգ եւ կարգավիճակ: Իսկ, օրինակ, որեւէ երկրում, որտեղ խիստ ուղղահայեաց «վերեւից ներքեւ» կառավարում է, սփիւռքեան համայնքները կարող են հաւասարեցուել հասարակական կազմակերպութեան կամ առաւելագոյնը՝ մշակութային իւրայատկութիւն դրսեւորող հաւաքականութեան, որոնք ենթադրում են ինքնակարգաւորման յստակ կանոններ, ըստ պետական նման կազմակերպութեանց համար բանաձեւած հայեցակարգին:

Այստեղ հարց է առաջանում, թէ որտե՞ղ է համայնքացման սահմանը, ե՞րբ կարելի է նոր միջավայրում ապրող որոշակի հանրոյթն անուանել սփիւռքեան համայնք:

Այս տարբեր մօտեցումների մէջ փորձենք հասկանալ, թէ ինչպէ՛ս են ձեւաւորւում համայնքները Սփիւռքում, ի՛նչ գործօնների ազդեցութեամբ, եւ, ընդհանուր առմամբ, ի՛նչ նկատի ունենք սփիւռքեան համայնք ասելով:

Սփիւռքում համայնքային ինքնակազմակերպման առաջին փուլը համախմբումն է՝ տարածական առումով, բայց մանաւանդ՝ գաղափարական նպատակային ելակէտերով, երբ տեղի է ունենում ընդհանուր գաղափարի շուրջ հաւաքական գիտակցում: Յաջորդիւ, անհրաժեշտ է աղբիւր-հնարաւորութիւնների ներդրում, որը ներառում է այլատեսակ ներուժի ներգրաւում՝ մարդկային, մասնագիտական, ֆինանսատնտեսական, ֆորմալ ու ոչ-ֆորմալ կապեր, կառոյցներ եւ հաստատութիւններ: Նման հաւաքական ջանքերի ներդրումը բերում է ինքնակազմակերպման, ինչն էլ իր հերթին յանգեցնում է համայնքի հաստատութենականացման:

Անհրաժեշտ է հաշուի առնել, որ էթնիկ խմբի համախմբան արդիւնքում կարող են ձեւաւորուել որոշակի համայնական խմբեր որոշակի ընդհանրացնող յատկանիշերով, սակայն ոչ-բոլոր դէպքերում է էթնիկ համախմբումը բերում համայնքի ձեւաւորման:

Ներքին համախմբման մակարդակը նոր միջավայրում էթնիկ խմբի ինքնակազմակերպման ընթացքում կախուած է մի շարք գործօններից: Դրանց թւում են (եւ ոչ միայն) բնակչութեան թուաքանակը, բնակութեան տեսակը (հոծ կամ ցրիւ) եւ օտարերկրեայ էթնիկ, կրօնական, մշակութային միջավայրի բնոյթը, համախմբուողների էթնիկ ինքնանընկալումի որակը:

Այսպէս, ենթադրւում է, որ գոյութիւն ունի էթնիկ խմբի որոշակի վճռորոշ քանակութիւն, որն անհրաժեշտ է դրա անդամներին նուազագոյն ընկերային աջակցութեամբ ապահովելու համար: Կամ ենթադրւում է՝ տուեալ միջավայրի համար արդիւնաւէտ կրօնական միջավայր[6]:

Նշեալի ենթախորքում Քաթարի հայօճախի կազմակերպման վրայ ազդող գործօնները կարող ենք պայմանականօրէն բաժանել “արտաքին” ու “ներքին” խմբերի:

[6] Որպէս կանոն՝ այլակրօն միջավայրը նպաստում է համայնքի արագ ինքնակազմակերպմանը:

Քաթարի հայօճախի վրայ ազդող արտաքին գործօններն ունեն ինչպէս նպաստող, այնպէս էլ խոչընդոտող ազդեցութիւն: Հիմնական նպաստող գործօններից են՝

+ Այլակրօն միջավայրը, որը դրդում է սահման գծել օտարի եւ իւրայինի միջեւ կրօնական չափանիշով.
+ «Կայացած» հաօճախների մօտ լինելը, ինչը նպաստում է սփիւռքեան փորձառութեամբ անձանց ներառմանն ու սփիւռքեան փորձառութեան փոխանակմանը.
+ ՀՀ-ին մօտ լինելը, որի շնորհիւ հնարաւոր է դառնում ընկերամշակութային միջավայրի (գէթ մասնակի) ապահովումը, թարմացումը, որոշակի թուով հայաստանցիների ներառումը համայնքային կեանք:

Իսկ խոչընդոտող գործօններից են՝

- Քաղաքացիութիւն ձեռք բերելու, աւելի ճիշտ՝ ձեռք չբերելու պայմանները, նաեւ սեփականութեան ձեռքբերման ու շահագործման իրաւունքի հարցը.
- Ապահամախմբող քաղաքականութիւնը թէ՛ բնակութեան, թէ՛ կրօնական կամ համայնքային կառոյցների տեղակայման առումով.
- Ընդունող երկրում փոքրամասնութեանց իրաւունքների սահմանները:

Ներքին գործօնների շարքում նպաստող կարող են գնահատուել հիմնականում՝

+ Համայնքային հարցերում յարաբերականօրէն գործուն խմբի առկայութիւնը.
+ Տարբեր հաստատութիւնների ներառող վերաբերմունքը.
+ Հայերի ընդհանուր բարեկեցութեան մակարդակը:

Իսկ խոչընդոտող գործօններ՝

- Հայերի թուի փոքրութիւնը.
- Հայերի ցրիւ բնակութիւնը.
- Համայնքային հաստատութիւնների բացակայութիւնը.
- Համախմբման շարժառիթների պակասը.
- Հայերի տարբեր խմբերի միջեւ թոյլ կապը:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԳՐԱԽՈՒԱԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Փոփոխուող պայմաններում ազգային մշակոյթի արժէքը, ազգային ինքնագիտակցութեան նշանակութիւնը դրդում են խմբի անդամներին համախմբման տարատեսակ ձեւերի: Ինքնակազմակերպման գործընթացում հայօճախի ներկայացուցիչների մասնակցութիւնը նպաստում է հայօճախային ընդհանուր համակարգի կայունութեան ապահովմանը՝ արտայայտելով հայօճախում առկայ տարբեր ընկերային խմբերի հետաքրքրութիւնները: Այն դէպքում, երբ գործող ինքնակառավարման համակարգը համաչափ ձեւով է արձագանգում շրջապատող ընկերային միջավայրին եւ նրա

պահանջներին, ապա մասնակցութունը շարունակւում է՝ փոխակերպուելով աջակցութեան եւ ներառականութեան: Հակառակ պարագայում, երբ համայնքի անդամները չեն տեսնում իրենց գործառոյթը՝ համակարգի կենսագործունէութեան ապահովման որեւէ փուլում, ապա համայնքի կառուցուածքը ենթակայ է պառակտման:

Այս առումով կարեւոր է հասկանալ, թէ ինչպիսի ընկերային աշխուժութիւն են ցուցաբերում Քաթարի հայօճախի անդամներն ընդհանրապէս:

> Ակտիւիստները կազմակերպւում են տարբեր ձեւերով. քանի որ դեսպանատունը բացուել է եւ փորձում է իր ծածկի տակ հաւաքել բոլորին, բոլոր միջոցառումները փորձում ենք անել միասին[7]:
>
> Հիմա փորձում ենք ակտիւ պահել, կայուն միջոցառումները, անկախութեան տօնը, մայրերի տօնը, պաշտօնական տօներն են, որ միշտ նշում ենք, բայց նաեւ տեղային տօներ ենք ուզում նշել[8]:

Համայնքի ներկայացուցիչների այս մեկնաբանութիւնները հետաքրքիր հարցեր են մատնանշում: Մէկը այն է, որ հայօճախի կեանքի կազմակերպումը կարող է ներառել ոչ միայն հայօճախի կառոյցներ: Դեսպանատունը, որին յղում է արւում որպէս համայնքային կեանքի մասնակից, որոշ հարցերի պարագայում ցուցաբերում է նախաձեռնութիւն: Սա ընդունւած փորձառութիւն է յատկապէս նորաստեղծ սփիւռքեան համայնքների համար, որոնք ունեն հայկական միջավայրի խնդիր, որոշ դէպքերում՝ նոյնիսկ հայկականութեան դրսեւորման տարածքներ, ՀՀ դեսպանատունը ներդնում է իր հնարաւորութիւնները համայնքային գործունէութեան համար: Նման արարքը մեքենականօրէն նպաստում է համայնքի կողմից դեսպանատան՝ որպէս համայնքային միաւորի ընկալմանը:

Վերլուծելով հետազօտական տուեալները, կարող ենք նկատել, որ ընդհանուր առմամբ Քաթարի հայերի համայնքային կեանքը բաւականին նօսր է. միջոցառումները յաճախակի չեն, ըստ այդմ համայնքային ընկերամշակութային կեանքը բազմազան չէ եւ չի ապահովում տեղականի այլընտրանք կամ մրցակցութիւն:

Ելնելով հայօճախի անդամների թուի վերաբերեալ գնահատականներից, նկատելի է մի օրինաչափութիւն. համայնքային կառոյցներում կամ խորհուրդներում ներգրաւուած անձինք մշտապէս շեշտում են համայնքի մեւնոյն գնահատականը՝ մօտաւորապէս 450-500 հոգի: Այս թիւն է նշւում նաեւ ազգային վարչութեան ընտրութիւնների մասնակցութեան դէպքում: Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ այս մօտաւոր թուաքանակն արտայայտում է միայն համայնքի գործուն եւ համայնքային հարցերում ներգրաւուած անձանց քանակը: Սակայն, այն փոքրաթիւ է, չի ներառում «համայն-

[7] Հարցազրոյց N2, դաշտային ազգագրական նիւթեր, 2022, Քաթար:
[8] Հարցազրոյց N9, դաշտային ազգագրական նիւթեր, 2022, Քաթար:

քում չներառուած անձանց» հատուածը, ուստի հաստատութենական ինքնակազմակերպման համար ոչ-բաւարար ժողովրդագրական ներուժ ունի:

ՀԱՅՕՃԱԽԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Սփիւռքում համայնքները մինչ օրս շարունակում են մնալ ամէնաբարձր հաստատութենականացման մակարդակ ունեցող կառոյցները՝ չանցնելով ինքնակառավարման կամ ինքնավարութան այլ հարթութիւն[9]: Համայնքների հաստատութենականացումը կարեւոր նշանակութիւն ունի սփիւռքեան իրականութեան մէջ, քանի որ օգնում է համայնքին լուծել իր մի շարք խնդիրները, օրինակ անվտանգային, ընկերային, ապահովութեան եւն.: Հայկական սփիւռքը իր սփիւռքացման ճանապարհին ձեւաւորել է մի շարք հաստատութիւններ, որոնք բաւարարում են համայնքային տարատեսակ կարիքներ ու պահանջներ:

Համայնքային հաստատութիւնները ժամանակի ընթացքում սակայն փոփոխուել են. պահպանելով հաստատութենական բնոյթը փոփոխել են բովանդակութիւնը, ազդեցութեան շրջանակը, յաճախ՝ գործառոյթները:

Հայկական սփիւռքում համայքների հաստատութենական կառուցուածքում տեղ ունեն երկու՝ ֆորմալ եւ ոչ-ֆորմալ կառոյցների ձեւերը: Ֆորմալ ձեւերն են դպրոցը, եկեղեցին, մամուլը, դասական կազմակերպութիւնները եւն.: Ոչ-ֆորմալ ձեւերից են հայկական միջավայրերը, թաղամասերը, համացանցային խմբերը եւն.: Ֆորմալ ձեւերի գործառոյթները յստակ են եւ ունեն յստակ հասցէատէրեր, իսկ դրանց գործառոյթները ձեւաւորւում են որոշակի խնդիրներ լուծելու նպատակով: Օրինակ, եկեղեցիները՝ կրօնական, դպրոցը՝ կրթական: Սա չի նշանակում, սակայն, որ դրանք ժամանակի ընթացքում չեն կարող իրենց վրայ վերցնել նաեւ այլ գործառոյթներ:

Ֆորմալ ձեւի կառոյցների քանակը, բազմազանութիւնը եւ ազդեցութիւնը որոշում է համայնքի կերպարը, կարողական ներուժը եւ կշիռը այդ հասարակութեան մէջ, նաեւ՝ այլ համայքների համեմատութեամբ:

Ոչ-ֆորմալ ձեւի կառուցուածքները յենւում են ոչ-ֆորմալ կապերի, յարաբերութիւնների վրայ: Դրանք աւելի ճկուն են եւ կարող են մասնակցել բոլոր տեսակի խնդիրների լուծմանը, իրագործմանը՝ անհատական, համայնքային, խմբային:

Ֆորմալ եւ ոչ-ֆորմալ հաստատութենական ձեւերի կառուցուածքները հիմնականում միմեանց փոխլրացնող են, եւ դրանց ազդեցութիւնները տարածւում են ամբողջ հայօճախի վրայ:

---

[9] Տեղին է նշել, որ որոշ յետխորհրդային երկրներում հայկական համայնքներն, ի թիւս այլ էթնիկ փոքրամասնութիւնների, կոչւում են ինքնավարութիւն (autonomy), սակայն որը չի նշանակում ինքնավարութեան իրաւական դրսեւորումներ համայնքային կեանքի կենսագործունէութեան կազմակերպման հարցերում:

Արդ, որպէսզի քննարկենք Քաթարի հայօճախի ինքնակազմակերպական ձեւը, անդրադառնանք քաթարահայ հարցապնդուողների կողմից տրուած որոշ տեղեկութիւնների.

Առաջին երեսփոխանական ընտրութիւնը Քաթարի մէջ եղաւ 2013ին, նշանակուեցին 3 երեսփոխան, ապա ունեցանք վարչութեան կազմը: Երեսփոխաններն ընտրւում են ժողովրդի կողմից, իսկ վարչութիւնները նշանակւում են երեսփոխանների կողմից: Ընտրեցին մօտաւորապէս 430 հոգի:

Առաջ այդպէս չէր: Առաջ սրբազանն ինքն էր ընտրում, որովհետեւ գաղութն աշխուժ չէր:

Վարչութեան կազմում աստիճանաբար շատ երիտասարդներ ներգրաւուեցին, ձեւաւորուեց երիտասարդական վարչութիւնը, որն, ինչպէս գիտէք, գաղութների աղն է, շարժիչ ուժը:[10]

Քաթարի հայօճախի ինքնակազմակերպման համար որոշակիօրէն կիրառուել է Մերձաւոր Արեւելքի երկրների դասական հայօճախների կազմակերպման ձեւը՝ ներառելով թէ՛ կառուցուածքային, թէ՛ բովանդակային տարրեր:

Սակայն, միեւնոյն է, տարբերւում են գաղթի պատճառները, տեղափոխման պայմանները, զբաղմունքը, մղումը, ներուժը, հայօճախ կազմող խմբերի համասեռութիւնը՝ իրենց ծագման երկրի, լեզուի, սփիւռքեան փորձառութիւնը եւն.:

Քաթարի հայերի պարագայում գաղթի հիմնական պատճառները պայմանաւորուած են աշխատանքային գործունէութեամբ: Սա ցոյց է տալիս, որ հայօճախում առաջնային կենսապահովման կամ կենցաղային բնոյթի խնդիրները բացակայում են:

Սրա հետ մէկտեղ Քաթարի հայօճախում շատ յաճախ համայնքային կառոյցները չեն ստանում միեւնոյն նշանակութիւնը, ինչ որ այլ, կայացած հայօճախներում: Եւ, ընդհակառակը, աւելի մեծ նշանակութիւն կարող են ստանալ նոր, ոչ-ֆորմալ կազմաւորումները եւ լինել իսկապէս արդիւնաւէտ:

Այնուհանդերձ, ներկայումս արհեստագիտական, նորարարական փոփոխութիւնների արագ թափերն ուղեկցւում են մարդկանց եւ աղբիւր-հնարաւորութիւնների անդրսահմանային տեղաշարժերով, ինչն առաջ է բերում նոր տեսակի սփիւռքային կազմաւորումներ: Դրանք դուրս են մեր ունեցած խիստ կառուցուածքային պատկերացումներից եւ բնութագրւում են ոչ-ֆորմալ, ցանցային յատկանիշներով: Սա մարտահրաւէր է ե՛ւ հետազօտողների համար, քանի որ ենթադրում է անաչառ մօտեցում, որը դուրս կը լինի մտածողութեան նախկին կաղապարներից, եւ թէ՛ հայօճախների համար, որովհետեւ ի ցոյց է դնում մինչ այս գործող ընդունուած աւանդական լուծումների թերարդիւնաւէտութիւնը: Այս մարտահրաւէրը պահանջում է բոլորովին նոր, ճկուն մօտեցում, որտեղ պէտք է հաշուի առնուեն ուսումնասիրուող-

[10] Հարցազրոյց N6, դաշտային ազգագրական նիւթեր, 2022, Քաթար:

ների առանձնայատկութիւնները տարբեր կողմերից. կրօնական վարքը, ազգային աւանդոյթները՝ մշտապէս թարմացուող գաղթային հոսքերի ենթախորքում:

ԱՄՓՈՓՈՒՄ-ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ

Քաթարի հայերի հայօճախացման ուսումնասիրութիւնը նոր դաշտ է ոչ միայն տիպական դէպքերի զարգացման օրինաչափութիւնները հասկանալու, այլեւ իւրովի մարտահրաւէր է Սփիւռքի հետազօտողների համար: Այսպիսի նիւթերի քննարկումն ընդլայնում է գնահատումների միջակայքը հայօճախի ու դրա կառուցուածքային ու բովանդակային կողմերի վերաբերեալ: Աւելին, այն խթանում է աւելի մասշտաբային պատկերի դիտարկումը եւ թոյլ տալիս անցնել ընդունուած վերլուծական կաղապարներից անդին: Այսպիսով հնարաւոր է դառնում վիճարկել համայնքի, հանրոյթի, դրանց փոխառնչութիւնների մասին առկայ պատկերացումները եւ առաջարկել նոր քննարկում դրանց շուրջ:

Այս խորապատկերին կարելի է ամփոփ եզրայանգումներ ձեւակերպել հարցադրումների ձեւով, որոնք յետագայ մտորումների տեղիք են տալիս:

- Արդեօք կարո՞ղ ենք համարել, որ Քաթարի հայօճախը գտնւում է Սփիւռքի աւանդական հայօճախի ինքնակազմակերպման եւ հաստատութենականացման նախնական փուլերում, թէ՞ կարող ենք ասել, որ այդ գործընթացն ընթանում է նոր ձեւերով, նոր գործիքներով, եւ պէտք է բոլորովին նոր մօտեցում ցուցաբերել:
- Արդեօք ինքնակազմակերպման նոր ձեւերը յանգեցնելու՞ են համայնքային կայուն կառուցուածքի, թէ՞ ձեւաւորելու են մէկ այլ տիպի կազմաւորում:

THE FORMATION OF THE ARMENIAN COMMUNITY OF QATAR AND THE EXPERIENCE OF SELF-ORGANIZATION

(Summary)

Sona Nersisyan
sona.nersisyan2006@gmail.com

The study of the Qatari community is relevant and important, especially from the perspective of studying social self-organization and community formation. Considering that the organized community life among the Armenians of Qatar has been formed during the last 20 years, we have the opportunity to observe that process at this moment in an unmediated way.

This report refers to the formation of the Armenian community in Qatar, the main streams of Armenian migration, the classification of the community according to its social composition and movements, the process of community self-organization in Qatar, socio-cultural activity in the community, the implemented activities, etc. are highlighted. Also, the connections and relations of the community with the Republic of Armenia, with other diaspora communities, with the state of Qatar are analyzed.

The report is based on the results of in-depth interviews, as well as expert analysis, existing literature and document analysis.

Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէն եւ Ծոցի Արաբական Երկրների Հայօճախները (Քուէյթ, ԱՄԷ) (1964-90)

ՀՐԱԾԻՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ
vardanyan.h@ysu.am

ՄՈՒՏՔ

Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէն (ՍՀՄԿԿ), որն ստեղծուել էր Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի 1964 Մայիսի 26ի թիւ 226 որոշմամբ[1] եւ համարւում էր ԽՍՀՄի՝ Արտասահմանի հայրենակիցների հետ մշակութային կապերի սովետական ընկերութեան՝ «Ռոդինա»ի անդամը[2], այն հիմնական կառոյցն էր, որի միջոցով 1964-98[3]՝ պահպանւում էին Հայաստանի եւ Սփիւռքի հայկական գաղթօջախների կապերն ու յարաբերութիւնները:

Ըստ կանոնադրութեան ՍՀՄԿԿի առջեւ դրուել էին հետեւեալ նպատակներն ու խնդիրները.- 1) հաստատել եւ զարգացնել կապերը սփիւռքահայ գաղթօջախների հետ, 2) գաղթօջախների հայութեանը ծանօթացնել հայրենիքի կեանքին, ձեռքբերումներին, գիտութեանը եւ մշակոյթին, 3) գաղթօջախների հայութեան մէջ սերմանել հայրենասիրութիւն, 4) ՀԽՍՀի աշխատաւորներին ծանօթացնել գաղթօջախների, առաջադիմական կազմակերպութիւնների, ձուլման դէմ պայքարի եւ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների զարգացմանն ուղղուած աշխատանքների հետ[4]:

Որպէս նշուած նպատակների իրագործման միջոց դիտարկւում էին հետեւեալ ուղիները.- 1) հաստատել կապեր առաջադիմական, դէմոկրատական ու հայրենասիրական կազմակերպութիւնների, բարեգործական ու մշակութային միութիւնների հետ, 2) տարածել հայրենիքի թերթերը՝ գաղթօջախներում, 3) օգնել գաղթօջախներին, 4) գաղթօջախների հրաւէրով մեկնել արտասահման, ուղարկել տարբեր խմբեր, 5) հրաւիրել պատուիրակութիւններ գաղթօջախներից՝ հայրենիք, 6) աջակցել սփիւռքահայ զբօսաշրջիկներին, 7) կազմակերպել սփիւռքահայ նկարիչների ցուցահանդէսներ,

[1] Հայաստանի Ազգային արխիւ (ՀԱԱ), ֆոնդ 875, ց.1, գ. 2, թ. 1-2:
[2] ՀԱԱ, ֆոնդ 875, ց. 16, գ. 1, թ. 1:
[3] ՍՀՄԿԿն պաշտօնապէս դադարել է գործել 1998ին, սակայն 1992 Յուլիսից, պետական ֆինանսաւորման դադարեցումից յետոյ, կառոյցն, ըստ էութեան, զրկուել էր իր կանոնադրական խնդիրները կատարելու հնարաւորութիւնից:
[4] ՀԱԱ, ֆոնդ 875, ց. 1, գ. 2, թ. 1-3:

8) կազմակերպել գրական երեկոներ, 9) հրատարակել սփիւռքահայ գրողների ստեղծագործութիւնները[5]:

Պայմանաւորուած Խորհրդային Հայաստանի գաղափարական, քաղաքական համակարգի առանձնայատկութիւններով՝ ՍՀՄԿԿ գործունէութեան տարիներին խորհրդային իշխանութիւնները արտերկրի հայկական կազմակերպութիւնները բաժանել էին երկու խմբի՝ 1) «առաջադիմական» (կոմունիստներ, հնչակեաններ, ռամկավարներ), 2) «ռէակցիոն» կամ «յետադիմական» (դաշնակցականներ), ուստի Սփիւռքում ՍՀՄԿԿի հիմնական գործընկերները միայն «առաջադիմական» կազմակերպութիւններն էին, որոնց հետ համագործակցութեամբ էլ իրականացւում էին վերոնշեալ ուղղութիւններով աշխատանքները[6]:

ՍՀՄԿԿի եւ Ծոցի արաբական երկրների հայօճախների փոխյարաբերութիւնների ուսումնասիրման համար հիմնականում օգտուել ենք ՍՀՄԿԿի՝ Հայաստանի ազգային արխիւում պահպանուող նիւթերից, որոնք ներառում են հայօճախների վերաբերեալ տարբեր թուականների պատրաստուած տեղեկանքներ, ՍՀՄԿԿ եւ համայնքային կառոյցների, գործիչների, անհատների նամակագրութեան նիւթեր, ՍՀՄԿԿ գործունէութեան վերաբերեալ հաշուետուութիւններ եւն.: Պահպանուած արխիւային նիւթերում Ծոցի արաբական երկրներից առաւել հարուստ տեղեկութիւններ կան մասնաւորապէս Քուէյթի եւ ԱՄԷի (Շարժա, Դուբայ, Աբու Դաբի) հայօճախների եւ Խորհրդային Հայաստանի կապերի մասին:

ՍՀՄԿԿ-ՔՈՒԷՅԹԻ ՀԱՅՕՃԱԽ ԿԱՊԵՐԸ

ՍՀՄԿԿն, սովորաբար, իր աշխատանքներն սկսում էր համապատասխան հայօճախների ուսումնասիրութեամբ եւ տեղեկանքների պատրաստմամբ: Վերջիններս պարբերաբար թարմացւում էին եւ կարեւոր տեղեկութիւններ են պարունակում հայօճախների ձեւաւորման, գործող համայնքային, հոգեւոր եւ կրթական հաստատութիւնների, հայութեան թուաքանակի, հայօճախներում տիրող իրավիճակի եւ այլ հարցերի շուրջ: Այս առումով բացառութիւն չէ նաեւ Քուէյթի հայօճախը: Արխիւային նիւթերում պահպանուել է Քուէյթի հայօճախի մասին տեղեկանք՝ ըստ որի 1958ին Քուէյթում հայերի թիւը 3000 էր, իսկ 1962ին այն հասել էր 5000ի: Գործում է Հայ Առաքելական եկեղեցու հոգաբարձութիւն, ուր քահանայագործում է Պարոյր քահանայ Մինասեանը: Հայերը որպէս պաշտօնական համայնք ճանաչուած չեն, սակայն կառավարութեան կողմից աշխատանքներ են տարւում վաւերացուելու համար: Առկայ է 125 աշակերտներով դպրոց: Հայերը սիրուած փոքրամասնութիւն են: Միքանի հայեր բարձր դիրքերի են հասել կառավարական հաստատութիւններում: Հայերի տնտեսական վիճակը

[5] Նոյն, թ. 1-3:

[6] Նոյն, ց. 1, գ. 6, թ. 1-6:

ընդհանուր առմամբ բարւոք է: Ֆրանսահայ նկարիչ Շարթի եղբայրը Քուէյթում ունի նկարչատուն[7]:

ՍՀՄԿԿի արխիւում պահպանուել է եւս մի տեղեկանք, ըստ որի քուէյթահայ Պերճ (Նաժիպ-Ժոզէֆ) Գույումճեանը՝ մասնագիտութեամբ մեքենագէտ, Քուէյթի հայօճախի մասին տրամադրել է տեղեկութիւններ, որոնց հիման վրայ էլ կազմուել է տեղեկանքը: Վերջինիս համաձայն՝ Քուէյթում ապրում են 4-5 հզ. հայեր: Հայօճախն ունի եկեղեցի եւ դպրոց: Հայ ազգային վարժարանի տնօրէնը քահանան է, որը հանդիսանում է նաեւ տեղի հայութեան հոգեւոր հովիւը: Դպրոցն ունի 700 աշակերտ եւ նախակրթարանի մակարդակ: Դպրոցն ու եկեղեցին ղեկավարւում են հոգաբարձութեան կողմից, որի անդամներն են՝ Զոհրապ Պարսամեանը, Յակոբ Սողոմոնեանը, Գաբրիէլ Թասլաքեանը, Անդրանիկ Չեքմեքճեանը, Երուանդ Թերզեանը[8]: Նշուած տեղեկանքի համաձայն՝ Քուէյթում կան նաեւ կաթոլիկ հայեր՝ շուրջ 300 հոգի, որոնք յաճախում են «օտար՝ Յիսուսեանների եկեղեցին»: Չունեն հայ կաթոլիկ քահանայ: Դպրոցը նոյնպէս օտար է եւ հայ կաթոլիկների երեխաները յաճախում են օտարազգի երեխաների հետ: Հայ բողոքականները՝ մօտ 100 հոգի, նոյնպէս չունեն հայկական հաւաքականութիւն, այլ յաճախում են ժողովարան՝ «օտարագիր» հաւատացեալների հետ: Միեւնոյն ժամանակ, թէ՛ հայ կաթոլիկներից, թէ՛ բողոքականներից շատերը յաճախում են հայկական եկեղեցի եւ դպրոց՝ հայկականութիւնը պահելու համար[9]:

Ըստ տեղեկանքի՝ քուէյթահայերը հիմնականում արհեստաւորներ են, շինարարներ, երկրաչափներ, մեքենագէտներ, ելեկտրագէտներ, նաւթախողովակների զօդողներ, նաւթարդիւնաբերութեան բանուորներ: Կան մի քանի հարուստ եւ ճանաչուած անձնաւորութիւններ՝

1. Անդրանիկ Չեքմեքճեան (շինարար, երկրաչափ)
2. Ալֆրէդ Գալուստեան (պարսկահայ մեծահարուստ)
3. Յակոբ Սողոմոնեան (պետական նախագծերի երկրաչափ)

Միեւնոյն ժամանակ, նշւում է որ Քուէյթում չկան կուսակցութիւններ եւ քաղաքական հակամարտութիւններ: Պետականօրէն արգելուած են ակումբները, ոգելից ըմպելիքները, գիշերային հաճոյավայրերը: Սրճարաններում եւ ռեստորաններում օգտագործում են միայն զովացուցիչներ: Քուէյթի հայօճախը անթիլիասական թեմ է[10]:

Արխիւում պահպանուած 1963ի մէկ այլ տեղեկանքի համաձայն՝ նաւթարդիւնաբերութիւնում լաւ վճարուող աշխատանքը պատճառ էր դարձել, որ հազարաւոր հայեր զանազան հայօճախներից գաղթեն Քուէյթ: Քուէյթա-

[7] Նոյն, ց. 14, գ. 157, թ. 1:
[8] Նոյն, թ. 2:
[9] Նոյն, թ. 2:
[10] Նոյն, թ. 2-3:

հայերի թիւը հասնում է 7 հզ.: Քաղաքական կուսակցութիւնների գոյութիւնն արգելուած է: Չնայած հայօճախը դեռեւս պաշտօնապէս ճանաչուած չէ պետութեան կողմից, սակայն այդ հանգամանքը չի խանգարում, որպէսզի հայերն ունենան իրենց ազգային ղեկավարութիւնը: Հայօճախը ղեկավարւում է 9 հոգուց բաղկացած ազգային վարչութեան կողմից, որը նշանակւում է Անթիլիասի ազգային կենտրոնական վարչութեան կողմից: Կառուցուել է եկեղեցի, որտեղ պաշտօնավարում է հայօճախի հոգեւոր հովիւ քահանայ Պարոյր Մինասեանը, դպրոցի տնօրէնը Մանուէլ Չարշաֆեանն է: Դպրոցը ութամեայ է եւ սովորում են մօտ 650 երկսեռ աշակերտներ, որից 250ը մանկապարտէզի սաներ են: Ինչպէս դպրոցը, այնպէս էլ եկեղեցին ղեկավարում է 5 հոգուց բաղկացած հոգաբարձութիւնը[11]:

Ըստ տեղեկանքի՝ հայերը Քուէյթում բարուօք կեանք ունեն, մեծ մասամբ արհեստաւորներ են, շինարարներ եւն.: Վայելում են կառավարութեան համակրանքը, իսկ առանձին անհատներ վարում են պետական ազդեցիկ պաշտօններ: Որպէս անուանի հայեր՝ տեղեկանքում յիշատակւում են հետեւեալ անունները.-

1. Զոհրաբ Պարսամեան-պետական ճարտարապետ (Քուէյթի շէնքերի մեծ մասը կառուցուել է նրա նախագծով),
2. Անդրանիկ Չեքմեքճեան-շինարար երկրաչափ,
3. Յակոբ Սողոմոնեան-նախագծող երկրաչափ
4. Ալբերտ Գալստեան-մեծահարուստ (պարսկահայ)[12]:

Տեղեկանքում նշւում է նաեւ, որ ՍՀՄԿԿի կապերը Քուէյթի հայօճախի հետ թոյլ են, ուստի աշխատում են աւելի սերտացնել: ՍՀՄԿԿն կապ ունի 23 անհատների եւ ազգային վարժարանի հետ: Նրանց ուղարկում են թերթեր, ամսագրեր, մեծաքանակ դասագրքեր եւ գեղարուեստական գրականութիւն: Վերջին 2 տարիներին հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ է նշանակուել ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտէտի շրջանաւարտ Փարէն Մինասեանը[13]:

Պահպանուած մէկ այլ տեղեկանքի համաձայն՝ հայերը Քուէյթում սկսել են հաստատուել 1950ականներից, եւ Քուէյթի հայօճախը հաշւում է 8-10 հազար հայ (1989-91): Զարգացման արագ թափ ընդունած երկիրը լայն հրնարաւորութիւններ է ընձեռել ձեռներէց հայերին, որոնք տեղափոխուելով հիմնականում Սիրիայից, Իրանից, Լիբանանից ու Իրաքից, սկսել են հիմնել մեծ ու փոքր բազմաթիւ արհեստանոցներ, վաճառատներ, շինարարական, ճարտարապետական ընկերութիւններ: Մեծահարուստները կազմում են 20-30 տոկոս: Սակայն երկրում գոյութիւն ունեցող օրէնքի համաձայն՝ օտարերկրացիներին, այդ թւում՝ հայերին, Քուէյթի քաղաքացիութիւն չի

[11] Նոյն, թ. 4:
[12] Նոյն, g. 14, գ. 157, թ. 4:
[13] Նոյն, թ. 4-5:

տրւում, չի թոյլատրւում իրենց անունով հիմնել հաստատութիւններ, եւ նրանք կարող են լինել միայն փայատէրեր:

Քուէյթահայերը մեծապէս գնահատուել են տեղի ժողովրդի եւ պետական մարմինների կողմից: Վերջիններս յաճախ ակնարկում են, որ հայերը նպաստել են Քուէյթի բարգաւաճմանն ու տնտեսական վերելքին[14]: Հայօճախը ներկայացնում է Անթիլիասի կողմից նշանակուած փոխանորդը՝ Օշական Ծ. վրդ. Չոլոյեանը, որը միաժամանակ Ծոցի միւս հայօճախների հոգեւոր հովիւն է: Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կենտրոնական վարչութիւնը Քուէյթի համար նշանակել է համայնքային վարչութիւն, որը կաթողիկոսական փոխանորդի նախագահութեամբ զբաղւում է հայօճախի հոգեւոր, ազգային, կրթական եւ մշակութային գործերով: Հայօճախի վարչութիւնը պաշտօնապէս ճանաչւում է պետութեան կողմից: Ճանաչւում է նաեւ կաթողիկոսական փոխանորդի՝ հոգեւոր պետի հանգամանքը: Բացի ազգային կեանքի ղեկավարումից, հայօճախի վարչութիւնը իրաւասու է լուծելու անձնական իրաւունքի հետ կապուած (ժառանգութիւն, ամուսնական վէճեր եւն.) հարցեր: Հայօճախի վարչութիւնը երկու տարին մէկ նշանակում է հոգաբարձութիւն, որը ղեկավարում է ազգային դպրոցն ու ազգային ճեմարանը: Քուէյթի հայօճախի վարչութիւնը ընտրովի է, բայց պայմաններից ելնելով, չորս տարին մէկ կազմը նշանակւում է Անթիլիասի կողմից, իսկ կազմն, իր հերթին, ընտրում է ատենապետ: Ըստ տեղեկանքի՝ ատենապետը տուեալ պահին Ժաք Գույումճեանն է[15]: Եկեղեցական եւ ազգային խորհուրդը, ինչպէս նաեւ հայկական դպրոցը գտնւում են ՀՅԴ կուսակցութեան խիստ ազդեցութեան տակ[16]: Պայմանաւորուած՝ պետութեան ներքին քաղաքականութեամբ, Քուէյթի հայօճախում չկան ակումբներ եւ այլ տեսակի քաղաքական գիծ ունեցող միութիւններ: Հայօճախն ունի «Արարատ» ֆուտբոլի խումբ, ինչպէս նաեւ սկաուտական շարժում, որը կոչւում է «Քուէյթի հայ արիներ»: Գործում է «Քուէյթի հայրենասէր հայերի յանձնախումբ»ը, ատենապետն է Արշակ Շալջեանը, իսկ «Նոր սերունդ» երիտասարդական խմբինը՝ Վարդան Նարինեանը: Յանձնախումբը ստեղծուել է 1980-81ին հասարակական գործիչներ Արշակ Շալջեանի, Կարպիս Տէրպետրոսեանի եւ Վասիլ Աքըլեանի ջանքերով: Յանձնախումբն իր շարքերում ընդգրկում է մօտ 300 անդամներ: Յանձնախմբի նպատակն ու գործունէութեան բուն էութիւնը Քուէյթի հայօճախը հայրենիքին մերձեցնելը, այնտեղ գիտութեան ու մշակոյթի ասպարէզներում տեղի ունեցող խոշոր իրադարձութիւններին աւելի մօտիկից ծանօթացնելն է[17]:

---

[14] Նոյն, g. 15, գ. 722, թ. 1:

[15] Նոյն, թ. 1-2:

[16] Նոյն, թ. 2:

[17] Նոյն, թ. 2-3:

Ըստ տեղեկանքի՝ 1984-85 տարեշրջանում Քուէյթի ազգային վարժարանը բոլորելու է իր գոյութեան 25ամեակը: Դպրոցի տնօրէնը Տիգրան Ճինպաշեանն է: Տեղեկանքը որոշ մանրամասներ է յայտնում նաեւ դպրոցի հիմնադրման եւ կառավարման մասին՝ նշելով, որ հայօճախի անդամների բազմացումը, միքանի անհատ հայերի ստիպել է մտածելու հայկական դպրոց հիմնելու մասին, իսկ յետագայում այն փոխանցուել է ազգային իշխանութեանը, որը դպրոցի ղեկավարումը վստահել է իր կողմից նշանակուած հոգաբարձութեանը: Վերջինիս ատենապետն է Ալեքսան Պէրպէրեանը: Ազգային դպրոցն ունի մանկապարտէզ, նախակրթարան եւ միջնակարգ դպրոցի բաժիններ: Միջնակարգ դպրոցը անկախ դպրոց է եւ կոչւում է ազգային ճեմարան: 1978-79 կրթաշրջանում Քուէյթի ազգային վարժարանը տուել է երկրորդական դասարանների իր առաջին շրջանաւարտները, սակայն յաջորդ կրթաշրջանին այն կարողացել է պահել միայն երկրորդական միքանի դասարաններ՝ պայմանաւորուած Քուէյթի կրթութեան նախարարութեան խստապահանջ մօտեցումներով: 1981-82 կրթաշրջանում երկրորդականի 9րդ եւ 10րդ դասարանները վերաբացուել են, սակայն շատ փոքրաթիւ աշակերտներով, քանի որ հայ ծնողները նախընտրում են իրենց զաւակներին ուղարկել օտար դպրոցներ: Քուէյթի ազգային վարժարանն ու ճեմարանը միասնաբար ամբողջացնում են հայկական երկրորդական վարժարանի բոլոր տուեալները՝ մանկապարտէզից մինչեւ երկրորդական 12րդ դասարան[18]:

Քուէյթի ազգային վարժարանի հրաւէրով 1990ականների սկզբին Քուէյթ է այցելել արուեստագէտների խումբ: Խմբի ծրագրում ընդգրկուած է եղել համերգ եւ մասնակցութիւն վարժարանի տարեվերջի պարահանդէսին: Ծրագիրն իրագործելուց բացի խումբը տուել է եւս մէկ համերգ տեղի ինչակեան շրջանակի ղեկավարութեան խնդրանքով, կազմակերպուել են ելոյթներ մայրաքաղաքի «աշխատաւորական» թաղամասում, վարժարանում: Խմբի ղեկավար Գուրգէն Մելիքեանը առաջնորդարանում հանդէս է եկել «Իրադրութիւնը Հայաստանում եւ Արցախում» թեմայով զեկուցմամբ[19]:

Ուշագրաւ է, որ եթէ Քուէյթի հայօճախը ձեւաւորման սկզբնական փուլում կուսակցական ընդգծուած բաժանումներ չունէր, ինչպէս նշւում է արխիւային տեղեկանքներում, ապա 1990ականներից սկսում է նկատուել այլ պատկեր: Քուէյթի հայօճախ արուեստագէտների խմբի վերոնշեալ այցի ընթացում խմբի կազմում է եղել նաեւ ՍՀՄԿԿ աշխատակից Ն. Պետրոսեանը (աւագ խորհրդական): Վերջինս նշում է, որ հայօճախում իրադրութիւնը աւելի քան սրուած էր, եւ եթէ նախկինում հակամարտութիւնը ինչակեան եւ դաշնակցական շրջանակների միջեւ էր, այժմ ընդունել էր աւելի ընդգծուած ձեւեր: 1990 Յունուարին Սոցիալ-դեմոկրատ ինչակեան կուսակցութեան

[18] Նոյն, թ. 3:

[19] Նոյն, ց. 16, գ. 196, թ. 1:

ղեկավարութիւնը Քուէյթ է գործուղել կենտրոնական վարչութեան անդամ Տիգրան Սարաֆեանին, որը տեղում ստեղծել է յիշեալ կուսակցութեան տեղական վարչութիւն: Այս քայլը մի շարք հնչակեան գործիչների կողմից ընդունուել է որպէս հայօճախի համախմբման ճանապարհին արհեստականօրէն ստեղծուած արգելք, եւ այժմ նախկինում անբաժանելի թուացող բարեկամները չեն բարեւում միմեանց, չնայած պատկանում են նոյն կուսակցութեանը: ՍՀՄԿԿ աշխատակիցը հանգամանալից զրոյցներ է ունեցել հնչակեան, համայնավար, դաշնակցական, ինչպէս նաեւ չէզոք ազգային գործիչների հետ՝ նպատակ ունենալով գտնել փոխադարձ հաշտութեան ընդհանուր եզրեր, շտկել վիճակը հակամարտող կողմերի ներսում եւ միմեանց միջեւ: Ըստ նրա՝ բոլոր կողմերի ճնշող մեծամասնութիւնը, որը հեռու է ղեկավար աթոռներից, շատ աւելի պատրաստ է հաշտութեան ձեռք մեկնելու, քան ղեկավարութիւնը: Բացի դրանից՝ կուսակցական ղեկավարները չեն վայելում պատշաճ վստահութիւն: Ինչեւիցէ, համայնքային գործիչների եւ ՍՀՄԿԿ աշխատակցի հանդիպումների արդիւնքում մշակւում է հաշտութեան տանող միջոցառումների մօտաւոր ծրագիր, որին աշխուժօրէն պէտք է մասնակցէր նաեւ ՍՀՄԿԿն[20]:

ՍՀՄԿԿ աշխատակցի՝ Քուէյթի հայօճախ վերոնշեալ այցելութեան ընթացում գործուն աշխատանքներ են տարուել նաեւ Հայաստանին եւ Արցախին նիւթական օգնութիւն տրամադրելու ուղղութեամբ: Մասնաւորապէս դպրոցի պարահանդէսում հաւաքուած գումարով (մօտ 5 հազար դոլար) գնուել է ինքնաշարժ, որը պէտք է աճուրդի հանուէր Մոսկուայում եւ գումարը նուիրուէր «Ամարաս» կազմակերպութեանը: Քուէյթաբնակ Հայկ Սարգսեանը եւ լիբանանաբնակ Վահագն Քիրիշճեանը իրենց միջոցներով գրնել են կարի փոքր արտադրամասի սարքաւորում (մօտ 30 հազար դոլար արժէքով), որն ուղարկուել է Արցախ: Ս. Էջմիածնին նուիրուել է 200 կգ բարձրորակ խունկ, որը խումբը յանձնել է հասցէատիրոջը[21]:

Մեծ Եղեռնի 75ամեակին նուիրուած միջոցառումներին մասնակցելու նպատակով ի թիւս այլ երկրների Քուէյթի եւ ԱՄԷ հայօճախներ են գործուղուել անուանի պատմաբաններ, հրապարակախօսներ[22]:

1974-79ի նամակագրական նիւթերը վկայում են, որ ՍՀՄԿԿն Քուէյթի հայօճախի մի շարք հասարակական գործիչների, անհատների (Արա Գրնունի, Արտաւազդ Պետրոսեան, Յովհաննէս Ափրիկեան, Յակոբ Յակոբեան, Ժան Օհանեան, այլք) բաժանորդագրել է *Հայրենիքի ձայն* շաբաթաթերթին եւ *Սովետական Հայաստան* ամսագրին[23]:

---

[20] Նոյն, թ. 1-2:

[21] Նոյն, թ. 2:

[22] Նոյն, ց. 16, գ. 196, թ.2:

[23] Նոյն, ց. 8, գ. 132, թ. 1-15:

1976ին ուսուցիչների կատարելագործման դասընթացին մասնակցելու նպատակով հրաւիրուել է մէկ ուսուցիչ[24]:

1981ին Քուէյթում ԽՍՀՄ դեսպանատան կողմից ուղարկուած նամակում նշւում է, որ Քուէյթի հայութիւնը - մօտ՝ 10.000 մարդ - յաճախ է խնդրում դեսպանատանը Սովետական Հայաստանի կեանքի վերաբերեալ նիւթեր տրամադրել՝ հայոց լեզուով: Դեսպանատունը, նշելով, որ նիւթեր չունի, խնդրում է համապատասխան նիւթերն ուղարկել հայերէնով[25]:

1983ին ՍՀՄԿԿ նախագահ Վարդգէս Համազասպեանը Կարպիս Տէր-պետրոսեանին ուղղուած նամակում յայտնում է, որ Քուէյթ է մեկնելու Հայաստանի Արտասահմանեան տուրիզմի վարչութեան պետ Հենրիկ Լիլոյեանը՝ տեղի զբօսաշրջութեան նախարարի հետ բանակցութիւններ վարելու նպատակով: Համազասպեանը խնդրում է կազմակերպել Լիլոյեանի պատշաճ ընդունելութիւնը եւ հայօճախում հանդիպումներ կազմակերպել[26]:

1986 Ապրիլի 26ից Մայիսի 7ը Քուէյթից Հայաստան է ժամանել բանուորական խումբ: Այցելել են Երեւանի մետրօ, ծանօթացել քաղաքին, այցելել Ժամանակակից արուեստի թանգարան, Հայաստանի պատմութեան եւ յեղափոխութեան թանգարան, մասնակցել մշակութային միջոցառման, մայիսմէկեան շքերթին, այցելել Լենինի անուան հրապարակ, Գառնի, Գեղարդ, Խոր Վիրապ, Պետական պատկերասրահ, Մարզահամերգային համալիր, Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, Յաղթանակի զբօսայգի, Մատենադարան[27]:

Նամակագրական նիւթերը վկայում են, որ ՍՀՄԿԿն գործուն կապ է պահպանել Քուէյթի ազգային վարժարանի հետ: Մասնաւորապէս 23.06.1987 թուակիր նամակով ազգային վարժարանի տնօրէն Տիգրան Ճինպաշեանը շնորհակալութիւն է յայտնում անցնող տարեշրջանում ստացած դասագրքերի, թերթերի, գեղարուեստական գրականութեան համար, 1987-88 կրթաշրջանի համար խնդրում է ուղարկել *Մայրենի լեզու Դ. տարի* դասագրքի 75 օրինակ[28]:

1987ի տարեվերջին Ճինպաշեանի կողմից ՍՀՄԿԿ ուղղուած մէկ այլ նամակում նշւում է, որ Քուէյթի հայ ազգային վարժարանը շուրջ 7000 անդամ ունեցող հայօճախի միակ կրթական հաստատութիւնն է: 1987-88 կըրթաշրջանում ունեցել է 730 աշակերտ՝ մանկապարտէզի (3 կարգ), նախակրթարանի (4 կարգ), միջնակարգի 4 (կարգ) եւ երկրորդականի (4 կարգ): Երկրորդականը, որն ազգային ճեմարան էր կոչւում, երկրորդ հերթի դըպ-

[24] Նոյն, թ. 18:
[25] Նոյն, ց. 9, գ 52, թ. 3:
[26] Նոյն, ց. 15, գ. 664, թ. 8:
[27] Նոյն, ց. 15, գ. 722, թ. 27-29:
[28] Նոյն, ց. 15, գ. 376, թ. 36:

րոց էր, այսինքն գործում է յետմիջօրէին: Վարժարանը հիմնուել է 28 տարի առաջ վարձու շէնքի մէջ, այնուհետեւ հետզհետէ բարգաւաճել՝ ունենալով իր սեփական շէնքը: Հայագիտական դասանիւթերից ուսուցանւում են հայոց լեզու, գրականութիւն, պատմութիւն, մշակոյթ: Դպրոցը պահպանում է հայօճախի անդամների նիւթական միջոցներով[29]: Ճինպաշեանը ցաւով նշում է, որ հայրենի մտաւորականների եւ արուեստագէտների այցելութիւնները հազուադէպ են, իսկ երբ առիթ է եղել հայրենիքից հիւր ընդունելու, դպրոցի մանկավարժական եւ վարչական անձնակազմի, ողջ աշակերտութեան համար այն «տօն եղած է, ոգեւորութեան եւ հայրենասիրական ապրումներու վերանորոգման առիթ»: Քուէյթի ազգային վարժարանի տնօրէնը կարեւորում է հայրենիքի հետ կապերի զարգացումը՝ ընդգծելով, որ «Սփիւռքի մէջ կրթական ու մշակութային ամէն աշխատանք Հայաստանով կ'իմաստաւորուի»[30]: Միեւնոյն ժամանակ, Ճինպաշեանը խընդրում է Ա, Բ եւ Գ տարիների համար ուղարկել *Մայրենի լեզուի* 75ական դասագիրք: Սոյն նամակից, տեղեկանում ենք նաեւ, որ Քուէյթից Հայաստանում բարձրագոյն կրթութիւն ստանալու հնարաւորութիւն ունեցող ուսանողների թիւը զգալիօրէն մեծացել է: Սակայն, միեւնոյն ժամանակ, նախորդ հինգ տարիների ընթացքում Քուէյթի ազգային վարժարանից ոչ մի ուսուցիչ չի մասնակցել Հայաստանում վերապատրաստման դասընթացի: Ինչ վերաբերում է հայրենի ճամբարներում աշակերտների հանգստին՝ Ճինպաշեանը նշում է, որ հրաւէրները ուղարկւում են «մեզի անծանօթ ճամբաներով», ուստի խնդրում է սրբագրել այդ անկանոնութիւնը, որպէսզի ընտրութիւնը կատարուի ըստ արժանիքի[31]:

ՍՀՄԿԿն գործուն կապ է պահպանել նաեւ «Քուէյթահայ հայրենասէրներու համախմբում»ի հետ՝ իրականացնելով մշակութային միջոցառումների կազմակերպման, երիտասարդների Հայաստանում բարձրագոյն կրթութիւն ստանալու հարցերի կազմակերպման աշխատանքներ[32]:

ՍՀՄԿԿ ուղղուած 15.04.1987 թուակիր նամակով «Քուէյթահայ հայրենասէրներու համախմբում»ի ատենապետ Արշակ Շալջեանը խնդրում է 1987 Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներին 6-7 հոգանոց գեղարուեստական խմբեր ուղարկել՝ նշելով, որ իրենք կը հոգան բոլոր ծախսերը[33]: 15.02.1988 թուակիր նամակով Շալջեանը յայտնում է, որ գեղարուեստական խմբի այցելութիւնը մեծ նշանակութիւն է ունեցել հայօճախի հասարակական կեանքի համար[34]:

---

[29] Նոյն, թ. 6:
[30] Նոյն, թ. 7:
[31] Նոյն, թ. 7-8:
[32] Նոյն, ց. 15, գ. 376, թ. 13-16:
[33] Նոյն, թ. 38-39:
[34] Նոյն, թ. 23:

30.04.1988 թուակիր նամակով Վահէ Կոճեանը ՍՀՄԿԿին յայտնում է, որ ընտրուել է «Քուէյթահայ հայրենասէրներու համախմբում»ի նոր վարչական կազմ՝ Վահէ Կոճեան (ատենապետ), Նուպար Ափրիկեան (ատենադպիր), Ճորճ Թահմազեան (գանձապահ), Վրէժ Պոյաճեան (հաշուապահ), Արտաւազդ Իսաղուլեան-Հայդուկ Ազարեան-Յակոբ Սաչեան (անդամներ)[35]:

1988 Դեկտեմբերի 7ի Սպիտակի երկրաշարժից յետոյ Քուէյթի հայօճախը եւս արագ կազմակերպուեց՝ իր աջակցութիւնը բերելով աղէտից տուժած հայրենակիցներին: 1988 Դեկտեմբերի 19ի նամակով Քուէյթի հայերի Կաթողիկոսական փոխանորդութիւնը իր ցաւակցութիւններն է յայտնում երկրաշարժի առիթով՝ նշելով, որ ձեւաւորուել է «Տեղահանուածների եւ աղէտեալների յանձնախումբ»՝ բաղկացած հայօճախում գործող բոլոր մարմիններից: Նշւում է, որ Aeroflot ընկերութեան աջակցութեամբ հնարաւոր է եղել յատուկ ինքնաթիռ ապահովել եւ Հայաստան են ժամանել յանձնախմբի 4 անդամ, 2 բժիշկ: Ուղարկուել է սնունդ, հագուստ: «Տեղահանուածների եւ աղէտեալների յանձնախմբի» անդամներն են Ալեքսան Պերպերեանը, Ժիրայր Ուրֆալեանը, Դաւիթ Թաթոյեանը, Քեռի Սարգիսեանը, Տիգրան Ճինպաշեանը, Վասիլ Աքըլեանը, Վահէ Կոճեանը, Արտաւազդ Իսաղուլեանը, Սերոբ Ասատուրեանը, Մայիլ Յակոբեանը, Մանուէլ Չարշաֆեանը, Դոկտ. Ժանօ Պեպեճեանը[36]:

ՍՀՄԿԿ գործունէութեան 1989-91ի հաշուետուութեան համաձայն՝ մայիսմէկեան տօնակատարութիւններին մասնակցելու 10օրեայ ժամկէտով Երեւանում է գտնուել Քուէյթ հայօճախից ժամանած 4 հոգանոց խումբը՝ Կարապետ Տէրպետրոսեան՝ ղեկավար, Արտաւազդ Իսաղուլեան, Բարսեղ Թութունջեան, Մինաս Արթինեան՝ անդամներ: Հիւրերը եղել են ՍՀՄԿԿում, ծանօթացել Արեւելեան երկրների բաժնի աշխատանքային ծրագրին, այցելել Հայաստանի տեսարժան վայրեր, թանգարաններ ու ցուցահանդէսներ, ծանօթացել երկրի տնտեսական ու մշակութային նուաճումներին, զրուցել աշխատաւորութեան եւ մտաւորականութեան հետ: Անդրադառնալով Քուէյթահայութեան համայնքային խնդիրներին՝ հիւրերը ցաւով նշել են, որ Քուէյթում համարեա չեն լսւում Հայաստանից հեռարձակուող ռադիո-հաղորդումները, յաճախ իրենց նպատակին չեն ծառայում նաեւ ՍՀՄԿԿի կողմից ուղարկուող թերթերն ու ամսագրերը, որոնք Քուէյթ են հասնում զգալի ուշացումով եւ կորցնում ուժն ու թարմութիւնը: Տեղի հայութիւնը մեծ ցանկութիւն ունի ձեռք բերելու հայրենի կեանքն արտացոլող կինօ եւ տեսերիզ ժապաւէններ: ՍՀՄԿԿի կողմից պարբերաբար առաքուող դասագրքերն ու գեղարուեստական գրականութիւնը հաճոյքով է ընդունւում եւ գնալով մեծանում է նրանց պահանջարկը: ՍՀՄԿԿ ղեկավարու-

[35] Նոյն, թ. 26-29:

[36] Նոյն, g. 15, գ. 537, թ. 2-3:

թեան հետ հանդիպումների ընթացքում քննարկուել են ուսանողների ընդունելութեան, դպրոցականների հանգստին եւ ուսուցիչների կատարելագործման դասընթացներին վերաբերող հարցեր: Անդրադառնալով քուէյթահայութեան վիճակին՝ խմբի անդամները նշել են, որ նաւթի գնի անկմամբ պայմանաւորուած՝ երկրում տիրող ոչ կայուն կացութեան, ինչպէս նաեւ կառավարութեան կողմից ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ կիրառուող քաղաքականութեան հետեւանքով երկրում հայերի թիւն աստիճանաբար նուազում է: 1980ին 10 հազարի դիմաց հայութեան թիւն արդէն 8 հազար է[37]:

Ամփոփելով ՍՀՄԿԿ Քուէյթի հայօճախի ուղղութեամբ իրականացրած աշխատանքները, կարող ենք նշել, որ քուէյթահայ կեանքում ՍՀՄԿԿն իրականացրել է կարեւոր առաքելութիւն: Երբ ստեղծուեց ՍՀՄԿԿն, Սփիւռքի շատ այլ վայրերի հայութիւնն արդէն իսկ կազմակերպուած էր եւ գոյութիւն ունէին կայացած հայօճախներ, իսկ ՍՀՄԿԿն իր գործունէութեամբ պարզապէս օժանդակում էր հայապահպանութեանը: Քուէյթի հայօճախի պարագայում, որը 1950ականների կէսերից նոր ձեւաւորուող հայօճախ էր, ՍՀՄԿԿ գործունէութիւնը ստանում էր համեմատաբար աւելի մեծ նշանակութիւն, քանի որ ՍՀՄԿԿն իր գործունէութեամբ, փաստօրէն, նպաստում էր նաեւ հայօճախի ձեւաւորման-զօրացմանը:

Վերոնշեալին պէտք է աւելացնել նաեւ այն, որ ի տարբերութիւն Սփիւռքի այլ հայօճախների, որտեղ հայութիւնը ՍՀՄԿԿ ստեղծման պահին, ընդհանուր առմամբ, արդէն ընդունող երկրների լիիրաւ քաղաքացի էր, քուէյթաբնակ հայութիւնը չունէր քաղաքացու կարգավիճակ, ինչը ստիպում էր է՛լ աւելի արժեւորել հայրենիքի հետ ունեցած կապերը:

ՍՀՄԿԿ-ԱՄԷ (ԱԲՈՒ ԴԱԲԻ, ՇԱՐԺԱ-ԴՈՒԲԱՅ) ԿԱՊԵՐ

ՍՀՄԿԿ-ԱՄԷ հայօճախ կապերի վերաբերեալ ՀԱԱում թէեւ առկայ չեն մեծաքանակ նիւթեր, սակայն պահպանուած փաստաթղթերը թոյլ են տալիս ընդհանրական պատկերացում կազմել Խորհրդային Հայաստանի եւ ԱՄԷ (Աբու-Դաբի, Շարժա-Դուբայ) հայօճախի կապերի մասին:

ՍՀՄԿԿ 1973ի արխիւային նիւթերում պահպանուել է «Կանոնագրութիւն Ապու Տապիի հայ համայնքի» վերնագրով ուշագրաւ մի փաստաթուղթ[38] (տե՛ս՝ Յաւելուած), որը վաւերացուել է մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կեդրոնական վարչութեան կողմից: Կանոնագրութիւնն արտացոլում է համայնքային կեանքի կազմակերպման համար պատասխանատու օղակների ենթակայութիւնն ու աստիճանակարգութիւնը, ըստ որի համայնքային կեանքի կազմակերպման գործում առանցքային դերը պատկանում է եկեղեցուն: Ըստ կանոնագրութեան առաջին յոդ-

[37] Նոյն, ց. 15, գ. 722, թ. 24-25:
[38] Նոյն, ց. 14, գ. 204, թ. 1-3:

ուածի՝ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կենտրոնական վարչութիւնը Ծոցի արաբական շրջանների համար նշանակում է կաթողիկոսական փոխանորդ, որի կենտրոնատեղին Քուէյթն է: Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կենտրոնական վարչութեան կողմից նշանակւում էին ազգային վարչութեան անդամները՝ 5, 7, կամ 9 անձ (պաշտօնավարման շրջանը՝ երկու տարի): Իր հերթին՝ Ազգային վարչութիւնը իր հոգածութեան ներքոյ գտնուող հայ վարժարանի համար նշանակում է հոգաբարձու մարմին՝ բաղկացած 3, 5, կամ 7 անձանցից: Հոգաբարձու մարմնի կողմից՝ ազգային վարչութեան հետ խորհրդակցաբար նշանակւում է վարժարանի տընօրէնը, որը հաշուետու է Հոգաբարձու մարմնին[39]:

Աբու Դաբիի հայօճախի մասին որոշ պատկերացումներ է տալիս 1985ի արխիւային նիւթերից մէկը: Մասնաւորապէս նշւում է, որ Աբու Դաբիում կայ 300 հայ ընտանիք՝ բաղկացած լիբանահայերից, սիրիահայերից, պարսկահայերից: Ձեւաւորուել է «Ազգային մարմին»՝ ճանաչուած վարչութիւն, որը վարում է ազգային կեանքը, սակայն չունի պետական ճանաչում: Վարչութեան գլխաւոր աշխատանքներն են դպրոցի պահպանութիւնը, ազգային զանազան տօնակատարութիւնների, տարեկան մէկ կամ երկու պարահանդէսների կազմակերպումը՝ դպրոցի ծախսերը հոգալու նպատակով: Հայօճախի միօրեայ դպրոցն ունի 50-55 աշակերտ, որոնց տարիքը երեքից տասներեք է, ուսուցիչների կազմը բաղկացած է 7 նուիրեալ ուսուցիչներից: Դպրոցն ունի 6 դասարան: Սրանից բացի՝ վարչութեան նախկին անդամ Վարդան Ինկիլիզեանը (ճարտարապետ) ունի իր առանձին կիրակնօրեայ դպրոցը, որն առաւելաբար աւանդում է կրօնական գիտելիք: Դպրոցն ունի 10-15 աշակերտ: Ըստ տեղեկանքի՝ Ինկիլիզեանը հեռացել է ազգային մարմնից, քանի որ չէր ուզում ենթարկուել նրա ցուցումներին, նախընտրել է գործել առանձին՝ օգտագործելով Կաթողիկէ համայնքի դպրոցն ու եկեղեցին: Ազգային մարմինն օգտագործում է անգլիական միաբանութեան եկեղեցին՝ տարեկան երկու-երեք պատարագ կատարելու համար: Նշւում է, որ Ազգային մարմնի կազմի նշանակման շրջանը արդէն վերջացել է, սակայն առաջնորդ Օշական վարդապետը, ըստ երեւոյթին փորձում է երկարաձգել այդ շրջանը, որովհետեւ նոր մարմնի ձեւաւորման աշխատանքներով զբաղուելու ժամանակ չունի: Այնուամենայնիւ սա խնդիր չի առաջացնում, քանի որ գործող մարմինն ինքը առաջարկում է անուններ՝ պահելով որոշ դիրքի տէր ազգայինների անհրաժեշտ ներկայութիւնը: Արխիւային փաստաթղթից պարզ է դառնում, որ ազգային մարմին ընտրելու գործընթացը սահուն չէր ընթանում եւ առկայ հակասութիւնները տանում էին նրան, որ գուցէ երկրորդ մարմին ձեւաւորուէր. իրողութիւն, որի հաւանականութիւնը փոքր չէր՝ հաշուի առնելով հայօճախի անդամների այլազանութիւնները՝ հակառակ փոքր թուին: Գործող կազմի անդամներն էին.- Վա-

[39] Նոյն, g. 14, գ. 204, թ. 1-3:

հան Մաղաքեանը (ատենապետ), Հրաչ Արզումանեանը (փոխատենապետ), Լեւոն Տէրյովհաննէսեանը (ատենադպիր), Վաչէ Գասէմճեանը (հաշուապահ-գանձապահ), Վարուժան Լափոյեանը, Ռաֆֆի Կիզէլեանը եւ Գէորգ ՛՛՛ (անդամներ):

Նշւում է, որ այս անձանցից Լափոյեանը եւ Գասէմճեանը կուսակցականներ են. առաջինը դաշնակցական, երկրորդը՝ հնչակեան, մնացեալները՝ չէզոք են, կամ տարբեր հոսանքների համակիրներ: Սակայն, կուսակցական հարցեր չեն ծագում, քանի որ բոլորն էլ դա անտեղի են համարում՝ պայմանաւորուած այն իրողութեամբ, որ Աբու Դաբբի հայօճախը մնայուն չեն համարում: Հայօճախը արդէն իսկ սկսել էր նուազել եւ Աբու Դաբիի, ինչպէս նաեւ Ծոցի արաբական այլ երկրներում ապրող հայութեան կացութիւնը դիտւում էր խիստ ժամանակաւոր: Տեղեկանքում նշւում է նաեւ, որ եթէ Լիբանանի եւ Պարսկաստանի կացութիւնը շտկուի, շատերը կը վերադառնան իրենց երկիր կամ կը մեկնեն այլ վայրեր: Ըստ տեղեկանքի՝ այդ թափով հայօճախը հնարաւոր է պահել 4-5 տարի եւս, եթէ անակնկալ եւ դրական փոփոխութիւններ տեղի չունենան՝ յատկապէս նաւթի վաճառքի եւ գների բարձրացման առնչութեամբ[40]:

ՍՀՄԿԿ արխիւում պահպանուող նիւթերից մէկը՝ պատրաստուած 1985-ին Նշան Պասմաճեանի կողմից, տեղեկութիւններ է պարունակում Շարժա-Դուբայի հայօճախի մասին՝ մասնաւորապէս նշելով, որ այն բաղկացած է շուրջ 700 անձանցից (մօտ 150 ընտանիք): Նշւում է, որ աշխատանքի բերումով այստեղ են գաղթել սիրիահայեր, լիբանահայեր, պարսկահայեր եւ քիչ թուով անգլիահայեր, եգիպտահայեր, եթովպահայեր, ամերիկահայեր եւն.: Գաղութի ազգային կեանքը վարում է Կիլիկիոյ կաթողիկոսական փոխանորդութեան կողմից նշանակուած ազգային վարչութիւնը, որի նշանակումը տեղի է ունենում երկու տարին մէկ անգամ: Ազգային վարչութիւնը զբաղւում է հայօճախի ընկերային եւ յատկապէս կրթական գործերով, որի արտացոլումը Շարժայի միօրեայ վարժարան է: Վերջինս գործում է ամէն Ուրբաթ՝ ժամը 10:00-13:00: Վարժարանի աշակերտների թիւը 55 է: Ունի մանկապարտէզի մէկ դասարան եւ նախակրթարանի 4 դասարաններ: Դասաւանդւում են հայոց լեզու, հայոց պատմութիւն, հայ երաժշտութիւն, կրօն կամ բարոյախօսութիւն: Դասերն անց են կացւում կաթոլիկ եկեղեցուն (St. Michael Church) կից սրահում եւ սենեակներում՝ վարձակալութեամբ[41]:

30.01.1982 թուակիր նամակով Շարժա-Դուբայի ազգային վարչութիւնը ՍՀՄԿԿ նախագահ Համազասպեանին տեղեկացնում է, որ հայօճախի ազգային վարչութիւնը աւարտել է իր երկամեայ շրջանը եւ նշանակուել է նոր վարչութեան մարմին (ատենապետ՝ Տիգրան Թուջեան): Նախկին վարչու-

[40] Նոյն, g. 15, գ. 722, թ. 12-19:
[41] Նոյն, g. 15, գ. 722, թ. 20-22:

թեան ջանքերով հիմնուած միօրեայ վարժարանը շարունակում է գործել իսկ աշակերտութեան թիւը հիմնուելու պահից իվեր կրկնապատկուել է՝ հասնելով 60ի: Նախկին վարչութեան կողմից կազմաւորուել են նաեւ «Թատրոն 81» թատերախումբը եւ հայկական ժողովրդական պարախումբը[42]:

13.04.82 թուակիր նամակով Համազասպեանը Թուջեանին շնորհաւորում է ազգային վարչութեան ատենապետ վերընտրուելու առթիւ: Նշւում է, որ ՍՀՄԿԿն, աշխատելով օգտակար լինել վարչութեան աշխատանքներին, առաքել է հայատիպ մամուլ, գրականութիւն, դասագրքեր: Վարժարանից հայրենիք են հրաւիրուել մէկ ուսուցիչ եւ երկու երեխայ[43]:

Ծոցի արաբական երկրների կաթողիկոսական փոխանորդ Օշական Ծ. վրդ. Չոլոյեանը 1990ին Կ. Դալլաքեանին ուղղած նամակում յայտնում է, որ Շարժա-Դուբայ Էմիրութիւնների ազգային վարչութեան ատենապետ է վերընտրուել Պետրոս Ասլանեանը, որի հետ ՍՀՄԿԿն արդէն կապեր ունի, իսկ Աբու Դաբիի ազգային վարչութեան ատենապետ է ընտրուել Լեւոն Տէրյովհաննէսեանը: Վերջինիս հետ կապեր հաստատելու համար Օշական Ծ. վրդ.ը տրամադրում է հասցէն: Նամակում խնդրում է նաեւ փոքրիկների համար հրատարակութիւններ ուղարկել, ինչպէս նաեւ *Հայրենիքի ձայն* շաբաթաթերթը, որպէսզի վարժարանի ուսուցիչները եւ շրջանակը տեղեակ լինեն հայրենի անցուդարձին[44]:

Ամփոփելով Աբու Դաբիի եւ Շարժա-Դուբայի հայօճախների ուղղութեամբ ՍՀՄԿԿ իրականցրած աշխատանքները, կարող ենք նշել, որ ՍՀՄԿԿ իրականացրած աշխատանքը ինչպէս Քուէյթի, այնպէս էլ Աբու Դաբիի եւ Շարժա-Դուբայի հայօճախների ձեւաւորման փուլում համայնքային կեանքի աշխուժացման, հայրենիքի հետ կապերի պահպանման տեսանկիւնից եղել է կարեւոր գործօն:

Իրականացուած աշխատանքների ծաւալը, իհարկէ, չենք կարող համեմատել աւելի վաղ ձեւաւորուած եւ աւելի մեծաթիւ հայօճախների հետ, սակայն Քուէյթի, ԱՄԷ (Աբու Դաբի, Շարժա-Դուբայ) հայօճախների հետ եւս ՍՀՄԿԿն աշխատանքներ իրականացրել է իր գործունէութեան բոլոր ուղղութիւններով՝ հասարակական, մշակութային, կրթական եւն., որի թւում են ՍՀՄԿԿ ներկայացուցիչների եւ Խորհրդային Հայաստանի մշակութային տարբեր գործիչների գործուղումները հայօճախներ, սփիւռքահայ ուսուցիչների վերապատրաստումը, դպրոցականների հանգստի անցկացման ծրագրերը Հայաստանում, հայօճախներից աշխատաւորների հիւրընկալութիւնը Հայաստանում Մայիսի 1ի տօնակատարութիւններին մասնակցելու

[42] Նոյն, g. 15, գ. 244, թ. 3-4:
[43] Նոյն, թ. 1:
[44] Նոյն, g. 15, գ. 537, թ. 1:

նպատակով, ինչպէս նաեւ Սպիտակի երկրաշարժից յետոյ Հայաստանին օգնութեան տրամադրման աշխատանքների կազմակերպումը եւն.:

Չնայած այն իրողութեանը, որ ՍՀՄԿԿ գործունէութիւնը կատարւում էր Խորհրդային Միութեան քաղաքական համակարգի սկզբունքներին ու տրամաբանութեանը համապատասխան, եւ միեւնոյն ժամանակ կար կոմունիստական գաղափարախօսութիւնը տարածելու եւ Խորհրդային Միութեան առաջընթացի եւ յաջողութիւնների մասին քարոզչութիւն ապահովելու որոշակի ակնկալիք, սակայն այն բաւականաչափ նպաստել է Հայրենիք-Սփիւռք կենսական կապի պահպանմանը եւ հայապահպանութեանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Յօդուածը, հիմնուելով Հայաստանի Ազգային արխիւում պահպանուող Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի (ՍՀՄԿԿ) արխիւային ֆոնդի նիւթերի վրայ, ներկայացնում է Քուէյթի եւ ԱՄԷ (Աբու Դաբի, Շարժա-Դուբայ) հայօճախների ուղղութեամբ ՍՀՄԿԿ իրականացրած աշխատանքները: Վերջինս ընդգրկում է ՍՀՄԿԿ հիմնական գործունէութեան բոլոր ուղղութիւնները՝ հասարակական, մշակութային, կրթական եւն.: Այդ թւում են ՍՀՄԿԿ ներկայացուցիչների եւ Խորհրդային Հայաստանի մշակութային տարբեր գործիչների գործուղումները հայօճախներ, սփիւռքահայ ուսուցիչների վերապատրաստման եւ դպրոցականների հանգստի կազմակերպման ծրագրերը Հայաստանում, համայնքային ներկայացուցիչների հիւրընկալութիւնը Հայաստանում, նրանց այցերը Հայաստանի տեսարժան վայրեր, մասնակցութիւնը Մայիսի 1ի տօնակատարութիւններին, ինչպէս նաեւ Սպիտակի երկրաշարժից յետոյ Հայաստանին հայօճախներից օգնութեան տրամադրման աշխատանքների կազմակերպումը եւն.: Հաշուի առնելով յատկապէս, որ այդ գործունէութիւնը իրականացւում էր Քուէյթի եւ ԱՄԷ (Աբու Դաբի, Շարժա-Դուբայ) հայօճախների հենց ձեւաւորման փուլից սկսած, այն, համայնքային կեանքի կազմակերպման, ինքնութեան պահպանման տեսանկիւնից ունեցել է զգալի դրական նշանակութիւն:

THE COMMITTEE OF CULTURAL RELATIONS WITH THE ARMENIAN DIASPORA AND THE ARMENIANS OF THE ARAB GULF STATES

(Summary)

Hratsin Vardanyan
vardanyan.h@ysu.am

The paper sheds light on the cooperation between the Committee of Cultural Relations with the Armenian Diaspora (CRAD) and the Armenians of the Arab Gulf States

The paper focuses on the cultural, social, educational, touristic relations CRAD has established with the Armenian communities of these states. It narrates the visits of CRAD representatives, Soviet Armenian cultural figures, to these communities as well as enumerates the various expressions of these activities including teachers' visits to Soviet Armenia, summer visits of students as well as visits of community figures to participate in various Soviet Armenian ceremonies, fund raisings, etc.

To initiate its relationship CRAD developed informative files on these communities, which were archived and are currently very useful to reconstruct the history and profile of these Armenian communities.

There are more archival materials on the Armenian communities of Kuwait and the UAE than on the other regions, which enable us to have a better picture of the formation, demography, institutions, social and cultural life of these communities than of others.

Հայաստանի Հանրապետութիւն-- Ծոցի Արաբական Երկրներ. Միջպետական Յարաբերութիւններ

ՍՕՆԱ ՏՈՆԻԿԵԱՆ (sotonik@ysu.am)
ԷԼԻԶ ԳԷՈՐԳԵԱՆ (elizgevorgyan@gmail.com)

Վերջին տարիներին զգալի աշխուժութիւն է նկատւում Հայաստանի Հանրապետութեան եւ Ծոցի արաբական երկրների միջեւ միջպետական յարաբերութիւններում:

Այստեղ մենք կը ներկայացնենք Ծոցի արաբական երկրների եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ արձանագրուած միջպետական յարաբերութիւնները 1991-2021 շրջանում:

ՀՀ-ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկու երկրների միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները հաստատուել են 1998 Յունիսի 25ին Նիւ Եորքում, համապատասխան արձանագրութեան ստորագրմամբ: ԱՄԷում ՀՀ դեսպանութիւնը բացուել է 2000ին, իսկ ՀՀում ԱՄԷ դեսպանութիւնը՝ 15 տարի անց՝ 2015ին:

ԱՄԷում ՀՀ առաջին դեսպանը Արշակ Փոլադեանն էր[1], որը 2000-2ին գործերի հաւատարմատարն էր, իսկ 2002-6ին՝ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպանը, 2003-7ին՝ Քուէյթում եւ Բահրէյնի Թագաւորութիւնում ՀՀ ոչ-կեցութեամբ դեսպան: Փոլադեանի ջանքերով դէպի ԱՄԷ կազմակերպուել են բարձր մակարդակի երեք այց.- նախագահ Ռոբերտ Քոչարեանի պաշտօնական այցը 2000ին, արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի երկու այց՝ պաշտօնական (2000) եւ աշխատանքային (2005), ինչպէս նաեւ ԱՄԷ Շարժայի Էմիրութեան կառավարչի պաշտօնական այցը ՀՀ:

Այդ ընթացքում կնքուել է վեց համաձայնագիր:

2006-12ին դեսպանն էր Վահագն Մելիքեանը[2]: Այս ընթացքում 2007ին աշխատանքային այցով ԱՄԷ են մեկնել նախագահ Քոչարեանը եւ ԱԳ նախարար Օսկանեանը, իսկ 2009ին ՀՀ են ժամանել ԱՄԷ ԱԳ նախարարը

---

[1] Հայ դիւանագէտ, պատմաբան եւ արեւելագէտ, Թունիսի Հանրապետութիւնում եւ Մարոկկոյի Թագաւորութիւնում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան (նստավայրը՝ Երեւան): 2007ից մինչեւ 2018 Փոլադեանը Սիրիայում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան էր, իսկ 2011ից մինչեւ 2018՝ Յորդանանի Հաշիմեան Թագաւորութիւնում ՀՀ ոչ-կեցութեամբ դեսպանը:

[2] Վահագն Մելիքեան, հայ դիւանագէտ, 2012-14՝ Արգենտինայում, Չիլիում, Պարագուայում, Ուրուգուայում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան, 2015-18՝ ՀՀ Սփիւռքի նախարարի տեղակալ, 2018-21՝ ՀՀ արտաքին գործերի նախարարութեան գլխաւոր քարտուղար:

եւ ԱԳ պետնախարարը, կնքուել է չորս համաձայնագիր եւ 3 փոխըմբռնման յուշագիր:

Յաջորդ դեսպանը Գեղամ Ղարիբջանեանն[3] էր՝ 2012-18ին: 2016ին պաշտօնական, իսկ 2017ին աշխատանքային այցով ԱՄԷ է մեկնել նախագահ Սերժ Սարգսեանը, 2012ին աշխատանքային այց է կատարել նաեւ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանը: Աշխատանքային այց են կատարել նաեւ մի շարք այլ բարձրաստիճան անձինք՝ մասնաւորապէս փոխվարչապետը (2013) եւ ՀՀ պետեկամուտների կոմիտէի նախագահը (2013), ՀՀ ազգային ժողովի նախագահը (2014), նախագահի աշխատակազմի ղեկավարը (2017): 2013ին պաշտօնական այցով ՀՀ է ժամանել ԱՄԷ վերահսկիչ պալատի նախագահը, 2017ին՝ ԱՄԷ ԱԳ նախարարը, իսկ աշխատանքային այցով՝ առողջապահութեան նախարարը՝ 2015ին եւ ԱՄԷ նախագահի խորհրդականը՝ 2015ին: Կնքուել է հինգ համաձայնագիր եւ հինգ փոխըմբռնման յուշագիր:

2017ին Դուբայում բացուել է ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնը, հիւպատոս է նշանակուել Սէյրան Կարապետեանը[4], որն առայօր շարունակում է պաշտօնավարել:

2018-21ին ՀՀ դեսպանը Միեր Մկրտումեանն[5] էր: 2019-22ի ընթացքում ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանը հինգ անգամ մեկնել է ԱՄԷ՝ մէկ պաշտօնական (2019) եւ չորս աշխատանքային այցով (2019, 2020 Յունուար, 2020 Նոյեմբեր, 2021, 2022): Երկու անգամ աշխատանքային այց է կատարել ԱԳ նախարարը (2021 եւ 2022): 2019ին աշխատանքային այց է կատարել նաեւ պաշտպանութեան նախարարը: 2019ին աշխատանքային այցով ՀՀ է ժամանել ԱՄԷ պետնախարարը: Կնքուել է փոխըմբռնման երեք յուշագիր: 2019ից գործում է ՀՀ եւ ԱՄԷ կառավարութիւնների միջեւ առեւտրատնտեսական եւ արհեստագիտական համագործակցութեան համատեղ յանձնաժողով, որը 2019ի Մայիսի երկուսին Երեւանում գումարել է իր անդրանիկ նիստը:

2022 Հոկտեմբերից առայսօր ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպանը ԱՄԷում Կարէն Գրիգորեանն[6] է:

Ընդհանուր առմամբ 2000ից առայսօր ՀՀ բարձրաստիճան անձինք չորս պաշտօնական եւ 18 աշխատանքային այց են կատարել ԱՄԷ, մինչդեռ

---

[3] ՀՀ պետական գործիչ, դիւանագէտ, 1991-95՝ աշխատանքի եւ ընկերային ապահովութեան փոխնախարար, 1999-2004՝ Իրանի Իսլամական Հանրապետութիւնում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան, 2005-09՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ, 2009-12՝ ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար:

[4] 2012-17՝ ԱՄԷում ՀՀ դեսպանութեան տնտեսական հարցերի գծով խորհրդատու:

[5] Հայ դիւանագէտ:

[6] Հայ դիւանագէտ, 2014-18՝ Իրաքում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան, 2018-21՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետութիւնում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան, 2019-21՝ Սուդանի ՀՀ Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան:

ԱՄԷ բարձրաստիճան պաշտօնատարները երեք պաշտօնական եւ նոյնքան էլ աշխատանքային այց են կատարել ՀՀ:

Իրաւապայմանագրային դաշտ

ՀՀի եւ ԱՄԷի միջեւ ընդհանուր առմամբ կնքուել է 28 համաձայնագիր եւ փոխըմբռնման յուշագիր, կազմուել է երկու արձանագրութիւն. Հիմնական ոլորտներն են՝ քաղաքական, առեւտրատնտեսական, արհեստագիտական, ֆինանսական, իրաւական, առողջապահական, զբօսաշրջութեան, գիւղատնտեսութեան, օդային հաղորդակցութեան եւ անվտանգութեան:

Միջպետական, քաղաքական յարաբերութիւններ

ՀՀի եւ ԱՄԷի միջեւ առկայ է քաղաքական աշխուժ երկխօսութիւն:

Յարաբերութիւնների առանձնայատուկ աշխուժացում է նկատւում 2002ին նախագահ Քոչարեանի եւ 2017ին նախագահ Ս. Սարգսեանի՝ ԱՄԷ, եւ ԱՄԷ ԱԳ նախարարի՝ ՀՀ կատարած պաշտօնական այցերից յետոյ, որոնց արդիւնքում ստորագրուել են մի շարք փաստաթղթեր:

2019 Մարտին Աբու Դաբիում երկու երկրների ԱԳ նախարաների միջեւ կայացել է քաղաքական խորհրդակցութիւնների առաջին նիստը: Նախատեսւում է խորհրդակցութիւնների երկրորդ նիստն անցկացնել Երեւանում, որը, սակայն, դեռ չի կայացել: Միջազգային կառոյցներում միմեանց թեկնածութիւնների փոխադարձ աջակցութեան հարցում առկայ է դրական միտում:

Միջկառավարական յանձնաժողովի աշխատանքները

Ինչպէս վերը նշեցինք, 2019ից գործում է ՀՀ եւ ԱՄԷ կառավարութիւնների միջեւ առեւտրատնտեսական եւ արհեստագիտական գործակցութեան համատեղ յանձնաժողով, որը 2019 Մայիսի երկուսին Երեւանում գումարեց իր անդրանիկ նիստը:

Հարկ է նշել, որ Արցախի հիմնահարցի առնչութեամբ ԱՄԷն վերջին տարիներին որդեգրել էր չէզոք դիրքորոշում՝ սատարելով հակամարտութեան լուծման ուղղութեամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահութեան ձեւաչափին եւ համանախագահների միջնորդական ջանքերին:

2020 Սեպտեմբերի 27ին Արցախի դէմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ժամանակ ԱՄԷն հանդէս չի եկել յայտարարութեամբ, սակայն նախաձեռնել է Ծոցի Համագործակցութեան Խորհրդի յայտարարութիւնը, որը մտահոգութիւն էր արտայայտում ռազմական գործողութիւնների կապակցութեամբ՝ միաժամանակ յղում անելով ՄԱԿ Անվտանգութեան Խորհրդի բանաձեւերին:

Տնտեսական գործակցութիւն

ՀՀի եւ ԱՄԷի միջեւ տնտեսական գործակցութիւնը աշխուժացել է վերջին 7 տարիներին, մասնաւորապէս՝

- 2015ին ԱՄԷ տարածաշրջանային «Մաճիտ Էլ Ֆութէյմ» ընկերութիւնը նախաձեռնել է Երեւանում «Carrefour» *հիպերմարկէտ*ների մասնաճիւղի հիմնադրումը:
- 2016 Յուլիսին Շարժայի Էմիրութեան կառավարիչ շէյխ Սուլթան Ալ-Քասիմին Շարժայում ՀՀ առեւտրաարդիւնաբերական կենտրոն հիմնելու նպատակով ՀՀին տրամադրել է հողատարածք (41,91մ X 31.00, 1299 ք.մ.): Կենտրոնը դեռեւս չի հիմնադրուել:
- 2017 Մարտին Աբու Դապիի «Emirates Palace»ում կայացել է հայ-էմիրաթական ներդրումային համաժողովը, որի աշխատանքներին ներկայացուել են գիւղատնտեսութեան, անասնաբուծութեան, ուժանիւթի, զբօսաշրջութեան, առողջապահութեան, դեղագործութեան, տեղեկատուական արհեստագիտութիւններ (ՏԱ), անշարժ գոյքի եւ այլ ոլորտների ներդրումային ծրագրերի փաթէթներ:
- 2019ի դրութեամբ ՀՀում գրանցուած է 635 էմիրաթական ընկերութիւն:
- 2019 Յունիսին Շարժայի կառավարական հարցերով գործադիր նախագահ շէյխ Ֆահիմ Ալ-Քասիմիի գլխաւորած պատուիրակութեան ՀՀ կատարած այցի շրջանակում քննարկուել են սննդի անվտանգութեան, ջրային, գիւղատնտեսութեան, թափօնների կառավարման, տեղեկատուական արհեստագիտութիւնների, զբօսաշրջութեան, կրթութեան, մշակոյթի ոլոտներում փոխշահաւէտ գործակցութեան հարցեր:
- 2020 Յունուարին էմիրաթական «Մաստար» ընկերութեան եւ ՀՀ պետական հետաքրքրութիւնների հիմնադրամի միջեւ ստորագրուել է համատեղ զարգացման մասին համաձայնագիր, որը ենթադրում է $300 մլն ներդրում ՀՀ վերականգնուող ուժանիւթի ոլորտում:
- ՀՀն 2022ին մասնակցել է “Dubai Expo 2020” ցուցահանդէսին: ՀՀին տրամադրուել է անվճար տաղաւար:
- ՀՀ պետական հետաքրքրութիւնների ֆոնդի եւ Շարժայում գործող Air Arabia օդանաւային ընկերութեան համատեղ նախագծով 2021ին հիմնուել է հայկական ազգային բիւջէտային օդանաւային ընկերութիւն՝ “Fly Arna” մակնիշով: Օդանաւային ընկերութեան կանոնադրական դրամագլուխը պէտք է կազմի 9,6 մլրդ դրամ ($19,6 մլն): Օդանաւային ընկերութեան 51%ը պատկանում է ՀՀ պետական հետաքրքրութիւնների ֆոնդին (ANIF), իսկ մնացած 49%ը՝ Air Arabiaին:
- 2010ից կանոնաւոր չուերթեր են իրականացւում FlyDubai, FlyOne, WizzAir, Air Arabia օդանաւային ընկերութիւնների միջոցով Երեւան-Դուբայ-Երեւան, Երեւան-Շարժա-Երեւան եւ Երեւան-Աբու Դաբի-Երեւան ուղղութիւններով:

- 2019ից սկսած աշխուժացել են այս ոլորտի առաւել հեռանկարային ուղղութիւններ՝ վերականգնուող ուժանիւթի եւ բարձր արհեստագիտամիջոցների ոլորտները:

Վերականգնուող ուժանիւթի ոլորտ

Դեռեւս 2019 Նոյեմբերին էմիրաթական «Մաստար» ընկերութեան եւ ANIFի միջեւ ստորագրուել էր ՀՀում 400 մվտ ընդհանուր հզօրութեամբ արեւային ուժանիւթի նախագծեր մշակելու մասին համաձայնագիր, ինչն ենթադրում է $300-320 մլն ներդրում ՀՀում: Այս ոլորտում «Մաստար» ընկերութիւնը «ԱՅԳ-1» արեւային ֆոտովոլտային ծրագրի մրցոյթում ճանաչուել է յաջողակ հայտատու, որի արդիւնքում ՀՀում կատարելու է $174 մլն ներդրում: 2021 Նոյեմբերին ՀՀ եւ «Մաստար» ընկերութեան միջեւ ստորագրուել է կառավարութեան աջակցութեան համաձայնագիր՝ 200 մվտ հզօրութեամբ ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման վերաբերեալ: «Այգ-2» ծրագրով մինչեւ 2024 Դեկտեմբերը նախատեսւում է կառուցել 201 մվտ հզօրութեամբ արեւային նոր կայան:

Տեղեկատուական արհեստագիտամիջոցների ոլորտ

ՀՀ բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան (ԲԱԱ) նախարարութեան հրաւէրով ԱՄԷ պաշտօնական պատուիրակութիւնը մասնակցել է 2019ին ՏԱի համաշխարհային համաժողովին (“WCIT 2019”):

2019ին ՀՀ ԲԱԱ նախարարը ԱՄԷում մասնակցել է «Արհեստական բանականութիւնը սպորտում» համաժողովին:

2020 Փետրուարին Աբու Դաբիի «UMEX/SimTEX» համաժողովի եւ ցուցահանդէսի շրջանակներում ՀՀ ԲԱԱ նախարարի եւ էմիրաթական շահագրգիռ մարմինների միջեւ ձեռք են բերուել ռազմարդիւնաբերութեան ոլորտում գործակցութեան վերաբերեալ պայմանաւորուածութիւններ:

2020 Յունուարին ՀՀ նախագահի՝ ԱՄԷ կատարած աշխատանքային այցի ընթացքում պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել «Advanced Tomorrow» նախաձեռնութեան շրջանակում գործակցութիւն ծաւալելու շուրջ:

Առեւտրատնտեսական կապեր (ապրանքաշրջանառութեան ծաւալներ)

ԱՄԷն հայկական ապրանքների արտահանուող ամէնամեծ 8րդ շուկան է եւ ամբողջ աշխարհով հայկական ներմուծումների 11րդ աղբիւրը[7]: ՀՀ եւ ԱՄԷի միջեւ տարեկան միջին ապրանքաշրջանառութիւնը վերջին տարիներին 111 մլն ԱՄՆ դոլար է: Հիմնական արտահանուող ապրանքներն են ծխախոտը, ոսկին, ոսկերչական իրերը, ադամանդը, բանջարեղէնը, պղինձը, էլեկտրական սարքաւորումները: Հիմնական ներմուծուող ապրանքնե-

[7] https://www.mfa.am/hy/press-releases/2019/05/02/uae_arm/9509 :

րըն են ադամանդը, ոսկին, թանկարժէք եւ կիսաթանկարժէք քարերը, մետաղային կառուցուածքները:

Գիտամշակութային առնչութիւններ

2022 Հոկտեմբերին ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարար Վ. Դումանեանի հրաւէրով ՀՀ է ժամանել Շարժայի ժառանգութեան հիմնարկի նախագահ Ապտուլ Ազիզ ԱլՄուսալլամի գլխաւորած պատուիրակութիւնը: Ի թիւս այլ հարցերի կողմերն անդրադարձել են նաեւ «ՀՀ կառավարութեան եւ ԱՄԷ կառավարութեան միջեւ մշակոյթի ոլորտում համագործակցութեան մասին» փոխըմբռնման յուշագրի արդիականացման եւ ստորագրման հնարաւորութեանը: Այցի շրջանակում փոխըմբռնման յուշագիր է կնքուել Հայաստանի պատմութեան թանգարանի եւ Շարժայի ժառանգութեան ինստիտուտի միջեւ՝ համագործակցութեան, գիտելիքի եւ փորձի փոխանակման եւ ակադեմիական գործընկերութեան հաստատման վերաբերեալ:

Կրթութեան ոլորտ

Ըստ ՀՀ ԱԳ նախարարութեան կողմից մեզ տրամադրած տեղեկատուութեան, ԱՄԷն մօտ 10 տարի կրթաթոշակներ է տրամադրել ՀՀ ուսանողներին գիտութեան եւ արհեստագիտամիջոցների, վերականգնուող ուժանիւթի միջազգային գործակալութեանն առընթեր Աբու Դաբիի արհեստագիտամիջոցների եւ գիտութեան MASDAR կրթահամալիրը «Masdar» ինստիտուտում սովորելու համար: Վերջինս գործակցում է Մեսեչուսէցի արհեստագիտամիջոցների ինստիտուտի հետ:

Էմիրաթական կողմի հետ սկզբունքային պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել Աբու Դաբիի Սորպոնի համալսարանի հետ գործակցութեան շրջանակներում հայկական կողմին կրթաթոշակների յատկացման շուրջ, սակայն էմիրաթական կողմն առայժմ առկախել է գործընթացը:

Մարդասիրական ոլորտ

Շարժայի կառավարիչը 2005ին ՀՀ կատարած այցի ընթացքում Հաղարծնի վանքի վերականգնման համար նուիրաբերել է $5 մլն, որը յետագայում աւելացրել է եւս 2 մլն.ով:

2007ին Աբու Դաբիի զարգացման հիմնադրամը ՀՀին տրամադրել է 10 մլն. վարկ՝ Արփա-Սեւան փապուղու վերանորոգման համար:

ԱՄԷն 2015ին Երեւանում իր դեսպանութեան բացումից իվեր իրականացրել է բազմաթիւ մարդասիրական նախաձեռնութիւններ, որոնցից օգտուել են ՀՀ տարբեր ընկերային խմբեր, այդ թւում՝ երեխաներ, տարեցներ, սահմանափակ կարողութիւններով մարդիկ եւ ուսանողներ[8]:

[8] https://rb.gy/hmob2p :

Անհրաժեշտ է ընդգծել մշակոյթի, գիտութեան ու կրթութեան, զբօսաշրջութեան ոլորտներում առկայ գործակցութեան մեծ ներուժը: Երկու բարեկամ երկրների ժողովուրդների միջեւ շփումներն առաւել յաճախակի դարձնելու եւ փոխճանաչելիութեան մակարդակը բարձրացնելու համար կարեւորւում են մշակութային փոխգործակցութեան աշխուժացումը, համատեղ ծրագրերի իրականացումը:

ՀՀ-ՔՈՒԷՅԹԻ ԷՄԻՐՈՒԹԻՒՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետութեան եւ Քուէյթի Էմիրութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ են հաստատուել 1994 Յուլիսին:

2009 Նոյեմբերին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի Քուէյթ կատարած պետական այցի ընթացքում որոշում է կայացուել փոխադարձաբար երկու երկրներում հիմնել դեսպանութիւններ: ՀՀ դեսպանութիւնը Քուէյթում հիմնադրուել է 2010ին, իսկ Երեւանում Քուէյթի դեսպանութիւնը բացուել է 2011ին:

Մինչ դեսպանութիւնների հիմնումը, 2003ին ԱՄԷում ՀՀ դեսպան Փոլադեանը համատեղութեան կարգով նշանակուել է Քուէյթում ՀՀ դեսպան (նստավայրը՝ Աբու Դաբի), իսկ 2007-9՝ ԱՄԷում ՀՀ դեսպան Մելիքեանը (նստավայրը՝ Աբու Դաբի):

ՀՀում Քուէյթի դեսպանի պաշտօնը 2006 Մայիսից համատեղում էր Իրանի Իսլամական Հանրապետութիւնում Քուէյթի պետութեան դեսպան Մաճտի Ահմատ ԱլՏաֆիրին (նստավայրը՝ Թեհրան):

2009 Նոյեմբերին կայացել է ՀՀ նախագահ Սարգսեանի պաշտօնական այցը Քուէյթի պետութիւն, որը էական տեղաշարժ է արձանագրել երկու երկրների յարաբերութիւններում: ՀՀ նախագահի այցից անմիջապէս յետոյ երկու երկրներում բացուել են դեսպանութիւններ, աշխուժացել են թէ՛ պետական, թէ՛ մասնաւոր հատուածի փոխայցելութիւնները:

2015 Մարտին տեղի է ունեցել ՀՀ վարչապետի պաշտօնական այցը Քուէյթ:

2016 Հոկտեմբերի 7ին ՀՀ նախագահին հաւատարմագրերն է յանձնել ՀՀում Քուէյթի արտակարգ եւ լիազօր դեսպան Նաուաֆ ԱպտուլԱզիզ ԱլԷնեզին:

2018 Սեպտեմբերի 25ին Քուէյթում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան է նշանակուել Սարմէն Բաղդասարեանը[9]:

Այցեր

Որպէս բարձրաստիճան փոխայցելութիւններ կարելի է նշել ՀՀ նախագահի, ՀՀ փոխվարչապետի, ՀՀ ԱԳ նախարարի, իսկ քուէյթեան կողմից՝

[9] Հայ դիւանագէտ, 2018ից Քուէյթի Էմիրութիւնում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան (նստավայրը՝ ԷլՔուէյթ):

Քուէյթի ֆինանսների, արդարադատութեան եւ ընկերային հարցերով նախարարների, ինչպէս նաեւ էմիրի հարս, «Իսլամական արուեստ, մեծ նմուշների հաւաքածու»ի սեփականատէր շէյխա Հուսայի այցերը: Հարկ է նշել, որ փոխադարձ այցերը երկու ուղղութեամբ էլ գրեթէ նոյն ուժգնութեամբ են կատարուել:

Իրաւապայմանագրային դաշտ

Երկու երկրների միջեւ ստորագրուել է 19 փաստաթուղթ՝ 11 համաձայնագիր, 4 փոխըմբռնման յուշագիր, երկու արձանագրութիւն եւ երկու գործնական ծրագիր: 7 փաստաթուղթ գտնւում է քննարկման փուլում: Ստորագրուած փաստաթղթերը ներառում են կրթամշակութային, գիտաարհեստական, առեւտրաարդիւնաբերական, ներդրումային, զբօսաշրջութեան եւ այլ ոլորտներ:

Միջկառավարական յանձնաժողով

2011ից գործում է տնտեսական եւ արհեստագիտական գործակցութեան հայ-քուէյթեան միջկառավարական յանձնաժողով: Առ այսօր տեղի է ունեցել յանձնաժողովի երկու նիստ՝ 2011 Հոկտեմբերին Երեւանում եւ 2015 Նոյեմբերին ԱլՔուէյթում:

Համագործակցութիւն ըստ ոլորտների

Քաղաքական

Երկու երկրների միջեւ յարաբերութիւնների ուժգնացման տեսանկիւնից առաւել կարեւոր էր 2009ին նախագահ Սարգսեանի այցը Քուէյթ, որի ընթացքում ստորագրուել է վեց համաձայնագիր:

Երկկողմ յարաբերութիւնների նշանակալից իրադարձութիւնը Քուէյթի պետութեան ազգային ժողովի նախագահ Ալի Ֆահտ Ռաշէտ ԱլՌաշէտի գլխաւորած պատուիրակութեան պաշտօնական այցն էր Հայաստան (2013 Մայիս 29-Յունիս 2), որը որակական նոր մակարդակ ապահովեց միջխորհրդարանական գործակցութեան համար: 2014 Սեպտեմբերի 18ին տեղի է ունեցել հայ-քուէյթեան խորհրդարանական բարեկամութեան խմբի այցը ՀՀ:

Քաղաքական փոխգործակցութեան դաշտն ընդլայնելու աշխատանքները շարունակւում են առայսօր, յատկապէս երկու երկրների արտաքին գերատեսչութիւնների միջեւ քաղաքական խորհրդակցութիւնների երկրորդ փուլի անցկացման, ինչպէս նաեւ նախապէս փոխանցուած հրաւէրների շրջանակներում բարձրաստիճան փոխայցերը կազմակերպելու ուղղութիւններով:

Առեւտրատնտեսական

Աշխատանքային հանդիպումներ են տեղի ունենում Քուէյթի պետութեան ֆինանսների նախարարութեան, Արաբական Տնտեսական Զարգացման Քուէյթի հիմնադրամի եւ Քուէյթի ներդրումային ընկերութեան ղեկառավարութեան հետ, քննարկւում են ՀՀ տնտեսական զարգացման ծրագրերում քուէյթեան կողմի մասնակցութեան հնարաւորութիւնները:

Քուէյթի եւ ՀՀի միջեւ առեւտրատնտեսական յարաբերութիւնների յետագայ ընդլայնման հնարաւորութիւնները քննարկելու եւ տեղական շուկային ծանօթանալու նպատակով 2011 Դեկտեմբերի 11ից 15ը Քուէյթ է այցելել Հայկական Զարգացման Գործակալութեան պատուիրակութիւնը: Հանդիպումներ են եղել Քուէյթի առեւտրի եւ արդիւնաբերութեան նախարարութիւնում, պետական եւ մասնաւոր այլ ընկերութիւններում եւ հաստատութիւններում:

Համապատասխան ջանքեր են գործադրւում 2015 Դեկտեմբերի 14ից 18ը Քուէյթում կայացած հայ-քուէյթեան միջկառավարական տնտեսական համատեղ յանձնաժողովի երկրորդ նիստի ընթացքում ձեռքբերուած պայմանաւորուածութիւնները կենսագործելու ուղղութեամբ:

Ապրանքաշրջանառութիւն

Առեւտրաապրանքաշրջանառութեան առումով Քուէյթից ներկրման ծաւալները գրեթէ միշտ գերակշռել է արտահանման ծաւալներին, իսկ 2019ից կտրուկ աճ են գրանցել եւ յաջորդ՝ 2020ին հնգապատկուել են՝ հասնելով մօտ 3.5 մլն.ի:

2020 եւ 2021ի առեւտրաշրջանառութեան միջին ծաւալները հասնում են տարեկան $4,5 մլն. տոլարի, ընդ որում ներկրումը չի հասնում նշուած ծաւալի հինգ տոկոսին: ՀՀից ներկրւում են շշալցուած խմելու ջուր, մրգաչիր եւ մանր եղջերաւոր կենդանիներ, աշխատանքներ են տարւում բնական հիւթերի ներկրման համար:

Գիտակրթական

Երկու երկրների կրթական գործակցութիւնն առաւել աշխույժ է ԵՊ եւ Քուէյթի համալսարանների միջեւ: Քուէյթի կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը որոշում կայացրեց Քուէյթի համալսարանի արաբերէն լեզուի ուսուցման կենտրոնում հայ ուսանողներին տրուող կրթաթոշակը 2022-23 կրթաշրջանից աւելացնել եւս երկուսով՝ դարձնելով ութ:

Տեղեկատուական

Երկու երկրների զանգուածային լրատուամիջոցների միջեւ գործակցութեան ոլորտում Քուէյթի ազգային “ՔՈՒՆԱ” եւ հայկական “ԱՐՄԵՆՊՐԷՍ” լրատուական գործակալութիւնների հետ կնքուել է տեղեկատուական ոլորտում փոխգործակցութեան պայմանագիր:

Աշխատանքներ են տարւում ՀՀ հանրային հեռուստատեսութեան եւ Քուէյթի պետական հեռուստաընկերութեան միջեւ հնարաւոր գործակցութիւն ստեղծելու ուղղութեամբ:

Մշակութային

Փոխադարձաբար կազմակերպւում են մշակութային օրեր թէ՛ ՀՀում եւ թէ՛ Քուէյթում: Վերջինը կայացել է ՀՀում 2013 Փետրուարի 3-10ը:

Երկկողմ մշակութային համագործակցութեան յետագայ ընդլայնման կարեւոր իրադարձութիւն էր նաեւ 2013 Ապրիլի 16-19ը Քուէյթի մշակոյթի, արուեստների եւ նամակագրութեան ազգային խորհրդի պատուիրակութեան այցը ՀՀ՝ Երեւանում կազմակերպուած Պոեզիայի միջազգային առաջին խորհրդաժողովին մասնակցելու նպատակով:

Ընկերային

ՀՀ կառավարութեան 2014 Ապրիլի 17ի թիւ 15.29 արձանագրային որոշմամբ հաւանութեան է արժանացել եւ 2014 Մայիսի 7ին Երեւան քաղաքում ստորագրուել է «ՀՀ կառավարութեան եւ Քուէյթի պետութեան կառավարութեան միջեւ Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերի նախարարութեան ենթակայութեամբ գործող «Երեւանի թիւ 1 տուն-ինտերնատ» պետական ոչ-առեւտրային կազմակերպութիւնում շինարարական աշխատանքների կատարման համար Քուէյթի պետութեան կառավարութեան կողմից նուիրաբերութեան մասին» պայմանագիրը:

Պայմանագրի համաձայն՝ Երեւանի թիւ 1 տուն-գիշերօթիկ դպրոց տարածքում կառուցուել է նոր մասնաշէնք՝ ապահովելու շուրջ 70 անկողնային խնամքի կարիք ունեցողների խնամքը: Մասնաշէնքը անուանակոչուել է Քուէյթի պետութեան անուամբ: Պայմանագրով նախատեսուած նուիրաբերութեան չափը 1 մլն. տոլար էր: 2016 Մարտին Քուէյթի պետութեան արդարադատութեան, կրօնական կալուածքների եւ իսլամական հարցերի նախարարի գլխաւորած պատուիրակութեան ՀՀ կատարած այցի շրջանակներում կատարուել է նոր մասնաշէնքի բացումը: Նուիրաբերութեան երկրորդ պայմանագրի շրջանակներում (2017) մասնաշէնքն ապահովուել է ժամանակակից յարմարութիւններով եւ պայմաններով, որի կահաւորման համար ձեռք են բերուել կահոյք, էլեկտրական սարքեր, բժշկական սարքաւորումներ, էլեկտրոնային մահճակալներ, լուացուող մակերեսով աթոռներ, տնտեսական ապրանքներ, խոհանոցային սարքեր եւն.: Նախատեսուած էր նաեւ հաստատութեան տարածքի բարեկարգում: Երկրորդ պայմանագրի ընդհանուր բիւջէն կազմել է 485,000 տոլար:

Մարդասիրական

Քուէյթի պետութեան կողմից 200,000 տոլար է տրամադրուել ՀՀում ապաստանած սիրիահայերի կրթական եւ հասարակական բնոյթի այլ նախաձեռնութիւնների օժանդակութիւն ցուցաբերելու համար, որը ըստ քուէյթեան կողմի շարունակական բնոյթ է կրելու:

2012 Մայիսի 11-15ը ՀՀ է այցելել Քուէյթի պետութեան «Օրինակելի մայր» բարձրագոյն կոմիտէի նախագահ շէյխա Ֆարիհա ալԱհմատ ալՃապէր ալՍապահը:

ՀՀ-ՔԱԹԱՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետութեան եւ Քաթարի պետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ են հաստատուել 1997 Նոյեմբերի 5ին, երբ ստորագրուել է երկու երկրների միջեւ "Դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման մասին" համատեղ յայտարարութիւն:

2000ին Իրանում Քաթարի դեսպանը համատեղութեան կարգով նշանակուել է ՀՀում դեսպան, իսկ 2001ին Իրանում ՀՀ դեսպանը՝ Քաթարում համատեղութեան կարգով դեսպան: 2010ից Քաթարում ՀՀ դեսպանի պարտականութիւնները համատեղել է ԱՄԷում ՀՀ դեսպանը (նստավայրը՝ Աբու Դաբի): Քաթարական կողմը շարունակում է դեսպանի հաւատարմագրումը իրականացնել Թեհրանից (դեսպան՝ Մուհամմատ Պըն Համատ Սաատ ալՀաճրի 2019 Ապրիլ): 2019ին ՀՀն պաշտօնէութեան համալրուած դեսպանութիւն է բացել Դոհայում: 2021 Սեպտեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով Քաթարում ՀՀ դեսպան է նշանակուել Արմէն Սարգսեանը:

Իսկ մինչ այդ, 2001-5՝ ՀՀ դեսպանն է եղել Գեղամ Ղարիբջանեանը (նստավայրը Թեհրան), 2010-12՝ Վահագն Մելիքեանը (նստավայրը Աբու-Դաբի), 2013-18՝ Գեղամ Ղարիբջանեանը (նստավայրը Աբու-Դաբի), որը 2019-21 Յուլիս արդէն պաշտօնավարել է Դոհայում ՀՀ դեսպանութիւնում:

ՀՀ բարձրաստիճան պաշտօնատար անձանց այցերը Քաթար

Դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումից իվեր կողմերի միջեւ կատարուել են մի շարք բարձրաստիճան այցեր: ՀՀ բարձրաստիճան պաշտօնատարներ հինգ պաշտօնական եւ վեց աշխատանքային այց են կատարել Քաթար, մինչդեռ Քաթարից ընդամէնը մէկ պաշտօնական եւ երկու աշխատանքային այցով են ժամանել ՀՀ: Ակնյայտ է, որ այս հարցում կշիռը խախտուած է ի վնաս ՀՀի:

Իրաւապայմանագրային դաշտ

ՀՀ եւ Քաթարի միջեւ ընդհանուր առմամբ կնքուել է 13 համաձայնագիր եւ յուշագիր, հիմնական ոլորտներ են՝ առեւտրա-տնտեսական, ներդրումների խրախուսման, արհեստագիտական, ֆինանսական, կրթական, իրա-

ւական, առողջապահական, զբօսաշրջութեան, գիւղատնտեսութեան, օդային հաղորդակցութեան եւ անվտանգութեան:

Ակնյայտ է, որ այս ոլորտի աշխուժացման տեսանկիւնից առաւել արդիւնաւէտ են եղել 2002ին նախագահ Քոչարեանի եւ 2022ին վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ Քաթար կատարած պաշտօնական այցերը, քանի որ առաջինի ժամանակ կնքուել է հինգ, իսկ վերջինի ընթացքում՝ չորս համաձայնագիր եւ երեք փոխըմբռնման յուշագիր:

Միջպետական քաղաքական յարաբերութիւններ

Երկկողմ փոխգործակցութեան զարգացման առումով կարեւոր է երկու երկրների միջեւ քաղաքական շփումների, մասնաւորապէս՝ արտգործնախարարութիւնների միջեւ խորհրդակցութիւնների անցկացումը, որը հնարաւորութիւն կը տայ տեսակէտեր փոխանակել երկկողմ յարաբերութիւնների զարգացման, տարածաշրջանի խնդիրների, միմեանց համար զգայուն հարցերի եւ դիրքորոշումների վերաբերեալ:

Լեռնային Ղարաբաղի հարցում Քաթարը, առաջնորդուելով իսլամական համերաշխութեան սկզբունքներից եւ Իսլամական Համագործակցութեան Կազմակերպութեան բանաձեւերով, աջակցում է Ադրբեջանի տարածքային ամբողջականութեանը: Ընդհանուր առմամբ միջազգային կազմակերպութիւններում հայ-քաթարական գործակցութիւնը կրում է խիստ սահմանափակ բնոյթ:

Միջկառավարական յանձնաժողովի աշխատանքներ

Հայ-քաթարական միջկառավարական համատեղ յանձնաժողովի անդրանիկ նիստի գումարումը տարբեր պատճառներով յետաձգուել է: Քաթարական կողմը ցանկութիւն ունէր միջկառավարական նիստին բովանդակային նշանակութիւն տալու համար նախօրօք ՀՀ գործուղել Քաթարի ԱԳ նախարարի տնտեսական հարցերով տեղակալի գլխաւորած պատուիրակութեանը, որի հիմնական նպատակն էր լինելու ծանօթանալ տնտեսական եւ ներդրումային հնարաւորութիւններին, սակայն տարբեր առիթներով այն նոյնպէս յետաձգուել է:

Առեւտրատնտեսական կապեր (ապրանքաշրջանառութեան ծաւալներ)

ՀՀ եւ Քաթարի միջեւ տարեկան միջին ապրանքաշրջանառութիւնը վերջին տարիներին 1.8 մլն տոլար է: ՀՀից Քաթար արտահանուած հիմնական ապրանքատեսակներն են կենդանի ոչխարներ, այծեր, ոչխարի կամ այծի միս, գիպսից արտադրանք, ձեռքի գործիք հաստոցի, մետաղի մամլման, հող հորատելու համար: Քաթարից ՀՀ ներմուծուած հիմնական ապրանքատեսակներն են էթիլէնի պոլիմէրներ, պահածոյացուած միրգ, ընկուզեղէն, հատապտուղ, գնդիկաւոր գլանաձև առանցքակալներ:

Դիւանագիտական յարաբերութիւններ

Ծոցի երկրներից առաջինը ՀՀի հետ դիւանագիտական յարաբերութիւններ է հաստատել Օմանի Սուլթանութիւնը: Դա տեղի է ունեցել 1992 Յուլիսի 7ին: Հարկ է նշել, որ Ծոցի արաբական միւս երկրները յարաբերութիւններ սկսել են հաստատել միայն 1994ից յետոյ, այսինքն՝ ՀՀի եւ Ադրբեջանի միջեւ հրադադարի կնքումից յետոյ: Դա կարելի է բացատրել նրանով, որ Օմանը չէզոքութեան քաղաքականութիւն է վարում՝ որդեգրելով «Բոլորին ընկեր, ոչ ոքի՝ թշնամի» կարգախօսը[10]:

Օմանը մեծ հետաքրքրութիւն էր ցուցաբերում, սակայն, ինչպէս մեզ յայտնեց 1991-97ին ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Շահէն Գարամանուկեանը, ՀՀ ԱԳ նախարար Ռաֆֆի Յովհաննիսեանը երկու անգամ յետաձգել է իր այցը Օման, որն այդպէս էլ չի կայացել:

Չնայած վերոնշեալին, ՀՀն եւ Օմանը առայսօր նստավայր դեսպանութիւններ չունեն: Հայաստանում հաւատարմագրուած է Օմանի՝ ՌԴ դեսպանը: Օմանը 2016ին ՀՀում բացել է պատուաւոր հիւպատոսութիւն: Պատուաւոր հիւպատոսն է Պերճ Օհանեանը[11]:

Ինչ վերաբերում է Օմանում ՀՀ դեսպանին, ապա 1995-99ին այդ պաշտօնը համատեղել է Էդուարդ Նալբանդեանը (նստավայրը՝ Գահիրէ), 2003-12 Փետրուարը՝ Սերգէյ Մանասարեանը (նստավայրը՝ Գահիրէ), 2012 Փետրուարից-2016 Յունիս՝ Ֆադէյ Չարչօղլեանը (նստավայրը՝ Քուէյթ): 2022 Մայիսին Օմանում ՀՀ դեսպան է նշանակուել Հրաչեայ Փոլադեանը (նստավայրը՝ Գահիրէ):

ՀՀ բարձրաստիճան պաշտօնատար անձանց այցերը Օման

Բարձրաստիճան անձանց փոխայցելութիւններ կամ միակողմ այցելութիւններ չեն եղել. ՀՀ եւ Օմանի արտգործնախարարները 2017ին եւ 2019ին հանդիպումներ են ունեցել Միւնխէնի անվտանգութեան համաժողովի շրջանակներում:

Իրաւապայմանագրային դաշտ

1992 Յուլիսին, Մոսկուայում ստորագրուել է արձանագրութիւն ՀՀի եւ Օմանի Սուլթանութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին: 2003ին ստորագրուել է փոխըմբռնման յուշագիր ՀՀ եւ

---

[10] James Worrall (2021) "'Switzerland of Arabia': Omani Foreign Policy and Mediation Efforts in the Middle East," *The International Spectator*, 56:4, 134-150, DOI: 10.1080/03932729.2021.1996004, էջ 138:

[11] ՀՀ Նախագահի աշխատակազմի արարողակարգի բաժնի պետ (2005-10), Յունաստանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան (2016-21)՝

Օմանի Սուլթանութեան արտաքին գործերի նախարարութիւնների միջեւ քաղաքական խորհրդակցութիւններ անցկացնելու մասին: Միքանի փաստաթղթերի նախագծեր քննարկման փուլում են[12]:

Միջպետական քաղաքական յարաբերութիւններ

2017ին Մասքաթում երկու երկրների ԱԳՆների միջեւ տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցութիւններ փոխարտգործնախարարների մակարդակով:

Երկու պետութիւնների միջեւ առկայ է գործակցութիւն միջազգային կազմակերպութիւններում, մասնաւորապէս՝ ՄԱԿ կառոյցների շրջանակներում:

Առեւտրատնտեսական կապեր (ապրանքաշրջանառութեան ծաւալներ)

ՀՀ եւ Օմանի միջեւ տարեկան միջին ապրանքաշրջանառութիւնը վերջին տարիներին 1.5 մլն տոլար է: Հիմնականում ներմուծւում է ձկնեղէն, նաւթամթերք, մաքրող միջոցներ, մոմանիւթեր, բիտումային միջոցներ եւն.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՀՐԷՅՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դիւանագիտական յարաբերութիւններ

Հայաստանի Հանրապետութեան եւ Բահրէյնի Թագաւորութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները հաստատուել են 1996 Հոկտեմբերի 25ին:

ՀՀն եւ Բահրէյնը առայսօր նստավայր դեսպանութիւններ չունեն: ՀՀում դեսպանի պարտականութիւնները համատեղում է Իրանի Իսլամական Հանրապետութիւնում հաւատարմագրուած Բահրէյնի Թագաւորութեան դեսպանը:

Ինչ վերաբերում է Բահրէյնում ՀՀ դեսպանին, ապա 2002-7՝ այդ պաշտօնը համատեղել է Արշակ Փոլադեանը (նստավայրը Աբու-Դաբի), 2007-12՝ Վահագն Մելիքեանը (նստավայրը Աբու-Դաբի), 2019 Նոյեմբերից 2021 Յուլիս՝ Միեր Մկրտումեանը (նստավայրը Աբու-Դաբի):

ՀՀ բարձրաստիճան պաշտօնատար անձանց այցերը Բահրէյն

2005 Փետրուարին ՀՀ ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարեանի գլխաւորութեամբ ազգային ժողովի պատուիրակութիւնը այցելել է Բահրէյնի Թագաւորութիւն[13]: Այցի ընթացքում ստորագրուել է գործակցութեան մասին համաձայնագիր՝ ՀՀ ազգային ժողովի եւ Բահրէյնի Թագաւորութեան ազգային ժողովի պատգամաւորների պալատի միջեւ: Ըստ

[12] «Օման - Երկկողմ յարաբերութիւններ», mfa.am :

[13] National Assembly of the Republic of Armenia | Official Web Site | parliament.am :

համաձայնագրի՝ որոշուել է ՀՀ ազգային ժողովում ստեղծել Հայաստան-Բահրէյն, իսկ Բահրէյնի Թագաւորութեան խորհրդարանի պատգամաւորների պալատում՝ Բահրէյն-Հայաստան բարեկամութեան պատգամաւորական խմբեր եւ պարբերաբար անցկացնել խորհրդակցութիւններ՝ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող միջազգային եւ տարածաշրջանային հիմնահարցերի վերաբերեալ: Բացի այդ՝ կազմակերպել գործակցութիւն՝ խորհրդարանական մշտական յանձնաժողովների միջեւ, ստեղծել համատեղ աշխատանքային եւ փորձագիտական խմբեր:

Բահրէյնի բարձրաստիճան պաշտօնատար անձանց այցերը ՀՀ

Բահրէյնի Թագաւորութեան բարձրաստիճան պաշտօնատարներ չեն այցելել ՀՀ: 2013 Փետրուարի 1-5ը կայացել է Բահրէյնի Թագաւորութեան խորհրդարանի "Բահրէյն-Հայաստան" բարեկամութեան խմբի պատուիրակութեան այցը Հայաստան:

Իրաւապայմանագրային դաշտ

Երկու երկրների միջեւ գործակցութեան մէկ փաստաթուղթ է ստորագրուել, քննարկման փուլում են 6 նախագծեր:

Միջպետական քաղաքական յարաբերութիւններ

Ծոցի արաբական այլ պետութիւնների համեմատ Բահրէյնի հետ երկկողմ օրակարգը աշխուժ չէ:

Առեւտրատնտեսական կապեր (ապրանքաշրջանառութեան ծաւալներ)

ՀՀ եւ Բահրէյնի միջեւ տարեկան միջին ապրանքաշրջանառութիւնը վերջին տարիներին 0.74 հազար տոլար է:

ՀՀ-ՍԱՈՒՏԵԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ (ՍԱԹ) ԱՌՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետութիւնը եւ Սաուտեան Արաբիայի Թագաւորութիւնը դիւանագիտական յարաբերութիւններ չեն հաստատել: Այնուամենայնիւ, վերջին շրջանում երկու երկրների միջեւ տեղի են ունեցել բարձրաստիճան որոշ շփումներ, ինչպէս նաեւ տեղեկատուական արհեստամիջոցների ոլորտում աշխուժութիւն:

Մասնաւորապէս, 2021 Հոկտեմբերին ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանը Սաուտեան Արաբիայում մասնակցել է «Ապագայ ներդրումային նախաձեռնութիւն» ֆորումին: Այցի շրջանակներում ՀՀ նախագահը զրոյցներ է ունեցել ՍԱԹ թագաժառանգ Մուհամմատ Պըն Սալման Ալ Սաուտի եւ արտաքին յարաբերութիւնների պետնախարար Ատէլ Ալ Ճուպէյրի հետ:

ՀՀ անկախութիւնից իվեր ՀՀ եւ Սաուտեան Արաբիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների բացակայութեան պայմաններում, երբ ՀՀ-

ից որեւէ պաշտօնատար երբեւիցէ չէր այցելել այդ երկիր, ՀՀ նախագահը կատարեց պատմական քայլ՝ առաջին անգամ այցելելով արաբական եւ իսլամական աշխարհում բացառիկ դեր եւ նշանակութիւն ունեցող այդ պետութիւն:

Սաուտեան Արաբիայի մայրաքաղաքի օդանաւակայանում ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանին դիմաւորել են պետական ամէնաբարձր մակարդակով՝ ի դէմս երկրի արտաքին գործերի պետնախարար Ատէլ Ալճուպէյրի, իսկ պաշտօնական արարողակարգի համաձայն՝ օդանաւակայանում բարձրացուել է ՀՀ պետական դրօշը:

2022 Փետրուարին Միւնխէնի անվտանգութեան համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ եւ ՍԱՌ ԱԳ նախարարներ Արարատ Միրզոյեանի ու Ֆէյսալ Պըն Ֆարհան Ալ Սաուտի հանդիպումը:

2022 Յունիսի 1ին Միրզոյեանը հեռախօսազրոյց է ունեցել ՍԱՌ արտաքին յարաբերութիւնների պետնախարար Ատէլ Ալճուպէյրի հետ, որի ընթացքում, ի թիւս այլ հարցերի, քննարկել է միջազգային հարթակներում փոխաջակցութիւնների հետ կապուած հարցեր:

2022 Մարտին ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդիւնաբերութեան նախարարի տեղակալ Ռոբերտ Խաչատրեանը ՍԱՌում մասնակցել է «Startup Nation Ministerial» համաժողովին:

2022 Մարտի 27-30ը ՍԱՌ մայրաքաղաք Ռիատում տեղի ունեցաւ «Համաշխարհային ձեռներէցութեան համաժողով», որը Համաշխարհային Ձեռներէցութեան Ցանցի (ՀՁՑ, Global Entrepreneurship Network) կարեւոր նախաձեռնութիւններից է: Միջոցառումն անցկացւում է ՍԱՌ թագաժառանգ Մուհամմատ Պըն Սալմանի հովանու ներքոյ եւ կազմակերպւում է ՍԱՌում Փոքր եւ Միջին ձեռնարկութիւնների զարգացմամբ զբաղուող «Monsha'at» ընկերութեան ու ՀՁՑի կողմից:

Միջոցառումը հիանալի հարթակ էր ոլորտային առաջատարների հետ գործընկերային կապերի հաստատման եւ նոր գաղափարների, զարգացումների վերաբերեալ տեղեկացուած լինելու համար:

Առեւտրատնտեսական կապեր (ապրանքաշրջանառութեան ծաւալներ)

ՀՀ եւ ՍԱՌի միջեւ տարեկան միջին ապրանքաշրջանառութիւնը վերջին տարիներին 3.4 միլիոն տոլար է:

ՀՀից ՍԱՌ արտահանուած հիմնական ապրանքատեսակը ալիւմինէ իրերն են: Ներմուծուող հիմնական ապրանքատեսակներն են ներկանիութերը, թանաքը, լաքերը, եթերային իւղերը, գունանիութերը, յարդարանքի եւ լոգարանային իրեղէնները, հագուստը, տպագրական սարքաւորումները եւն.:

ՀՀ-Ծոցի արաբ. երկրներ		Դեսպանատան բացում		Միջպտ. յարաբ.ների համառօտ աղիւսակ	
Երկիր	Դիւ. յրբ.	ՀՀ	Համապատասխան երկիր	Նստվյր.	Առեւտրատնտեսական կշիռ
ԱՄԷ	1998	2000	2015		$111մլն.
Քուէյթ.	1994	2010	2011		$3,5մլն.
Քաթար	1997	2001	2000		$1,8մլն.
Օման	1992	2016			$1,5մլն.
Բահրէյն	1996				$740,000
Ս. Արաբիա					$3,4մլն.

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով վերոնշեալը, կարող ենք հաստատել թէ ՀՀն Ծոցի արաբական երկրներից առաջինը դիւանագիտական յարաբերութիւններ է հաստատել Օմանի Սուլթանութեան հետ դեռեւս 1992 Յուլիսին: Ներկայումս ՀՀն դիւանագիտական յարաբերութիւններ ունի Ծոցի արաբական եօթ երկրներից վեցի հետ, բացառութեամբ՝ Սաուտեան Արաբիայի Թագաւորութեան: Սակայն վերջին տարիներին որոշակի աշխուժութիւն է գրանցուել նաեւ վերջինիս հետ յարաբերութիւններում:

Հարկ է նշել, որ այս երկրների հետ ՀՀ յարաբերութիւնները հիմնականում համաչափ չեն, այն առումով, որ ՀՀ բարձրաստիճան պաշտօնատարների այցերը երբեմն միքանի անգամ գերազանցում են համապատասխան երկրների պաշտօնատարների՝ ՀՀ կատարած այցերին, ինչը վկայում է տուեալ երկրի հետաքրքրուածութեան, կամ դրա բացակայութեան մասին: Բացառութիւնը թերեւս Քուէյթն է, քանի որ այն միակ երկիրն է, ուր ՀՀ նախագահը պետական այց է կատարել, այս երկրի հետ պահպանուել է նաեւ այցերի փոխադարձութեան սկզբունքը:

Գործակցութեան գրեթէ բոլոր ոլորտներում ՀՀն առաւել աշխուժ յարաբերութիւններ ունի ԱՄԷի հետ. միայն գիտակրթական ոլորտում Քուէյթի հետ յարաբերութիւններն առաւել աշխուժ են: Հասկանալի չէ, թէ ինչու Օմանի հետ առաջինը յարաբերութիւններ հաստատելով՝ առայսօր գրեթէ աշխուժութիւն չկայ փոխադարձ յարաբերութիւններում: Խիստ անգործ են նաեւ Բահրէյնի Թագաւորութեան հետ յարաբերութիւնները: Սաուտեան Արաբիայի Թագաւորութեան հետ երկխօսութեան աշխուժացումը կարծես նոյնպէս ժամանակաւոր բնոյթ ունէր:

Ծոցի արաբական երկրների հետ յարաբերութիւնների խորացումը կարեւոր է մի շարք առումներով, որոնցից առաւել կարեւոր են քաղաքականն ու տնտեսականը: Քաղաքական առումով այն կարեւոր է, քանի որ այս երկրները հայ-ադրբեջանական հակամարտութիւնում նախկինում հիմնականում սատարել են Ադրբեջանին, որպէս մուսուլմանական երկիր: Յարաբերութիւնների աշխուժացումն ու խորացումը թոյլ կը տայ չէզոքացնել կրօնական գործօնը եւ հասնել, առնուազն՝ չէզոքութեան:

Տնտեսական առումով կարեւոր է՝ հաշուի առնելով այդ երկրների ֆինանսական մեծ հնարաւորութիւնները, դրանից բխող ներդրումային հնարաւորութիւններով եւ նոր շուկաների ստեղծման հեռանկարներով:

RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE GULF ARAB STATES

(Summary)

Sona Tonikian (sotonik@ysu.am)
Eliz Gevorkian (elizgevorgyan@gmail.com)

During recent years an increase in the relations between the Republic of Armenia and the Arab Gulf states has become more obvious. The first to recognize the independence of Armenia was the Sultanate of Oman, which in July 1992 established diplomatic relations with the newly proclaimed Armenian state.

Currently Armenia has established diplomatic ties with six of the seven GCC countries, all except Saudi Arabia. Nonetheless, prospects for the development of interstate relations is high between these two countries. The paper relates how the GCC countries and Armenia developed diplomatic relations and highlights the spheres of this interstate cooperation and collaboration. The paper underlines the importance of strengthening interstate cooperation for political, social, cultural and economic reasons as well as to raise the Armenian points of view concerning the Turkish-Armenian disagreements in the context of the Armenian Genocide and the Azeri encroachments regarding the right of self-determination for the natives of Karabagh.

Հայկական Թեմաները Ծոցի Լրատուամիջոցներում. Հիմնական Միտումներ[1]

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԵԱՆ
araks.pashayan@ysu.am

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ծոցի արաբական երկրների լրատուամիջոցներում հայկական թեմաների ուսումնասիրութիւնն ունի թէ՛ գիտական եւ թէ՛ քաղաքական կարեւոր նշանակութիւն: Առանց նշուած թեմաների հետազօտութեան հնարաւոր չէ հասկանալ մի կողմից՝ համայնք-պետութիւն, միւս կողմից՝ Հայաստան-Ծոցի երկրներ յարաբերութիւնների կերպափոխումները, ինչպէս նաեւ դրանց նշանակութիւնը Հայաստանի Հանրապետութեան ազգային շահերի եւ ըստփիւռքի ռազմավարական խնդիրների տեսանկիւնից[2]: Ուսումնասիրուող թեմայի ժամանակագրութիւնը հիմնականում ներառում է 2016-20 շրջանը (2016ի ապրիլեան քառօրեայ պատերազմ, 2018ի «թաւշեայ յեղափոխութիւն», 2020ի արցախեան պատերազմ): Թեմայի ուսումնասիրութեան հիմքում Ծոցի արաբական երկրների առանձին լրատուամիջոցներ են: Ուսումնասիրութեան նպատակն է՝ վեր հանել տեղի հայօճախների եւ Հայաստանի Հանրապետութեան վերաբերեալ Ծոցի արաբական երկրներում գոյութիւն ունեցող մօտեցումներն ու հիմնական միտումները: Նիւթի ուսումնասիրութիւնը օգնում է հասկանալ մի կողմից՝ իշխող վերնախաւի դիրքորոշումը, միւս կողմից՝ հասարակական ընկալումները դաւանական փոքրամասնութիւնների, մասնաւորապէս՝ հայերի նկատմամբ: Ուսումնասիրութիւնը յենւում է բովանդակային վերլուծութեան եւ առկայ խօսոյթի մեթոդաբանութեան վրայ: Դրա հիմքում թէ՛ արաբալեզու եւ թէ՛ անգլիալեզու լրատուական կայքերն են, որոնցից են՝ *ԱլԿաբաս*ը[3], *ԱլՋարիդան*[4], *ԱռՌա'յ*ը[5], *Ալ-Անբան*[6], *Աշ-Շարկ ԱլԱուսաթ*ը[7], *ԱլՋազիրան*[8], *ԱլԱրաբիան*[9], *Խալիջ թայմ-*

---

[1] Ուսումնասիրութեանը աջակցելու համար շնորհակալութիւն եմ յայտնում Անդրանիկ Տագէսեանին եւ Հրաչ Քալսահակեանին:

[2] Մանրամասն տե՛ս՝ Լիլիթ Յարութիւնեան, Ա. Փաշայեան, *Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ*, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ, Սփիւռքի նախարարութիւն, Երեւան, 2012, http://koha.etchmiadzinlibrary.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=68169, մատչում՝ 30.01.2024:

[3] https://www.alqabas.com/, մատչում՝ 30.01.2024:

[4] https://www.aljarida.com/ մատչում՝ 30.01.2024:

[5] https://alrai.com/ մատչում՝ 30.01.2024:

[6] https://www.alanba.com.kw/newspaper/ մատչում՝ 30.01.2024:

[7] https://english.aawsat.com/ մատչում՝30.01.2024:

[8] https://www.aljazeera.com/, մատչում՝ 30.01.2024:

[9] https://english.alarabiya.net/, մատչում՝ 30.01.2024:

զը[10], *Ինդիփենդընթ արաբիան*[11], *Գալֆ նիւոզը*[12], *Գալֆ բիզնըսը*[13], *ԱլՆուոմ նիւզը*[14], *Արաբ նիւզը*[15], *ԱլԱյնը*[16] եւն.:

Ծոցի արաբական լրատուամիջոցները հիմնականում, բայց ոչ լրիւ, պետական են, գործում են պետական վերահսկողութեան, հետեւաբար՝ պետական գրաքննութեան ներքոյ: Բնականաբար, լրատուական հոսքերը, իրենց ձեւով եւ բովանդակութեամբ, որոշակիօրէն սահմանափակուած են: Վերջին տասնամեակներին մեծածաւալ ներդրումներ են կատարուել Ծոցի արաբական լրատուամիջոցներում, ստեղծուել են միջազգային յայտնի լրատուական *բրենդ*ներ, ինչպիսիք են՝ կատարական *ԱլՋազիրան* եւ սաուդական *ԱլԱրաբիան*, ինչն ուղիղ կապ ունի Ծոցի առանձին պետութիւնների արտաքին քաղաքական յաւակնութիւնների, աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական զարգացումներում Ծոցի երկրների աճող ազդեցութեան հետ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ՝ ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Ծոցի արաբական լրատուամիջոցները որպէս կանոն, անդրադարձել են հայկական թեմաներին, այդ թւում՝ ՀՀին, տեղի հայօճախներին, Հայոց Ցեղասպանութեանը, բայց որոշակիօրէն սահմանափակ ձեւով եւ ընդմիջուած յաճախականութեամբ: Հաշուի առնելով այն հանգամանքը, որ ՀՀն միջազգային ասպարէզում մեծ կշիռ չունեցող պետութիւն է, հայկական թեմաներին անդրադարձ եղել է երեք հիմնական հանգամանքներում:

1. Եթէ եղել են հրատապ խնդիրներ, որոնք տարածաշրջանային ու միջազգային, այդ թւում՝ Հարաւային Կովկասի, առումով կարեւորութիւն են ներկայացրել եւ ուղիղ կամ անուղղակի առնչուել են ՀՀին կամ հայկական թեմային:

2. Եթէ առնչուել են ընդհանրապէս հայ-արաբական կամ ՀՀ-Ծոցի երկրներ երկկողմ յարաբերութիւններին՝ ամէնատարբեր ոլորտներում:

3. Եթէ հայկական որեւէ թեմայի վերաբերեալ ձեւաւորուել է հետաքրքրութիւն, ինչը լուսաբանման առումով նպատակայարմար է նկատուել տուեալ լրատուամիջոցի կամ թերթի խմբագրութեան կողմից:

Հայկական թեմաներին Ծոցի արաբալեզու եւ անգլիալեզու լրատուամիջոցները հիմնականում անդրադարձել են միջնորդաւորուած կերպով՝ քաղելով նիւթերը միջազգային լրահոսից եւ հեղինակաւոր լրատուամիջոցներից: Անշուշտ, եղել են Ծոցի առանձին լրատուամիջոցներ, մասնաւորա-

[10] https://www.khaleejtimes.com/, մատչում՝ 30.01.2024:
[11] https://www.independentarabia.com/, մատչում՝ 30.01.2024:
[12] https://gulfnews.com/, մատչում՝ 30.01.2024:
[13] https://gulfbusiness.com/, մատչում՝ 30.01.2024:
[14] https://nuomnews.net/, մատչում՝ 30.01.2024:
[15] https://www.arabnews.com/middleeast, մատչում՝ 30.01.2024:
[16] https://al-ain.com/, մատչում՝ 30.01.2024:

պէս՝ *Ալ-Ջազիրան*, որը հանդէս է եկել որպէս տեղեկատուութեան սկզբնաղբիւր: *Ալ-Ջազիրան* շատ դէպքերում ունեցել է իր թղթակիցները ՀՀում եւ առանձին հաղորդումներ պատրաստուել են Հայաստանում: Նաեւ եղել են լրատուամիջոցներ, որոնք յատուկ ուշադրութիւն են դարձրել հայկական կարծիքին՝ եթեր տրամադրելով հայաստանցի բարձրաստիճան պաշտօնատարների, հայ մասնագէտների ու փորձագէտների: Այս իմաստով առանձնանում են սաուդական լրատուամիջոցները՝ *Ալ-Արաբիյան*, *Արաբ նիուզը*[17] եւն., որոնք նաեւ 2020ի 44օրեայ պատերազմի ժամանակ մեծ տեղ տուեցին Երեւանից հնչող տեսակէտերի լուսաբանմանը:

Միւս կողմից, Ծոցի մի շարք լրատուամիջոցներ սկզբնաղբիւրային նշանակութեան նիւթեր են հրապարակել ոչ այնքան ՀՀի, այլեւ՝ տեղի հայ համայնքների մասին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ (ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ) ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Շատ դէպքերում Ծոցի արաբական լրատուամիջոցներում հրապարակուել են Արցախի հարցում հայկական տեսակէտերը աջակցող նիւթեր: Արցախեան հարցը ներկայացնելու համար, որպէս կանոն, թեման աւելի լայն խորապատկերով է ներկայացուել, հանգամանօրէն ներկայացուել է հարցի նախապատմութիւնը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ յետխորհրդային տարածքը տարածաշրջանին այդքան էլ յայտնի չէ: Շատ դէպքերում անդրադարձ է եղել Արցախի հայ ազգաբնակչութեան ազգային խնդիրներին, արցախեան առաջին պատերազմին (1991-94), 1994ի զինադադարին, ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաւորմանը, բանակցային գործընթացին եւն.: Ծոցի արաբական լրատուամիջոցներն անդրադարձել են 2016ի պատերազմին, այնուհետեւ՝ հայ-ադրբեջանական սահմանային միջադէպերին, այդ թւում՝ 2020ի յուլիսի տաւուշեան դէպքերին, իվերջոյ՝ 2020 պատերազմին, զոհերի, գերիների, ադրբեջանական կողմում յայտնուած եւ հայերի դէմ կռուող սիրիացի վարձկաններին: Շատ դէպքերում հայ-ադրբեջանական հակամարտութիւնը ներկայացուել է աշխարհաքաղաքական կերպափոխումների եւ մրցակցութեան ենթախորքում, ներկայացուել է հակամարտութեան մեջ Ռուսաստանի դերակատարութեան, Հարաւային Կովկասում Թուրքիայի եւ Իրանի, եւ նոյնիսկ՝ Եւրամիութեան աշխուժացման հարցը: Հետաքրքրական է, որ նոյնիսկ անդրադարձ է եղել մասնաւոր թեմաների, օրինակ՝ 2020ի պատերազմում լիբանահայ գործիչ, երգիչ Գէորգ Հաճեանի զոհուելու փաստին:

2020ի սեպտեմբերեան պատերազմից յետոյ *Ալ-Այնը* մի հետաքրքիր նիւթ հրապարակեց պատերազմի եւ տարածաշրջանային անվտանգու-

[17] https://www.arabnews.com/node/1991456/world, 22.12.2021, մատչում 30.01.2024

թեան խնդիրների մասին[18], որտեղ անդրադարձ կայ Թուրքիայի նախագահ Ռեջէբ Թայիբ Էրդողանի նոր-օսմանական քաղաքականութեանը, Հարաւային Կովկասում դրա ներդրման փորձերին եւ նոյնիսկ Հայոց Ցեղասպանութեան կրկնութեան հնարաւորութեանը[19]: Իդէպ, վերջին շրջանում Հարաւային Կովկասի նկատմամբ Ծոցի արաբական լրատուամիջոցներում կայ աւելի մեծ հետաքրքրութիւն, քան նախկինում էր: Շատ նիւթեր անդրադառնում են տարածաշրջանի շուրջ ձեւաւորուած մրցակցութեանը: Նշւում է, որ դերակատարները նոյնն են, ինչ Մերձաւոր Արեւելքում՝ Թուրքիան, Իրանը, Իսրայէլը[20]:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԿԿՈՂՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹԵՄԱՆ

Ծոցի լրատուամիջոցներում, որպէս կանոն, տեղ են գտել երկկողմ՝ պաշտօնական այցերի, մշակութային գործիչների եւ խմբերի այցելութիւնների, այլեւայլ բնոյթի գործակցութիւնների մասին լուրեր: Շատ դէպքերում, հայօճախները տեղական լրատուամիջոցներից են իմացել ՀՀից սպասուելիք մշակութային միջոցառման մասին: Հետաքրքրական է, որ Ծոցի արաբական թերթերը շատ դէպքերում հրատարակել են հաւատարմագրուած ՀՀ դեսպանի շնորհաւորական ուղերձը՝ ազգային տօնի առիթով: Ներկայացնենք դրանցից մէկը: 2022ին *Ալ-Անբ'ան* հրատարակել է Քուէյթում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Սարմեն Բաղդասարեանի շնորհաւորական ուղերձն ամբողջութեամբ՝ ուղղուած Քուէյթի իշխանութեանը եւ ժողովրդին՝ ազգային տօնի 61րդ տարեդարձի եւ Քուէյթի ազատագրման 31րդ տարեդարձի առթիւ[21]:

---

[18] https://english.aawsat.com/home/article/3892321/omer-onhon/azerbaijan-and-armenia-war-or-peace, 24.09. 2022, մատչում՝ 30. 01. 2024:

[19] https://al-ain.com/article/erdogan-s-wars-from-libya-to-armenia, 17.10.2020, մատչում՝ 30.01.2024

[20] Նոյն:

[21] Ուղերձում մասնաւորապէս նշուած է, որ՝ Հայաստանի եւ Քուէյթի յարաբերութիւնները գալիս են դարերի խորքից: Հայերը պատմութեան ընթացքում եղել են Մերձաւոր Արեւելքի հասարակական կառուցուածքի բաղկացուցիչը, նրանք մինչ օրս ապրում են արաբների հետ կողք կողքի՝ համարկուած համակեցութեամբ: Բարեկամական յարաբերութիւններն է՛լ աւելի ամրապնդուեցին ՀՀ անկախացումից եւ 1994ին դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումից յետոյ: Նշւում է, որ Քուէյթը շահեկան դերակատարում ունի տարածաշրջանում, քանի որ նշանակալի ներդրում է ունեցել խաղաղութեան տարածման, տարածաշրջանային եւ միջազգային մակարդակներում կայունութեան հաստատման, մարդասիրական, բարեգործական եւ զարգացման ծրագրերն առաջ տանելու գործում: Այնուհետեւ դեսպանն ընդգծում է, որ երկու երկրներն էլ կարող են բարելաւել յարաբերութիւնները՝ մեծացնելով փոխգործակցութիւնը՝ կենտրոնանալով ներդ-

Յատկանշական է, որ Ծոցի արաբական լրատուամիջոցներում տեղ են գտել նաեւ ՀՀի հետ կապուած նիւթեր՝ մշակութային ուղղուածութեամբ: Օրինակ՝ *Ալ Կաբաս*ի 2013 Յունուարի 11ի համարում զետեղուած է յօդուած, որում խօսւում է հայ տպագրութեան մասին: Նշւում է, որ 2012ին ՀՀում նշուել է հայ տպագրութեան 500ամեակը: Նոյն թուականին ԵՈՒՆԵՍԿՕն «համաշխարհային գրքի մայրաքաղաք» հռչակեց Երեւանը[22]: Շատ հանգամանալից կերպով ներկայացւում է հայ տպագրութեան պատմութիւնը՝ սկսած Յակոբ Մեղապարտից եւ Հնդկաստանի Շահամիրեան ընտանիքից, ներկայացւում է նոյնիսկ պոլսահայ մամուլը եւ վերջապէս անդրադարձ է կատարւում արաբական աշխարհի յայտնի հայ գործիչներին, մասնաւորապէս՝ Հալէպ քաղաքում եւ Կ.Պոլսում *Միրաաթ ալ-Ահուալ* առաջին տպագիր թերթի հեղինակ, ծագումով հայ Ռզկալլահ Հասունին[23]:

Հարկ է նշել, որ վերջին շրջանում ՀՀում տեղի ունեցած ամենանշանակալից քաղաքական զարգացումներին, մասնաւորապէս 2018ի «Թաւշեայ յեղափոխութեան» դէպքերին արաբական մամուլը լայնօրէն արձագանգեց, սակայն *Ալ Ջազիրա*ն այս թեմայով հեռարձակեց միանգամայն այլ որակի հաղորդումներ: *Ալ Ջազիրա*յի լրագրողներն այդ օրերին եղել են ՀՀում: Հաղորդումներում ներկայացուել է ՀՀում կուտակուած հիմնահարցերը՝ քաղաքական, ընկերատնտեսական, կաշառակերութիւն, ընկերային անհաւասարութիւն, աղքատութիւն, կեղծուած ընտրութիւններ, եւն.[24]: Առանձին հաղորդումներում հայկական «թաւշեայ յեղափոխութիւն»ը ներկայացուել է որպէս *բրենդ*, ժողովրդավարութեան վարպետաց դաս յետխորհրդային մի երկրում, որ բազմաթիւ խնդիրներ ունի[25]: *Ալ Ջազիրա*ն հարցազրոյց կատարեց նաեւ յեղափոխութեան առաջնորդից[26]: Իդէպ թէ՛ *Ալ Ջազիրա*ն եւ թէ՛ *Ալ Արաբիա*ն հարցազրոյցներ են կատարել ՀՀ ամենաբարձր պաշտօնեաներից՝ օրուայ վարչապետից, նախագահից, արտգործ-

---

րումների, կրթական ու մշակութային փոխանակման ծրագրերի վրայ (https://www.alanba.com.kw/1103686, 23.02.22, մատչում՝ 30.01.2024):

[22] https://www.unesco.org/en/world-book-capital-network/yerevan, մատչում՝30.01.2024:

[23] Ռզկալլահ Հասունի մասին մանրամասն տե՛ս՝ Եղիա Նաջարեան, *Արաբական ազգային-մշակութային զարթնօնքը՝ Նահդան*, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտ, Երեւան 1988:

[24] https://www.youtube.com/watch?time_continue=122&v=x94UQAmNWho&embeds_referring_euri=https%3A%2F%2Fwww.aljazeera.com%2F&source_ve_path=Mjg2NjY&feature=emb_logo, մատչում՝ 30.01.2024:

[25] https://www.aljazeera.com/opinions/2018/5/7/armenias-velvet-revolution-a-masterclass-in-socialism, 07.05.2018, մատչում՝ 30.01.2024:

[26] https://www.aljazeera.com/features/2018/5/8/pashinyan-supporters-optimistic-ahead-of-armenia-parliament-vote, 08.05.2018, մատչում՝ 30.01.2024:

նախարարից, մեծ տեղ է յատկացուել հայկական տեսակէտերի լուսաբանմանը մասնաւորապէս 2020ի պատերազմի օրերին:

2021ին *Ալ-Արաբիյա* անդրադարձաւ նաեւ Սաուդեան Արաբիա առաջին հայաստանցի բարձրաստիճան պաշտօնեայի՝ նախագահ Արմէն Սարգսեանի այցին, շրջանառութեյան դրուեցին թագաժառանգ Մուհամմադ Բըն Սալմանի հետ վերջինիս լուսանկարները[27]:

ՀԱՅՕՃԱԽԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ծոցի արաբական լրատուամիջոցներում, կարելի է ասել, բաւական լայն անդրադրած կայ հայօճախների ազգային կեանքին, համայնքային կեանքի շրջանակներում տեղի ունեցող միջոցառումներին, փոխադարձ շփումներին եւն.: Հաշուի առնելով այն, որ հայերը կրօնադաւանական փոքրամասնութիւն են, շատ մեծ է հայօճախների կրօնական կառոյցների, դրանց առաջնորդների, առաջին հերթին՝ մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեանը եւ կաթողիկոս Արամ Ա.ի հետ կապուած լուրերը: Լրատուամիջոցներում, որպէս կանոն, ներկայացուել են հայօճախների անունից թեմերի առաջնորդների շնորհաւորական ուղերձները հիւրընկալող պետութեան ազգային եւ կրօնական տօների կապակցութեամբ՝ ուղղուած պետութեան առաջնորդին, թագաժառանգին, թագաւորական ընտանիքի անդամներին եւ ժողովրդին: Հետաքրքիր է, որ հայ առաջնորդների ուղերձները բովանդակութեամբ գրեթէ նոյնն են: Որպէս կանոն, շեշտադրւում է երկկողմ՝ պետութիւն-հայօճախ յարաբերութիւններում գոյութիւն ունեցող բարեկամութիւնը, փոխըմբռնումը, փոխվստահութիւնն ու յարգանքը: Համայնքի հոգեւոր առաջնորդները, որպէս կանոն, անդրադառնում են նաեւ հիւրընկալող պետութեան տարածաշրջանային եւ միջազգային դերին ու հեղինակութեանը: Շատ կարեւոր է կրօնական համակեցութեան, հանդուրժողականութեան եւ ազգային իրաւունքների իրացմանը սատարող Ծոցի միապետութիւնների իշխող ընտանիքների քաղաքականութեան ընդգծումը: Ազգային եւ կրօնական հանդուրժողականութիւնը էթնոդաւանական փոքրամասնութիւնների, այդ թւում՝ հայերի նկատմամբ, որին, ի պատասխան, հայօճախը շնորհակալ է: Նման շեշտադրումներ կան օրինակ Քուէյթի եւ յարակից երկրների հայոց թեմի առաջնորդ Պետրոս արք. Մանուէլեանի՝ Ռամադանի տօնի աւարտի հետ կապուած շնորհաւորական ուղերձում[28]:

Ծոցի արաբական լրատուամիջոցներում տեղ են գտել նաեւ հայօճախների գործունէութիւնը տարբեր տեսանկիւնից ներկայացնող նիւթեր: Օրինակ *Ալ-Անբա*'ի 2021ի համարներից մէկը պատմում է Քուէյթի հայօճախի նախաձեռնած արեան տուչութեան արշաւի մասին՝ թեմական առաջնորդի

[27] https://english.alarabiya.net/News/gulf/2021/10/28/Armenian-president-first-official-to-visit-Saudi-Arabia-meets-with-Crown-Prince, 28.20.2021, մատչում՝ 30.01.2024:

[28] https://nuomnews.com/news-324579143 , 16.07.2021, մատչում՝ 30.01.2024:

գլխաւորութեամբ՝ որպէս Քուէյթին եւ քուէյթցի ժողովրդին ուղղուած սիրոյ եւ հաւատարմութեան նշան: Հայօճախի անդամները արշաւը, որպէս ե-րախտագիտութեան նշան, անուանել են «Հաւատարմութեան վարդ»[29]: Հարկ է նշել, որ, որպէս կանոն, Ծոցի արաբական լրատուամիջոցներն անդրադարձել են Արամ Ա. կաթողիկոսի տարածաշրջանային այցերին եւ դրա մանրամասներին[30]:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԵՄԱՆ

Հայոց Ցեղասպանութեան թեման նոյնպէս տեղ է գտել Ծոցի արաբա-կան լրատուամիջոցներում: Հայօճախների համար անչափ զգայուն թեմա է, որի հանրայնացումն ուղղորդուել է թէ՛ ներսից, թէ՛ դրսից: Որպէս կանոն, ներկայացուել է հայօճախների կողմից անցկացուող միջոցառումները: Թե-ման քննարկուել է նաեւ աւելի լայն՝ պատմական ենթախորքում, խօսուել դրա քաղաքական նշանակութեան եւ առնչուող հարցերի մասին[31]: Շատ հետաքրքրական է, որ Ծոցի մի շարք լրատուամիջոցներ անդրադարձան Սիրիայի Ժողովրդական Ժողովի (խորհրդարան) կողմից 1915-1917 թուա-կանները հայերի, յոյների եւ ասորիների կոտորածները ցեղասպանութիւն համարելու որոշմանը[32]: *Ալ Անբա՛* թերթի համապատասխան համարում նշ-

---

29 https://www.alanba.com.kw/1046700/?utm_campaign=nabdapp.com&utm_medium=referral&utm_source=nabdapp.com&ocid=Nabd_App , 30.05.2021, մատչում՝ 30.01.2024:

30 https://www.alanba.com.kw/ar/kuwait-news/official/747102/22-05-2017-%D8%B3%D9%81%D9%8A%D8%B1-%D8%A7%D9%84%D8%A8%D8%AD%D8%B1%D9%8A%D9%86-%D8%A3%D9%82%D8%A7%D9%85-%D9%85%D8%A3%D8%AF%D8%A8%D8%A9-%D8%BA%D8%AF%D8%A7%D8%A1-%D8%B4%D8%B1%D9%81-%D8%A8%D8%B7%D8%B1%D9%8A%D8%B1%D9%83-%D8%A7%D9%84%D8%A3%D8%B1%D9%85%D9%86-%D8%A7%D9%84%D8%A3%D8%B1%D8%AB%D9%88%D8%B0%D9%83%D8%B3/, 22.05.2017, մատչում՝ 30.01.2024:

31 https://www.arabnews.com/node/1487226/middle-east, 25.04.2019, մատչում՝ 30.01.2024

32 https://www.alanba.com.kw/ar/arabic-international-news/syria-news/951227/14-02-2020-%D9%85%D8%AC%D9%84%D8%B3-%D8%A7%D9%84%D8%B4%D8%B9%D8%A8-%D8%A7%D9%84%D8%B3%D9%88%D8%B1%D9%8A-%D9%8A%D9%82%D8%B1-%D8%A8%D9%80-%D8%AC%D8%B1%D9%8A%D9%85%D8%A9-%D8%A7%D9%84%D8%A5%D8%A8%D8%A7%D8%AF%D8%A9-%D8%A7%D9%84%D8%AC%D9%85%D8%A7%D8%B9%D9%8A%D8%A9-%D8%A7%D9%84%D8%B9%D8%AB%D9%85%D8%A7%D9%86%D9%8A%D8%A9-

ւում է, որ Սիրիայի խորհրդարանը դատապարտել եւ հաստատել է քսաներորդ դարասկզբին Օսմանեան կայսրութեան կողմից իրականացուած Հայոց Ցեղասպանութիւնը՝ որպէս յանցագործութիւն: Նաեւ դատապարտուել է այս յանցագործութիւնը հերքելու ցանկացած փորձ: Նիւթի մէջ մէջբերւում է նաեւ Սիրիայի խորհրդարանի նախագահ Համուդա Սաբբաղի յայտարարութիւնն այն մասին, որ Թուրքիայի ներկայիս քաղաքականութիւնն այդ յանցագործութեան շարունակութիւնն է: «*Ժողովուրդների դէմ ուղղուած ցեղասպանական յանցագործութիւնները չեն կարող վաղեմութեան ժամկէտ ունենալ, մանաւանդ, որ Էրդողանի նորօսմանականութիւնը կիրառում է նոյն յանցաւոր մեթոդները*»: Սաբբաղը յաւելել է, որ դատապարտումն ու ճանաչումն ունեն մէկ այլ կարեւոր նշանակութիւն, այն է՝ թոյլ չտալ ցանկացած դաժան ուժի, այդ թւում՝ Էրդողանի վարչակարգին, համարձակուել կրկնել նման նողկալի յանցագործութիւն[33]:

Հարկ է նշել, որ Հայոց Ցեղասպանութեան թեման վաղուց իվեր չի առնչւում միայն հայ ժողովրդին եւ Հայաստանին: Այն շահարկւում է քաղաքական տեսանկիւնից: Չի բացառւում, որ սաուդական լրատուամիջոցներում Թուրքիայի նկատմամբ որոշակի բացասական երանգները կապ ունեն Ռիադ-Անկարա վերջին լարուածութեան հետ, որն առաւել սրուեց 2018ին սաուդեան այլախոհ լրագրող Ջամալ Խաշոկջիի սպանութիւնից յետոյ:

ՀԱՅ ԵՒ ԱՐԱԲ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԹԵՄԱ-ՆԵՐ

Ծոցի արաբական լրատուամիջոցներում բաւական անդրադարձներ կան պետութիւն-հասարակութիւն-հայօճախ կապերին: Վերջերս *ԱլԱնբա*ն լուսաբանեց հայերի մասին Ջամիլ Համզա Ուլիանի «Հայերը Քուէյթում. պատմական դրուագներ եւ փաստագրուած վկայութիւններ» մենագրութիւնը[34]: Թերթը մանրամասներ է ներկայացնում գրքի մասին, որոնցում ներառուած են հայօճախի կողմից տրամադրուած լուսանկարներ: Հեղինակը նշում է, որ գիրքը գրուել է համաճարակի տարիներին՝ Քուէյթում հայ Եկեղեցու եւ դպրոցի պատասխանատուների աջակցութեամբ: Ընդհանրապէս, հայկական թեմաներին վերաբերող նիւթերում նշւում է, որ Քուէյթը բաց է փոքրամասնութիւնների առաջ եւ մանաւանդ հայերի նկատմամբ վերաբերմունքը միշտ դրական է[35]: Իսկ *Ջարիդա* թերթը ներկայացնում է Համզա Ալիանի առանձին յօդուածը, որտեղ նա պատմում է, թէ ինչու որո-

%D8%A8%D8%AD%D9%82-%D8%A7%D9%84%D8%A3%D8%B1%D9%85%D9%86/ 14.02.2020, մատչում՝ 30.01.2024:

[33] Նոյն:

[34] حمزة عليان, *الأرمن في الكويت .. روايات تاريخية وشهادات موثقة*.

[35] https://www.alanba.com.kw/1155183, 24.11.2022, մատչում՝ 30.01.2024:

շեց հայերի մասին գիրք գրել[36]: Հրապարակումներից մէկն, օրինակ, անդրադառնում է արաբ գրողների այն ստեղծագործութիւններին, որոնք ունեն հայ հերոսներ: Ներկայացւում է *Աբդ Ալ-Լաթիֆ Ալ-Արմանի* վէպը, որը հեղինակել է Ահմադ Ալ-Սարրաֆը[37]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ծոցի արաբական լրատուամիջոցներում հայկական թեմաները մեծ ծածկոյթ չունեն, իսկ ՀՀ-ին վերաբերող նիւթերը հիմնականում քաղուած են միջազգային լրահոսից: Հայօճախներին վերաբերող անդրադարձն աւելի շատ է, քանի որ դրանց նիւթերը, որոշ դէպքերում, տրամադրւում են հայ համայնքների կողմից: Նմանօրինակ յօդուածներում, որպէս կանոն, շեշտւում է, որ կրօնական փոքրամասնութիւնների նկատմամբ պետութեան կողմից կայ հանդուրժողականութիւն, միւս կողմից, կայ համակեցութիւն եւ փոխգործակցութիւն, որի համար հայօճախները երախտագէտ են:

Հարկ է նկատի ունենալ, որ արաբական, այդ թւում՝ Ծոցի լրատուամիջոցները կարեւոր հարթակ են մի կողմից՝ Հայաստանի Հանրապետութեան ազգային շահերի առաջ քաշման տեսանկիւնից, միւս կողմից՝ այդ պետութիւններում ապրող հայօճախների համար, որոնք թէեւ քաղաքացիութեան իրաւունք չունեն, բայց ունեն ազգային կեանք վարելու հնարաւորութիւն: Հետեւաբար, խնդիրը կարեւոր է համահայկական ազգային հետաքրքրութիւնների առումով: Անհրաժեշտ է Ծոցի ուղղութեամբ իրողութիւնների մշտադիտարկումը, հայեցակարգերի մշակումը եւ աշխատանքների աշխուժացումը թէ՛ ՀՀ-ի, թէ՛ հայօճախների եւ մասնաւորապես մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմից:

Ծոցի արաբական միապետութիւնները աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական առումով կարեւորագոյն դերակատարներ են: Ներկայ փուլում, Հայաստանը մեծապէս հետաքրքրուած է Ծոցի արաբական երկրների հետ կապերը աշխուժացնելու ուղղութեամբ, սակայն այդ հարցում անելիքներ դեռ շատ կան: ՀՀն պէտք է ներկայացուած լինի Ծոցի արաբական լրատուամիջոցներում (նաեւ որպէս զբօսաշրջային ուղղութիւն), ինչը բոլոր դէպքերում կ'ամրապնդի նաեւ հայօճախների դիրքերը Ծոցի արաբական հասարակութիւններում: Հայօճախները ՀՀ անկախացութիւնից յետոյ կամրջի դեր են կատարել ՀՀ-արաբական երկրներ յարաբերութիւն-

[36] https://www.aljarida.com/articles/1635349191478006700, 28.10.2021, մատչում՝ 30.01.2024:

[37] https://alqabas.com/article/641764-%D8%B9%D8%A8%D8%AF%D8%A7%D9%84%D9%84%D8%B7%D9%8A%D9%81-%D8%A7%D9%84%D8%A3%D8%B1%D9%85%D9%86%D9%8A-%D9%88%D8%A7%D9%84%D8%AA%D9%81%D8%A7%D8%AD%D8%A7%D8%AA-%D8%A7%D9%84%D8%AB%D9%84%D8%A7%D8%AB, 04. 03.2019, մատչում՝ 30.01.2024:

ներում, իսկ նման հնարաւորութիւնները դեռևս սպառուած չեն: Ծոցի արաբական երկրների հետ ՀՀի յարաբերուելու առաջնահերթութիւններից մէկն էլ տեղի հայօճախներն են, որոնք արաբական աշխարհի հայօճախների կարեւոր բաղկացուցիչն են. հայօճախներ, որոնք գոյացել են ներքին գաղթի եւ նոր աշխատաշուկաների փնտռտուքի հետեւանքով: Ամէն պարագայում, Ծոցի տարածաշրջանի հետ համագործակցութիւնը պէտք է փոխադարձ լինի: Ցանկալի է, որպէսզի Ծոցի արաբական երկրներն էլ զգալիօրէն ներկայացուած լինեն հայկական լրատուամիջոցներում, իսկ հասարակութիւններն էլ ճանաչեն միմեանց: Այս առումով կարեւոր գործ ունի անելու հանրային դիւանագիտութիւնը: ՀՀն կարող է մեծապէս օգտուել հսկայական ֆինանսական եւ բնական աղբիւրներ ունեցող, ամենատարբեր ոլորտներում զգալի յաջողութիւնների հասած եւ արդի արհեստագիտութիւնները իւրացրած Ծոցի երկրների հետ համագործակցութիւնից:

Հետեւաբար, Ծոցի լրատուամիջոցները պէտք է դիտարկել որպէս կարեւոր գործիքակազմ՝ ՀՀի ճանաչելիութիւնը բոլոր առումներով, այդ թւում՝ ներդրումային ուղղութիւն, բարձրացնելու եւ քաղաքական կռուաններ ձեռք բերելու տեսանկիւնից, եթէ նկատի ունենանք նաեւ Ադրբեջանի հակահայկական քարոզչութիւնն արաբական իսլամական աշխարհում: Արցախեան 2020ի պատերազմը մէկ անգամ եւս ի ցոյց դրեց, որ ՀՀն չունի լծակներ եւ ազդեցութիւն միջազգային, այդ թւում՝ արաբական լսարանի վրայ, ինչը լրջագոյն բացթողում է: Ծոցի արաբական լրատուամիջոցները կարեւոր հարթակ են ՀՀի տարածաշրջանային դերի բարձրացմանն ուղղուած ջանքերի տեսանկիւնից:

Ցանկալի է Ծոցի արաբական լրատուամիջոցների հետ ձեւաւորել սերտ համագործակցութիւն, եւ այդպիսով մեծացնել ՀՀի հետ ճանաչելիութիւնը: Իսկ դրա համար անհրաժեշտ է զարգացնել կենսունակ օրակարգ: Ազգային հետաքրքրութիւնների տեսանկիւնից ՀՀի համար կարեւորագոյն իրադարձութիւններին եւ ոչ միայն, հրաւիրել Ծոցի յայտնի լրատուամիջոցներին՝ լուսաբանման համար: Մեդիայի ոլորտում եւ ոչ միայն, չօգտագործուած բազմաթիւ հնարաւորութիւններ կան, հետեւաբար բացերը լրացնելը պէտք է համարել հրամայական:

Այս առումով, կարեւոր դեր ունի անելու ՀՀ դիւանագիտութիւնը, ՀՀ արտաքին քաղաքականութեան արաբական ուղղութիւնը, որը պէտք է վերանայի իր որոշ առումով հնացած մօտեցումներն այս ուղղութեամբ: Հետեւաբարար, առաջիկայ տարիներին արաբական քաղաքականութեան մէջ Ծոցի տարածաշրջանը պէտք է առանցքային դերակատարութիւն ունենայ: Իսկ այս հարցում շատ աւելի դիւրին կարելի է առաջ գնալ՝ հաշուի առնելով, որ մի կողմից՝ հայ եւ արաբ ժողովուրդները պատմամշակութային դարաւոր կապեր ունեն եւ շատ լաւ ճանաչում են իրար, միւս կողմից՝ որ ՀՀ-Ծոցի երկրներ յարաբերութիւնները շատ նպաստաւոր են այս փուլում:

ARMENIAN TOPICS IN THE GULF MEDIA (MAIN TRENDS) (2016–2022)

(Summary)

Araks Pashayan
araks.pashayan@ysu.am

The paper covers the Arabic and English language mass and social media publications dedicated to Armenians and Armenian affairs. It analyzes the topics of material published between 2016 and 2022, the sources of the disseminated information, their objectivity, the causes and timing of their publication, and it singles out AlArabiya as an impartial and objective news source.

The paper notes that alongside the sociopolitical topics covered in the mass and social media of the GCC, articles about other interstate relational, cultural, athletic and other subjects shed light on the past history of the Armenians and Armenia, and in special circumstances topics like the Armenian Genocide, the Southern Caucasian conflicts about energy as well as news on the Armenian communities of the GCC countries are published.

The paper concludes with a set of recommendations on the said issues.

Հայաստանցիները Ծոցի Արաբական Երկրներում
(ԱՄԷ, Քուէյթ, Քաթար, Պահրէյն, Սէուտական Արաբիա)

ԷԼԻԶ ԳԷՈՐԳԵԱՆ
elizgevorgyan@gmail.com

Ծոցի արաբական երկրների հայօճախների ձեւաւորման գործընթացը սկիզբ է առել 1950ականներից: Այն անմիջականօրէն կապուած էր տարածաշրջանում նաֆթարդիւնաբերութեան զարգացման եւ աշխատանքի նոր շուկաների ձեւաւորման հետ: Հայօճախների կորիզն արաբական տարբեր երկրներից (Սուրիա, Լիբանան, Իրաք եւն.), նաեւ Իրանից ներգաղթածներն ու նրանց սերունդներն են: Ժամանակի ընթացքում այստեղ են հաստատուել հայեր ԱՄՆից, Քանատայից, եւրոպական երկրներից (ԵՄ), իսկ 1990ականներից յետոյ՝ նաեւ Հայաստանի Հանրապետութիւնից:

Ծոցի երկրներ աշխատելու մտադրութեամբ տեղափոխուած հայաստանցիներին ժամանակի ընթացքում յաջողուեց յարմարուել տարածաշրջանի իւրայատկութիւններին եւ չնայած ոչ-տեղաբնիկների հարցում այդ պետութիւնների օրէնքներում առկայ սահմանափակումներին (այդ թւում՝ քաղաքացիութիւն ձեռք բերելու արգելք)՝ հայերն, այնուամենայնիւ, ստեղծեցին համայնքային կառոյցներ: Մասնաւորապէս, Քուէյթում եւ Արաբական միացեալ էմիրութիւններում (ԱՄԷ) հայերին հնարաւորութիւն տրուեց կազմակերպել իրենց ազգային կեանքը, ինչն իրականութիւն դարձաւ հայկական կրօնական եւ աշխարհիկ կազմակերպութիւնների եւ միութիւնների գործունէութեան շնորհիւ: Քուէյթը, Շարժան, Տուպայը, Ապու Տապին դարձան այն հիմնական շրջանները, որտեղ հաստատուեցին հայերը:

Սոյն յօդուածում կը փորձենք ուրուագծել հարցերի հիմնական շրջանակը. այն է՝ հայաստանցիները ե՛րբ հաստատուեցին Ծոցի երկրներում, ինչո՛վ էին զբաղւում, հիմնական գործառոյթները եւ առհասարակ հայաստանցիների բնութագիրը՝ հնարաւորութիւն ստեղծելով ընդհանուր գծերով պատկերացում կազմել Ծոցի երկրներում հայաստանցիների վիճակի մասին:

Հայաստանցիները, առհասարակ, Ծոցի երկրներ (նրանց առաջին հանգրուանը ԱՄԷն է եղել), եկել են արդէն ԽՍՀՄ փլուզումից յետոյ, անմիջապէս որ սկսեցին տնտեսական դժուարութիւններ առաջանալ ՀՀում 1990ականների սկզբներին: Հենց այդ ժամանակ են իրենք յայտնուել ԱՄԷում, երբ նոյնիսկ ուղիղ չուերթեր կային ոչ թէ Տուպայ, այլ՝ Ֆուժէյրա:

Առաջին մուտքը եղել է զուտ առեւտրատնտեսական նշանակութեան. նրանք տաքացուցիչներ էին բերում ՀՀից՝ կենցաղային իրերից սկսած մինչեւ տարբեր մեքենաշինական ապրանքներ: Այդ տարիներին շատ բա-

րենպաստ է եղել ԱՄԷում անմիջապէս շատ փոքր գումարով բնակութիւն հաստատելը, աւելի ճիշտ՝ գործ սկսելը, եւ դա կարողացել են անել այն հայաստանցիները, որոնք այսօր արդէն կայացած են, այնտեղ լուրջ գործեր ունեն:

Սկզբում հայաստանցիք հիմնականում առեւտրական ոլորտում են աշխատել, կարճաժամկէտ են գտնուել այնտեղ, բայց յետոյ եղել են ոմանք, ովքեր կարողացել են նաեւ իրենց գործատեղիներն հիմնել, մեծ մասամբ նաեւ ազատ առեւտրատնտեսական գօտիներում են դրանք կենտրոնացած եղել, յետոյ արդէն՝ երկրի ներսում: Նրանք կենտրոնացած են աւելի շատ Տուպայ-Շարժայում, բայց վերջին ժամանակահատուածում արդէն փոխյարաբերութիւնների աւելի էապէս կայացուած լինելու պարագաներում՝ նաեւ պետական եւ մասնաւոր բնագաւառներում աշխատանքի հրաւիրուած հայաստանցիներ են ժամանել: Վերջիններս աւելի շատ վերաբերում են տեղեկատուական արհեստագիտութեան ոլորտին, որտեղ բաւականաչափ մասնագէտներ կան: Իհարկէ կան նաեւ պետական կառավարման համակարգում, ինչպէս՝ քաղաքապետարանի, քաղաքային խորհուրդներում: Բայց կան եւ մասնաւոր ընկերութիւններից հրաւիրուածներ եւս:

ԱՄԷում ժամանակակից հայկական հայօճախը ձեւաւորուել է Ի. դարի կէսերին, երբ հայերն այստեղ են եկել որպէս աշխատանքային գաղթականներ: Յետագայ տարիներին հայերի հոսքը ԱՄԷ ստուարացել է՝ Լիբանանում սկսուած քաղաքացիական պատերազմի (1975-90), Իրանում շահի վարչակարգի տապալման (1979), իրաք-իրանեան պատերազմի (1980-88) պատճառներով: Հայերի թիւը համալրուել է նաեւ տարբեր տարիներին Ռուսաստանից, ՀՀից, ԱՄՆից, Քանատայից, Եւրամիութեան երկրներից եկած հայերով: Հայօճախի կեանքն առաւել կազմակերպուած է դարձել 1980ականներից: Վերջին 30 տարիներին զգալի է նաեւ Հայաստանից եկած անհատների թուի աճը:

Ելնելով տարածաշրջանին յատուկ օրէնսդրութիւնից (օտարներին չի շնորհւում քաղաքացիութիւն)՝ հայերն ունեն կեցութեան իրաւունք, որը աշխատանքի բնոյթից կախուած տրւում է երկու կամ երեք տարով եւ կարող է երկարաձգուել:

Չնայած քաղաքացիութեան արգելքին՝ պետութեան կողմից հայ հանրութիւնը դիտարկւում է որպէս կրօնական համայնք *(ալ-ջալիյա ալ-արմանիյա)*: Հայօճախը, գործելով պատմական ազգային սահմանադրութեան շրջանակներում, ղեկավարւում է հոգեւոր-կրօնական իշխանութեան կողմից, որն էլ պետութեան մօտ հայօճախի ներկայացուցիչն է: Հայօճախի բարձրագոյն եւ օրէնսդիր կառոյցը թեմական մարմինն է, իսկ գործադիր մարմինները՝ տեղերում ձեւաւորուող ազգային վարչութիւնները:

Հայօճախին եւ նրա կառոյցներին մաս են կազմում հայ առաքելական, կաթոլիկ եւ աւետարանական եկեղեցու հետեւորդները: Հայ առաքելական

եկեղեցին ԱՄԷում բացառիկ դեր է կատարում հայապահպանութեան եւ հայօճախի ազգային եւ եկեղեցական կեանքը կազմակերպելու գործում:

Եթէ անցեալում Ծոցի շրջանում ապրելն ու աշխատելն իր որոշակի դժուարութիւններն ունէր՝ տարածաշրջանին բնորոշ դժուարութիւնների պատճառով, ապա ժամանակի ընթացքում իրավիճակը շահեկանօրէն փոխուեց: Արդիւնքում, հայերի հոսքն ԱՄԷ աստիճանաբար աւելացաւ, իսկ հայութիւնը 1980ականներից ձեռք բերեց հայօճախին բնորոշ առանձնայատկութիւններ:

Համայնքի ներկայացուցիչների ճնշող մեծամասնութիւնը պաշտօնավարում է տարբեր հիմնարկութիւններում. կան բարձր պաշտօններ զբաղեցնող հայեր: Հայերի շրջանում կան ճարտարապետներ, տնտեսագէտներ, ուսուցիչներ, արհեստաւորներ, բարձր արհեստագիտութեան մասնագէտներ, բժիշկներ: Մօտ 10 տոկոսից աւելին գործարարներ են, անձնական առեւտրով զբաղուողներ: Կան նաեւ բուհերում սովորող ուսանողներ (հիմնականում ՀՀից եւ նախկին ԽՍՀՄ հանրապետութիւններից), որոնց թիւը վերջին տարիներին աճելու միտում ունի:

Փաստօրէն, այլ ազգերի նման՝ հայերը եւս աշխատանքի բերումով են տեղափոխուել եւ բնակութիւն հաստատել ԱՄԷում: Անցեալում այնքան էլ դիւրին չէր աշխատել եւ ապրել տաք եւ խոնաւ անապատում, սակայն երկրի տնտեսական կայուն վիճակը եւ ազատ մթնոլորտն ու միջազգային ներդրումներն ապահովել են գործի ապահովութիւն, հետեւաբար աւելի հանգիստ կենցաղային պայմաններ:

Հայերի հոսքը դէպի ԱՄԷ աւելանում է տարէցտարի: ԱՄԷում բնակուող հայերի թուաքանակի վերաբերեալ չկան յստակ վիճակագրական տուեալներ: Հայօճախն ունի զգալի թուային շարժունակութիւն:

Այս երիտասարդ հայօճախն իր 40ամեայ կազմակերպական կեանքով եւ ազգային գործունէութեամբ արդէն ունի մնայուն եւ յստակ դիմագիծ:

Կան շատ հայեր, ովքեր տասնամեակներով ապրելով այստեղ, կարողացել են լուրջ յարաբերութիւններ ձեւաւորել այս երկրում: Պէտք է կարողանալ օգտագործել այդ յարաբերութիւնները՝ տարբեր անհատների ու կազմակերպութիւններիի շրջանում ՀՀն ու հայերին դարձնելով աւելի ճանաչելի:

Հետաքրքիրն այն է, որ երբ խօսում ես որեւէ հայի հետ ԱՄԷի մասին, առաջին միտքը, որ լինում է նրա մօտ, Տուպայն է: Երկրորդը Պուրճ Ալ Արապն է: Հայերն, իրականում, սովորաբար բաւարար տեղեկութիւն ունեն այս երկրի մասին: Զգալի թուով գործարարներ եւ զբօսաշրջիկներ են ՀՀից այցելում ԱՄԷ: Որոշ յաջողակ գործարարներ իրենց գործն են հիմնել ԱՄԷում. ոմանք ունեն իրենց սեփական ընկերութիւնները, իսկ ոմանք էլ համատեղ գործունէութիւն են ծաւալում: Ապու Տապին երկրի մայրաքաղաքն է, եւ ՀՀ դեսպանութիւնը տեղակայուած է այստեղ, սակայն հայե-

րի մեծամասնութիւնը, եւ յատկապէս ՀՀ քաղաքացիները, բնակւում են Տուպայում, Շարժայում եւ Հիւսիսային Էմիրութիւններում:

ԱՄԷում հայերը որոշ չափով ապահով են զգում իրենց, քանի որ օրէնքը շատ լաւ աշխատում է եւ չի թոյլատրում անօրինութիւններ կամ սանձարձակութիւններ որեւէ անձի նկատմամբ[1]: Կարելի է ասել, որ ապահով են, ենթակայ չեն խտրականութեան եւ անվտանգութեան հետ կապուած խնդիրներ չունեն: Պէտք է նկատի ունենալ, որ այդ երկիրը կազմուած է փոքրամասնութիւններից: Հայերն այնտեղ կաշկանդուած չեն, նրանք ճանաչուած են պետութեան կողմից, որին էականօրէն նպաստեցին ՀՀ դեսպանութեան հիմնումը, եկեղեցու կառուցման աշխատանքները, ինչպէս նաեւ տարիների ընթացքում հայերի յաջող եւ օրինակելի կեցուածքը: Կարելի է հաւաստել, որ ԱՄԷն, այնուամենայնիւ, ապահով վայր է հայապահպանման համար:

ԱՄԷն որակապէս այլ երկիր է, այստեղ շատ ու շատ հետաքրքրութիւններ կան, որոնք կլանում են երիտասարդներին եւ ոչ միայն նրանց: Ինչ վերաբերում է մթնոլորտին, արդէն վարժուել են, գիտեն այդ պետութեան օրէնքները, յարգում են հիւրընկալող երկրի աւանդոյթները:

Ընդհանուր դինամիկան գնալով աւելի շատանում է, կարծում ենք աւելի կը ներգրաւուեն հայաստանցիները, որովհետեւ այստեղ աշխատուժի տեսակէտից բաւական հնարաւորութիւններ կան, պարզապէս աշխատանք գտնելու ձեւը ի տարբերութիւն ՀՀի, որտեղ պէտք է փնտռել եւ գտնել, այստեղ այլ է՝ գործատուն պէտք է քեզ ՀՀից հրաւիրի՝ ապահովելով քեզ թէ՛ բնակարանով, թէ՛ հոգայ ապահովագրական, առողջապահական ծախսերը եւ համապատասխան մակարդակ ապահովի, այլ կերպ կարելի չէ գալ եւ ինչ որ աշխատանք փնտռել միքանի օրուայ ընթացքում, նոյնիսկ եթէ գտնես էլ, պէտք է երկրից դուրս գալ, որպէսզի տուեալ ընկերութեան հրաւէրով գտնուես այստեղ:

Քուէյթի հայօճախը կազմաւորուել է 1950ականներին, Սուրիայից, Իրաքից, Լիբանանից, Պաղեստինից, Յորդանանից եւ Իրանից աշխատելու նպատակով Քուէյթ տեղափոխուած հայերից: Քուէյթահայութեան թուաքանակը 1990-91ին, նախքան Ծոցի 2րդ ճգնաժամը եղել է 10-

[1] Սակայն վերջին տարիներին խնդիրներ առաջացան նրանց համար, ովքեր սուրիական անձնագրեր ունէին: Վերջիններս ստիպուած եղան հայաստանեան անձնագրեր վերցնել, որպէսզի հնարաւոր լինի իրենց կեցութիւնը երկարաձգել այս երկրում, որովհետեւ վերջին շրջանում սուրիական անձնագրերը սկսել էին դժուարութեամբ ընդունուել մանաւանդ աշխատանքը փոխելու պարագայում: Պէտք է նշել, որ այստեղ ամէն մարդ ազատ է դաւանելու իր կրօնը սահմանուած շրջագծի մէջ: Այսինքն, տանը թէ եկեղեցում կարելի է ազատ հետեւել քրիստոնէական ծէսերին եւ աւանդոյթներին: Իշխանութիւնները չեն թոյլատրում ոչ-իսլամական որեւէ կրօնի դէմ հրապարակային թշնամական արարք:

13,000, սակայն զգալիօրէն նուազել է 1990-92ին Իրաքի՝ Քուէյթ ներխուժման եւ դրան յաջորդած Ծոցի պատերազմի հետեւանքով, երբ ծանր իրավիճակում յայտնուած քուէյթահայութեան որոշ մասը հիմնականում հեռացել է Սուրիա, ԱՄՆ, Քանատա եւ միայն մի փոքր մաս է վերադարձել:

Քուէյթում ՀՀից ժամանած հայաստանցիների ժամանելու ժամկէտերի վերաբերեալ յստակ տեղեկութիւններ չկան: Նրանց գործունէութեան հիմնական ուղղութիւնները սպասարկման ոլորտն ու գրասենեակային աշխատանքներն են (վարչարարներ): Կան նաեւ բժշկութեան եւ օդանաւորդութեան բնագաւառներում աշխատողներ: ՀՀից ժամանած հայերի ներկայութիւնը հիմնականում կրում է ժամանակաւոր բնոյթ (աշխատանքային գաղթ):

Ընդհանուր առմամբ հայօճախը բաւական լաւ յարաբերութիւններ ունի երկրի պետական պատկան մարմինների հետ:

Ինչպէս նշեցինք, քուէյթահայերը հիմնականում առեւտրականներ են, արհեստաւորներ, բժիշկներ, ուսուցիչներ, դրամատնային ծառայողներ, ոսկերիչներ, ադամանդաշարներ, սպասարկման ոլորտների աշխատողներ եւն.:

Քուէյթի հայօճախը գրեթէ ամբողջութեամբ հայախօս է, խառնամուսնութիւնները սակաւ են եւ ձուլման վտանգ գրեթէ գոյութիւն չունի: Միջին Արեւելքի այլ հայօճախների օրինակով՝ պետութիւնը քուէյթահայութեանը ճանաչում է որպէս առանձին կրօնական հայօճախ, այսինքն եկեղեցին ճանաչում է որպէս հայօճախի ներկայացուցիչ եւ պատասխանատու:

Քուէյթում, բացի քուէյթցիներից, բոլորը՝ այդ թւում նաեւ հայերը, Քուէյթի քաղաքացիութիւն չունեն, հետեւաբար քաղաքական որեւէ պաշտօն չեն կարող զբաղեցնել: Բոլոր օտարերկրացիները ունեն միայն աշխատելու եւ բնակուելու իրաւունք:

Քուէյթում հայաստանցիների ստոյգ թուաքանակ յայտնի չէ: Քուէյթեան կողմը տուեալներ է տրամադրել ՀՀ քաղաքացու անձնագրով Քուէյթում գտնուած/գտնուող աւելի քան 1000 անձանց մասին[2]: Պէտք է հաշուի առնել, որ այս թիւը ներառում է նաեւ այլ երկրներից, մասնաւորապէս Սուրիայի քաղաքացի մեր հայրենակիցներին, որոնք յետագայում ձեռք են բերել ՀՀ քաղաքացիութիւն:

Իսկ թէ ինչպիսին է հայաստանցիների բնութագիրը, նշենք, որ Քուէյթի դէպքում աւելի ճիշտ կը լինի ասել հայկական բնութագիր, քան՝ հայաստանցիների, քանի որ, ըստ էութեան, այդ նկարագիրը ձեւաւորուել է տեղի հայօճախի շնորհիւ: Քուէյթում եւ Ծոցի միւս երկրներում Ի. դարի կէսերից ձեւաւորուած հայօճախներն, ի տարբերութիւն արաբական այլ երկրների՝ Սուրիայի, Լիբանանի, Իրաքի հայօճախների, կազմաւորուել են ոչ թէ Արեւմտեան Հայաստանից գաղթած հայերից, այլ՝ Սփիւռքի վերոյիշեալ

[2] Քուէյթում ՀՀ դեսպանութեան տուեալներով (2020):

երկրներից տեղափոխուած հայերից: Ժամանակի ընթացքում, աշխատանք գտնելու նպատակով, նրանց մի մասը հաստատուել է Քուէյթ, իսկ միւս մասն էլ տեղափոխուել է 2011ին Սուրիայում սանձազերծուած պատերազմից եւ տարածաշրջանում ստեղծուած լարուածութիւնից յետոյ:

Քուէյթում յայտնի են տեղացիների հետ հայերի խառնամուսնութիւնների, նաեւ քաղաքացիութիւն ստանալու, միքանի դէպքեր, թէեւ դա եզակի բնոյթ է կրում: Ոչ-տեղացիների հետ ամուսնութեան պարգայում քաղաքացիութիւն ձեռք բերելու յայտնի դէպք է Քուէյթի քաղաքացի բժիշկ Սիլվա Փորթոյեանը, ով իր ամուսնու (ազգութեամբ պաղեստինցի) հետ միասին քաղաքացիութիւն է ստացել մատուցած բացառիկ ծառայութիւնների համար, ինչպէս նաեւ եգիպտահայ այրի մի կին, ում ամուսինը նոյնպէս ունեցել է քաղաքացիութիւն՝ երկրին մատուցած ծառայութիւնների շնորհիւ:

Չենք կարող չանդրադառնալ Հելէն Ազարեանին, ով եղել է առաջին հայաստանցիներից մէկը, որ մուտք է գործել Քուէյթ 1992ին: Վերջինս հիմնադրել է Հելիոս բժշկական կենտրոնը, որը գործում է ինչպէս ՀՀում, այնպէս էլ Քուէյթում:

Քուէյթի հայօճախը բաւական լաւ յարաբերութիւններ ունի երկրի իշխանութիւնների հետ: Այս յարաբերութիւնները յատկապէս սերտացան 2005 Դեկտեմբերին մեծի տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի Քուէյթ այցելութիւնից յետոյ: Հայօճախ եւ պետութիւն յարաբերութիւնները պաշտօնական են եւ հիմնուած փոխադարձ յարգանքի եւ գործակցութեան վրայ:

Ինչ վերաբերում է քուէյթեան հասարակութեան ներսում շփումներին, ապա տեղական իրավիճակից ելնելով՝ բաւական բարդ է քուէյթեան հասարակութեան հետ ծրագրուած բնոյթի շփումներ վարելը: Ծոցի տարածաշրջանը համեմատաբար դեռ նոր է իր դռները բացել աշխարհի համար, ինչը յոյս է ներշնչում, որ ապագայում նման հնարաւորութիւններ եւս կը ստեղծուեն:

Քուէյթի հայօճախը 100 տոկոսով հայախօս է եւ կարելի է յուսալ, որ անմիջականօրէն ազգապահպանման մասնաւոր սպառնալիքներ չկան հայօճախի համար: Քուէյթում ինքնութեան պահպանման հարցում զգալի դեր ունեն եկեղեցին, հայօճախի ներսում գործող միութիւններն ու յատկապէս ազգային վարժարանը, որը նոր սերունդների դաստիարակութիւնն իրականացնում է ծրագրուած կերպով եւ բարձր պատասխանատուութեամբ:

Ինչ վերաբերում է հայօճախի ներսում շատ աւելի վաղ Մերձաւոր Արեւելքի երկրներից հաստատուած հայերի եւ վերջին տարիներին, յատկապէս, ՀՀից հաստատուածների տարբերութիւններին, ապա պէտք է նշենք, որ Միջին Արեւելքից եկող հայերի համար շատ բնական երեւոյթ է եկեղեցու շուրջ համախմբուելն ու համայնքային կեանքով ապրելը, քանի որ,

բոլոր առումներով, սփիւռքահայ իրականութեան մէջ եկեղեցին կենտրոնական դեր ունի հայ հաւաքականութեան մէջ:

Վերջին տարիներին արագօրէն աւելացաւ **Քաթարում** հայերի թիւը:

Վերջին 20 տարիների ընթացքում Քաթարի տնտեսական արագ զարգացման եւ շինարարական հսկայական ծրագրերի իրականացման արդիւնքում արագ թափով աւելանում է նաեւ այնտեղ ապրող հայերի թուաքանակը: Քաթարն ունի բնական գազի մեծ պաշարներ եւ դասւում է աշխարհում բնական գազ վաճառող գլխաւոր երկրների շարքին: Դեռեւս 20 տարի առաջ երկրում կրօնական եւ քաղաքական մթնոլորտը բաւական պահպանողական էր:

Հայաստանցիները հիմնականում սկսել են Քաթարում հաստատուել 2000ականների սկզբից: Այսօր Քաթարում աշխատում են ՀՀից բժիշկներ, օդաչուներ, երկրաչափներ, տնտեսագէտներ, հիւրանոցային եւ ճաշարանային գործի մասնագէտներ եւն.:

Ի տարբերութիւն աւանդական Սփիւռքի գաղթօճախների, Քաթարում չկայ հայկական եկեղեցի, կրթական կառոյցներից միայն կիրակնօրեայ դպրոցն է, վերջին շրջանում դասերն իրականացւում են առցանց:

Ներկայում մօտ վեցհարիւր հայ է ապրում Քաթարում, որոնցից միքանի տասնեակն են հայաստանցիներ:

Հաշուի առնելով օտարազգիներին քաղաքացիութիւն շնորհելու օրէնսդրական բացակայութիւնը[3՝] հայերը, ինչպէս եւ մնացած օտարահպատակները, չեն կարող զբաղեցնել քաղաքական պաշտօններ, ձեռք բերել անշարժ գոյք, հիմնել առեւտրային ընկերութիւններ: Առեւտրային կամ այլ տնտեսական գործունէութիւն են իրականացնում միայն տեղացի աւագ բաժնետիրոջ մասնակցութեամբ (ըստ գործող օրէնսդրութեան, առեւտրային կազմակերպութեան +51% բաժնեմասը պէտք է պատկանի քաթարցու):

2004ին Քաթարում առաջին անգամ ձեւաւորուել է ազգային վարչութիւն, որն էլ աշխատանքներ է տարել նորակազմ հայօճախի ազգային կեանքի կազմակերպման, համախմբման, հայկական ինքնութեան եւ հայոց լեզուի պահպանման ուղղութեանբ: Գործում է Մեսրոպեան միօրեայ վարժարանը (հիմնադրուել է 2004ին), որը տեղակայուած է լիբանանեան դպրոցում: Դասաւանդւում է հայոց լեզու, պատմութիւն եւ կրօն:

Առաջին հայաստանցիներից Քաթարում յայտնի Գոհար Թութունճեանն է, ով ամուսնու, լիբանահայ Վահէ Թութունճեանի հետ Տոհա է տեղափոխուել դեռեւս եօթանասունականներին: Հենց Գոհար Թութունճ-

[3] Քաղաքացիութիւնը տրւում է միայն քաթարցու հետ ամուսնացած կանանց (եւ ոչ հակառակը): Քաթարի հայերի շրջանում նման դէպքեր յայտնի չեն (թէեւ կան սակաւաթիւ այլ խառնամուսնութիւններ):

եանն է եղել առաջին հայաստանցին, ով դեռեւս 1976ին մուտք է գործել Քաթար որպէս ճարտարապետ՝ աշխատանքային վիզայով[4]: Յաջորդը աշխատանքային վիզայով այնտեղ գտնուող մարզիկներն էին, որոնց թւում էր նաեւ Եւրոպայի անուանի հեռացատկորդ, Եւրոպայի բազմակի ախոյեան Ռոբերտ Էմմիեանը: Նշենք նաեւ բժիշկ-նեարդաբան Գայիանէ Մելիքեանին, ով աշխատում է Համադի Բժշկական ընկերութիւնում որպէս աւագ բժիշկ[5]:

2002ին, նախագահ Ռոբերտ Քոչարեանի՝ Քաթար այցով, ինչպէս նաեւ միջպետական համաձայնագրով պայմանաւորուած մեկնարկեց հայ բժիշկների վերապատրաստման գործընթացը: 18 բժիշկ 3 ամսով մեկնեցին Քաթար, 7-8 հոգին մնացին, ներկայումս այնտեղ 4ն են: Փաստօրէն, բժիշկների խումբը Քաթարի կառավարութեան կողմից վիզաներով հրաւիրուել էր ժամանակաւոր: Նրանցից միքանիսը ետ հրաւիրուեցին աշխատանքի՝ կառավարական հիւանդանոցում՝ նորացուած պայմանագրերի հիման վրայ աշխատելու համար, այն բանից յետոյ, երբ նրանք համապատասխան որակաւորում անցան:

Քաթարի հայութիւնը շատ կարեւոր դեր է ունեցել երկրի կառուցման եւ ձեւաւորման մէջ, այս առումով հարկ է նշել լիբանահայ Վարդուհուն, առաջին բուժքոյրը Ռումելայում (1971): Պէտք է յիշել նաեւ Պետրոսին, ով եղել է այն առաջին հայերից մէկը, ով 1970ականներից եկել է Քաթար, եղել է առաջին լուսանկարիչը, նկարել, նկարահանել է նաֆթի յայտնաբերումը: Պետրոսը ուղղաթիռով նկարել է ամերիկացիների՝ Քաթարում նաֆթը յայտնաբերելու գործընթացը, որով եւ նա յայտնի է դարձել եւ բացել իր *սթիւտիօն*, «Qatar Studio», առաջին լուսանկարչական խանութը, որը մինչեւ հիմա գործում է:

---

[4] Գոհար եւ Վահէ Թութունճեանները 1980ին Տոհա քաղաքում միասին հիմնեցին «ՎիՋիՍի Արպլան» (VGC-Arplan) ճարտարապետական ընկերութիւնը, որի համասեփականատէրերն են մինչ օրս: Պահպանելով տեղի ճարտարապետական սովորոյթները՝ ընկերութիւնը տարիների ընթացքում յաջողութեամբ ձեւաւորել է նախագծերի հզօր աւանդ՝ ներառելով առեւտրային նախագծեր այնպիսի հաստատութիւնների համար, ինչպիսիք են՝ «Qatar Petroleum» եւ «Jeep Chrysler» ընկերութիւնները, ինչպէս նաեւ մասնաւոր պալատներ, վիլլաներ եւ բարձրայարկ շէնքեր մի շարք բարձրաստիճան անձանց համար: Տարիներ շարունակ ապրելով եւ աշխատելով ՀՀ սահմաններից դուրս՝ մշտապէս հետաքրքրուած են եղել հայրենիքի հետ գործակցութեան հնարաւորութեամբ եւ փորձեր են կատարել այն իրականութիւն դարձնել, ինչը հնարաւոր եղաւ իրենց հիմնած «ՎիՋիՍի Արպլան» ճարտարապետական ընկերութեան միջոցով:

[5] Նա աւագ խորհրդատու է այնտեղ, հանդիսանում է Ամերիկեան Կորնէլ բժշկական համալսարանի դոցենտ, դասաւանդում է, 2010ից բնակւում եւ աշխատում է Քաթարում:

Նաեւ հարկ է նշել Հալաջեանների ընտանիքին, որը նէոնային լոյսերի գործարան ունէր (նրանց մասին այժմ յստակ տեղեկատուութիւն առկայ չէ), Դանիէլին, ով ջրանցումներ է կառուցել, էմիրի ընտանիքի տանը յարակից բնակուել է, իրենց ընտանիքի ընկերն է եղել երկար տարիներ, ցանկացել են իրեն պատուաւոր քաղաքացիութիւն շնորհել, բայց հրաժարուել է, որովհետեւ պէտք է կրօնափոխ լինէր:

Խառնամուսնութեան դէպք չի նշւում Քաթարում[6]:

Նշենք, որ Քաթարում սպորտը շատ մեծ դեր ունի, հայ մարզիկները աւելի շատ են այնտեղ, օրինակ թենիսի, թեթեւ վազքի, մարմնամարզութեան, յունահռոմէական ըմբշամարտի մարզիչներ կային, սակայն, ժամանակի ընթացքում, շատերը գնացին[7]:

Վերջերս, Քաթարի կառավարութիւնը ազատեց մուտքի վիզայի անհրաժեշտութիւնից (3 ամիս + 3 ամիս երկարաձգման հնարաւորութեամբ), հետեւաբար, հայ գործարարները հիանալի հնարաւորութիւն ունեն Քաթարի հետ կարելի ձեռնարկութիւններ ստեղծել:

Իդէպ, Քաթարը միայն ու միայն աշխատանքի երկիր է: Ոչ մի քաղաքական գործունէութիւն չի խրախուսւում կամ թոյլատրւում օտարահպատակների համար, բացառութեամբ ազգային օրերի կամ համապատասխան դեսպանատների գործունէութեան շրջանակներում կազմակերպուած այլ մշակութային միջոցառումների:

Քաթարում անշարժ գոյք հնարաւոր է ձեռք բերել. 99 տարով պայմանագիր է կնքւում, յետոյ հնարաւոր է այն թողնել ժառանգներին/երեխաներին, կարելի է վարձով տալ: Նախկինում նման պայմաններ չկային: Պետութիւնը Քաթարի քաղաքացիների համար ապահովում է բժշկական օգնութիւն. նրանք կարող են բուժում ստանալ աշխարհի բոլոր երկրներում, երբ անհրաժեշտ է, ինչպէս նաեւ անվճար կրթութիւն ստանալ աշխարհի որեւէ համալսարանում:

Հայաստանցիների ներկայիս թուաքանակը 50ից աւելի է, որոնց մէջ կան ճարտարապետեր, երկրաչափներ, բժիշկներ, մարզիկներ, ուսուցիչներ, սննդի արդիւնաբերութեան աշխատողներ (հսկիչներ եւ խոհարարներ), բժիշկներ, օդաչուներ, երկրաչափներ, հիւրընկալութեան եւ վաճառքի ոլորտի մասնագէտներ, տնային տնտեսուհիներ: Առհասարակ ներկայացնելով հայաստանցիների բնութագիրը պէտք է նշել, որ նրանք արհեստավարժ մասնագէտներ են, աշխատասէր, ընտանիքին նուիրուած եւ

[6] Եթէ օտար, ոչ-իսլամ կանայք ամուսնանում են քաթարցու հետ, քաղաքացութիւն ձեռք չեն բերում, այլ կեցութեան կարգավիճակ ստանում. իրենք չեն դառնում քաթարցի, այլ իրենց երեխաներն են դառնում, իսկ իրենք օգտւում են բոլոր տեսակի առաւելութիւններից (բժշկական եւն.), որպէս քաթարցու կին:

[7] Օրինակ՝ մարմնամարզիկ Էդուարդ Գէորգեանը վերադարձաւ ՀՀ, ՀՀ թենիսիստներից երկուսն էլ թողեցին Քաթարը, մէկը վերադարձաւ ՀՀ, միւսը գնաց այլ երկիր:

հայրենասէրներ, ովքեր աջակցում են իրենց ընտանիքներին ՀՀում՝ յոյս ունենալով վերադառնալ եւ ներդրում ունենալ:

Քաթարի հայօճախը որպէս արհեստավարժ հայօճախ, պատրաստակամ է ձեռք բերել միջազգային փորձ, որով յետագայում հեշտութեամբ կարող է կիսուել հայրենիք վերադառնալուն պէս:

Պահրէյնում հայերը երբեք էլ մեծ թիւ չեն կազմել, եւ ապագայում եւս նրանց թիւը աւելանալու հակում չունի: Շատերն այստեղ հաստատւում են ժամանակաւորապէս՝ յետագայում այլ երկրներ տեղափոխուելու նպատակով: Միայն միքանի ընտանիք երկարաժամկէտ ապրում է Պահրէյնում, որտեղ, հայութեան փոքրաթիւ լինելու պատճառով, ազգային կառոյցներ դեռեւս չկան:

Պահրէյնում ապրող հայերի թուաքանակի մասին չկան ստոյգ տուեալներ, սակայն, կարծում ենք, որ հայերի թիւը հազիւ 100 է: Հայերի մեծ մասը ժամանակաւոր բնակիչներ են, ունեն ապրելու եւ աշխատելու իրաւունք: Հայերի մեծ մասը զբաղուած է առեւտրով, կան հաշուապահներ, ուսուցիչներ, ոսկերիչներ, դրամատնային գործի մասնագէտներ, արհեստաւորներ եւն.:

Պահրէյնում հայկական եկեղեցի չկայ, իսկ այցելող հոգեւոր հովիւները պատարագները մատուցում են քրիստոնէական եկեղեցիներից որեւէ մէկում:

Պահրէյնում գրեթէ չկան հայաստանցիներ:

Պահրէյնին սահմանակից է **Սէուտական Արաբիայի Ալխոպար** նաֆթարդիւնաբերական շրջանը, ուր գործի բերումով վաղուց ապրում են որոշակի թուով հայեր՝ մօտ 70 մարդ, որոնք Շաբաթ եւ Կիրակի օրերը շատ դէպքերում անցկացնում են Պահրէյնում, որտեղ կեանքն աւելի ազատ է:

2008 Մարտի 28ին տէր Կորիւն արքեպիսկոպոս Պապեանը հովուական այցելութիւն կատարեց Պահրէյն, որին ներկայ գտնուեցին նաեւ Ալխոպարում ապրող հայերը: Պահրէյնում է բնակւում Ատրինէ Խաչատուրեանը, ով շուրջ 30 տարի հաստատուել է այնտեղ եւ բաւական լաւ կապեր ունի թագաւորական ընտանիքի հետ:

Րիատում հաշւում է շուրջ 100 մարդ, առկայ են լուրջ բիզնէսներ, հայկական ճաշարանները գտնւում են լաւագոյն տասնեակում, օրինակ՝ «Լաւաշ», «Մայրիկ», «Շերեփ» եւն. գործում են Րիատում: Սաուտեան Արաբիայում ապրում են Սուրիայից տեղափոխուած շատ հայ արհեստաւորներ, մարմնամարզիկներ:

Զգալի թուով հայութիւն է ապրում եւ աշխատում **Ճետտայում**, որը Սէուտական Արաբիայի երկրորդ մեծ քաղաքն է մայրաքաղաք Րիատից յետոյ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով վերոնշեալը, ընդգծենք, որ Ծոցի արաբական երկրների հայօճախները հայախօս են, պահպանում են ազգային, կրօնական ծէսերն ու աւանդոյթները: Սակայն, եթէ Քուէյթի պարագայում նոր սերունդն հայեցի դաստիարակութիւն է հիմնականում ստանում ազգային ամէնօրեայ վարժարանի միջոցով, ապա ԱՄԷում եւ Քաթարում ամէնօրեայ դպրոցի բացակայութեան հետեւանքով հայերէնը նահանջ է ապրում:

Հայապահպանութեանն ուղղուած միւս մարտահրաւէրը խառնամուսնութիւններն են, ինչպէս նաեւ համաշխարհայնացումը: Խօսքն, իհարկէ ձուլման վտանգի մասին չէ, քանի որ այդ երկրներում հայերը չեն կարող ստանալ քաղաքացիութիւն, բացի այդ՝ ապրում են համայնքային ինքնամփոփ կեանքով, որի շնորհիւ պահպանում են իրենց ազգային դիմագիծը: Վերջին տարիներին նկատւում է երիտասարդների պակաս ներգրաւուածութիւն հայօճախի կեանքում:

Ինչ վերաբերում է ՀՀից այստեղ հաստատուած հայերին, ապա վերջիններս հայօճախի կեանքին առնչւում են միայն եկեղեցի այցելելով կամ մշ-կութային տարբեր միջոցառումներին մասնակցելով:

Այս տարածաշրջանում ապրելով երկար տարիներ եւ ձեռք բերելով տեղաբնիկների լիարժէք վստահութիւնը՝ հայերի որոշ մասը կարողացել է ստեղծել ազդեցիկ կապեր իշխող վերնախաւի եւ նրանց ընտանիքների անդամների հետ:

Մերձաւոր Արեւելքում յատկապէս վերջին տարիների ընթացքում աւելի ու աւելի խորացող ճգնաժամը անընդհատ ընդլայնում է իր աշխարհագրութիւնը եւ ակնյայտ է, որ նման պայմաններում ինչպէս տարածաշրջանի ամբողջ քրիստոնեայ բնակչութեան, այնպէս էլ Միջին Արեւելքի հայերի առջեւ ծառացած են խնդիրներ, որոնք կապուած են համաշխարհայնացման, ինքնութեան (հայապահպանութեան), արտագաղթի, տարածաշրջանում առկայ ռազմաքաղաքական եւ ընկերային հիմնահարցերի հետ: Ու թէեւ հայերի հանդէպ արաբական աշխարհում աւանդաբար ձեւաւորուել է դրական վերաբերմունք, հայերը փոքրամասնութիւն են կազմում այդ երկրներում ապրող դաւանական, կրօնական եւ էթնիկ այլ փոքրամասնութիւնների լայն բազմազանութեան մէջ: Այդ պատճառով իսլամական միջավայրում հայերն աւելի համախմբուած են ապրել՝ շարունակելով պահպանել ազգային եւ կրօնական աւանդոյթները:

Ինչ վերաբերում է ԱՄԷի հայօճախին, ապա այն Սփիւռքի երիտասարդ հայօճախներից մէկն է, որ թէեւ գտնւում է կայացման փուլում, սակայն տիրապետում է ազգային կազմակերպման աւանդական գործիքակազմերի, ունի զգալի նիւթական եւ մարդկային ներուժ:

Չնայած հայերից շատերը համարում են, որ ժամանակաւոր են բնակւում ԱՄԷում, սակայն ձգտում են ստեղծել եւ զարգացնել ազգային մի մթնոլորտ, եկեղեցիներ ու դպրոցներ են կառուցում:

Հայօճախի ներսում մշտապէս նկատւում է ներգաղթ ու արտագաղթ: Աշխատանքի բերումով այստեղ յայտնուած շատ ու շատ ընտանիքներ այս երկրում իրենց բնակութիւնը համարում են ժամանակաւոր եւ լիովին չեն ներգրաււում հայօճախի գործընթացների մէջ:

Ծոցի արաբական երկրներում թէ՛ իշխանութիւնների եւ թէ՛ հասարակութեան վերաբերմունքը հայերի/հայաստանցիների նկատմամբ յարգալից եւ քաղաքավարի է: Հայերը յայտնի են իրենց պարկեշտութեամբ ու աշխատասիրութեամբ, նրանք վստահութիւն են վայելում, հաւատարիմ են այդ երկրներին ու նրանց կառավարութիւններին:

Հաշուի առնելով այն, որ որեւէ այլ ազգութեան ներկայացուցչի, տեղացի արաբներից բացի, Քուէյթի եւ ԱՄԷի օրէնքները քաղաքացիութեան հնարաւորութիւն չեն ընձեռում, հայերը նոյնպէս դիտարկւում են որպէս այլ երկրների քաղաքացիներ, որոնք ունեն միայն ժամանակաւոր կեցութեան, ինչպէս նաեւ աշխատելու իրաւունք: Այստեղ բոլոր ազգերն ու ազգութիւնները գտնւում են հաւասար պայմաններում: Միեւնոյն ժամանակ տեղի կառավարութիւնները հայերին ճանաչում են որպէս առանձին համայնք եւ թոյլատրում ազգային գործունէութիւն ծաւալել: Հետեւաբար տեղի հայօճախների եւ կառավարութիւնների յարաբերութիւնները թէեւ սահմանափակ են, սակայն համագործակցային:

ARMENIANS OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE GULF ARAB COUNTRIES: ECONOMIC MIGRANTS AND INTEGRATION IN THE LOCAL ARMENIAN COMMUNITY

(Summary)

Eliz Gevorgyan
elizgevorgyan@gmail.com

The paper analyses the process of the development of a diaspora of Armenian citizens of the Republic of Armenia in the Gulf Arab states, after the independence of Armenia.

In the Gulf Arab states there are some 5000 expats who come from the Republic of Armenia (RA) alongside more than some 5000 other Diaspora Armenians living in that region.

Unlike these other Diaspora Armenians, those who come from the Republic of Armenia are mostly the result of interstate agreements signed between the RA and Gulf Arab states.


The paper describes the presence of the RA citizens in the Gulf Arab states job market, the niches they fill in the market, the challenges of their integration with the locals as well as with the other Diaspora Armenian communities in these states, and their relations with the Armenian embassies established in the region.

Հայե՞ր եւ Հայերէ՞ն՝ ԺԴ. Դարու Եմէնի Մէջ. Վեզլեցուեան Րասուլիտ Բառարանը

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

ՄՈՒՏՔ

1206ին, Ճենկիզ խանի հիմնադրած մոնկոլական կայսրութիւնը, իր 23 միլիոն քլմ. քառ. տարածութեամբ, կը նկատուի համաշխարհային պատմութեան ամէնալայնատարած միակտուր կայսրութիւնը: Մոնկոլիոյ՝ կեդրոնական Ասիոյ, տափաստաններէն սկիզբ առած այս կայսրութիւնը Արեւելքի մէջ տարածուեցաւ մինչեւ Խաղաղական ովկիանոս, իսկ Արեւմուտքի մէջ՝ մինչեւ Փոքր Ասիոյ կեդրոնական մասերը, Սեւ ծով ու Դանուբ: Կայսրութենէն դուրս մնացին Արաբական թերակղզին եւ արեւելեան Միջերկրականի տարածքները: Կայսրութիւնը գոյատեւեց մինչեւ 1386:



Մոնկոլական կայսրութիւնը

Կայսրութեան հարաւ արեւմտեան ծայրամասին սահմանակից եղաւ Եմէնի մէջ ծաղկած Րասուլիտ թագաւորութիւնը, ուր պատրաստուած վեցլեզ-

ուեան՝ արաբերէն-պարսկերէն-թրքերէն-մոնկոլերէն-յունարէն եւ հայերէն բառարանին մասին է այս յօդուածը[1]:

Լուսարձակի տակ առնելով այս բառարանը, յօդուածին նպատակն է իմիջիայլոց հաւաստել թէ հայեր եւ հայութիւն քաղաքատնտեսական ներկայութիւն էին Միջին Արեւելքի հարաւային կողմերուն մէջ, ԺԳ.-ԺԴ. դարերուն[2]:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿԱՅԻՆ ԵՆԹԱԽՈՐՔ

Մանազկերտի 1071ի ճակատամարտին, Բիւզանդական կայսրութեան դէմ սելճուք սուլթան Ալփասլանի յաղթանակը, Միջին Արեւելքի սահմանները բացաւ կեդրոնական Ասիայէն արշաւող վաչկատուն այլեւայլ մեծաթիւ ցեղերու առջեւ: Այս ցեղախումբերը թափանցեցին հիւսիսային Միջին Արեւելք ու Փոքր Ասիա: Հուսկ՝ իրենց քաղաքական իշխանութիւնը հաստատեցին Միջին Արեւելքի, Փոքր Ասիոյ հետեւաբար եւ Հայաստանի վրայ, անարգել արմատաւորուեցան այդ տարածքներուն, մանաւանդ Անատոլուի մէջ: Այս արմատաւորումով ծայր առաւ տեղաբնիկ բնակչութեան թուային նահանջը՝ ջարդերու, կրօնափոխութեան, հալածանքներու եւ կեանքի անապահովութեան հետեւանքով: Այս խժդժութիւնները պատճառ եղան նաեւ որ տեղաբնիկ բնակչութիւնը դիմէ արտագաղթի, որուն հետեւանքով ալ սկսաւ շրջանին թրքացման գործընթացը: Յաջորդող դարերուն Բիւզանդական կայսրութիւնը տակաւ կծկուեցաւ ու վերածուեցաւ քաղաք-կայսրութեան, կորսնցնելով ամէն ազդեցութիւն՝ ոչ միայն Միջին Արեւելքի, այլեւ Փոքր Ասիոյ ընկերատնտեսական եւ ռազմաքաղաքական գործընթացներուն վրայ:

Մոնկոլ Հուլաղու խանը ամբողջացուց իր նախորդներուն տիրապետումը Միջին Արեւելքին եւ 1265ին, շրջանը անցաւ մոնկոլական մականին

---

[1] Խնդրոյ առարկայ բառարանը կը գտնուի Եմէնի մէջ ու մաս կը կազմէ անձնական հաւաքածոյի մը: Անոր ուսումնասիրման նախաձեռնութիւնը կը պատկանի փրոֆեսոր Հալասի Քունի, որ 1974ին կը համախմբէ մասնագէտներու միջազգային խմբակ մը, որուն անդամներէն իւրաքանչիւրը պիտի ուսումնասիրէր բառարանին ընդգրկած վեց լեզուներէն մէկուն բառապաշարը: Փրոֆեսոր Էտմունտ Շիւցին յանձնուած էր բառարանին հայերէն բառամթերքին ուսումնասիրութիւնը: Սկզբնական աշխուժ քայլերէ ետք, ծրագիրը կը դանդաղի, ապա եւ կը ձգձգուի, հուսկ կը խոչընդոտուի՝ մասնակիցներէն երեքին մահով (փրոֆեսոր Լիկեթի կը մահանայ 1987ին, Քուն՝ 1991ին եւ Շիւց՝ 1999ին): Այդուհանդերձ բառարանը կը հանրայնացուի, երբ փրոֆեսոր Ճ. Րեքս Սմիթ կը հրատարակէ անոր լուսապատճէնը, 1998ին:

[2] Յօդուածին դիտարկումներուն իբրեւ աղբիւր օգտագործած ենք *The King's Dictionary (The Rasulid Hexaglot: Fourteenth Century Vocabularies in Arabic, Persian, Turkic, Greek, Armenian and Mongol*, edited with notes and commentary by Peter B. Golden, Brill, Leiden-Boston-Koln, 2000) հատորը:

տակ, որով առաւել տարածուեցաւ եւրասիական այս հսկայ կայսրութիւնը: Կայսրութեան արեւելեան Միջերկրականի ծայրամասին սահմանակից մնացին կիսանկախ Կիլիկիոյ հայոց թագաւորութիւնը[3], Մեմլուքեան պետութիւնը[4]:

Նման միակտուր կայսրութիւն մը, մեծ եւ բնական առիթներ պիտի յառաջացնէր կայսրութեան մէջ ապրող տարբեր ազգերու եւ ժողովուրդներու այլատեսակ՝ մշակութային-տնտեսական-լեզուական-իմացաբանական-կրօնական գիտելիքի ու ձեռային վարպետութեանց եւն. շփման, փոխյարաբերութեան եւ փոխազդեցութեան:

Մոնկոլական այս հսկայ կայսրութեան բազմաթիւ մարտահրաւէրներուն մէկ երեսակը վարչակառավարման անհրաժեշտ հաղորդակցամիջոցի խնդիրն էր: Ի՞նչպէս վարչակառավարել Քորէայէն Վիեթնամ ու մինչեւ Միջագետք եւ Փոքր Ասիա տարածուող բազմալեզու եւ բազմամշակոյթ ազգերուն դիւանակալութիւնը, պետական թղթաբանութիւնները, հարկահաւաքութիւնը եւն.: Յիրաւի, լեզուն՝ հաղորդակցամիջոցը, կարեւորագոյն խոչընդոտ էր եւ լուծում կը պահանջէր, եթէ կայսրութեան ներքին վարչակառավարումը սահուն կամ նուազ արգելքներու պիտի հանդիպէր:

Մեմլուքներուն նախորդ սելճուքները օգտագործեցին արաբերէնն ու պարսկերէնը իբրեւ իրենց իշխանութեան լեզուն: Իսկ մոնկոլները գրաւոր լեզու չունէին մինչեւ Ճենկիզ խան: Ահա թէ ինչու մոնկոլ իշխանաւորները մեծ կարեւորութիւն ընծայեցին հաղորդակցական լեզուի յառաջացման: Շուտով պաշտօնակոչուեցան բազմալեզուանի անձեր, որպէսզի վարեն կամ աջակցին կառավարիչներուն պետական-վարչական կառավարման աշխատանքներուն: Նոյնիսկ նշանաւոր Մարքօ Փոլօն[5] պաշտօնակոչուեցաւ մոնկոլական արքունիք[6]: Հուսկ նոր, համատարած լեզուն պաշտօնապէս հռչակուեցաւ 1269ին:

Տեղին է նշել թէ հաղորդակցութեան անհրաժեշտութիւնն ու փափաքը միակողմանի չէր. թէ՛ իշխող մոնկոլ տարրը եւ թէ՛ իշխուող ու ենթակայ ազգերն ու ժողովուրդներ կենսական կը գտնէին այս փոխհաղորդակցութիւնը: Ասոր իբրեւ փաստ կարելի է մատնանշել ԺԴ. դարու վրացական ժամանակագրութիւն մը, ուր ընդգրկուած է մոնկոլերէն եւ թիւրքերէն օրացուցա-

---

[3] 1080ին իբրեւ Ռուբինեան իշխանութիւն հիմնուած այս պետութիւնը, խաչակիրներու աջակցութեամբ պիտի վերափոխուէր Ռուբինեան, ապա՝ Հեթումեան (1226-1341), հուսկ՝ Լուսինեան թագաւորութեան (1340ականներ-1375):

[4] Հիմնուած 1250ին, ան պիտի գոյատեւէր – հիմնականը Եգիպտոսի տարածքին մէջ - մինչեւ 1517ի օսմանեան տիրապետութիւնը:


[5] Վենետիկցի առեւտրական-ճանապարհորդ, ծնած է շուրջ 1254ին եւ մահացած 1324ին: 1271-95՝ կատարած է մետաքսի ճամփով իր ճամփորդութիւնը:

[6] Thomas Allsen, "The Rasûlid Hexaglot in its Eurasian Cultural Context," *The King's Dictionary*, էջ 32-35:

յին եզրերու շարք մը[7]: Իւրայատուկ այլ պարագայ մըն է միջնադարու հայ նշանաւոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին (շուրջ 1200, Գանձակ--1271, Գանձակ), որ 1241ի իր *Պատմութեան* մէջ ընդգրկած է մոնկոլերէն բառախումբ մը, ընդամէնը 57 բառ, որոնք կ'առնչուին ընտանիքի անդամներու, մարմնի մասերու, կենդանիներու, բնութեան եւն.[8]:

ՐԱՍՈՒԼԻՏՆԵՐԸ ԵՒ ՎԵՑԼԵՋՈՒԵԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ

Բառարանը ուսումնասիրած Փիթըր Կոլտըն[9], անոր հեղինակը կը նկատէ Րասուլիտ ԱլՄալիք ԱլԱֆտալ ԱլԱպպաս թագաւորը (1363-1377), որ աւելի հռչակուած էր իբրեւ գիրի ու գիտութեան, քան թէ՝ ռազմի ու պետութեան մարդ: Կոլտըն կը հաւաստէ նաեւ որ բառարանը մշակում- համադրում մըն է զանազան աղբիւրներէ քաղուած բառերու եւ բառարաններու:



Րասուլիտ թագաւորութիւնը 1260ականներուն

Րասուլիտները թիւրք գերդաստան մըն էին, որոնք իշխանութեան հասան սելճուք պետութեան տկարացումով: ԺԲ. դարուն անոնք կը ծառայէին ապպասեան արքունիքին, ապա անցան էյյուպեան իշխանութեան ծառայութեան, իսկ Էյյուպեաններու՝ Եմէնը[10] լքելէն ետք (1220ականներ) հոն հաս-

---

[7] Նոյն, էջ 41:

[8] Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց*, աշխատ.՝ Կ. Մելիք-Օհանջանեան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 274-75:

[9] Peter Golden, "The World of the Rasûlid Hexaglot," *The King's Dictionary*, էջ 13:

[10] Պատմականօրէն Եմէնը նշանաւոր է Արաբական թերակղզիին հարաւակողմի իր աշխարհագրական դերակատարութեամբ. ան եղած է Արեւելեան Հնդկաստան-Ափրիկէ-Միջերկրական-Եւրոպայի միջեւ առեւտրական կարեւոր կամուրջ մը, մի-

տատուեցան 1270ականներուն եւ հետզհետէ դարձան ինքնավար եւ հզօրութեան բարձրակէտին հասան 1295ին: Սիւննի այս պետութեան հիւսիսարեւելքէն սահմանակից էր շիիթ Զայիտի իմամութիւնը: Րասուլիտ պետութիւնը, կ'ընդգրկէր Թիհիման, Կարմիր ծովու ծովեզերեայ հարաւ-արեւելեան տարածքները մինչեւ Սանաա, Թաիզ եւ ժամանակակից Օմանի կարգ մը մասեր: Իրենց տիրապետութեան տակ գտնուող Ատէնը Արեւելքէն Արեւմուտք առեւտուրի գլխաւոր նաւահանգիստն էր, որ կը բացուէր դէպի Հնդկաց ովկիանոց, Միջերկրական եւ հիւսիսային Ափրիկէ: Հողային կորուստներու գնով Րասուլիտ պետութիւնը գոյատեւեց մինչեւ 1454, երբ Թահիր գերդաստանը փոխարինեց Րասուլիտները եւ հասաւ իշխանութեան:

ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՄԹԵՐՔԻՆ ԱՂԲԻՒՐԸ

Վեցլեզուեան բառարանին հիմնական բառամթերքը կը վերաբերի երկինքի եւ երկրի, մարդու մարմնի մասերու, ազգականներու, բնութեան տարերքին, տնային իրերու, ժամանակի, եղանակներու եւ օրերու, կենդանիներու, բոյսերու, գոյներու, թիւերու, թռչնազգիներու, հիւանդութեանց, զէնքի, հագուստի եւ կտորեղէնի, խմիչքի եւն.ի անուանումներու[11]:

Կոլտըն իր յօդուածին մէջ չի որոշակիացներ աղբիւրը բառարանին բառամթերքին: Ինչ կը վերաբերի հայերէնին, ան կ'ենթադրէ որ անոր աղբիւր ծառայած կրնան ըլլալ մեմլուք աղբիւրներ[12]: Պէտք է նկատի առնել որ Կիլիկեան պետութեան հետ պատերազմներու ընթացքին մեմլուքները յաճախակիօրէն գերեվարեցին մեծաթիւ կիլիկիահայեր: Րասուլիտներուն իբրեւ ստրուկ վաճառուած կամ իբրեւ ընձայ ուղարկուած այս հայերը կրնան աղբիւր ծառայած ըլլալ հայերէն բառամթերքին[13]: Միւս կողմէն, համաձայն ենք հեղինակին թէ հայերէն բառամթերքը խօսկացական հայերէն է[14]: Կոլտըն հաւանական կը գտնէ թէ յունարէն ու հայերէն բառամթերքը յառաջացած կրնան ըլլալ կիլիկեան հայերէնէն:

Խնդրոյ առարկայ այս բառարանը իւրայատուկ կը նկատուի ոչ միայն իր լեզուական համադրութեամբ, այլեւ անով որ ան կ'արտացոլէ ատենի շրջանի ժողովրդագրական-տնտեսական պատկերը[15]:

աժամանակ մահմետականութիւնը տարածած է դէպի Արեւելք, մինչեւ Ինտոնեզիա:

[11] Allsen, էջ 49:

[12] Golden, էջ 1:

[13] Կոլտըն կը մատնանշէ թէ նոյնիքն բառարանին յաջորդը Եգիպտոսէն նուէր ստացաւ շուրջ 30 թիւրք-մեմլուքներ, հրեայ բժիշկ մը, եւ խումբ մը հայ ու յոյն գերիներ իբրեւ ստրկուհիներ (էջ 13):

[14] Golden, էջ 13:

[15] Allsen, էջ 25:

Ըստ Էլսընի, բառարանը կը բաղկանայ երկու մասէ: Առաջին մասը (էջ 186-197) կ'ընդգրկէ հինգ լեզուներով՝ արաբերէն[16], պարսկերէն, թիւրքերէն, եւ հայերէն բառարան մը[17]: Իսկ երկրորդ մասը (էջ 197-205) կ'ընդգրկէ արաբերէն-պարսկերէն-թիւրքերէն-մոնկոլերէն բառարան մը, անջատ էջերու վրայ տարածուող[18]:



Բասուլիտ վեցլեզուեան բառարանէն էջ մը

[16] Ուշագրաւ է որ մոնկոլերէն լեզուով արաբատառ հնագոյն գրութիւնները կը համընկնին վեցլեզուեան այս բառարանի շրջանին (Allsen, էջ 51):

[17] Նոյն, էջ 50:

[18] Նոյն, էջ 50:

ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՄԹԵՐՔԸ

Էական է նշել, որ բառարանը արաբատառ է, թիւրքալեզու: Այնտեղ բերուած բոլոր բառերը տրուած են արաբերէն տառերով, բայց թիւրքերէն:

*The King's Dictionary*ին 369-375 էջերուն վրայ, իբրեւ յաւելուած երկսիւնակ տրուած է բառարանին հայերէն բառամթերքը՝ 641 բառ, լատինատառ[19]: Այդ ցանկերէն կը պարզուի որ բառարանը կ'ընդգրկէ հայերէն 77 բառ՝ **A (Ա)** տառով սկսող, 13 բառ՝ **ə** (**Ը** նաեւ **Ե**), 24 բառ՝ **B** (**Պ** նաեւ՝ **Բ**), 16 բառ՝ **C(Ծ** նաեւ **Ձ** ու **Ց**), 16 բառ՝ **Č (Ճ** նաեւ **Չ** ու **Ջ), 14** բառ՝ **D (S), 14** բառ՝ **DZ (Ծ), 35** բառ՝ **E(Ե** նաեւ **Է)**, 1 բառ՝ **F (Ֆ)**, 56 բառ՝ **G** (**Կ**), 48 բառ՝ **H**(**Հ** նաեւ **Յ**), 15 բառ՝ **Ի (Իւ)**, **21** բառ՝ **I (Ի)**, 7 բառ՝ **J** (**Ճ** նաեւ **Ջ**), 41 բառ՝ **K** (**Գ** նաեւ **Ք**), 21 բառ՝ **L**(**Լ**), 41 բառ՝ **M** (**Մ**), 10 բառ՝ **N** (**Ն**), 21 բառ՝ **O** (**O**), 31 բառ՝ **P** (**Բ** նաեւ **Փ**), 2 բառ՝ **Q** (**Կ** նաեւ **Գ**), 1 բառ՝ **R** (**Ռ**), 24 բառ՝ **S**(**Ս**), 13 բառ՝ **Š** (**Շ**), **36** բառ՝ **T** (**Դ** նաեւ **Թ** ու **Ձ**), 11 բառ՝ **Ţ** (**Թ** նաեւ **S**), 12 բառ՝ **U** (**ՈՒ**), 6 բառ՝ **V** (**Վ**), 13 բառ՝ **Ẇ** (**Վ**), 3 բառ՝ **Y** (**Ե**), եւ 5 բառ՝ **Z** (**Զ**): Արագ ակնարկ մը սակայն հայերէն բառամթերքին, կը պարզէ որ այս բաժանումը միանշանակ չէ եւ խաչաձեւումներ ու անցումներ կան կան՝ **Ճ-Ջ**ի, **Բ-Փ**ի, **Ծ-Ց-Ձ**ի եւն. միջեւ ինչ որ արտացոլումը պէտք է նկատել դասական հայերէնի եռաստիճան համակարգի գէթ մասնակի խախտումին եւ անցումին, դէպի երկաստիճան համակարգ:

ԲԱՌԱՐԱՆԻՆ ՄԻՋԻՆՀԱՅԵՐԷՆԵԱՆ ԲԱՌԵՐԸ

Ինչպէս նշեցինք արդէն, բառարանին բոլոր բառերը մատուցուած են արաբատառ թիւրքերէնով, ինչ որ ինքնըստինքեան հնչիւնական եւ հայերէնի ձայնաւորներու համակարգի ճանաչման կրկնակի (թէ՛ լեզուական եւ թէ՛ հնչիւնական) խնդիր կը յառաջացնէ՝ արաբերէն եւ հայերէն այբուբէններու հնչիւնական համակարգերու տարբեր առանձնայատկութիւններուն, նաեւ՝ արաբերէնի եւ թիւրքերէնի հնչիւնական տարբեր համակարգերուն բերմամբ:

*The King's Dictionary*ին 61-328 էջերուն վրայ, վերարտադրած-վերծանած է բառարանին ամբողջ բառամթերքը արաբատառ եւ լատինատառ մատուցմամբ: Այլ խօսքով, հայերէնն ու յունարէնը չեն մատուցուած իրենց հարազատ այբուբէններով: Սակայն, այնտեղ տրուած է իւրաքանչիւր բառի իմաստը: Արդ, մեկնելով բառիմաստի ընծայած դիւրութենէն, լատինատառ հայերէն բառաշարքէն, նաեւ՝ Միջին հայերէնի բառարանէն[20], ստորեւ կը

---

[19] Լատինատառ հայերէն բառաշերտին մուտքագրումը կատարեց հայկազեանցի ուսանող Գրիգոր Անգէշեանը, որուն շնորհակալ ենք:

[20] Բառարանին բառերէն կարեւոր քանակ մը կը պակսի Ռ.Ս.Ղազարեանի եւ Հ.Մ. Աւետիսեանի *Միջին Հայերէնի բառարան*էն (Հայկական մատենաշար Գ. Կիւլպենկեան հիմնարկութեան, ԵՊՀ հրատ., Երեւան 2009): Մանրամասն քննութիւն մը բառերու որոշ յաւելում մը կրնայ բերել այդ բառարանին:

ներկայացնենք Ռասուլիտ վեզլեզուեան բառարանին հայերէն բառամթերքը **հայատառ**:

Ա/A=77

abri=Ապրի, abuzna=Ապուզնա (կապիկ), ačic maz=աչից մազ, ačk=աչք, adeġwor=ատեղւոր (պտղաւոր, յղի), adnik=ատնիք (ատոնք), adz=ած, adzilcni=ածիլցնի (սափրել), aganč=ականջ, agn=ակն, aġ=աղ, aġahin=աղախին, aġbes=աղպէս (աղուէս), aġdodi=աղտոտի, aġeg=աղէկ, ahper=ախբէր, ahpergin=ախբէրկին, ajri=այրի, akraẇ=ագռաւ, akrayk=ակռայք, *alir=ալիր (ալիւր), amen=ամէն, amira=ամիրա, amran deġn=ամռան տեղն, amrok=ամրօք (հրամանով), nra=[ան] նրա, anarki=անարգի, anc=անձ, ancir=անցիր, andam=անդամ, aneġ=անեղ, angəg=անգդ, angoġin=անկողին, anġni=անղնի (աղաւնի), anham=անհամ, ankid=անգիտ (տգէտ), anmoruk=անմօրուք, anor=անոր, anp=ամպ, anurn=անուրն, anuš=անուշ, anut=անութ, andzeġ=կաչաղակ, ap=ափ, ar=առ, arciw=արծիւ, arčew=առջեւ, ardza=արծա(թ), arek=արեգ, areẇ=արեւ, ari=արի, arkaẇtin=արքայութիւն, arni ay yodn=առնի այ (առ) յոտն, aru=առու, aruduc=առւտուց (առաւօտէն), aruydz=առիւծ, *arẇadzar=արուածառ, aryun=արիւն, aseġn=ասեղն, asgacu=(հ)ասկացու, aṣnik=աշնիք (հարսնիք), aspar=ասպար, astġ=աստղ, astġn=աստղն, aswadz=աստուած, ašharks=աշխարհքս, ašun=աշուն, atesik=ադեսիք (հրահան), awelcu=աւելցու, aẇeli=աւելի, aydz=այծ, ayki astġ=այգի աստղ, aykuc=այգուց, ayl=այլ, ayn=այն, ayri=այրի, ays=այս, ayso(r)=այսօր, aysr=այսր.

Ə/Ը=13

əġarki=ըղարկի (ուղարկի), əġeġ=ըղեղ (ուղեղ), əġeġ klḭi=ըղեղ գլխի, əġort=ըղորդ, əḭpayir=եղբայր, əlaw=ելաւ, əmod=ըմոտ (մօտ), əndani=ընտանի, ənġaw=ընկաւ, əver [i-wer]=ըվեր [իվեր], ənel ["to do"]=ընել, ənġer=ընկեր, əskor=ըսկոր (ոսկոր).

B/Պ=24

bab=պապ, *badnjak ?=պատնճակ (գուլպայ), badri=պատռի, baġ=պաղ, bahi=պահի, baḭre=պախրէ, baḭurc=պախուրց, badnik=պատնիք (պատանք), bak=պաք, baran=պարան, baraẇ=պառաւ, barg=պարկ, bargi=պառկի, barnac taġik=պարնաց (բառնած) թաղիք, bašar=պաշար, baza=պազա (բազէ), bduḭ=պտուղ, berneli baran=բռնելի պարան, bġinč=պղինձ, bind=պինդ, bisak=պիսակ, bnag=պնակ, bord=պորտ, budug=պուտուկ (թէ՞ պտուղ).

C/Ծ, Ձ, Ȣ=16

ceco=gեgo (ծեծօ), cerk=ձեռք, ci=ձի, cic=gից, cicern=ծիծեռն, citan=gիթան (ձիթհան), ciyaẇor=ձիաւոր, cki=ձգի, cmerən deġn=ձմեռն տեղն, cmyerin=ձմեռին, coreg=gորեկ, coren=gորեն, cugn=ձուկն, cuk=ձուկ, curt=gուրտ, cuyn=ձիւն.

Č/ȸ, Ջ, Ȣ=16

čagad=ճակատ, čapadz (kat)=չափած կաթ, čapi=չափի, čarodi=չարօտի(ճղոտի, պատռէ), čaẇuš=չաւուշ, čeh=չէ, čiġ=ջիղ, coki=չոգի, čorekšapat=Չորեքշաբաթ, čori=ջորի, čork hruyr=չորք հարիւր, čors=չորս, črdan=ջրթան (ջուրի տոպրակ), črhan=ջրհան, črеš=ջրէշ, čuwan=չուան.

D/S=14

dəniwk/denikk=տընիւք/տենիքք (տանիք), dabuz=տապուզ (մահակ), dag=տակ, dajgənak=տաճկընակ, darco=դարձոյ, dari ("move !")=տարի (շարժէ), dari

(“year”)=տարի, deġ(n)=տեղ(ն), derew̓=տերեւ, desir=տեսիր, drmuġ=տրմուղ (ոչ-ընտանի), dun=տուն, dur=տուր, dur anw̓arc=տուր անվարձ.

DZ/Ʊ=14

dzaẖi=ծախի, dzandr=ծանտր, dzar=ծառ, dzar(a)=ծառայ, dzadzi=ծծի, dzaladz por=ծալած փոր, dzedzi=ծեծի, dzidz=ծիծ, dzidzagi=ծիծակի (ծիծաղի), dzin=ծին, dziran=ծիրան, dzov=ծով, dzung=ծունկ, dzur=ծուռ.

E/Ե, Է=35

edew̓=ետեւ, edzmuk=եծմուք (եղնիկ), egaw̓=եկաւ, eġ= եղ, eġn=եղն, eġunk=եղունգ, [ellal] ei=[ըլլալ], էի, er=էր, epadz mis=եփած միս, erag=երակ, ereg=երէկ, erek=երեք, erekšapat=Երեքշաբաթ, eres=երես, eresun=երեսուն, erewcu=երեւցու, ergayn=երկայն, ergayn kišer=երկայն գիշեր, ergink=երկինք, ergir=երկիր, erguk=երկուք, ergušapat=Երկուշաբաթ, erkat=երկաթ, erkeruyr=երքերոյր (երեքհարիւր), erkhruyr=երկհրոյր (երկհարիւր), ersnak=երսնակ, es=ես, inc=ինձ, isne=իսնէ, esan=եսան (յեսան), eskic=Էսկից, eš=էշ, eś gadak=էշ կատակ; ezir=եզր, ežan=եզան.

F/Ֆ=1

fanak=ֆանակ.

G/Կ=56

gaba=կապա, gaban=կապան, gabadz=կապած, gabuyd=կապոյտ, gadu=կատու, gaguġ=կակուղ, gaġ=կաղ, gaġẖami=կաղխամի (կաղամախի), gaẖi=կախի, *gakaw=կաքաւ, gamran/kamran=կամրան (գօտի), ganač=կանաչ, garas=կարաս, gari=կարի, garbet=կարպետ, garidz=կարիճ, garik=կարիք, garj=կարճ, garmir=կարմիր, garmir ci=կարմիր ձի, gaydzag=կայծակ, gdaw̓=կտաւ, gdri=կտրի, gdrij=կտրիճ, gdrij mart=կտրիճ մարդ, gdzi=կծի, gecir=կեցիր, gendani=կենդանի, ger=կեր, gesor=կէսօր, geš=գէշ, giragi=Կիրակի, glap=կլափ, glir=կլիր, gnig=կնիկ, gobk=կոպք (կոպ), godak=կոտակ, godradz=կոտրած, gošik=կօշիկ, gow̓=կով, goyrik=քոյրիկ, grag=կրակ, gri=կրի, grta=կրթա, grung (“heel”)=կրունկ, grung (“crane”)=կռունկ, gšri=կշռի, gštacadz=կշտացած, gul=կուլ, gumaš=կումաշ, gund=գունդ, gurck=կուրծք, guyr=կոյր, guz=կուզ, gyank=կեանք, gzeni=կզենի (սամոյր).

H/Հ=48

ha=հա, hac=հաց, hal ẇor=հալուոր, ham ari=համ առի, hamar=համար, hangčir=հանգչիր, harpadz=հարբած, hars=հարս, harust=հարուստ, hasir=հասիր, hast=հաստ, haw̓=հաւ, hayir/hayis=հայիր/հայիս, hayli=հայլի, hayr=հայր, həmar=յիմար, hərəkil=հըրըգիլ (արագիլ), həruyr=հըրոյր (հարիւր), həzar=հըզար, həzar həzar=հըզար հըզար, hdzir=հծիր, hedew̓ag=հետեւակ, hedzneli=հեծնելի, heġeġ=հեղեղ, heru (“distant”)=հեռու, heru (“last year”)=հերու, herun=հերուն, hin=հին, hing=հինգ, hing hruyr=հինգ հրոյր, hing šapat=Հինգշաբաթ, hirig mudn=յիրիկմուտն, hiwand=հիւանդ, hoġmn=հողմն, hoki=հոգի, hor=հօր, horkuyr=հօրքոյր, horpayr=հօրբայր, horẇow=հորուով, hoska=հոսկա, hoskic=հոսկից, hotda=հոդտա, hov=հով, hovaz=յովազ, hrami=հրամի, hum mis=հում միս, hun=հուն, husi/hüsi=հուսի/հիւսի,

Ḫ/Խ=21

ḫaġoḫ=խաղող, ḫanut=հանութ, ḫarageġ=խարակեղ (գէր), ḫarbzak/ḫarbzag= խարպզակ (ձմերուկ, սէխ), ḫarngi=խառնկի (խառնէ), ḫayd=խայտ, ḫelok=խելօք,

ḥmi=խմի, ḫncor=խնձոր, ḫnda=խնդա, ḫod=խոտ, ḫoses [ḫosir] =խօսես, խօսիր, ḫoy=խոյ, ḫoz=խոզ, ḫuyl=*խոյլ*.

I/Ի=21

i-kani=ի քանի, i-kene=ի քենէ, i-nma-ne=ի-նմա-նէ, i-nerk=ի-ներք, i-turk=ի-թուրք, iẇayr/əẇayr=իվայր/ըվայր, i-ẇer/əẇer=իվեր/ըվեր, i-yip=իյիպ (ամօթ), ičaẇ=իջաւ, čir=ի/ջիր, ikami=իքամի, imha=իմիա (հիմա), inč kan=ինչքան, inn=ինն, inn hruyr=ինն հրոյր, *insun=ինսուն, ipac=իբաց, irgam=իրկամ (երիկամ), irk=իրք, isun=իսուն, iši=իշի.

J/Ճ, Ձ =7

janj=ճանճ, jardar=ճարտար, jermak=ճերմակ, jnjġuk=ճնճղուկ, jončwti=ճոնչվտի (ճանչցիր), juġ=ճիւղ, jẇir/jur=ջուր.

K/Ք, Գ =41

kaġak=քաղաք, kaġcr=քաղցր, kahi=քահի (հալածէ, զարկ), kaḫcadz=գաղցած, kameš=գամըշ (ունեցուածք), kami=քամի, kani=քանի, kar=քար, kari=գարի, karkyr ? =ցախաքլորի տեսակ, karn=գառն, karsun=քառսուն, karun=գարուն, kašink=քաշինք, kayl=քայլ, գայլ, kayrak=քայրաք (վզնոց), kdag=գդակ, kedin=գետին, kedn=գետն, keġ=գէղ, ker=գէր, keri (“scratch, scrape”)=քերի, keri (“uncle”)=քեռի, keš=գէշ, kini=գինի, kišer=գիշեր, kit=քիթ, klḥcaw=գլխցաւ, kluḫ=գլուխ, kna (“go !”) =գնա, kna (?)=քնա (քնացայ/իր), kni=քնի, knu žam=քնու ժամ, korčkuyn=քորչգոյն (մուգ սրճագոյն ձի), koti=գօտի, koyri=քոյրի (քերէ), krki=գրքի, ksan=քսան, ksi=քսի, *kuġcn=գուղձն, kuyr=քոյր.

L/Լ=21

labastak=լապաստակ, laci=լացի, lagod=լակոտ, lar=լար, laẇ=լաւ, layn=լայն, leġik=լեղիք, lern=լեռն, lert=լերթ, lezu=լեզու, lezvaẇor=լեզուաւոր, lgam=լկամ, lgami=լկամի (ձիուն բերանը սանձ դիր), lhaẇ=լխաւ (ծածկոց), lsi=լսի, lu=լու, lurč=լուրջ, lus(n)ga=լուսնկայ, lusnganor=լուսնկանոր, luys=լոյս, lẇacadz kalaẇ (‘!)=լուացած քալաւ (հալաւ, կտոր).

M/Մ=41

mad=մատ, madag=մատակ, madag uġd=մատակ ուղտ, madzgi=մածկի (ծածկ), madzun=մածուն, magas=մակաս (պակասաւոր, թերի), maġi=մաղի, maḫir=մախիր (մոխիր), manug=մանուկ, marcir=մարձիր (մոռցիր), mark=մարգ, markrid=մարգրիտ, mart=մարդ, mayir=մայիր (մայր), mašay/moši=մաշայ/մոշի, maz=մազ, mec/medz=մեծ, mec adam=մեծ ատամ, megal kišer=մէկալ գիշեր, megalorn=մէկալ օրն, meġr=մեղր, meġu=մեղու, menk (“we”)=մենք, myez=մեզ, mekn=մէկն, meradz=մեռած, mgrad=մկրատ, mijin=միջին, mirg/mirk=միրգ, mis=միս, mit=միտ(ք), mntjġiġ=մնջղիղ (մժեղ), morquk=մօրքուք (մօրքուր), morti=մօրթի, moruk=մօրուք (մօրուքով), mšag=մշակ, mugn=մուկն, mujak/mujag=մուճակ, munč=մունջ, muštag=մուշտակ, mutn=մուտն.

N/Ն=10

nakank=նականք (նրանք), nacanc=նացանց (անոնց), naẇ=նաւ, ned=նետ, ned aman=նետ աման, neġ=նեղ, nihar=նիհար, nist=նիստ, nor=նոր, nšanak=նշանակ.

O/O=21

oc=օձ, očil=ոջիլ, odẇetik=ոտվետիք, oġč=ողջ, oġeluk=օղլուք (առողջութիւն), oġn=օղն, olirči=օլիրճի (ոլորէ), or=օր, orc=որձ, orc aydz=որձ այծ, orc uġd=որձ ուղտ, oridz=օրիծ (առիւծ), orme=որմէ, ors=օրս, ort=որդ, orti=որդի, orzak

akġoġ=որձ աքղող (աքլոր), osgi/oski=ոսկի, ospn/osbn=ոսպն, ovəz=ովզզ (յովազ), oẇ (?)=ով.

P/Բ, Փ=31

pac=բաց; pagi=փակի; paġarč=բաղարջ; pal=բալ; pan ara=բան արա; parag=բարակ, parc=բարձ, pat=բադ, paydzaġ=փայծաղ, paygambar=բայղամպար (մարգարէ), pazugn/pazukn=բազուկն, per=բեր, peran=բերան, perančuk=բերանչուք (պէխ), perni=բեռնի; pesa=փեսա; pġarik=բղարիք (բուխերիկ); piġ=փիղ, plur=բլուր, pndri=փնտռի; poǰind=փոխինդ (փոխինձ); poǰk=բողք; pokr=փոքր, por=փոր, poyrci=բոյրճի (փորձէ, քննէ), princ=բրինձ, pšadik=փշատիկ, puc=փուչ, pur=փոռի, puš=փուշ, puynastġ=բոյնաստղ (աստեղախումբ).

Q/Կ=2

qatn=կաթն, qdecir=գտեցիր.

R/Ռ=1

runb=ռումբ.

S/U=24

sak=սագ, salam=սալամ (ցախաքլորի տեսակ), salor=սալոր, sanctok=սանցթոխ (սանձին առնչուող), sandr=սանտր, saẇan=սաւան, sbas/spas=սպաս, seġan=սեղան, seraǰ=սրահ, seẇ=սեւ, seẇ seẇ=սեւ-սեւ, sǰtor=սխտոր, sird=սիրտ, sirelì=սիրելի, slak=սլաք, soǰ=սոխ, span=սպան, spidak=սպիտակ, spidak baza=սպիտակ բազէ, spidak spidak=սպիտակ-սպիտակ, sra=սրա, srpgik=սրբկիկ (մաքուր), srpi=սրբի, suġ=սուղ.

Š/Շ=13

šabik/šabig;=շապիկ, šad=շատ, šaġaǰ=շաղախ, šahenik=շահենիկ (բազէ), šapat=շաբաթ, šegil=շեղիլ, *šjrig/šjrik=շժրիկ (կաղ), šoġ=շող, šrči=շրջի, šrep=շրեփ (շերեփ), šrtunk=շրթունք, štabi=շտապի, šun=շուն.

T/Դ, Թ=36

taġack=թաղաչք (չաղացք), taġik=թաղիք, tamdarkoc=թամտարկոց (թամբի բարձ), tamk=թամք, tanak=թանաք, tanbi=թամբէ, tarci=դարձի, tardagcu=դարտակցու, tašt=դաշտ, tayyag=դայեակ, te=թէ, teġin=դեղին, teġin bġinc=դեղին պղինձ, teġin teġin=դեղին-դեղին *teneke=թենեքէ (թիթեղ), tep=թեփ, tetew=թեթեւ, tew=թեւ, tibak/tibag=դիպակ, tiyak=դիակ, tiz=թիզ, tmag=դմակ, toġ=թող, totẇi=փօթուի, tožoǰk=դժոխք, traj=փասեան, tram=դրամ, ttu=թթու, tu, tun =դու, դուն, kyez=քեզ, tuk=դուք, cyez=ձեզ, tur=դուռ, turn=դուռն, tušman=տուշման, twok=թուօք.

Ṭ/S=11

ṭanc=տանձ, ṭasn=տասն, ṭasnu ẇin=տասնու վին (19), ṭasnu ẇerguk=տասնուվերկուք, ṭasnu ẇut=տասնուվութ (18), ṭasnu ẇyok=տասնուեօթ, ṭasnu čors=տասնուչորս, ṭasnu hing=տասնուհինգ, ṭasnu ẇec=տասնուվեց, ṭasnu ẇeruk=տասնուվերուք (13), ṭasun menk= տասնմէկ.

U/Ու=12

uġd=ուղտ, ul=ուլ, unk=ունք, ur=ուր, ure=ուր է, urpat=Ուրբաթ, usir-ուսիր, usn=ուսն, ut=ութ, ut hruyr=ութ հրոյր, uyl=ույլ (ծոյլ), užow=ուժով.

V/Վ=6

vart=վարդ, varžnag=վարժնակ (բազէի տեսակ), vayri mugn=վայրի մուկն, vayri

očẖar=վայրի ոչխար, verco=վերgo, ver(c)u=վերցու-վերու.

Ẇ/Վ=13

ẇacanc=վագանձ, ẇacinč=վաչինչ (ոչինչ), ẇaġẇaġ=վաղվաղ, ẇanc=վանց (վասնզի), ẇazi=վազի, ẇətsun=վըցուն, ẇec=վեց, ẇec hruyr=վեց հրոյր, ẇel=վել (վէգ, վիգ), ẇerčin=վերջին, ẇiyz=վիզ, ẇuyr=վոյր (որու), ẇrdik=վրտիք.

Y/Ե=3

yamarn=յամառն, yotn=եօթն, yotn hruyr=եօթն հրոյր.

Z/Զ=5

zadig=զատիկ, zarband=*զարպանտ*, zarg=զարկ:

ARMENIAN/S IN YEMEN IN THE 14TH CENTURY? THE *RASULID HEXAGLON*

(Summary)

Antranik Dakessian
adakessian@haigazian.edu.lb

The paper highlights the renowned Rasulid Hexaglon, written in Yemen in the mid-14th century and labeled the "The King's Dictionary," which is a dictionary of six languages, including Armenian.

The paper sheds light on, examines, and studies the Armenian section of the dictionary. It argues that, in the context of the political developments of the mid-14th century, the inclusion of Armenian vocabulary in such a dictionary reflects the fact that Armenians were a significant factor and noteworthy actors in the Gulf region of the time. The paper underpins this argument with further evidence drawn from other sources concerning the presence of Armenian Mamelukes and slaves in the said region.

Յաւելուած

Քուէյթ

...Այս հեռաւոր գաղութին մէջ կան 75-100 հայեր, որոնք տեղական իշխանութեանց յարգանքին արժանացած են: Շէյխը մասնաւոր համակրանք մը ունի հայերու հանդէպ:

Կարգ մը հայեր իրենց ընտանիքներով եկած են: Հարուստներ չկան, բայց կը վայելեն բարեկեցիկ կեանք մը, միջակէն վեր: Ընդհանրապէս հայերը անհատական (անձնական – Ա.Տ.) գործերով կը զբաղին, մեծ մասամբ շինարարութեամբ: Կայ հայ ատամնաբուժ մը՝ տոքթ. Լեւոն Մանուէլեան եւ երկրաչափ մը՝ Պ. Գրիգոր Նարիպեան, Պէյրութէն վկայուած:

Կառատունի տէր հայեր կան, որոնք առհասարակ մեծ օգտակարութիւն կ'ունենան Պարսկաստանէն յաճախ եկող ճամփորդներուն:

Դժբախտաբար Քուէյթի հայ գաղութը եկեղեցի եւ դպրոց չունի: Ասոր համար ալ Քուէյթի մէջ ապրող հայ ընտանիքներ չեն բերած իրենց զաւակները: Եկեղեցիի եւ դպրոցի շինութեան խնդիրը սկսած է զբաղեցնել Քուէյթի հայ գաղութը, որ այս ուղղութեամբ աշխատանքի սկսած է:

Քուէյթի հայերը կը ստանան նաեւ հայերէն թերթեր:

Նկատի ունենալով շրջանի բարգաւաճ վիճակը, կը կարծուի թէ հայկական գաղութը պիտի մեծնայ: Քուէյթի թրանզիթի կեդրոն մը ըլլալուն, Պարսկաստանէն շարունակ հայ վաճառականներ կու գան ու կ'երթան:...

Գոյամարտ, 22 Յունիս 1950

Հայերը Քուէյթի Մէջ

Քուէյթ արաբական թերակղզիին մէկ մասնիկն է, Պարսից ծոցի ծայրագոյն հիւսիս-արեւմուտքը: Երկիրը ունի մօտ 14,000 քառ. քլմ. տարածութիւն, ու մօտ 200,000 բնակչութիւն: Ան ամբողջութեամբ անապատային է, եւ նոյնիսկ խմելու ջուրը դուրսէն կը բերուի նաւերով: Ովասիսները շատ քիչ են: Բուսեղէն գոյութիւն չունի, բացի միքանի ցանցառ ծառերէ եւ անապատային խոտերէ:

Հայկական գաղութը կը հասնի թիւով մօտ 300ի, մեծ մասամբ պարսկահայեր: Կան շուրջ 30 ընտանիքներ, իսկ մնացածը ամուրիներ եւ կամ ընտանիքի հայրեր են, որոնք առժամապէս եկած են իրենց ապրուստը ճարելու:

Առաջին հայերը զբաղած են անձնական գործերով, գլխաւորը՝ ըլլալով ինքնաշարժներու եւ այլ մեքենաներու նորոգութիւնը:

1947ին, երբ այլեւս նաֆթը կը շահագործուէր, եկած են նաեւ զանազան մասնագիտութեան տէր պաշտօնեաներ: Պետական առաջին յայտնի պաշտօնեան եղած է ամերիկահայ երեւելի բժիշկ փրոֆ. Յակոբեան, որ նշանակուած է պետական հիւանդանոցի բժշկապետ: Սակայն չկարենալով ուզած բարեփոխութիւնները գործադրել տալ, ստիպուած է գործը ձգել ու մեկնիլ:

Վերջին երկու տարիներու ընթացքին է որ հայկական գաղութը ունեցած է իր իսկական աճումը: Ապատանի հորերը դադրելէ ետք, անգործ հայենակիցներ թափած են Քուէյթ, լսելով գործերու ընդարձակութեան ու դրամի շա-

տութեան մասին: Եկած են բժիշկն ու ճարտարագէտը, եկած են բանուորն ու արհեստաւորը, խուժելով դէպի անգործութեան անապատին մէջ գտնուած միակ ովասիսը:

Ընդհանուր առմամբ գաղութը ունի բարեկեցիկ վիճակ մը: Ամէն մարդ կ'աշխատի եւ առօրեայ կտոր մը հացը կ'ապահովէ: Գլխաւոր ցաւը այն է որ նոր սերունդ մը այստեղ կը մեծնայ առանց հայեցի դաստիարակութեան: Բացարձակապէս արգիլուած է պետական դպրոցներէն [բացի] որեւէ յատուկ դպրոց բանալ: Կառավարութիւնը բոլորին կը նայի որպէս օտար հիւրերու, ըլլան անոնք հայ, արաբ, պարսիկ կամ այլ ցեղէ: Եւ բոլորին ալ արգիլուած է դպրոցներու կամ միութիւններու հաստատումը: Միակ բացառութիւնները կը կազմեն անգլիացիները եւ ամերիկացիները, իսկ անգլիացիներու հովանաւորութեան տակ՝ հնդիկները: Անոնք ունին իրենց յատուկ եկեղեցիները, դպրոցներն ու ակումբները:

Ուրեմն նոր սերունդը կը հասուննայ առանց եկեղեցիի կամ տոհմիկ դաստիարակութեան: Այն ծնողները որոնք կարողութիւնը ունին՝ տան մէջ իրենց զաւակները կը դաստիարակեն: Սակայն անոնք ալ միշտ կը գանգատին: Իսկ վերջերս ամերիկեան «միսիոն»ը քաղաքս բերաւ հայ պատուելի մը, որպէսզի գաղութիս կրօնական պէտքերը հոգայ:

Հարցին ելք մը գտնելու համար, միքանի ողջմիտ հայրենակիցներ պզտիկ խորհրդակցութիւն մը ունենալով, որոշեցին փոքրիկ պատուիրակութիւն մը ղրկել երկրի իշխանին: Յարմար տեսնուեցաւ որ այս պատուիրակութեան ընկերանար Պասրայի քահանայ Տ. Արամ Փաշայեանը, որ պիտի ժամանէր Ծնունդէն ետք, տուները օրհնելու: Այս որոշումը տրուեցաւ անոր համար որ անցեալ Զատկի այցելութեան քահանան շէյխին կողմէ լաւ ընդունելութիւն էր գտած: Սակայն ինչ ըսել կարգ մը վախկոտներու, որոնք համոզեցին քահանան շէյխին չներկայանալ, պատճառաբանելով թէ իբրեւ հայ եթէ ներկայանանք խտրութիւն ըրած պիտի ըլլանք եւ այսպէս ամբողջ գաղութը կը վտանգենք...:

Կացութիւնը կը մնայ անփոփոխ: Փոքրիկները կը մեծնան օտար վարժարաններու մէջ: Կնունքներն ու պսակները պէտք է յետաձգուին՝ մինչեւ քահանայի տարեկան այցելութիւնները: Բայց կարելի՞ է արդեօք մահերն ալ յետաձգել մինչեւ քահանային այցը...:

Գաղութը միշտ կը մեծնայ: Օրէօր պարսկահայեր կը նետուին ծովին վտանգներուն մէջ, փախստական կերպով Քուէյթ անցնելու համար: Ոմանք զոհ կ'երթան ծովի ալիքներուն եւ ոմանք հազիւ թէ ցամաք կոխած կը ձերբակալուին եւ ետ ցամաք կը վերադարձուին: Իսկ անոնք որոնք կը յաջողին ողջ առողջ հասնիլ, կ'իյնան փողոցները ու կը փնտռեն գործ ու ապաստան:

Զարթօնք, 24 Յունիս 1953

Հայերը Քուէյթի Մէջ[1]

...Պէտք չէ զարմանալ եթէ ըսենք թէ ասկէ վեց տարի առաջ եթէ միայն քանի մը հայեր կը թափառէին այս սեւ ոսկիի անապատին մէջ, այժմ արդէն երկու-երեք հազարի հասնող հայկական զանգուած մը կը շնչէ այս անտանելի մթնոլորտին մէջ: Հայութիւնը մեծ մասով պարսկահայ է, որմէ ետք կու գան լիբանանահայն ու սուրիահայը: Իսկ ամբողջ Քուէյթը իր մէջ կը հաշուէ մօտ 210,000 բնակիչ, բաղկացած պարսիկ, հնդիկ եւ արաբ տարրերէ:

...Ինչպէս ամէն տեղ, հոս եւս հայը իր շինարար բազուկը կը շարժէ անդադար ու կը ծաղկեցնէ այս անապատը...:

...Մասնաւոր տեղեր չկան ուր միայն հայ երիտասարդութիւն հաւաքուած ըլլայ ու հայկական մթնոլորտ ստեղծուի, մանաւանդ որ տարբեր միջավայրերէ ու խառնուածքներէ յառաջ եկած միութիւն մըն ալ յաջողելու ատակ չի կրնար ըլլալ, հետեւաբար նման քայլ մը չծնած իսկ ամլութեան կը դատապարտուի:

Բայց քուէյթցի հայը, ըստ իր բարի սովորութեան, կէսգիշեր չեղած կը բանայ իր ռատիօն, կը դարձնէ անոր կոճակը, մինչեւ որ կանգ առնէ ան եւ արտասանէ «**Խօսում է Երեւանը**», միացած Խաչատուրեանի պարանուագին: Ահա, գիշերուան այդ պահուն, երբ դուրսը անապատին մէջ անհորիզոն ու անծայր խաւարը կը տիրէ, հայը կը զգայ թէ ինք առանձինը չէ՛, թէ ինք հայրենիք մը ունի, եւ իր հայրենիքն է որ կը խօսի իրեն հետ, անապատի հայուն հետ:

Զարթօնք, 11 Յունիս 1958

Քուէյթի Հայերը

Պր. Ճորճ Մարտիկեան եւ իր տիկինը, այցելեցին իշխան Ֆարհատ ալ-Սապահի, Քուէյթ: Հայ հանրահռչակ մարդուն կ'ընկերանային գնդ. Հրանդ Մալոյեան, Պ. Լեւոն Քեշիշեան եւ տիկինը:

Իշխան Ֆարհատ իր պալատին մէջ մեծարեց հիւրերը, սարքեց ճաշկերոյթ, որուն հրաւիրուած էին քաղաքի աչքառու հայերը:

Հայ գաղութի միւս անդամները ներկայացան Պր. Ճորճ Մարտիկեանի իշխանին պալատին մէջ, ուր շատ սիրալիր ընդունելութեան արժանացան եւ խօսակցեցան երկարօրէն:

Քուէյթի մէջ այժմ կ'ապրին շուրջ 3000 հայեր: Կէսէն աւելին հոն հաստատուած է, մնացեալը գործի բերմամբ կը գտնուի հոն:

Ամէնանոր գաղութ մ'է Քուէյթ, հայերուն համար: Առաջին հայը, արդարեւ, հոն ժամանած է 1943ին: Այնուհետեւ հետզհետէ եկած են ուրիշ հայեր: Առաջին գացողը իր ետեւէն տարած է ուրիշներ: Մեծ մասով՝ հայերը շինարարութեամբ կը զբաղին, գնահատուած են եւ լաւ վիճակ ունին:

Կազմած են գաղութային վարչութիւն մը, մտադիր են մատուռ եւ մանկապարտէզ բանալու:

---

[1] Յապաւումներով:

Ընդառաջելով Պր. Ճորճ Մարտիկեանի խնդրանքին, Քուէյթի իշխանը՝ Ֆարիատ, խոստացած է տրամադրել հող մը, անոր վրայ կառուցանելու համար մատուռն ու մանկապարտէզը:

Մասիս, 17 Յուլիս 1958

Քուէյթի Հայութիւնը Ընտրեց Իր Ազգային Մարմինը

Մեր նախորդ թղթակցութեամբ բաւականին ծանրացած էինք քուէյթահայութեան մէջ ստեղծուած խանդավառութեան վրայ. խանդավառութիւն, որ արդիւնք էր տէր Կորիւն քահանայ Շիրիգեանի քաղաքս ժամանման:

Քոյթահայութիւնը, օգտուելով տէրիօր ներկայութենէն, նաեւ շնորհաւորական հեռագիրեր ուղարկեց Քուէյթի իշխանին եւ այլ վեց շէյխելու իրենց **պայրամին** առիթով, անոնց մաղթելով երկար կեանք եւ շնորհակալութիւն յայտնելով իրենց բարեացակամ վերաբերումին՝ հանդէպ հայութեան: Բոլոր իշխաններն ալ պատասխանեցին մեր շնորհաւորական հեռագիրերուն, նոյնանման մաղթանքներով եւ իրենց խորին շնորհակալութիւնը յայտնելով տէրիօր եւ ժողովուրդին:

Տէրիօր ներկայութիւնը պատեհ առիթ համարելով, նախկին եկեղեցական առժամեայ մարմինը ժողովի հրաւիրեց մեր ազգայինները՝ բողոքականաց եկեղեցւոյ սրահին մէջ, եւ շատ խաղաղ ու համերաշխ մթնոլորտի մը մէջ տեղի ունեցաւ ընտրութիւնը եօթը հոգիներէ բաղկացած մարմնի մը, որուն անդամներն են.- ՊՊ. Երուանդ Պարսումեան (ատենապետ), Յակոբ Սողոմոնեան (փոխատենապետ), Յակոբ Յովհաննէսեան (ատենադպիր), Յակոբ Տէրտէրեան (գանձապահ), Նշան Ասատուրեան, Կարապետ Գազանճեան եւ Յովհաննէս Թորիկեան (խորհրդականներ):

Կազմը բաղկացած է ազգային ոգիով տոգորուած եւ ներդաշնակ ուժերէ, որոնք կը վայելեն յարգանքն ու վստահութիւնը քուէյթահայութեան:

Կը յուսանք որ իրենց հետեւողական աշխատանքով պիտի կարենան իրագործել այն երազը, որ ամբողջ քուէյթահայութեանն է անխտիր՝ ստանալ արտօնութիւնը եկեղեցիի մը կառուցման, ինչպէս նաեւ հողը՝ դիմումներ կատարելով առ որ անկ է: Միաժամանակ, ժողովուրդի ընթացիկ գործերուն բաւարարութիւն տալ, համայնական կեանքի ամէն պատասխանատուութիւն ստանձնելով:

Ապրիլ 24ի Սգատօնը

Ապրիլ 24ի սուրբ պատարագին եւ հոգեհանգստեան պաշտօնին՝ քուէյթահայութիւնը յարգանքի իր տուրքը տուաւ ապրիլեան նահատակներուն, խունեռամ խուժելով եկեղեցի:

Տէրհայրը ներկայացուց Ապրիլ 24ը, նկատելով զայն պատմութեան ամէնադժխեմ դէպքերէն մէկը՝ զոր երբեք տեսած ըլլար մարդկութիւնը, միաժամանակ՝ այն տոկունութիւնն ու ապրելու զօրաւոր հաւատքը, զոր ցուցաբերեց հայ ժողովուրդը, այդ չարագուշակ տարիներուն: Յետոյ ոգեկոչումն ըրաւ ապրիլ-

եան եւ մեր պատմութեան բոլոր շրջաններու նահատակներուն, որոնք այս պահուս կ'ապրին ամէն հարազատ հայ հոգիի մէջ եւ մեռելներու յատուկ լեզուով մեզի կը պատգամեն՝ «Հետեւեցէք մեր ճամփուն եւ դուք պիտի ապրիք յաւիտեան»: Յետ քարոզի, տէրհայրը իր հրաժեշտի խօսքը ուղղեց ժողովուրդին եւ մաղթեց որ սիրոյ եւ խաղաղութեան մէջ ապրի գաղութը, միշտ բարձր պահելով ազգային իր արժանապատուութիւնը:

Ազդակ, 8 Մայիս 1959

Գուվէյթ [ՔՈՒԷՅԹ][2]

Պարսկահայ Պր. Աբգար Պաղումեան, առաջին հայն է որ 1943ին հաստատուած է Գուվէյթ:

Բ. աշխարհամարտէն վերջն է որ, հայեր սկսած են հեռանալ Լիբանանէն, Սուրիայէն, Իրանէն եւ Իրաքէն եւ գացած են հաստատուիլ այս երկիրը:

Հայութիւնը իր մէջ կը հաշուէ 2500 անձեր:

Գուվէյթի մէջ՝ վերջերս (1960) կազմուեցաւ «Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մարմին»ը: Վարչութեան անդամներն են հետեւեալները._

Տեարք Ե[րուանդ] Պարսումեան՝ ա. ատենապետ, Յ. Սողոմոնեան՝ բ. Ատենապետ, Յ. Յովհաննէսեան՝ ա. ատենադպիր, Ն. Ասատուրեան՝ բ. ատենադպիր եւ Յ. Տէրտէրեան՝ գանձապահ:

1958ին, Պր. Ճորճ Մարտիկեան, Գուվէյթ այցելելով՝ ներկայացած է իշխանին եւ հայութեան անունով խնդրած է որ, հայ եկեղեցիի մը շինութեան արտօնութիւն տրուի: Վեհանձն իշխանը սիրով ընդունած է հայոց խնդրանքը. նոյնիսկ, խոստացած է հող տրամադրել: Սոյն հողին վրայ, եկեղեցւոյ կից, պիտի կառուցուի նաեւ 120 հայ մանուկներու համար մանկապարտէզ մը. անհրաժեշտ գումարը, տեղւոյն հայերը հաւաքած են արդէն:

Հայերը, Գուվէյթի մէջ կը զբաղին շինութեան գործերով եւ առհասարակ բարեկեցիկ են: Հրապարակի վրայ տակաւին չեն երեւիր հայ մեծ առեւտրականներ:

Թեմը կը պատկանի մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան:

Քուէյթի Հայ Գաղութը Կը Բանայ Իր Առաջին Հայկական Վարժարանը

Ասկէ տասնհինգ տարի առաջ Քուէյթի անունն իսկ գիտցողի դժուար էր հանդիպիլ: Տասը տարի առաջ, երբ այդ երկիրը սկսաւ նաֆթ արդտադրող երկիր դառնալ, Մերձաւոր Արեւելքի զանազան երկիրներէն հայեր սկսան Քուէյթ երթալ եւ հաստատուիլ:

---

[2] «Պատմութիւն հայ գաղութներու», *Հասկ, պաշտօնական ամսագիր*, 11-12:1960, էջ 426: Նիւթը մեր ուշադրութեան յանձնեց Անի Փիենքճեան, որուն շնորհակալ ենք:

Այսօր Քուէյթի մէջ ունինք շուրջ 500 հաշուող հայ գաղութ մը, բաղկացած մեծ մասամբ պարսկահայերէ եւ սուրիահայերէ: Գործի ու դիրքի տէր ազգայիններ կան այդ գաղութին մէջ, որ առհասարակ ձեռներէց հայրենակիցներէ բաղկացած են:

Զարմանալի է որ գաղութը ցարդ հայկական վարժարանով մը օժտուած չէր: Հիմա, մեզի հասած հետեւեալ նամակէն ուրախութեամբ կ'իմանանք որ Քուէյթի հայ գաղութը ձեռնարած է ազգային ուսումնարանի մը բացումին:

Ահա՛ նամակը.-

Նոյեմբեր 4ին, հանդիսականներու հոծ բազմութեան մը ներկայութեան կատարուեցաւ Քուէյթի հայ վարժարանին բացումը, որ տեւեց երկու ժամ:

Ասիկա հայ միակ դպրոցն է ամբողջ Քուէյթի մէջ: Բացումը կատարեց ատենապետ Պր. Երուանդ Թերզեան, բանախօսեց Պր. Յ. Սահակեան, վարժարանին տնօրէնը, ուղերձ կարդաց Պր. Գ. Բարիքեան եւ ճառախօսեց Պր. Աբրահամ Գազանճեան:

Այս առթիւ, շէյխ Ժապր դպրոցին նուիրեց 6000 րուբի, 8000 րուբի ալ հանգանակուեցաւ հայ ժողովուրդէն: Հիմնադիր մարմնի անդամները եւ համայն ժողովուրդը երկրատեւ ծափահարութիւններով ջերմագին ընդունելութիւն ըրին վսեմափայլ շէյխին: Հիմանդիր մարմնին մաս կը կազմեն ՊՊ. Երուանդ Թերզեան (ատենապետ), Աբրահամ Գազանճեան (ատենադպիր), Միհրան Զաքարեան (գանձապահ), Պօղոս Յովակիմեան-Հայրապետ Հայրապետեան-Գրիգոր Բարիքեան-Յովսէփ Ագըլեան-Հայկ Քրիսթիանեան-Տիգրան Մաճարեան-Կարապետ Թոփալեան եւ Վարդան Գարակէօզեան: Քարտուղարն է Պ. Յ. Սահակեան:

Ձարթօնք, 13 Նոյեմբեր 1960

Նահատակաց Յուշատօնը Քուէյթի Մէջ

Հայուն գոյատեւելու հաւատքն է անկասկած, որ ու՛ր ալ գտնուի ան, առիթ մը կը ստեղծէ հաւաքաբար տօնելու իր պատմական նշանակութիւն ունեցող յաղթական մեծ դէպքերը եւ նաեւ յարգելու յիշատակը անոնց որոնք զոհուեցան գիտակցաբար, որպէսզի մենք մնայինք եւ ապրէինք որպէս **հայե՛ր**:

Ապրիլ 24, Ուրբաթ գիշեր, Քուէյթի հայ վարժարանին շրջափակը լեցուցած էր քանի մը հազարի հասնող գիտակից հասարակութիւն մը, ներկայ ըլլալու համար տեղի ունենալիք յիշատակի հանդէսին:

Ժամը ութ եւ կէսին, օրուան նախագահ, արժ. Տ. Պարոյր քհնյ. Սարգիսեան բացաւ հանդէսը, մէկ վայրկեան յոտնկայս լռութեան հրաւիրելով յարգոյ հասարակութիւնը: Արժ. տէրհայրը իր հակիրճ բացման խօսքէն ետք վարեց օրուան յայտագիրը:

Օր. Սօնա Տեւրիշեան արտասանեց Դանիէլ Վարուժանի «Կարմիր հողը», որուն յաջորդեց պր. Գրիգոր Բազեանի «Կռունկ» մեներգը, զոր երգեց ապրումով եւ յուզումով: Յետոյ հրաւիրուեցաւ օր. Անահիտ Պաղտատլեան՝ արտասանելու իրանահայ շնորհալի բանաստեղծուհի Վանուհիի «Ապրիլն հայութեան» կտորը:

Տէրհայրը բեմ հրաւիրեց գաղութիս ծանօթ ազգայիններէն պր. Երուանդ Պարսումեանը, որ կրցաւ աւելի քան կէս ժամ հասարակութիւնը լարուած պահել՝ պատմական լուրջ մօտեցումով եւ մատչելի ձեւով տալով պատկերը Ապրիլ 24ին։ծ

Ապրիլ 24ը մեզմէ առաջ եղաւ.- ա) թուական մեծ զոհ մը, այսինքն ժողովուրդի մը մէկ-երրորդը, բ) մեր մտաւորականութիւնը, որ հնձուեցաւ առաջին իսկ առիթով, գ) մեր ժողովուրդին ֆիզիքական գեղեցկութիւնը, ճիշտ այնպէս ինչպէս աթոմական ռումբը կը բերէ նոյն աւերը իր ինկած երկրին մէջ, եւ դ) մեզի ձգեց որբերու բանակներ, տխեղծ, աւերակուած դէմքով ու սիրտով հազարաւոր մանուկներ, ձգուած իրենց բախտին։

Եւ ի՞նչ ձեւով թուրքը կատարեց այս բարբարոսութիւնը ԱՆԽՏՐԱԲԱՐ։ Ո՛չ մէկ խտիր՝ յարանուանական թէ կուսակցական։ Դանակը բոլորին ալ կը հասնէր անխտրաբար, բոլորը մէկ սուրով։

Յարգելի բանախօսը կանգ առաւ եւ մատնանշեց այն իրողութիւնը, թէ այժմ կրցած ենք որոշ չափով յաղթել թուրքին, որովհետեւ կանք ու պիտի մնանք, տալով նորանոր հանճարներ, գիտական թէ մշակութային բոլոր մարզերէ ներս։ Իրաւունք ունինք հպարտանալու՝ ծնունդ տուած ըլլալով Համբարձումեանի մը, Խաչատուրեանի մը, հո՛յլ մը գրողներու եւ բանաստեղծներու, Հայաստանէն մինչեւ Միջերկրականի ափերը եւ մինչեւ Խաղաղական։

Պր. Պարսումեանի տպաւորիչ բանախօսութենէն ետք արտասանեց օր. Անի Քիւփէլեան՝ Գ. Սարեանի «Դէպի կառափնարան»ը, խորունկ յուզումով եւ ապրումով։ Յետոյ հրաւիրուեցաւ օր. Յասմիկ Մարգարեան, որ երգեց «Սեւ մութ ամպեր» երգը։

Գեղարուեստական բաժնին վերջաւորութեան բեմ բարձրացաւ օրուան յայտնութիւնը եղող արուեստագէտ արտասանող պր. Յովհաննէս Աբիկեանը, որ կրցաւ լաւագոյնս արտասանել Յովհաննէս Շիրազի «Ժողովրդի քնար» երկար բանաստեղծութիւնը։

Ապրիլ 24ի խորհուրդը ներկայացնող կենդանի պատկեր մը բեմադրուեցաւ նմանողութեամբ «Մայր Հայաստան» նկարչական մէկ գործին։ Պիտի չուզէինք որ այսքան տխրութեամբ վերջանար հանդէսը, գիտնալով հանդերձ թէ կը գտնուին դեռ մարդիկ, որոնք կը փարին ամէն Ապրիլ 24ին լալու եւ ողբալու գաղափարին...։ Թէ ինչու՛ կը գտնուին տակաւին այս տեսակէտը բաժնող մարդիկ, որ միայն «սեւ մութ ամպեր» կը տեսնեն հայ իրականութեան մէջ... այդ ուրիշ պատմութիւն։

Հարթօնք, 3 Մայիս 1964

Եղեռնի Յիսնամեակը Քուէյթի Մէջ

Քուէյթի հայութիւնը՝ կենսադալար մէկ ոստը դարաւոր կաղնիին, բոլոր ժամանակներու քանդիչ ուժերուն ձայնեց միակամ։

Կը քալե՞նք մեր նահատակներուն լուսեղէն ճամփայէն իբրեւ իրաւատէ՛րը մեր կենսատու մայր երկրին, իբրեւ տէրը ոգեղէն անկորնչելի հաստատութեանց։

Արդարեւ, Ապրիլեան Եղեռնի յիսնամեակը արժանաւորապէս ոգեկոչուեցաւ Քուէյթի հայ գաղութին կողմէ:

Բոլոր հոսանքներու ներկայացուցիչներէն կազմուած Կեդր. յանձնախումբի կազմակերպութեամբ եւ ազգայիններու բոլորանուէր աշխատանքով, շաբաթ մը ամբողջ ոգեկոչման հանդիսութիւններ տեղի ունեցան ազգային վարժարանին մէջ:

Շաբաթ, 24 Ապրիլի առաւօտուն, Քուէյթի հայ առաքելական եկեղեցիին մէջ պատարագ մատուցուեցաւ եւ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ: Գաղութի հայութիւնը ամբողջութեամբ ներկայ գտնուեցաւ: Պատարագիչ արժ. Տ. Պարոյր քհնյ. Սարգիսեան, օրուան խորհուրդը իմաստաւորող հոգեշունչ քարոզ մը խօսեցաւ:

Նոյն օրը երեկոյեան, ազգային վարժարանին մէջ տեղի ունեցաւ ոգեկոչման հանդիսութեանց առաջին տպաւորիչ սգահանդէսը: Բեմին խորքը զետեղուած էր յուշարձան մը, որ կը ներկայացնէր հայ մօր կտակը նոր սերունդին: Բացման խօսքը կատարեց արժ. տէրհայրը: Գործադրուեցաւ ճոխ յայտագիր մը: Բանախօսեց ազգային վարչութեան ատենապետ պր. Ե. Պարսումեան, որ խոր վերլուծումով եւ հաղորդիչ ջերմութեամբ տուաւ պատկերը ջարդին եւ ջարդուողին:

Երկրորդ սգահանդէսը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 27 Ապրիլի երեկոյեան, ազգային վարժարանին մէջ: Քուէյթահայութիւնը դարձեալ նոյն խոր յարգանքով հետեւեցաւ յայտագրի գործադրութեան: Բացման խօսքը ըրաւ տէրհայրը: Գործադրուեցաւ ճոխ յայտագիր մը: Բանախօսեց հոգաբարձութեան ատենապետ պր. Արտաշէս Բաղդասեան, որ խորիմաստ կերպով ներկայացուց մեր հաւատքը եւ ապրելու մեր ցեղային կամքը:

Ազգային վարչութեան յատուկ հրաւէրով եւ բարեհաճ թոյլատուութեամբ մեծի տանն Կիլիկիոյ ՆՍՕՏՏ Խորէն Ա. կաթողիկոսի, Հինգշաբթի, 25 Ապրիլի գիշեր Քուէյթ ժամանեց Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի վերատեսուչ գերշ. Տ. Գարեգին եպս. Սարգիսեան: Քուէյթի հայութիւնը սրտազեղ ընդունելութիւն մը ըրաւ սրբազան հօր, որուն ներկայութիւնը հայկականութեամբ աւելի ջերմացուց հոծ հայութենէ հեռու, անապատին մէջ խմբուած մեր ժողովուրդին սիրտը: Երբեւիցէ Քուէյթի օդակայանը չէր հաւաքուած այսքան խուռներամ բազմութիւն: Անհամար ինքնաշարժներ տեղ գրաւած էին դուրսի հրապարակը: Սրահները նեղ կու գային պարփակելու համար ժողովուրդը, որ նկատելի կարգապահութեամբ անհամբեր կը սպասէր սրբազան հօր ժամանման: Ժամը 10.30ին գերշն. Գարեգին եպիսկոպոս իջաւ օդանաւէն: Պաշտօնական սրահին մէջ, սրբազան հիւրը եւ պաշտօնական անձնաւորութիւններ հիւրասիրուեցան օդակայանի տնօրէնութեան կողմէ: Ապա ինքնաշարժներու թափորով գերշն. Գարեգին եպիսկոպոս առաջնորդուեցաւ Քուէյթի հայոց նորակառոյց եկեղեցին, ուր կատարեց կանոնական աղօթքը: Սրբազան հայրը յատկապէս շնորհակալութիւն յայտնեց արաբ ազնիւ ժողովուրդին եւ Քուէյթի իշխանութեան՝ հայ ժողովուրդին հանդէպ իրենց ցոյց տուած բարեացակամ վերաբերումին համար: Ընդունելութիւնն ու աջահամբոյրը տեղի ունեցան վարժարանի տեսչարանին մէջ:

Ուրբաթ առաւօտ, 30 Ապրիլին, հակառակ ճնշող տաքին, ժողովուրդը փութացած էր եկեղեցի: Պատարագեց գերշն. Գարեգին եպիսկոպոս: Եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագին ներկայ գտնուեցան նաեւ օտար բարձրաստիճան եկեղեցականներ: Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, սրբազան հայրը հոգեշունչ քարոզ մը խօսեցաւ՝ «Եւ մի՛ երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին, եւ զհոգի ոչ կարեն սպանանել» բնաբանով: Ներկայ օտար հիւրերուն համար սրբազան հայրը իր քարոզին ամփոփումը խօսեցաւ նաեւ անգլերէն լեզուով:

Ազդակ, 8 Մայիս 1965

EXCERPTS FROM ARMENIAN NEWSPAPERS ABOUT THE ARMENIAN COMMUNITY OF KUWAIT

(Summary)

The article contains a number of stories about the Armenian community of Kuwait. These news items are firsthand reports on the newly settled Armenians in Kuwait, the founding of the school, the preoccupations of the community, the election of its first administrative council, the commemoration of the 50th anniversary of the Armenian Genocide and the plans for building a community church. The reports cover a period between 1950 and 1965 and all are clippings from two Armenian newspapers, *Zartonk and Aztag* (both from Beirut) and three periodicals *Hasg* and *Massis* (both from Beirut) and *Koyamard* of Iraq.

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՊՈՒ ՏԱՊԻԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ[1]

Ապու Տապիի Հայց. Եկեղեցւոյ պատկանող ժողովուրդին ազգային-եկեղեցական կարիքները լաւագոյն եւ արդիւնաւոր ձեւով մատակարարելու համար գործադրութեան կը դրուի ներկայ Կանոնագրութիւնը՝ վաւերացուած մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կեդրոնական վարչութեան կողմէ:

Յօդուած 1.- Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կեդրոնական վարչութիւնը արաբական ծոցի շրջաններուն համար կը նշանակէ կաթողիկոսական փոխանորդ մը, որուն կեդրոնատեղին կը գտնուի Քուէյթ:

Յօդուած 2.- Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսական փոխանորդին պաշտօնն է.

ա) Կապ պահել մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կեդրոնական վարչութեան եւ Ապու Տապիի ազգային վարչութեան հետ:

բ) Հանազան առիթներով պատարագել եւ կատարել եկեղեցական խորհուրդներ:

գ) Ապու Տապիի Հայց. Առաքելական եկեղեցին ներկայացնել առ որ անկ է:

դ) Նախագահել ազգային վարչութեան եւ անկէ բխած մարմիններու ժողովական նիստերուն:

ե) Հսկել ժողովուրդի հոգեւոր կեանքի մատակարարութեան եւ զարկ տալ ազգային տոհմիկ դաստիարակութեան:

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդուած 3.- Ազգային վարչութիւնը կը բաղկանայ 5, 7 կամ 9 անդամներէ:

Յօդուած 4.- Ազգային վարչութեան անդամները կը նշանակուին մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կեդրոնական վարչութեան կողմէ՝ խորհրդակցաբար կաթողիկոսական փոխանորդին, Հայ Առաքելական Եկեղեցւոյ պատկանող Ապու Տապի բնակող ազգայիններէ:

Յօդուած 5.- Ազգային վարչութեան պաշտօնավարութեան շրջանը երկու տարի է:

Յօդուած 6.- Ազգային վարչութեան անդամները վերանշանակելի են:

Յօդուած 7.- Ազգային վարչութեան հրաժարած եւ հրաժարականը ընդունուած, ինչպէս նաեւ մեկնած անդամներուն տեղ մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կեդրոնական վարչութիւնը խորհրդակցաբար կաթողիկոսական փոխանորդին, կը նշանակէ նոր անդամներ: Երբ ազգային վարչութիւնը կորսնցուցած է իր անդամներուն մեծամասնութիւնը, կը նշանակուի նոր ազգային վարչութիւն մը երկու տարուան համար:

Յօդուած 8.- Ազգային վարչութիւնը կ'ունենայ իր դիւանը՝ ատենապետ, ատենադպիր եւ գանձապահ:

---


[1] Ըստ նիւթը մեր տրամադրութեան յանձնող Հրաձին Վարդանեանի, կանոնագրութիւնը վաւերացուած է Կիլիկիոյ կաթողիկոսութեան աթոռակից կաթողիկոս Գարեգին Բ. հայրապետին կողմէ, 13 Հոկտեմբեր 1981ին (401/81 թուակիր):

Յօդուած 9.- Ազգային վարչութեան շրջանը կ'աւարտի եւ նոր նշանակումները կը կատարուին Մայիս ամսուան երկրորդ կիսուն:
Յօդուած 10.- Ազգային վարչութեան պաշտօնն է.-
ա) Մատակարարել Ապու Տապիի հայ ժողովուրդին ազգային-եկեղեցական կարիքները:
բ) Նշանակել հոգաբարձու մարմին մը, որուն կը յանձնէ հայ վարժարանին հոգատարութիւնը:
գ) Ազգային վարչութեան ժողովներու պատճէնները օրին ուղարկել կաթողիկոսական փոխանորդին:
դ) Միամեայ տեղեկագիր ուղարկել Կիլիկիոյ կաթողիկոսութեան կեդրոնական վարչութեան, որուն համարատու է:
ե) Ի պահանջել հարկին կազմել զանազան յանձնախումբեր, որոնք իրեն պատասխանատու են:
զ) Մասնակցիլ իր անդամներուն մէկուն միջոցաւ հոգաբարձու մարմինի, եւ կամ այլ յանձնախումբերու – ժողովներուն, որպէս կապ ազգային վարչութեան եւ հոգաբարձու մարմինին միջեւ:
է) Պատրաստել իր գործունէութեան պիւտճէն:
ը) Քննել հոգաբարձու մարմնին պիւտճէն եւ բացի պարագային նկատի ունենալ զայն ամբողջացնելու կարելիութիւնները:
թ) Տնօրինել իր սնտուկին մուտքերն ու ելքերը: Մուտքերն են՝ ժողովուրդին կողմէ եղած նուէրները, պատարագներու եւ եկեղեցական արարողութիւններու առիթներով եկեղեցւոյ եկամուտները եւ ձեռնարկներէ գոյացած գումարները: Ելքերն են՝ կաթողիկոսական փոխանորդին ճամփորդութեան եւ կեցութեան ծախսերը, անոր եղած վարձատրութիւնը, վարժարանին եղած յատկացումները, պատուիրակութիւններու ճամփորդութեան ծախսերը, պաշտօնեաներու վճարուած գումարները, կալուածներու վարձքերն ու պահպանումի ծախսերը եւ չնախատեսուած այլ ծախսեր:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՄԱՐՄԻՆ

Յօդուած 11.- Իր հոգատարութեան տակ գտնուող հայ վարժարանին համար ազգային վարչութիւնը կը նշանակէ հոգաբարձու մարմին մը, բաղկացած 3, 5 կամ 7 ազգայիններէ:
Յօդուած 12.- Ազգային վարչութեան անդամները չեն կրնար հոգաբարձու մարմնին մաս կազմել:
Յօդուած 13.- Հոգաբարձու մարմինը կ'ունենայ իր դիւանը՝ ատենապետ, ատենադպիր եւ գանձապահ:
Յօդուած 14.- Հոգաբարձու մարմինը իր ժողովներու ատենագրութիւնը օրին կը յղէ ազգային վարչութեան:
Յօդուած 15.- Հոգաբարձու մարմինին պաշտօնավարութեան շրջանը կ'աւարտի ազգային վարչութեան պաշտօնավարութեան շրջանին հետ:
Յօդուած 16.- Հոգաբարձու մարմնին հրաժարած կամ մեկնած անդամին տեղ ազգային վարչութիւնը կը նշանակէ նոր անդամ մը:
Յօդուած 17.- Հոգաբարձու մարմնին անդամները կրկին նշանակելի են:.-

Յօդուած 18.- Հոգաբարձու մարմնին պաշտօնն է.-
ա) Ստանձնել հայ վարժարանին խնամատարութիւնը:
բ) Ազգային վարչութեան հետ խորհրդակցաբար նշանակել վարժարանի պատասխանատու տնօրէնը:
գ) Պատրաստել վարժարանի պիւտճէն եւ ներկայացնել ազգային վարչութեան:
դ) Տնօրէնին հետ խորհրդակցաբար պատրաստել հայ վարժարանի ուսումնական ծրագիրը:
Յօդուած 19.- Հոգաբարձու մարմինը իր գործունէութեան մէջ պատասխանատու է ազգային վարչութեան:



-8-

Յօդ. 14.- Հոգաբարձու մարմինը իր ժողովներու ասենագրութիւնները օրին կը յղէ Ազգային Վարչութեանը:
Յօդ. 15.- Հոգաբարձու մարմնին պաշտօնավարութեան շրջանը կ'ուարտի Ազգային Վարչութեան պաշտօնավարութեան շրջանին հետ:
Յօդ. 16.- Հոգաբարձու մարմնին հրաժարած կամ մեկնած անդամին տեղ Ազգային Վարչութիւնը կը նշանակէ նոր անդամ մը:
Յօդ. 17.- Հոգաբարձու մարմնին անդամները կրկին նշանակելի են:
Յօդ. 18.- Հոգաբարձու մարմնին պաշտօնն է.
ա. Ստանձնել հայ վարժարանին խնամատարութիւնը:
բ. Ազգային Վարչութեան հետ խորհրդակցաբար նշանակել վարժարանի պատասխանատու տնօրէնը:
գ. Պատրաստել վարժարանի պիւտճէն եւ ներկայացնել Ազգային Վարչութեան:
դ. Տնօրէնին հետ խորհրդակցաբար պատրաստել հայ վարժարանի ուսումնական ծրագիրը:
Յօդ. 19.- Հոգաբարձու մարմինը իր գործունէութեան մէջ պատասխանատու է Ազգային Վարչութեան:

ՏՆՕՐԷՆ

Յօդ. 20.- Տնօրէնը պատասխանատու վարիչն է վարժարանի կրթական, դաստիարակչական եւ կարգապահական գործին:
Յօդ. 21.- Տնօրէնը համարատու է Հոգաբարձու մարմնին:
Յօդ. 22.- Տնօրէնը կը հսկէ կրթաթոշակներու գանձումին եւ այլ ելեւմուտքերու:
Յօդ. 23.- Տնօրէնը պարտի ապահովել հետեւեալ տոմարները.
ա. Աշակերտներու ներկայութեան
բ. Կրթաթոշակներու վճարումներուն
գ. Ուսուցիչներու ներկայութեան
դ. Ուսուցիչներու ամսավճարներուն
ե. Դպրոցական անցուդարձերու
զ. Նամակագրութեան
է. Պետական նախարարութիւններու հետ յարաբերութեան:
Յօդ. 24.- Սոյն կանոնագրութեան յօդուածներու փոփոխութիւնները կամ նոր յօդուածներու յաւելումները տեղի կ'ունենան մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կեդրոնական վարչութեան կողմէ:

ՏՆՕՐԷՆ

Յօդուած 20.- Տնօրէնը պատասխանատու վարիչն է վարժարանի կրթական, դաստիարակչական եւ կարգապահական գործին:
Յօդուած 21.- Տնօրէնը համարատու է հոգաբարձու մարմնին:
Յօդուած 22.- Տնօրէնը կը հսկէ կրթաթոշակներու գանձումին եւ այլ ելեւմուտքերու:
Յօդուած 23.- Տնօրէնը պարտի ապահովել հետեւեալ տոմարները.-
ա) Աշակերտներու ներկայութեան,
բ) Կրթաթոշակներու վճարումներուն,
գ) Ուսուցիչներու ներկայութեան,
դ) Ուսուցիչներու ամսավճարներուն,
ե) Դպրոցական անցուդարձերու,
զ) Նամակագրութեան,
է) Պետական նախարարութիւններու հետ յարաբերութեան:
Յօդուած 24.- Սոյն կանոնագրութեան յօդուածներու փոփոխութիւնները կամ նոր յօդուածներու յաւելումները տեղի կ'ունենան մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ազգային կեդրոնական վարչութեան կողմէ:

THE BYLAWS OF THE ARMENIAN COMMUNITY OF ABU DHABI
(Summary)

These are the first (1981) bylaws of the Armenian community of Abu Dhabi. They set out the framework of the council of the community, its tasks, terms in office and relations with the Catholicosate of the Great See of Cilicia. They include, as well, the functions and duties of the school board and the school principal.

الأرمن في مهجر دول الخليج

كيراكوس قيوميجيان
imcck@imcck.com



في سبعينيات القرن الماضي، كنت واحدًا من مئات الألوف من الشباب ذوي الطموح في مقتبل العمر في الوطن العربي، الذين كانوا يسعون للحصول على فرصة الإغتراب والذهاب إلى إحدى الدول التي يقال ويشاع عنها بأنها بلادٌ فيها فرص عمل لكل المهن وأن الأجور معقولة.

وفي تلك الفترة الزمنية كان من الأسماء المتداولة لهذه الغاية اسم دولة الكويت وليبيا ولبنان وفرنسا ودبي، والقليل باتجاه السعودية واستراليا، هذا بالنسبة للطائفة الأرمنية. بعض الطوائف كانت لها جهات اغتراب أخرى مثل السويد وألمانيا، وبعض الطوائف كانوا يفضلون البرازيل والارجنتين وفينزويلا وبعض دول امريكا اللاتينية، والبعض الآخر كانت وجهتها دول افريقيا ذوات المناجم والنفط.....الخ.

وكان غاية المغترب ،أنه بابسط الحسبة، بأنك إذا وجدت العمل المناسب، فإن بعد 4 سنوات تقريبًا تستطيع توفير مبلغ يكفي بأن تخطب وتتزوج من إحدى البنات اللاواتي كان أهلك قد اختاروها لك قبل أن تصل، وأنه بعد 4 سنوات أخرى تكون قد وفرت مبلغًا ما تستطيع به أن تشتري بيتًا فى بلدك، وذلك نتيجة إقتراح وإلحاح الوالد والوالدة لكي تنزل فيه أنت وعائلتك في الإجازات، لأن بيت جدك لا يكفي لك ولعائلتك، وكذلك عائلة أخوك. وأنه وبعد سنتين آخرين تكون قد وفرت مبلغًا يكفي لفتح مصلحة لك لتعيش منها بعد غربتك، مثل غالبية المغتربين المئأت آلاف الذين جاء ذكرهم في بداية المقال، وهذا ما كان لا يمكن تحقيقه في بلدهم الذي يعاني من أزمات اقتصادية وسياسية عويصة.

كما ذكرنا كنت أنا ذلك الشاب اليافع الذي يصبو إلى النجاح، وكنت احد هؤلاء الشباب الذين كانوا يسعون لتحقيق السيناريو والهدف المذكور ولكن في ظروف مختلفة، كنت من هؤلاء الذين كان لهم أخوة أو أقرباء في إحدى الدول المذكورة يجهز له فيزا العمل ويحضر له الاقامة ....الخ.

اما أنا فكنت من هؤلاء المحظوظين الذين كانت الفيزا ومكان الاقامة جاهزة عند الوصول مباشرة، حيث كان أخي الاصغر قد سبقني بالوصول إلى الكويت بثلاث سنوات وقام بتجهيز ذلك.

لقد وصلت الكويت فى 22 / 7 / 1972، حيث سافرت بالقطار منطلقًا من حلب إلى بغداد، ومن ثم بالسيارة إلى البصرة، ومن ثم الكويت. واستغرق السفر من مدينتي حلب إلى الكويت حوالي 40 ساعة بعد معاناة سفر مقبولة، ومنذ ذلك اليوم بدأ مشواري في هذه الدولة الخليجية قبل حوالي 52 سنة من الآن قضيتهم بالحلوة والمُرّة، مع ترجيحي بالنسبة لي بأنه كان غالبيتها حلو، والحمد لله.

نصف قرن من الزمان وأنا منغمس في اجتهاداتي اليومية، من هموم العمل والعمّال، والزبائن وطلباتهم ومشاكلهم، وأمور عائلية واجتماعية، ومسائل قانونية وطائفية.

بعد وصولي للكويت في سنة 1972 عملت عند الورش المشهورة في منطقة الشويخ لمدة سنة، ومن ثم انتقلت إلى منطقة الوفرة الصحراوية والنفطية على بعد 100 كم عن مدينة الكويت، وهذا ما جعلني لا آخذ اجازة قصيرة اسبوعية كل أسبوع واستخدام الباص عند الذهاب إلى مدينة الكويت، بل اكتفيت باجازة نهاية الإسبوع ليوم واحد شهريًا. وكان عملي بالوفرة في GTE شركة النقليات العامة والتي كانت بعيدة عن المدينة والمصاريف، مما أتاح لي الفرصة بتوفير مبلغ معقول، وأتاح لي أيضًا الفرصة للتعرّف على مدير الورشة "المهندس نرسيس" الذي كان معجبًا بعملي بعد توطدّ العلاقة بيننا، حيث أنه كان يقول لي في كل مناسبة بأنني مختلفٌ عن جميع الفنيين السابقين الذين عملوا تحت إمرته طوال 15 سنة الماضية في هذه الشركة الامريكية التي نعمل فيها.

وهكذا كانت نتيجة التقارب والتودد بيننا بأنه عرض عليّ "المهندس نرسيس" بأن نؤسس شركة للعمل معًا، تكون إدارتها لي، وأسميناها "ورشة الخدمات الدقيقة" ، ولقد استمرينا في الشراكة لمدة 7 سنوات إلى أن توفاه الله، والذي أدى إلى إنفراط الشراكة وأخذ الورثة حصتهم، وكلٌ ذهب في طريقه بكل مودّة.

بعد ذلك أدرت الشركة لوحدي لعددٍ من السنوات، إلى أن تغير قانون العمل للمقيمين، وأصبح من الضروري أن تكون اقامة المقيم على المحل الذي يعمل فيه فقط، وحيث أن اقامتي كانت على شخصٍ كويتي وكان شخصًا خلوقًا، ولذا اضطررت أن أحوّل إقامتي على المحل الذي أستأجره، وهذا أدى إلى أن نتشارك مع صاحب المحل القديم ليصبح شريكي في شركة أسميناها "شركة مركز المعادن الصناعية ذ.م.م."، وهذا كان من وحي وطبيعة العمل نفسه حيث كان نشاطنا التجارة والعمل بالحديد ومعروفين فيه، وكان الاسم على مسمى.

أنا أملك حصة كبيرة من تلك الشركة منذ عام 1982 تاريخ تأسيسها، وأعمل فيها من الصباح إلى المساء بكل همّة ونشاط بدون كلل منذ 42 سنة.

تضاعف رأس مال شركتنا اكثر من 43 مرة منذ التأسيس، وهذه نسبة جيدة لمثل طبيعة نشاطنا، وهو الإتجار في المواد المعدنية المصنعة والنصف مصنعة، وتوريد وتركيب أبواب ضد الحريق والأبواب الجرارة. والأن يعمل في شركتنا بحدود 200

فني وموظف، عدد منهم جامعيين ومهندسين، وبعضهم يعمل في الشركة منذ أكثر من 25 سنة.

لا يوجد شركات كثيرة وضعها القانوني شركة ذات مسؤولية محدودة (شركة ذ.م.م.) بين الأرمن المقيمين في الكويت، إلا القليل منهم، حيث أنّ غالبيتهم يعملون في مصالح خاصة أو لهم محلات خاصة تعمل في مجالات عديدة، مثل الصياغة والصناعات الخفيفة وأعمال ميكانيك السيارات، ويوجد عدد لا بأس به من الدكاترة الأرمن ذوي الاختصاصات المتعددة يعملون في المستشفيات الحكومية أو الخاصة، وهم يتمتعون بسمعة جيدة في المجتمع الكويتي، كما أن الذين يعملون بوظائف مرموقة في شركات المقاولات المشهورة أيضًا يتمتعون بشهرة مشرفة للجالية، والجدير بالذكر أنّ غالبية الأفراد هم سوريون والبعض الآخر لبنانيون والقليل أيضًا أرمن إيرانيون ومصريون.

وعلى كل حال، جميع الذين ذكرناهم سالفًا، رجالًا كانوا أو سيدات يحبون الكويت ويحبون العيش فيها، علمًا بأن غالبية الأرمن الذين يعملون بالكويت وضعهم المالي معقول إلى حد ما، وأنه من النادر أن تجد أرمن فقراء أو معدمين بكل معنى الكلمة، بل كل منهم وحسب مؤهلاته أو جدارته في مصلحته وقدرته بالعمل بالكويت، ويكافأ بموجبه ويعيش حياته بالأمن والأمان.

أما من ناحية حياة الجالية الأرمنية بالكويت خاصة ودول الخليج بوجه عام، فإنه "لا يشتكي من شي" كما يقول اللبنانيون، إنّ حياتهم الاجتماعية مقبولة وهم منسجمون مع المجتمع الذين يعملون ويعيشون فيه، فالأرمن أصدقاء الجميع سواء كانوا أبناء البلد، أقصد الكويتيون أو أماراتيون أو قطريون، أو من أفراد الجاليات المقيمة من جنسيات أخرى، مثل بقية العرب أو جنسيات آسيوية أخرى، مثل الهنود والباكستانيون والفلبينيون، حيث أنهم يعملون جنبًا إلى جنب في كثير من الأحوال ويكوّنون صداقات معهم.

طبعًا أماكن السكن مختلفة ولا يشبه بعضهم بعضًا، حيث أن الغالبية العظمى من العمالة الأسيوية تقطن في مناطق فقيرة ومكتظة بالسكان ومزدحمة طوال اليوم، ومستوى المعيشة متدنٍ، ويكثر فيها المشاكل الإجتماعية وتحت نظر رجال الأمن. أما بقية الجاليات من العربية والميسورين من الجاليات الآسيوية فهم لهم مناطقهم، حيث أنهم يعيشون في شقق متوسطة المستوى أو فاخرة 2-4 غرف، ويملكون سيارات ثمينة جيدة، أما البقية فيستخدمون السيارات الأكثر استعمالًا.

يتراوح عدد الأرمن في الكويت الآن بين 4 إلى 5 الاف نسمة، وإن الأرمن الذين وفدوا إلى الكويت ابتداءا من 70 سنة مضت، احتفلوا باليوبيل الستين، وهو سنة افتتاح المدرسة الأرمنية الخاصة، التي تضم 300 طالب وطالبة تقريبًا من مرحلة الروضة وحتى الثانوية وفق المنهج الحكومي الكويتي، وهم ينجحون بنسب وعلامات عالية منذ 50 سنة مضت.

تتمتع المدرسة الأرمنية المشتركة، واسمها الرسمي المدرسة الأرمنية وثانوية التضامن، بمزايا وإمكانيات وظروف خاصة يوفرها لها أفراد وعوائل الجالية الأرمنية بكل تفانٍ واخلاص، وإنّ كل فرد بالمدرسة، ابتداءًا من تلاميذها إلى الاساتذة وإدارة المدرسة، ولجنة الجالية وأولياء الأمور يعتنون بالمدرسة مثل قرة عيونهم، ويعملون

لفضّ مشاكلها المالية والإدارية بأقصى سرعة، كما إن إدارة المدرسة تهتم بتوفير الكادر المناسب للتدريس، وإن علاقة المدرسة مع وزارة التربية والتعليم جيدة جدًا.

من ضمن النواحي والفعاليات التي تشترك فيها كل الجالية الأرمنية بكل شوق وشغف، وذلك في يومي 25 و 26 فبراير من أيام أعياد الكويت الوطنية، أولّهما عيد الاستقلال عام 1961، والثاني عيد التحرير عام 1991، حيث يقام في تلك الأيام الإحتفالية كتقليد وتراث للمدرسة، وتُجرى كل عام في الباحة الخلفية للمدرسة فعاليات ما يشبه مدينة الملاهي للأطفال، وفي الساحة الأمامية يجتمع الأهل ليلًا للإستمتاع بما يقدم من العروض الثقافية، من تحضير الطلاب الكبار والأساتذة بصحبة الموسيقى للأغاني الوطنية الكويتية والأرمنية، مع وجبة من طبخ أمهات الطلاب، كل يوم وجبة مختلفة عن اليوم السابق.

هذه كانت بعض المعلومات عن الجالية الأرمنية التي تعيش بالكويت إحدى اوائل الدول (الإمارة) التي سكن فيها الأرمن من 70 سنة والذين أتيحت لهم الفرصة لإقامة وتأسيس عائلة ومدرسة، وكذلك كنيسة، والتي سنكتب عنها بعد قليل، التي كان لها تأثير بالغ الاهمية في نشوء واستمرار الجالية الأرمنية بعد سنوات قليلة من قدوم اوائل المهنيين والأفراد الأرمن.

هناك أعداد قليلة من الكنائس المرخصة الرسمية في الكويت، لا يزيد عددها عن اصابع اليدين، أولهما الكنيسة الكاثوليكية المارونية والكنيسة الأرثوذكسية القبطية بفروعها والكنيسة الإنجيلية، وهناك كنائس أخرى لطوائف غير رسمية ذات التعداد القليل نسبيًا. مما يجدر بالذكر بأن جميع الكنائس المذكورة ينتمون للجنسيات الأخرى، وهم يمارسون شعائرهم من نفس العقيدة في أوقات مخصصة لهم، مثلًا في الكنيسة الكاثوليكية يقوم العرب والهنود والفلبينيين بممارسة شعائرهم في الوقت المحدد بلغتهم فيها بأجور رمزية أو مجانًا.

الجالية مجتمع متماسك ومنظم

انشئ المجلس التنفيذي للجالية عام 1981، ومهمته المحافظة على مصالح أبناء الجالية المتواجدين فى دولة الكويت منذ الخمسينيات والمنتسبين إلى المدرسة الأرمنية وتحت مظلة الكنيسة.

وُضِعت قواعد وأسس هذا المجلس على يد البطريركية الأرمنية في أنطلياس- لبنان، وهى أشبه بدستور تُحدَد فيه الادوار والأنشطة والصلاحيات والمدة الزمنية، وتعمل به كل المجالس في بلاد الإغتراب ومن خلال مرجعية واحدة.

مدة المجلس سنتان، يتم تعيينهم من قبل المجلس التشريعي للجالية والمكوّن من تسعة أعضاء ومدة هذا المجلس أربع سنوات.

يتفرع عن هذا المجلس عدة لجان طابعها إجتماعي ثقافي، منها لجنة أولياء الامور في المدرسة الإرمنية/ اللجنة النسائية والخاصة بشؤون الكنيسة/ اللجنة الرياضية/ اللجنة الثقافية/ لجنة المساعدات الاجتماعية.

تتميز الجالية الأرمنية بأنها مجتمع متماسك ومنظم، من خلال مجموعات تتوزع مهامها على عدة مستويات.

معظم أبناء الجالية في الكويت جاؤوا من سوريا ولبنان والعراق وفلسطين وإيران، ويمكن تقسيم التواجد الأرمني في الكويت من الناحية الزمنية إلى مرحلتين، الاولى من الاربعينات إلى العام 1990 والثانية من التحرير أي 1991 وإلى العام 2021.

يروي السيد رئيس المجلس انهم بدأوا بالتوافد كأفراد منذ أواخر الأربعينات، وفي عام 1958 وصل عددهم إلى ما يقرب الألف، وعدد لا بأس به من العوائل، وهذا ما دفعهم إلى التفكير بضرورة وجود كنيسة لهم ومدرسة.

عام 1980 سجلت الجالية أرقاما قياسية، إذ بلغ مجموع أبناءها حوالي (11) الف أرمني يعيشون في الكويت والمدن الكويتية الأخرى مثل الأحمدي والفحاحيل.

وبحسب قراءة السيد رئيس المجلس فإن دوافع الهجرة بالدرجة الأولى كانت البحث عن فرص عمل والسعي لتوفير ظروف معيشية أفضل، ففي عقد الثمانينات شهدت المنطقة الحرب العراقية – الإيرانية والتي استمرت لثمان سنوات، سبقتها في منتصف السبعينات أي عام 1975 إندلاع الحرب الأهلية في لبنان، وكان لتلك الحروب الإثر الواضح في زيادة أعداد المهاجرين الأرمن إلى الكويت بحثًا عن الاستقرار والأمان.

وبقدر ما كانت الكويت مقصداً لهم خلال عقدي السبعينات والثمانينات، إلا أنها شهدت موجات من الهجرة العكسية بإتجاه أمريكا أولاً ودول أوروبية وكندا بحيث تناقص عددهم إلى نحو 7 آلاف أرمني ولغاية 1990 وهي سنة الغزو العراقي.

سنة الغزو بقي في الكويت ما بين 1500 إلى 2000 أرمني، وهناك عدد من العوائل خرجت إلى سوريا ولبنان كحال معظم الجاليات التى عاد قسم كبير منها إلى البلاد التي أتوا منها، كان لديهم شركات ومحلات ومصالح اضطروا للبقاء هنا للحفاظ عليها، وطوال أشهر الاحتلال العراقي لم يخرج أرمني واحد يتعاون مع هذا الاحتلال، بل كانوا مع الكويت قلباً وقالباً وفى كل الأحوال، فهم لا يتدخلون بالشأن السياسي للبلد الذى يعيشون فيه، ملتزمون بالقوانين ومخلصين لها تماماً.

المرحلة الثانية من التواجد الأرمني تبدأ من العام 1991 أي سنة التحرير، وخلال خمس سنوات وصل عددهم إلى نحو 4 الاف أرمني، كان الرقم يرتفع قليلا ليتراوح ما بين 5 و 6 الاف أرمني على أبعد تقدير وإن استقر في الألفية على 4 الاف أرمني، وفي هذه المرحلة عرفت الجالية "نوعية جديدة من المهاجرين" أي فئة الشباب المتعلم والجامعي خصوصًا القادمين إليها من لبنان وسوريا وهؤلاء اتجهوا نحو التوظيف في قطاعات الهندسة والطب وادارة الأعمال.

من حيث التوصيف المهني للجالية الأرمنية رسم السيد رئيس المجلس "خريطة المهن والأعمال" بحسب القطاعات التي عملوا فيها.

ففي الخمسينات وإلى اليوم كان معظم الأرمن من أصحاب المهن الحرة (ميكانيكي - أعمال صياغة – بناء وانشاءات – ادوات صحية – ساعات – أصحاب كراجات لتصليح السيارات).

هناك خمسة في المائة من مجمل اعداد الجالية، أي نحو 20 طبيبًا وفنيًا، يعملون في قطاع الطب والصحة (أطباء أسنان – عيادات خاصة – فنيين أسنان – أطباء أطفال) وخمسين مهندسًا، وخمسين آخرين في عالم المال والاستثمارات والإدارة والبنوك، وعشرات من أصحاب المهن الحرة كتجارة الذهب والألبسة، وأصحاب شركات

ومحلات تجارية ومطاعم. من النادر ان تجد أرمنيًا يعمل في القطاعات الحكومية، بإستثناء موظفين يعدون على أصابع اليد يعملون في منظمات أو هيئات دولية.

جانب آخر يضفي على الجالية الأرمنية خصوصيتها، وهي أن التزاوج من غير الأرمن محدودٌ جدًا، فالغالبية إن لم تكن كلها يتزاوجون مع أبناء ملتهم فمن غير المرغوب به أن يتزوج أرمني إمرأةً غير أرمنية، أو أرمنية تتزوج غير أرمني وإن حدث فيكاد أن يكون في نطاق قليلٍ جدًا.

وعلى المستوى الإجتماعي فالعلاقات الأسرية مع غير الأرمن محدودة، ربما بسبب العادات والتقاليد ولطبيعة الشخصية الأرمنية المنكفئة على نفسها، كتبادل الزيارات في البيوت أو الدواوين وهو بخلاف علاقات العمل أو الوظيفة وهو أمر طبيعي وليس فيه أي حواجز، بل على العكس، ترى "التاجر" الأرمني أو "المهني" مقصدًا لصاحب المصلحة أو الحاجة، لمعرفته بصدقه وأسلوب تعامله الذي يلقى الإحترام والمحبة.

وبحكم طبيعة عملي كان مقدرًا لي زيارة الإمارات العربية المتحدة وبالتحديد إمارات دبي والشارقة وأبوظبي وتواصلي مع أفراد وشخصيات الجالية الأرمنية هناك لمرات عديدة، فقد علمت بأن مستوى الحياة في الإمارات مشابه في غالبية النواحي بمستوى الحياة في الكويت.

مثلا من الناحية الطائفية هم أيضًا ملتفون حول بعضهم وحول الكنيسة الارمنية الأرثوذكسية. في الشارقة يلتقون مع بعضهم في جميع المناسبات الدينية أو الوطنية أو الترفيهية، غالبيتهم يعيشون في إمارة الشارقة التي تكثر فيها الصناعات ومصانع الإنتاج، والبعض الآخر يعيش في الشارقة ولكن يعمل في دبي، وهناك عدد لا بأس به من كبار الموظفين والمهندسين ومدراء بنوك يعملون هناك، ولهم شركاتهم ومستواهم الإجتماعي الراقي في الإمارات العربية المتحدة، ولهم كنيستهم في الشارقة ولها ملحق تمارس فيه أنشطة مدرسية أسبوعية لتعليم الطلاب اللغة والتاريخ الأرمني.

إن هامش الحريات في الإمارات العربية المتحدة هامش لا بأس به من النواحي الإجتماعية والفردية، كما إن مستوى المعيشة في الإمارات مرتفعٌ نسبيا. غالبية الأرمن لهم بيوتهم وفللهم المستأجرة أو تمليك ولهم مشاغلهم أو مصانعهم الخاصة بهم.

إمارة ابوظبي التي لم يكن فيها كنيسة أو مكان عبادة للطائفة الأرمنية قبل حوالي 5 سنوات، وتتمتع اليوم بكنيسة على أرض مساحتها واسعة كافية، وقد تم إنشاء كنيسة جميلة على الطراز المعماري الأرمني التقليدي، وذلك منحة مكرمة من سمو أمير إمارة أبوظبي محمد بن زايد آل نهيان مشكورًا، وهكذا أصبحت كنيسة أبوظبي ثاني كنيسة ارمنية في الإمارات العربية المتحدة العامرة، وعلى حسب علمي جاري العمل والمتابعة لدى ممثلي الطائفة والمسؤلين الإماراتيين في إمارة دبي لمنح رخصة وأرض لهم لبناء كنيسة في الإمارة.

التواجد الأرمني في الإمارات والحياة الجديدة للجالية والكنيسة

خصص المؤلف "أندرو تومسون" فصلاً خاصاً عن تاريخ الأرمن في دولة الإمارات العربية المتحدة في كتابه والصادر تحت عنوان "إحتفالية التسامح" والتنوع الديني في دولة الإمارات العربية المتحدة، والذي تناول فيه البدايات والتحول الذي

عاشته هذه الدولة، منذ إستقلالها عام 1971 وتاريخ بناء أول كنيسة للأرمن في إمارة الشارقة، ثم إنشاء مطرانية ترعى أحوال الجالية هناك إضافة إلى دولة قطر.

يتحدث الكتاب عن الأرمن منذ القرن التاسع عشر، عندما كان التجار الأرمن المنظمون الرئيسيون للنشاط التجاري بين الشرق والغرب، فقد إنخرطوا في النشاطات التجارية بشكل عام إلى جهة الشرق وصولاً إلى بلاد فارس والهند، وإلى الغرب وصولاً إلى البرتغال، ووفقاً للسجلات التاريخية كان التجار الأرمن يزورون من وقت لآخر منطقة الخليج العربي في تلك الفترة، حيث تركّز وجودهم في إمارة رأس الخيمة كنقطة توقفّ أولى لهم في المشرق.

كما بدأت الجاليات الأرمنية تتشكل في منطقة الخليج بدءاً من النصف الثاني من القرن العشرين، وكانت أولى مجموعات الأرمن التي استقرت في الإمارات العربية المتحدة تتألف من مهندسين وحرفيين من مختلف المهن، بما في ذلك حرف الحدادة والنجارة وفنيي السيارات وصبغ السيارات ومهن أخرى.

لقد كان عددهم صغيراً وبالكاد يصل إلى عشرين أو ثلاثين شخصا في السنوات المبكرة، ثم ومع بداية إنتاج النفط في الخمسينيات بدأت مجموعة صغيرة بالعمل في شركات النفط التي تعمل في منطقة الخليج العربي، وفي أعوام الستينات إنتقلت مجموعة من الشباب من إيران وسوريا والأردن والعراق إلى الإمارات العربية المتحدة، واستقروا في إمارة الشارقة ثم دبي وابو ظبي للبحث عن فرص عمل أفضل، وخلال فترة الستينات مكنت مبادرات العمل اليدوي والمشاريع المهنية الأرمن من الاستقرار وترسيخ وجودهم والازدهار في البيئة الجديدة.

وخلال أعوام الستينيات أيضًا لم يكن العرب المحليون والجاليات الأخرى، التي تقيم فيها أصبح يعرف فيما بعد بدولة الامارات العربية المتحدة، يعرفون سوى القليل عن الجالية الأرمنية التي قدمت للمنطقة، إلا أن السوريين والفلسطينيين واللبنانيين العرب، سواءًا من رجال الأعمال أو الموظفين الذين قدموا إلى الإمارات العربية المتحدة، سرعان ما تعرفوا وتآلفوا مع الجالية الأرمنية على أنهم اناس جديّون في العمل، وصادقون في التعامل إضافة إلى أنهم من الحرفيين المهرة.

هؤلاء الوافدون العرب لعبوا دور الوسطاء في التعريف بالأرمن لدى زملائهم من السكان المحليين، كما أن العرب المحليين أيضًا سرعان ما عرفوهم بنفس الصفات أيضًا.

في ديسمبر عام 1971 تشكلت دولة الامارات العربية المتحدة، وأصبحت مستقلة وذات سيادة، وسرعان ما بدأ اقتصادها ينمو ويتطور. كان التدفق الأول على نطاق كبير للأرمن في هذه الدولة ما بين الأعوام 1975 و1980 وقد كان هناك عدة اسباب تقف وراء قدومهم إلى الإمارات، مثل الحرب الأهلية في لبنان، وإصدار الحكومة السورية قانوناً يقضي بالإعفاء من الخدمة العسكرية مقابل دفع رسوم معينة بعد فترة عمل خمسة سنوات في منطقة الخليج، مما زاد من عددهم.

القادمون الجدد ومعظمهم من الشباب، وآخرين من المتعلمين كان لديهم ميل راسخ للحفاظ على هويتهم، وجلبوا معهم تقاليد لحياة منظمة وجماعية والإحساس بالوحدة الأرمنية الكبيرة والكفاح من أجل قضيتهم.

إنّ الأعداد المتزايدة من الأرمن في الشارقة ودبي دفع العديد من الذين يعيشون في الإمارات الشمالية للتفكير جديًّا في تنظيم جهودهم، من أجل الحفاظ على هويتهم، وتأسيس هياكل اجتماعية، لهذا الغرض تولىّ الريادة في هذه المهمة ديكران آشجيان الأكثر خبرة في الجالية، نظرًا لنضج سنه وفهمه للنواحي التنظيمية لحياة الجالية. فهو في خلال الفترة الأولى، لعب دورًا حيويًا في تنظيمها وكان يحظى بالإحترام في أوساط الجالية الأرمنية لصفاته التي عرفت عنه.

أثناء ذلك كان مجمع الكاثوليكوسية (بيت كيليكيا) وعلى رأسهم خورين الأول يصرون وبشكل كبير على تأسيس جالية أرمنية رسمية في الإمارات العربية.

بتاريخ 9 مايو 1977 قام الأب آشجيان بتنظيم القداس الأرمني الأول في كنيسة "هولي ترينتي" الانجليكانية المقدسة، وكان بمثابة أكبر تجمّع أرمني يُقام في الدولة.

وبعد وقت قصير من هذا الحدث، اجتمع رجل الدين أوشغان جولويان وهو مؤسس الكنيسة الأرمنية في الكويت ثم الخليج العربي بالجالية الأرمنية في الشارقة وفي دبي بتاريخ 20 ديسمبر، وقد تمت دعوة 22 أرمنيًا من الشارقة ودبي من أجل تشكيل هيئة وطنية مؤقتة، حيث تشكلت لجنة من 8 أشخاص.

في مساء 23 ديسمبر أدى الأب جولويان قداسًا مسائيًا في كنيسة "هولي ترينتي" في دبي، وكان ذلك بمثابة القداس الثاني في الإمارات، وقد صدرت نشرة رسمية في *هاسك HASG* وهي المجلة الرسمية للكاثوليكوسية الأرمنية في انطلياس – لبنان - وتعني "السنبلة", وقد تضمن التقرير:

منذ وقتٍ طويلٍ لم يحظ أطفال الجالية بهذه الفرصة لحضور صلاة جماعية، لقد كان المشهد مؤثرًا وقد كان كل شخص يتابع التراتيل المقدسة للكنيسة الأرمنية بخشوعً، وانعكس ذلك على قوتهم المتجدّدة.

لقد كان الإنجاز الأول الأكثر أهمية تأسيس مدرسة أرمنية اسبوعية في شهر مارس 1980 وقد تأسست مجموعة دينية في عام 1981، كما تأسست فرقة للرقص في نفس الوقت.

مجمّع الكنائس الخمس في قطر

يتراوح عدد الأرمن في قطر بين 800 و 1500 أرمني يعيش معظمهم في العاصمة "الدوحة"، أتوا إلى هذا البلد الخليجي منذ تسعينات القرن الماضي بحثًا عن الوظائف وفرص العمل، فقد جاؤوا من بلدان عربية ومن دولة أرمينيا، وهم يتبعون إلى الكرسي الرسولي في "بيت كيليكيا" والتي أنتقلت إلى أنطلياس في لبنان ويتبعون كنسيًا مطرانية الكويت والخليج العربي.

خصصت دولة قطر مساحة من الأرض في الدوحة لبناء الكنائس، وتُعرف باسم مجمع الكنائس الخمس تخدم حوالي 200 ألف مسيحي من أصل 2.900 مليون نسمة إجمالي عدد السكان وفقًا لإحصاء عام 2001، مقابل 600 الف مواطن قطري تقريبًا، تجمع كل المذاهب الأرثوذكس والإنجيليين والبروتستانت والكاثوليك، فيما تتكون الجالية المسيحية في قطر من خليط من الفلبينيين والهنود والأوروبيين والفلسطينيين والمصريين والسوريين واللبنانيين والأمريكيين.

وهناك مجلس يتكون من أعضاء جميع الكنائس المسيحية للتنسيق بشكل مباشر مع وزارة الخارجية بشأن المسائل الدينية.

إضافة إلى وجود مركزٍ لحوار الأديان (الإسلام والمسيحية واليهودية) أنشئ بتوصية من علماء يمثلون الديانات الثلاث في مؤتمرات حوار الأديان الذي كانت تستضيفه الدوحة.

وفي هذا الشأن يُذكر أنه وفي العام 2011 زار قداسة الكاثوليكوس أرآم الأول دولة قطر، وأثناء الزيارة إلتقى بالأمير الشيخ حمد بن خليفة آل ثاني وطلب منه تخصيص قطعة أرض لبناء كنيسة ووعد خيرًا بذلك.

أيضا مُنحت الجالية الأرمنية التابعة للكنيسة الارثوذكسية قبل حوالي 6 سنوات قطعة أرضٍ ورخصةً لبناء الكنيسة الخاصة بالطائفة في دولة قطر في العاصمة الدوحة.

أما في البحرين فهناك عددٌ ليس بالكبير وبالتالي لم تبادر الطائفة لبناء كنيسة خاصة لها، ولذلك هم يمارسون طقوسهم الدينية من فترة لفترة في إحدى صالات الفنادق الكبرى.

أما في المملكة العربية السعودية فلا زال الوقت مبكرًا لطلب رخصة وأرض لبناء الكنيسة، وذلك بسبب القوانين السائدة عندهم، برغم أن القوانين الجديدة الإنفتاحية لديهم تتقدم بخطى سريعة، ولكن على أي حال فإنه معروف لدى الطائفة بأن عددهم ضئيل ولا يجوز بناء كنيسة أو مدرسة لعدد قليل من الطلاب في السعودية.

إنّ كلمة ووصف الجالية الارمنية لوصف الوضع القانوني بالجالية او الطائفة له تقريبًا نفس المعنى والمفهوم عند العامة، ولكن ليس كذلك عند المخاطبات والتسميات الرسمية، ولكن من التجربة اليومية من سماع وقراءة الكلمتين "طائفة وجالية" أصبح متشابه تقريبًا، وفي القاموس نحن الأرمن المنتشرون حول العالم لنا تسميات مختلفة في كل بلد منتشرين فيه، مثلًا ونحن في لبنان نُوصَف بالطائفة، التي على نفس المستوى من الحقوق مع بقية الطوائف مثل الدروز والشيعة والموارنة والسنة والسريان...الخ، ولكننا في سوريا لسنا طائفةً بل مواطنون أصليون ولكن من الاقلية الدينية المسيحية

الأرمنية. على كل حال هذه مسألة دينية وسياسية تاريخية قانونية يطول شرحها، يكفي أن نفتخر بأننا الطائفة المحترمة.

تمثال العرفان

وفي سياق آخر نذكر أنه تم اعتماد تصميم وتصنيع مجسم نصب حجري من قبل أشهر المصممين الأرمن للتماثيل والمجسمات الحجرية، وهذا المجسم يمثّل تمثال العرفان، وقد نُقش عليه "نصب العرفان بالجميل من الشعب الأرمني إلى الشعب العربي"، وجرى تنصيبه في أجمل موقع في الطريق المؤدي إلى مطار يريفان العاصمة الأرمنية، وكان بمبادرة من دولة أرمينيا عرفانًا وتقديرًا من الشعب الأرمني إلى الشعب العربي قاطبة من المحيط إلى الخليج، لحسن معاملتهم وحمايتهم وايوائهم لنا أثناء المحن والأزمات والكوارث التي تعرّضنا لها في بدايات القرن العشرين، وبالتحديد بسبب المجازر بين 1918 - 1915، وتم تهجيرنا من بلدنا أرمينيا الغربية من قبل الأتراك، حيث قتلوا وشرّدوا 1.5 مليون أرمني.

كنت قد كتبت مقالة في جريدة *النهار* اللبنانية و*القبس* الكويتية و*الحياة* السعودية (لندن) في سنة 2005، تحدثت فيه عن انطباعي الشخصي عند مشاهدة المجسم الضخم، وتصويره من كل الزوايا وإلحاقه مع المقالة. على كل حال وبخصوص امتنان الأرمن للشعب العربي فإنه كان ولا زال مفعمًا بأطيب وأخلص المشاعر، وعلى استعداد للتضحية وتكريم الشعب العربي إلى الأبد.

الأرمن بجميع مشاربهم، وجميع أنواع توجهاتهم وأماكنهم من المحيط إلى الخليج لا يخفون محبتهم وامتنانهم للشعب العربي، هذه عقيدة ثابتة عند كل الأرمن فصديقُ العرب صديقٌ للأرمن وعدوُ العرب عدوٌ للأرمن.

في بدايات القرن العشرين كان وضع مهجر الأرمن في دول الشرق الأوسط العربية مقبولًا، ويتمتع فيه الفرد الأرمني بكل مزايا ومحاسن البلد التي يعيش فيها، وكذلك الصعوبات الروتينية التي يعاني منها الأرمن وبقية الجاليات، مثل قوانين الإقامة والعمل ...الخ ، التي بدأت تشتد في الفترة الأخيرة مما أدى إلى إحجام أفراد الجاليات الأجنبية عن القدوم إلى دول الخليج نسبيًا.

مساهمة الارمن في تطور دول الخليج

أما فيما يخص ماهية المساهمة التي قدمّها الفرد الأرمني، والتي كانت إضافة في مجال الصناعات بوجه عام، وفي مجال الحديد وأعمال الحديد، فإنه يمكنني وبكل تواضع أن أذكر أكثر من مجالٍ وأكثر من نموذج الذي كان لي الفضل في إيجاده أو تحسينه أو تعديله في دولة الكويت العزيزة، وإنّ إختياري للحديد أو الأعمال الحديدية يأتي طبيعيًا، لأن الحديد هو عملي واختصاصي الأساسي مرفقًا مع بقية المعادن الصناعية مثل البرونز والنحاس والألومنيوم والاستانلس ستيل... الخ ،التي كنت أتاجر بها على شكل نصف مصنع أو أصنع طلبات اختصاصية منها.

كان مصنعنا الرائد والأول في صناعة أجهزة ومعدات خفيفة ومتوسطة لطلبات السوق الكويتي التي لا يتوفر منها هنا في السوق، أو بضائع تأخذ وقتًا طويلًا في

استيرادها أو سعرها غالٍ في منشئه، ولقد كان يأتي إلينا أصحاب المصلحة لتصنيعها لهم، وكنا نسمع شكرهم لنا، والمديح لجودة البضاعة المصنعة.

وكان لنا نشاط في مجال آخر هو الأبواب والبوابات الأوتوماتيكية الخاصة بالفلل، التي كنا نتعامل معها كإحدى المنتجات بجانب أعمال أخرى، مثل أبواب الشتر والأبواب الجرارة أو ذات الضلف، وإنّ عملية تسويقها أخذت منّا الوقت الطويل والصبر.

في فترة تسعينيات القرن الماضي كانت غالبية بوابات الفلل تعمل يدويًا، حيث كان من الضروري فتح الباب بأقصى سرعة لكي لا يعطل السير في الشارع بسبب توقف السيارة، ونحن استغلينا هذا الوضع وانتهزنا الفرصة، وطرحنا في السوق موديلات متعددة من الماكينات لفتح الباب بالريموت كنترول، بحيث يكون دخول المنزل سهلًا وبدون مخاطر. وأيضا جلبنا إلى السوق أبواب الرولادور، وكنا أول شركة تأتي بهذه الموديلات وتسوّقها، واليوم بعد مرور 30 سنة من تلك البداية، أصبحت غالبية البيوت في الدور الأرضي أو السرداب تستخدم الموتورات الحديثة ذات المزايا المتقدمة.

كانت شركتنا من المبادرين لتحديث الأجهزة التي تستعملها، ولا تقبل العمل على أجهزة وأساليب موديلات قديمة، ذلك أنه قبل حوالي أكثر من 40 سنه تقريبًا، بينما كانت أجهزة الكمبيوتر غير شائعة وليس لها مستعملين كثر في ذلك الوقت، كنا نحن نستعمل الكمبيوتر لإدارة أعمالنا، وهكذا نكون أولى الصناعيين اللذين أدخلوا الكمبيوتر في الصناعة الفردية بالكويت.

نحن كنا حريصين لرفع مستوى الجودة والإتقان بأي مصلحة كنا نعمل بها. وتم اثبات هذا الإدعاء من فم سعادة سفير دولة الكويت في بيروت أثناء معرض Project Lebanon 95، حيث بعد زيارة الرئيس الراحل رفيق الحريري جناحنا في المعرض، والإهتمام الكبير الذي أبداه لمنتوجاتنا المعروضة، وإعجابه بها، قال لسعادة السفير "يا سعادة السفير الظاهر بأننا سوف نشتري منكم بعد أن كنا نبيع لكم" وبعد مغادرة الرئيس لجناح دولة الكويت، قال لي سعادة السفير "بيضتّ وجوهنا يا سيد كارو بيض الله وجهك".

وإن بعض زبائننا ذوي الخبرة في السوق العالمي يقارن جودة أعمالنا بجودة البضائع والسيارات الألمانية الأفضل في السوق المحلي وأغلاه. أحد زبائننا الذي كان قبطان لطائرة 747 بوينج الكويتية، قال برضى موجهًا كلامه لي, "تعرف يا معلم كارو بأنني بحكم مهنتي كطيار أسافر كثيرا، وأنني منذ فترة طويلة، أبحث في الكويت عن من يستطيع أن ينفذ لبيتي الذي أخطط لبناءه منذ سنوات لم أنجز العمل إلا معك، وبنجاح مستحق، وأنا سعيد بذلك وأشعر بالسعادة والرضا بهذا الإنجاز الموفق".

مثله مثل أمثال كثيرة منذ أكثر من 40 سنة، شهر بعد شهر، سنة بعد سنة، وبالبرهان نستطيع أن نجزم، بأننا شاركنا بعملنا المتواضع في أن نساهم برفع مستوى جودة الأعمال في مجال عملنا، وشاركنا في رفع سمعة الكويت عاليًا في الكثير من المحافل، وهذا كان مساهمتنا المتواضعة للمشاركة في سمعة البلد الذي نقيم فيه، والذي يوفر لنا ولجاليتنا الإقامة السهلة، وكذلك الأمن والأمان.

واليوم بعد مرور 50 سنة تقريبًا منذ تأسيس الشركة الخاصة "شركة مركز المعادن الصناعية " أي منذ 1975، أصبح لشركتنا صيتٌ وسمعة ذهبيةٌ، وهذا ما يشهد عليه

غالبية زبائننا الذين نعمل معهم طوال السنوات، وإننا معروفين في السوق باننا "شركة صحيح أسعارها مرتفعة ولكن شغلهم نظيف ومتقن".

شركتنا تعمل وتتاجر بالحديد ومتخصصة في صناعة اعمال الديكور المعدني، مثل بوابات وأسوار وحديد ودرابزينات والشرفات للفلل والقصور، وكان آخر قصر عملنا فيه قصر فاخرٌ لأحد الامراء القطريين المكرمين في الدوحة لجميع أقسام القصر المطلوبة فيه أعمال ديكورات حديدية ونحاسية، كما اننا مشهورون بنفس القدر في أعمال الاستانلس ستيل والنحاس والبرونز في ديكورات الفنادق, وكذلك الدواويين الحكومية ومقرات الشركات المحلية والعالمية، مثل تكسية العواميد والحوائط البرونزية، وأعمال فاخرة لمواقع خصوصية، كما للشركة فرعٌ لتوريد وتركيب وتشغيل الأبواب الاتوماتيكية الجرارة والعادية، وأبواب شتر متعددة للاستخدام المنزلي والصناعي والمقاوم للحريق.

نحن نفذنا الدرابزينات البرونزية لمبنى السفارة الأرمنية وبيت السفير في إمارة أبو ظبي.

...أما بخصوص عائلتي أنا شخصيًا، وتفاصيل تكوينها، فقد كانت تقليديةً، وذات مستوى مناسب لطبيعة عملي ودخلي المالي، بحيث كما وعدت أختي بأنني لن أعود إلى مدينتي حلب إلا بعد تحقيق النجاح، والذي تحقق نسبيًا في السنوات الأربعة الأولى، بحيث استطعت أن اكتسب الخبرة الفعلية في السوق الكويتي، من حيث معرفة متطلبات السوق فنيًا ومهنيًا، وحجم السوق، وعرفت ماهية البضائع المطلوبة والمفقودة أصلًا.

وهكذا بعد أربع سنوات من الكدح والعمل الشاق أخذت إجازة إلى حلب وأنا راضٍ عن نفسي، بأنني حققت ما كنت أصبو اليه من التوفيق والنجاح، حيث أنني كنت قد بلغت 29 عامًا، مما يعني بأن موعد الزواج قد حان، فلذا لم يكن هناك مفرٌ من البحث عن الفتاة المناسبة للخطبة والزواج. بدء البحث عنها وخاصة من الوالدة، وبعد البحث بين الأقارب أولًا، من ثم أفضل وأنسب بنات الحي، ووجدت ما كنت أبحث عنها، وأصبحت أم عيالي (سيلفا بانيكيان)، وقد أقيمت حفلة الخطبة في حلب، وتبعها حفلة الزواج بعد سنة تقريبًا، والذي تكلل في حلب أيضًا، وتبعها الاستقرار في الكويت، وانطلاقة الحياة العائلية حسب الأصول الذي نتج عنه بأننا رزقنا بولدين وبنتين، درسوا وتخرجوا من أرقى المدارس والجامعات الكويتية واللبنانية.

بناتي الأثنتين متزوجات، وأولادي الصبيان كبيرهم متزوج ولي منه حفيدان، والآخر ليس بعد، والولدان يعملان في شركتنا بوظائف مدراء اقسام، وجميعنا أي الوالدين والأولاد والأحفاد نقيم في الكويت بلد الخير منذ 1971، حيث لم نغادرها منذ ذلك التاريخ للاقامة غير مدة سنة تقريبًا أثناء الغزو الصدامي الغادر عام 1990 ومن أجل الإجازات السنوية والمناسبات الخاصة.



أحدى اعمالنا من الحديد المطروق والبرونز لاحدى قصولا الامرأ, دوحة-القطر
باب مدخل رئيسي لاحدى فلل الكويت من التيتانيوم الذهبي



نصب العرفان الجميل من الشعب الارمني الى الشعب العربي



شركة مركز المعادن الصناعية : صورة جماعية لقسم الاعمال المعدنية

THE ARMENIANS IN THE GULF STATES

(Summary)

Giragos Kouyoumjian
imcck@imcck.com

The paper is an autobiographical overview of a career man who was born in Aleppo but, due to economic difficulties, decided to follow in the footsteps of his brother who had left for Kuwait to realize his life's dreams.

Kouyoumjian, the author, narrates how during his first years in Kuwait he was able to save money, as he worked in the remote hinterland where there was no opportunity to spend. With this small capital he went back to Aleppo, got married and established his family in Kuwait for the next half a century.

The author describes the stages he passed through while developing and making his company grow further, making it competitive in Kuwait. His company was one of the very first that made good use of technological developments by using the computer. Eventually, his quality work and his professional approach made his company attain a significant place in the Kuwaiti market of iron gates which function by remote control. His company participated in several international exhibitions and became one of the hallmarks of Kuwaiti industry.

Alongside his contribution to the progress of Kuwaiti industry, Kouyoumjian contributed to Arab newspapers of the Gulf, like *AlQabas*, as well as *AnNahar* of Beirut, *AlHayat* of London and the *AlShark AlAwsat*. His Arabic articles enlighten the Arab reader on the Armenian Genocide, the Karabagh Self-determination conflict, Arab-Armenian friendship, Armenian culture, etc.

Furthermore, the paper provides a broad overview of the Armenians in the Gulf Arab states.

Յիշատակներ Քուէյթէն (1982-1992)

ՏԻԳՐԱՆ ՃԻՆՊԱՇԵԱՆ
dikranjinbashian@gmail.com

1982ի ամառը, Ֆրանսայի մէջ քառամեայ գործուղումս աւարտած՝ կը պատրաստուէի վերադառնալու Լիբանան եւ շարունակելու ուսուցչական ասպարէզս: Պէյրութ գրաւուած էր Իսրայէլի կողմէ եւ լուրջ կասկածներ կային աշնան դպրոցներու վերաբացման առնչութեամբ: Անակնկալօրէն ստացայ Քուէյթ տեղափոխուելու եւ ստանձնելու նորաբաց ճեմարանի (երկրորդական բաժին) տնօրէնութիւնը: Քուէյթի հայօճախին եւ իր դպրոցին մասին ոչ մէկ տեղեկութիւն ունէի: Բնականաբար առաջին հակազդեցութիւնս մերժողական եղաւ: Սակայն զանազան բարեկամներու քաջալերանքը, մանաւանդ մեծի տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. աթոռակից կաթողիկոսի միջամտութիւնը՝ փոխել տուին մերժումս եւ սկսայ նախապատրաստուիլ մեկնելու նոր ու անծանօթ աշխատավայրս:

Օգոստոս 1982ի աւարտին հասնելով Քուէյթ, առաջին հերթին ծանօթացայ հայօճախին եւ իր դպրոցին: Քուէյթի ազգային վարժարանը հիմնուած է 1960ի աշնան, խումբ մը ազգայիններու նախաձեռնութեամբ՝ «Հայ-արաբ վարժարան» անունով: Ունեցած է խառն աշակերտութիւն, ուր հայերը եղած են փոքրամասնութիւն: Սկզբնական շրջանին դպրոցը ունեցած է մանկապարտէզի բաժին, եւ նախակրթարանի Ա. եւ Բ. դասարանները: Տարի մը ետք, դպրոցին ղեկավարումը հիմնադիր մարմնէն կը փոխանցուի եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ դպրոցը կը շարունակէ գոյատեւել յաջորդ տարիներուն, զարգանալով, մեծնալով եւ վարձու շէնքերէն տեղափոխուելով սեփական դպրոցական շէնք:

Քուէյթի ոչ-պետական սեփական վարժարանները երկու տեսակ են: Մեծամասնութիւնը քուէյթեան պետական ծրագիր գործադրող, պետական վարժարաններուն համապատասխան եղող դպրոցներ են: Այս դպրոցները ենթակայ են կրթական նախարարութեան խիստ հսկողութեան: Գոյութիւն ունին նաեւ զանազան պետութիւններու կրթական ծրագիրերուն հետեւող դպրոցներ, որոնք օտար դպրոցի կարգավիճակ ունին: Այս դպրոցներու վկայականները միջպետական համաձայնութիւններու հիմամբ, համազօր կը համարուին քուէյթեան «ընդհանուր երկրորդական» վկայականին: Այս դպրոցներուն բոլորն ալ կը հովանաւորուին դեսպանատուներու կողմէ:

Պատահած է այնպէս, որ Քուէյթի հայ ազգային վարժարանը ունենայ օտար դպրոցի կարգավիկճակ: Այս կարգավիճակը հնարաւորութիւն կու տայ գործադրելու հայկական կրթական ծրագիր, որ բնականաբար հայաստանեան չէ, քանի որ Հայաստան անկախ պետութիւն չէր այդ օրերուն: Ազգային վարժարանի պատասխանատուները կամաւորապէս որդեգրած են քուէյթեան պետական ծրագիրը, որոշ փոփոխութիւններով. աւելցած են հայերէն եւ հայոց պատմութիւն, իսկ իսլամական կրօնի դասանիւթը փոխարինուած է քրիստոնէական կրօնի դասանիւթով:

Սկիզբը ազգային վարժարանը մանկապարտէզ եւ տարրական դպրոց է: Յետագային կ'աւելնայ միջնակարգ բաժինը (մինչեւ Ը. դասարան) եւ այս բաժնէն իր առաջին շրջանաւարտները կու տայ 1976ին: Նոյն տարին, կրթական նախարարութիւն կը դիմուի երկրորդական բաժին ունենալու համար: Արտօնութիւնը կը տրուի եւ 1976-77ին դպրոցը կ'ունենայ երկրորդականի առաջին դասարանը (Թ. դասարան): 1979-80 կրթաշրջանին ազգային վարժարանը կու տայ իր երկրորդական վարժարանի առաջին հունձքը (10 հոգի): Այստեղ կը սկսի մեծ խնդիրը. դպրոցէն տրուած վկայականները չեն վաւերացուիր կրթական նախարարութեան կողմէ, որովհետեւ չեն համապատասխաներ օտար պետութեան մը համապատասխան վկայականին:

Անմիջապէս կը սկսին ստեղծուած կացութիւնը դարմանելու կոչուած աշխատանքները: Կը ջնջուին ԺԱ. եւ ԺԲ. դասարանները եւ բանակցութիւններ կը վարուին երկրորդական բաժնին պետական վաւերացում ապահովելու համար: Գրեթէ երկու տարի բոլոր փորձերը կը բախին Քուէյթի պետական օրէնքներու արգելքին: Իվերջոյ ազգային վարժարանի տնօրէն Ասատուր Պօղոսեանի եւ ազգային մարմիններու ճիգերը կը յանգին լուծման: Կրթական նախարարութիւնը կ'արտօնէ ազգային վարժարանէն անկախ, պետական դպրոցներու համապատասխան կարգավիճակով երկրորդական վարժարան մը հիմնել, որ պիտի գործէ կէսօրէ ետք, նոյն շէնքին մէջ եւ պիտի ունենայ առանձին տնօրէնութիւն, առանձին ուսուցչական եւ վարչական կազմ, առանձին պիւտճէ եւն.: 13 Նոյեմբեր 1981ին տրուած արտօնագիրը կը հաստատէ, որ նոր դպրոցը, որուն աշակերտները միայն հայեր կրնան ըլլալ, պիտի գործադրէ քուէյթեան պետական ծրագիրը, բացի իսլամական կրօն դասանիւթէն, եւ շաբաթական հինգ պահեր կը տրամադրէ հայերէնի եւ հայոց պատմութեան համար: Այս նիւթերուն արդիւնքները նկատի չեն առնուիր դասարանափոխութեան համար:

Գաղութը գործի կ'անցնի անմիջապէս. կը կառուցուին վարչական նոր գրասենեակներ, գիտաշխատանոց եւն.: Ուսուցչական կազմ կը յառաջանայ եւ տնօրէնի փնտռտուք տեղի կ'ունենայ:

Վկայականի եւ ուսուցչական փորձառութեան պայմաններու հիման վրայ, կրթական նախարարութիւնը կու տայ իր նախնական համաձայնութիւնը:

...1982ի Օգոստոսի վերջերուն Քուէյթ հասնելէս ետք տեսակցութիւն մը ունեցայ կրթական նախարարութեան սեփական վարժարաններու տնօրէնութեան հետ: Երեւան եկաւ որ բոլորովին անծանօթ եմ քուէյթեան դպրոցական համակարգին եւ կանոններուն: Տնօրէնութիւնը պահանջեց փորձառու տնօրէնի մը նշանակումը, ինծի վերապահելով փոխտնօրէնի եւ դպրոցի սեփականատիրոջ ներկայացուցիչի հանգամանքը: Իբրեւ տնօրէն նշանակուեցաւ կրթական նախարարութեան մէջ արաբերէն լեզուի քննիչի պաշտօն վարող պաղեստինցի անձնաւորութիւն մը, որ յանձն առաւ ձեւական հսկողութիւն մը կատարել միայն:

Քուէյթի մէջ բոլոր հաստատութիւնները կը պատկանին Քուէյթի քաղաքացիներու: Օտարահպատակները, երբեմն ձեւականօրէն, երբեմն ալ իրողապէս, պաշտօնեայ են հաստատութեան քուէյթցի տիրոջ մօտ: Այդ չաշխատող տիրոջ, որ հաշուական բնոյթի եւ կեցութեան արտօնագիրերու վերաբերող բոլոր թուղ-

թերը կը ստորագրէ, գումար կը տրուի: Բարեբախտաբար ազգային վարժարանին 'տէրը'՝ Հաժ Ալի Սայէղը, ձրիաբար կը կատարէր այդ գործը, ստորագրելով իրեն ներկայացուած բոլոր թուղթերը: Այս մասին սակայն՝ աւելի ետք:

Երկրորդականի բաժինը, որ ազգային ճեմարան անունը կը կրէ, իսկ արաբերէնով ու պետական արտօնագրով կը կոչուի «Մետրեսէթ թատամոն էլահլիէ», դասաւանդութեան կը սկսի 2 Հոկտեմբեր 1982ին: Ազգային վարժարանը երկսեռ դպրոց է, սակայն ճեմարանին պարագային մանչերն ու աղջիկները պէտք է տարբեր դասարաններու մէջ ըլլան: Արձանագրուած 66 աշակերտները կը տեղաւորուին վեց դասարաններու մէջ: Ճեմարանը այս առաջին կրթաշրջանին ունի երկրորդական Ա. (Թ.), երկրորդական Բ. (Ժ.) եւ երկրորդական Գ. (ԺԱ.) դասարանները. աւարտական երկրորդական Դ. (ԺԲ.) դասարան պիտի ունենայ յաջորդ կրթաշրջանին:

Խանդավառութիւնը մեծ է հայօճախին մէջ. կարելի եղած է հաւաքագրել որակաւոր ուսուցչական կազմ մը, պետական ծրագրի նիւթերուն համար: Հայերէնագիտական նիւթերու պարագային, նախկին տնօրէն մը յանձն կ'առնէ երկու Թ. դասարաններու հայ գրականութեան դասաւանդումը, իսկ նախկին ուսուցիչ մը՝ բոլոր դասարաններու հայոց պատմութեան դասերը: Երկուքն ալ անվճար: Անվճար կը դասաւանդէ նաեւ Թ. դասարաններու ուսողութեան հայ ուսուցչուհին: Ժ. եւ ԺԱ. դասարաններու համար հայ գրականութեան ուսուցիչ գտնուած չըլլալով, ես յանձն կ'առնեմ - հակառակ պետական արգելքին - այդ դասերը: Ուսողութեան ուսուցիչը կը վերածուի հայ գրականութեան ուսուցիչի, շարունակաբար ինն տարի:

1982-83 կրթաշրջանին ազգային վարժարանն ու ազգային ճեմարանը միասնաբար ունին 812 աշակերտներ. մանկապարտէզ՝ 225, նախակրթարան (Ա.-Դ.)՝ 297, միջնակարգ՝ (Ե.-Ը.)՝ 224, երկրորդական (Թ.-ԺԱ.)՝ 66: Այդ տարին ինծի համար եղաւ - բացի հայ գրականութեան դասաւանդման համար որոշ մասնագիտացում ու փորձառութիւն ձեռք բերելէ - գաղութին, եկեղեցիին ու դպրոցին մասին տեղեկութիւն քաղելու, ծանօթանալու առիթ: Այս վերջին մարզին համար ինծի օգնեցին կրթական նախարարութեան քննիչները եւ սեփական վարժարաններու տնօրէնութեան պաշտօնեաները: Օրինակ՝ տնօրէնութիւնը նշանակեց քննիչ մը, ինծի հաշուապահական տարրական կանոնները սորվեցնելու համար: Յաջորդ՝ 1983-84 կրթաշրջանի սկիզբը, երբ նշանակուեցայ ազգային վարժարանի տնօրէն (միաժամանակ ճեմարանի փոխտնօրէն) պաշտօնս լաւագոյնս կատարելու համար պատրաստուած էի:

Քուէյթի մէջ օտար երկիրներէ եկողները ամէն տարի պէտք է վերանորոգեն իրենց կեցութեան փաստաթուղթերը: Անոնք չեն կրնար անշարժ կալուած ունենալ, ոչ ալ սեփականատէր ըլլալ ընկերութեան մը կամ հաստատութեան մը: Սեփականատէրը միշտ քուէյթցի մըն է, որուն հետ բուն ներդրողը յատուկ համաձայնագիր մը կնքած կ'ըլլայ: Դպրոցը եւս ունէր քուէյթցի 'տէր' մը. հայ գործատէրերու հետ կապ ունեցող անձնաւորութիւն մը, որուն պատկանող հողամասի մը վրայ հայերը կառուցած էին իրենց դպրոցը: Քուէյթցի տէրը նոյնիսկ օժանդակած էր դպրոցին կառուցման: Ոչ մէկ համաձայնագիր գոյութիւն ունէր դպրոցին հայկական պատկանելիութիւնը վկայող: Դպրոցին տէրը՝ Ալի Սայէղ,

անշշուկ կը ստորագրէր իրեն ներկայացուող թուղթերը, առանց որեւէ ակնկալութեան: Երբ Ալի Սայէղ դպրոցին տիրութիւնը փոխանցեց իր զաւկին, այս վերջինը՝ Հաթէմ Սայէղ, ուզեց գիտնալ թէ ի՛նչ համաձայնութիւն գոյութիւն ունի իր հօր ու դպրոցի պատասխանատուներուն միջեւ: Յայտնի դարձաւ որ ան ունէր նիւթական ակնկալութիւն: Հարցը լուծուեցաւ ազգայիններու միջամտութեամբ: Սակայն ժամանակաւոր էր բարուօք լուծումը, որովհետեւ 1987ին Հաթէմ Սայէղի մահէն ետք ժառանգորդները իրաւունք պահանջեցին: Բարձրագոյն մակարդակներու վրայ կատարուած միջամտութիւնները յանգեցան իվերջոյ լուծումի մը. Սայէղ ընտանիքը, փոխան նիւթական պատկառելի հատուցումի մը, յօժարեցաւ դպրոցը փոխանցել այլ ընտանիքի մը, որուն մէկ անդամը դպրոցի տէր նշանակուեցաւ, փոխան տարեկան հատուցումի մը:

Այս կարգի հարցերը անպակաս էին Քուէյթի մէջ. անոնց լուծումը նիւթական զոհողութիւն կը պահանջէր, թափուած մեծ ճիգերուն կողքին: Տնօրէնը իմիջիայլոց, կը մասնակցէր աշխատանքին, մանաւանդ պահանջուած գումարները հայթայթելու համար կատարուած հանգանակութեան արշաւներուն:

Ազգային վարժարանն ու ազգային ճեմարանը միաւորելու համար կատարուած են բազմաթիւ փորձեր: Ազատական մտածողութիւն ունեցող կրթական նախարար մը նոյնիսկ խոստացաւ հարցին դրական լուծում տալ: Միաւորումը կ'ենթադրէր օտար դպրոցի կարգավիճակի փոփոխութիւն: Այդ փոփոխութեամբ դասարանները կը դադրէին երկսեռ ըլլալէ, ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ միայն իրենց սեռին պատկանող աշակերտներու դասաւանդելու իրաւունք պիտի ունենային, հայերէնագիտական նիւթերը կարգափոխութեան համար նկատի պիտի չառնուէին ...եւ նման այլ մանրամասնութիւններ: Երբ ազգային մարմիններու կողմէ կատարուած դիմումներուն պատասխանելով դպրոցի կարգավիճակի փոփոխութեան առաջարկ եղաւ կրթական նախարարութեան կողմէ, մենք 1987ի Յուլիսին մերժեցինք առաջարկը: Յատկանշական է որ սեփական վարժարաններու բաժանմունքին տնօրէնը, որուն հետ բարեկամացեր էի, զարմանք յայտնեց որ առանց պետութիւն մը ներկայացնելու ապահովուած օտար վարժարանի իրաւունք մը ինչու՛ հայօճախին պատասխանատուները կ'ուզեն կորսնցնել: Գլխաւոր շարժառիթը նիւթականն էր. որովհետեւ երկու դպրոցներու առկայութիւնը մեծ ծախսեր կը պահանջէր: Կարգավիճակը եւ մեր ուզած ծրագրով դասաւանդելու իրաւունքը պահպանուեցաւ:

1984ին տօնուեցաւ ազգային վարժարանին քսանհինգամեակը փառաւոր կերպով: Բազմաթիւ միջոցառումներ եղան, իսկ եզրափակիչ հանդիսութեան ներկայ եղան պետական պատասխանատուներ, Լիբանանի եւ Սուրիոյ դեսպանները եւ հոծ բազմութիւն: Քոյէթահայութեան համար հպարտանքի տօնական օրեր էին:

Ազատօրէն դպրոցական ծրագիրը կազմելու իրաւունքը գործադրուած էր յարաբերական կերպով: Քուէյթի ազգային վարժարանը որդեգրած էր քուէյթեան պետական ծրագիրը, իսլամական կրօնի զեղչումով եւ հայերէնի, հայոց պատմութեան եւ կրօնի յաւելումով: Այս վերջին նիւթերը չունէին յատուկ ծրագիրներ եւ կը դասաւանդուէին ըստ որդեգրուած դասագիրքերու ծրագրին: Դասագիրքերը կը ներմուծուէին - քիչ բացառութիւններով - Հալէպէն: Արտաքնապէս

դպրոցական աշխատանքը բարելաւող կը թուէր, մանաւանդ եթէ նկատի ունենայինք գնահատումի բարձր միջինները: Առաջին երկու տարիներու փորձը ցոյց տուաւ սակայն, որ արձանագրուած փայլուն արդիւնքները կապ չունէին իրականութեան հետ: Ուսումնական ընդհանուր վիճակը խիստ անբաւարար էր, արդիւնք՝ ուսուցչական կազմի կրթական մակարդակի եւ մանկավարժական ունակութեան թերութիւններուն: Ուսուցչական կազմին մէջ մեծ էր թիւը միայն նախակրթարան աւարտածներու կամ թերի միջնակարգ ունեցողներու: Լիբանանէն եւ Սուրիայէն հրաւիրուած քանի մը ուսուցիչները, որոնք գէթ երկրորդական վարժարան մը աւարտած էին, չէին կրնար կացութիւն փրկել: Դասաւանդութիւններուն մեթոտի պակասը համատարած էր:

Կացութիւնը բարելաւելու համար ձեռնարկուեցաւ ուսուցիչներու վերապատրաստումին, նոյնիսկ պատրաստման հետեւողական աշխատանքի: Աշխատանքը նախ սկսաւ մանկապարտէզէն եւ նախակրթարանի առաջին ու երկրորդ դասարաններէն: Աւելի ուշ, տարածուեցաւ նաեւ այլ բաժիններու վրայ: Տնօրէնութեան կատարած աշխատանքին անուղղակիօրէն օգնեց Քուէյթի կրթական նախարարութիւնը՝ խստացնելով դասաւանդելու իրաւունքի շնորհման պայմանները եւ արգիլելով արտասահմանէն առանց համալսարանական վկայականի ուսուցիչներ հրաւիրելը:

Քուէյթի ազգային վարժարանին մէջ ամէնէն դժուար համարուող նիւթերը հայերէնագիտական դասանիւթերն էին: Մեթոտի բացակայութիւնը այս մարզին մէջ աւելի ակներեւ էր:

Պաշտօնավարութեան երրորդ տարին փոփոխութեան ենթարկեցի – հոգաբարձութեան հետ համախորհուրդ - դասաբաշխումի տախտակը, նպատակ ունենալով զօրացնելու թէ՛ հայերէնի եւ թէ՛ արաբերէնի ու անգլերէնի իւրացման մակարդակը: Փոխուեցան նաեւ որոշ դասագիրքեր:

Կատարուած փոփոխութիւնները ուսուցիչներու կողմէ սկիզբը դրական արձագանգ չգտան, սակայն արդիւնքներու բարելաւումին հետեւանքով, գոհունակութեամբ որդեգրուեցան: Ծնողներու վերաբերումը եւս նախ ժխտական եղաւ, սակայն հետզհետէ արժանացաւ դրական արձագանգի:

Քուէյթի հայ գաղութը կազմուած է աշխատանքի համար եկած արհեստաւորներէ, որոնք իրաւունք ստացած են բերել նաեւ իրենց ընտանիքները: Մեծամասնութիւնը Հալէպէն է, որոշ թիւ մը՝ Լիբանանէն եւ Իրաքէն, կային նաեւ իրանահայեր, որոնք Քուէյթ առաջին եկողներէն են: Վերջիններուն թիւը հետզհետէ նուազեցաւ գործնական պատճառներով, երբ դժուարութիւններ յառաջացան իրենց մեծցած զաւակներուն համար կեցութեան իրաւունք ապահովելու: Մտաւորական կարողութիւններով օժտուած մարդոց թիւը շատ փոքր է: Հաւատաւոր հայեր են, համեստ աշխատաւորներ, պատրաստակամ օգտակար դառնալու: Այս պայմաններուն տակ, ազգային, մշակութային, ընկերային, մարզական ամէն գործունէութիւն եկեղեցւոյ եւ դպրոցին ուսերուն կը ծանրանայ: Դպրոցը կեդրոնն է ազգային-մշակութային գործունէութեան: Նոյնիսկ երբ ազգային եւ մշակութային միութիւններ կը ստեղծուին ձեւականօրէն (քանի որ պետութիւնը չ'արտօներ անոնց կազմակերպումը), դպրոցն է որ կ'ապահովէ անհրաժեշտ

արտօնութիւնը, ապա կը հովանաւորէ աշխատանքը: Օրինակ, սկաուտական խումբերուն ընդհանուր խմբապետը... տնօրէնն է:

Մշակութային աշխուժութիւն կը յառաջացնէին նաեւ Հայաստանէն ժամանած արուեստագէտներու խումբերը: Այս խումբերը, որոնց կ'ընկերանար մտաւորական արուեստագէտ մը, կը հրաւիրուէին «Հայրենասէրներու միութեան» կողմէ, որուն միակ գործունէութիւնը տարեկան համերգ մը կազմակերպելն էր: Դպրոցին հետ կապ չկար: Հայաստան այցելութեան մը առիթով, այցելելով Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի նախագահին, առաջարկեցինք որ արուեստագէտներու խումբերը այցելեն դպրոց եւ յատուկ ելոյթ մը ունենան աշակերտութեան համար: Առաջարկը ընդունուեցաւ ու գործադրուեցաւ: Գրեթէ բոլոր յայտնի արուեստագէտները՝ դերասան, երգիչ, նուագող, մինչեւ Լուսինէ Զաքարեանն ու Ջիւան Գասպարեանը մասնակցեցան աշակերտութեան համար յատուկ կազմակերպուած համերգերու:

Յատուկ յիշատակութեան արժանի է Խորհրդային Հայաստանի զբօսաշրջութեան գլխաւոր վարչութեան նախագահ Հենրիկ Լիլոյեանի այցելութիւնը: Ան եկած էր Քուէյթ Խորհրդային Միութեան զբօսաշրջութեան պատուիրակութեան մը իբրեւ անդամ: Հեռաձայնեց ինծի եւ հարցուց թէ պէ՞տք է դպրոց այցելէ: Անմիջապէս գացի իր իջեւանած պանդոկը եւ պայմանաւորուեցանք զանազան հանդիպումներ ունենալ: Այցելեց դպրոց, ուր աշակերտութիւնը երգով ու արտասանութեամբ դիմաւորեց զինք, հանդիպում ունեցաւ ուսուցչական կազմին հետ, ապա նաեւ բարձրագոյն կարգերու աշակերտութեան հետ: Այս վերջին հանդիպման աշակերտ մը հարց տուաւ, թէ ինչու՛ Ղարաբաղը չէր միացուեր Հայաստանին, որուն պատասխանեց թէ ի՛նչ կարիք կայ, Հայաստանը խորհրդային է, Ղարաբաղը եւս խորհրդային է...:

1988ին, երբ խանդավառուած էինք ղարաբաղեան շարժումով, տեղի ունեցաւ Սպիտակի երկրաշարժը: Յուզումը շատ մեծ էր. դպրոցն ու եկեղեցին դարձան կեդրոններ օժանդակութիւն հաւաքելու համար: Սննդեղէն, հագուստ, դրամ, բժշկական սարքաւորումներ եւն. երեք բեռնատար օդանաւերով տեղափոխուեցան Երեւան: Երկրորդ թռիչքով ես եւս մեկնեցայ Երեւան, ապա Ախուրեանի եւ Անիի շրջաններուն մէջ մասնակցեցայ բաշխումի աշխատանքներուն: Աւելի ուշ, 1992ին, Քուէյթի հայօճախը ստանձնեց Սպիտակի մէջ դպրոցի մը կառուցումը: Ես կը գտնուէի արդէն Հայաստան. ինծի վստահուեցաւ կառուցման հսկելու եւ հանգանակուած գումարը ծախսելու պարտականութիւնը:

1990 Օգոստոս 2ին, իրաքեան բանակը ներխուժեց Քուէյթ եւ գրաւեց զայն: Ամառնային տաքը այնքան սաստիկ էր, որ այդ թուականին բնակիչներէն շատեր, անոնց կարգին ուսուցիչներ եւ դպրոցի պաշտօնեաներ, արդէն կը գտնուէին երկրէն դուրս: Դէպի Հայաստան ուղեւորութենէ մը նոր վերադարձեր էի Պէյրութ, երբ իմացայ որ փաստօրէն Քուէյթի պետութիւնը դադրած է գոյութիւն ունենալէ: Դպրոցը փակուեցաւ եւ աշակերտութեան մեծամասնութիւնը – հալէպցիներ – մնացին առանց դպրոցի: Սեպտեմբերի սկիզբը, այժմ հանգուցեալ կինս, որ վարիչ-մանկապարտիզպանուհին էր, եւ ես գացինք Հալէպ եւ այնտեղի ազգային իշխանութիւններուն թոյլտուութեամբ աշակերտները տեղաւորեցինք տեղական դպրոցներու մէջ: Յաջորդ ամառը, 1991ին, Մ. Նա-

հանգներու զինուորական միջամտութեամբ Քուէյթը ազատագրուեցաւ ու դպրոցը վերաբանալու կարելիութիւն ստեղծուեցաւ: Արդէն կը գտնուէինք Հայաստան, այնտեղ հաստատուելու որոշումով: Դպրոցը վերաբանալու համար կրթական նախարարութիւնը անհրաժեշտ համարած էր տնօրէնին ներկայութիւնը: Հրաւիրուեցանք եւ 1992ի Օգոստոսին մեկնեցանք Քուէյթ:

Քուէյթի հայութիւնը Քուէյթի 1990ի գրաւումին, ապա Ծոցի պատերազմին պատճառով յանկարծ կորսնցուց իր ծաղկեալ, կազմակերպուած եւ հոգեւոր-մշակութային կեանքը: Ազգային վարժարանն ու ճեմարանը, որոնք միասնաբար ունէին 750է աւելի աշակերտութիւն, 1991-92 կրթաշրջանը սկսան միայն 92 աշակերտներով, բաժնուած մանկապարտէզէն երկրորդականի աւարտական 15 դասարաններու վրայ: Ազգային վարչութիւնը չվարանեցաւ առնելու այս յանդուգն քայլը, շատ լաւ գիտնալով որ կը վերցնէր զոհողութիւններու հսկայ բեռ մը: Դպրոցը գործեց երկու շրջանով: Առաջին շրջանը, որ կը փոխարինէր 1990-91 կրթաշրջանը, սկսաւ 24 Օգոստոս 1991ին եւ աւարտեցաւ 30 Յունուար 1992ին: Երկրորդ շրջանը սկսաւ 2 Փետրուար 1992ին եւ տեւեց մինչեւ 25 Յուլիս 1992: Աշակերտութեան թիւը հետզհետէ աճեցաւ նոր եկողներով: Երկրորդ շրջանը սկսաւ 138 աշակերտներով եւ աւարտեցաւ 232 աշակերտներով: Մենք, կինս ու ես, դպրոցի վերակազմակերպումը եւ հինէն մնացած հարցերու հաշուեյարդարը կատարելէ ետք, 1992ի Մարտին մեկնեցանք Հայաստան: Դպրոցի տնօրէնութիւնը ստանձնեց փոխտնօրէն Աւետիս Աքթաւուքեանը:

1992ի Մարտէն ետք, քանի մը առիթներով այցելած ենք Քուէյթ: Յատկապէս ներկայ գտնուեցանք, 2011ին, դպրոցին յիսնամեակի փառայեղ հանդիսութիւններուն: Գաղութը թէեւ նօսրացած է, բայց կը շարունակէ աշխուժ կերպով գործել: Դպրոցի աշակերտութեան թիւը շուրջ 400 է:

1960ականներուն նորանկախ Քուէյթի մէջ նոր կազմաւորուող հայօճախին մէջ դպրոց բանալու նախաձեռնութիւնը արկածախնդրութիւն էր: Նախաձեռնողները նոյնիսկ գաղափարը չունէին դպրոցական աշխատանքի պահանջներէն, դպրոցավարութենէն ու մանկավարժութենէն: Անոնք հայեցի կրթութիւն կ'ուզէին իրենց զաւակներուն համար: Աւելի քան վաթսուն տարիներէ իվեր դպրոցը կը գոյատեւէ, միշտ շրջապատուած մտաւորական կարողութիւններով համեստ, սակայն հաւատաւոր ու ծառայելու պատրաստակամ հայորդիներու կողմէ: Յարգանք՝ մահացողներու յիշատակին, կորով եւ յարատեւութիւն՝ մնացողներուն:

MEMORIES FROM KUWAIT
(1982-1992)
(Summary)

Dikran Djinbashian
dikranjinbashian@gmail.com

The author, who was the director of the Armenian National School of Kuwait for ten years between 1982 and 1992, reminisces about his educational experience at the school. He briefly presents the story of the growth of the school from a kindergarten and the first two elementary classes to a full-fledged secondary school, and the difficulties the school faced due to the educational laws of the state of Kuwait.

The author explains that the Kuwaiti educational system recognized two categories of schools: those which functioned with the Ministry of Education curriculum and a small number of schools which were under the auspices of their embassies, followed the curricula of their corresponding countries and had their diplomas endorsed by the relevant state.

The Armenian school was a special case as it mostly followed the state curriculum but added a set of Armenian subjects and had its diploma recognized by the Kuwaiti state. However, a problem arose when the diplomas of the first graduates of the secondary school were not recognized by the Kuwait ministry of education as they had not been endorsed by the embassy of any foreign country!

Eventually the crisis was resolved by separating the elementary school from the secondary and establishing two schools on one campus, with separate administrations, budgets, etc.

A second crisis the school faced was the issue of its ownership. According to Kuwaiti law, no foreigner can have ownership in Kuwait. The issue was addressed through soliciting a Kuwaiti citizen to be the 'owner' of the school.

The author notes that Iraq's invasion of Kuwait was a huge challenge to the Armenian community of Kuwait and its institutions, particularly the school, which had a significant fall in its student population. The author notes that a large number of the students had taken refuge in Aleppo, where he had to coordinate their inclusion in local Armenian schools with the support of both the Aleppo Armenian and the Kuwaiti Armenian authorities. With the liberation of Kuwait the Armenian school of Kuwait reopened its doors and was able to overcome the crisis.

Տեղեկագիր[1] Քուէյթի Հայ Գաղութի Մասին [Ուղղուած՝] Ն.Ս.Օ.Տ.Տ. Զարեհ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ[2]

Անթիլիաս

Վեհափառ Տէր,

Ձերդ Ս[ուրբ] Օծութեան մասնաւոր հրահանգով եւ բարձր հաւանութեամբ՝ որ ինքնին ընդառաջում մըն էր Քուէյթի հայ գաղութին հոգաբարձութեան մատուցած խնդրանքին, մօտաւորապէս չորս շաբաթներ առաջ հոգեւոր առաքելութեամբ մեկնեցայ Քուէյթ Ամանորի եւ Ս. Ծննդեան զոյգ տօներու առթիւ, Հայ Եկեղեցւոյ յատուկ ծիսական արարողութիւններով եւ սուրբ աւետարանի քրիստոսատուր պատգամներու ճամփով հոգեկան մխիթարութիւն տալու, կեանքի պայմաններու բերումով անհովիւ մնացած շուրջ 5000 հաշուող հայ նորահաստատ գաղութին: Ըսեմ անմիջապէս որ չորս շաբաթներու համեմատաբար կարճ այս շրջանը հոգեկան բաւարարութեան եւ մեծ ուրախութեան առիթ մը եղաւ ինծի համար անձնապէս, որովհետեւ առաջին անգամն էր, որ պատեհութիւնը կ'ունենայի որպէս հովիւ ուղղակի յարաբերութեան մէջ մտնելու մեր պատուական ժողովուրդին հետ եւ անձնապէս հաստատելու այն ազնիւ զգացումներն ու անվերապահ սէրը, զորս կը տածէին ընդհանրապէս Հայ Եկեղեցւոյ, բայց մասնաւորաբար կիլիկեան Ս. Աթոռին եւ անոր արժանընտիր գահակալին հանդէպ: Իւրաքանչիւր օր առիթ մը եղաւ սիրոյ եւ յարգանքի արտայայտութեան: Ու, արդարեւ, տրուած հակիրճ տեղեկատուութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ այս բոլորին գրաւոր արձանագրութիւնը:

1960ի Դեկտեմբերի 29ին օդային ճամփով մեկնեցայ Քուէյթ, ուր արժանացայ ջերմ ընդունելութեան մը, բոլոր քուէյթահայերէն՝ անխտիր: Հիւրը եղայ հոգաբարձութեան ատենապետ Երուանդ Պարսումեանի: Յաջորդ օրն իսկ՝ Ուրբաթ, մատուցի սուրբ պատարագ, որուն ընթացքին կարդացի նաեւ ձերդ սուրբ օծութեան սրբատառ կոնդակը՝ նուիրուած Կիլիկիոյ կաթողիկոսութեան յԱնթիլիաս հաստատման եւ դպրեվանքի հիմնադրութեան երեսնամեակին, ինչպէս եւ քարոզեցի Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ դպրեվանքին ունեցած դերը շեշտելով: Յաջորդող միքանի օրերուն ծանօթացայ հոգաբարձութեան պատուարժան անդամներուն, որոնք հարկ եղած ծանօթութիւնները տուին ինծի գաղութի ներքին կեանքի մասին: Այցելեցի տեղւոյն բողոքական եւ անկլիքան հովիւներուն՝ շնորհաւորելու Նոր տարին եւ պատշաճ բարեմաղթութիւնները ընելու: Պր. Եդուարդ Պարսումեանի ընկերակցութեամբ ներկայ գտնուեցայ նաեւ հնդիկ (Մալապար) հոգեւոր հովիւին ի պատիւ տրուած թէյասեղանին[3]: Հոգաբարձութեան կարգադրութեամբ կատարեցի նաեւ կարգ մը անհրաժեշտ խորհուրդներ:

---

[1] «Տեղեկագիր Քուէյթի հայ գաղութի մասին», *Հասկ*, 1:1961, Անթիլիաս, էջ 38-39:

[2] Նիւթը մեր ուշադրութեան յանձնեց դոկտ. Անի Ֆիշենքճեան:

[3] ***Ծ.խ.***- Մալապարի Եկեղեցին (Հնդկաստան) կապուած է ասորի ուղղափառներու Անտիոքի պատրիարքութեան, որու այժմու գահակալն է Ն. Ս. Իգնատիոս Եագուպ պատրիարք, իսկ կեդրոնատեղին՝ Դամասկոս:

Յունուար 6ին՝ Քրիստոսի Ս. Ծննդեան տօնին, տեղի ունեցաւ մեծահանդէս սուրբ պատարագ եւ ջրօրհնէքի արարողութիւն՝ ի ներկայութեան մեծ բազմութեան մը: Նոյն օր, յետմիջօրէին ներկայ գտնուեցայ օրուան տօնին առթիւ նորակազմ կիրակնօրեայ վարժարանին կողմէ պատրաստուած հանդէսի մը: Իսկ յաջորդող օրերուն կատարեցի գերեզմանօրհնէքի եւ տնօրհնէքի արարողութիւնները:

Եկեղեցական եւ հոգեւոր կեանքի այս բոլոր արտայայտութեանց ընթացքին, վեհափառ տէր, զգացուեցաւ բացարձակ անհրաժեշտութիւնը եկեղեցւոյ նիւթական շէնքին, որուն սրբազան կամարներուն տակ իւրաքանչիւր քուէյթահայ անհատ կը ցանկայ կեդրոնացնել իր ազգային ու եկեղեցական կեանքը: Կը հաւատամ, որ անիկա մեծապէս պիտի նպաստէ տեղւոյն ազգային մարմինին հեղինակութեան եւ վարկի բարձրացման, որովհետեւ անիկա պիտի ըլլայ տեսանելի վկայութիւնը եւ շօշափելի արդիւնքը մինչեւ այժմ տարուած գնահատելի եւ վարձատրելի աշխատանքներուն: Հոգաբարձութեան մեծագոյն իղձն է, որ օր առաջ իրականանայ եկեղեցի մը ունենալու ծրագիրը՝ ի շահ եւ ի միութիւն քուէյթահայութեան: Այստեղ պէտք է յիշել, որ կարգ մը անհատներու ձեռնարկութեամբ կազմակերպուած է դպրոց մը՝ «Քուէյթի հայ վարժարան» անուամբ, որուն կ'աշակերտեն նաեւ արաբ ուսանողներ:

Նոր տարիին, հոգաբարձութեան գիտութեամբ եւ հաւանութեամբ ներկայ գտնուեցայ այս վարժարանի Ամանորի հանդէսին, հայերու կողմէ ներկայացուող ձեռնարկի մը որպէս քաջալերութիւն: Այս առթիւ տպաւորութիւնս է, որ դպրոցին կը պակսի անհրաժեշտ կազմակերպութիւնը, եւ անմիջապէս միջոցներ պէտք է ձեռք առնուին անմիաբանութիւն յառաջացնող այս հարցը լուծելու, մանաւանդ երբ ներկայիս բաւական լուրջ փափաքներ կան առ այդ՝ ծնողական շրջանակին մէջ:

Դպրոցի շուրջ ծագած անցաւոր վէճէն դուրս, ուրախութիւն էր ինծի համար նկատել, որ հայեր սիրոյ եւ համերաշխութեան մթնոլորտի մը մէջ կ'ապրին եւ իրարու չեն զլանար հարկ եղած աջակցութիւնը:

Նոյնպէս հայ համայնքը քրիստոնէական միջյարանուանական կեանքին մէջ տեղի ունեցող ժողովներուն կամ եկեղեցական համագործակցութեան այլ արտայայտութիւններուն կը բերէ իր մասնակցութիւնը: Այսպէս, «Քուէյթ քրիսչընզ քաունսըլ»ի հերթական ժողովին, որուն հրաւիրուած էր Հայ Եկեղեցին եւս, մասնակցեցայ ես անձնապէս՝ ընկերակցութեամբ հոգաբարձութեան քարտուղար Յակոբ Յովհաննէսեանի եւ Հայց. Եկեղեցւոյ անունով արտայայտուեցայ Քուէյթի քրիստոնեաները հետաքրքրող օրակարգի հարցերուն շուրջ:

Ահաւասիկ, վեհափառ տէր, ամփոփ գիծերու մէջ պատկերը այն չորս շաբաթներուն, զորս անցուցի Քուէյթ, տեղ մը, ուր սովորական դարձած կարծիքի մը համաձայն, եթէ երբեք հայեր գացած են նիւթական ակնկալութիւններով, սակայն եւ այնպէս իրենց կարելին կ'ընեն՝ փոքրիկ այլ բարգաւաճ գաղութ մը կազմակերպելու հոն, միացեալ ջանքերով եւ նոյն մտահոգութիւններու առաջնորդութեամբ: Կառավարութեան բարի վերաբերումը եւ երբեմն նոյնիսկ նիւթական ու բարոյական անգին քաջալերանքը մեծապէս կ'օգնէ անշուշտ: Բայց անոնք իրենց յոյսը դրած են ու աչքերը յառած՝ այս հաստատութեան, որմէ կը

սպասեն ե՛ւ հայրական խնամք, ե՛ւ բարոյական մեծ քաջալերութիւն, զոր արդէն իսկ վայելած ըլլալու քաղցր երախտագիտութիւնը ունին:

Ու այդ երախտագիտութեան որպէս արտայայտութիւն՝ ես կը բերեմ Ձեզի անոնց որդիական յարգանքն ու սէրը Ձեր Ս. աջը համբուրելով, անոնց մեծ կարօտին հետ միասին:

Որդիական Յարգանօք
Մնամ Խոնարհ Որդի
Գրիգոր վարդապետ Փիտեճեան

A REPORT ABOUT THE ARMENIAN COMMUNITY OF KUWAIT PRESENTED TO CATHOLICOS ZAREH THE 1ST OF THE GREAT SEE OF CILICIA

(Summary)

Father Krikor Pidedjian

Upon the invitation of the administrative board of the Armenian community of Kuwait and the approval of Catholicos Zareh the 1st of the Great See of Cilicia, Father Krikor Pidedjian visits the Armenian community of Kuwait for four weeks, starting December 29, 1960.

During his visit Father Pidedjian meets with the authorities of the community, communicates with the community members, visits the religious leadership of other Christian communities, conducts a mass at Christmas, attends a school event in the Armenian school, which has a mixed student population, etc.

Father Pidedjian reports on his activities in Kuwait and describes the expectations of the community and their efforts to have a church established in Kuwait, which would become a unique community center attracting all the community. Father Pidedjian explains the status of the Armenian school and communicates to Catholicos Zareh the preoccupation of the community's leadership and its expectations that by linking the community to the Great See of Cilicia the community would be transformed into an institutionalized and well-organized body.

Life in the UAE, 1984 - 1990

ANNI BARSOUMIAN
anni.barsoum@gmail.com

JANUARY 8TH 1984.

The flight from L.A. to Dubai was uneventful. We were quiet and pensive.

My Lebanese husband (and sponsor) had just been promoted to Acting Area Manager of Jouzy Engineeering, a firm that specialized in road and other civil projects. Based in Beirut, like many firms it had moved its staff to Amman, Jordan at the time, and was later awarded projects in the UAE.

When I left Lebanon in 1978, I had vowed not to return to the region. Five years later, Canadian passport in hand, I was on my way to what would become my great adventure. "They are greening the desert," he tells me. He should know. For the past year he has been responsible for a UN financed experimental citrus farm in Khorfakkan, on the East Coast of the UAE.

As we approached the landing strip, the yellow lights and barren sandy landscape flashed back to the 10-year-old Anni returning to Kuwait from Beirut for her Christmas holidays. The 30-year-old adult was nowhere to be seen.

We spent the first night in Sharjah at the Grand Hotel, with a welcome fruit basket and a bottle of wine. His boss had arranged that as a gift to the new couple. The lapping of the waves on the shore, the starry night were a good omen.

I did not adapt well to our first apartment on the first floor of the recently completed–NCR building on Jamal Abdul Nasser Street, leading to the Sharjah Lagoon. The hallway toilet backing up a month after we moved in did not help.

We were both new to Sharjah City. Our first contact was my uncle Vartan Minassian's business partner, Mounir Salame. They had come to Sharjah in 1976, and my youngest cousin, Hasmig, had been born in Sharjah on May 1 the following year. Their company *Misal* had built one of the Sharjah landmarks, the Flying Saucer supermarket. A few years later my uncle left with his family for the U.S. Mounir was preparing his papers, too, and left in early 1984.

Everything was new, full of potential, but not quite there yet. A few weeks later, we completed all the basics, including exchanging my US driving licence for an Ajman one[1] and getting my residence visa stamped on my passport. My title was housewife. "Not allowed to work" was also stamped. But there was a way around that too.[2]

---

[1] By that time Sharjah had stopped the automatic conversion of US driving licenses to UAE licenses for new residents. There was a waiting time. The conversion was faster in the neighboring emirate of Ajman.

[2] Women were allowed to work in the UAE. Single women were sponsored by their companies. They were mainly teachers and office assistants. Married women were already sponsored by their husbands. Companies needed to get a labour card for them. The card was renewed every three years. It was a win-win situation for many

The hints around my needing to get a job were not at all subtle. He would bring home the daily paper at lunchtime and ask me in the evening if I had found anything interesting in the classified ads.

I was a reporter at *Monday Morning* magazine in Beirut, on a girl's trip to Amman during the war when we met. He was not comfortable with the dependent, domesticated version of me. Neither was I. His birthday is 18th February. My gift that year was a job.

The personnel agency in Dubai sent me for an interview at Deloitte Haskins & Sells, an audit firm, one of the original big six. The job was for an audit trainee. I met the partners and one of the other female trainees (who later became a partner). My starting date was March 1. The title was assistant accountant.

Thereafter I was busy learning a new trade, meeting like-minded, mainly British expatriates around the same age as myself. The senior partner, David Brewer, was 36 years old; he had already had one serious heart attack. One of the other partners left a few months later to migrate to Australia. Qualified auditors would come on two- or three-year contracts, and then move on to another posting in another office, or get promoted to managers and partners. There were six other women in the training program. Two of them were in their twenties and had just started their careers. The others were all in their early 30's and from diverse backgrounds, such as teaching, nursing and administration. The condition was that we would qualify for the ACCA exams over a period of three years, and then rise up the career ladder, if we stayed long enough. Study breaks of one week per exam were provided.

Social life was mostly work related at that time, between colleagues and regular parties and events. The audit teams rarely came to the main office. We were on assignments throughout Dubai and Sharjah. Depending on the size of the company, the teams would spend up to a month at a client's office, rotating from office to office. There was no opportunity to get bored or restless. We got along well, worked together, ate together, and took breaks together while on assignment. Long lunch breaks, depending on the venue and the client, were also part of the work.

The only time I felt I was wasting my time was when Indira Gandhi was shot on October 31, 1984. Matt, a former Head of Chemistry at Dubai College and I were working on a boring audit on a small trading firm in Dubai. It was just the two of us plodding along. Then one of us got the news. I felt frustrated stuck in this sad office while a major drama had just taken place.

Around that time, too, we started doing what most expats do in the cool season. Friends from abroad start visiting. My best friend, Tanya, and her husband came from London for a couple of weeks' holiday. The Holiday Inn Hotel in Sharjah had

---

companies. They could avail themselves of qualified staff at a fraction of the cost of recruiting from abroad. And it provided employment for "housewives" who accompanied their spouses. Many years later, the same rule would apply to the accompanying spouses of female diplomats too.

just renovated its Western Bar. It was a nice ambiance, with a small band, and quiz masters too. We spent many nights there.

A month or two after they left, Sharjah went dry. The Western Bar lost its appeal. The Sharjah Wanderers Club kept its liquor license, but it was very strict about its membership.

My brother was already living in Abu Dhabi. He was employed by Talal Abu Ghazaleh as an auditor. He would come over on weekends, or more often, we would go over. One of the first Armenians in Abu Dhabi was Berj Aprahamian, who with his wife Suzy took newcomers, like my brother, under their wing. They lived on the roof of an 8-floor building, with a view of the Abu Dhabi Corniche. They had a group of friends that came together regularly over the weekends, and organized the usual fundraiser "barahantes" at least once a year. During that period most of our non-work-related contacts were in Abu Dhabi.



I remember meeting Berj and Suzy when they visited us in Beirut sometime in the 70's, on their way to Abu Dhabi. They had lived in Kuwait in the late 50's and had moved to Abu Dhabi in late 1966. When I met them, he was the Managing Director of Brook and Khalfan Contractors. Suzy had initially worked as a lab technician in Abu Dhabi. We were introduced to her former colleague Hagop Kevorkian and his wife, Astine, and their three daughters. Hagop had moved to DPC (Dubai Petroleum Company) and was living in Dubai at that time. We visited them often, too, whenever I wanted a dose of Armenian closer than Abu Dhabi.

Suzy was still working, managing the residence of the building they were living in. She was even more outspoken and opinionated than I was, and adventurous. We became what I call all the close UAE friends, *framily*. Suzy also loved to sail. In 1984 the Abu Dhabi Sheraton had a large marina (before they built the new Corniche around the old seafront). We were invited for dinner. On my way out, looking wistfully at the boats in the marina, I told my husband that for my 40th birthday, I wanted a small yacht. I never got one.

At the end of my first year in the country, I had comfortably settled into what became a dream world of sorts.

1985

Year 2 in Sharjah started with a move to a new apartment on the sixth floor of the Ranya Building, just across the street. 1985 was not a boom year in the city,

and rents were going down. The 24-apartment block x 2 was where many of the cool people lived. It had a vacant flat on the sixth-floor roof. I left for a Christmas trip to see my parents in Montreal and came back to a new, more comfortable home a few weeks later.

I am a summer birthday girl. My husband organized a surprise birthday party where I met my first Sharjah Armenian, Nshan Basmajian, a co-owner of Zodiac Stationery, a meeting place for the community and a supplier of all office requirements. Through him I started attending church services in Sharjah's St. Michael's Church, whenever the priest, Father Oshagan Choloyan, came for his periodic visits to the UAE.[3]

We bumped into one of our neighboring couples, Bala and Ari Balakrishnayan, and soon got invited to their house for the first of several house parties they hosted during the weekend. They included game nights and specialty dinners. Bala was the CFO of the Bukhatir group, which owned the Sharjah Holiday Inn and Marbella Club, another Sharjah meeting place. He introduced us to the other Armenian family in the building, Varouj Nerguizian and his wife Nirva.

1986 – A CHILD IS BORN

By the end of the year, I was visibly pregnant and still auditing client offices. My last day of work was on January 9, 1986. Two days later our son Garen was born.

My parents came from Canada for the delivery. My father was quickly introduced to Nshan and Zodiac and would spend most of his mornings there, while my mother stayed with me and the baby. Garen was an ideal first baby, quiet, self-sufficient and alert.

In principle I was supposed to go back to work after my 45-day maternity leave, but I was called to the office before that date and asked not to come back. The reason was I had not qualified yet, and in truth, I was the only professional staff at work that had a child. All the other females were single or childless by choice or circumstance. The secretary and the bookkeeper, both females, did not count. They could take maternity leave and come back to their jobs.

Of course, I was upset. Yet after the initial disappointment and feelings of inadequacy, followed by anger at the obvious discrimination, I realized I was now totally free to enjoy being a new mother. That had not been my plan, but I now had time to bond with my baby.

My sister moved to Greece that spring. In the summer, my parents rented a small house in Selianitika in the Peloponnese, and we spent a couple of months enjoying Greek village life. Garen was six months old at the time, with a serious enough demeanor for the neighbors to nickname him "Doctor".

I started looking for a new job when I returned but realized quickly that my options as a new mother with an 8-month-old son at home and no help other than my parents when they were around, my husband, and an office boy with limited

sight would not enable me to go back to work. Moreover, the availability of good jobs was low, too. I could teach at half salary, because that is what they were paid. I could sell, again at half salary. Deloitte's was the first of the audit firms that realized the power of local hire.

I wrote a couple of articles for Gulf News weekend magazine before applying for a full-time feature writer position there. The editor, a spunky Bangladeshi woman leaving for Canada, really wanted to hire me, but apparently the editor-in-chief said "No Lebanese reporters. They are used to too much freedom." In my second meeting with her, she suggested that I would be better off working in a finance related field. The salary would be half of what I had been making, and I probably would not be happy writing mostly advertorials and easy-to-read, easy-to-explain pieces. "No politics, no religion, no controversies," she said. Once again, I was disappointed, but resolved I would enjoy this new turn of events anyway.

My brother was getting married in Abu Dhabi. Our little family was reunited once again. My sister and her husband came from Greece. It was a hectic time. The house quieted down when they left. But I also felt helpless and out of sorts alone at home with the baby.

I found out about two "toddler groups". The first one was through my husband's former colleague's British wife. Two mornings a week I would drive to Dubai so Garen could play with other toddlers, while the mothers chatted. One of those toddlers was Alia, whose British mother suggested I connect with another toddler group in Ajman Marina. That took care of another two mornings. Over time, we would spend more time in Ajman because there was a pool, and it was a nicer venue. Why Ajman? Because Sharjah was dry, and the mothers could have cocktails if they wished in Ajman. My social circle at the end of 1986 and throughout 1987 was that group. The organizer, Phyllis Burns, became my lifelong friend. We were both pregnant at the same time. Her daughter was born before mine. We both chose to stay in the UAE the summer of 1987 - She had just had her baby. I was six months pregnant, with nowhere close and safe to go. She organized renting out a nursery owned by another long-time British resident in Sharjah, and we would take our little ones to the nursery to play in the mornings.

I had also got the home help I needed once my parents left. Marilyn was literally a Godsend. She was a nurse in the Philippines. The agency blurb had none of that. She was just this tall, thin woman in a maid's uniform I picked. As I chatted with her in the early days, asking about her life and experience, she explained that she was a nurse, who had left behind her lawyer fiancé, an activist working for the Aquino campaign. What luck! My children would be safe with her.

That summer of 1987 Sharjah became a city of opportunities. There was yet another recession. People were leaving. Projects were halted. There were many vacant homes in the Emirate, and rents were dropping, once again. I was also spending most of my time with women who lived in "villas" or compounds with pools, and I wanted to live in one, too.

One summer evening another of my husband's work friends, Jean Louis Hisette, came over for a drink. I told him I was looking for a house. He guided us to a lovely villa he'd seen in the Halwan area of Sharjah.

The next day we called the agent and saw the villa. It was a single storey compound of 10 houses built around a central playground. The rooms were spacious; the house was sunny. And because the vacancy rate in the emirate was high, for the first year we would get 14 months for the same rate as the apartment before the discount.

We moved in September. We also guided some of our other neighbors, the Husseini's and the Alawi's there, and by the end of 1987, there were three families from the Ranya building occupying the empty villas.

Our daughter Maia was born in November 1987. My parents came for the delivery. By that time, due to regular parental visits, we had met with several members of the Armenian community in Sharjah and also in Abu Dhabi.

One day, while I was sitting in the garden, a neighbor knocked on the gate. He was a tall, big German walking his dog. Hearing Armenian being spoken, he introduced himself as the neighbor on the corner. His wife, Taky was from Lebanon. We had coffee together and later started visiting.

CHRISTMAS TRADITIONS

In the meantime, across from the compound we discover another Armenian family, the Tutunjians. Like us, their parents visit once or twice a year. And most importantly, the traditions are maintained, including Christmas. Oh, and we discover that we have been neighbors for three generations. Both our mothers were neighbors in Sanjak, we are neighbors in Sharjah, and our sons will be neighbors in Toronto.

They have their traditional New Year's Eve party, Armenian style, with a masked *gaghant baba* in his red suit, who knocks on the door at midnight, carrying gifts for all the children. Slowly, over time, I would take on the *Khtoum* on 5th January. And of course, because all our non-Armenian friends celebrated Christmas on the 25th, we made space for that too.

Our children would go to the "*mi orya varjaran*" on Friday mornings. It was not far away. The school too would have traditional Christmas parties.

Another Christmas tradition was Hogmanay at the Burns'. Phyllis and I saw each other regularly those early years. The Scots celebrate New Year's Day the same way we do... visiting relatives and friends, having a shot or two and sharing food. The menu was simple... barley soup, pork pie, steak pie, cheese, pudding and trifle, mushy peas, ham, mashed potatoes, whiskey brought over from Scotland too, lots of wine, and other drinks, including IronBrew to soften the effects of too much New Year's Eve partying, or too much New Year's Day. Alistair and the other Scots would wear their traditional kilts, and towards the end of the afternoon, they would entertain the visitors with their song and dance routine in the garage.

You'd never know Sharjah was a dry emirate. In the early days there were liquor shops where non-Muslims with a licence could buy liquor. Muslims, of course, had the telephone number of a Lebanese fellow who delivered from Ajman. There were also the permit-free shops in Ajman or Ras Al Khaimah where anyone could buy their drink of choice.

BACK TO WORK

Our third child, Adam, was born on 17 December, 1988, 10 days after the Spitak earthquake. We still had a full house, with my parents who had become regular visitors, but Christmas was quiet.

A few months before Adam's birth I told my husband "I am a productive woman, and I'll keep on producing. Your choice. Do I go back to work soon after this child is born, or do we have another one?" Three children in less than three years was enough for him too. "Go back to work, please," he said.

By March of that year, I had started temping, filling gaps for friends and family that had jobs and went on holiday. I then went back to my lucky agency. They quickly found me another posting at Middle East Bank...as the assistant to the Head of Personnel. It was a secretarial job. In my interview I explained that the only reason I was applying was because I had worked in a personnel agency in Canada, and I wanted to be an integral part of their hiring process. We agreed. I started working. There was very little to do. He really didn't need a secretary. He did all the work himself. Just as well, because if I had had to do any filing, I would have been fired for incompetence. I spent most of my time in the various departments, wondering what they were up to.

After a few months of getting to know how a small local bank works, I realized the discord between the founders' second generation was not conducive to a healthy work environment. The final straw was as I was preparing the intake form for a new UAE national Personnel Officer. I approached HR. No, I was not going to be an officer any time soon. Priority would be given to UAE nationals, particularly females.

I found an ad for a "Head of Risk" position. The requirement was ability to read financial statements, evaluate them, write reports. Reading and understanding French was an advantage. I applied. I walked out of the interview with an assignment to prepare a report on a large corporation; I did my homework; I also conferred with the Credit Officer of the bank where I was working over the report.

A couple of weeks later, the secretaries and officers of Middle East Bank wished me well, gave me a parting gift, and I was off to my new job on May 1, 1990. My title was Head of Risk at Banque Indosuez Dubai. The economic recession of the past years had caused many expats to flee. The bank was trying to turn around from several years of provisions and wanted to expand its corporate banking team to take on new clients. I was the first gatekeeper. Most facilities would need to be vetted by the Head Office (Paris) Credit Committee too.

It was an exciting time, and a challenging job. I loved it. And there were changes all around us.

ON AUGUST 2, 1990 IRAQ INVADED KUWAIT.

Everyone was scared. The expat family members who were still in the area started leaving. Among those expats were Keith and Randa Thomas. She is my husband's cousin. We met in a supermarket and became fast friends and family, spending time together including Christmas dinners, camping and partying. Several of our English friends left at that time too. I had a farewell party for around 30 of their friends at our house. The meals were set out on a cloth on the middle of the dining room floor. The theme was "goodbye Arabia". Attire was Emarati, as was the menu. There was cutlery, but we needed to buy two (dozen) new place settings from the souk. I still have many of those plates. They have served me well.

While the UAE was slowly being depleted of its foreign inhabitants, those left behind started making preparations for war and chemical attacks, filling bathtubs with water and taping up windows.

I was scared. But there was nowhere to run to. Lebanon was a mess. We had no other home. My parents were in the U.S. at that time. My father had survived a very serious health scare in April, while I was still at Middle East Bank. He had been hospitalized for pneumonia, and possible heart failure. My sister called and told me to get ready to come over. 24 hours later she said the danger was over, and a few months later, my parents were on the plane. They decided to join us in Sharjah, and then go to Beirut. They must have been the only people on the inward flight. When asked by surprised neighbors and friends, my mother said, "Why would I stay away from my children when they need help?"

Fortunately, the only effects of the war on the UAE were economic. Those that left slowly trickled back over time. Many stayed away. Over the next year several Kuwait based businesses and expats moved to Dubai, starting a new round of growth and prosperity[4].

Post Scriptum

Earlier this week (May 2024), we stopped in Dubai before flying to Yerevan and Beirut. The landing was into a well-lit, modern city full of high-rises and new monuments. The immigration process was seamless. The city I was writing about as a new outpost had transformed into a modern cosmopolitan space welcoming all who wish to make it their home.

---

[4] Although this article ends in August 1990, the story of life in Sharjah continued for another 13 years, then moved to Abu Dhabi in 2003. We finally left the UAE for Canada for personal reasons in January 2020. Our two younger adult children were living in Toronto. Our eldest stayed in Dubai.

ԿԵԱՆՔՍ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ (1894-90)

(Ամփոփում)

Անի Պարսումեան
anni.barsoum@gmail.com

Հեղինակուհին պատումը կը կատարէ Արաբական միացեալ էմիրութիւններուն (ԱՄԷ) մէջ, 1984-90 տարիներուն անցուցած իր կեանքին:

Պէյրութի մէջ *Monday Morning* պարբերականի թղթակից ըլլալէ, Քանատա փոխադրուելէ, հուսկ իբրեւ նոր ամոլ, 1984ին Շարժայի էմիրութիւն փոխադրուելէ ետք, ամ դրուագային ձեւով կը ներկայացնէ ԱՄԷի կեանքին համարկուելու իր ճիգերը: Այդ առումով, ան կ'անդրադառնայ սկզբնական տարիներուն իր դէմ ցցուած խնդիրներուն:

Ընկերային իր միջավայրը բնութագրելու համար, հեղինակուհին կ'օգտագործէ ***framily*** եզրը, որ յապաւումն է ընտանիք եւ բարեկամ բառերուն:

Հուսկ, հեղինակուհին կարծէք արդէն լիարժէք համարկուած վիճակ մը կ'ունենայ շուրջ քառամեայ դժուարութիւններէ ետք: Մեծ ճիգերով ձեռք բերուած այս յաջողութեան պտուղը, սակայն, կը քաղուի հազիւ երկու տարի, որմէ ետք Իրաքի Քուէյթ ներխուժումով շատ բան կ'ալեկոծուի ԱՄԷի մէջ, անապահովութեան զգացումը կը գերիշխէ, իսկ իր կեանքը նոր անկիւնադարձ մը կ'ապրի, որ ուրիշ պատում ունի եւ որ չէ ընդգրկուած այս յօդուածին մէջ:

Սէուտական Արաբիոյ Մէջ Անցուցած Տարիներս Որպէս Բժիշկ (1969-1975)[1]

ԲԺ. ՊՕՂՈՍ ԼՈՒՏԵՐ ԱՐԹԻՆԵԱՆ

20 Յուլիս 1969ին Սէուտական Արաբիոյ անապատին մէջ էջք կատարեցի, իբրեւ բժիշկ պաշտօնավարելու համար Արամքոյին պատկանող Թափլայն ընկերութեան Պատանայի կայանին մէջ, այն օրը երբ ամերիկացիները լուսինին վրայ էջք կատարեցին: 10 Հոկտեմբեր 1970ին, միքանի օրեր առաջ Լիբանան վերադարձած ըլլալով, պսակուեցայ Ռուպինա Ալահայտոյեանին հետ: Միքանի շաբաթ ետք վերադարձայ Սէուտական Արաբիա, տիկնոջս հետ եւ հոն մնացինք մինչեւ Դեկտեմբեր 1971: Երբ հոն հասանք իբր նորապսակ զոյգ, նախ բժշկապետը հրաւիրեց մեզ եւ բոլորին ներկայացուց տիկինս, իսկ յետոյ իւրաքանչիւր բժիշկի ընտանիք մեզ հրաւիրեց եւ խնճոյք սարքեց: Դեկտեմբեր 1971ին ներքին հիւանդութեանց մէջ յաւելեալ մասնագիտանալու նպատակով ընկերութեան կողմէ մէկ տարուան համար Մեծն Բրիտանիա ղրկուեցայ: Այսպէս, սկիզբը Սկովտիա փոխադրուեցանք, ուր ծնաւ առաջին զաւակս, իսկ վեց ամիս ետք՝ Լոնտոն: Մէկ տարի ետք՝ Յունուար 1973ին տիկինս եւ առաջին զաւակս Լիբանան վերադարձան եւ նոյն տարուան Յունիսին ես ալ Լիբանան վերադարձայ, ուր արդէն ծնած էր երկրորդ զաւակս: Յունիս 1973ին կրկին Սէուտական Արաբիա մեկնեցայ այս անգամ նորակազմ ընտանիքով, եւ հոն մնացի մինչեւ 1975ի սկիզբը:

Պատանա կը գտնուէր Աարաար գիւղին կից, Իրաքի սահմաններուն մօտ: Սէուտական Արաբիոյ մէջ գտնուող քարիւղ փոխադրող չորս կայաններէն երկրորդն էր: Առաջինը կը կոչուէր Թուրէյֆ (կը գտնուէր Յորդանանի հետ սահմանին վրայ), երրորդը՝ Ռաֆհա (կը գտնուէր Իրաքի սահմանին մօտ) եւ չորրորդը Քայսումա (կը գտնուէր Արամքօ ընկերութեան մօտ): Իւրաքանչիւր կայան միւսէն մօտաւորապէս 250 քիլոմեթր հեռու էր: Քարիւղը Լիբանան (դէպի Սայտա եւ Զահրանի) կը փոխադրուէր Արամքօ ընկերութեան կողմէ: Պատանայի մէջ 20 անկողինով հիւանդանոց մը կար, ուր աշխատելու ղրկուած էի: Մնացեալ երեք կայարաններուն մէջ միայն դարմանատուներ կային:

Պատանա մնայուն բժիշկներ կային՝ Իրաքէն, Սուրիայէն, Լիբանանէն, Յորդանանէն եւ Եգիպտոսէն. Պէյրութի Ամերիկեան համալսարանէն ղրկուած «resident»ներ ալ կու գային՝ ամիսը մէկը, թէ՛ հայ եւ թէ՛ արաբ: Հայերէն կը յիշեմ Յարութիւն Արմէնեանը՝ ներքին հիւանդութեանց մասնագէտ, Վազգէն Տէր Գալուստեանը՝ մանկաբուժ եւ Թորոս Չաղլասեանը՝ վիրաբուժ:

Ինծմէ առաջ ուրիշ հայ բժիշկներ գացած էին ինչպէս՝ Տոքթ. Պերճ Կէյիքեանը, Պարսումեան եղբայրները, որոնք յետագային Լիբանանի մէջ Հատտատ հիւանդանոցը աշխատեցան, ինչպէս նաեւ Տոքթ. Հրայր Կիւլեսէրեանը

[1] Հարցազրոյցը կատարեց եւ մշակեց՝ Վահան Լուտեր Արթինեան, 10 Ապրիլ 2024ին, Պէյրութ:

եւ Տոքթ. Քեթէնճեանը: Այս չորս կայաններուն բժշկական մարզի տնօրէնը տոքթ. Ճէյքըպ Թատիոսն էր որ հայ էր՝ Իրաքէն: Ընդհանուր բժշկութեան մասնագէտ էր, Պէյրութի Ամերիկեան համալսարանէն վկայուած: Ինք կը գործէր Լիբանանի գրասենեակին մէջ:

Մամուլին մէջ յայտարարութեան ընդառաջելով հարցազրոյցի ներկայացայ իրեն եւ ընդունուեցայ՝ ես եւ Պէյրութի Ամերիկեան համալսարանէն ուրիշ լիբանանցի, նոր շրջանաւարտ բժիշկ մը՝ Ճորճ Քարքար անունով: Վիզան մէկ ամիս ուշանալուն պատճառով մենք մտահոգուեցանք, բայց մէկ ամսականը վճարեցին երբ տակաւին Լիբանան կը գտնուէինք սպասման վիճակի մէջ: Թատիոսն էր որ զիս պաշտօնակոչեց Պէյրութի մէջ: Պատանայի հիւանդանոցին շուրջ քսան հիւանդապահուհիներուն կէսը հայ ամուրի երիտասարդուհիներ էին, որոնք Պէյրութի Ամերիկեան համալսարանէն շրջանաւարտ էին: Մնացեալը արաբ լիբանանցիներ, յորդանանցիներ, եգիպտացիներ եւ սուրիացիներ էին: Նաեւ երկու արաբ բժիշկներու կիները լիբանահայուհիներ էին՝ Սիրվարդ Օտապաշեան՝ յորդանանցի վիրաբուժ Ֆիլիփ Սուննաաին կինը, եւ Արփի Պչաքճեան՝ կիներու պաղեստինցի բժիշկ Ատէլ Սանսուրին կինը:

Ուրբաթ օրերը հանգիստի օրեր էին, իսկ ամառները մէկ ամիս արձակուրդ կ'ունենայինք: Տիկինս հոն չէր աշխատեր, սակայն միքանի երաժշտական դասախօսութիւններ տուաւ ներկայացուց երաժշտական յօրինողներ անոնցմէ կտորներու ունկնդրութեամբ:

Մեր պսակին օրը, մեզի շնորհաւորելու ատեն Թափլայնի բժշկապետ տոքթ. Ճէյքըպ Թատիոս, աւետեց թէ Պէյրութէն մեր դաշնակը բեռնատար մեքենայով պիտի փոխադրեն Պատանա, որպէսզի կարելի ըլլայ նուագել: Այդ դաշնակը Պատանայի կայանին միակ դաշնակն էր: Այդ դաշնակին վրայ տիկինս իր փորձերը կատարեց եւ դաշնակի ունկնդրութիւններ կազմակերպեց:

Անապատին մէջ հայկական բան մը չկար. ո՛չ հայկական դպրոց եւ ո՛չ եկեղեցի, որոնք մինչեւ այսօր ալ գոյութիւն չունին Սէուտական Արաբիոյ մէջ: Միքանի հայ հիւանդապահուհիներ եւ այցելու հայ բժիշկներ կը կազմակերպէին շաբաթական դրութեամբ հաւաքներ ուր զրոյցներ տեղի կ'ունենային եւ ճաշկերոյթ կ'ըլլար: Ընդհանրապէս այդ հաւաքոյթները մեր տան մէջ կամ հիւանդապահուհիներու բնակարաններէն մէկուն մէջ տեղի կ'ունենային: Յետագային, որոշ ժամանակ, մեր բարեկամութիւնը շարունակուեցաւ անոնց հետ՝ Լիբանանի մէջ:

Պատմեմ միքանի յիշատակներ.-

ա) Հոն հասնելէս միքանի ամիս ետք, Իրաքէն մանկաբուժի մը ժամանումը կ'ակնկալուէր, բայց ան կորսուած էր անապատին մէջ: Միքանի օր ետք գտնուեցաւ եւ բանից դուրս եկաւ որ ինքնաշարժը աւազին մէջ մխրճուելէն ետք քալելով Յորդանանէն Թուրէյֆ հասեր էր անօթի ու ծարաւ: Ըսին որ իր ուղեցոյցը բոլոր ջուրերը խմեր էր:

բ) Սկիզբը շատ քիչ թիւով սրտի հիւանդութեան պարագաներ կային: Սակայն 5-6 տարուան ընթացքին սկսայ նման պարագաներ տեսնել՝ պաշտօնեաներու մէջ, որոնք անապատի կեանքէն դադրած էին եւ կ'ապրէին մօտակայ քաղաքին մէջ՝ ճաշակելով արեւմտեան ուտելիքներ:

գ) Սկիզբը ուղտին կռնակէն աւելի բարձր տեղ չէր գտնուեր անապատին մէջ: Հետեւաբար հիւանդանոց եկող կոտրուածքի պարագաները ուղտէն ինկած կ'ըլլային: Յետագային, սակայն, սկսանք տեսնել նաեւ այլ տեղերէ ինկած կոտրուածքի պարագաներ:

դ) Բոլոր ընտանիքները երաժշտական նորագոյն կազմածները կը գնէին եւ իրար հետ կը մրցակցէին անոնց որակով («stereo», «surround sound» եւն.):

Այն ատեն ներկայի համացանցն ու իր դիւրութիւնները չկային: Շաբաթէ շաբաթ նամակ եւ թերթ կը սպասէինք Պէյրութէն՝ ծնողքիս թէ բարեկամներու կողմէ ղրկուած:

THE YEARS I SPENT IN SAUDI ARABIA AS A DOCTOR (1969-1975)

(Summary)

Dr. Boghos Artinian

The author reminisces about some basic facts in his life in Saudi Arabia between 1969 and early 1975.

After graduating from the medical school of the American University of Beirut and working at the university hospital for a year the author was recruited and was appointed to the hospital of Badana, which was one of the four oil producing stations in Saudi Arabia and the only hospital in these four stations (the others were Toureyf, Rafya and Qaysouma). After one year of service the author was sent first to Edinburgh and then to London for a year for further specialization.

The author describes social life in Badana, his professional entourage, the Armenian doctors and nurses at the hospital, his work, and his family and states that the Armenians constituted a small community that gathered each week in one of the apartments of the Armenians, socialized and spent time together. The only piano in Badana was the one they had, where his wife practiced and gave lectures on music.

The author notes that during the early 1970s "there was nothing higher than the camel, and we had a number of patients with broken legs or hands who had fallen from the camel... but later on the cases were much more complicated". He notes, as well, that at the beginning there were almost no patients with heart issues, but in time, with the change in lifestyle, a great many cases of heart failure and other sorts of sicknesses arose."

Հայկական Փոքր Գաղութը Սէուտական Արաբիոյ Տահրանի եւ Շրջակայ Քաղաքներուն Մէջ (Սեպտեմբեր 1972-Մարտ 1976)

ԳԷՈՐԳ ՔԷՕՇԿԷՐԵԱՆ
klkeushkerian@gmail.com

ԵՐՈՒՍԱՂԷՄ-ՀԱԼԷՊ-ՊԷՅՐՈՒԹ

Նախ կ'ուզեմ կենսագրական ամփոփ գիծերս ներկայացնել, որ պիտի ծառայէ որպէս նախաբան եւ մուտք՝ բուն նիւթին:

Ծնած եմ Երուսաղէմ, սակայն արաբ-իսրայէլեան պատերազմին պատճառաւ՝ 1948ին, ընտանիքիս հետ գաղթած եմ Սուրիա եւ հաստատուած Հալէպ, ուր մօրս ընտանիքը բնակութիւն հաստատած էր, Այնթապէն գաղթելէ ետք:

Սուրիոյ կառավարութիւնը մեզ դրոշմեց որպէս պաղեստինցի գաղթական: Առ այդ՝ կրնայինք աշխատիլ եւ դպրոց յաճախել, սակայն չէինք կրնար քուէարկել եւ երկրէն դուրս գալ, իբացառեալ արաբական երկիրներէն:

1964-66, յաճախեցի Պէյրութի Հայկազեան գոլէճը (այժմ համալսարան) եւ ստացայ պսակաւոր արուեստից վկայական՝ անգլերէն լեզուի եւ գրականութեան մէջ:

Պէյրութ երթալու համար, երկու արտօնագիր պէտք էր ունենայի: Մէկը՝ Սուրիայէն դուրս ելլելու համար եւ միւսը՝ Լիբանանէն ներս մտնելու համար: Այս էր պաղեստինցի գաղթականին ճակատագիրը:

1966ին վերադարձայ Հալէպ եւ ստանձնեցի հայ աւետարանական Էմմանուէլ նախակրթարանի տնօրէնութիւնը, զոր վարեցի մինչեւ 1969:

1969ի ամռան գացի Ամման եւ ուզեցի որ Յորդանանի քաղաքացի դառնամ: Երուսաղէմի ծննդեան վկայագիրս պահած էի: Ատիկա թթխմոր հանդիսացաւ յորդանանցի դառնալու դժուարին գործընթացին, որ տեւեց քառասուն երկար օրեր:

Հարկ եղաւ նաեւ Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց վարժարանէն ուսանողական վկայագիր մը, զոր ապահովեց հոն ապրող մօրաքրոջս աղջիկը: Իսկ ասոնք բաւարար չնկատուելով՝ Ամմանէն ազդեցիկ անձի մըն ալ միջամտութիւնը դափնեկիրը հանդիսացաւ ոդիսականիս եւ ես վերջապէս դարձայ յորդանանցի ...

Անմիջապէս մեկնեցայ Պէյրութ, ուր Ամերիկեան համալսարան ընդունուած էի որպէս ուսանող՝ մագիստրոս արուեստից վկայականին: Գալուստ Կիւլպենկեան հաստատութենէն ալ ապահոված էի կրթաթոշակ: Երկու տարիէն վկայուեցայ Teaching English as Foreign Languge մասնագիտութեամբ:

Անմիջապէս որ աւարտեցի համալսարանը, դիմեցի Այնճարի հայ աւետարանական երկրորդական վարժարանը եւ ընդունուեցայ որպէս անգերէն լեզուի ուսուցիչ: Սակայն միայն մէկ տարի դասաւանդեցի հոն, որովհետեւ յաջորդ տարի, նոյն գործով գացի Սէուտական Արաբիա:

Հայկազեան գոլէճի նախագահ դոկտ. Ճան Մարգարեանի քարտուղարուհին՝ Անի Նաճարեանը, խթանը հանդիսացաւ որ ես Սէուտական Արաբիա երթամ:

Այնճարէն ամէն անգամ որ Պէյրութ երթայի, կը հանդիպէի Հայկազեան գոլէճ: Օր մը Անին ըսաւ որ Արամքօ ընկերութենէն անգլերէն լեզուի ուսուցիչ կ'ուզեն եւ եթէ հետաքրքրուած եմ՝ պէտք է դիմեմ այսինչ հասցէին: Մնացեալը պատմութիւն եղաւ:

ՏԱՀՐԱՆ, ՍԷՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ

Արամքօն (ARAMCO, Arabian American Oil Company) նաւթաքիմիական ճարտարագիտական ընկերութիւն մըն է որ համատեղ ձեռնարկութիւն մըն էր Քալիֆորնիոյ Standard Oil եւ Սէուտական Արաբիոյ կառավարութեան միջեւ: Յետագային՝ սէուտական կառավարութիւնը բաժնետոմսերուն 60 տոկոսը գնելով՝ ան դարձաւ սէուտական ընկերութիւն մը:

Արամքօ ընկերութիւնը կեդրոնացած էր երեք վայրերու մէջ՝ Տահրան, Ապքէյք եւ Րաս Թաննուրա: Տահրանը ընկերութեան կեդրոնատեղին էր, իսկ Րաս Թաննուրան՝ նաւահանգիստ ըլլալով, հոնկէ զտուած քարիւղը կը փոխադրուէր աշխարհի զանազան կողմեր:

Վերոյիշեալ երեք վայրերուն մէջ ալ կար ITC (Industrial Training Center), ուր սէուտցի պաշտօնեաներ կը սորվէին անգլերէն, որպէսզի օտար պաշտօնեաներուն հետ կարենային հաղորդակցիլ: Միջին Արեւելքէն գացող ուսուցիչները կը տեղաւորուէին այդ վայրերուն մէջ: Մեզի համար զարմանալի էր թէ միայն լիբանանցիները կը ղրկուէին Րաս Թաննուրա, որովհետեւ՝ ըստ իրենց, անոնք աւելի վստահելի էին:

Տահրանը որպէս ընկերութեան կեդրոնատեղին՝ ունէր հիւանդանոց եւ դարմանատուներ, իսկ միւս վայրերը՝ միայն դարմանատուներ:

Հայկազեան գոլէճէն բաւական շրջանաւարտներ գացին Արամքօ՝ դարձեալ Անիին միջոցաւ: Ես եւ Մարտիրոս Հերկելեանը (այժմ մահացած) տեղաւորուեցանք Տահրան, Յովհաննէս Մկրտիչեանն ու Յակոբ Գասապեանը՝ Ապքէյք, իսկ Մեսրոպ Թաշճեանն ու Կարօ Քիլիսլեանը՝ Րաս Թաննուրա: Բոլորս ալ ուսուցիչներ՝ կա՛մ անգլերէն լեզուի եւ կա՛մ ալ ուսողութեան:

Արամքօ գացած էին նաեւ բաւական թիւով (շուրջ 10) հայ բուժքոյրներ՝ վկայուած Պէյրութի Ամերիկեան համալսարանէն կամ Էշրեֆիյէի Christian Medical Center CMC հիւանդանոցէն: Յիշողութեանս մէջ՝ անոնցմէ կը մնան անունները միայն Անի Օֆլազեանին եւ Ճոյս Գույումճիին:

Նախքան անդրադառնալս Սէուտական Արաբիոյ արեւելեան ափի քաղաքներու հայկական կեանքին, կ'ուզեմ համառօտ ներկայացնել պետութեան դիրքորոշումը՝ հոն տիրող ընկերաբարոյական կեանքին նկատմամբ:

Գործի չսկսած՝ նոր ժամանած պաշտօնեաները հրաւիրուեցան կողմնորոշման (orientation) հանդիպումի մը: Հոն մեզի պատուիրուեցաւ որ երեք հարցերէ խստիւ հեռու մնանք:

1. Քաղաքականութիւն,
2. Կրօն,

3. Ոգելից ըմպելի:

Այս հարցերէն առաջին երկուքը պէտք չէ քննարկուէին կամ հարցապնդուէին մեր կողմէ, որեւէ ժամանակ: Իսկ երրորդը, արգիլուած էր գործածել մեր կողմէ՝ որեւէ տեղ: Վերջին հարցին չենթարկուող հայ հիւանդապահուհի մը, անմիջապէս ձերբակալուեցաւ եւ բանտ առաջնորդուեցաւ: Բարեբախտաբար սակայն ազդու միջնորդութեամբ մը ան Միացեալ Նահանգներ ղրկուեցաւ եւ այսպիսով հարցը լուծուեցաւ:

Ուրիշ օր մը զիս կանչեցին եւ պարտադրեցին որ գրաւոր կերպով յայտնեմ իմ պատրաստակամութիւնս՝ ամսականիս հինգ տոկոսը տրամադրելու Պաղեստինի ազատագրութեան կազմակերպութեան (ՊԱԿ, PLO): Ինչու՞՝ որովհետեւ Երուսաղէմ ծնած ըլլալով՝ պաղեստինցի կը համարուէի, հակառակ որ յորդանանեան անձնաթուղթով մուտք գործած էի Տահրան ...

Արամքոյի պաշտօնեաներուն խնդրով պէտք է նշեմ, որ Ամերիկայէն եկողները կը վճարուէին տոլարով եւ իրենց կը յատկացուէր ընտանեկան բնակարան: Մինչ՝ Միջին Արեւելքէն եկողները կը վճարուէին Սէուտական Րիալով եւ իրենց կը յատկացուէր ամուրիի յատուկ, մէկ սենեակնոց տուն: Այս բոլորը Արամքոյի շրջապատէն ներս՝ ուր կար նաեւ ճաշարան, լողաւազան, սինեմա, նպարատուն եւն.:

Ինծի համար անակնկալ էր որ շաբաթավերջի արձակուրդը կը զուգադիպէր Հինգշաբթի եւ Ուրբաթ օրերուն:

Սէուտական Արաբիոյ կառավարութիւնն ու ժողովուրդը բարեացակամ էին օտարներուն հանդէպ: Փաստ՝ իմ աշակերտներէս մէկը երբ ամուսնացաւ, զիս հրաւիրեց իր հարսանեկան խրախճանքին: Դարձեալ ինծի համար զարմանալի էր որ խրախճանքը տեղի կ'ունենար երկու տարբեր վայրերու մէջ, մէկը՝ այրերու համար, միւսը՝ կիներուն: Խնդրոյ առարկայ աշակերտս ինծի մօտիկ զգալով, հետեւեալ սրտբաց զրոյցը տեղի ունեցաւ մեր միջեւ:

- Պարոն դուք բախտաւոր էք:

- Ինչու՞:

- Որովհետեւ դուք կը զատէք ձեր կողակիցը:

- Իսկ դու՞ք:

- Մեր ծնողները կ'որոշեն թէ որու հետ պէտք է ամուսնանանք: Առաւել՝ մենք չենք տեսներ զինք մինչեւ մեր ամուսնութեան օրը: Ան կրնայ ըլլալ կաղ, շիլ եւ կամ կարճ ու գէր, ըստ մեր բախտին ...

Սա՝ տեղական ընկերային կարգուսարքի մէկ երեւոյթն էր միայն: Ուրիշ մեզի համար խորթ երեւոյթներ ալ գոյութիւն ունէին, որոնցմէ կարելի է յիշել հետեւեալները:

* Երբ սէուտցի մարդը ինքնաշարժ կը վարէ, մանչ զաւակն է որ քովը կը նստի, մինչ կինը՝ ետեւը:

* Երբ սէուտցի մարդը կը քալէ, կինը իրմէ 2-3 մեթր ետեւէն կը քալէ:

* Երբ ծովեզերք երթաս, կը տեսնես այրմարդիկ ձեռք-ձեռքի բռնած՝ կը քալեն: Ինչու՞՝ որովհետեւ կիները չեն կրնար դուրս ելլել:

* Ուրբաթ օրերը կէսօրուայ ժամուն, կրօնական ոստիկանները կը պարտադրէին որ խանութպանները գոցեն իրենց խանութները եւ մզկիթ երթան աղօթելու:

ՏԱՀՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՔՐԻԿ ԳԱՂՈՒԹԸ

Ես որ Տահրան հասայ՝ երկու հայ ընտանիքներ կային հոն, ամերիկահայ Ճորճ եւ Ռոզին Մարանճեանները իրենց երկու աղջիկներով եւ Յակոբ ու Տիրուկ Մանճիկեանները իրենց երկու մանչերով: Կար նաեւ ամուրի Թորոս Տիւլտիւլեանը եւ անշուշտ ուրիշ ամուրի մանչ թէ աղջիկ, հայեր: Յակոբը երկրաչափ էր, իսկ Թորոսը՝ հաշուապահ: Ասոնց միջեւ դժբախտաբար չեղան ամուսնութիւններ:

Ես աշնան հասայ Տահրան. յստակ կը յիշեմ թէ այդ տարի կաղանդի գիշերը անցուցինք Մանճիկեաններուն բնակարանը: Բաւական մեծ թիւով հայեր կային (մօտաւորապէս 20). թէ՛ Արամքոյի հայ պաշտօնեաներէն եւ թէ՛ ալ մօտակայ քաղաքներէն եկած հայ ընտանիքներ եւ ամուրի անհատներ:

Հայկական հարազատ մթնոլորտ մը կը տիրէր հոն. համադամ տոհմիկ ճաշերու կողքին՝ երգն ու պարը մեզ մոռցնել կու տար որ մեր ընտանիքներէն մղոններ հեռու էինք:

Այս իմաստով՝ կարծես Տահրանը դարձած էր հայերուն հաւաքավայրը, որովհետեւ անոնք ինքզինքնին ապահով կը զգային այդ պարփակուած շրջավայրին մէջ: Գրեթէ ամէն շաբաթավերջին հայեր կու գային հոն Ապքէյքէն, Րաս Թաննուրայէն եւ մօտակայ Խուպար ու Տամմամ քաղաքներէն ու միասին լաւ ժամանակ կ'անցընէինք, ճաշի եւ ապա "Պլոթի" սեղաններուն շուրջ: Մեր հաւաքավայրը ընդհանրապէս Արամքոյի պաշտօնեաներէն մէկնումէկուն տուները կ'ըլլային:

Սա ալ ըսեմ որ ընկերային այդ այցելութիւնները փոխադարձ կերպով տեղի կ'ունենային, այսինքն՝ երբեմն ալ արամքոցիները կը հրաւիրուէին Խուպար կամ Տամմամ, հոն բնակող հայ ընտանիքներուն կողմէ, օրինակ՝ Պզտիկեաններուն կամ Հարպոյեաններուն բնակարանները:

Կիրակի իրիկունները պետական արտօնութեամբ՝ եկեղեցական պաշտամունք կը կատարուէր միակ սինեմայի սրահին մէջ: Քարոզիչը ոչ-յարանուանական ամերիկացի հովիւ մըն էր, գոհացում տալու համար բոլորի ճաշակին: Անշուշտ միայն քրիստոնեաները կը մասնակցէին, թիւով՝ 40-50: Ես յաճախ կ'երթայի, որովհետեւ ուրիշ ելք չկար հաւատացեալի մը համար:

ԽՈՒՊԱՐ ԵՒ ՏԱՄՄԱՄ

Տահրանի մօտակայ Խուպար եւ Տամմամ քաղաքներուն մէջ ալ կ'ապրէին հայեր, որոնք առնչութիւն չունէին Արամքոյի հետ, կ'աշխատէին տարբեր ընկերութիւններու մէջ: Անոնցմէ ոմանք հոն էին իրենց ընտանիքներով եւ ոմանք ալ առանձին էին: Ընտանիքներով կային Գրիգոր եւ Հեղինէ Հարպոյեանները, իրենց երկու աղջիկներով, Զաւէն եւ Սոնա Խանճեաններն ու Վահան եւ Նորա Պզտիկեանները: Ասոնց կիները չէին աշխատեր, որովհետեւ աշխատելու իրաւունք չունէին: Իսկ առանձին ըլլալով կային Պարգեւ Եկէնեա-

նը, Պետրոս Պութրոսը, Տիգրան Գարագաշեանն ու Կարպիս Քեշիշեանը: Ասոնք ընդհանրապէս եկած էին Պէյրութէն, կային նաեւ անհատներ՝ Ամմանէն: Կային նաեւ այլ անհատներ որոնց դժբախտաբար անունները չեմ յիշեր: Չմոռնանք որ աւելի քան քառասունհինգ տարի անցած է իմ հոն ապրելէս:

Հիմա նայինք թէ ու՞ր են այդ անձերն ու ընտանիքները: Մարանճեանները վերադարձան Ամերիկա եւ եթէ յիշողութիւնս չի դաւաճաներ զիս՝ Ճորճը մահացած է: Մանճիկեանները գաղթեցին Քանատա, ինչպէս նաեւ Յակոբ Գասապեանը՝ որ այժմ ամուսնացած է եւ զաւակներու տէր է: Ասոնց Սէուտական Արաբիայէն հեռանալը անձնական պատճառներով էր, իւրաքանչիւրը կը հեռանար՝ իր նպատակին հասնելէն ետք միայն:

Ես գաղթեցի Ամերիկա եւ հաստատուեցայ Քալիֆորնիա, ուր ամուսնացայ եւ տէր դարձայ երկու զաւակներու: Թորոս Տիլտիլեանը իր ընտանիքով կ'ապրի Քալիֆորնիա: Կարօ Քիլիսլեանը իր ընտանիքով կ'ապրի Քալիֆորնիա: Յովհաննէս Մկրտիչեանը իր ընտանիքով կ'ապրի Նիւ Ճըրզի: Քալիֆորնիա կ'ապրին նաեւ Մեսրոպ Թաշճեանն ու Ճոյս Գույումճին՝ իրենց ընտանիքներով: Իսկ Անի Օֆլազեանը ամուսնացաւ ամերիկացիի մը հետ եւ ունեցաւ մանչ զաւակ մը: Անոնք վերադարձան Ամերիկա եւ հաստատուեցան Քոլորատօ:

Ես յաճախ, տարբեր առիթներով, կը տեսնեմ Թորոս Տիլտիլեանը, Կարօ Քիլիսլեանը, Վահան Պզտիկեանը եւ Զաւէն Խանճեանը, իսկ երբեմն ալ՝ Յովհաննէս Մկրտիչենանը:

Գալով Խուպար եւ Տամմամ ապրող ընտանիքներուն՝ անոնք ալ գաղթեցին եւ գացին հաստատուելու տարբեր վայրերու մէջ: Այսպէս, Խանճեաններ, Պզտիկեաններն ու Հարպոյեանները Քալիֆորնիա են, ինչպէս նաեւ Պարգեւ Եկէնեանն ու Տիգրան Գարագաշեանը: Իսկ Պետրոս Պութրոսը ամուսնացաւ եւ իր երկու մանչ զաւակներուն հետ կ'ապրի Քանատայի Թորոնթօ քաղաքը: Ամուսնացաւ նաեւ Կարպիս Քեշիշեանը եւ իր ընտանիքին հետ կ'ապրի Յունաստանի Աթէնք մայրաքաղաքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ինծի համար շատ դժուար էր ապրիլ Արամքոյի մէջ, որովհետեւ ընկերային կեանք գրեթէ գոյութիւն չունէր, մինչ ես ընկերային շրջանակ ունեցող մէկը ըլլալով, չէի կրնար հանդուրժել այդ մեկուսի կեանքին, որուն համար շատ երկար չկրցայ դիմանալ հոն: Բուն պատճառը իմ Սէուտական Արաբիայէն հեռանալուս՝ ընտանիք կազմելս էր եւ ես չէի կրնար հաշտուիլ այդ միջավայրին մէջ ընտանիք կազմելու գաղափարին:

Այսուհանդերձ՝ ամէն ամառ Պէյրութ կ'երթայի, ուր ինծի Հալէպէն տեսութեան կու գային ծնողքս եւ այլ հարազատներ: Իսկ տարուան ընթացքին՝ երբ արձակուրդ ունենայի, այցելութեան կ'երթայի մօտակայ երկիրները, օրինակ՝ Քուէյթ, ուր մօրս քեռիին զաւակը կը բնակէր իր ընտանիքով: Երկու անգամ գացի Եգիպտոս՝ բարեկամներու հետ եւ մէկական անգամ Պարսկաստան՝ առանձին ու Աֆղանիստան, Արամքոյի պաշտօնեաներուն՝ շաբաթավերջի մը կազմակերպած մէկ պտոյտով:

Քուէյթի հայկական գաղութը շատ աւելի բախտաւոր էր մեզմէ, քանի որ հոն կար կազմակերպուած առաքելութիւն՝ որոնք ունէին դպրոց եւ յետագային ալ եկեղեցի ու կրօնական առաջնորդ: Հոն՝ խմիչքն ալ արտօնուած էր:

Խմիչքը նաեւ արտօնուած էր Տահրանի շատ մօտ Պահրէյն կղզիին վրայ, ուր Արամքոյի պաշտօնեաները կ'երթային շաբաթավերջի իրենց արձակուրդին եւ ազատ ու անկախ կը խմէին ու կը զուարճանային:

Վերոյիշեալ պտոյտները մասամբ կը թեթեւցնէին Արամքոյի մեկուսացած կեանքի մը պարտադրած դժուարութիւնները, գէթ ինծի համար!

Կազմակերպուած հայկական գաղութ մը չէր Սէուտական Արաբիոյ արեւելեան ափի տարբեր քաղաքներուն մէջ ապրողներուս համար: Անանկ որ երբեք դրամահաւաք չէ եղած, որեւէ նպատակի համար: Իսկ կային նաեւ հայեր Սէուտական Արաբիոյ տարբեր քաղաքներուն մէջ ալ ինչպիսիք են մայրաքաղաք Րիատն ու արեւմտեան ափի Ճետտա քաղաքը: Սակայն դժբախտաբար ա-նոնց հետ որեւէ կապ չենք ունեցած, հեռաւորութեան պատճառաւ:

THE TINY ARMENIAN COMMUNITY IN EASTERN SAUDI ARABIA: DHAHRAN AND THE NEIGHBOURING CITIES (SEPTEMBER 1972-MARCH 1976)

(Summary)

Kevork Keushgerian
klkeushkerian@gmail.com

The author describes how he had to take refuge in Aleppo after the crisis in Palestine in 1948, his restricted life in Syria as a Palestinian refugee, his education in Beirut at Haigazian College (now University), his graduation from the American University of Beirut with an MA in teaching English as a foreign language and his eventual recruitment by Aramco as an English teacher in Dhahran. He starts with stating how they were informed about forbidden things, which were mainly not discussing politics, not talking about religion and not drinking.

The author notes that though the Saudis were very kind towards the foreigners, there was a high degree of discrimination not only between the native Saudis and the expats, but between the expats too. Those who were recruited from the West were paid much more than those recruited from the Arab countries, and having been born in Jerusalem, he was considered Palestinian and was forced to "willingly" donate 5% of his salary to the Palestine Liberation Organization!

The author details life within the Armenian circle of Dhahran, where the core of the Armenian community in Eastern Saudi Arabia lived. Among these was a core group of Armenians teaching English and mathematics, while others worked as nurses. The author notes that the Armenians used to gather weekly in Armenian homes, where they ate and played cards. Often Armenians from the neighboring cities of AlKhubar and Dammam would join them, and sometimes the Armenians of Dhahran would be hosted by them.

Notwithstanding these gatherings, social life was hard for a great many Armenians, and they left as soon as they had made enough money, as did the author, for instance. He could not survive more that some 4 to 5 years and left for Northern America, where he maintained the friendships that had started in Dharhan.

Սէուտական Արաբիոյ Մէջ
Անցուցած Հինգ Տարիներս (1976-1981)

ՅԱԿՈԲ ԳԱԶԱՆՃԵԱՆ

Լիբանանի քաղաքացիական պատերազմին մենք կ'ապրէինք արեւելեան Պէյրութի արուարձան, Սըտ Պաուշրիէ շրջանը: 1970էն կ'աշխատէի մօտակայ Ճունի գիւղաքաղաքը, ամերիկեան Քաթըրփիլըր ընկերութեան մէջ, անորոշ գալիքի մտահոգութիւններով: Պատերազմին պատճառով աշխատողներուն 75 առ հարիւրը կը բացակայէր գործէն, քանի որ շատեր գիւղերը կ'ապրէին եւ ճամփաները ապահով չէին, մնացածներս կէս օր կ'աշխատէինք: Հայերս, տեղափոխուելու որոշ ազատութիւն մը ունէինք, քանի որ չէզոք էինք եւ չէինք հակադրուած որեւէ կողմի: Սակայն պատերազմը երկարեցաւ եւ երկու կողմերը կ'ուզէին որ հայերը իրենց հետ մասնակցին կռուին: Այս պատճառով շատ մը հայեր որոշեցին գաղթել աւելի ապահով երկիրներ: Ես ալ երկրին մէջ սեփականութիւն չունենալով, որոշեցի ընտանեօք գաղթել Աւստրալիա, որ իր դռները լայն բացած էր լիբանանցիներուն առջեւ: Դեսպանատան հետ առաջին տեսակցութեան յաջորդ օրերուն մեզի անակնկալ մը պատահեցաւ: Աշխատած ընկերութեանս մէջ, մեքանիք վարպետ մը կար, քրիստոնեայ, Ուատի Սքէֆ անունով. ան միքանի տարի առաջ մեկնած էր Սէուտ. Արաբիա լաւ պաշտօնով, Պէն Լատէն շինարարական ընկերութեան մէջ: Ընկերութիւնը կը յանձնարարէ Ուատիին երթալ Պէյրութի Քաթըրփիլըր ընկերութենէն ընտրել տարբեր մասնագիտութիւններով 12 վարպետներ եւ հետը բերել: Այդ 12 անձերուն կարգին Ուատին զիս ալ ընտրած էր: Մնացի երկընտրանքի առջեւ. լաւ վճարումով Սէուտ. Արաբիա՞ մեկնիլ, թէ՞ անորոշ հեռանկարով, բայց ապահով՝ Աւստրալիա: Իմ նախընտրութիւնս Սէուտ. Արաբիան էր, նկատի առնելով նաեւ նիւթական վիճակս: Կնոջս հետ խորհրդակցելով, որոշեցի 1-2 տարիով երթալ Սէուտ. Արաբիա, յետոյ անցնիլ Աւստրալիա: Դեսպանատան բացատրեցինք պարագաս, եւ առաջարկեցինք սառեցնել մեր դիմումը:

Ընտանիքս (ամուսնացեր էի 1966ին, զաւակներս՝ Նայիրի, ծն. 1967, Թալին՝ 1971, Հրայր՝ 1979) տիկնոջս ծնողքին հոգածութեան յանձնելով (անոնք նոյն շէնքը կը բնակէին), որոշ ապահովութեան զգացումով մեկնեցայ Սէուտ. Արաբիա, լաւ պայմաններով, Ուատիին առաջարկէն 10 օր ետք: Նոյեմբեր 1976ին, 12 հոգինոց - իսլամ, քրիստոնեայ եւ հայ զանազան մասնագիտութեան վարպետներ – խումբով վայրէջք կատարեցինք Ճետտայի օդակայանը:

Մեր աշխատանքի վայրը Թաէֆ գիւղաքաղաքն էր, Ճետտայէն 200 քլմ. հեռու լեռնային շրջան մը, ծովի մակերեսէն 1000 մեթր բարձր: Թագաւորական ընտանիքին ամառանոցն էր, մօտ կէս միլիոն բնակչութեամբ: Մեղմ կլիմայ ունէր, ձմեռը մինչեւ զերոյի կ'իջնէր ջերմաստիճանը, ցերեկը արեւոտ եւ տանելի էր օդը: Ամառը չոր տաք կ'ընէր, մինչեւ 35 աստիճան: Ամբողջ տարին անձրեւ չէր տեղար, սակայն ջուրի տագնապ չունէինք: Բնակչութեան մեծ մասը առեւտուրով կը զբաղէր, միւսները՝ երկրագործութեամբ: Ընկերութեան գործը Ճետտա-Թաէֆ 660 քլմ. երկարութեամբ նոր ճամփայ եւ կամուրջներ շինելու, լուսա-

ւորութիւնը ապահովելու ծրագիր էր, որ պէտք էր աւարտէր երկու տարիէն: Աշխատանքի օրը 24 ժամ էր, երկու մասի բաժնուած՝ առաւօտեան ժամը 6էն իրիկուան ժամը 6ը եւ իրիկուան ժամը 6էն մինչեւ առաւօտեան ժամը 6ը: Մեր բնակավայրը աշխատավայրին շատ մօտ շինուած շարժական տուներու շարք մըն էր, օժտուած տաք ջուրով եւ բաղնիքով: Նոյնպէս եւ ճաշարանը, ուր օրը եռեք անգամ, մասնաւոր մեզի համար ճաշ կը պատրաստէին: Ընկերութիւնը կը հոգար մեր լուացքը:

Իմ գործս ճամփաներուն վրայ էր, շինարարական մեքենաները պիտի աշխատէին եւ մենք պիտի հսկէինք անոնց աշխատանքին. խանգարուելու կամ կոտրելու պարագային՝ տեղուոյն վրայ պէտք էր նորոգէինք: Ես զօդումի մասնագէտ էի: Ինծի տուած էին բեռնատար հսկայ մեքենայ մը, վրան՝ նորոգութեան մեքենաներ եւ զօդումի սարքեր: Ինծի տուած էին նաեւ 5 հոգինոց օգնական կազմ մը եւ մենք պէտք էր աշխատէինք շաբաթը 7 օր: Մինչեւ իրիկուն մենք մնայուն շարժման մէջ էինք՝ մէկ մեքենայէն միւսը, բացօթեայ, հովին, փոշիներուն մէջ թաղուած: Անճանաչելի վիճակով, սպառած տուն կու գայինք: Մեր վարպետը, Ուատին, իր ընտանիքով կ'ապրէր քաղաքին մէջ, շատ անգամ ամբողջ խումբով կ'այցելէինք իրեն եւ քանի մը ժամ ընտանեկան մթնոլորտի մէջ կ'անցընէինք:

Յանկարծ, Պէյրութի աւստրալիական դեսպանատունէն լուր ստացայ թէ մեր դիմումը ընդունուած է եւ պէտք է ներկայանանք բժշկական քննութեան: Շատ դժուար եղաւ ինծի արտօնութիւն առնել երկրէն դուրս ելլելու, քանի որ ըստ պայմանագրութեան չէր թոյլատրուեր որ առաջին տարին չբոլորած 'արձակուրդ' ունենամ:... Իվերջոյ թոյլատրուեցայ եւ մէկ շաբաթէն վերադարձայ: Տարուան մը աշխատանքէն ետք, տարեկան արձակուրդով վերադարձայ Լիբանան մէկ ամիսով: Նոր անակնալ մը կար դեսպանատունէն, թէ՝ մեր վիզանեը պատրաստ են 5 ամիսէ իվեր, մէկ տարուան պայմանաժամով: Գացինք Դամասկոս դեսպանատուն, ուր յայտնեցին թէ եթէ շաբաթով մը մտնեմ Աւստրալիա, վիզաս կրնայ երկարաձգուիլ 3 տարիով: Այդպէս ալ ըրի:

Սէուտ. Արաբիոյ աշխատանքային դժուարութիւններուն մէջ մենք ուրախ էինք, ժողովուրդը մեզի՝ օտարահպատակներուս հանդէպ յարգանք ունէր, մեր կողմէ ոչ մէկ գանգատ կար ընկերութեան հանդէպ, քանի որ մեր ամէն ինչին մասին կը հոգային, նոյնիսկ մեր կացարանին մէջ բժշկական մնայուն խնամք ունէինք:

Գործերնիս շատ յաջող կ'ընթանար: Աշխատանքիս երկրորդ տարուան աւարտին, գործը իր հունին մտաւ եւ մեր հանգիստի ժամերը աւելցան: Ուրբաթ օրերը ազատ էինք, եւ ասիկա մեզի համար մեծ ուրախութիւն էր: Թաէֆէն 15 քլմ. Հեռաւորութեամբ գաճաճ ծառերով տափարակ հարթավայր մը կար, թեթեւ բուսականութեամբ, գեղեցիկ տեսարանով: Յատուկ յարմարութիւն չունէր որպէս զբօսավայր, որովհետեւ ջուր, լուացարան, սեղան-աթոռ չունէր: Ընտանիքներ, Ուրբաթ օրերը իրենց ուտեստներով կ'երթային հոն եւ օրը կ'անցընէին: Մենք ալ մեր աշխատաւորական խումբով, 2-3 շաբաթը անգամ մը կ'երթայինք հոն քիչ մը հանգստանալու եւ մեր առօրեայէն բաժնուելու: Երբեմն մինչեւ Ճետտա ծով կ'երթայինք: Հինգշաբթի գիշերը բաց երկինքին տակ կը քնանայինք,

Ուրբաթ առաւօտուն կը լողայինք եւ մեր հաճելի ժամերը կ'անցընէինք: Յետոյ նոր վայր մըն ալ գտանք. Թաէֆէն 150 քլմ. հեռու, կամուրջի մը տակէն վազող գետ մը կ'անցնէր, գետին ուղղութեամբ ալ հողէ ճամփայ մը կար, օթոներով խորերը կ'երթայինք ուր լճացած ջուրեր կային, հոն կը զբօսնէինք: Ուրբաթ օր մը, ձկնորսական կազմածներով, 2 օթոյով հոն գացինք, լաւ ձուկ որսացինք տեղուոյն վրայ խորովեցինք կերանք:

Որոշ ժամանակ անց, իմացայ որ քանի մը հայ ընտանիքներ հաստատուած էին Թաէֆ, ուր իրենց անձնական գործը ունէին: Ծանօթացայ անոնց եւ յաճախակի այցելութիւններով իրարու օգտակար կ'ըլլայինք եւ երբեմն ալ տարեդարձներ կը տօնէինք: Ասոնցմէ մէկը Փանոս Սքայեանն էր, որ իր կնոջ եւ 2 աղջիկներուն հետ կ'ապրէր: Փանոսը շինարար էր, տեղացիի մը հետ ընկերովի կ'աշխատէին, կ'ապրէր քաղաքին մէջ վարձու տուն մը: Ինք օթօ չէր քշեր. շաբաթը մէկ երկու անգամ կ'այցելէի եւ զիրենք օթոյովս շուկայ կը տանէի առօրեայ գնումներու համար: Ընտանիքիս հետ կապը կը պահէի նամակագրութեամբ, Լիբանան գացող-եկող շատ մը ծանօթներու միջոցով: Գրեթէ երկշաբաթեայ դրութեամբ նամակ կը ստանայի ընտանիքէս: Միաժամանակ, Պէյրութի *Ազդակ* թերթին բաժանորդ էի եւ անընդհատ, ամէն շաբաթ տրցակ մը *Ազդակ* կը ստանայի, որով թէ՛ Պէյրութի կացութեան տեղեակ կ'ըլլայի եւ թէ՛ ազատ ժամանակս կը լեցնէի ու հոգեկան բաւարարութիւն կը ստանայի:

Գործս չէր արտօներ որ տարին աւելի քան մէկ անգամ այցելէի ընտանիքիս: Բայց բախտը ունեցայ լման ամիս մը ընտանիքս հրաւիրել քովս, Րամատանի տօնին: Մեր այնճարցի բարեկամ Փանոս Սքայեանը իր ընտանիքով Այնճար պիտի մեկնէր. իր տան բանալին ինծի յանձնեց եւ ես ու ընտանիքս մէկ ամիս մնացինք այդ տան մէջ: Ատիկա մեծ ուրախութիւն պատճառեց թէ՛ ինծի, թէ՛ ընտանիքիս: Որոշ ժամանակ անց, Փանոսին գործընկերը բաժնուեցաւ, եւ Փանոսը անգործ մնաց:

Միւս այնճարցի ընտանիքը Փափազեան կը կոչուէր, ընկերութեան մը մէջ կ'աշխատէր, ճամփու լուսաւորութեան գործով: Աշխատավայրին մօտ տուն մը վարձեր էր: Ամէն օր ճաշի կ'երթար տուն: Օր մըն ալ տունդարձին, ինքնաշարժի արկածի կ'ենթարկուի ու տեղնուտեղը կը մահանայ, ետին ձգելով իր կինն ու երկու աղջիկները, որոնք ստիպուեցան Այնճար վերադառնալ: Ուրիշ օր մը խումբ մը այնճարցի հայերու հանդիպեցայ քաղաքին շուկային մէջ, անոնց հետ բարեկամացայ եւ յաճախ իրարու կ'այցելէինք: Ասոնք ալ շինարարութեամբ կը զբաղէին:

Իմ աշխատանքի երկրորդ տարին լրացաւ եւ ես դիմում ըրի լքելու գործս ու վերադառնալու Լիբանան: Ընկերութենէն ըսուեցաւ որ աշխատանքէս գոհ են եւ չեն թոյլատրեր որ իրենց գործը կէս ձգեմ ու հեռանամ: Ուրիշ կերպով երկրէն հեռանալ չէի կրնար, քանի որ երկիր մտնելը աւելի հեշտ էր քան ելլելը: Երկիր մտնելու ատեն, ընկերութիւնը մեզմէ կ'առնէր մեր անցագրերը եւ փոխարէնը կու տար պետութեան կողմէ վաւերացուած կեցութեան փաստաթուղթ, որպէսզի երկրին մէջ շրջագայելու իրաւունք եւ կարելիութիւն ունենանք: Ստիպուեցայ մնալ:

Իվերջոյ, իմ աշխատանքիս 4 տարին ամբողջացաւ եւ իմ Աւստրալիոյ վիզայի 2 տարին անցաւ, մնաց 1 տարի: Ամբողջ ջանքս ըրի որ համոզեմ ընկերութիւնը, որպէսզի արտօնեն մեկնիլս՝ չեղաւ: Գլխաւոր մտահոգութիւնս Պէյրութի մէջ ընտանիքիս անպաշտպան վիճակն էր, շատ մտահոգ էի անոնցմով, մանաւանդ որ կնոջս ծնողքը մեկնած էր Աւստրալիա եւ ընտանիքս մնացած էր առանձին: Ուստին այս առարկութեանս տեղի տուաւ, եւ ես 1981 Օգոստոսին ձգեցի Սէուտ. Արաբիան:

Սէուտ. Արաբիա աշխատանքի ժամանակաշրջանէս շատ գոհ մնացի:

Արդէն առած էի Աւստրալիա ներգաղթելու վիզաս եւ 1981 Հոկտեմբերին ներգաղթեցի Աւստրալիա: Վեց ամիս ետք, ընտանիքս բերելու համար դիմեցի գաղթականաց բաժին: Նոյեմբեր 1982ին կինս եւ զաւակներս եկան Աւստրալիա: Ատկէ երկու տարի ետք, հօրեղբօրս փափաքով գիրենք ալ բերինք Աւստրալիա: Կ'ապրինք Սիտնի, սեփական տան մէջ, գոհ ենք եւ ուրախ:

THE FIVE YEARS I PASSED IN SAUDI ARABIA (1976-1981)

(Summary)

Hagop Kazandjian

The author narrates how he was recruited as a welder to work in Taef between 1976 and 1981. Due to the security concerns in the Lebanon, which was living its most critical civil war ever, the author describes how he was in a dilemma between choosing to work in Saudi Arabia with a salary four times bigger than what he received in Beirut, but leaving his family vulnerable to the dangers of the civil war in Lebanon, or choosing to emigrate to Australia. Eventually, he chose the Saudi Arabia option.

He describes life in Taef, his social entourage, his weekend excursions, his living conditions, how he connected himself with other Armenians living in the area and how he communicated with his family in war-torn Beirut. He notes that with a group of lower-level workers he had to be on the road for 12 hours a day repairing the huge road building machines, which would break down and need immediate repair. He appreciates the support and care the workers received from their superiors, the positive attitude of the native Saudis, but underlines the fact that he missed his family to the extent that he applied several times to leave the company but was forced to stay for five years.

Հարցազրոյց Հրայր Սարգիսեանի Հետ (1975-2015 Շրջանին՝ Սէուտական Արաբիոյ Իր Փորձառութեան Մասին)[1]

... Պէյրութի մէջ 1969ին սկսանք մեր գործը, իբրեւ Saxons ընկերութիւն: Լիբանանի մէջ կը ներկայացնէինք օդափոխիչներու միջազգային ընկերութիւններ, եւ Saxonsը կը սերտէր իրեն վստահուած ծրագրերը, կը կատարէինք ճարտարագիտական սերտողութիւններ, կ'իրագործէինք ամբողջական տեղադրումը եւ սպասարկումը:

Ընկերութեան յաջողութեան պատճառը մեր տարիներու հետեւողական ծառայութիւնն ու հետապնդումն էր: Մեր նպատակն էր գոհ պահել մեր յաճախորդները. այդ պատճառով ալ լաւ վարկ ունեցանք անոնց մօտ:



Arabian Bemco ընկերութեան յատկանշական գործերէն մին՝ Րիատի մօտ, շուրջ 5 միլիոն մեթր քառ. տարածութեան վրայ կառուցուած, 4600 մեկաուաթ արտադրութեամբ PP10 ելեկտրածին կայանը (կառուցուած յաջորդական հանգրուաններով՝ 2008էն 2016)

...1973ին ձմռան, լիբանանցի մեր յաճախորդներէն մէկը, որ կը գործէր Սէուտական Արաբիոյ մէջ, ինձմէ խնդրեց սերտելու օդակայան մը, որ կը գտնուէր Սէուտական Արաբիա, Յորդանանի սահմանի մօտ, ծրագրաւորելու եւ գործադրելու համար օդակայանին ջեռուցում-օդամատակարարում-օդափոխումի (heating-vantilation-air conditioning) եւ ջրամատակարարման համակարգերը:

[1] Զրոյցը կայացաւ 21 Մարտ 2024ին:

... Ժամանակ մը ետք հեռաձայնեց թէ շէյխ Սալէմ Պըն Լատէնը Պէյրութ է, կը փափաքի քեզի ծանօթանալ: Եղբօրս հետ գացի, շատ հաճելի մարդ մըն էր: Իրենց հայրը ամէնամեծ կապալառուն էր Սէուտական Արաբիոյ մէջ, իսկ իրենց ընտանիքը Սէուտական Արաբիոյ երկրորդ ամէնամեծն էր՝ Սէուտ ընտանիքէն ետք: Երբ հանդիպեցանք, ան առաջարկեց որ միասին երթանք ու օդակայանը ցոյց տայ:



Սէուտական Արաբիոյ ելեկտրական ընկերութեան (ՍԱԵԸ) համար Ալխուպարի հարաւը կառուցուած 4600 մեկաուաթ ուժգնութեամբ Քուրայյա ելեկտրածին կայանը՝ ՍԱԵԸի ուժանիւթի ամէնէն արդիւնաւէտ կայաններէն մին, ծրագրում եւ իրագործում՝ Arabian Bemco ընկերութեան (կառուցուած յաջորդական հանգրուաններով՝ 2007էն 2014)

Միջնորդ բարեկամս, ինք ու ես գացինք Սէուտական Արաբիա. Սալէմը ներկայացուց զիս իր եղբօր՝ Պաքըրին, գովեց մեր արժանիքները ու անհանգիստ ըլլալով, խնդրեց որ ինք երթայ հանգստանալու:

Սակայն եղբօրը հետ եզրակացութեան չհասանք: Սալէմը, իմանալով արդիւնքը, զիս իր աշխատատունը հրաւիրեց: Գացի: Ըսաւ՝ «հաճիս նստէ եւ կարճ ժամանակով ներկայացուր ծրագիրը, խնդրեց որ ինք *հարմոնիքա* նուագէ՝ կարենալ կեդրոնանալու համար:

Երբ հասկցաւ ծրագրին մանրամասնութիւնները, խնդրեց լիբանանցի միջնորդին, որ համաձայնագիրը ստորագրենք:

Պէյրութի մէջ, բոլոր անհրաժեշտ սերտողութիւնները կատարեցինք, հիմնական մեքենաները եւ առարկաները պատրաստեցինք, յաջորդ տարուան Փետրուարին սկսանք զանոնք փոխադրել Սէուտական Արաբիա եւ ձեռնարկեցինք տեղադրման գործերուն, որոնք տեւեցին մինչեւ 1975 Հոկտեմբեր: Աշխատանքի աւարտէն ետք, մեր հաշիւները փակեցինք եւ վերադարձանք Պէյրութ, նապատակ ունենալով ընտանեօք գաղթել Քանատա:

Այս միջոցին, երբ կը գտնուէի Պին Լատէնի գրասենեակը, սէուտական զգեստով անձ մը զիս կանչեց որ տեսնուինք իր գրասենեակէն ներս: Շէյխ Սալէմն էր: Իմացած ըլլալով մեր գործերու յաջող աւարտին մասին՝ երբ լսեց թէ Լիբանանի պատերազմին պատճառով ծրագրած էինք գաղթել Քանատա,

խնդրեց ինձմէ, որ ընդունիմ իր առաջարկը՝ միասնաբար եւ համահաւասար հիմքերով Սէուտական Արաբիոյ մէջ հիմնել ընկերութիւն մը :

Խօսելով ընտանիքիս անդամներուն հետ, որոշեցինք յետաձգել Քանատա մեր գաղթը:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ 1976ԷՆ 2015

...1976ի գործընկերութեան հիմնումով, մեծ եղբօրս՝ Սուրէնին հետ փոխադրուեցանք Սէուտական Արաբիա: Ընկերութիւնը սկիզբը կոչուեցաւ Binladin Saxons, իսկ աւելի ետք՝ Arabian Bemco Contracting Company:

Մեր կեդրոնը Ճետտա էր, բայց գործ ունէինք ամբողջ Սէուտական Արաբիոյ մէջ, նաեւ՝ Ծոցի այլ երկիրներու մէջ, Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Քաթար: Մեր մասնագիտութիւնը եղաւ ուժանիւթ (energy), ենթակառոյց (infrastructure) եւ ելեկտրամեքենական ծրագրաւորում եւ կառուցում (electromechanical design & built projects): Ընկերութիւնը կը գործէր Պէն Լատէնի կառոյցէն անկախ:

... Առաջինը մենք սկսանք Մեքքէի մզկիթին ծրագիրը, զոր խնդրեցին՝ անպայման ստանձնենք, դժուարին պայմաններու մէջ:

Զեմզէմի ջուրին հորը մեծցուցինք, անդրմանիշակագոյն արհեստամիջոց գործածեցինք ջուրը լաւագոյն արհեստագիտութեամբ զտելու համար: Մզկիթին ձայնասփռումը (համատեղ եւ համաշխարհային տարածումով), ուխտավայրին արտաքին ծածկերը, ելեկտրականացումը եւ համակարգչային կառավարումը, ինչպէս նաեւ մզկիթի պաղեցնելու համակարգը ամբողջը մենք կատարեցինք:

...Այսօր, Մեքքէի մէջ միաժամանակ մինչեւ 2 միլիոն ուխտաւոր կ'աղօթէ:

...Մեքքէի ծրագրին զուգահեռ նմանօրինակ ծրագրեր ստանձնեցինք զանազան օդակայաններու մէջ:

Այս շատ դժուար ծարագրերուն յաջողութիւնը մեր վարկը աւելի եւս ամրապնդեց:

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾԱԻԱԼԻ ՍԷՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ՄԷՋ

Սկիզբը մխրճուեցանք աւելի ելեկտրամեքենաշինութեան բնագաւառ, յետոյ ընդարձակեցինք՝ աւելի ճարտարարուեստական ծրագրերու եւ դարձանք ելեկտրուժի մասնագէտ (power plants), Արաբական Ծոցի շրջանէն ներս հանդիսանալով նման միակ տեղական ընկերութիւնը:

...Ելեկտրակայանի ծրագիրը որ յանձն կ'առնես, շատ մեծ ենթակառոյց կ'ենթադրէ, մեքենական գործէն աւելի շատ՝ համակարգային գործընթաց մը կայ:

Այնքան յառաջացանք, որ Ճենըրըլ Էլեքթրիքի գլխաւոր կապալառուն դարձանք Միջին Արեւելքի մէջ, եւ շուտով գլխաւոր կապալառու (main contractor) դարձանք յատակագծումի եւ կառուցման նման ծրագրերու (design & build projects)...: Մեր կառուցած ելեկտրակայաններուն, ելեկտրական համալիրներուն (power plant) ընդհանուր տարողութիւնը կը տարուբերէր 500 մեկաուաթէն մինչեւ 5000 մեկաուաթի միջեւ:

Իդէպ, այսօր ամբողջ Լիբանանը կը գործածէ 2500 մեկաուաթ ելեկտրականութիւն: Մենք ելեկտրական համալիրին ծրագրաւորումը, յատակագծումը, մշակումը եւ շինութիւն-գործադրումը կ'ընէինք: Ամէն բան, սկիզբէն մինչեւ վերջ մենք կ'իրագործէինք: ...Մօտ 30,000 պաշտօնեայ ունէինք: Ճարտարագէտները եւ technicians կ'ապահովէինք զանազան երկիրներէ: 1200 երկրաչափ կ'աշխատէր մեզի հետ: Առաւելագոյն վեցէն ութ հազար պաշտօնեայ կ'ըլլար մեծագոյն շինարարական ծրագրերուն մէջ:

...Միջազգային արժէչափերով ճանչցուած մեծ ընկերութիւն եղանք: Մեզի մրցակից չկար Միջին Արեւելքէն ներս: Մենք գործընկերութիւն ունէինք Ճենըրըլ Էլեքթրիքին, Սիմընզին, Պեքթէլին եւ այլ եւրոպական եւ ճափոնական ընկերութիւններու հետ, անոնցմէ գնելով *թիւրպին*ները եւ ելեկտարկան այլ գործիքներ:

Մենք մրցունակ էինք, կրցանք նոյն ելեկտրակայանի համալիրը աւելի կարճ ժամանակի մէջ եւ աւելի քիչ ծախսով շինել, որպէսզի ըլլանք նախընտրեալ ընկերութիւնը: Երբ ելեկտրակայան շինելու նուազուրդի գործառնութիւն ըլլար, Սէուտական Արաբիոյ ելեկտրականութեան ընկերութիւնը հետամուտ կ'ըլլար որ մասնակցինք:

...Ես նախընտրեցի մեր այս մասնագիտութեան մէջ մնալ, չծաւալիլ ուրիշ բնագաւառ: Մեր յաճախորդներն էին կա՛մ կառավարութիւնը եւ կա՛մ կիսակառավարական ընկերութիւններ: Մեզի դրամատուները շատ դիւրութիւններ տուին: Մեր գործին մէջ գիտ-ելիքէն զատ ամէնակարեւորը դրամատնային հնարաւորութիւն ունենալն էր: Շնորհիւ մեր յաջողութիւններուն, կրցանք դրամատուներէ ապահովել լաւագոյն պայմաններով միլիարաւոր տոլարի վարկեր, առանց երաշխիքի:

...Մինչեւ 2010: մեր ընկերութիւնը իրագործած էր Սէուտական Արաբիոյ ելեկտարկայաններու 25-30 առ հարիւրը: Ընդհանուրը՝ 24000 մեկաուաթ ելեկտրականութիւն յառաջացուցած ենք Սէուտական Արաբիոյ եւ Ծոցի մէջ:

Սէուտական Արաբիոյ արեւելեան շրջանին մէջ մեր շինած ելեկտրակայանը բացառիկ է: 5000 մեկաուաթ կ'արտադրէ: Ջուրը ծովէն կ'առնենք, կը զտենք, մեքենաները այդ ջուրով կը պաղեցնենք, նաեւ այդ ջուրն է որ շոգիի կը վերածուի ելեկտրածին կազմածներուն համար: Ասիկա ճանչցուեցաւ իբրեւ Սէուտական Արաբիոյ ամէնէն արդիւնաւէտ combined cycle ելեկտրակայանը:

Մենք մայր ընկերութենէն զատ, 12-14 ընկերութիւններ ունէինք, տարբեր մասնագիտութիւններով, որոնց չորսը ճարտարարուեստական էին, մնացեալը՝ շինարարական այլ մասնագիտացած ընկերութիւններ: Ասոնց իւրաքանչիւրը առանձին գործող կառոյց մըն էր:

...Մեր գործընկերներուն հետ Մ. Նահանգներ ներդրում կատարեցինք: Կրտսեր եղբայրս 1985ին, հոն փոխադրուելով ինք ստանձնեց կալուածային այս գործը:

Եւրոպա ալ ներդրումներ կատարեցինք. մեծ եղբայրս 1990ին ստանձնեց այս գործը փոխադրուելով Փարիզ: Թէ՛ Մ. Նահանգներու եւ թէ՛ Եւրոպայի մէջ՝ Պէն Լատէնի հետ գործընկերութեամբ ըրինք:

40 ՏԱՐԻ ԵՏՔ

Ես մնացի Սէուտական Արաբիա մինչեւ 2015: Այդ տարի 40 տարի կ'ըլլար մեր գործընկերութեան: Որոշեցի թեթեւցնել իմ ներկայութիւնս: Չիս համոզեցին որ գործընկերութիւնը շարունակենք, եւ առցանց վարեմ գործը, որովհետեւ իրապէս միշտ յառաջացեալ արհեստամիջոցներ կը գործածէինք. Սէուտական Արաբիան շատ յառաջդիմած էր, յառաջացեալ տեղեկատուական արհեստագիտութեան (information technology) համակարգ ունէինք: Մնացի գործընկեր:

Պէն Լատէնենց հետ շատ բարեկամ էինք, երբեմն իմ խորհրդատուութիւնս, օգնութիւնս կ'ուզէին իրենց գործերուն համար: ...Անգամ մը Պաքըր Պէն Լատէնը զիս Ֆահտ թագաւորին ներկայացուց, թէ՝ մենք ամէնալաւ մարդիկն ենք որոնց ինք ճանչցած է:

...Չեմ ափսոսար Արեւելքի մէջ մնալուս...:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հետեւեալը կը փոխանցէի գործի միացող նորաւարտ երիտասարդներուն՝ ձեր նպատակակէտը պէտք է ըլլայ կեանքի մէջ յաջողիլ, հետեւողական պատասխանատու աշխատանքով, եւ ոչ թէ՝ հարստանալ, որովհետեւ յաջողութիւնը ինք կ'ապահովէ հարստութիւնը:

Յաջողութեան համար հիմնական է ծանր աշխատանք, ըլլալ պարկեշտ եւ փորձառութիւն ապահովել որոշ մասնագիտութեան մը մէջ: Նաեւ պէտք է յիշել, որ ղեկավար դառնալու համար, հիմնական է անձին տաղանդը, որ կը պահանջէ որոշում առնել եւ շարունակական հետապնդում կատարել:

Interview with Hrayr Henri Sarkissian
(About His Life Experience in Saudi Arabia, 1975-2015)
(Summary)

The interviewee narrates his exceptional 40-year-long experience in Saudi Arabia. The Sarkissian brothers launched their air conditioning business called Saxons in Beirut in the late 1960s. In 1973, Saxons is offered the air conditioning and water distribution project of an airport in Saudi Arabia, a project undertaken by the Binladin Group.

Upon successful completion of the project the Sarkissian brothers are made an offer to establish a partnership with the Binladin brothers, forming the Binladin Saxons company, which later is renamed Arabian Bemco Contracting Company.

Hrayr Henri Sarkissian describes the growth and development of the company, the major industrial fields the company delved into, and the challenges it faced. He also tells the story of the Mecca Holy Mosque expansion project and the perfection of its utilities (sound, water, etc.) as well as other partnership projects they had with the Binladin group.

Sarkissian describes how the company, with its expertise and excellent management, was transformed into a leading professional EPC company, specialized in designing, constructing, commissioning and operating power plants and major infrastructure electro-mechanical projects in Saudi Arabia and the region.

All in all, the Arabian Bemco Contracting Company, with its 30,000 workforce and 1200 engineers, designed, constructed, commissioned and operated power plants with a capacity of 24,000 MW in Saudi Arabia and other Middle Eastern countries.

Հարցազրոյց Պերճուհի Աբրահամեանի Հետ (1957-1995 Շրջանին՝ Քաթարի Իր Փորձառութեան Մասին)[1]

Ծնած եմ Պէյրութ, 1930ին: Զոքաք ԷլՊլաթ կը նստէինք: Մինչեւ 6րդ դասարան Սենթ ֆամիլ յաճախեցի, անկէ ետք ուզեցի շարունակել, բայց ծնողքիս նիւթական կարողութիւնը չէր արտօներ: Մենք երեք զաւակ էինք: Հայրս էր տան միակ աշխատողը: Նաւահանգիստը, բժիշկներու օգնական էր: Բժիշկները նաւ կ'ելլէին Պէյրութ հասնողներուն առողջական վիճակը քննելու, ինք անոնց օգնականն էր:

Բայց կը սիրէի կարդալ, ինքնազարգացում կ'ընէի: 1949ին Սի. Էմ. Սի. (Christian Medical Center) հիւանդանոցը բացուեցաւ Էշրեֆիէ: Մտածեցինք՝ ուսանելու միակ միջոցը հիւանդապահութիւն ուսանիլն էր: Հիւանդապահութիւն ուսանեցայ Սի. Էմ. Սի.: Երեք տարիէն վկայականը առի, հոն ալ աշխատեցայ: Յետոյ Կէօչէրեան հիւանդանոց անցայ, որովհետեւ Սի. Էմ. Սի.էն աւելի կը վճարէր: Տարի մը հոն աշխատեցայ: Հիւանդներէն մին համակրեր է ինծի եւ եղբօր նամակ գրեր է իմ մասիս: Տղան եկաւ, մինչայդ ես բանէ տեղեակ չեմ: Մեր ծնողքները քիչ մը յետամնաց էին, խորամանկ չէր ծնողքս, մասնաւոր զարգացում ալ չունէր, փորձառու չէին, փակ էին: Ազատ կեանք չունէինք մենք, միշտ տունն էինք, մեզի արգիլուած էր դուրսերը ելլել:

Թեկնածուն եւ հարազատները կը ներկայանան եւ զիս իբրեւ հարս կ'ուզեն: Ծնողքս հետաքրքրուեր են թեկնածուիս մասին, նայեր են որ աղուոր ընտանիք մըն է, «այո» ըսեր են: Զիս կատարուած իրողութեան առջեւ դրին. «պիտի ամուսնանաս հետը»: Իրենք՝ ծնողքդ կ'որոշեն: Ծնողքս այնքան խիստ էր, որ ադիթ չէին տար խօսելու՝ «ասի պիտի ըլլա՛յ, ասի պիտի ընե՛ս, վե՛րջ»:

Ամուսինիս տարիքը չէի գիտեր. ինծի ըսուեցաւ որ իմ տարիքիս մօտ է, բայց յետոյ պարզուեցաւ որ ինծմէ բաւական մեծ էր: Երկու շաբաթ ծանօթացայ եւ երկու շաբաթ ետք ալ ամուսնացանք: Հոս հարսանիք ըրինք Ս. Նշան եկեղեցիին մէջ, տեղւոյն վրայ հիւրասիրութիւն մը եղաւ, ներկայ էին փեսան, քոյրը, հարազատները: Ծնողքը Հալէպ մահացած էին: Հիւանդապահուհի ընկերներս կային, կարգ մը բժիշկներ, ծանօթներ, հայրենակիցներ: Յետոյ պանդոկ, Պհամտուն գացինք, յետոյ այցելեցինք Երուսաղէմ՝ ամուսինիս մօրաքրոջ, որ կաթոլիկ մայրապետ եղած էր, վերադարձանք Պէյրութ եւ ... ճամփորդեցի: Ու՞ր կ'երթամ՝ չեմ գիտեր: Քաթար ու՞ր է՝ չեմ գիտեր, անու՛նը չեմ լսած:

1957ին գացի Քաթար: Ճամփորդութիւնս տեւեց եօթուկէս ժամ: Ուղիղ թռիչք էր դէպի Տոհա: Ծնողքիս ըսուեր էր որ ամէն բան՝ տուն, տեղ կարգադրուած էր, խանութ կար, բայց...:

Ճիշտ է, ամուսինս խանութ ունէր, հագուստեղէնի - բոլոր տարիքներու համար - Եւրոպայէն կը բերէր հագուստները, բայց...

[1] Զրոյցը կատարած ենք 21 Նոյեմբեր 2022ին, Պէյրութի իր տան մէջ:

Ես գլխարկ դրած, շիք հագուած գացի Տոհա ու... մտայ տունս: Առանձնատուն էր, բայց տուն չէր.... Անշուշտ, ապրելիք տարածք մըն էր. մահճակալ կար մէկ անկիւնը, խոհանոցը կայ, բայց ուրիշ՝ ոչ մէկ բան: Սենեակը պզտիկ սառնարան մը կար միայն, հպարտութեամբ ատիկա ցուցուց: Արաբական տուն էր, պարսպապատ. դռնէն ներս կը մտնես՝ բակ մը, պարտէզի պէս պարապ տարածք մը, յետոյ՝ մեր սենեակը: Ննջարանէն բակ կ'ելլես եւ բաղնիք կամ խոհանոց կ'երթաս: Մեր սենեակին տանիքը գերաններ շարուած ու վրան հող խտացուած էր: Գետինը՝ յատակը, պեթոն էր: Սենեակը խոշոր էր, վարագոյրով բաժիններու վերածեցինք: Պահարան չունէինք՝ սենեակին մէջ պարան քաշած էինք, պարանին վրայ կը փռէինք մեր հագուստները: Եթէ պահանջկոտ աղջիկ ըլլայի՝ յաջորդ օրն իսկ ետ կը դառնայի: Բայց քանի որ ծնողքս որոշեր էր՝ «ասի ասանկ է, պիտի ապրի՛ս»: Լմնցա՛ւ: Ես երբեք առարկութիւն չըրի:

Մարալը, առաջին աղջիկս, ծնաւ 1959ին: Մայրս եկաւ ինծի օգնելու: Խեղճը հիւանդ վերադարձաւ...: Երկրին մէկ լաւութիւնը այն էր, որ առողջապահական բոլոր ծախքերը կառավարութիւնը կը հոգար. հիւանդանոց պառկիլ, գործողութիւն, ծննդաբերութիւն եւն. առաւել՝ նորածինին հագուստն ու ուտեստը, ամէն ինչ:

Տոհան շատ աղքատ եւ յետամնաց քաղաք էր այն ատեն: Ամէն մարդ աղքատ էր: Քարիւղ չէր յայտնաբերուած դեռ: Քաղաքը ուտելիք չկար: Շատ առատ ձուկ կար, եւ տուփեղէն կ'ուտէինք: Տան մէջ ջուր չկար: Ջուր բերողներ կային. ասոնք երկար ձող մը կը դնէին ուսերնին, որուն երկու կողմը կը կախէին ջուրի կուժերը, կը բերէին եւ մենք ջուրը կարասներու մէջ կը լեցնէինք: Այդ ջուրը լուացքի, լոգանքի, լուացուելու, բաղնիքի կը գործածէինք: Կարծեմ խմելու ջուրը տարբեր էր: Ելեկտրականութիւնը օրական 12 ժամ կու տային: Երբ մեր ելեկտրականութիւնը ընդհատէր, ճաշը կ'առնէինք եւ պզտիկներուս հետ կ'երթայինք ելեկտրականութիւն ունեցող մօտակայ թաղ մը: Բայց երբ քարիւղ սկսաւ արտահանուիլ քաղաքը ամբողջ լոյսերու մէջ մտաւ:

Ծնողական տունս փառահեղ չէր, բայց երբ աղջիկ մը ամուսնանայ՝ իր ծնողական տունէն գոնէ մէկ աստիճան աւելի լաւ պայմաններ կ'ակնկալէ: Ես ատիկա չտեսայ: Պէյրութ պիւթակազ կը գործածէինք, հոն՝ օճախ գործածել սկսայ: Ջուրը օճախով կը տաքցնէինք, ճաշը օճախով կ'եփէի: Շատ խեղճուկ տուն էր: Ես կամք ունեցայ, առանց խօսելու, իմ ճաշակովս շտկեցի տունս. վարագոյրներ դնել տուի, պզտիկին մահճակալ շինել տուի, պահարան շինել տուինք: Պզտիկներս երբ ծնան իրենց պառկելիք տեղ շինել տուինք: Ամուսինս չէր հակառակեր, կ'ընդառաջէր:

Ամուսինս՝ Սեդրակ Գասպարեան, գիտակից մարդ էր, խելացի, բարի, չէր խնայեր մեր կարիքներուն համար: Կարելին կ'ընէր որ զիս գոհ ձգէ: Ինք աղուոր զարգացում ունէր: Ֆրանսական դպրոց գացած էր: Թրիփոլիէն եկած էր Քաթար: Թրիփոլի ընկերութիւն մը Քաթարի համար գործաւորներ կը հաւաքագրէ եղեր, արձանագրուեր է: Սկիզբը աշխատեր է Qatar Petroleum Companyին մէջ, յետոյ երբ քիչ մը դրամ հաւաքեր է, որոշեր է անձնական խանութ բանալ: Բայց խանութը քաթարցիի մը անունով էր: Դրամագլուխը, աշխատանքը ամուսինիս էր, բայց քաթարցին շահին 55 տոկոսը կ'առնէր, դրամա-

տան մէջ քաթարցիին անունով էր գործառնութիւնը: Մինչեւ հիմա ալ անոնք ունին խանութը: Ես գացի, խանութը շտկրտեցի, կոկեցի ճաշակիս համեմատ: Ամուսինիս գործը լաւ էր, որովհետեւ այն ատեն ... Տոհայի մէջ հագուստեղէնի երեք խանութ կար միայն. մենք, տեղացի Տարուիշները եւ ուրիշ դրսեցի մը:

Ամուսինիս գործը օրէօր լաւացաւ: Առտուն ես տան դուռը կը գոցէի եւ հետը խանութ կ'երթայի, երբ Մարալը դեռ չէր ծնած: Խանութը մէկ փեղկ ունէր, մեծ սենեակ մըն էր, Եւրոպայէն կը բերէինք ապրանքը: Ամուսինս Եւրոպա կ'երթար կը պատուիրէր ապրանքը եւ կը ղրկէին:

Ճաշի եւ ուտեստի առումով, ես ճաշ կ'եփէի, բայց հայ *հոսթէս* մը ունէինք, որ մեզի ուտեստ կը բերէր: Օդակայանը բաց էր, կրնայիր մտնել-ելլել, կարծես տունդ կը մտնես. բան ըսող չկայ, հարցնող, առարկութիւն ընող չկար, որովհետեւ խստութիւն չկար: Ամէն անգամ որ մեզի ծանօթ այս աղջիկը Տոհա պիտի գար՝ մայրս անոր հետ միշտ ճամպրուկ մը ուտեստեղէն, կերակուրցու կը ղրկէր՝ կանաչեղէն, պտուղ: Միայն խոզի միս արգիլուած էր: Կար նաեւ այլ միջոց մը. Տարուիշները խանութ մը ունէին. հոն կ'արձանագրէինք մեր ուզած ուտեստները, յետոյ շաբաթ մը ետք մեզի լուր կու տային թէ ապսպրանքները եկած են. կ'երթայինք կ'առնէինք:

...Բոլոր զաւակներս ալ Տոհա ծնած են: Յակոբը 1960ի ծնունդ է, 1963ին Վիգէնը ծնաւ, 1964ին՝ Րոպէրը, բայց ան 10 տարեկանին հիւանդութենէ մահացաւ: Մինչայդ արդէն սկսան առանձնատուներ շինուիլ. քարիւղը սկսաւ արտահանուիլ, շինարարութիւնը ծաւալիլ սկսաւ: Առաջին շինութիւններէն մին մեր խանութին մօտ էր, պզտիկ վիլլա մըն էր, 3 ննջարանով, աղուոր խոհանոցով, պզտիկ նստասենեակով: Պարսպապատ տուն էր: Պարտէզ մըն ալ ունէր: Հոն փոխադրուեցանք, աղուոր մըն ալ շտկեցինք:

Երեխաներս ծնելնէն ետք այլեւս խանութ չէի երթար: Խանութը տունէն մօտ 400 մեթր հեռու էր: Երբ ամուսինս կանչէր՝ կ'երթայի: Կէսօրին կու գար կը ճաշէր ու ետ կ'երթար: Շրջան մը ես տարի պզտիկները դպրոց: Երբեմն ամուսինս ալ կը տանէր դպրոց: Իտալացի ընկերուհի մը ունէի, կառավարիչ շէյխին քարտուղարուհին էր. դրացի էինք, երբեմն ինք կու գար եւ պզտիկներս կառավարական դպրոց կը տանէր: Դպրոցը ձրի էր:

Երբ Մարալը քիչ մը մեծցաւ, հայրս ըսաւ որ «ես աս գեղեցիկ պզտիկը հոն չեմ ձգեր»: Մարալը Պէյրութ ղրկեցի, յետոյ Յակոբս ղրկեցի երբ դպրոցական տարիքի հասաւ: Քովս մնացին Վիգէնը եւ Րոպէրը: Վերջին զաւակս անհանգստացաւ Տոհա. բժիշկները ըսին թէ պէտք է Պէյրութ տանիմ բուժման. Րոպէրը ամէն ամիս AUB պէտք էր բերէի: 1970ականներու սկիզբը ստիպուեցայ Պէյրութ գալ զաւկիս համար: Ամուսինս չէր գար Պէյրութ. խանութը որու՞ պիտի ձգէր: Ես կ'երթայի քովը:

Քաթարի մէջ ես չաշխատեցայ. չորս պզտիկով կարելի չէր աշխատիլ, թէեւ կ'երազէի աշխատիլ: ...Եկայ Պէյրութ, տարեշրջանը սկսած էր, Հազմիէ տուն վարձեցի, ստիպուեցայ տղաքս Սուք ԷլՂարպ դպրոց ղրկել, իսկ Մարալը ՀԲԸՄ Դարուհի Յակոբեան աղջկանց երկրորդական վարժարանը գնաց:

Լիբանան երբ ամէն ինչ կեցաւ պատերազմին պատճառաւ, զաւակներս առի տարի Տոհա: Յակոբը երկրորդականը Տոհայի մէջ, պետական դպրոց աւար-

տեց, տարի մը սպասեց որ Վիգէնն ալ աւարտէ ու միասին երթան Մ. Նահանգներ՝ համալսարանական ուսման: Օհայօ ուսանեցան: Մարալը Տոհա քարտուղարութիւն ուսանեցաւ եւ հոն սկսաւ աշխատիլ: Ամուսնացաւ անգլիացիի մը հետ, ունի երկու զաւակ:

Յակոբը ճարտարագէտ է, ամուսնացած է ամերիկացիի հետ, մէկ զաւակ ունի: Վիգէնը, մեքենական երկրաչափութեան դոկտոր է, համակարգիչներու մասնագէտ, չէ ամուսնացած: Ամուսինս կը փափաքէր որ զաւակները աւարտեն ուսումնին ու գան իր գործը շարունակեն, բայց ես պնդեցի որ իրենք չմնան հոն, կեանքերնին չկապեն խանութին, քանի որ խանութը մեր անունով չէր:

..Տոհա գործերնիս մեծցաւ, հետզհետէ քաղաքն ալ մեծցաւ, շինարարութիւն շատցաւ, ժողովուրդ գալ սկսաւ: QPCն բերաւ ժողովուրդ: Գործերնիս աղուոր էր, խանութը մէջտեղ եկաւ:

Մեր առաջին խանութը ձգեցինք եւ ուրիշ մը առինք, աւելի մեծ. երկու կողմէն ճամփու վրայ էր, չորսական փեղկ ունէր իւրաքանչիւր կողմը: Երկյարկ էր: Խանութին անունը Քորոնա էր, որովհետեւ ամուսինս Զուիցերիայէն Քորոնա ժամացոյցներու գործակալութիւնը առաւ: Մեր խանութը շատ հանրածանօթ էր:

Խանութը հագուստեղէնէ բացի տունի կտորեղէնի բոլոր կարիքները կը ծախէր՝ անկողնային կտորեղէն, անձեռոց, ծածկոց եւն.: Մինչեւ հարսի հագուստ կը վաճառէինք: Այլեւս Եւրոպայէն կու գային եւ քաթալոկներ կը ներկայացնէին, մենք կ'ընտրէինք եւ յետոյ իրենք կը ղրկէին, կ'երթայինք մաքսատունէն կ'առնէինք: Ամուսինս մեծցուց գործը, բայց դրամատան մէջ քաթարցիին անունը մնաց:

...Երբ առաջին անգամ գացի Տոհա, հայեր կային, բայց ոչ շատ. հաւանաբար շուրջ 20 երիտասա՞րդ, QPC կ'աշխատէին, համալիրի մէջ կ'ապրէին: Մեծամասնութիւնը Թրիփոլիէն էին հաւանաբար, կամ մենք թրիփոլիցիներուն ծանօթ էինք: ...Պատարագը տուներու մէջ կը կատարուէր, եւրոպացի պատարագիչ կու գար: ...Տոհա փորձեցին հայկական միջավայր յառաջացնել բայց չյաջողեցան:

Առաջին ամուսնացած հայ ընտանիքը ես էի: Օթօ քշող առաջին կինն ալ ես էի: Ամուսինս փափաք ունէր որ ինքնաշարժ քշեմ, ինք քաջալերեց. Պէյրութ եկայ վարորդական միջազգային արտօնագիր հանեցի, գացի Տոհա, պզտիկ քննութիւն մը տուի եւ ամուսինս նոր օթօ մը գնեց, Միթսուպիշի սթէյշընն: Ուզած ատենս կը քշէի, ծով կ'երթայի զաւակներուս հետ. սկիզբը մարդիկ կ'առարկէին, որ առանց ամուսինի, միայն զաւակներով ծով կ'երթամ, յետոյ վարժուեցան: Ծովեզերքը, լողալու համար, մենք՝ օտարահպատակ քրիստոնեաներս, եւրոպացիները առանձին բաժին ունէինք:

Յետամնաց էին տեղացիք: Երեւակայեցէք, անգամ մը Տոհա, աղջկանց դպրոցին մէջ, ներկայացումին կերպարներէն մէկը տղամարդ պէտք է ըլլայ, աշակերտուհիներէն մէկուն տղամարդու զգեստ կը հագցնեն: Ներկայացման ներկայ կը գտնուին միայն կիներ, իսկ երբ բեմ կ'ելլէ այս տղայ հագցուած աշակերտուհին, վլվլուկ կը փրցնեն ներկաները՝ թէ մարդ կայ բեմը, դէմքերնիդ ծածկեցէք...: Յաջորդ օրը կին բեմադրիչը դուրս ըրին երկրէն...:

Յետոյ, անշուշտ, ամէն ինչ փոխուեցաւ:

...Ամուսինս մէկ անգամէն անհանգիստ եղաւ, հիւանդացաւ եւ երկու շաբաթ ետք, 24 Օգոստոս 1995ին մահացաւ:

Երբ ամուսինս մահացաւ, ինծի լուր տուին թէ անցագիրս տանիմ եւ պատրաստուիմ երկիրը ձգելու, որովհետեւ իբրեւ կին առանձինն ապրելու իրաւունք չունէի Քաթարի մէջ...:

...Իր մահէն ետք ես մեր խանութը չեմ մտած. ինծի չձգեցին խանութ մտնել: Քաթարցին տիրացաւ խանութին: Դրամատան հաշիւէն ալ ոչինչ ունեցանք: Ձգեցի Տոհան եւ Պէյրութ եկայ:

Սեդրակին մահէն ետք ամէն ինչ գնաց: Ես բան մը չտեսայ: Ամուսինիս Քաթարի աշխատանքին միջոցով զաւակներս ուսանեցան, ես ծնողքիս տունը գնեցի Մար Մխայէլ, Պէյրութ, 2010ի կողմերը, ուր հիմա կը բնակիմ:

Ամուսինս թաղուեցաւ Տոհա:

INTERVIEW WITH BERDJUHI APRAHAMIAN
(About Her Life in Qatar, 1957-1995)

(Summary)

The interviewee, born in Beirut, briefly describes her life there. After her elementary education, due to financial difficulties, she opts for nursing as it is free of charge, provided the graduate later works in the Medical Center where she was taught. Eventually she gets married as arranged by her parents, who do not ask for her opinion.

She leaves for Doha, Qatar, in 1953, and she describes her new home, which is much worse than where she was living in her parental home. In due time, however, her husband, who was recruited from Tripoli to work in the Qatar Petroleum Company, saves some money and opens a shop in partnership with a Qatari, whose only capital is his citizenship!

In due time their outfit and home linen business grows as there are only three shops in Doha with that same business.

The interviewee describes the conditions of life in Qatar, where only 12 hours of electricity was provided daily, while food was scarce except for fish. She notes that her parents used to send them a package of food every time a hostess they knew was going to Doha.

As of the 1960s, with the increase in the production of oil, Doha undergoes huge changes in growth and development.

However, the sudden death of her husband makes her residence in Doha illegal. Thus, she is forced, by the rule of law, to leave the country, and loses everything her husband and she have saved as their savings and all the business is in the name of the Qatari citizen, who appropriates them all.

Հարցազրոյց Աբրահամ Տետէեանի Հետ (1965-92 Շրջանին՝ Քաթարի Իր Փորձառութեան Մասին)[1]

Ծնած եմ Պէյրութ, 1939ին Քարմ ըլ-Զէյթուն, Էշրեֆիէի մէկ շրջանը: Հայրս կօշկակար էր, խանութը գոցելէն ետք կ'երթար Ապրոյեան գործարան եւ մասնակի ժամանակով հոն կ'աշխատէր: Դպրոցական ուսում չունէր, բայց օրական Ս. Գիրքը կ'ուսումնասիրէր: Զօրաւոր մարդ էր, շատ պարկեշտ, թուրքերու ջարդերէն ազատած, եկած էր Ճիպէյլի որբանոց: Մայրս դերձակուհի էր: Նոր Հաճնոյ մէջ հաւաքած էր խումբ մը տիկիններ ու աղջիկներ եւ անոնց դերձակութեան դաս կու տար: Գրել-կարդալ գիտէր:

Նախակրթարանս Կենաց վարժարան գացի, յետոյ՝ Էշրեֆիէի Հայ աւետ. կեդրոնական բարձրագոյն վարժարան եւ 1956-57 կրթաշրջանին աւարտեցի:

Երկրորդականի տարիներէս որոշած էի երկրաչափութիւն ուսանիլ, թէեւ ընտանիքիս, միջավայրիս մէջ երկրաչափ չկար: Երկրորդականը աւարտելէս ետք երբ հօրս նորէն կրկնեցի երկրաչափութիւն ուսանելու փափաքս, «նայէ,- ըսաւ,- քեզի մեծ բարիք մը կ'ընեմ՝ չեմ ստիպեր որ դպրոցը ձգես, աշխատիս եւ դրամ բերես տուն: Տունդ ձրի է, ուտելիքդ՝ ձրի, մնացածը ինչպէս կրնաս գտնել՝ քու գիտնալիքդ է»: Իրապէս ալ մեծ բարիք մըն էր ատիկա: Տունը ձիթապտուղը հատով կը բաժնուէր մեզի, եւ որոշ քանակով կ'ուտէինք: Մեր տունը սեփական էր, երկու սենեակ: Երեք եղբայր եւ մէկ քոյր էինք:

...Ֆրեշմէն արձանագրուելու համար Պէյրութի ամերիկեան համալսարան գացի: Առանձին: Արձանագրող պաշտօնեային անունը կը յիշեմ՝ Ֆլէյհան:

Ըսի՝ «համալսարան պիտի գամ եւ երկրաչափ ըլլամ»:

- Լա՞ւ: Ֆրեշմէնը տարին 850 Լ.Ո. է: Քովդ ունի՞ս այդ դրամը:

- Հիմա չունիմ, բայց կը բերեմ:

Բաւական հարցուփորձ ընելէ ետք ըսաւ.

- Նայէ՛, ես գիտեմ որ դրամ չունիս, եւ հայրդ դրամ պիտի չտայ քեզի, եւ պէտք չէ արձանագրեմ քեզի, բայց հաւնեցայ քեզի, պիտի արձանագրեմ. լաւ նիշեր եթէ բերես՝ կրթանպաստ կու տանք քեզի:

---

[1] Զրոյցը կատարած ենք 17 Սեպտեմբեր 2019ին, Պէյրութ, իր գրասենեակը: Տետէեան 1996էն 2000 Լիբանանի խորհրդարանի երեսփոխան էր, ներկայացնելով Լիբանանի աւետարանական համայնքը:

Մանաւանդ 1980ականներու կէսերէն, Տետէեան բարեսիրական երախտաշատ ծառայութիւններ մատուցած է պատերազմին պատճառով նիւթական լուրջ դժուարութիւններու մատնուած լիբանահայ ընտանիքներու եւ դպրոցներու, աջակցելով անոնց կրթաթոշակի, դեղօրայքի, սննդամթերքի եւ այլ կարիքներուն: Տետէեան օգնած է նաեւ Լիբանանի Պէյթ Շապաղ գիւղի անդամալոյծներու հիւանդանոցին: Ան այս բոլորին մասին խոնարհաբար կ'արտայայտուի՝ «Հաւանաբար ընտանեկան դաստիարակութիւն էր, կը ջանայի օգտակար ըլլալ: Նկարագրիս մէջ էր որ պէտք է բաժնեմ այդ դրամէս: Դրամը շատ օգտակար է, եթէ միջոցը ունիս: Մենք աղքատ էինք. աղքատին վիճակէն շատ լաւ կը հասկնամ: Բարիք ընելը ուրախութիւն է...»:

Ֆրեշմէնը լաւ նիշերով վերջացուցի: Լիբանանեան կառավարութենէն 450 Լ.Ո. ստացայ. պետութիւնը պատուոյ ցանկի վրայ գտնուող երկրաչափ ուսանողներուն այդ կրթանպաստը կ'ընէր: Իմացեր էի նաեւ Կիւլպենկեանին մասին... Անթիլիաս, կաթողիկոսին քով գացի, ըսաւ՝ «մենք Կիւլպենկեանի հասցէն չունինք, երբ ունենաս՝ հաճիր մեզի ալ տալ»: Իմացայ որ Կիւլպենկեանը գրասենեակ մը ունի՝ Թալաաթ Ճումպլաթ: Գացի գրասենեակը. պաշտօնեան ըսաւ որ դիմեմ առաջնորդ սրբազանին, «եթէ կրնայ՝ օգտակար կը դառնայ»: Գացի առաջնորդ սրբազանին, բացատրեցի պարագաս:

Ըսաւ՝ «նամակ մը գրէ, ահա հասցէն, թուղթ եւ մատիտ...»: Գրեցի նամակը, բացատրեցի թէ կը փափաքիմ երկրաչափութիւն ուսանիլ եւ օգնութեան պէտք ունիմ ... ղրկեցինք նամակը: ... Իսկապէս ալ պատասխան-հեռագիր մը եկաւ մէկ ամիսէն նուազ ժամանակի ընթացքին, թէ՝ այս տղան ժամանակ չունի, դասերը կը սկսին եւ նայեցէք, ինչ որ պէտք ունի՝ տուէք ուսման, հագուստ-կապուստի, ուտեստի, գիրքերու: Ինծի միքանի հազար գումար կրթանպաստ եկեր էր: Ըսի՝ «ես պէտք չունիմ այս բոլորին. 1000 ոսկի պէտք ունիմ»:

Միքանի ուսանող բարեկամներ ունէի, որոնք դրամի պէտք ունէին, թելադրեցի որ իրենք ալ գրեն: Դիմողները այնքան շատցան, որ Կիւլպենկեանը համալսարանական կրթանպաստներու ֆոնտ հաստատեց: Մինչայդ չկար ֆոնտ: Ես առաջինն էի Պէյրութի մէջ, եւ անուղղակի պատճառը եղայ այդ ֆոնտի հաստատման: Ամէն տարի նիշերս կը ղրկէի Կիւլպենկեան եւ հիմնարկութենէն դրամ կու գար: Ասոր զուգահեռ, գացի համալսարանին երկրաչափութեան բաժնի տնօրէնին, Admiral Ken Wilder, ծովակալ էր ամերիկեան նաւատորմի: Ըսի կը փափաքիմ արձանագրուիլ, բայց դրամ չունիմ:

- Դրամ չունիս and you dare to come to speak with me?

- Of course, because I want to study: Պատրաստ եմ աշխատելու ի՛նչ գործ որ տաս, ինչ կ'ուզես՝ կ'ընեմ:

- Ի՞նչ գործ կրնաս ընել:

- Տպարան աշխատած եմ:

- Ի՞նչ կ'ընէիր:

- Գրաշարութիւն:- Չհասկցաւ: Աւելցուցի, թէ գիրք ալ կը կազմեմ:

- Գիրք կազմել գիտե՞ս:

- Այո՛:

- Մենք գրադարանը շատ գիրքեր ունինք, որոնք պէտք է կազմուին: Կապալառու մը ունինք, որ գիրքեր կը կազմէ:- Մէկը կանչեց եւ պատուիրեց որ ինծի 2-3 գիրք տան կազմուելիք:

Շաբաթէ մը վերադարձայ՝ գիրքերը կազմած: Տուի իրեն: Հաւնեցաւ գործս:

- Ի՞նչպէս գիտնամ որ դուն ըրած ես: Թերեւս մէկու մը տուած ես եւ իրեն վճարած, որ ընէ:

- Դրամ չունիմ որ վճարեմ: Կ'ուզես՝ սենեակ մը տուր եւ գիրք մը՝ կազմեմ:

- Լաւ, այդ պարագային քու տարեկան կրթաթոշակդ 1500 է, քեզի 1000 ոսկինոց գործ պիտի տանք:

Սքանչելի էր: Բաւական յետոյ ուրիշ գործ մըն ալ գտայ համալսարանին մէջ: Ասոր համար նորէն քովը գացի, ըսի.

- Գործ մը եւս գտայ. եթէ ատիկա ընեմ, քեզմէ ուրիշ բան չեմ ուզեր: Համալսարանին պաշտօնէութիւնը ժամը 5ին տուն կ'երթայ, բայց երկրաչափութեան ուսանողներ կը մնան, դաս կ'ընեն, յատակագիծ-քարտէս կը գծեն, գիշեր կը լուսցնեն: Ծնողներ կը հեռաձայնեն, պաշտօնէութիւն չկայ որ հեռաձայնին պատասխանէ. ես կը ստանձնեմ հեռաձայնին պատասխանելը, համապատասխան ուսանողը հեռաձայնին կանչելը:

Նայեցաւ, խնդաց, ըսաւ.

- Ժամական քեզի 5 ոսկի կու տամ, մինչեւ շրջանաւարտութիւնդ այդ գործը քեզի է:

Ես թէ՛ գիրք կազմեցի, թէ՛ Կիւլպենկեանէն եւ թէ՛ պետութենէն կրթանպաստ ստացայ... դրամ աւելցաւ քովս: Տարի հօրս տուի:

- Տղաս, չըլլայ որ աղտոտ գործեր կը տեսնես եւ դրամ կը բերես,- զգուշացուց հայրս:

...1958ին զինեալները Ժըմմէյզի խոշոր փոս մը փորեցին կռիւի համար, թրամվայի երկաթգիծերը քանդեցին-հանեցին: Ստիպուեցայ Նահրէն մինչեւ Պուրճ քալել, յետոյ հանրակառք առնել: Մէկ տարի ասանկ շարունակեցի, բայց ուսումս չձգեցի:

Ուսումս հինգ տարի տեւեց:

...Ի՞նչպէս աշխատանքի մտայ: Ես չաւարտած՝ գործատէրը զիս գտաւ: Մեր շրջանաւարտութեան տարին, բոլոր Լիբանանի մէջ 59 երկրաչափ աւարտեց. մաս մը ելեկտրական, մաս մը մեքենական եւ մաս մը շինարարական երկրաչափութեան բաժինները: Գործատէրերը, Լիբանանի մէջ թէ դուրս, կը սպասէին կրթաշրջանի աւարտին, որպէսզի պաշտօնակոչեն շրջանաւարտները: Գործը շատ էր, մասնագէտները՝ քիչ:

Սկիզբը աշխատեցայ Սարգիս Ազատեանին քով: Նշանաւոր կապալառու էր, Սուրիա: Բախտը օգնեց, հետը աշխատեցայ: Ինծի երկրաչափութիւն եւ կապալառութիւն սորվեցուց: Ինծի իր տղուն պէս հոգ կը տանէր: Ես ալ իրենց հոգ կը տանէի: Ուրախ էինք: Միքանի տարի յետոյ, ըսաւ. «Տղաս, նայէ, շէնք մը կայ, որ տղուս հետ կը շինեմ Քաթար, երկրաչափի պէտք ունի, իր երկրաչափը, ձգեր գացեր է: Կ'ուզեմ որ դուն ըլլաս իր երկրաչափը, վեց ամիս, մինչեւ որ ուրիշը գտնէ: Ես պիտի կրկնապատկեմ ամսականդ, դուն Քաթար կ'երթա՞ս»:

Ըսի՝ կ'երթամ, թէեւ Քաթարին տեղը չէի գիտեր:

Վեց ամիսը լմնցաւ, հարցուցի՝ «մէկը գտա՞ք»: Ըսին՝ «չէ, քեզի նոր յաւելում պիտի տանք, մեզի հետ մնա՛»:

Չորս տարի՝ 1965-69, իրենց հետ Քաթար աշխատեցայ: Յետոյ որոշեցի անձնական ընկերութիւն հիմնել:

Բարեկամացայ շէյխին հետ, որուն պալատ մը շինեցի, յետոյ առաջարկեցի միասին ընկերութիւն հիմնել:

- Ի՞նչ կ'ուզես:

- 500,000 րիալ: Ես կ'աշխատիմ: Եթէ վնասեցինք՝ դրամդ կ'երթայ...:

- Դուն դրամ չես դներ, ես կը վնասեմ միայն:

- Եթէ վնասենք՝ դրամդ կ'երթայ, դուն ուրիշ դրամ ունիս: Ես վնասեմ՝ գործս կ'երթայ, անօթի կը մնամ:

Համաձայնեցաւ շէյխը, ընկերութիւն մը հիմնեցինք, Hamad Bin Khaled Contracting անունով: Յետոյ կրճատեցինք անունը, եղաւ՝ HBK, որ ներկայիս Քաթարի մեծագոյն կապալառուներէն է: ... Քաթարի օրէնքն էր որ քաթարցի գործընկերը պէտք է ունենայ բաժնեչափերուն մեծամասնութիւնը: Աշխատեցանք միասին մինչեւ 1992: Քաթարի օդակայանը շինեցինք, հիմնականը աշխատեցանք Շէլ քարիւղային ընկերութեան հետ: Շէլը երկաթեայ խողովակներու մեծ պահեստարաններ ունէր: Խողովակները ամէն տարի պէտք էր մաքրուէին մէջէն, sand blasting կ'ընէինք, որպէսզի արտահանուող քարիւղը խողովակին մէջ արգելքներու չհանդիպի, աւելի մաքուր ըլլայ եւն.: Մեր ընկերութեան գործին գոնէ կէսը maintenanceի գործ էր: Սկիզբը ընկերութիւնը 10 աշխատող ունէր, երբ ձգեցի՝ 1600 էր պաշտօնէութեան թիւը: Մեր տարեկան պիւտճէն նուազագոյնը 100 միլիոն րիալ էր:

1992ին հայրս հիւանդացաւ, ինծի ալ 25 տարի եղած էր Քաթարի մէջ, որոշեցի ձգել ու գալ Պէյրութ: Այդ տարի, հայկական կուսակցութիւններէն (թէ՛ հնչակեան եւ թէ՛ դաշնակցական) առաջարկեցին որ երեսփոխանական թեկնածու ըլլամ: Մերժեցի, քանի որ լիբանանեան քաղաքականութեան ծանօթ չէի...: 1996ին դարձեալ եկան: Այն ատեն «այո» ըսի:

1992ին Քաթարէն ելլելէս ետք Քաթար գործ չունիմ այլեւս:

...Իմ ատենս, Քաթար թերեւս շուրջ 100 ընտանիք հայ կար. քաղաքին տարբեր տեղերը կ'ապրէին. իրարու հետ ընդհանրապէս կապի մէջ էինք:

Սկիզբի 100 հայ ընտանիքը յետոյ վերածուեցաւ գոնէ 500ի: Ասոնք ընդհանրապէս լիբանանցի հայեր էին: Մասնագիտութեամբ մէկ մասը երկրաչափ էր, միւսները՝ շինարարութեան վարպետներ, ելեկտրագէտներ մեծ մասամբ պաշտօնեաներ: Ընտանիքներով հոն հաստատուած էին: Քաթարի մէջ հնագոյններէն է Հալէպէն եկած լուսանկարիչ Պետրոսը, Studio Qatar: Շուրջ 10 հայեր կային, որոնք կապալառու ընկերութիւններ հաստատեր էին գործընկերութեամբ: Նկատի առ, որ երկիրը կը կառուցուէր: Ինքնաշարժի մեքենագէտները քիչ էին, որովհետեւ մասնաւոր *կարաժ*ներ չկային, կա՛մ ինքնաշարժի ընկերութեան ներկայացուցիչ ընկերութիւնը իր *կարաժ*ը ունէր, կա՛մ ալ անոր տեղային գործակալը:

Հայերուն մեծ մասը ընկերութեան տրամադրած տուներու մէջ կը բնակէր: Շատերը հոն գացեր էին որովհետեւ հոն գտնուող իրենց բարեկամ-ազգականը յայտներ էր որ իրենց ընկերութիւնը այսպիսի պաշտօնեայի մը պէտք ունի: Կուսակցական խնդիրներ չկային, որովհետեւ հոն գացողը գործ կը խօսի. կուսակցական, քաղաքական խօսակցութեան պարագային՝ ետ կը ճամփուին: ... Պետութեան հետ հայերը դժուարութիւն չունէին, ընդհակառակը, մեզ շատ կը յարգէին, մեզի կ'ըսէին՝ «դուք եկած էք մեր երկիրը շինելու»:

Եկեղեցական արարողութիւններ, մկրտութիւն, պսակ՝ իմ տարիներուս չկային. ամէն մարդ իր երկիրը կ'երթար նման կարիքներու համար: Հայկական ձեռնարկներ, ամանորեայ հայկական հանդէսներ չեմ յիշեր, ոչ ալ՝ Երեւանէն եկող խումբեր: Ընտանիքները կը կազմաւորուէին հաւանաբար հարազատներու միջամտութեամբ, միջնորդութեամբ: Ամուրիները տարին 1-2 անգամ իրենց ծննդավայրը կ'այցելէին առաւելագոյնը 2 շաբաթի համար, ուր միշտ ալ սպա-

սողներ կային...: Ես ամուսնացայ ու գացի Քաթար: Կինս ինծի միացաւ իմ մեկնելէս մէկ ամիս ետք: Չորս զաւակներս ալ հոն մեծցած են, հոն դպրոց գացած:

...Քաթարի մէջ հիմնեցինք Lebanese School-ը: 1975ին, երբ Լիբանանի պատերազմը սկսաւ, լիբանանցիք իրենց ընտանիքները սկսան բերել: Լիբանանցի տիկիններ եւ մարդիկ եկան թէ՝ իրենց զաւակները տունը նստած են առանց ուսումի: Կային կիներ, որոնք ուսուցիչ եղած էին Պէյրութ եւ պատրաստակամութիւն յայտնեցին սիրայօժար դասաւանդել: Իրենց պակսողը տեղն էր: Իրենց տեղ տուի եւ պետական արտօնութիւն ալ բերի: Դպրոցի այս ծրագիրը սկսանք հինգ հոգիով, միայն ես հայ էի: Մէկ ամիսէն դպրոցը սկսաւ գործել, 30 աշակերտով եւ 1-2 դասարանով: Յաջորդ տարի աշակերտութեան թիւը հասաւ 200ի: Հայ աշակերտներ ալ կային: Դպրոցին նպատակը շահ ապահովելը չէր. շահութազերծ հաստատութիւն էր: Լիբանանի կրթական նախարարութեան կապեցինք, որպէսզի մարդ չկարենայ ծախել դպրոցը: Դպրոցը դարձաւ լիբանանցիներու հաւաքավայր, իրար հանդիպելու, հանդէսներ ու հանդիսութիւններ կատարելու վայր եղաւ. Լիբանանի անկախութեան օր, եւն., հանդիսութիւններուն Լիբանանի դեսպանը կու գար, տեղական նախարարներ կու գային:

Որոշ տարիներ հոն հայերէն ալ դասաւանդուեցաւ, միքանի հայ երիտասարդներու նախաձեռնութեամբ: Անոնցմէ մին ելեկտրական երկրաչափ էր, Գուզուճեան:

Որպէս լիբանանցի, գործէն ետք բարեկամներու պէտք ունիս, ծանօթներու պէտք ունիս, մարդիկ կան՝ միջնորդութեան պէտք ունին (լիբանանցիք օրինախախտումներ կ'ունենային): Որու՛ որ գործընկերը շէյխ էր, անիկա ուժ կ'ունենար միջամտելու: Ընդհանրապէս հայերն ու լիբանանցիները իրիկունը մէկու մը տունը ճաշի կ'երթային: Ճաշէն ետք սեղանները կը վերածուէին թղթախաղի սեղաններու: Ես խաղալ չէի գիտեր:

...Ամսականները շատ լաւ էին. կարեւորը տուն ունենալն էր, տուներու վարձքերը շատ բարձր էին:

...Երբ աշխատանքի համար Քաթար պիտի երթայի, ծնողքս դէմ կեցաւ, որովհետեւ մեծ տղան տունը պիտի ձգէր եւ երթար ու՞ր, ի՞նչ՝ մարդ չի գիտեր: Ընդառաջեցի Քաթար երթալու գաղափարին, որովհետեւ վարձատրութիւնը միքանի անգամով աւելի էր. առաջին ամսականը տան ծախքերը կը փակէ, երկրորդ ամսականէն կը սկսիս խնայել արդէն: Քաթարի իմ աշխատանքս օգնեց որ մեր ծնողական տունը բարելաւուի, կենցաղային պայմանները լաւանան:

...Շէյխին հետ Քաթարէն դուրս ալ աշխատեցանք. Մ. Նահանգներու մէջ, Օրլանտօ, շինարարութեան ձեռնարկեցինք. 5 գործընկերներ էինք. 2ը՝ մենք, 3ը՝ ամերիկացի: Պանդոկ մը շինեցինք եւ ծախեցինք, հաւանաբար 1970ականներու կէսերուն: Շինարարական ուրիշ ծրագիր մը իրագործեցինք Սպանիոյ հարաւը՝ Marbella hotel resort: Ասոր հողատարածքը 100,000 մեթր քառակուսիէն աւելի էր:

Լիբանան շինարարական ծրագրերու առանձինն ձեռնարկեցի: Հոս 1975էն սկսայ: Առաջինը Հիւսիսային Մեթնի մէջ էր, բնակարաններու, խանութներու եւ

գրասենեակներու համալիր էր: ...Տրոյի Center Dedeyanը. կէսը շինուած գնեցի, միւս կէսը ես շինեցի 1980ականներուն:

INTERVIEW WITH EX-MP AND MINISTER APRAHAM DEDEYAN
(About His Career in Qatar Between 1965 and 1992)

(Summary)

The interviewee briefly narrates how he was brought up in Beirut, his education, and family conditions, the financial challenges he faced while planning to study engineering at AUB and the ways he was able to raise the tuition.

the interview describes how Dedeyan was recruited as an engineer, how his employer taught him the business of contracting, his assignment in Qatar, his departure from his employer and establishing a partnership with a Qatari Sheykh and the launching of their joint contracting company, their business investments in Orlando, USA and in Spain, the expansion of the company Hamad Ben Khaled, from a mere ten-employer company to a large business enterprise with some 1600 staff members.

In 1992, after working in Qatar for a quarter of a century, Dedeyan left Qatar and settled in Beirut, established his own development company. in 1996 Dedeyan was elected MP as the representative of the Evangelical community of Lebanon. Later on he served as minister of industry.

Dedeyan describes social life in Qatar, and gives insights on the Armenian community of Qatar.

Հարցազրոյց Վասիլ Աքըլեանի Հետ
(1952-1990 Շրջանին՝ Քուէյթի Իր Փորձառութեան Մասին)[1]

...Հայրս հաճընցի էր[2], բայց Ատանա ապրեր է: Հոն ճաշարան ունէր: Յետոյ հաստատուեր է Դամասկոս, ուր խոհարարի լաւ գործ ունէր: Մենք 3 եղբայր էինք: Դամասկոսէն Պէյրութ եկած ենք 1946ին: Մեծ եղբայրս (ծն. Ատանա, 1918) Դամասկոսի Air Franceը կ'աշխատէր: Ես 1932ին ծնած եմ Դամասկոս: Միջնեկ եղբայրս ալ Դամասկոս ծնած է, 1931ին: Ծնողքս 1980ականներուն մահացան:

Հայրս շատ բարեսիրտ, խելճ մարդ մըն էր ... աղտոտ խօսքեր բնաւ չէր գործածեր, «տղաս, եաւրուս»՝ ասանկ կը խօսէր: Մայրս զօրաւոր կին էր, մեր կրթութիւնը մօրս կը պարտինք: Ընտանեկան կրթութեան խնդրով, ամէնէն առաջ տիսիփլինն էր: 19 տարեկան էի՝ ժամը 9էն յետոյ տունէն դուրս չէինք կրնար ելլել, պէտք է հրաման առնես մօրմէդ: Մայրս մեզ կրթեց հօրմէս աւելի, որովհետեւ հայրս գործի կ'ըլլար: Մենք մօրս կու տայինք մեր շահածը ... մեր ամուսնութենէն ետք իսկ: Շատ խելացի էր, մինչեւ 85-90 տարեկան ամէն ինչ թուական-ժամով կ'ըսէր:

...Միջնեկ եղբայրս NER ճամփորդական ընկերութեան մէջ կ'աշխատէր, որ *օթոքար*ով ճամփորդներ կը տանէր-կը բերէր Պաղտատ: Փոխադրակառքերուն արտաքինը կը նորոգէր, *թոլիէճի* էր: ..Ընկերութեան մէջ աշխատած շրջանին կը տեսնէ որ մարդիկ Քուէյթ կ'երթան աշխատանքի: Կ'որոշէ ինք ալ երթալ: Իր նախաձեռնութիւնն էր. մայրս չուզեց, բայց ինք պնդեց, փորձել ուզեց:

1952ին, եղբայրս Քուէյթ գնաց: Վեց ամիս ետք ես գացի: Սախըր կոչուած տեղը ապրեցանք: Հոն հայ երիտասարդներու հանդիպեցանք՝ Պարսկաստանէն, Իրաքէն, Լիբանանէն: Թրիփոլիէն երկու-երեք տղայ կային: Տոքթ. Գառնիկ Օղասապեանը կար, որ թոքախտներու հիւանդանոցին ընդհանուր տնօրէնն էր: Տոքթ. Քազմանը կար, Թուրքիայէն եկած էր, հայ էր եւ Քուէյթի հպատակութիւն առաւ, որովհետեւ շէյխին բժիշկն էր: Կար նաեւ Յովակիմ Յովակիմեանը, որ տարրալուծարանի ընդհանուր բժիշկն էր: Պաղեստինցի էր, Քուէյթի հպատակութիւն առաւ:

Այն ատեն Քուէյթ օդակայան չունէր ... քաղաքը պզտիկ տեղ մըն էր, ամփոփուած էր, քաղաքին դուրսը բոլորը անապատ էր: Օդանաւերը անապատը կ'իջնէին. փոքր վրաններ (*խայմէ*) դրուած էին, ատոնք էին մաքսատունը...: Կառավարութիւն չկար. շէյխեր էին: Անգլիացիները կը տիրէին, կառավարութիւնը անգլիացին էր: Դրամին, դրոշմաթուղթերուն վրայ Էլիզապէթ թագուհիին նկարները կային, դրամը հնդկական րուփի էր:

---

[1] Հարցազրոյցը կատարած ենք 19 Յունիս 2019ին, Հայկազեան համալսարան, արձանագրութիւնը գրառեց Պետրոս Թորոսեան: Աքըլեան մահացաւ 7 Յունիս 2022ին, Պէյրութ:

[2] ***Ծ.խ.***- Տարեց հաճընցիք կը պատմէին իրենց հայրերէն թէ Հաճընի մէջ երբ մեծ վէճ ըլլար՝ կը դիմէին Ախըլենց, Ագըլեաններուն:

1961ին Քուէյթ անկախութիւն առաւ: Անկախութենէն ետք զարգացաւ Քուէյթը, աւելի օրէնքի մտաւ, ոստիկանատուներ (*մախֆար*), ճամփաներ (*մուրուր*) շինուեցան: Առաջ ճամփայ չկար, մարդիկ փողոցները կը պառկէին, մայթերուն վրայ. շէնք չկար, տուն չկար, հողէ տուներ էին միայն: Տեղաբնիկներուն՝ մեզի հանդէպ վերաբերումը չփոխուեցաւ անկախութենէն ետք, ընդհակառակը՝ աւելի օրինաւոր եղաւ, որովհետեւ կեցութեան արտօնութեան դրութիւն (*իքամէ*) հաստատուեցաւ. առաջ *իքամէ* չկար, կը մտնէիր-կ'ելլէիր՝ հարցնող չկար: Մենք առանց վիզայի գացինք. վիզայի դրութիւն չկար: Շատ ապահով էր այն ատեն Քուէյթը:

...Մենք սկսանք աշխատիլ ջուրի DLC ընկերութեան մէջ: Ընկերութիւնը ծովուն ջուրը կը զտէր: Տնօրէնը անգլիացի էր: Եղբայրս ընկերութեան ինքնաշարժներու նորոգութեան աշխատանոցին մէջ *ֆորման* էր: Ես ալ իրեն օգնականը եղայ: 7-8 անգլիական ընկերութիւններ կային՝ GCC, Sahra, KOC, CCC:

Մենք վեց ամիս հոն աշխատեցանք: Յետոյ *կարաժ* ուզեցինք բանալ: Պարսկահայեր եւ իրաքահայեր կային՝ Միհրան Զաքարեան եւ Պօղոս Յովակիմեան, որոնք տարիքոտ էին, մեծ *փարքինկ*ով *կարաժ* մը ունէին Շամիէ: Ծանօթացանք, խօսեցանք հետերնին, համաձայնեցանք որ *փարքինկ*ին մէկ մասը մեզի վարձու տան: «Եկէք առէք»՝ ըսին: Մարդիկը մեզի օգտակար եղան:

Այդ *կարաժ*ը առինք: Դիմացը քուէյթցի մը կար՝ Օմար Ժասըմ, հետաքրքրուեցաւ մեր գործով եւ մեր երաշխաւորը եղաւ: Այս մարդը մեզի շատ օգտակար եղաւ: Իր եղբայրը՝ Մուհամմատ Սուլէյման Ժասըմ, ներքին գործոց նախարարութեան պաշտօնատար էր (չորս եղբայր էին. յետոյ երրորդ եղբօր՝ Ապտալլա Ժասըմին ծանօթացանք, յետոյ՝ Ալիին, որ բժիշկ էր հիւանդանոցին մէջ): Ժասըմները մեզի լաւութիւն ըրին: Մուհամմատ Ժասըմը մեզի ըսաւ որ «ձեզի պիտի օգնեմ, *ահլա ու սահլա*, ես ձեզի ուզածնուդ չափ գործ պիտի բերեմ, ներքին գործոց նախարարութեան ինքնաշարժները հոս պիտի բերեմ»: Ներքին գործոց նախարարութիւնը ինքնաշարժներու *կարաժ* չունէր: Սկսան նախարարութեան ինքնաշարժները - հարիւրներով - մեզի գալ: Նախարարութեան ինքնաշարժներուն նորոգութիւնները մենք կ'ընէինք... այլեւս մեր *կարաժ*ը չբաւեց, փոքր եկաւ, մեծցուցինք գործը: Ստիպուեցանք ուրիշ *կարաժ* առնել: Նոր ճիփեր կը բերէին, մենք ամբողջութեամբ զինուորական գոյն կը ներկէինք: Սկիզբը ես եւ եղբայրս կը ներկէինք, գիշերներն ալ կ'աշխատէինք, յետոյ գործաւոր բերինք: Տեղացիներ չէին աշխատեր. գործ փնտռող լիբանանցի, սուրիացի, հայ եւ արաբներ առինք:

Ժասըմներուն հետ լաւ գործ ըրինք: Յետոյ Ժասըմները նոր տարածք մը տեղափոխուեցան, իրենց խառատի աշխատանոցներուն համար: Առաջարկեցին որ իրենց հին տեղը մեզի տան: Խոշոր տարածք էր, 100 ինքնաշարժ կը բաւէր ներսը: Պարսկահայերուն հողը ձգեցինք, բաժնուեցանք իրենցմէ, շնորհակալութիւն յայտնեցինք եւ բարեկամ մնացինք: Նոր աշխատավայրը կահաւորեցինք, յարմարցուցինք մեր գործի պահանջքներուն եւ սկսանք աշխատիլ:

Ժասըմները *կարաժ*ը ձրի տուին մեզի, վարձք չառին, պայմանով որ իրենց գործերուն առաջնահերթութիւն տանք: Միաժամանակ, դուրսէն ուրիշ գործեր ալ կրնայինք ընել:

Լաւ մարդիկ ելան դիմացնիս. այս մարդիկը, քուէյթցիները ընդհանրապէս, մեզի օգտակար եղան - եւ մինչեւ այսօր - եւ բաւական ալ օգտակար եղած են հայերու: Մենք յաջողութիւն գտանք: Մեր երրորդ եղբայրը՝ Ժոզէֆն ալ բերինք Քուէյթ, ընտանեօք:

Մեր գործը աւելի մեծցաւ. 1962ին 60ի հասաւ մեր գործաւորներուն թիւը. ունէինք Հալէպէն, Լիբանանէն, Իրաքէն, արաբ եւ հայ գործաւորներ: Մեր գործը նաեւ այլազանեցաւ. ինքնաշարժ ներկելէ զատ ներածութեան միջնորդ եղանք, դուրսէն ապրանք կը բերէինք՝ օթօներու ապակի, փաթեքս, ինքնաշարժի ապահովագրութիւն... Ապտալլա Ժասըմը դուրսէն օթօներ բերել կու տար: Ասոնք մեր քովը կը բերուէին եւ մենք կը կազմէինք:

..Գործերնիս շատ լաւ էր մինչեւ Իրաքի ներխուժումը Քուէյթ, այսինքն մինչեւ 1990ականներուն սկիզբը: Մեր գործը միայն Քուէյթի մէջ էր եւ միայն օթօներու ծիրին մէջ աշխատեցանք: Շինարարական գործով չզբաղեցանք Քուէյթ:

...1960ին Երուանդ Թերզեանը դպրոց բացաւ Ժապրիէյի մէջ: Տնօրէնուհին տիկ. Մարի Օհաննէսեանն էր: Թերզեանը Լիբանանէն էր, լուսանկարիչի տեղ ունէր, շէնք ալ կը շինէր, բայց արաբերէն խօսիլ չէր գիտեր: Ի՛ր միջոցով եղաւ դպրոցը: Ինք պետութենէն արտօնութիւն առաւ: Ես ալ անդամ էի հոգաբարձութեան, յետոյ թաղականութիւն կազմուեցաւ, երկու եղբայր՝ Վիգէն եւ Արշաւիր Շաղզոյեանները կային, որոնց հայրը՝ Ներսէս, ԿՕՇի մէջ յայտնի անձնաւորութիւն էր, ասոնք դպրոցին տէր եղան: 1953ին Քուէյթի համալսարանը շինած ճարտարապետ Երուանդ Պարսումեանը դպրոցին ատենապետը եղաւ: Զինք նախորդող ատենապետերը պարսկահայեր էին: Դպրոցին պատկանելիութեան խնդիրներ եղան: Յետոյ լուծուեցան խնդիրները:

...Երբ դեռ Քուէյթի հայոց եկեղեցին գոյութիւն չունէր, ամերիկեան հիւանդանոցին քովի ամերիկացիներուն աւետարանական եկեղեցին կ'երթայինք: Քահանայ չունէինք, ամէն Շաբիկին եւ Ծնունդին պարսկահայ քահանայ մը կու գար, տուները կ'օրհնէր, պատարագ կը մատուցէր-կ'երթար: 1960ին քահանայ եկաւ Քուէյթ Պէյրութէն՝ տէր Պարոյր (Ազատ) Սարգիսեան: Եկաւ եւ մնաց հոն: Քուէյթցի մը երաշխաւոր եղաւ եւ տուն մը տրամադրուեցաւ իրեն: Արաբական տուն մըն էր, ատիկա եկեղեցի ըրինք: Հիմա եկեղեցի կառուցուած է արդէն, դուրսէն խաչ չունի, ներսը կայ խաչ:

...Սկիզբը հայերը Քուէյթ քաղաքին մէջ կ'ապրէին: Քաղաքը երեք դուռ ունի: Մինչեւ հիմա դռները իբրեւ հնութիւն պահպանուած են: Գիշերը ժամը 12ին դռները կը գոցուէին եւ այնուհետեւ մարդ չէր մտներ-ելլեր: Երկիրը չորս *մուհաֆազա* (նահանգ) ունէր. մէկը Քուէյթ քաղաքն էր, միւսը՝ Հաուալի Սալպիյէն էր, միւսը Ֆարուանիէն, չորրորդն ալ Ահմատին: Քուէյթ քաղաքը շատ պզտիկ էր, յետագային մեծցաւ: Բանտը, կեցութեան արտօնութեան, ապահովութեան գրասենեակները բոլորը Քուէյթ քաղաք-նահանգին մէջ էին, այդ շրջանը Թահթ էլ Սաֆա կը կոչուէր: Տաս վայրկեանէն օթոյով Հաուալի կ'երթայինք, որ դատարկ տարածութիւն էր: Հիմա Հաուալին շատ զարգացած է: Երբ Ահմատի երթայինք՝ հետերնիս կալոններ կ'առնէինք, որպէսզի եթէ կորսուինք ու անապատ իյնանք՝ պաշար ունենանք:

Հետզհետէ Քուէյթ շէննալ սկսաւ. տուներ, շէնքեր սկսան կառուցուիլ:

Մեր նստած տունը, բոլոր տուները, հողէ շինուած էին: Շէնք չկար:

...Եղբայրս եւ ես 1959ին ամուսնացանք, Պէյրութ: Մայրս կարգադրեց մեր ամուսնութիւնը. ղեկը ինք՝ մայրս էր: Ես մէկ ամսուան մէջ ամուսնացայ: Ամուսնութենէս ետք ընտանիքս Քուէյթ փոխադրեցի: Եղբայրս ալ ընտանիքը Քուէյթ փոխադրեց: Քուէյթի մէջ, շրջան մը մէկ տունի մէջ ապրեցանք, յետոյ զատ տուներ եղանք: Տիկինս հոն չաշխատեցաւ. ուզեցին որ դպրոցը պաշտօնավարէ՝ չփափաքեցաւ: Լաւ դրացիներ, բարեկամներ ունէինք: Մեր զաւակները ընդհանրապէս հայկական դպրոց կը ղրկէինք: Ոմանք ոչ-հայկական՝ ամերիկեան, անգլիական, կամ արաբական դպրոց կը ղրկէին: Մէկ աղջիկ զաւակ ունիմ, ճարտարապետութիւն ուսանած է: Թոռնիկս mechanical engineering կ'ուսանի: Եղբօրս տղան եւ աղջիկը համալսարանաւարտ են, Պէյրութ ուսանած են: Ես ուսում չունիմ, մինչեւ երկրորդ դասարան դպրոց գացած եմ՝ Պէյրութ՝ Սահակեան, մէկ տարի կաթողիկէներու Մեսրոպեան վարժարանը գացի, մէկ տարի ալ Դամասկոսի ֆրէրներուն գացած եմ:

...1965ին երէց եղբայրս ձգեց Քուէյթը, Պէյրութ եկաւ: Այդ, տարին, իր միջոցով, Պէյրութի մէջ սկսանք շինարարական գործով զբաղիլ: Նոյն տարին, 1800 մեթր տարածութեամբ հող մը առինք Զալքայի շրջանը եւ հինգ յարկանի շէնք մը շինեցինք. մեծ յարկաբաժինը 220 մեթր քառ. էր: Կային եւ աւելի փոքր յարկաբաժիններ:

...Հայերը Քուէյթի մէջ աւելի Հաուալի եւ Սալմիյէ շրջանները կ'ապրէին: Հաուալի աւելի շատ հայեր կային: Մենք կը բնակէինք Սալմիյէ, որ նոր քաղաք է, շէնքեր եւն. կան: Քուէյթ քաղաքին մէջ հայեր քիչ կային: Մեծ մասամբ *կարաժի* գործով կը զբաղէին. օթոյի նորոգութիւն, ինքնաշարժի ջուրի, մեքենայի, հաւասարակշռութեան, արգելակներու, ներկի... գործերու մէջ էին: Ոմանք խանութ ունէին, ուրիշներ՝ ոչ: Կային փոքր խանութներ, ուր հազիւ մէկ օթօ կը տեղաւորուէր: Յակոբ Գույումճեան անունով անձ մը կար, որ *կարաժի* տէր էր, շատ մեծ գործ ունէր[3]: Կային որ ալիւմինիումի գործ կ'ընէին, ճարտարապետեր կային...:

Քուէյթի հայերը տարբեր շրջաններէ կու գային՝ Պաղտատէն, Պասրայէն, Իրանէն բաւական հայեր կային, Հալէպէն քիչ էին: Հալէպի հայերուն թիւը աւելցաւ Քուէյթի ազատագրումէն ետք, մանաւանդ գործաւոր զանգուած մը եկաւ Հալէպէն. Պէյրութէն ալ եկան: Իրանահայերուն մեծ մասը երկրաչափներ էին: Հալէպահայերը, պէյրութահայերը խառն կ'ապրէին, յարաբերութիւնները իրարու միջեւ լաւ էին, բայց բաժնուած ալ էինք. դաշնակցական եւ հնչակեան, ՀՄՄ ու ՀՄԸՄ եւ համախոհ երկու շրջանակներ կային. պարահանդէս կ'ընէին իրենք զատ, մենք զատ: Աշխուժ էինք, քուէյթահայութեան թիւը շուրջ 13000ի հասաւ: Խումբեր հրաւիրած ենք Հայաստանէն. երգչուհիներ Ֆլորա Մարտիրոսեանը, Լուսինէ Զաքարեանը, ասմունքող Երուանդ Գասպարեանը, Վալոտիա Ապաճեանը: Մէկ շաբաթ խմբավար Կոստանդին Օրբէլեանը հրաւիրեցինք իր նուագախումբով: 56 հոգի էին, Օթէլ Շերաթոն իջեւանեցան: Հիմա սկաուտութիւն կայ:

---

[3] ***Ծ.խ***.- Ալիւմինիումի գործով զբաղող Կիրակոս Գույումճեանին եղբայրը (տե՛ս՝ այս գիրքին մէջ այլուր):

…Լիբանանի քաղաքացիական պատերազմի շրջանին, դպրոց-եկեղեցին հաւաքոյթ մը ըրինք: Յետոյ դրամահաւաքը շարունակուեցաւ եւ 100,000 տինար գոյացաւ, զոր ղրկեցինք Գարեգին Բ. վեհափառին:

…Երբ Իրաք Քուէյթ ներխուժեց, երկիրը վեց ամիս անշարժացաւ, գործերը կեցան: Քուէյթի գրաւման ժամանակ իրաքեան կեցութեան արտօնագիր առի: Հինգ ամիս մնացի հոն: Իրաքի ներխուժումէն վեց ամիս ետք, ամերիկացիներուն գալէն շաբաթ մը առաջ, ձգեցի Քուէյթը:

…Իրաքի ներխուժումէն առաջ չէինք ակնկալեր որ նման բան կրնայ պատահիլ: Աղջկանս ամուսնութենէն ետք, փեսաս եւ աղջիկս ալ եկան Քուէյթ: Առտու մը դեռ տունն էի, փեսաս հեռաձայնեց թէ քաղաքը տակնուվրայ է, օտար բանակ կայ, ի՛նչ բանակ ըլլալը չի գիտեր…: Հեռաձայնային գիծերը կտրուեցան: Քաղաքը գրաւեր եւ անցարգելներ դրեր էին: Յետոյ բնականոնացաւ վիճակը, բայց գործերը կեցան: Դադրեցաւ ամէն բան, քաղաքապետարանը չէր գործեր, աղբանոց եղան ճամփաները: Գրաւման շրջանին մեր գործը նուազեցաւ 50 առ հարիւր: Մինչեւ հիմա ալ նուազած է: Ապահովութեան խնդիր չկար, առեւանգում չեղաւ, գողութիւններ եղան: Պանքը դրամ ունէի, չկրցանք առնել: Վերջը առի, բայց արդէն արժեզրկուած էր քուէյթեան տինարը: Մենք սեփականութիւն չունէինք հոն, մարդիկ կային որ ունէին, օրինակ տոքթ. Յովակիմեանը շէնք ունէր, վարձու կու տար: Չկորսնցուց այդ սեփականութիւնը:

Ես վերադարձայ Քուէյթ, ուրիշներ չվերադարձան, որովհետեւ գործաւոր էին: Գործատէրը չի կրնար ձգել իր գործը, պիտի երթայ նայի, տէր կենայ իր գործին: Քուէյթի ազատագրումէն 4-5 ամիս ետք գացի Քուէյթ. *կարաժը* եղածին պէս էր, գողութիւն չէր եղած, նոյն ձեւով կրցայ վերականգնել: Յետոյ *կարաժը* եղբօրս տղուն յանձնեցի եւ ձգեցի Քուէյթը:

Քուէյթցիք հայերուն մասին շատ դրական կը մտածէին, շատ կը համակրին, կը սիրեն հայերը: Ես բարեկամութիւններս կը պահեմ քուէյթցիներուն հետ, լաւապէս:

INTERVIEW WITH VASIL AKELIAN
(About His Career in Kuwait Between 1952 and 1990)
(Summary)

The interviewee briefly narrates how he settled in Kuwait in 1953, where he and his brother established a garage for painting cars. In due time their business grew and developed and was diversified, as the cars imported for the Kuwait Ministry of Interior were all brought to their garage to change their color. He describes the help and support they received from Armenians who had settled there earlier and underlines the kind backing they received from their garage neighbours, the Jasem brothers, who offered them their parking lot for free, provided they gave priority to the cars the Jasems brought to the garage. The interviewee describes living conditions in Kuwait in the early 1950s, with no roads, nor an airport or military stations. These were developed later after Kuwait gained its independence from the British.

The interview provides a profile of the Armenian workforce in Kuwait, how the school was established, intra-Armenian relations, the quarters where the Armenians lived and the cultural guests who were invited from Soviet Armenia. This peaceful life was ruined by the Iraqi invasion of Kuwait, something they had never imagined at all.

The interviewee briefly describes life during the Iraqi occupation, his departure and eventual return to Kuwait, the fate of his business and the maintenance of friendly relations with his Kuwaiti friends after his retirement.

The Survey Questionnaire of Dr. Joukoulian's Paper

This is a linguistic study of an ethnic minority – Armenians – in the Arab Gulf. The purpose of this research is to study the language choice of Armenians living in Bahrain, Kuwait, Oman, Qatar, Saudi Arabia, and the United Arab Emirates in their everyday life. Kindly be noted that your participation is anonymous and your answers will be confidential.
Your time and effort are highly appreciated.

1. Current country of residence
Mark only one.

Bahrain	Oman	Saudi Arabia
Kuwait	Qatar	United Arab Emirates

2. Number of years in the Gulf-You may choose more than one answer
Mark only one.

0-5	11-15	21-25
6-10	16-20	26 and more

3. Place of birth
Mark only one.

Same as place of current residence
In a different Gulf country
Not in a Gulf country

4. Nationality
Mark only one.

Armenian	Palestinian	Canadian	Swedish
Lebanese	Iraqi	Australian	Other
Syrian	Iranian	French	
Jordanian	American	German	

5. Age Group
Mark only one.

Younger than 11	21-25	36-40	51-55
11-15	26-30	41-45	56-60
16-20	31-35	46-50	Older than 60

6. Sex
Mark only one.

Male	Female

7. Your mother's Ethnicity
Mark only one.

Armenian	Non-Armenian

8. Marital Status

Mark only one.

Single	Divorced	Married	Widow(er)
In a relationship			

9. If married, divorced, widow(er) or in a relationship

Mark only one.

My partner is/was Armenian	My partner is/was non-Armenian

10. Do you have any children?

Mark only one.

Yes	No

11. If you have children, do they speak Armenian?

Mark only one.

Yes	No

12. If you have children, do they study at Armenian schools?

Mark only one.

Yes	No

13. If your children live with you in the Gulf, do they attend the Armenian school of the place of residence (where you live in the Gulf)?

Mark only one.

Yes	No

14. Do you have family in the same country of residence?

Mark only one.

Yes	No

15. Educational Level

Mark only one.

Illiterate	Primary	Intermediate	Secondary
BA/BS	MA/MS	Ph.D.	

16. Did you study at Armenian or Non-Armenian Schools?

Check all that apply.

Armenian School		Non-Armenian School	
Kindergarten	Primary	Intermediate	Secondary

17. If you studied at non-Armenian Schools, did you attend the Armenian school of the place of residence (where you live in the Gulf)?

Mark only one.

Yes	No

18. Languages-Reading

Mark only one space on row

	Excellent	Fluent	Good	Poor

Armenian				
Arabic				
English				
French				
Other				

19. Languages-Speaking
Mark only one space on row

	Excellent	Fluent	Good	Poor
Armenian				
Arabic				
English				
French				
Other				

20. Languages-Writing
Mark only one space on row

	Excellent	Fluent	Good	Poor
Armenian				
Arabic				
English				
French				
Other				

21. Do you attend any Armenian clubs or activities?
Mark only one.

Yes	No

22. If yes, choose all that apply

I attend the weekly church services
I attend the annual Christmas gathering organized by the Armenian community
I attend the annual Easter gathering organized by the Armenian community
I attend the annual New Years' gathering organized by the Armenian community
I attend the social gatherings organized by the Armenian community.

23. Do you have any Armenian friends in the same country where you currently live?
Mark only one.

Yes	No

24. What language(s) do you use to communicate with your friends-complete the chart below.

	Armenian	Arabic	English	French	Others
Speak					
Text message					

25. What language(s) do you use to communicate with family members?

	Armenian	Arabic	English	French	Others
Speak					
Text message					

26. What language(s) do you use to communicate with your Armenian friends abroad (in countries different from your country of residence)?

	Armenian	Arabic	English	French	Others
Speak					
Text message					

27. What language(s) do you use in your household?
Mark only one.

Armenian	Arabic	English	French	Others

28. Do you regularly listen to Armenian songs?
Mark only one.

Yes	No

29. Do you regularly read Armenian books?
Mark only one.

Yes	No

30. In your opinion, how can you preserve Armenian and prevent being endangered/ extinct/lost/dead? Circle the answer(s) that you find logical.
Speaking Armenian
Studying at Armenian schools
Speaking Armenian with family members
Speaking Armenian with Armenian friends
Encouraging my children to speak Armenian at home
Listening to Armenian music
Reading Armenian books
Marrying to an Armenian
Getting the Armenian citizenship
Encouraging my children to be members of Armenian organizations such as scouts, cultural, etc.
Attending Armenian church/mess on weekly basis
Having Armenian friends/mingling in the Armenian community
Other

31. Please feel free to leave any additional information that you would like to share. I appreciate any feedback on any topic, so let me have it. Anything you tell me now will help me in the analysis and the findings of this research survey. Thank you very much for your help and cooperation.

Համառօտ Մատենագիտութիւն

Berj Aprahamian, *A Tribute with love: In memory of his highness Sheikh Zayed Bin Sultan Al Nahyan,* Abu Dhabi 2018.

Arda Jebejian, "Intergenerational Construction of Identity among the Armenian Community in Kuwait", *Armenian Diaspora in Dynamics* 18:2022, pp. 117-143.

Hamza Olayan, *Christians in Kuwait*, Dar Zat AlSalasil press, Kuwait, 2018.

Andrew Thompson, *Celebrating Tolerance: Religious Diversity in the United Arab Emirates*, Motivate Media Group, Abu Dhabi 2019.

Շողիկ Աշըգեան, *Քառորդ դար. հայերը Տուպայի եւ Հիւսիսային Էմիրութեանց մէջ*, 2008, [ա.վ.]:

Լիլիթ Յարութիւնեան, Արաքս Փաշայեան, *Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ*, հրատ.՝ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստ., ՀՀ Սփիւռքի նախարարութիւն, Լուսակն հրատ., Երեւան 2012:

Յուշամատեան Ապու Տապիի հայկական մշակութային ընկերակցութեան (1990-2010), կազմ.՝ Ա. Տաղլեան, Հ. Քալսահակեան եւն., Մուղնի հրատ., Երեւան 2014:

Յակոբ Չոլաքեան, *Ոսկեմատեան, Քուէյթի ազգային վարժարանի (1960-2010)*, հրատ.՝ Քուէյթի ազգային վարժարանի հոգաբարձութեան, Աիրամ տպ., [ա.վ.] 2011:

حمزة عليان, *ألارمن في الكويت روايات تاريخية وشهادات موثقة* , منشورات ذات السلاسل, الكويت, 2023.

كيراكوس قيومجيان, *رحلتي مع الحديد ة* , منشورات ذات السلاسل, الكويت, 2023.

Համառօտ Կենսագրութիւն Աշխատակիցներու

Դոկտ. Ժոզէֆ Ալ Աղա Քաղաքագիտութիւն, ընկերաբանութիւն եւ միջմշակութային նիւթեր կը դասաւանդէ Հայկազեան համալսարանին մէջ: Միջուսմունքային մեթոտով կատարուած հետազօտութիւններու արդիւնք են արաբերէն իր երեք գիրքերը, համալսարանական չորս դասագիրքերը, երկու մենագրութիւնները, Միջին Արեւելքին նուիրուած բազմաթիւ ուսումնասիրութիւնները: Գիտական հետազօտութիւններու ծիրը կ'ընդգրկէ ընկերաքաղաքականութեան եւ մշակոյթի տեսութիւնը, ժամանակակից իսլամական շարժումները, սեռոյթի բռնութիւններն ու մարդկային իրաւունքները, Միջին Արեւելքի մէջ հանրային գործիչներու գործունէութիւնը:

Տոքթ. Պօղոս Արթինեան Ծնած է Պէյրութ, 1942ին: 1968ին աւարտած է Պէյրութի ամերիկեան համալսարանի բժշկական հիմնարկը, 1972ին Էտինպրայի համալսարանին մէջ մասնագիտացած է ներքին հիւանդութեանց ճիւղին մէջ: 1969-72՝ աշխատած է Ս. Արաբիոյ Թափլայն ընկերութեան Պատանայի հիւանդանոցին մէջ, իսկ 1973-75՝ նոյն հիւանդանոցի ներքին հիւանդութեանց բաժանմունքին բժշկապետն է: 1975-80՝ աշխատած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանի առողջապահական ծառայութեան բաժանմունքին մէջ: 1970ին ստեղծած, շինած եւ գործածած է սթերիօ սթեթոսքոփը՝ հիւանդներուն սրտի զարկերը աւելի լաւ լսելու համար: 1980էն իվեր կը ծառայէ Լիբանանահայ օգնութեան խաչի Արաքսի Պուլղուրճեան ընկերաբժշկական կեդրոնին, որպէս ներքին հիւանդութեանց մասնագէտ: 1975-85՝ եղած է Հայկազեան գոլէճի (այժմ համալսարան) խնամակալութեան, 1981-84՝ Հայ աւետարանական գոլէճի հոգաբարձութեան անդամ, նոյն շրջանին ստանձնած է Համազգայինի Պէյրութի մասնաճիւղի ատենապետի պաշտօնը, 2005-12՝ եղած է Ճինիշեան յիշատակի ձեռնարկի Պէյրութի խորհրդատու մարմնի անդամ: Իր բժշկական յօդուածները լոյս տեսած են *British medical journal*ի, *Lancet*ի, *Saudi medical journal*ի եւ այլ պարբերականներու մէջ:

Փրոֆ. Ճոն Արմաճանի Դասախօս է Սընթ Պենետիքթ քոլէճի աստուածաբանութեան բաժանմունքին եւ Միննըսոթայի Սընթ Ճոնզ համալսարանին մէջ: Դոկտորականը պաշտպանած է Քալիֆորնիոյ համալսարանին մէջ (Սանթա Պարպըրա)՝ կրօնագիտական ուսմանց ծիրին մէջ, կեդրոնանալով իսլամական եւ միջինարեւելեան տարածքին վրայ:
Իր ուսումնասիրութիւնները կ'ընդգրկեն իսլամի եւ քաղաքականութեան յարաբերութիւնը՝ Միջին Արեւելքի, Հիւսիսային Ափրիկէի ու Հարաւային Ասիոյ մէջ: Հեղինակն է *Dynamic Islam: Liberal Muslim Perspectives in a Transnational Age* (2004), *Modern Islamist Movements: History, Religion, and*

Politics (2012) գիրքերուն: Ճէյմս Լինճիի հետ խմբագրած է *Historical Dimensions of Islam: Pre-Modern and Modern Periods; Essays in Honor of R. Stephen Humphreys* (2009) հատորը: Ներկայիս կ'ամբողջացնէ *Shia Islam and Modern Politics: Iran, Iraq, and Lebanon* եւ *The Armenian Diaspora and Modern Political Systems: Religious and Ethnic Minorities in their Historical Contexts* հատորները: Վերջինս լոյս պիտի տեսնէ Հայկազեան համալսարանի Հրատարակչատունէն: Մասնակցած է Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի գիտաժողովներու:

Յակոբ Գազանճեան Ծնած է Թրիփոլի, 1937ին: Կանուխ տարիքէն մտած է արհեստի, իվերջոյ երկաթագործութիւնը ընտրած իբրեւ ասպարէզ: Պուրճ Համուտի մէջ ունեցած է միութենական գործունէութիւն, եղած է ՀՄԸՄի մասնաճիւղի սկաուտապետ: 1980ականներու սկիզբին տեղափոխուած է Սիտնի, Աւստրալիա, ուր շարունակած է իր միութենական գործունէութիւնը:

Դոկտ. Էլիզ Գէորգեան Ծնած է 1983ին, Երեւան: 2012ին պաշտպանած է «ՀՀ յարաբերութիւնները Ուքրայնայի հետ» թեկնածուական ատենախօսութիւնը ԵՊՀ միջազգային յարաբերութիւններու ֆակուլտէտին մէջ: Տարբեր տարիներու մասնակցած է ՀՀ ԱԳՆ դիւանագիտական դպրոցի, Հայկազեան համալսարանի, Քաղաքական Դասընթացներու երեւանեան դպրոցի, Աւստրիոյ «Joint Vienna Institute»ի վերապատրաստման դասընթացքներու:
2013-19՝ աշխատած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան մէջ որպէս հայրենադարձութեան եւ հետազօտութիւններու վարչութեան բաժնի պետ, 2019-20 Օգոստոս՝ Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակը նոյն պաշտօնով: 2020 Սեպտեմբերէն կը պաշտօնավարէ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդիւնաբերութեան նախարարութեան մէջ, իբրեւ միջազգային համագործակցութեան վարչութեան ԵՄ եւ կազմակերպութիւններու բաժնի պետ: 2006-20՝ եղած է Կրթութեան միջազգային ակադեմիայի դասախօս: Հեղինակ է գիտական յօդուածներու: Մասնակցած է Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի գիտաժողովներու:

Կիրակոս Գույումճեան Ծնած է Հալէպ, 1946ին: 1970ականներու սկիզբէն հաստատուած է Քուէյթ ուր հիմնած է երկաթեղէն բազրիքներու, մեքենական դռներու իր գործարանը, դառնալով հանրածանօթ ճարտարարուեստական: Աւելի քան 25 տարիներէ իվեր արաբերէն հայանպաստ յօդուածներով կ'աշխատակցի քուէյթեան *Ալ-Քապաս, Ալ-Ուաթան ալքուէյթիյա, Աուան, Ալ-Ռա'յ ալ'ամ,* լիբանանեան *Նահար*, լոնտոնեան *Ալ-Հայաթ* եւ *Ալ-Շարք Ալ-Աուսաթ* թերթերուն, *Daily star*ին, *Kuwait times*ին: Այս յօդուածները (շուրջ 50 հատ), որոնք կ'առնչուին Հայոց Ցեղասպանութեան, Հայ

Դատին, հայ-թուրք յարաբերութիւններուն, հայկական ընկերամշակութային ու տնտեսական նիւթերու, 2015ին հրատարակուած են արաբերէն *محطات ومواقف*եւ հայերէն հատորներով: Աշխատակցած է նաեւ Պոլսոյ *Մարմարա*յին եւ *Ժամանակ*ին, *Ակօս*ին, Պէյրութի *Ազդակ*ին, *Արարատ*ին, *Գանձասար*ին, *Զարթօնք*ին եւ *Ծաղիկ*ին: 2023ին լոյս տեսաւ նաեւ իր *رحلتي مع الحديد* գիրքը, ուր կը պատմէ իր յիսնամեայ երթը երկաթի ճարտարարուեստին հետ: Գոյումճեան անդամ է Հայ Գրողներու միութեան: Գարեգին Ա. կաթողիկոսին կողմէ պարգեւատրուած է Ս. Ներսէս Շնորհալի յուշամետալով, իսկ Արամ. Ա. կաթողիկոսին կողմէ՝ Կիլիկեան ասպետի յուշամետալով:

Սիւզի Թաւլեան Ծնած ու հասակ առած է Պէյրութ: 1970ին աւարտած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանի հիւանդապահութեան բաժինը, ապա աշխատած է տեղի հիւանդանոցին մէջ աւելի քան հինգ տարի: 1975ին կ'անցնի Ապու Տապի, ուր կը մնայ մինչեւ 1990, երբ կը տեղափոխուի Մ. Նահանգներ:

Քրիստինա Եփրեմեան-Թոսունեան այցելու դասախօս է Տուպայի Սէն Ժոզէֆ համալսարանի թարգմանութեան ամբիոնին: Ներկայիս կ'աշխատի իր դոկտորականին վրայ, Մ. Թագաւորութեան Պիրմինկհամ համալսարանին մէջ: Ան կ'ապրի ԱՄԷի մէջ եւ գործուն մասնակցութիւն ունեցած է Տուպայի ու հիւսիսային ԱՄԷի հայ ենթօճախին գործունէութեանց: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ միջմշակութային յարաբերութիւնները թարգմանութեան դիտանկիւնէ ուսումնասիրուած, Ուիլիըմ Սարոյեանի դիրքը ամերիկեան գրականութեան համապատկերին մէջ, ափիւռքեան գրականութիւնը եւ թարգմանական հարցերը, կիրառական թարգմանութիւնը եւ թարգմանութեան տեսութիւնները:

Զաւէն Խանճեան Ծնած է Հալէպ: 1967ին կ'աւարտէ Պէյրութի ամերիկեան համալսարանի առեւտրական վարչագիտութեան բաժինը: Նոյն տարին կ'անցնի Ծոցի արաբական երկիրներ: 1979ին ընտանեօք կը փոխադրուի Մ. Նահանգներու Քալիֆորնիա նահանգը, ուր կը վարէ կրթական, եկեղեցական, ազգային, ընկերային եւ հասարակական կեանք: 2014 Յուլիսէն կը վարէ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան վարիչ տնօրէնի պաշտօնը: Հեղինակ է երեք գիրքերու՝ *Այս փունը քու՞կդ է թէ՞ իմս* (2007), *Սրտի եւ մտքի ցոլքեր* (2011), *Հալէպ – առաջին կայարան* (2013): Սեպտեմբեր 2019էն պատուոյ անդամ է Հայաստանի Գրողներու Միութեան: Խանճեան մահացաւ 9 Օգոստոս 2024ին:

Տիգրան Ճինպաշեան Ծնած է 1944ին, Պուրճ Համուտ: Աւարտած է Համազգայինի Նշան Փալանճեան ճեմարանը, ապա՝ Լիոնի Համալսարանի

մասնաճիւղի Պէյրութի Centre d'Etudes Mathé ուսողական կեդրոնը, մագիստրական վկայականով: 1965-78՝ գիտական նիւթեր դասաւանդած է Համազգային Նշան Փալանճեան ճեմարանին մէջ, աւելի ետք, 1995-2001՝ եղած է փոխտնօրէնը, իսկ 2001-16՝ տնօրէնը Ճեմարանին: 1978-82՝ եղած է խմբագիր Փարիզի *Ազատամարտ* երկլեզու շաբաթաթերթին, 1982-90՝ տնօրէն Քուէյթի ազգային վրաժարանին եւ ճեմարանի բաժնին, 1990-94՝ իբրեւ հասարակական գործիչ գործած է Երեւանի մէջ:

Դոկտ. Անի Ճուքուլեան Ծնած է Պէյրութ, 1973ին: Ընկերային լեզուաբանութեան մասնագիտութեամբ դոկտորական պաշտպանած է Լիբանանեան համալսարանին մէջ: Ներկայիս օգնական փրոֆեսոր է եւ անգլերէնի ամբիոնին վարիչը համալսարանի Բ. մասնաճիւղին: Ան կը դասախօսէ նաեւ LAUի մէջ (Պիպլոսի մասնաճիւղ): Մասնակցած է գիտաժողովներու՝ Լիբանանի, Մ. Թագաւորութեան եւ Մ. Նահանգներու մէջ: Կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէս*ին: Գիտական հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ անգլերէնը իբրեւ օտար եւ համաշխարհային լեզու, կիրառական լեզուաբանութիւն, ընկերալեզուաբանութիւն, հոգելեզուաբանութիւն, խօսակցական լեզուանցում, լեզուի իւրացում, երկլեզուութիւն, diglossia, ազգային լեզու, լեզուական ժառանգութիւն, ինքնութիւն, լեզուի մահացում, բազմամշակութայնութիւն եւն.: Մասնակցած է Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի գիտաժողովներու:

Շաքէ Մանկասարեան-Կրոկըն Ծնած է Հալէպ: Աւարտած է ԵՊՀ ռոմանօգերմանական լեզուներու բաժանմունքի մագիստրականը եւ Associate Cambridge Schoolը: Մասնակած է «Սփիւռք»ի ամառնային դպրոցի «Լրագրողներու վերապատրաստման» դասընթացքներուն:
2011ին հիմնած է «ԱՅԳ ռատիօ» առցանց անկախ կայանը, որուն հաղորդավարն է նաեւ: 2016էն իվեր ամէն Կիրակի Հայաստանի հանրային ռատիոյէն կը սփռուի իր հեղինակային «Արեւմտահայերէն» հաղորդաշարը. կ'աշխատակցի «Սփիւռքի ձայն» հաղորդաշարին եւ *Նոր յառաջ*ին: 2015էն ինքնագիր յօդուածներով եւ արեւմտահայերէնի վերածած էջերով կ'աշխատակցի Ուիքիփետիայի արեւմտահայերէն բաժինին:
2017ին պարգեւատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան «Մայրենիի դեսպան» շքանշանով: 2021ին լոյս տեսաւ իր *Արեւմտահայերէն Հեքիաթներ* հատորը: 2022ին լոյս տեսաւ *Գործնական Ծրագիր Ընկալուածէն Դէպի Ապագայատեսիլ Սփիւռք* գիրքը համախմբագրութեամբ փրոֆ. Արա Սայէղի: Մամուլի տակ են *Արեւմտահայերէն Հեքիաթներ*ու երկրորդ հատորը եւ *Սփիւռքահայեր* գիրքը:

Դոկտ. Սօնա Ներսիսեան Ծնած է 1989ին, Մեծամօր: 2012ին պաշտպանած է մագիստրականը՝ Խաչատուր Աբովեանի անուան Հայկական պե-

տական համալսարանի կրթութիւն եւ ընկերաբանութիւն բաժինին մէջ: 2019ին պաշտպանած է թեկնածուական՝ «Սոցիալական ցանցերի դերը Սփիւռքում» նիւթով: 2012էն կը գործէ ՀՀ ԳԱԱ ՀԱԻի, Սփիւռքի հետազօտութիւններու բաժնին մէջ իբրեւ աւագ գիտաշխատող: Հեղինակ է ուսումնասիրութիւններու, նուիրուած՝ սփիւռքահայ ներդրումներու, հայկական տարբեր շրջանակներու ցանցային յարաբերութիւններուն, ՀՀ ներգաղթած սուրիահայերու համարկումին, հայօճախներու ինքնակազմակերպման խնդիրներուն, նորգաղթականութեան եւ նորՍփիւռքին: 2018էն կ'աշխատակցի ՀՀՀին: Մասնակցած է Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի գիտաժողովներու:

Դոկտ. Յակոբ Չոլաքեան Ծնած է 1947ին, Քեսապի շրջանի Գարատուրան գիւղը, Սուրիա: 2016ին ստացած է դոկտորի կոչում: Եղած է հայերէնի եւ հայ գրականութեան ուսուցիչ Այնճարի եւ Պէյրութի մէջ, 1996-2012՝ հայերէնի դասախօս Հալէպի Համազգայինի Հայագիտական Հիմնարկին:
2014ին կը տեղափոխուի Երեւան: Երէց գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ ՀԱԻի մէջ, շրջան մը համատեղութեամբ աշխատած է Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի ու իբրեւ դասախօս՝ ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտի մէջ: Զբաղած է բանահաւաքչութեամբ, պատմա-ազգագրութեամբ եւ լեզուաբանութեամբ: Պատրաստած է նախակրթարանի եւ միջնակարգ-երկրորդականի դասագիրքերու երկու շարք: Հրատարակած է շուրջ 60 գիրք, 40 գիտական յօդուած, իսկ թղթային եւ առցանց մամուլի մէջ՝ աւելի քան 200 պատմուածք ու գեղարուեստական ակնարկ: 1982էն կ'աշխատակցի ՀՀՀին: Մասնակցած է Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի գիտաժողովներու:

Դոկտ. Յասմիկ Պարան Մագիստրականը ստացած է California State University, Northridgeի (CSUN) կրթական ղեկավարութեան եւ քաղաքականութեան մասնագիտութեամբ, իսկ դոկտորականը՝ University of Southern Californiaէն՝ մանկավարժական հոգեբանութեան մէջ: Կրթական իր փորձառութիւնը սկիզբ կ'առնէ Տահրանի մէջ, Սէուտական Արաբիա, որմէ ետք նոյն ասպարէզով շարունակած է գործել Մ. Նահանգներու սեփական եւ հանրային վարժարաններու մէջ: Դասախօս է CSUNի ժամանակակից ու դասական լեզուներու եւ գրականութեան ամբիոնի հայագիտական ծրագրէն ներս: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ բազմամշակոյթ ուսումը, ազգային ինքնութիւնը, Ցեղասպանութեան դասաւանդման մանկավարժութիւնը, եւ իգական սեռի վերաբերեալ հարցերը:
Դոկտ. Պարան կը տանի հասարակական լայնածաւալ գործունէութիւն եւ անդամ է մասնագիտական կազմակերպութիւններու: Ան Հայկազեան համալսարանի խնամակալ խորհուրդին ատենապետն է: 2020էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Անի Պարսումեան 1973ին պսակաւոր արուեստից վկայականով աւարտած է Beirut University Collegeի պատմութեան եւ փիլիսոփայութեան բաժինը: Իբրեւ թղթակից եւ յօդուածագիր աշխատած է Պէյրութի *Monday Morning* պարբերաթերթին մէջ մինչեւ Մոնթրէալ մեկնիլը՝ 1978ին: 1984ին անցած է Շարժա եւ 14 տարի պաշտօնավարած իբրեւ րիսքի բաժինի պետ, Banque Indosuez/Credit Agricoleին մէջ, որմէ ետք եղած է Bank of Sharjahի Ապու Տապիի մասնաճիւղին վարիչը: 2020ին վերադարձած է Թորոնթօ: Պարսումեան, կը ստեղծագործէ գրիչով եւ վրձինով: Իր գրական հետաքրքրութիւնները ունին երկու ուղղութիւն.- ա) մարդկային տարբեր տեսակի վերապրումին վերաբերող պատումներ, բ) իր անձնական փորձառութիւնը պանդխտութեան եւ պատշաճեցում-համարկումին: Այս երկու ուղղութիւններով ալ ան կը պատրաստուի հրատարակել անջատ հատորներ:

Բժ. Ցոլակ Պասմաճեան Ծնած է Հալէպ: 2003ին վկայուած է Հալէպի Բժշկական համալսարանէն, ապա հետեւած Emergency Medicine մասնագիտութեան մինչեւ 2008: 2008-11՝ իբրեւ բժիշկ աշխատած է Սէուտական Արաբիոյ մէջ, ապա հաստատուած Տուպայ, ուր կ'աշխատի անձնական հիւանդանոցի մը մէջ որպէս Emergencyի բաժնի վարիչ: Ատենապետն է ԱՄԷի եւ Քաթարի ազգային վարչութեան:
Յատուկ հետաքրքրութիւն ունի հայ մշակոյթին, մանաւանդ՝ երգի եւ երաժշտութեան հանդէպ:

Դոկտ. Արա Սայէդ Ծնած է 1960ին, Հալէպ: Դոկտորականը պաշտպանած է Լեհաստան, 1993ին: Դասախօսական, գիտական եւ վարչական ներդրում ունեցած է Հալէպի պետական համալսարանի ուժանիւթի բաժնի գիտական վերելքին: Ներկայիս փրոֆեսոր եւ գիտաշխատող է Լեհաստանի Վրոցլաւ քաղաքի Ճարտարագիտութեան համալսարանին: Հրատարակած է գիտական 6 գիրք, հեղինակ է նաեւ մեծ թիւով գիտական յօդուածներու՝ արաբերէն, անգլերէն եւ լեհերէն:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն նաեւ Սփիւռքի ընկերային, պատմական եւ մշակութային հարցեր, Լեհաստանի հայօճախի ժամանակակից հարցեր, եւ լեհահայ գաղութի դարաւոր ժառանգութիւնը:
Գիտական խորհուրդի անդամ է Քրաքովի Եակելոնեան համալսարանի մէջ 2019էն գործող «Լեհաստանի հայկական մշակոյթի ուսումնասիրութիւններու կեդրոն»ին: 2017ին արժանացած է Լեհաստանի նախագահին «Ծառայութեան արծաթեայ խաչ» շքանշանին առ ի գնահատանք՝ Լեհաստանի հայօճախին մէջ իր գործունէութեան:

Գերշ. Տ. Մեսրոպ եպս. Սարգիսեան Ծնած է Քամիշլի, Սուրիա, 1983ին: 1997ին կ'ընդունուի Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրե-

վանքը եւ կուսակրօն կը ձեռնադրուի 14 Մայիս 2006ին: 2006-13՝ վարած է զանազան պաշտօններ Կիլիկիոյ կաթողիկոսարանին մէջ, միաժամանակ հետեւած է արաբական գրականութեան՝ Լիբանանեան համալսարանին, ու աստուածաբանութեան՝ Քասլիքի Ս. Հոգի համալսարանին մէջ: 2018ին ձեռնադրուած է եպիսկոպոս՝ ձեռամբ Արամ Ա. կաթողիկոսի եւ նոյն տարին ընտրուած առաջնորդ ԱՄԷի ու Քաթարի հայոց թեմին:

Տոքթ. Ներսէս Սարգիսեան Ծնած է Հալէպ, 1965ին: Բարձրագոյն կրթութիւնը ստացած է Հալէպի ատամնաբուժական համալսարանին մէջ, ապա մեկնած Փարիզ՝ մասնագիտական ուսման: Հալէպի մէջ իր մասնագիտական ասպարէզին կողքին ծաւալած է ազգային միութենական գործունէութիւն. երկար տարիներ եղած է Հալէպի Հայ Դատի յանձնախումբի գործօն անդամ, «Հայ դատ» դասանիւթը դասաւանդած է Համազգայինի Հալէպի հայագիտական հիմնարկին մէջ: 2016ին արժանացած է ՀՀ նախագահի «Մխիթար Հերացի» շքանշանին: 2016-17 կրթաշրջանէն իվեր տնօրէնն է Քուէյթի ազգային վարժարանին, միաժամանակ կը դասաւանդէ «Հայ Դատ» դասանիւթը:

Դոկտ. Հրաժին Վարդանեան Ծնած է 1992ին: 2019ին պաշտպանած է թեկնածուական՝ ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտի մէջ, «Սփիւռքի ժամանակակից պատմագիտական-տեսական դիսկուրսը եւ հայկական սփիւռքը» թեմայով: 2016էն կ'աշխատի ՀՀ պետական կառավարման համակարգի տարբեր մարմիններու մէջ: 2019էն ՀՀ անվտանգութեան խորհուրդի գրասենեակի Սփիւռքի հարցերով բաժնի աշխատակից է: 2022էն կը դասաւանդէ «Համեմատական սփիւռքագիտութիւն», «Ազգային ինքնութիւնը եւ Սփիւռքը» նիւթերը՝ ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտին մէջ:
Հրապարակած ուսումնասիրութիւնները կը վերաբերին սփիւռքագիտութեան ձեւաւորման, համեմատական սփիւռքագիտութեան, Սփիւռքին եւ ՀՀ-Սփիւռք յարաբերութիւններուն: Մասնակցած է Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի գիտաժողովներու:

Դոկտ. Անդրանիկ Տագէսեան Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը, Ուէյլզի Սուանզիի համալսարանին մէջ: 1993-2018՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2018էն պատասխանատու խմբագիրն է ՀՀՀին: 2011էն տնօրէնն է Հայկազեան համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին: Անդամ է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան Ինստիտուտ-թանգարանի գիտական (2020) եւ Armenian National Instituteի ակադեմական (2024) խորհուրդներուն, ինչպէս նաեւ *Հայագիտական հարցեր* (2014), *Ցեղասպանութեան հանդէս* (2018) ու

Բանբեր Հայաստանի արխիւների (2022) պարբերականներու խմբագրակազմերուն:
